784
G I A

x

ՀԱՆԴԷՍ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ.

ՄՈՍԿՈՒԱ.
ՀՈՒԼԱԲԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ Օ. Օ. ՀԵՐԲԷԿ
1888.

Дозволено цензурой. С.-Петербургъ, 18-го Апрѣля 1888 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

I. ՆԱ ՍՊԱՍՈՒՄ Է ԴԵՌ... *պատկեր Գ. ՉՈՒԲԱՐ* . . 1

II. ՄԻ ԿԱՐԾԷՔ ՈՐ ԵՍ.... *բանաստեղծութիւն ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ* 17

III. ԱՌԱՋԻՆ ՍԷՐ, *վէպ Տուրգենեվից* 18

IV. ՉՈՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ. I *Արագն էկաւ.* II *Մ-ին.* III *Երգչի անէծքը (Ուլանդից)* և IV *Կեանք. ՅՈՎ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*. 105

V. ԱՆԿՈՉ ՀԻՒԸ, *վէպ. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ* 112

VI. ՄՏԻՐ ԿՈՒՍԱՍՏԱՆ *բանաս. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ*. . . 167

VII. ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔ *բանաս. Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ* . . . 172

VIII. ՅԻՄԱՐ ՈՉԽԱՐՆԵՐ *(առակ մեծերի համար) Գ. ՉՈՒԲԱՐ.* 173

IX. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ, *ԵՎՐԷԻՆՈՎԻՑ* 181

X. ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ, *ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ*. . . . 192

XI. ԱԳԵՒՈՍ ԻՇԽԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, *Վ. Գարշինից. Վ. Մ.* 193

XII. ՉԵՄ ԱՂՕԹՈՒՄ.... *Նաղասոնից Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ*. . 205

XIII. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐ, *աւանդութիւն Շչէդրինից. ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ*. 206

XIV. ԳԻՒՂԻ ԱՍՊԵՏՆԵՐԸ, *զրոյց Մենսըլէից*. 216

XV. ՄՈՒՍԱ, *բանաստ. ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ*. 224

XVI. ԿԻՍԲԱՐ *կամ Մշեցու Հայու մը խոստովանանքը Վ. Յ. Մ.* 225

XVII. ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՆՈՐ ԱՅԺՄԵԱՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԵԱՄԲ. *Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ*. 234

XVIII. ՀԻՆ ՅԱՒ. *ԳԱՐ. ԵՆԳ* 252

XIX. ՆԻՒԹԵՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. I *Ստեփանոս Նաղարեանցի Ղղեներից.* II *Ոսկան Վ. Կտակը* 266

XX. ՇԱՏԵՐԷՆ ՄԷԿԸ, *Պատկեր Սահակ* 285

XXI. ԶԷՅԹՈՒՆՅԻ ԿԻՆՆ ԱՌ ՊԱՆԴՈՒԽՏ ԱՄՈՒՍԻՆՆԻՒՐ, *Յ. ՉԱՔՐԵԱՆ* 310

XXII. ԽՈՍՏՈՎԱՆՔ, ԿՈՒՊԷՈՆԱԹՕՈՒՆ ՀԱՅՐ, ՆՈՐ ԱՂՕԹՔ, ՀԱՅԼԻ. *Սահակ* 312

XXIII. ՎԱՆԵՑԻ ՊԱՌԱԼ ՍԱՌԱՅԻ ԽՐԱՏՆ ԱՌ ԿՈՒՏՐԱԹ ԽԱԹՈՒՆ ԵՒ ԿՈՒՏՐԱԹ ԽԱԹՈՒՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ, *Մ. Կ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ* 319

XIV. ՕՁԻ ԽԱԾԱԾ, *պատկեր Սահակ* 323

XXV. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. I *Շէքսպիր և իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները, աշխատասիրեց Պ. Հ. Աղամեան դերասան.* II *Կորած Մարգարիտ, վէպ-նկարագրութիւն Ս. Փիլոյեան* 343

XXVI. ՄԱՀԱՅՈՒՅԱԿ, *ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ* 366

XXVI. ԲԱՖՖԻ ՄԱՀԸ *(մի առաջարկութիւն)* 367

XXVII. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՀԱՅԵԱՅՔԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՅ, *Յ. Մ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ* 370

XXVIII. ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ 373

XXIX. ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ 382

XXX. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 384

ՆԱ ՍՊԱՍՈՒՄ Է ԴԵՌ...

(պատկեր)

Ամրան վերջն է...

Խան.. սարա հայ գիւղը ամբողջապէս թաղուել է մուգ կանաչում: Հարաւային արևի կիզիչ ճառագայթները՝ թափանցելով եթերային պարզ կապուտակը, առատօրէն լուսաւորում են շրջակայ լեռների ապառաժոտ, մերկ գագաթները և կիսամութ, շարժուն ստուերներով խաղում են նոցա բարձրաւանդ ստորոտների միշտ մռայլ, միշտ խոնաւ փեշերքում. այդ ճառագայթներից մի քանիսը ուրախուրախ արտափայլում են Ալա..ղան գետակի հանդիստ, խաղաղ ջրերում և միանգամից լցուելով մօտակայ անտառի ներսը լուսափայլ, պսպղուն ցոլքերով սկսում են շողշողալ դարևոր ծառերի թերթիկների ու ժամանակից արդէն կանաչած, բորբոսնած թփերի վերայով...

Շքեղ հարաւային բնութիւնը, կարծես, թմրել, քնել է արևի ճառագայթների այդ կիսօրեայ, փայփայող ջերմութեան տակ. երբեմն երբեմն միայն լեռների ստորոտներից փչող քամին մեղմ, ալիքաւոր տատանումներով օրօրում է ցորենի ոսկեայ հասկերը ու վրդովելով մի բոպէ հայտահատիկների խաղաղ ծովը կրկին կորչում է լեռների հեռաւոր խորքերում...

Գիւղի մօտակայ բարձրաւանդ բլրից օձաձև պտոյտներով իջնում է ցած ձոր այդ գետանը և իւր փեշերքով անհետանում է կանաչաղարդ հովտի անհուն տարածութեան մէջ:

Օգոստոսն է:

Խաղողը սկսում է հասնել. նորա լիք-լիք հասիկները անոր, ծանրացած կռացել են գետնին և, կարծես, ամաչած ծածկուել են սրածայր եռանկիւնի թերթիկներով և տեղ-տեղ միայն գոհարի նման ցոլում են արեգակի փայլուն ճառագայթների տակ:

Թաց, պարարտ հողը սրտի խորքերից լոյս աշխարհ է հանել իւր առատ բերքերը և կանչում է իւր մշակ-գիւղացուն. և այդ գիւղացին, այդ հողի որդին լսել է իւր մօր ձայնը ու ահա գուրս է եկել դաշտը. նորա մանգաղը, գութանը, խոփը, գերանդին արագ-արագ բանում են այդ հողի վերայ և նորա աղի քրտինքը կաթ կաթ ոռոգում է գետինը:

Բայց գիւղացին ուրախ է, սրտանց ուրախ: Նա անհոգ, զուարթ երգում է իւր պապերի աւանդած երգը և նորա «Հարալո» ի բարձրաձայն ելևէջները խուլ արձագանգներով կրկնվում են հովտի հեռաւոր անկիւններում...

Այո՛, ուրախ է հայ գիւղացին, ուրախ է ամբողջ Խանսարան: Միայն մի մարդ չէ մասնակցում այդ ընդհանուր հրճուանքին. դա—գեղջկուհի Սաթինիկն է, Հասօյի կինը. նա չգիտէ այլ ևս ուրախանալ. նորա ուրախ օրերը անցել-գնացել են. նա մոռացել է անգամ այդ օրերը... Նա գուրս չէ եկել դաշտը. նա համարեա մենակ է մնացել գիւղում. այնտեղ, դաշտում Սաթինիկը գործ էլ չունի. ոչ ցորեան, ոչ այգի, ոչինչ չունի նա. այո՛, կար ժամանակ, երբ նա էլ Հասօյի հետ գնում էր դաշտը, ուրախ, զուարթ աշխատում մինչև արևամուտը, ցորեան էր հաւաքում, խուրձեր կապում, կալսում, խաղողը կտրում, օղի քաշում, այո՛, նա անում էր այդ ամէնը, բայց շատ և շատ առաջ, երբ դեռ Հասօն Խան.. սարայումն էր և Սաթինիկի որդին, Գրիգորը, փոքրիկ էր, շատ փոքրիկ... Այժմ Հասօն չկայ. ահա հինգ տարի է համարեա, ինչ նա հեռացել է, մեկնել է Խան.. սարայից օտարութիւն մշակութիւն անելու համար:

Ի հարկէ, Հասօն երբէք չէր թողնիլ իւր հայրենի Խան. տարան, կինը, իւր խարխուլ տնակը, եթէ միայն գիւղական պարսիկ բեգը չնեղէր, չհարկադրէր նորան։ Հասօն փող էր առել բեգից։ Երաշտութիւնը խանձել, չորացրել էր մի տարի նորա ցանքը. Հասօյի ընտանիքը մնացել էր առանց հացի. նա կարող էր սովամահ լինել։ Հասօն ճարահատեալ դիմել էր բեգին և ահագին տոկոսներով փող էր վերցրել նորանից. եկաւ ժամանակը վճարելու. Հասօն չունէր փող. բեգը սկսեց սպառնալ, նեղել, ճնշել։ Անվճար տոկոսների փոխարէն Հասօն ամէն տարի, դարնանը, ձրի աշխատում էր բեգի դաշտերում, պարտէզներում և կրկին չէր կարողանում ազատուել պարտքից. այդ կարծես անվերջ պարտքի դուխը մնում էր ու մնում։

Շուտով Հասօյի եղները, ոչխարները նոյնպէս անցան բեգի ձեռը։ Մերկ մնաց խեղճ Հասօն, ձգեց արօրը, խոփը, իւր քրտինքով պարարտած հողը, խաչակնքեց երեսը և վճռեց գնալ ու պանդխտութեան մէջ դտնել իւր բաղդը։ Նա լսել էր, որ Բագուի նաւթագործարաններում միշտ կարելի է գործ դտնել և լաւ փող ձեռք բերել. հաւատաց Հասօն և գնաց... գնաց ու մինչև այժմ չէր վերադարձել։ Սաթինիկը լաւ մտաբերում էր այդ օրը։ Հասօն և մի քանի նոյնպէս նորա մշակ ընկերները դուրս եկան գիւղական փոքրիկ մատուռից, մատաղ արին և տալով իրենց վերջին հրաժարականը ազգականներին, գիւղացիներին, ամբողջ Խան. . տարային ելան մեծ ճանապարհը. նոքա գնում էին ոտով. երբ հասան գիւղի ծայրը, Հասօն դարձաւ Սաթինիկին, առաւ նորա գրկից փոքրիկ Գրիգորին և համբուրելով երեխային ասաց.

— Լա՛ւ նայիր դրան...ես շուտով կըդամ...

Եւ արտասուքի նման մի բան ցոլաց Հասօյի արևառ, կոշտացած երեսի վերայ։

— Լա՛ւ նայիր դրան...

Այդ Հասոյի վերջին խօսքերն էին. դրանից յետոյ Սաթինիկը չտեսաւ իւր Հասոյին։ Նորա հետ գնացած ընկերները վաղուց վերադարձել էին Խան.. սարա. նոքա ասում էին, որ Հասօն անցել է Ռուսաստան. ո՞ւր է այժմ նա—նոքա չգիտեն. մի քանիսները աւելացնում էին, որ Հասօն հիւանդացել էր այնտեղ, ամիսներով չէր վեր կացել տեղից և այլն։

Սաթինիկը անհանգիստ էր. անպայտութիւնը տանջում էր նորան։ Նորա ժամանակով գեղեցիկ, առողջ դէմքը թալկացել, մաշուել էր. նորա սև, վառվռուն աչքերը խորը ներս էին ընկել կոպերի մէջ. նորա անգոյն շրթունքներից վաղուց արդէն թռել էր անհոգ ժպիտը. փոքր կնճիռները ծածկել էին նորա երեսի մորթը. մաշոցքը դրել էր իւր անխզելի կնիքը Սաթինիկի խորշոմած ճակատին. պառաւել էր օր առաջ խեղճը, ուժից ընկել...

— Ո՞ւր էր Հասօն.. ողջ էր արդեօք... ի՞նչ պատահեց նորան—Ատուած գիտէ։

Եւ այդ միտքը անդադար մաշում էր Սաթինիկին։

— Լաւ նայիր դրան... ես շուտով կը գամ, միշտ զարթնում էր խեղճի ուղեղում։

— Ես կը գամ.. կը գամ, լսվում էր նորա ականջներին։

Եւ Սաթինիկը սպասում էր։

Շարունակ իրար ետևից անցնում էին օրեր, ամիսներ, տարիներ, իսկ Հասօն չկար ու չկար....

Գրիգորը մեծացել էր։

Նա արդէն 8 տարեկան էր. զրկանքը և աղքատութիւնը, որ նոյն իսկ օրօրոցից ծանօթ էին Գրիգորին, սովորեցրին նորան աշխատել. երեխան օգնում էր մօրը, փայտ էր բերում անտառից, թոնիրը վառում, իրենց միակ կովը և մի քանի ոչխարները դաշտ քշում. նա արդէն դիւղացի էր, նա արդէն բանող էր, ծեծ էր, չնայելով որ դեռ նոր էր բոլորել իւր եօթներորդ գարունը։

Գրիգորը բնութիւնից մի ծանրակշիռ, միշտ մտածող, միշտ լուռ տղայ էր. մանկական ուրախ, անհոգ խաղերը շատ քիչ էին զբաղեցնում նորան. նա երբէք չէր գնում իւր հասակակիցների հետ անտառ, չէր բարձրանում նոցա պէս ծառերի վերայ և չէր քանդում թռչունների բունները, չէր գողանում նոցա անփետուր ձագիկները. նա չէր սիրում մասնակցել այդ շքմոլիկների կողոպուտ արշաւանքներին այգիների ու պարտէզների վերայ: Գրիգորը քշում էր իւր ոչխարները կանաչ զառիվայրի ստորոտը և, այնտեղ պառկած մէջքի վերայ ամբողջ ժամերով, անընդհատ դիտում էր պարզ-կապուտակ, սիրաշունչ երկինքը. նորա հայեացքը ընկնում էր յանկարծ մի մոխրագոյն ամպի կտորի վերայ, որ բաժանուելով իւր երամից մենակ սահում էր եթերական բարձունքի մէջ, և Գրիգորը չէր հեռացնում իւր լայն բացած աչքերը այդ ըղացող ամպից: Նա հետևում էր նորա միշտ փոփոխուող ֆանտաստիկական դծագրութիւններին, և երևոյի լարուած երևակայութիւնը սկսում էր տալ այդ ամպին զանազան նմանողութիւններ: Ահա նա կուտակուեց, հաւաքուեց մի տեղ. որքան նման է նա դիւզացի Սագօի հնացած «փափախին». ահա ամպը փռուեց, լայնացաւ և հսկաւան թուրք Ֆաթմայի «չադռայի» նման սկսեց մեղմ տատանուել, այդ ամէնը արագ անցնում է Գրիգորի լարուած երևակայութեան մէջ և նա շարունակում է լուրջ դիտել այդ մոխրագոյն ամպի փոքրիկ, վազող կտորը: Միքանի ժամանակից ամպը հեռանում է, կորչում է Գրիգորի աչքերից, բայց վերջինը դեռ երկար, երկար նայում է նորա ետևից.....

Կէս օր է: Արեգակի այրող ճառագայթները շեշտակի ընկնում են վերևից: Սաստիկ տաք է: Փոշեմանման, հաղիւ նկատելի ստուերներով տատանվում է տաքացած, խոնաւութիւնից զուրկ օդը: Գրիգորը դանդաղ բարձրանում է արօտից, հաւաքում է իւր փոքրիկ հօտը և քշում է նորան

մօտակայ աղբիւրը. մինչ ոչխարները բարձր, ուրախ մայելով մօտենում են ջրին, Գրիգորը կռանում է աղբիւրի ափին և ականջ է դնում նորա կարկաչահոս, խորհրդաւոր շվշվոցին. նա ուշադրութեամբ լսում է աղբիւրի երգը. նորան ծանօթ է այդ մեղեդին. այդ աղբիւրը կարծես խօսում է Գրիգորի հետ....

Արևը սկսում է կամաց կամաց մայր մտնել. նորա վերջին, արիւնագոյն ճառագայթները հրեղէն բոցերով ներկում են շառագունած արևմուտքը: Գրիգորը թողնում է իւր սիրած զառիվայրը և դանդաղ քշում է իւր հօտը դէպի գիւղը:

Դրսում մթնում է:

Կախարդիչ հարաւային գիշերը երևան է գալիս իւր հրաշալի գեղեցկութեան ամենադիւթական հրապոյրներով: Գլորակ լուսնեակը երևում է մութ-կապոյտ երկնակամարում և իւր արծաթափայլ ճառագայթները շեշտակի ձգում է քնած բնութեան վերայ. անհամար, պսպղուն աստղերը սկսում են ուրախ ուրախ ցոլել հօրիզոնի անհուն, լայնածաւալ բարձունքում. շը ջակայ լեռների գագաթները քողաւորվում են գիշերային նօսր, թափանցիկ մշուշով, ուր մեղմ արտափայլումներով շողշողում է լուսնի կաթնագոյն լոյսը....

Խան.. սարան կամաց կամաց քնում է:

Գրիգորը արթուն է. նա բարձրանում է իրենց խրճիթի տափարակ տանիքի վերայ և ժամերով մնում է այնտեղ. նա դիտում է հեռուի ամպամած սարերը, կիսալուսաւորուած հովիտները և ձորերը, մութ, սեւ տուող ժայռերը և հեռու, հեռու հօրիզոնում մի նեղ արծաթեայ ժապաւէնի նմանող խաղաղ, հանդարտ Արա.զան գետը: Մի խորին, անբացատրելի զգացմունք տիրում է Գրիգորին, նորա մանկական, զգայուն սիրտը լցվում է անհուն, սուր հրճուանքով. նա զմայլում է հրաշալի բնութեան կախարդիչ գեղեցկութիւնով. նա իւր սրտի բոլոր ոյժերով միանում է

այդ բնութեան ցնծութեանը, նա ճանաչում է, դիտէ այդ բնութիւնը, դիտէ համարեա օրօրոցից և սիրում է նորան, սիրում սաստիկ...

Անցնում է մի քանի րոպէ։

Կէս դիշերային լուսնեակը ծածկվում է ամպերով և մօտակայ պարտէզներից մէկում սոխակը սկսում է իւր բերկրացող, ցնծացող սիրոյ սիրա ճմլող երգը։ Նորա զմայլեցուցիչ դիւթական դայլայլիկները խորը արձագանք են գտնում Գրիգորի բերկրացող սրտում. նա լուռ, անշարժ լսում է սոխակի մեղեդին և արտասուքի շիթերը սկսում են փայլել նորա մեծ, սևորակ աչքերի թերթիկներում...

Վաղուց լռել է սոխակը, ահա լսվում է կէս դիշերային խորհրդաւոր լռութեան մէջ դիւղի աքաղաղների երկարատև, ճաթան աղաղակը, բայց Գրիգորը դեռ լուռ, անշարժ, զմայլած կանգնած է տանիքի վերայ։

Եւ ջերմ, շուտ շուտ բաբախում է նորա փոքրիկ, մանկական սիրտը....

Սաթինիկը սիրում է իւր «մինուճար» Գրիգորին. աւելի, նա պաշտում է նորան։ Հասցի անհետանալուց յետոյ իւր փոքրիկ որդու մէջ ամիոփեց անբաղդ մայրը իւր բոլոր սիրտը, սէրը և յոյսը։ Գրիգորն էր, որ կապում էր խեղճ Սաթինիկին այս ունայն աշխարհի հետ. Գրիգորից ջոկ ոչինչ այս աշխարհում չէր հրապուրում, չէր քաշում դէպի իրեն չարչարուած, տանջուած Սաթինիկին։

— Լաւ նայիր դրան... ես շուտով կը դամ, անցնում էր համարեա միշտ անբաղդ կնոջ մտքովը։

— Եա... շուտով... կը դամ. կրկնում էր ինքը իրեն Սաթինիկը և արտասուքի երկու, այլող կաթիլները թացացնում էին նորա օր առաջ հալումաշ եղած երեսը։

Նա սպասում էր Հասցին, սպասում էր ամէն օր...

— Ա՛յ... նա կը գայ... կը տեսնէ իւր որդուն... ինչպէս կ'ու-

բախանայ երևի խեղճը... կը ճանաչէ՞ նա Գրիգորիս... ախր, երբ նա գնաց, Գրիգորը շատ փոքր էր.. այո... նա կը գայ.. և Տէր Աստուած ինչպէս լաւ կապրենք մենք.. բէգը կրկին հող կը տայ... կը ցանենք... այգեստանում կրբանենք... Գրիգորս կը մեծանայ... կը կարգենք.. Տէր Աստուած... Տէր Աստուած... շշնչում էր ինքն իրեն Սաթինիկը:

Բայց շարունակ անցնում էին օրերը, շաբաթները, ամիսները, իսկ Հասօն չկար և չկար...

Սաթինիկը տխուր նստած անկիւնում սկսում էր լալ, լալ անձայն, նա գաղտնի սրբում էր իւր ցնցոտիներով անվերջ, անդուսպ արտասուքները:

Գրիգորը նկատում էր այդ. նա մօտենում էր մօրը, փաթաթվում էր նորա վզին և ուղղակի նայելով նորա թաց աչքերին հարցնում էր.—

Ե՞րբ կը գայ հայրս... ես ուզում եմ նորան տեսնել... դու ասացիր, որ շուտով... ի՞նչու չկայ... հը... աւելացնում էր երեխան և չէր հեռացնում իւր քնոտղական հայեացքը մօր լացած աչքերից. իսկ այդ աչքերը սկսում էին աւելի և աւելի լցուել արտասուքով. մի բան մօտենում էր խեղճ Սաթինիկի կոկորդին, սկսում էր ճմլել, խեղդել, և նա տխուր պատասխանում էր.

— Կը գայ, հոգիս, կը գայ, աչքիս լոյսը... համբերիր... կը գայ..

Եւ Գրիգորը համբերում էր, համբերում էր օրեր, ամիսներ, տարիներ, իսկ հայրը չկար ու չկար...

Գրիգորը արդէն 12 տարեկան է:

Դա մի առողջ կազմուածքով, կարմիր թշերով բարձրահասակ պատանի է. միայն նորա աչքերը սաստիկ անփայլ են. ոչինչ, ոչինչ չէ արտայայտում այդ, կարծես, ապակեայ աչքերի տխուր, անշարժ հայեացքը. այդ աչքերը երբէք չեն ծիծաղել, չեն ժպտել. խոր մելամաղձոտութեան

թախիծը միշտ երևում էր այդ մեծ, սևորակ, բայց անկենդան աչքերում: Հարևան պառաւները, երբ նկատում էին Գրիգորի այդ անշարժ հայեացքը, տխուր շարժում էին գլխով և կամաց փսփսում:

— Չէ... չէ... մնացական չէ... ապրողներից չէ...

Եւ խորհուրդ էին տալիս Սաթենիկին «բաշխել» Գրիգորին Սուրբ Տիրամօրը:

— Բաշխիր... բաշխիր... ա՜յ.. կը տեսնես.. փորձանքից հեռու կը պահէ, Սաթենիկ ջան, տղուդ.. բաշխիր..

Սաթենիկը չէր լսում նորանց խրատներին:

Գրիգորը մեծանալով հասկացաւ իւր թշուառութիւնը, իւր ողբութիւնը. այդ տանջում էր նորան: Նա տեսնում էր, որ ուրիշ երեխաները ունին հայր, մայր, ազգականներ, որ նոքա բաղդաւոր են, երջանիկ են, իսկ ինքը... ինքը որբ է, չունի հայր... այսինքն ունի, բայց երբէք տեսած չէ նորան.. ո՞ւր է նա—Գրիգորը չգիտէ. մայրիկը ասում է, որ նա շուտով կը դայ. նա միշտ ասում է շուտով, բայց հայրիկը չէ գալիս. ինչո՞ւ. բարկացել է իրենց վերայ... թէ... թէ նա բոլորովին չկայ և Գրիգորը որբ է..

Այդ միտքը անդադար ծագում էր պատանու ուղեղում:

Նա աշխատում էր լուծել նորան, գալ մի որոշ եզրակացութեան—բայց չէր կարողանում:

Այդ անկարողութիւնը մաշում էր նորան և նա կրկին դիմում էր մօրը:

— Մայրի՛կ... ասա՛... ես հայր ունի՞մ.. հը՞... ունի՞մ.. ախր.. ինչո՞ւ թողել է մեզ ու չէ գալիս... հը՞...

— Կը դայ, հոգի՛ս, սպասի՛ր... ա՜յ, ձմրանը կը դայ:

Նա լաւ մարդ է... հա՞... շարունակում էր իւր հարց ու փորձը Գրիգորը:

— Նա... լաւ է... լաւ... հոգիս, պատասխանում էր Սաթենիկը և շտապով դուրս էր գալիս դոմը:

Գրիգորը ընկում էր մտատանջութեան մէջ:

— Նա լաւ մարդ է, անցնում էր նորա մոքով, լաւ... ոհ, որչափ կամենում եմ տեսնել նորան, խօսիլ նորա հետ, համբուրել.. ես հօ երբէք տեսած չեմ նորան.. այ, եթէ դայ հայրս, փողոցի երեխաները էլ չեն ծիծաղել վերաս... չեն հրհռալ... չեն բարկացնել... անիծած Եփրեմը սուս կը կենայ այն ժամանակ.. ես էլ կ՝ուշենամ իմ հայրը... մենք միասին կ՝ապրենք... ես կ՝օգնեմ նորան... կ՝աշխատենք... ինչ լաւ է... էլ խեղճ մայրս լաց չի լինիլ... նա ախր միշտ.. միշտ լալիս է... բայց ինչո՞ւ.. ինչո՞ւ չէ գալիս... հայրս.. ոհ, որչափ կը սիրէի ես նորան... հայրիկ.. իկ.. իկ.. հայրիկ, մի ինչ որ զանցառութեան մէջ կրկնում էր գիշերները Գրիգորը և վեր կենալով տաք քուրսու տակից լայն բացած, շաշ աչքերով նայում էր շուրջը։

Խրճիթում մութ էր։

Սաթինիկը անհանգիստ, անկանոն շնչում էր անկիւնում. նա կիսաքուն էր. նա լսում էր, որ Գրիգորը զարթել է։

— Ի՞նչ է, Գրիգոր, ինչո՞ւ ես վերկացել։

— Ոչինչ, մայրիկ, ջուր եմ ուզում..

— Խաչակնքիր երեսդ, երբ պառկես, ասում էր Սաթինիկը և լռում։ Գրիգորը մտնում էր գոմը, ջուր էր խմում և կրկին դալիս էր ու պառկում. բայց քունը դեռ երկար, երկար փախչում էր նորա աչքերից։ Լուսաբացին նա արդէն քշում էր ոչխարները դաշտ։

Այսպէս անընդհատ սպասողութեան մէջ անցում էին մօր և որդու օրերը. նոքա յոյս ունէին կրկին տեսնել Հասօյին. միթէ նա չէր ասել մեկնելուց առաջ—«ես շուտով կը դամ»—և նա կը դայ, անպատճառ կը դայ. երևի մի բան պատահել է, որ նա ուշացաւ. կարելի է փող ձեռք չէ բերել. ի՞նչ կայ, պարապ, առանց փողի գալու հօ չէ..

Այդպէս կարծում էր Սաթինիկը. նա համոզուած էր, որ Հասօն կը դայ և իրենց կեանքը կը սկսի հոսել իւր առաջուայ խաղաղ, կանոնաւոր հոսանքով։

Նա ամէն օր իւր աղօթքի մէջ խնդրում էր Տիրոջից, որ շուտով վերադարձնէ իրեն իւր մարդուն, իւր Հասօյին:

— Սուրբ Աստուած, սուրբ Աստուած... Քեզ մատաղ... Քո անուանիդ զուրբան, կրկնում էր նա չորացած, դունատ շրթունքներով... Թող դայ Հասօն... Թող դայ... ես էլ դժ չունեմ... սուրբ Տիրամայր... ողորմիր անմեղ զաւակիս «արև» ուն... Թող դայ խեղճ հայրը... Թող դայ...

Եւ խուլ հեկեկանքները կտրում էին նորա ձայնը:

Բայց կրկին անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ. իսկ Հասօն չկար ու չկար...

Հասաւ և ձմեռը:

Խան.. սարան թաղուեց ձեան ահագին տարափների տակ. դաշտը, մարդաբնակները, այգեստանը, շրջակայ բլուրները և լեռները ծածկուեցան ձեան ցուրտ, սպիտակ քօղով: Անտառի հսկաները վաղուց մերկացել էին իրենց շքեղ կանաչից և տխուր տարածել էին իրենց սև, թաց ճիւղերը մշուշոտ, խոնաւ օդում:

Բնութիւնը ամայացել էր. ամէն ինչ նորանում, կարծես, քարացել, արձանացել էր. միայն ցուրտ քամին էր, որ ազատ սահելով դաշտային անհուն տարածութեան մէջ, անդադար բարձրացնում էր ձիւնոտ փոշին, խաղում էր նորա հետ, պտտեցնում էր նորան, կատաղի շուայտնում էր և մի անդամից խփելով գետնին ցիր ու ցան էր անում նորան հազար ու մի փոքրիկ, պսպղուն, զմրուխտեայ փշրանքների...

Գրիգորը չէր մոռացել մօր խօսքերը. նա սպասում էր, որ ձմեռը դալու է հայրը:

— Նա... կը գայ... հա՞, հարցնում էր նա անդադար:

Սաթինիկը լուռ կռացնում էր իւր գլուխը:

Մի քանի լոպէից Գրիգորը կրկին դառնում էր մօրը:

— Ե՞րբ:

— Ա՜յ... շուտով, պատասխանում էր վերջինը և պինդ համբուրում էր Գրիգորի ճակատից:

Հասոյի երեսի վերայ ձգած ընտանիքը առհասարակ ապրում էր աղքատութեան մէջ. մանաւանդ ձմրանը սաստկանում էին այդ աղքատութեան զրկանքները:

Հացը թանկանում էր, խոտը նոյնպէս. թոնրի համար հարկաւոր էր փայտ:

Գրիգորը գնում էր անտառ և փինչև մէջքը համարեա թաղուելով ձեան տարափների մէջ, բերում էր ծառի կտորտանքները. նա աշխատում էր ուժից դուրս. նորա ցնցոտին, որ հազիւ ծածկում էր նորա մարմինը, չէր պատսպարում նորան ցրտից: Անտառում նա միշտ մրսում էր և դողում էր: Մի օր նա քրտնած, փայտի ահագին բեռը շալակին, տնքալով մտաւ իրենց խրճիթը. նա կարմրել էր. տաք քրտինքը ծածկել էր նորա ճակատը, երեսը, մարմինը և ոլոր կաթիլները ընկնում էին ցած. նա ծանր շնչում էր...

Գրիգորը այնու ամենայնիւ մրսում էր. սարսուռանման դողը անցնում էր նորա անդամներով:

Նա ձգեց փայտերը թոնրի մօտ և մօտեցաւ քուրսուն:

Նորա գլուխը ծանր էր և սաստիկ ցաւում էր. մի բան կարծես անդադար խփում լինէր նորա այրուող գլխին: Նորա ականջներում անդադրում լսվում էր մի խուլ, անորոշ շվշվոց. նա գլխով առաւ հնացած «եօրղանը» և պառկեց:

— Ի՞նչ է, Գրիգոր... ինչո՞ւ ես պառկում, հարցրեց Սաթինիկը:

— Ոչինչ... հոգնեցայ... մի քիչ... պատասխանեց Գրիգորը և կողքի եկաւ:

Նորա աչքերը փակվում էին: Նա զգում էր, ինչպէս մի սուր բան ծակոտում էր ներսը, կուրծքը. նա կարծում էր, որ այդ շուտով կ'անցնի: Նա աշխատեց քնել. թմրութիւնը պաշարեց նորան:

Հասաւ գիշերը: Գրիգորի տաքութիւնը սաստկացաւ.

Նորա միշտ անփայլ, խորը ներս ընկած աչքերը ցոլում էին մի անսովոր հիւանդոտ կրակով. Նորա անգոյն շրթունքները չորացել էին: Նա անդադար թացացնում էր այդ այրուող շրթունքները: Սաթինիկը յուսահատ նստած էր յատակի վերայ, քուրսու մօտ և անձայն աղօթում էր:

Հիւանդը մի լոպէի բանում էր իւր ծանրացած կոպերը, նայում էր շուրջը և կրկին փակում:

Ոչ մի ձայն, ոչ մի խօսք չէր հանում նա: Նա պինդ սեղմել էր իւր չորացած, անգոյն շրթունքները:

— Ի՞նչդ է ցաւում... զաւակս... հը՞... կո՞ղքդ... ասա... քեզ մատաղ... հարցնում էր դողացող ձայնով Սաթինիկը:

Գրիգորը կարծես չէր լսում նորա հարցը:

Նա լուռ էր: Խրճիթի խեղդող, ծանր լռութեան մէջ յայտնի լսվում էին հիւանդի շնչառութեան շուտ շուտ, անկանոն ելևէջները: Ժամանակ առ ժամանակ միայն նորա կրծքից թռչում էին խուլ, խռպոտ հեծկլտանքներ:

Սաթինիկը առնում էր իւր ափերի մէջ հիւանդի ձեռքը և կամաց տրորում:

Այդ ձեռը այրվում էր:

Լուսաբացին հիւանդը մի քիչ խաղաղուեց. կիսաքուն թմրութիւնը պաշարեց նորան:

Սաթինիկը վազեց եկեղեցի և բերելով այնտեղից «օրհնած ջուրը» խմեցրեց Գրիգորին:

Մթին եկաւ տերտերը, կարդաց մի գլուխ Սաւետարանից. «Վասն առողջութեան»—յոյս տուեց Սաթինիկին և գնաց:

Իսկ հիւանդը անշարժ, կարծես, փայտացած պառկոծ էր իւր տեղում: Գրիգորը այդ մի քանի օրուայ մէջ ակներև լղարել էր. նորա կայտառ թշերի կարմրութիւնը տեղի էր տուել անգոյն սպիտակութեանը. նա ինքը, կարծես, փոքրացել, քամուել էր:

Երրորդ օրը նորան այցելեց Խան... սարայում յայտնի, հռչակաւոր «դալլաք» պառաւ Հերիքնազը. նա լուրջ, ծանրակշիռ կերպով դիտեց հիւանդի երեսը, նորա խորը ներս ընկած վառվռուն աչքերը և քանի մի անգամ շարժեց իւր ալեզարդ, արդէն կռացած, դողացող գլուխը:

— Ի՞նչ է... ծաղի՞կ է... կարմրո՞ւկ է... ի՞նչ է... ասա, Հերիքնազ-Ջան, Քրիստոսի խաթրին.. տղաս ձեռքից դնում է... ասա... աղերսում էր Սաթինիկը:

— Աստուծոյ պատիժ է, լուրջ, մի խորհրդաւոր ձայնով պատասխանեց Հերիքնազը, միայն մէկ ճար կայ... Տիրամօր հողից պէտք է խմեցնել... Ես կը բերեմ.. ունիմ ինձ տանը..

Եւ նա կրկին նայեց հիւանդի հալումաշ եղած երեսին:

— Լաւ չէ... լաւ չէ... Աստուած փրկէ.. Աստուած օգնական, շշնչաց նա և դուրս ելաւ խրճիթից:

Կէս օրին հիւանդին խմեցրին Տիրամօր հողը ջրով խառնած:

Հիւանդը չհանգստացաւ. նորա տաքութիւնը աւելի ևս սաստկացաւ. խռպոտ հեծկլտանքները արդէն անդադար թռչում էին նորա կրծքից:

Գիշերը Գրիգորը սկսեց տաքացնել:

— Տեսնո՞ւմ ես... ա՜յ... այն ամպը... ինչպէս հանդարտ լողում է նա կապուտակ երկնքում... կարծես արծիւ լինի... ա՜յ.. նա երկու մաս բաժանուեց... որքան նման է նա մեր խնձորենուն... ա՜յ թերթիկները... ճիւղերը... ահա... նա կորաւ... նա չկայ.. տես... տես... նա չկայ... ո՞ւր են ոչխարներս... ո՞ւր են ոչխարներս, յանկարծ սթափում էր Գրիգորը և նստում անկողում:

Հանգստացիր, որդիս... պառկիր... ասում էր լալով Սաթինիկը և զգուշութեամբ պառկեցնում էր հիւանդ Գրիգորին: Մի քանի րոպէ անցնում էր լռութեան մէջ:

Լուսամուտի առաջ գտնուող ծառի վերայից յանկարծ թռաւ արթնացած աղուաւը և մի քանի անգամ երկարատև, տխուր կրկռաց։

Սաթինիկը վախեցած, ցնցողաբար խաչակնքեց երեսը։

— ԱՀ.. առուակը... ինչպէս գեղեցիկ է հոսում նա կանաչի միջով.. նորանում երևում է երկինքը... ինչպիսի ոլոր պտոյտներով կորչում է նա հեռուն, հեռուն... ուր է գնում նա... ՀՀ... նա խուլ կարկաչում է... նա երգում է... լսում ես.. լսում ես... ՀՀ...

Եւ խռպոտ հեծկլտանքները կրկին ծածկում էին հիւանդի անզօր, թոյլ ձայնը։

Սաթինիկը ծնկաչոք աղօթում էր։

Այդ աղօթքը և պաղատանք էր և անողորմ կռիւ Աստուծոյ հետ. նա խնդրում էր, պահանջում էր Աստուծուց, որ չառնէ իւր միակ Գրիգորին։

— Թող.. թող նորան ինձ մօտ.. ո՞նց ես ապրեմ առանց Գրիգորիս... Տէր Աստուա՞ծ, լսիր ինձ մեղաւորիս.. մեղքացիր...

Դրսում կրկին կրկռաց չարագուշակ աղուաւը։

Հիւանդը լայն բաց արեց իւր շաշ աչքերը, ցնցուեց և համր ճչաց։

— Հ՞այրս.. հ՞այրս.. ՀՀ.. նա եկաւ.. տես, և միանգամից ընկնելով մէջքի վերայ ճնաց անշարժ, կարծես քարացած։

Խրճիթում տիրեց խորհրդաւոր լռութիւն։ Գրիգորի անմեղ հոգին արդէն սաւառնում էր դէպի Սմենակաբողի յաւիտենական բարձունքը։ Սաթինիկը մօտեցաւ Գրիգորին. ոչ լաց, ոչ հեկեկանք. խեղճը կարծես ցնորուած լինէր. նա արձանացած, անմիտ շարունակում էր նայել Գրիգորի սրուած երեսին, ուր անխիղճ մահը արդէն փչել էր իւր սառը շունչը։

Կրկին Խան.. սարան թաղուել է թարմ կանաչի մէջ. կրկին վերածնուած բնութիւնը զարդարուել է և ցնծում է. կրկին լսվում է անտառի խորհրդաւոր սօսափիւնը.. կրկին հայ գիւղացին ուրախ ուրախ երգում է իւր երգը, կրկին նորա բարձրաձայն «Հարալօն» ծածկում է օդը...

Խաղողը արդէն կռացրել է իւր ծանրացած որթերը դեռնին և սպառնում է մօտեցող այգեքաղէն. կրկին դանդաղ լողում է արևը կապուտակ հորիզոնում և իւր ճառագայթների ոսկեփայլ արտափայլումներով խաղում է կարկաչահոս վտակի պարզ, զովարար ջրերում...

Կրկին եկել է շքեղ, հարաւային ամառը...

Գրիգորի փոքրիկ, անշուք դերեզմանը ծածկուել է թարմ կանաչով, որի մէջից ամօթխած բարձրացնում է իւր գլխիկը համեստ շուշանիկը. մեղմ զեփիւռը տատանում է նորա հոտաւէտ թերթիկները. մօտակայ ծառի վերայ երբեմն երբեմն նստում է սոխակը և սկսում է իւր երգը. հասնում են արդէօք Գրիգորի նեղ, մութ դերեզմանը նորա ուրախ դայլայլեկները. լսում է նա...

Սաթինիկը պառաւել է:

Նա ապրում է սաստիկ աղքատութեան մէջ:

Նա մուրալով հայթայթում է իւր օրուայ ապրուստը:

Նա մի քիչ ցնորուել է:

Գիւղում նորան կանչում են «Գիժ Սաթօ»—

Բայց Գիժ Սաթօն կրկին համոզուած է, որ մի օր Հասօն կը վերադառնայ վերջապէս իւր հայրենական Խան... սարան:

Գիժ Սաթօն սպասում է դեռ....

Գ. ԶՈՒԲԱՐ.

* * *

(Նուէր Գ. Ջ.).

Մի կարծէք որ ես սին փառքի համար
Իմ հառաչանքով լցրի ... աշխարհ.
Այս հէգ ամբոխի ծափին ու գովքին
Կարօտ չէր բընաւ իմ հրպարտ հոգին.....

Այո՛, իմ քնարի տրխուր ձայները
Ցնցեցին հայի հոգու լարերը,
Արիւն էլ աչնիւ սրտէ քամեցին,
Կորիճի աչքէ քունը փախուցին։

Ինչո՞ւ. չըգիտեմ։ Ասէ՛ք՝ հէ՞ր բարդ-բարդ
Բացվում է դարնան կարմիր, հոտոտ վարդ,
Լեռնիվայր ինչո՞ւ անուշ կարկաչով
Վազում է առուն դալարի միջով,

Զեփիւռը ինչո՞ւ տերևէ տերև
Անցնելով, ասես, տալիս է բարև,
Ինչո՞ւ սոխակն էլ մեծ կանանչ թըփին
Անմըռունչ ձայնում է իւր մեղեդին.....

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ։

Ս. ՈՒՍԱՉԻՆ ՍԷՐ.

(Տուրգենեվից):

Հիւրերը վաղուց արդէն ցրուել էին: Ծանոթները խիստ տանուտերկուսից անցել էր կէս ժամ: Սենեակում մնացել էին միայն տանտէրը, Սերգէյ Նիկոլայեվիչը և Վլադիմիր Պետրովիչը:

Տանտէրը զանգահարեց և հրամայեց, ընթրիքի մնացողները հաւաքեն: Ուրեմն, վճռուած բան է,— ասաց նա աւելի խորը նստելով բազկաթոռի վերայ և սիգարը կպցնելով,— մեղանից իւրաքանչիւրը պիտի պատմէ իւր առաջին սիրոյ պատմութիւնը: Հերթը ձերն է, Սերգէյ Նիկոլայեվիչ:

Սերգէյ Նիկոլայեվիչը մի գունատ ու կլոր, փափուկ ու շիկահեր երեսով մարդ էր. նա առաջ նայեց տանտիրոջ վերայ, յետոյ աչքերը առաստաղի վերայ ձգեց:—Ես չեմ ունեցել առաջին սէր,—վերջապէս ասաց նա.—ես ուղղակի երկրորդից եմ սկսել:

— Այդ ինչպէս:

— Շատ հասարակ կերպով: Տասնութ տարեկան էի ես, երբ սկսեցի ընկնել մի շատ սիրուն աղջկայ եռևից. բայց ես զբաղվում էի նորանով այնպէս, ասես, դա ինձ համար նոր բան չլինի. հէնց այդպէս էլ յետոյ ես ընկնում էի ուրիշների եռևից: Ճշմարիտն ասած, առաջին և վերջին անգամ դեռ վեց տարեկան ես սիրահարուեցայ դայեակիս վերայ.— բայց սա շատ վաղուցուայ բան է:

Մեր յարաբերութեանց մանրամասնութիւնները յիշողութիւնից ջնջուել են, իսկ եթէ յիշել էլ, ոչ համար նոքա կարող էին հետաքրքրական լինել:

— Ապա ի՞նչ անենք, — հարցրեց տանտէրը: — Իմ առաջին սիրոյս արկածներն էլ այնքան հետաքրքրական չեն. ես մինչև Աննա Իվանովնայի, այժմեան կնոջս հետ ծանօթանալը, ոչ ոքի վերայ չեմ սիրահարուել և ամէն բան, մեր բոլոր յարաբերութիւնները շատ լաւ էին գնում. մեր հայրերը մեզ շուտով նշանեցին, մենք շատ շուտով միմեանց սիրեցինք և, առանց ուշացնելու, շուտով էլ պսակուեցանք: Իմ արկածները երկու խօսքով կարելի է պատմել: Ես, պարոնայք, խոստովանում եմ, հարուցանելով առաջին սիրոյ հարցը, յոյս դրել էի ձեր՝ ոչ ծեր, ոչ էլ երիտասարդ ամուրիներիդ վերայ, որ խօսակցութիւնը կրպահպանէք: Դուցէ դո՞ւք, Վլադիմիր Պետրովիչ, մի բանով մեզ կրզուարճացնէք:

— Իրաւ է, իմ առաջին սէրը այնքան էլ սովորական չէ եղել, — պատասխանեց կմկմալով Վլադիմիր Պետրովիչը, որ քառասուն տարեկան մարդ էր, սև, մի քիչ ալեխառն մազերով:

— Ա՜, — բացականչեցին միասին և՛ տանտէրը, և՛ Սերգէյ Նիկոլայևիչը: — Աւելի լաւ.... Պատմեցէք:

— Համեցէք.... բայց ոչ. ես չեմ պատմիլ. ես պատմելու շնորհք չունիմ. կամ կարճ և չոր ու ցամաք է դուրս գալիս, կամ երկար ու անհամ. իսկ եթէ թոյլ տաք, ինչ որ յիշում եմ, կըգրեմ տետրակիս մէջ և ձեզ կըկարդամ:

Ընկերները առաջ չէին համաձայնում, բայց Վլադիմիր Պետրովիչը իւր ասածն արեց: Երկու շաբաթից նոքա կրկին հաւաքուեցան, և Վլադիմիր Պետրովիչը կատարել էր իւր խոստումը:

Ահաւասիկ, ինչ էր գրած նորա տետրակում.

I.

Այն ժամանակ ես տասնվեց տարեկան էի։ Անցքը պատահեցաւ 1833 թ. ամառը։

Ես կենում էի Մոսկուայում ծնողներիս հետ։ Նոքա վարձել էին ամարանոց «Կալուժսկայա զաստավայի» մօտ, «Նեսկուչնի պարտէզի» դէմ ու դէմ։—Ես պատրաստվում էի համալսարան մտնելու, բայց քիչ բան էի անում, այն ևս առանց շտապելու։

Ոչ ոք ինձ չէր նեղում։ Ինչ որ ուզում էի, այն էլ անում էի, նա մանաւանդ այն ժամանակից սկսած, երբ ես թողեցի իմ վերջին ֆրանսիացի դաստիարակին, որ երբէք չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ նա ընկել է Ռուսաստան (comme une bombe) «ինչպէս մի ռումբ», և բարկացայտ դէմքով ողջ օրը թաւալում էի անկողնումն։ Մայրս անփոյթ կերպով էր վարվում ինձ հետ, թէպէտ երբեմն փաղաքշում էր։ Մայրս համարեա՝ ուշադրութիւն չէր դարձնում ինձ վերայ, չնայելով որ միակ որդին էի. նորա բազմատեսակ հոգսերն ու գործերը ստիպում էին մոռանալ ինձ։ Մայրս երիտասարդ էր և շատ գեղեցիկ. նա պսակուել էր նորա հետ նիւթականի համար. մայրս 10 տարով մեծ էր հօրիցս։ Մայրս շատ տխուր կեանք էր վարում. նա անդադար վրդովվում էր, նախանձում էր, բարկանում էր—բայց ոչ հօրս ներկայութեան ժամանակ. մայրս հօրիցս շատ էր վախենում, իսկ նա իրեն շատ խիստ ու հեռու էր պահում, յարաբերութիւններն էլ շատ սառն էին..... Ես դորա պէս չտխրազանց հանդիստ, ինքնահաւան ու ինքնիշխան մարդ չէի տեսել։

Երբէք ես չեմ մոռանալ ամարանոցում անց կացրած առաջին շաբաթները։ Հրաշալի եղանակներ էին լինում. մենք քաղաքից դուրս եկանք ճիշտ մայիսի 9-ին, ս. Նիկո-

զայոսի տունին։ Ես կամ մեր ամարանոցի պարտիզումն էի ճեմում, կամ գնում էի Նեսկուչնի, կամ քաղաքի շրջակայքը. հետս տանում էի մի որ և է գիրք,—օրինակ, Կայդանովի ձեռնարկը,—բայց քիչ էի բաց անում այդ գիրքը. ես յաճախ բարձրաձայն կարդում էի ոտանաւորներ, որ ես շատ գիտէի անգիր։ Արիւնս եռում էր, սիրտս ճմլում էր,—այնպէս քաղցր ու ծիծաղելի էր. ես մի բան սպասում էի, մի բանից վախենում էի, ամէն բանի վերայ զարմանում էի և միշտ, կարծես, մի բանի պատրաստ էի։ Երևակայութեանս ամենավառ ժամանակն էր. նա նոյնպէս արագ թափառում էր մի և նոյն պատկերների շուրջը, ինչպէս արշալուսին մանդաղաթիւները ճախրում են զանգակատան շուրջը։ Ես ընկղմում էի մտածմունքի մէջ, տխրում էի, անգամ և լաց էի լինում։ Բայց չնայելով արտասուքիս և սրտաշարժ ոտանաւորներից, կամ երևկոյեան գեղեցկութիւնից առաջացած տխրութեանս, գարնան թարմ արօտի պէս զարթնում էր երբեմն սրտումս երիտասարդ վառվռուն կեանքի ուրախ զգացմունքը։

Ես մի ձի ունէի. ինքս էի նորան թամքում և գնում հեռու տեղ, արագ քշում էի և ինքս ինձ երևակայում էի ասպետ ձիարշաւների ասպարիզում—ինչպէ՞ս ուրախ քամին փչում էր ականջներիս,—կամ, երեսս երկինք դարձրած, ընդունում էի նորա լոյսը և կապուտ ցոլքը բացուած հոգուս մէջ։

Յիշում եմ, այն ժամանակ կնոջ պատկերը, կնոջ սիրոյ նշոյլը չէր ծագում իմ մտքում. բայց ամէն բանում, ինչ որ ես մտածում էի, ամէն բանում, ինչ որ ես զգում էի, կար մի նոր, անասելի-քաղցր կանացի հրապոյրքի ամոթխած նախազգացում, որ ես դեռ լաւ չէի հասկանում....

Այդ նախազգացումը, այդ ակնկալութիւնը տիրել էր ողջ էութեանս. ես նորանով էի շունչ քաշում, նա հոսում էր երակներիս մէջ, արեանս ամէն մի կաթիլի մէջ....

և վիճակուած էր, որ այդ ակնկալութիւնը շուտով պիտի կատարուէր։

Մեր ամարանոցը մի փայտաշէն, սիւնազարդ, ազնուականի տուն էր. նորա երկու կողմից փոքրիկ տներ կային։ Ձախ կողմի տունը արժանագին պաստառի մի փոքրիկ դրծարան էր։ Ես յաճախ գնում էի նայելու, ինչպէս մի քանի տասնեակ մանուկներ, նիհար, անճոռնի, կեղտոտ ու ներկաշաղաղ շորերով, թալկացած դէմքով թռչկոտում էին փայտէ լծակների վերայ, սեղմում էին մամուլի քառանկիւնի ծայրերը և այդպէս իւրեանց փոքրիկ մարմինների ծանրութեամբ դաճում էին պաստառների դոյնզգոյն նկարները։ Աջ կողմի տունը դատարկ էր և վարձու էր տրվում։ Մի օր—մայիսի 9-ից երեք շաբաթ անցած—այդ տան պատուհանների փակեղները բացուեցան, երևեցան այնտեղ կանանց գլուխներ—մի ընտանիք էր եկել այդտեղ։ Յիշում եմ, նոյն օրը ճաշին մայրիկս իմացաւ ծառայից, թէ ովքեր են այդ մեր նոր դրացիները և, լսելով իշխանուհի Զասէկինայի անունը, առաջ մի տեսակ յարգանքով ասաց.—Հա՛, իշխանուհի..... և ապա աւելացրեց.—Երևի մի աղքատ բան է։

— Երեք վարձած կառքով եկան,—նկատեց սպասաւորը քաղաքավարի կերպով սկուտեղը մեկնելով.— սեպհական կառք չունին, կահ-կարասիքն էլ շատ հասարակ է։

— Ը՛հը,—կրկնեց մայրիկս,—բայց ինչ և իցէ, էլի լաւ է։

Հայրս սառն հայեացք ձգեց մօրս վերայ. նա լռեց։

Իրաւի, իշխանուհի Զասէկինան չէր կարող հարուստ կին լինել. նորա վարձած տունը այնքան հին էր, փոքր ու ցած, որ շատ թէ քիչ ունևոր մարդը չէր համաձայնիլ այնտեղ ապրել։—Այնու ամենայնիւ ես այդ բաների վերայ ուշադրութիւն չդարձրի։ Իշխանական տիտղոսը ինձ վերայ քիչ էր ազդում։ ես նոր էի կարդացել Շիլլերի «Աւազակները»։

II.

Ես սովորութիւն ունէի ամէն երեկոյ հրացանը ձեռիս մտնելով մեր պարտիզում և ագռաւներ սպանել:—Այդ զգաստ, դիշակեր և խորամանկ թռչուններին ես վազից ատելով ատում էի: Այն օրը, որի մասին խօսում եմ, ես նոյնպէս պարտէզ գնացի—և ի զուր տեղը բոլոր ծառուղիները պտտելուց յետոյ (ագռաւները ինձ ճանաչում էին և հեռուից միայն կրկռում էին) պատահմամբ մօտեցայ ցածր ցանկապատին, որ բաժանում էր Դէջ սեպհական կալուածքը այն նեղ կտորից, որ պատկանում էր աջակողմեան տանը: Գլուխս կախ արած գնում էի: Յանկարծ լսեցի ձայներ. ցանկի վերայից նայեցայ — բոլորովին քարացայ.... Մի տարօրինակ տեսարան էր իմ առաջ:

Ինձանից մի քանի քայլ հեռու, կանաչ մորենու թփերի մէջ, մի բաց տեղ կանգնած էր մի բարձրահասակ, վայելչակազմ օրիորդ կարմրագոյն շերտաւոր շոր հագին, սպիտակ թաշկինակը գլխին: Նորա չորս կողմում չորս երիտասարդ էր կանգնել, և սա ամէն մէկի ճակատին հերթով խփում էր այն բաց մոխրագոյն ծաղիկը, որի անունը ես չգիտեմ, բայց նոցա լաւ են ճանաչում երեխայքը. այդ ծաղիկները գնդաձև փամփուշտներ են ունենում, որոնք պատռվում և սաստիկ ձայն են հանում, երբ խփում ես մի ամուր բանի: Երիտասարդները մեծ հաճութեամբ իւրեանց ճակատը դէմ էին անում նորան — իսկ օրիորդի շարժուածքները (ես այդ տեսայ կողքից) այնքան զմայլեցուցիչ հրամայական, փաղաքշող, ծաղրող ու նազելի էին, որ քիչ էր մնում զարմանքից և ուրախութիւնից բացականչէի և, երևի, ամէն բան կրտայի, որ ինձ էլ նա խփէր իւր քնքոյշ մատներով: Հրացանս ընկաւ խոտի վերայ, ամէն բան ես մոռացայ և անյագ նայում էի այդ վայելչակազմ օրիորդի իրանի, պարանոցի, դեղեցիկ ձեռքերի, փոքր ինչ խը-

ճրճռուած ու խառնուած շէկ մազերի վերայ, որ ծածկուած էին սպիտակ թաշկինակով. չէի կշտանում նորա կիսաբաց, խելացի աչքերի, արտեւանունքի եւ քնքուշ այտերի վերայ նայելուց...:

— Երիտասարդ պարոն, ա՜յ երիտասարդ պարոն,— լսեցի մէկի ձայնը.—միթէ կարելի՞ է այդպէս նայել անծանօթ օրիորդների վերայ:

Ես վեր թռայ եւ մնացի սառած.... Ցանկի միւս կողմում մօտս կանգնած էր մի պարոն կարճ խուզած սեւ մազերով եւ հեղնօրէն հայեացքով նայում էր վերա: Այդ իսկ վայրկեանին օրիորդն էլ դարձրեց երեսը իմ կողմը...: Ես տեսայ նորա աշխոյժ եւ կենդանի երեսի վերայ մեծ եւ մոխրագոյն աչքեր—եւ այդ դէմքը յանկարծակի ցընցուեցաւ, ծիծաղեց, սպիտակ ատամները ցոլացին եւ յօնքերը ուրախ վեր բարձրացան...: Ես կարմրեցայ, առայ գետնից հրացանս եւ ուղղակի տուն վազեցի, թէպէտ յետեւիցս լսվում էր նոցա բարձրաձայն, բայց ոչ չար ծիծաղը. ես մտայ սենեակս, ընկայ անկողնիս վերայ եւ երեսս ծածկեցի ձեռքերովս: Սիրտս թրթռում էր. և՛ ամաչում էի, և՛ ուրախանում էի,—ես զգում էի մի անսովոր վրդովմունք:

Հանդստանալուց յետոյ ես սանդրեցի մազերս, մաքրուեցայ եւ ցած գնացի թէյ խմելու: Մատաղահաս աղջկայ պատկերը միշտ առաջիս էր. սիրտս այլ՝ ևս չէր թրթռում, բայց մի տեսակ քաղցրութեամբ ճմլվում էր:

— Ի՞նչ է պատահել,—յանկարծ հարցրեց հայրս:— Ագռա՛ւ ես սպանել:

Կամենում էի եղելութիւնը պատմել հօրս, բայց ինձ ղսպեցի եւ ինքս ինձ ժպտացի: Քնելու ժամանակ, ինքս էլ չգիտեմ, թէ ինչու, երկար անգամ ես պտտուեցայ մի ոտիս վերայ, ոնուշահոտ իւղով մազերս օծեցի, պարկեցայ քնելու եւ ողջ գիշերը մեռածի պէս քնեցի: Լուսաբացին մի բոպէ զարթեցայ, գլուխս բարձրացրի, բերկրութեամբ շուրջս նայեցայ—եւ դարձեալ քունս տարաւ:

III.

«Ինչպէ՞ս ծանօթանամ ես նոցա հետ», մտքովս անցաւ առաւօտեան, երբ ես տեղից վեր կացայ։ Թէյ խմելուց առաջ ես գնացի պարտէզ, բայց այս անգամ ես չմօտեցայ ցանկապատին և ոչ ոքի էլ չնկատեցի։ Թէյից յետոյ մի քանի անգամ անց ու դարձ արի փողոցում մեր ամբոխոցի առաջ—հեռուից ես նայում էի պատուհաններին...։ Վարագուրի ետևից ինձ երևեց նորա դէմքը, և ես վախեցած իսկոյն հեռացայ։ «Այնու ամենայնիւ պէտք է ծանօթանալ նոցա հետ»,—մտածում էի ես, աննպատակ ման գալով «Նեսկուչնի» ի առաջ գտնուող աւազուտ դաշտում...—«բայց ինչպէ՞ս։ Այ բանն ինչ է»։ Ես մտաբերում էի երեկուայ մեր տեսութեան մանրամասնութիւնները. չգիտեմ, ինչ է պատճառը, ես լաւ էի յիշում, ինչպէս նա ծիծաղեց վերաս...։ Բայց մինչ ես յուզվում էի և զանազան ծրագիրներ էի կազմում, բաղդը արդէն հոգս էր քաշել իմ մասին։

Իմ բացակայութեան ժամանակ մայրիկս ստացել էր մեր նոր հարևանից մի նամակ, գորշ թղթի վերայ գրած, կնքած մութ-կարմիր զմուռսով, որ սովորաբար գործ են ածում փոստատներում կամ արժանագին դրնու շշերը կնքելու համար։ Այս տառասխալներով լի և անճոռնի գրուած նամակով իշխանուհին խնդրում էր մօրս հովանաւորութիւնը. իմ մայրը, իշխանուհու ասածով, ծանօթ էր նշանաւոր մարդկանց հետ, որոնցից կախուած էր նորա և որդուց բախտն ու վիճակը, որովհետև այդ կինը մեծ ու նշանաւոր դատական գործեր ունէր։ «Դիմում եմ ձեզ,—գրում է նա,—որպէս ազնիւ կին մի ազնիւ տիկնոջ, ընդ սին ինձ շատ հաճելի է օգուտ քաղել այս դիպուածից»։ Նամակի վերջում նա մօրս ներկայանալու իրաւունք էր խնդրում։ Երբ ես վերադարձայ, մայրս վատ տրամադ-

բութեան մէջ էր. հայրս տանը չէր, իսկ մայրս չգիտէր, ո՞ւմ հետ խորհուրդ անէ: Չպատասխանել «ազնիւ տիկնոջ», մանաւանդ իշխանուհուն, անկարելի էր, բայց ինչ ձևով պատասխանէր—մայրս բոլորովին չէր իմանում: Ֆրանսերէն գրել նամակի պատասխանը—նա անտեղի էր համարում. իսկ ռուսերէն ուղղագրութեան մէջ նա էլ կաղում էր—և այս ինքն էլ լաւ գիտէր—այդ պատճառով էլ չէր ուզում ցոյց տալ իւր թերութիւնը. նա շատ ուրախացաւ գալուս համար, և իսկոյն հրամայեց գնալ իշխանուհուն, յայտնել նորան, որ մայրս միշտ պատրաստ է նորին պայծառափայլութեան կարողացածին չափ ծառայութիւն անելու, և թէ խնդրում է, որ դայ իւր մօտ տասնեւերկու ժամին: Իմ գաղտնի ցանկութեան անսպասելի և շուտով իրագործուիլը ինձ և՛ ուրախացրեց, և՛ վախեցրեց. այնու ամենայնիւ ես աշխատում էի չարտայայտել յուզմունքս—դորա համար էլ առաջուց գնացի սենեակս հագնելու նոր սիւրտուկս և կապելու փողապատս. տանը առ հասարակ ես հագնում էի կարճ բաճկոն և լայնօձիք շապիկ, թէպէտ այդ ինձ շատ ծանր էր թւում:

IV.

Իշխանուհու տան նեղ ու կեղտոտ նախասենեակում, ուր ես մտնելուց ակամայ ամբողջ մարմնովս դողացի—ընդունեց ինձ ծերունի, ալեզարդ ծառան: Նորա դէմքը մութ-պղնձագոյն էր, հայեացքը—մռայլ. իսկ ճակատին ու քունքերին այնպիսի խոր կնճիռներ կային, որ ես կեանքումս չէի տեսել: Նա տանում էր ափսէի վերայ փայլունկի կրծած փշերը և, ոտով փակելով միւս սենեակի դուռը, կարճ հարցրեց.—ի՞նչ էք կամենում:

— Իշխանուհի Զասէկինան տա՞նն է,—հարցրի ես:

— Վ օնիֆատի՛,—լսուեցաւ դրան ետևից մի կանացի ձայն:

Սպասաւորը լուռ ու մունջ յետ դարձաւ։ Ես նշմարեցի, որքան քսուած ու մաշուած էր նորա լեվրէյի մէջքը, որի վերայ մնացել էր մի հատ ժանդոտած, ոսկեղէնշանով կոճակ։ Սպասաւորը գնաց, դնելով ափսէն գետնի վերայ։

— Ոստիկանատունը գնացի՞ր,—կրկնուեցաւ նոյն կանացի ձայնը։ Ծառան մի բան փընթփընթաց։—Ի՞նչ...։ Մ՚որ է եկել,—կրկին լսուեցաւ նոյն ձայնը....—Մեր դրացու որդի՞ն է։—Դէ՛, ներս հրաւիրիր։

— Հաճեցէք ընդունարան, — ասաց սպասաւորը, որ կրկին դուրս եկաւ և վեր առաւ ափսէն։ Ներս մտայ ու գնացի «ընդունարանը»։

Ես մտայ մի փոքրիկ սենեակ, որ ոչ շատ մաքուր էր, ոչ էլ լաւ կահաւորուած։ Պատուհանի մօտ, մի կոտրած բազկաթոռի վերայ նստած էր յիսուն տարեկան մի կին, ճաղատ ու տգեղ, հին, կանաչագոյն շոր հագին և դարուսի թելից գործած խայտաճամուկ թաշկինակն էլ վզին։ Նա իւր փոքրիկ, սև աչքերը վերաս ձգեց։

Մօտեցայ նորան և գլուխ տուի։

— Իշխանուհի Զասէկինայի՞ հետ պատիւ ունիմ խօսելու։

— Այո՛, ես իշխանուհի Զասէկինան եմ. իսկ դուք պ. Վ.-ի որդի՞ն էք։

— Այդպէս է։ Ես մօրս յանձնարարութիւնն եմ բերել ձեզ։

— Նստէք, խնդրեմ։ Վօնիֆատի՛, ինչտե՞ղ են բանալիները, չե՞ս տեսել։

Ես յայտնեցի տ. Զասէկինային մօրս պատասխանը։ Նա լսում էր ինձ, երբեմն-երբեմն պատուհանին խփելով իւր հաստ կարմիր մատները, և երբ ես վերջացրի, կրկին նա հայեացքը ինձ վերայ ուղղեց։

— Շատ բարի. անպատճառ կը դամ,—վերջապէս պատասխանեց նա։—Բայց դուք ի՛նչպէս ջահիլ էք։ Կարո՞ղ եմ հարցնել, արդեօք քանի տարեկան էք։

— Տան և վեց, — պատասխանեցի ես, ակամայ կակազելով։

Իշխանուհին հանեց գրպանից մի քանի գրոտած ու իւղոտած թուղթ, մնաեցրեց քթին և սկսաւ ջոկել նոցա։

— Լաւ տարիք է, — ասաց նա յանկարծակի, յետ նայելով և շարժուելով աթոռի վերայ։ — Խնդրեմ, մի քաշուէք, համարձակ եղէք։ Մենք պարզասէր մարդիկ ենք։

«Շատ է հասարակ», մտածեցի ես, ակամայ դիտողական հայեացք ձգելով նորա տգեղ տեսքի վերայ։

Այդ իսկ վայրկեանին բացուեցաւ ընդունարանի միւս դուռը և շեմքում երևեցաւ այն օրիորդը, որին ես նախընթաց օրը պարտիզում տեսայ։ Նա ձեռը վեր բարձրացրեց և ժպտաց։

— Ահա և իմ աղջիկը, — ասաց իշխանուհին, ցոյց տալով նորան։ — Զինոչկա, սա մեր դրացի պ. Վ-ի որդին է։ Ինչպէ՞ս է ձեր անունը, խնդրեմ, ասացէ՛ք։

— Վլադիմիր, — պատասխանեցի ես, տեղից վեր կենելով և շնչելով վրդովմունքից։

— Իսկ ձեր հօր անունը։

— Պետր։

— Այո՛։ Ես մի ծանօթ ոստիկանապետ ունէի, որի անունը նոյնպէս Վլադիմիր Պետրովիչ էր։ Վօնիֆատի՛, մի՛ որոնիր բանալիները. գրպանումն են։

Մատաղահաս օրիորդը առաջուայ պէս ժպտելով, դարձեալ նայում էր վերաս, փոքր ինչ աչերը կկոցելով և գլուխը մի կողմ թեքելով։

— Ես արդէն տեսել եմ մեռ Վոյլեմարին, — սկսեց օրիորդը։ (Նորա արծաթի ձայնը մի քաղցր սարսուռ ձգեց վերաս)։ — Դուք ինձ թոյլ կը տաք ձեզ այդպէս կոչել։

— Ինչ էք...., — պատասխանեցի ես։

— Ինչո՞ւ, — հարցրեց իշխանուհին։

Աղջիկը մօր հարցին չպատասխանեց։

— Դուք այժմ գործով զբաղուած էք,—հարցրեց օրիորդը, չհեռացնելով ինձանից իւր աչքերը։

— Ո՛չ մի բանով։

— Կամենո՞ւմ էք ինձ օգնել, գնանք ինձ հետ, թել եւ տանք։

Նա գլուխը շարժելով դուրս գնաց ընդունարանից։ Ես էլ հետեւեցի նորան։

Այն սենեակում, ուր մենք գնացինք, նոր, աւելի լաւ կահ-կարասիք կար եւ աւելի ճաշակով էր սարքուած։— Բայց ես այն րոպէին ոչինչ չէի կարող նկատել. ես այնպէս էի շարժվում, ասես, թէ երազումս լինէի, եւ զգում էի, որ գործս չափազանց յաջողուած է։

Օրիորդը նստաւ, հանեց կարմիր թելի կապոցը եւ, հրաւիրելով նստել իւր դէմ ու դէմ, սեղանի վերայ, խնամքով յետ արեց կապոցը եւ ձգեց ձեռներիս։ Նա անում էր այս բոլորը լուռ ու մունջ, կամաց-կամաց, մի եւ նոյն ժամանակ պայծառ ու խորամանկ ժպիտը կիսաբաց շրթունքներին։ Նա սկսաւ յետ տալ թելը, կծկել եւ յանկարծ մի այնպիսի պայծառ հայեացք ձգեց վերաս, որ ես ակամայ աչքերս ցած ձգեցի։ Երբ նորա սովորաբար կիսափակ աչքերը բոլորովին բացվում էին—նորա դէմքը փոխվում էր, կարծես, մի լոյս ընկում լինէր նորա վերայ։

— Ի՞նչ կարծեցիք իմ մասին երեկ, մսեո Վոյլդէմար,— հարցրեց նա ինձ փոքր ինչ լռելուց յետոյ։—Դուք անտարակոյս ինձ դատապարտեցի՞ք։

— Ես.... իշխանուհի.... ես ոչինչ չեմ մտածել.... ես ինչպէս կարող եմ...—պատասխանեցի ես շփոթուած։

— Գիտե՞ք,—սկսեց օրիորդը։—Դուք ինձ դեռ չէք ճանաչում։ Ես տարօրինակ աղջիկ եմ։ Ես կամենում եմ, որ ինձ հետ միշտ ճշմարիտ խօսիք։ Ես լսեցի, որ դուք տասնեվեց տարեկան էք, իսկ ես—քսան եւ մի. տեսնում էք, ես ձեզանից բաւականին մեծ եմ, եւ դորա համար էլ ինձ հետ

ճշմարիտ պիտի խօսիք.... և լսէք ինձ,—աւելացրեց նա։— Նայեցէք վերաս. ինչո՞ւ չէք նայում։

Աւելի ևս շփոթուեցայ, բայց էլի նայեցի նորա վերայ։ Նա ժպտաց, բայց ոչ այնպէս, ինչպէս առաջ, այս անգամ, կարծես, կամենում էր ինձ խրախուսել։—Նայեցէք ինձ վերայ,—շարունակեց նա մեղմացնելով ձայնը.—այդ ինձ դուր չէ գալիս.... Ձեր դէմքը ես հաւանում եմ և զգում եմ, որ մենք կըմտերիմանանք։ Իսկ դուք ինձ հաւանո՞ւմ էք,—աւելացրեց նա խորամանկութեամբ։

— Իշխանուհի...—սկսեցի ես...։

— Նախ և առաջ ինձ անուանեցէք Զինաիդա Ալէքսանդրովնա, իսկ ապա—ի՞նչ սովորութիւն ունին երեխաները (նա ուղղեց.)—երիտասարդները—որ ուղղակի չեն ասում այն, ինչ որ զգում են։ Այդ բանը լաւ է չափահասների համար։ Դուք հօ ինձ հաւանո՞ւմ էք։

Թէպէտ շատ ուրախ էի, որ նա այդպէս արտաբաց էր խօսում ինձ հետ, բայց կրկին ես նեղացայ։ Ես ուզում էի հասկացնել նորան, որ երեխայի հետ չէ խօսում, դորա համար էլ համարձակ և ծանրախոհ դէմքով ասացի նորան.—արդարև, Զինաիդա Ալէքսանդրովնա, ես ձեզ շատ եմ հաւանում. ես չեմ կամենում ծածկել։

Նա ծանր կերպով գլուխը շարժեց։—Դուք ունի՞ք դաստիարակ,—հարցրեց նա յանկնարծ։

— Չէ՛, վաղուց է, որ չունիմ։

Այս անգամ ես սուտ ասացի. մի ամիս էլ չկար, ինչպէս հեռացել էր իմ Ֆրանսիացի դաստիարակը։

— Օ՜, ես տեսնում եմ—դուք արդէն աղամարդ էք։

Նա կամաց խփեց մատներիս։—Ուղիղ բռնեցէք ձեր ձեռները։—Եւ ապա սկսաւ եռանդով կծկել։

Որովհետև նա գլուխը կախ արած ցած էր նայում, ես էլ օգուտ քաղելով դէպքից, սկսայ զննել նորան, զննել նորա գեղեցկութիւնը, սկզբում վախենալով, իսկ յետոյ—

աւելի ու աւելի համարձակ։ Նորա դէմքը այժմ ինձ աւելի գեղեցիկ էր թւում, քան թէ նախընթաց օրը. այնքան այդ երեսը նուրբ էր, խելօք ու սիրուն։ Նա նստած էր պատուհանի առաջ, որ ծածկուած էր սպիտակ վարագուրով։ Արեգակի ճառագայթները վարագուրի միջից թափանցելով ընկել էին նորա կակուղ, ոսկեգոյն մազերի, անմեղ պարանոցի, ուսերի և քնքուշ ու հանգիստ կրծքի վերայ։—Ես նայում էի նորա վերայ—և ոլքան նա ինձ համար սիրելի ու մերձաւոր անձ էր երևում։ Ինձ թւում էր, թէ վաղուց ես նորան ճանաչում եմ և թէ մինչև այդ ժամանակ ես ոչ ապրել, ոչ էլ բան եմ իմացել...։ Նորա հագին մութ, մաշուած շոր էր գոգնոցով. ես, կարծեմ, ուրախութեամբ կրփայփայէի այդ գոգնոցի ու շորի իւրաքանչիւր ծալքը։ Կոշիկների ծայրերը երևում էին հագուստի տակից. ես երկիւղածութեամբ կը խոնարհէի այդ կոշիկների առաջ...։ Եւ ահա ես նստած եմ նորա դէմ,—մոռացեցի ինքս ինձ,—ես նորա հետ ծանօթացել եմ.... ոլքա՜ն երջանիկ եմ ես, Աստուած իմ։ Քիչ էր մնացել ուրախութիւնից վեր թռչէի տեղից, բայց միայն ոտքերս թափ տուի փոքր երեխայի պէս, որ մի համեղ բան է տեսնում։

Ես այնպէս լաւ էի զգում ինձ, ինչպէս ձուկը ջրի մէջ, և երբէք չէի գնալ այդ սենեակից, երբէք չէի թողնել այդ տեղը։

Նա կամաց բարձրացրեց ատուանունքը, և դարձեալ քաղցրութեամբ փայլեցին նորա պայծառ աչքերը. նա դարձեալ ժպտաց։

— Ինչպէս նայում է՞ք վերս—կամաց ասաց օրիորդը և մատը վերաս թափ տուեց։

Ես կարմրեցայ...։ «Նա ամէն բան հասկանում է, ամէն բան նկատում է», իսկոյն մտքովս անցաւ։—«Եւ ինչպէս նա բոլորը չհասկանայ, ինչու՞ չնկատէ»։

Կողքի սենեակում մի թխթխկոց լսուեցաւ—սրի զընդզնդոց էր։

— Զի՛նա,—բացականչեց ընդունարանից իշխանուհին.—Բէլովզորովը քեզ համար մի փոքրիկ կատու է բերել։

— Փոքրիկ կատո՞ւ,—բացականչեց Զինաիդան և, տեղից վեր կենալով, արագ վազեց միւս սենեակը, կծիկը ծնկներիս վերայ ձգելով։

Ես էլ վեր կացայ, դրի թելի կապոցն ու կծիկը պատուհանին, մնայ ընդունարանը և մեացի սառած։ Սենեակի մէջ տեղում պառկած էր մի կատուաձագ, թաթիկները չռած։ Զինաիդան չոքել էր նորա առաջ և զգուշութեամբ վեր էր բարձրացնում կատուի դնչիկը։ Իշխանուհու մօտ կանգնել էր մի երիտասարդ հուսար, շէկ ու գանգուր մազերով, վարդագոյն թշերով և դուրս ընկած աչքերով։

— Ի՛նչ ծիծաղելի կատու է,—անդադար կրկնում էր Զինաիդան,—աչքերն էլ մոխրագոյն չեն, այլ կանաչ. իսկ ականջները ինչպէ՞ս մեծ են։ Շնորհակալութիւն, Վի՛կտոր Եգորիչ։ Դուք շատ սիրելի էք։

Հուսարը, որ երեկուայ իմ տեսած երիտասարդներից մէկն էր, ժպտաց և գլուխ տուեց, շպօրները զնդզնդացնելով և թրի օղակները շրխշրխկացնելով։

— Դուք երեկ բարեհաճեցիք ասել, որ մի շերտաւոր ու մեծ ականջներով կատու կ՚ուզենայիք ունենալ.... ես էլ ճարեցի։ Ձեր խօսքը օրէնք է։—Եւ նա կրկին գլուխ տուեց։

Կատուն մլաւեց և սկսեց յատակը հոտ քաշել։

— Նա քաղցած է,—բացականչեց Զինաիդան։—Վ.ՕՆԻՖԱՏԻ, Սօնեա, մի քիչ կաթ բերէք։

Ներս մտաւ աղախինը։ Սա հաղին ունէր մի հին դեղին շոր, իսկ վիզը փաթաթել էր գոյնը տուած թաշկինակով։ Նա դրեց կատուի առաջ մի ման կաթ և կանգնեց նայելու նորա վերայ։ Կատուն առաջ շարժուեց, աչքերը խփեց և ապա սկսեց լեզել։

— Ինչ վարդագոյն լեզու ունի,—նկատեց Զինաիդան, համարեա յատակին կպցնելով գլուխը և կողքից նորա դնչին մոտիկ տալով։

Կատուն կերաւ-կշտացաւ, միաւեց և թաթիկներով դունչը մաքրեց։ Զինաիդան վեր կացաւ, դարձաւ աղջիկին ու սառնօրէն ասաց.—տար սորան։

— Կատուի փոխարէն տուէք ձեր ձեռքը,—ասաց ծիծաղելով հուսարը և շարժելով իւր յաղթանդամ մարմինը, որ ամփոփուած էր նեղ ու կոճկած նշանաղգեստի մէջ։

— Երկուսն էլ տալիս եմ,—պատասխանեց Զինաիդան և ձեռները մեկնեց նորան։ Մինչ նա համբուրում էր այդ նազելի ձեռները, օրիորդը նայում էր ինձ նորա ուսի վերայից։

Ես անշարժ կանգնած էի մի տեղ և չէի իմանում—ծիծաղեմ, ասեմ մի բան, թէ այդպէս էլ լուռ ու մունջ մնամ։ Յանկարծ նախասենեակի բաց դրան շեմքում ես նկատեցի մեր սպասաւոր Ֆեոդրին։ Նա ինձ նշան էր անում։

Մէքենայաբար ես գնացի նորա մօտ։

— Ի՞նչ ես ուզում,—հարցրի ես։

— Մայրիդ ուղարկեց, որ ձեզ կանչեմ,—պատասխանեց ծառան ցածր ձայնով։—Նա բարկացել է, որ պատասխան չէք բերում։

— Միթէ շատ ժամանակ է, որ այստեղ եմ։

— Մի ժամից աւել է։

— Մի ժամից աւե՛լ է,—ակամայ կրկնեցի ես, նորից եկայ ընդունարանը, բոլորին գլուխ տուի և ուզում էի դուրս գալ։

— Ո՞ւր էք գնում,—հարցրեց ինձ օրիորդը՝ նայելով հուսարի ետևից։

— Տուն պիտի գնամ։ Ուրեմն ես կ՚ասեմ,—շարունակեցի ես, դիմելով տիկնոջը,—որ դուք մի ժամին կըդաք մեզ մօտ։

— Հա՛, այդպէս էլ ասացէք։

Իշխանուհին շտապով հանեց քթախոտի տուփը և այնպէս շտապով սկսեց քաշել, որ ես վեր թռայ։—Այդպէս

էլ ասացէք,—կրկնեց նա մնքտնքալով և արտասուալից աչերը կկոցելով։

Կրկին ես գլուխս տուի և դուրս եկայ սենեակից, բայց շատ վատ վիճակի մէջ էի ինձ զգում, որովհետև գիտէի, որ յետևիցս նայում էին։

— Տեսէք հա, մսեռ Վոյլդեմար, այցելեցէք մեզ,—բացականչեց Զինաիդան և կրկին ծիծաղեց։

Ինչո՞ւ է նա միշտ ծիծաղում, մտածում էի ես, վերադառնալով տուն Ֆեոդորի հետ միասին, որ ոչինչ չէր ասում, միայն գալիս էր յետևիցս և երևում էր, որ վատ բան պիտի լինի։ Մայրիկս ինձ կշտամբեց և զարմացաւ, թէ այսքան ժամանակ ես ի՞նչ կարող էի անել իշխանուհու տանը։ Ոչինչ չպատասխանեցի նորան և գնացի սենեակս։ Յանկարծ սաստիկ տխրեցի....։ Աշխատում էի ինձ զսպել, որպէս զի չլամ...։ Ես նախանձում էի հուսարին։

V.

Իշխանուհին նշանակած ժամանակին եկաւ, սակայն մայրիկս նորան չհաւանեց։ Նոցա տեսութեան ժամանակ ես ներկայ չէի, բայց ճաշին մայրիկս ասաց հօրս, թէ իշխանուհի Զասէկինան, կարծես, une femme très vulgaire լինի, թէ նա արդէն համը տարաւ իւր խնդիրքներով, որպէս զի իշխան Սերգիի առաջ բարեխօս լինիմ նորա համար, թէ նա զանազան գատեր ու գործեր ունի—de vilaines affaires d'argent—և թէ պէտք է որ նա իմաստակներից լինի։ Բացի սորանից մայրիկս աւելացրեց, որ հրաւիրել է նորան աղջկայ հետ միասին վաղը մեզ մօտ ճաշելու (լսելով «աղջկայ հետ միասին» խօսքերը՝ գլուխս կախ արի),—որովհետև էլի մեր դրացին է, բացի դորանից անուն էլ ունի։ Յետոյ հայրս պատասխանեց մօրս, թէ այժմ է միայն յիշում, ով է այդ իշխանուհին, թէ երիտասարդութեան ժա-

մանակ նա ճանաչում է եղել հանդուցեալ իշխան Զասէ-կինին, որ լաւ կրթուած, բայց թեթեւամիտ և ցանցառ մարդ էր. թէ նորան հասարակութեան մէջ «le Parisien» էին անուանում, որովհետև երկար ապրել էր Պարիզում. թէ նա առաջ շատ հարուստ մարդ է եղել, բայց բոլորովին տանուլ է տալիս իւր կարողութիւնը—և յայտնի չէ թէ ինչու, կարծեմ, փողի համար,—թէպէտ նա կարող էր լաւ կողակից գտնել իւր համար,—շարունակեց Հայրս սառնասիրտ ծիծաղով—պսակուեցաւ մի արքունական պաշտօնէի աղջկայ հետ. իսկ յետոյ ընկաւ շահի ետևից և բոլորովին կարողութիւնից զրկուեցաւ:

— Ինչպէս մեզանից փող պարտք չինդրէ,—ընդմիջեց Մայրիկս:

— Շատ կարող է լինել,—հանգիստ պատասխան տուեց Հայրս:—Խօսում է նա ֆրանսերէն:

— Շատ թոյլ:

— Հըմ: Դէ՛հ, դա միևնոյն բանն է: Կարծեմ, դու ինձ ասացիր, թէ աղջկան էլ ես կոչել. մէկը ինձ հաւատացնում էր, թէ նա շատ գեղեցիկ և ուսում առած օրիորդ է:

— Ըհը՛: Ուրեմն նա մօրը նման չէ:

— Հօրն էլ նման չէ,—պատասխանեց Հայրս:—Նա էլ նոյնպէս ուսեալ էր, բայց յիմար:

Մայրիկս ախ քաշեց և մտածմունքի մէջ ընկաւ: Հայրս լռեց: Այդ խօսակցութեան ժամանակ ես շատ անհանգիստ էի:

Ճաշից յետոյ գնացի պարտէզ, միայն առանց հրացանի: Ես խօսք էի տուել չմոտենալ «նոցա պարտիզին», բայց անյաղթ զօրութիւնը ինձ այն կողմն էր քաշում—և այդ իզուր չէր: Դեռ ցանկին չէի մօտեցել, երբ նկատեցի Զինաիդային: Այս անգամ նա միայն էր: Նա ձեռին գիրք ունէր բռնած և կամաց կամաց զբօսնում էր: Նա ինձ չէր նկատում:

Քիչ էր մնացել, որ ես նորան բաց թողնէի, բայց հանաքուց հաղացի:

Նա յետ նայեցաւ, բայց չկանգնեց, յետ ձգեց իւր յարդէ շլեապի լայն, բաց-կապոյտ ժապաւէնը, նայեց ինձ վերայ, կամաց ժպտեց և կրկին աչքերը գրքի վերայ ձգեց։

Գլխարկս հանեցի և մի քիչ տեղումս տրորուելով ու կոտրատուելով, հեռացայ բաւականին վշտացած. «Que suis je pour elle?», մտածեցի ես (Ատուած գիտէ ինչու) Ֆրանսերէն։

Յետևից լսուեցան ծանօթ քայլեր. յետ եմ նայում— հայրս է ինձ մօտենում իւր արագ ու թեթև քայլերով։

— Սա՞ է իշխանուհու աղջիկը,—հարցրեց նա ինձ։

— Այո՛, սա է։

— Մի թէ դու նորան ճանաչո՞ւմ ես։

— Ես տեսայ նորան այսօր առաւօտեան իշխանուհու տանը։

Հայրս կանգնեց և կրունկների վերայ պտտուելով՝ յետ գնաց։ Հասնելով Զինաիդային՝ նա քաղաքավարի բարևեց նորան։ Օրիորդն էլ նոյնպէս գլուխ տուեց, բայց մի քիչ զարմացաւ և դիրքն էլ ցած թողեց։ Ես նկատում էի, ինչպէս նա նայում էր հօրս յետևից։ Հայրս հագնվում էր շատ հասարակ, մաքուր և իւր ճաշակով. բայց երբէք նա աւելի վայելչակազմ չէ թուել ինձ, երբէք նորա մոխրագոյն շապկան աւելի լաւ չէ սազել նորան։

Ես էլ գնացի Զինաիդայի կողմը, բայց նա վերաս էլ չնայեց, դիրքը բարձրացրեց և առաջ գնաց։

VI.

Ողջ երեկոն և հետևեալ առաւօտը ես շատ տխուր ու տրտում անց կացրի։ Յիշում եմ, ես աշխատում էի բան անել և առնում էի Կայդանովի դասագիրքը—բայց զուր էի նայում նորա լայնածաւալ տողերի ու էջերի վերայ։ Տասն անգամ իրարու յետևից կարդացի. «Յուլիոս Կեսարը զինուորի մեծ քաջութիւն ունէր»—բայց ես ոչինչ չհասկացայ և

գիրքը դէն ձգեցի։ Ճաշից առաջ գլուխս կրկին օծեցի անուշահոտ իւղով, հագայ սիւրտուկս և կապեցի փողապատս։

— ԱՀՅԴ ինչու համար է,—հարցրեց մայրիկս։—Դու գեռ ուսանող չես, և Աստուած գիտէ, կրկարողանաս քընթուիւններդ տալ։ Եւ միթէ շատ ժամանակ է, որ բաճկոնդ կարել են։ Հօ դէն չե՞նք ձգելու։

— Հիւրեր են գալու,— պատասխանեցի ես համարեա յուսահատ։

— Դատարկ բան է. ինչ հիւրեր են նոքա։

Պէտք էր հնազանդել։ Գնացի, փոխեցի սիւրտուկս, հագայ բաճկոնս, բայց փողապատս չքակեցի։ Իշխանուհին աղջկայ հետ եկաւ ճաշից կէս ժամ առաջ. նա իւր կանաչ շորն էր հագել, որ ես արդէն տեսել էի, վերայից ձգել էր գեղին շալ, գլխին դրել էր հնաձև չեպչիկ հրազոյն ժապաւէններով։ Նա իսկոյն խօսք բաց արեց իւր պարտամուրհակների մասին. ախ էր քաշում, գանգատվում էր չքաւորութիւնից, «խնդրում էր» և բոլորովին չէր քաշվում։ Կրկին նա քթախոտ քաշելիս աղմուկ էր հանում, համարձակ շարժվում էր և անդադար տրորվում աթոռի վերայ։ Կարծես, նա չէր էլ մտածում, որ իշխանուհի է։ Ընդհակառակը, Զինաիդան իրան շատ լաւ էր բռնում. խիստ, գոռող ու հպարտ, իսկը ինչպէս իշխանադուստր։ Նորա դէմքի վերայ երևեց սառն անտարբերութիւն և հպարտութիւն—և ես ոչ նորան էի ճանաչում, ոչ նորա հայեացքները, ոչ նորա ժպիտները, թէպէտ այս նոր դրութեան մէջ նա ինձ համար կրկին գեղեցիկ էր։ Նա հագել էր թեթև ու նուրբ բարէժի շոր՝ բաց-կապտագոյն շերտերով. նորա երկար գանգուրները թափվում էին այտերի վերայ, ինչպէս անում են անգլեացի կանայք, այս խոպոպիքը վայելում էր նորա դէմքի պաղ արտայայտութեան։—Ճաշի ժամանակ հայրս նստել էր օրիորդի մօտ և իրեն յատուկ ճաշակաւոր ու հանդարտ քաղաքավարութեամբ զբաղեցնում էր իւր հա-

րևանին։ Հայրս երբեմն-երբեմն նայում էր նորա վերայ— նա էլ երբեմն-երբեմն հօրս վերայ էր նայում և այնպէս տարօրինակ, համարեա թշնամաբար։ Նոքա խօսում էին ֆրանսերէն.—յիշում եմ, ինձ շատ էր զարմացնում Զինաիդայի պարզ ու մաքուր արտասանութիւնը։ Տիկինը ճաշի ժամանակ նոյնպէս, չէր քաշվում, ուտում էր շատ և գովում կերակուրները։ Ակներև էր, որ մայրս զզուել էր նորանից և մի տխուր արհամարհանքով էր պատասխանում նորա հարցմունքին. հայրս էլ ժամանակ առ ժամանակ յօնքերն էր կիտում։ Զինաիդային էլ չհաւանեց մայրս։—Զարիազանց հպարտ է,—կրկնում էր նա հետևեալ օրը։—Եւ ինչքով է հպարտանում—avec sa mine de grisette!

— Դու, երևի, գրիսֆաներ չես տեսել,—նկատեց հայրս։

— Փառք Աստուծոյ, որ չեմ տեսել։

— Յայտնի բան է, փառք Աստուծոյ.... բայց ինչպէ՞ս կարող ես նոցա մասին խօսել։

Զինաիդան ինձ վերայ բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում։ Ճաշից յետոյ իշխանուհին շուտով վեր կացաւ տուն գնալու։

— Ձեր հովանաւորութեանն եմ վստահանում, Մարիա Նիկոլաեվնա և Պետր Վասիլիչ,—երկարացնելով ասաց նա հօրս ու մօրս։—Ի՞նչ արած։ Ես էլ լաւ օրեր եմ տեսել, բայց ո՞ւր են։ Ա՜յ, ես էլ իշխանուհի եմ,—շարունակեց նա անախորժ ծիծաղով,—բայց ի՞նչ օգուտ, եթէ ուտելու բան չունիմ։—Հայրս յարգանքով գլուխ տուեց և ճանապարհ ձգեց մինչև նախասենեակի դուռը։ Ես էլ այնտեղ կանգնած էի կարմիր բաճկոնս հագիս և, ինչպէս մի մահապարտ, յատակին էի նայում։ Զինաիդայի յարաբերութիւնները ինձ հետ բոլորովին ապանեցին ինձ։ Բայց ոլքան ես զարմացայ, երբ մօտիցս անցնելիս, նախկին քաղցր ժպիտը աչքերին, նա արագ ինձ շշնջեց.—ութը ժամին անպատճառ եկէք մեզ մօտ, լսում է՞ք....։—Ես հէնց ուզում էի պատասխանել—բայց նա արդէն հեռացել էր։

VII.

Ճիշդ ութը ժամին հագայ սիւրտուկս և մաղերս վեր սանդրած ես մտայ իշխանուհու տան նախասենեակը։ Ծերունի սպասաւորը մռայլ դէմքով նայեց ինձ վերայ և չուզենալով տեղից վեր կացաւ։ Ընդունարանում ուրախ ձայներ էին լսվում։ Բացի դուռը և զարմացած յետ քաշուեցայ։ Սենեակի մէջ տեղում աթոռի վերայ կանգնել էր օրիորդը, ձեռքին բռնած տղամարդու մի գլխարկ. աթոռը պատել էին հինգ երիտասարդ։ Նոքա աշխատում էին գլխարկի մէջ մտցնել ձեռները, իսկ օրիորդը վեր էր բարձրացնում և սաստիկ խառնում։ Տեսնելով ինձ, նա խիզոյն բացականչեց. «սպասեցէք, պարոններ, սպասեցէք, մենք նոր հիւր ունինք, նորան էլ պէտք է տոմսակ տալ»,—և աթոռից վէր թռչելով թեթև, նա բռնեց սիւրտուկիս թևից։—Գնա՛նք, ի՞նչ էք կանգնել,—ասաց նա։—*Messieurs*, խնդրեմ, ծանօթանաք. սա մսեո Վոյլդեմարն է, մեր դրացու որդին։ Իսկ սա,—շարունակեց նա, դառնալով ինձ և հերթով հիւրերին ներկայացնելով,—սա կոմս Մալևսկին է, սա—բժիշկ Լուշինը, սա—բանաստեղծ Մայդանովը, սա—պաշտօնաթող կապիտան Նիրմացկին, սա էլ հուսար Բէլովզորովն է, որին դուք արդէն տեսել էք։ Խնդրեմ, բարեկամ եղէք։

Սաստիկ ամաչելուցս ոչ ոքի դլուխ չտուի։ Բժիշկ Լուշինը այն սևահեր պարոնն էր, որ անխղճաբար ամաչացրեց ինձ պարտիզում։ Մնացածները ինձ անծանօթ էին։

— Կոմս,—շարունակեց Զինաիդան,—գրեցէք մի տոմսակ մսեո Վոյլդեմարի համար։

— Դա անարդարութիւն է, — պատասխանեց կոմը թեթև լեհական արտասանութեամբ, որ շատ դեղեցիկ էր դէմքով, հագնուած էր խիստ սիրուն. նա սև մաղերով մի մարդ էր, աչքերը—թուխ ու խելօք, քիթը—փոքրիկ, նեղ ու սպիտակ, բեխերը—բարակ՝ նուրբ շրթունքների վերայ։—Նա մեզ հետ ֆանտ չէ խաղացել։

— Անարդարութիւն է,—կրկնեցին Բէլովզորովը և կապիտանը, որ քառասուն տարեկան կը լինէր. սա խիստ չէջոտ էր, արաբի պէս խուճուճ մազերով, սեղմուած թիկունքներով, ծուռ ոտներով, հագին—չկոճկած զինուորական նշանագգեստ առանց էպոլէտների։

— Ասում եմ ձեզ, գրեցէք մի տոմսակ,—կրկնեց օրիորդը։—Այդ ի՞նչ ապստամբութիւն է։ Մսեո Վ.ցլգեմարը այսօր առաջին անգամն է մեզ մօտ, և նորա համար օրէնք չկայ։ Ի՞նչ էք մրթմրթում, գրեցէ՛ք. ես այդպէս եմ կամենում։

Կոմսը ուսերը վեր քաշեց, բայց խոնարհաբար գլուխը ծռեց, սպիտակ, մատանիներով զարդարուած ձեռը առաջ գրիչ կարեց մի թղթի կտոր և սկսեց գրել։

— Գոնէ թոյլ տուէք, պատմեմ պ. Վ.ցլգեմարին գործի էութիւնը,—ծաղրական ձայնով սկսեց Լուշինը,—թէ չէ նա բոլորովին շուարել է։ Տեսնում էք, երիտասարդ պարոն, մենք ֆանտ ենք խաղում. օրիորդը տուգանքի է ենթարկուած, և ում որ ընկնի վիճակը, իրաւունք ունի նորա ձեռքը համբուրելու։ Հասկացա՞ք, ինչ որ ասացի ձեզ։

Ես միայն նայեցի նորա վերայ և կրկին շուարած մնացի. իսկ օրիորդը նորից բարձրացաւ աթոռի վերայ և նորից սկսեց թափ տալ գլխարկը, խառնելով նորա միջի թղթերը։ Ամէնքը նորան դարձան—ես էլ նոցա հետևեցի։

— Մայդանով,—ասաց օրիորդը նիհար ու բարձրահասակ երիտասարդին, որի աչքերը փոքր էին ու կարճատես, իսկ մազերը երկայն ու խիստ սև։—Դուք որպէս բանաստեղծ այնքան մեծահոգի պիտի լինիք և ձեր տոմսակը պիտի տաք մսեո Վ.ցլգեմարին, որ նա մէկի տեղ երկուսը ունենայ։

Բայց Մայդանովը բացասապէս շարժեց գլուխը և թափ տուեց մազերը։ Ամէնից վերջը ես ձեռս տարայ գլխարկը,

հանեցի մի տոմսակ և բաց արի...: Աստուած իմ, ի՜նչ վիճակի մէջ էի, երբ կարդացի բառս. Համբոյր:

— Համբոյր,—բացականչեցի ես ակամայ:

— Բրավո՛, սա տարաւ,—ասաց օրիորդը: Ինչպէ՞ս ուրախ եմ:—Նա ցած իջաւ սթոռից և այնպիսի պայծառ ու քաղցր հայեացք ձգեց վերաս, որ սիրտս հալուեցաւ:—Իսկ դուք ուրա՞խ էք,—հարցրեց նա ինձ:

— Ե՞ս...:—Հաղիւ շշնջեցի:

— Ցախեցէք ինձ ձեր տոմսակը,—յանկարծ ձայն տուեց ականջիս տակին Բէլովզօրովը:—Ես ձեզ հարիւր ռուբլ կը տամ:

Ես այնպիսի դժդոհութեամբ պատասխանեցի հուսարին, որ Զինաիդան ծափահարեց. իսկ Լուշինը բացականչեց. բրավո՛:

— Բայց,—շարունակեց նա,—ես իբրև կարգապահ պարտաւոր եմ հսկել, որ բոլոր կանոնները ճշտիւ կատարուին: Մսեռ Վոյլդեմար, չոքեցէք: Մենք այդպէս ենք ընդունել:

Զինաիդան կանգնեց առջևս, գլուխը փոքր ինչ մի կողմ թեքեց, կարծես, նորա համար, որ ինձ լաւ տեսնէ և հպարտութեամբ ձեռը ինձ մեկնեց: Աչքերս մթնեցան. կամենում էի մի ծնկիս վերայ չոքել երկուսի վերայ չոքեցի և այնպէս անցաջող շրթունքներս մօտեցրի Զինաիդայի մատներին, որ քթիս ծայրը անդամ քերթեցի նորա եղնդով:

— Շա՞տ լաւ,—գոչեց Լուշինը և օդնեց ինձ վեր կենալու:

Խաղը շարունակվում էր: Զինաիդան նստեցրեց ինձ իւր կողքին: Տէ՞ր Աստուած, ինչպիսի պատիժներ էր հնարում նա: Ի միջի այլոց նա պիտի ձևացնէր «արձան»—և իւր համար պատուանդան ընտրեց անձռուռի Նիրմացկիին, հրամայեց նորան երեսի վերայ պարկել, դեռ գլուխն էլ դէպի կուրծքը ծռել: Անվերջ ծիծաղում էինք: Ես, որ կրթուել էի բոլորովին միայնակ ու զգաստութեամբ, մեծացել էի պատուաւոր ու մեծանուն մարդու տան մէջ, այս բոլոր աղմուկն ու շփոթը, այս անպուսապ զուարճութիւնը, այս չեղած յա-

բաբերութիւնը անծանօթ մարդկանց հետ, տեսնելով զարմանում էի, և այս բոլորը գլուխս խփեց։ Ես բոլորովին հարբած էի՝ այնպէս, ինչպէս գինուց են հարբում։ Ես սկսեցի ուրիշներից բարձր ծիծաղել և խօսել, այնպէս որ կողքի սենեակում նստած պառաւ իշխանուհին դուրս եկաւ ինձ վերայ նայելու։ Ես այնքան երջանիկ էի, որ բնաւ ուշադրութիւն չէի դարձնում ուրիշների վերայ. ոչ բարկանում էի, ոչ էլ բանի տեղ էի դնում ուրիշների ծաղրն ու ծուռ հայեացքները։ Զինաւիդան էլի ինձ էր գերադասում և չէր թողնում, որ կողքից հեռանամ։ Խաղի ժամանակ մեզ պատժեցին. ես և օրիորդը պիտի նստէինք ծածկուած մի ապրեշումի թաշկինակով,—ես պիտի յայտնէի նորան ֆ՝ գաղանիքը։ Յիշում եմ. ինչպէս երկուսիս գլուխն էլ գտնվում էր խեղդուկ, կիսամութ ու հոտաւէտ մթնոլորտում, ինչպէս այդտեղ մեզմ ու մօտիկ փայլում էին նորա աչքերը և ջերմ սրտաշնչում էին նորա բաց շրթունքները, երևում էին ատամները, և մազերը խտղտում և բորբոքում էին ինձ։ Ես լուռ էի։ Նա խորհրդաւոր ու նենգ ժպտաց և ասաց ականջիս. դէ, ի՞նչ է. իսկ ես միայն կարմրում էի և ծիծաղում, յետ էի քաշվում և հազիւ հազ շնչում։ Ցանաը համը տարաւ,—սկսեցինք թոկ խաղալ։ Աստուա՜ծ իմ, ինչպէս ուրախացայ, երբ նա ամուր ու սաստիկ մատներիս խփեց յօրանջելուս համար, և ինչպէս յետոյ ես աշխատում էի ցոյց տալ, իբրև թէ յօրանջում եմ, իսկ նա միայն ծաղրում էր ինձ և չէր խփում ձեռներիս։

Եւ ինչե՞ր էինք անում այդ երեկոյ։ Դաշնակ էին ածում, երգում էինք, պար էինք գալիս և գնչուներին էինք ներկայացնում։ Նիրմացկուն արջի մորթի հագցրինք և աղաջուր խմեցրինք։ Կոմս Մալեվսկին զանազան ձեռնածութիւններ էր անում թղթերով և վերջացրեց նորանով, որ խառնեց բոլոր թղթերը, բաժանեց և իրան առաւ բոլոր կօզբրները, որի համար Լուշինը «պատիւ ունեցաւ նորան շնորհաւո-

բելու»։ Մայդանովը կարդաց իւր «Մարդասպան» պոէմայից մի կտոր (ռոմանտիզմի ամենաթունդ ժամանակն էր), որ նա մտադիր էր հրատարակել սև երեսով, արիւնագոյն կարմիր վերնագրով։ Ծերունի Վօնիփատիի գլուխը չէպէց գրին— իսկ օրիորդը տղամարդու գլխարկ հագաւ...։ Թէ ինչեր էինք անում, անհնարին է մի առ մի թուել։ Միայն Բէլովզօրովն էր, որ առանձնացած նստել էր անկիւնում յօնքերը կիտած...։ Երբեմն նորա աչքերը կարմրում էին, կարմրում էր նորա ողջ դէմքը, կարծես, ահա նա վեր է կենալու տեղից և մեզ, որպէս մի մի փայտի կտոր, դէն է ձգելու. սակայն օրիորդը մի մի ժամանակ նայում էր նորա վերայ, սաստում էր նորան մատով, և նա կրկին իւր անկիւնն էր մտնում։

Հալից արդէն ընկել էինք։ Իշխանուհին, ինչպէս ինքն էր ասում, ոտի վերայ շատ պտտուողներից է—մեր աղաղակները նորան չէին վրդովում—այնու ամենայնիւ հոգնել էր և հանդստանալ էր ուզում։ Գիշերուայ տասնումէկ ժամին ընթրիք տուին, որ բաղկացած էր մի կտոր հին, չորացած պանրից և կոտրած ապխտից շինած մի քանի կարկանդակներից, որ ինձ համար զանազան պաշտէտներից համեղ էին։ Գինի միայն մի շիշ կար. շիշն էլ մի ուրիշ տեսակ էր. մութ գոյն ունէր և լայ բերան, իսկ գինին վարդագոյն երանգ ունէր, թէպէտ ոչ ոք չիմեց։ Սարսափելի հոգնած ու երջանիկ ես դուրս եկայ այդ տեղից. դուրս գալու ժամանակ Զինաիդան ամուր սեղմեց ձեռս և կրկին անհասկանալի ժպտաց։

Գիշերուայ ծանր ու խոնաւ օդը փչեց իմ տաք երեսիս. կարծես, շուտով փոթորիկ պիտի բարձրանար։ Սև սև ամպերը հաւաքուելով սահում էին երկնքում և նկատելի կերպով փոխում էին իրանց մխագոյն ձևերը։ Քամին անհանգիստ շվուացնում էր մութ ծառերի մէջ, և հեռու, շատ հեռու, հոլիզոնից դուրս, ասես ինքն իրեն, բարկացած ու խուլ մրմռում էր որոտը։

Ցան յետին դռնով եկայ սենեակս։ Ծառաս քնած էր յատակի վերայ, այդ պատճառով ես ստիպուած էի թռչել նորա վերայից։ Նա արթնացաւ, տեսաւ ինձ և ասաց, որ մայրս դարձեալ բարկացել էր, կամեցել է ուղարկել ինձ կանչելու, բայց հայրս չէ թողել։ (Երբէք ես մօրս չհամբուրած և նորա օրհնութիւնը չստացած չէի քնում)։ Բայց ի՞նչ արած։

Ծառայիս ասացի, թէ ինքս կը հանեմ շորերս ու կը պարկեմ—և ճրագը հանդցրի։ Բայց ես ոչ շորերս հանեցի, ոչ էլ պարկեցի։

Աթոռի վերայ նստած երկար մնացի ես զմայլուած։ Ինչ որ ես զգում էի, այնպէս նոր էր, այնպէս քաղցր էր ինձ համար...։ Ես համարեա չէի նայում շուրջս, չէի շարժվում, կամաց շունչ էի քաշում և երբեմն միայն կամ մտաբերելով գլխովս անցածը ծիծաղում էի, կամ սարսուռ էի զգում, երբ մտածում էի, որ ես սիրահարուած եմ, որ ահա նա, ահա այդ սէրը։ Զինաիդայի պատկերը հանգիստ պտտում էր իմ առաջ մթութեան մէջ—և բոլորովին չէր հեռանում։ Նորա շրթունքները նոյնպէս խորհրդաւոր ժպտում էին, նորա աչերը ինձ էին նայում փոքր ինչ մի կողքից. այդ հայեացքը հարցական, մտայոյզ և քնքուշ էր.... ինչպէս և այն վայրկեանին, երբ ես հեռացայ նորանից։ Վերջապէս ես վեր կացայ, կամաց-կամաց մօտեցայ անկողնիս, նոյնպէս զգոյշ, առանց շորերս հանելու, գլուխս բարձին դրի, կարծես, երկիւղ էի կրում, որ չլինի թէ մի կոպիտ շարժմունքով խանդարեմ այն, ինչ որ իմ հոգուն ու սրտին տիրել էր...։

Ես պարկեցի, բայց չփակեցի էլ աչքերս։ Նուտով ես նկատեցի, որ անդադար սենեակս մի տեսակ աղօտ լոյս է ընկնում և անհետանում։ Գլուխս բարձացրի և պատուհանին նայեցի։ Նորա շրջանակը պարզ որոշվում էր ապակիներից, որոնք թոյլ կերպով սպիտակին էին տալիս։

Փոթորիկ է—մտածեցի ես—և արդարև փոթորիկ էր, բայց այնքան հեռու էր նա, որ ոլոտը բոլորովին չէր լսվում. երբեմն երկնքում վառվում էին աղօտ, երկար, ասես, ճիւղաւորուած փայլակներ. նոքա այնքան չէին վառվում, որքան թրթռում ու դողդողում էին մեռնող թռչնի թևի նման: Վէր կացայ, մօտեցայ պատուհանին և այնտեղ կանգնած մնացի մինչև առաւօտ...: Կայծակը մի րոպէ անգամ չէր դադարում: Ես նայում էի աւազուտ լուռ դաշտին, Նեսկուչնի պարտիզի մթութեան մէջ թաղուած ծառերին, հեռուում գտնուող տների դեղնագոյն ճակատներին, որոնք, կարծես, նոյնպէս դողում էին, երբ կայծակը վառվում էր...: Շարունակ նայում էի ես—և չէի կարողանում աչքս հեռացնել: Այս թոյլ ցոլքը, այս լուռ կայծակները համապատասխանում էին այն լուռ ու ծածուկ յուզմունքին, որ ալէկոծում էր իմ սիրտը: Լոյսը բացվում էր. երկինքը կարմրեցաւ արշալուսի փայլեց: Արեգակը մօտենում էր, իսկ կայծակները կորցնում էին իրանց փայլը, կրկնվում էին ուշ ուշ և վերջապէս անհետացան, թաղուելով արեգակի պայծառ լուսի մէջ....:

Իմ յուզմունքս էլ անհետացաւ: Ես զգացի սաստիկ հոգնութիւն, և սիրտս հանդարտեցաւ.... բայց Զինաիդայի պատկերը դարձեալ չէ հեռանում հոգուցս: Միայն նա, այդ կերպարանքը, հանգիստ ու խաղաղ էր երևում. ինչպէս ճահճային խոտերից հեռացող մի կարապ, նա ևս բաժանուեցաւ իրեն շրջապատող կերպարանքներից, և ես, քուն լինելով, վերջին անգամ սիրոյ ակնածութեամբ և հաւատով փայփայեցի նորան....:

Ո՛հ, հեղ զգացմունք, մեղմ ձայներ, յուզուած հոգու անդորրութիւն, սիրոյ վայելչութեան առաջին յափրանք,—ո՞ւր էք դուք, ո՞ւր էք:

VIII.

Հետևեալ օրը առաւօտեան, երբ ես ցած գնացի թէյ խմելու, մայրիկս ինձ վերայ բարկացաւ—բայց աւելի քիչ, քան ես էի սպասում—և ստիպեց ինձ պատմել, թէ ինչպէս անց կացրի ժամանակս նախընթաց երեկոյեան: Մի քանի խօսքով ես նորան պատասխան տուի, բայց թողնելով մանրամասնութիւնները և աշխատելով բոլորին ամենաանմեղ կերպարանք տալ:

— Բայց էլի նոքա comme il faut մարդիկ չեն,—նկատեց մայրիկս,—և ամենևին չէ վայելում քեզ այդքան յաճախել նոցա՝ փոխանակ քնութիւններիդ պատրաստուելու և պարապելու:

Որովհետև ես շատ լաւ գիտէի, որ մօրս հոդատարութիւնը իմ ուսմանս մասին այդ մի քանի խօսքովը պիտի վերջանայ, հարկաւոր չհամարեցի պատասխանել նորան, բայց թէյից յետոյ հայրս ձեռքիցս բռնեց, տարաւ պարտէզ և ստիպեց ինձ բոլորը պատմել, ինչ որ տեսել էի Զասէկինենց տանը:

Տարօրինակ էր հօրս ազդեցութիւնը ինձ վերայ—տարօրինակ էին և մեր յարաբերութիւնները: Նա համարեա չէր զբաղվում իմ կրթութեամբ, բայց և երբէք չէր անպատվում ինձ. նա յարգում էր իմ ազատութիւնը—մինչև անդամ, եթէ կարելի է այսպէս ասել, քաղաքավարի էր վարվում ինձ հետ..... միայն երբէք տեղիք չէր տալիս առանձին կերպով իրեն մօտենալու: Ես սիրում էի նորան և հիանում էի նորանից, նա ինձ համար օրինակելի տղամարդ էր — և, Աստուած իմ, ոչքան ես սերտ կապուած կը լինէի նորա հետ, եթէ ես միշտ չզդայի նորա հեռացնող ձեռքի. զօրութիւնը: Բայց և այնպէս, երբ նա կամենում էր, կարողանում էր մի բառով, մի շարժմունքով ստիպել, որ ես անսահման կերպով հաւատամ իրեն: Սիրտս բոլո-

լովին բացվում էր—ես խօսում էի նորա հետ, որպէս խելացի ընկերիս, բարի դաստիարակիս հետ..... յետոյ նա նոյնպէս յանկարծ մենակ էր թողնում ինձ—և նորա ձեռք կրկին հեռացնում էր ինձ—քնքուշ ու սիրող կերպով—բայց դարձեալ հեռացնում էր։

Երբեմն նա ուրախանում էր և այն ժամանակ պատրաստ էր լինում չարութիւն անելու ինձ հետ երեխայի պէս (նա սիրում էր ամէն տեսակ մարմնամարզութիւն). մի անգամ—այո՛, միայն մի՛ անգամ—նա քնքշութեամբ փայփայեց ինձ, և քիչ էր մնում լաց լինէի...։ Բայց նորա ուրախութիւնն էլ, քնքշութիւնն էլ այնպէս անհետ կորչում էին—որ նոքա երբէք ինձ ապագայի յոյս չէին տալիս—կարծես, թէ այդ բոլորը ես երազումն տեսած լինէի։ Երբեմն ես սկսում էի զննել նորա խելօք, գեղեցիկ, պայծառ դէմքը..., սիրտս դողում էր և ես հոգւով ու մարմնով ձգտվում էի նորան.... նա, կարծես, հասկանում էր իմ յուզմունքը, թեթև ձեռ էր տալիս թշիս—և կամ հեռանում էր, կամ մի բանով զբաղվում էր, կամ յանկարծ մնում էր լուռ ու մտայոյզ. ես էլ իսկոյն երկչոտ կերպով քաշվում էի մի անկիւն։ Այն սէրը, որ նա երբեմն ցոյց էր տալիս ինձ, չէր լինում իմ լուռ, բայց հասկանալի աղաչանքիս հետևանքը, այդ սէրը միշտ անսկզբնական էր լինում ինձ համար։ Յետոյ հօրս բնաւորութեան վերայ մտածելով՝ ես հասայ այն եզրակացութեան, որ նա ո՛չ իմ մասին, ո՛չ էլ ընտանեկան կեանքի մասին էր մտածում. նա ուրիշ բան էր սիրում, որ և լեովին վայելեց։ «Ինչ որ կարող ես, ինքդ վեր ա՛ռ, իսկ քեզ ուրիշների ձեռքը մի՛ ձգիր. այնպէս արա՛, որ ինքդ քեզ պատկանես—ահա կեանքի բոլոր դաղտնիքը»—ասաց նա ինձ մի անգամ։ Մի ուրիշ անգամ ես՝ եգիպտասարդ դէմոկրատի պէս, սկսեցի հօրս տառՋ խօսել ազատութեան վերայ (այդ օրը նա, ինչպէս ես ասում էի, «բարի» էր. այդ ժամանակ կարելի էր խօսել նորա հետ, ինչ որ կամենաս)։—

Ազատութիւն,—կրկնեց նա,—բայց դու գիտես, թէ ի՞նչ բան կարող է մարդուս ազատութիւն տալ։

— Ի՞նչ։

— Կամքը, սեպհական կամքը, նա և իշխանութիւն կըտայ, որ ազատութիւնից լաւ է։ Կարողացիր կամենալ, և ազատ կըլինիս, կըհրամայես։

Հայրս ամէնից առաջ և ամէն բանից շատ կամենում էր ապրել և ապրում էր... Գուցէ նա զգում էր, որ երկար չպիտի կարողանայ օգուտ քաղել «կեանքի գաղտնիքից». նա մեռաւ քառասներկու տարեկան հասակում։

Ես մանրամասնաբար պատմեցի հօրս իմ այցելութիւնը Զասէկինենց։ Նա ուշադրութեամբ չէր լսում ինձ. նստարանի վերայ նստած, նա ճիպոտի ծայրով բանկր էր գծում աւազի վերայ։ Երբեմն նա ծիծաղում էր, պայծառ ու զուարթ հայեացք էր ձգում վերաս, երբեմն էլ գրգռում էր ինձ կարճ հարց ու պատասխաններով։ Սկզբում ես չէի իշխում արտասանել Զինաիդայի անունը, բայց ինձ զսպելու անկարող եղայ և սկսեցի գովել նորան։ Հայրս շարունակ ծիծաղում էր։ Յետոյ նա մտածմունքի մէջ ընկաւ, ճմլկոտաց ու տեղից վեր կացաւ։

Միտս ընկաւ, որ տանից դուրս գալուս նա հրամայեց, որ ձին թամքեն։ Նա լաւ ձի քշող էր և կարողանում էր սանձահարել ամենակատաղի ձիերը։

— Ե՞ս էլ քեզ հետ պիտի գամ, հայրիկ,—հարցրի ես։

— Ո՛չ,—պատասխանեց նա, և նորա դէմքը կրկին ստացաւ իւր սովորական, անտարբեր ու քաղցր արտայայտութիւնը։—Գնա՛ ինքդ միայն, եթէ կամենում ես. ասա կառապանին, որ ես չեմ գնալու։

Նա շուռ եկաւ և շտապով հեռացաւ ինձանից։ Ես նայում էի, թէ ուր կըգնայ նա—նա դուրս եկաւ դարպասից։ Ես տեսայ, ինչպէս նորա գլխարկը շարժվում էր ցանկապատի մօտ. նա մտաւ Զասէկինենց տունը։

Նա մի ժամից աւել չմնաց նոցա մօտ, դուրս եկաւ այնտեղից, գնաց քաղաք և իրիկնապահին տուն վերադարձաւ։

Ճաշից յետոյ ես էլ գնացի Զասէկինենց տունը։ Ընդունարանում ես պատահեցայ միայն պառաւ իշխանուհուն։ Ինձ որ տեսաւ, խսկոյն դլուխը քերեց մի ծայրով և հարցրեց, արդեօք կարո՞ղ եմ նորա համար մի խնդիրք արտագրել։

— Ուրախութեամբ, — պատասխանեցի ես, նստելով սթոռի ծայրին։

— Միայն խնդրում եմ, խոշոր տառերով արտագրեցէք,—շարունակեց իշխանուհին, տալով ինձ մի մրոտած թերթ.—չէ՞ կարելի, որ այսօր պատրաստէք։

— Հէնց այսօր էլ կ'արտագրեմ։

Կողքի սենեակի դուռը կիսաւ բացուեցաւ և երևեցաւ Զինաիդայի դէմքը—դունատ, մտախոհ, մազերը անկարգ ուսերին թափթփած. նա նայեց ինձ վերայ մեծ մեծ սառն աչքերով և կամաց յետ արեց դուռը։

— Զի՛նա, Զի՛նա, — բացականչեց մայրը։ Զինաիդան չպատասխանեց։ Ցարդ պառաւի խնդիրքը և ողջ երեկոն նստած նորանով էի պարապում։

IX.

Այդ օրուանից սկսեց իմ «սէրը»։ Յիշում եմ, ես զգացի այն, ինչ որ զգում է նոր ծառայութիւն մտած մարդը. ես արդէն հասարակ պատանի չէի—ես սիրահարուած էի։ Ես ասացի, որ այդ օրուանից է սկսում իմ սէրը. կարող եմ աւելացնել, որ իմ տանջանքներս էլ այդ օրից սկսեցին։ Զինաիդայի բացակայութեան ժամանակ ես մաշվում էի. գլուխս ոչինչ չէր մտնում, ամէն բան ձեռքիցս վայր էր ընկնում, ողջ օրերով անընդհատ մտածում էի

նորա վերայ.... Ես հալվում էի.... բայց նորա ներկայութիւնը չէր թեթևացնում իմ տանջանքը։ Ես նախանձում էի, ես զգում էի իմ ոչնչութիւնը, յիմար կերպով նեղացած էի ձևանում և յիմար կերպով ստրուկ էի դառնում նորա ձեռքին—այնու ամենայնիւ մի անյաղթ զօրութիւն մղում էր ինձ դէպի օրիորդը և ամէն անգամ երջանկութեան ակամայ դողը սրտումս՝ անցնում էի նորա սենեակի շեմքը։ Զինաիդան իսկոյն գլխի ընկաւ, որ ես սիրահարուել եմ իրեն վերայ, սակայն ես էլ միտք չունէի այդ ծածուկ պահել. նա զուարճանում էր իմ զգացմունքով, յիմարացնում, չարչարում և երես էր տալիս ինձ։ Քաղցր է լինել ուրիշի ամենամեծ ուրախութեան և ամենախորին վշտի միակ աղբիւրը, ինքնիշխան և անպայման պատճառը—իսկ ես Զինաիդայի ձեռքին փափուկ մեղրամոմի պէս բան էի։ Միայն ես չէի սիրահարուել նորա վերայ. բոլոր տղամարդիկը, որոնք այցելում էին նոցա, բոլորովին խելքամաղ էին եղել նորանից և նա բոլորին էլ ստրկացրել էր։ Նորա համար մի զուարճութիւն էր արծարծել նոցա մէջ մերթ յոյս, մերթ երկիւղ, խաղացնել ըստ իւր հաճոյից (այս նա անուանում էր. մարդկանց իրարու խփել), իսկ նոքա չէին էլ մոածում ընդդիմանալ և սիրով հնազանդում էին։ Նորա ամբողջ կենդանի ու գեղեցիկ էութեան մէջ խորամանկութեան ու անհոգութեան, արուեստականութեան ու պարզութեան, հանդարտութեան ու կայտառութեան մի խիստ զմայլեցուցիչ խառնուրդ կար։ Նորա ամէն արածը, խօսածը, բոլոր շարժուածները զարմանալի նուրբ էին և գեղեցիկ. ամէն մի բանում նկատվում էր մի տեսակ ինքնուրոյն, կենդանի զօրութիւն։ Նորա դէմքն էլ անդադար փոփոխվում էր. նա համարեա մի և նոյն ժամանակ արտայայտում էր—ծաղը, մոախոհութիւն և կիրք։ Զանազան տեսակ զգացմունքներ, թեթև ու արագ, ինչպէս արև ու հողմային

օրուայ ամպերի ստուեր, անցնում էին նորա աչքերի ու շրթունքների վերայ։

Նորա պաշտողներից իւրաքանչիւրը պէտք էր, հարկաւոր էր նորան։ Բէլովզորովը, որին նա երբեմն անուանում էր «իմ գազան», երբեմն էլ միայն «իմ» — սիրով նորա համար կրակը կ՚ընկնէր։ Յոյս չունենալով իւր մտաւոր ընդունակութիւնների և ուրիշ արժանաւորութիւնների վերայ, նա անդադար առաջարկում էր ամուսնանալ նորա հետ, ակնարկելով, որ ուրիշները միայն խօսում են։ Մայդանովը պատասխանում էր նորա հոգու բանաստեղծական լարերին. նա բաւականին պաղարիւն մարդ էր, ինչպէս առ հասարակ լինում են բոլոր մատենագիրները, անդադար հաւատացնում էր նորան, գուցէ և իրեն, թէ պաշտում է նորան, ամենքից բանաստեղծութիւնների մէջ նորան երգում էր և կարդում էր նորան այդ գրուածները մի անբնական, բայց և անկեղծ բերկրութեամբ։ Օրիորդն էլ թէ՛ համակրում էր նորան, թէ՛ մի փոքր ծիծաղում էր. նա քիչ էր հաւատում Մայդանովին և նորա զգացմանց արտայայտութիւններից ձանձրացած, ստիպում էր կարդալ Պուշկին, ինչպէս նա էր ասում, օդը մաքրելու համար։ Լուշինը, որ ամէն բանի ծաղրով վերաբերուող և խօսքերով ցինիկ բժիշկ էր, ամէնից լաւ էր ճանաչում օրիորդին—և ամէնից շատ էր սիրում նորան, թէպէտ հայհոյում էր նորան թէ՛ նորա ներկայութեան և թէ՛ բացակայութեան ժամանակ։ Զինաիդան յարգում էր նորան, բայց փոխարէնը հատուցանում էր—և երբեմն մի առանձին չարախինդ զուարճութեամբ զգալ էր տալիս նորան, որ նա ևս իւր ձեռքումն է։ «Ես կոտրտվում եմ, ես անսիրտ եմ, ես դերասանի բնութիւն ունիմ,—ասաց օրիորդը Լուշինին իմ ներկայութեանս.—Լա՛ւ, տուէք ինձ ձեր ձեռքը, քորոցով կրծակեմ նորան, դուք կ՚ամաչէք այս երիտասարդից, ձեր ձեռը կրցաւի, բայց դուք, ճշմար-

տախծս բարեկամ, բարեհաճեցէք ծիծաղել»։ Լուշինը կարմրեց, երեսը շուռ տուեց, պռոշները կծեց և վերջ ի վերջոյ ձեռը մեկնեց նորան։ Օրիորդը ծակեց ձեռը, և նա արդարև սկսեց ծիծաղել... օրիորդն էլ էր ծիծաղում, բաւականին խորը կոխելով քորոցը և ուղիղ նայելով նորա աչքերին. իսկ Լուշինը ի զուր էր աշխատում խոյս տալ նորա հայեացքից....

Ինձ համար շատ անհասկանալի էին Զինաիդայի և կոմս Մալեվսկիի յարաբերութիւնները։ Նա գեղեցիկ էր, խելօք ու ճարպիկ, բայց բոլորը կասկածելի, շինծու էր թւում մինչև անգամ ինձ, տասն և վեց տարեկան պատանուս, և ես զարմանում էի, որ Զինաիդան այդ չէր նկատում։ Գուցէ նա այդ նկատում էլ էր, բայց «ուշադրութիւն չէր դարձնում։ Անկանոն դաստիարակութիւնը, տարօրինակ ծանօթութիւններն ու սովորութիւնները, մօր մշտական ներկայութիւնը, տան չքաւորութիւնն ու անկարգութիւնը, ամէն բան, սկսած ազատութիւնից, որ վայելում էր մատաղահաս օրիորդը, շրջապատող մարդկանցից դերազանց լինելու գիտակցութիւնը մի տեսակ արհամարհող անհոգութիւն ու անտարբերութիւն էր զարգացրել նորա մէջ։ Ինչ որ էլ պատահէր—դար, օրինակ, Վօնիֆատին և ասէր, թէ շաքար չկայ, կամ մի տգեղ բամբասանք յայտնուէր, կամ հիւրերը խռովէին—նա միայն մաղերը թափ տալով ասում էր. Է՜հ, դատարկ բաներ են—և էլ բանի վերայ չէր մտածում։

Երբեմն արիւնս եռ էր գալիս, երբ Մալեվսկին մօտենում էր նորան աղուէսի խորամանկութեամբ, գեղեցիկ ձևերով դիմում էր նորան և աթոռին յենուած՝ փափաքալով բաներ էր ասում նորա ականջին՝ ինքնահաւան ու շողոքորդ ժպիտը երեսին, իսկ օրիորդը, ձեռքերը կրծքին խաչած, ուշադրութեամբ նայում էր նորան, ժպտում և գլուխը շարժում էր։

— Ինչու՞ համար էք ընդունում պ. Մալեվսկիին,— հարցրի ես մի անգամ օրիորդից։

— Ո՞հ, նա ի՛նչ գեղեցիկ բեխեր ունի,—եղաւ նորա պատասխանը։—Բայց այդ դուք չէք հասկանալ։

— Զլենի, որ կարծէք, թէ ես սիրում եմ նորան,— ասաց նա ինձ մի ուրիշ անգամ։—Ո՛չ, այնպիսիներին ես սիրել չեմ կարող, որոնց վերայ ստիպուած եմ վերևից ցած նայել։ Ինձ պէտք է այնպիսին, որ կարողանար յաղթել ինձ.... Զէ՛, ես այդպիսիներին չեմ պատահիլ, Աստուած ողորմա՛ծ է։ Ես երբէք, երբէ՛ք ոչ ոքի ճանկը չեմ ընկնիլ։

— Ուրեմն դուք ոչ ոքի՞ չէք սիրիլ։

— Իսկ ձե՞զ։ Մի՞թէ ես ձեզ չեմ սիրում,—ասաց նա ու ձեռնոցի ծայրով քթիս խփեց։

Այո, Զինաիդան շատ էր ծիծաղում վերաս։ Երեք շաբաթ շարունակ ես նորան տեսնում էի ամէն օր— ինչե՛ր էր բերում նա իմ գլուխը։ Նա մեզ մօտ քիչ էր գալիս, և դորա համար ես չէի ցաւում. մեր տանը նա իսկը իշխանուհի էր դառնում—և ես նորանից փախչում էի։ Ես վախենում էի, որ մօրս առաջ ինձ կըմատնեմ. նա շատ չէր սիրում Զինաիդային և կասկածով էր նայում մեզ վերայ։ Հօրիցս այնքան չէի վախենում. նա, կարծես, ինձ չէր էլ նկատում, իսկ օրիորդի հետ քիչ էր խօսում, բայց խօսած ժամանակը խօսում էր շատ խելօք և ասածին առանձին նշանակութիւն տալով։ Ես էլ բան չէի անում, չէի կարդում—ես մինչև անգամ չէի ճեմում, ոչ էլ ձիով ման էի գալիս մեր ամարանոցի շրջակայքում։ Ինչպէս ոտը կապած մի բղէզ, ես անդադար պտտում էի սիրած տան չորս կողմը. ինձ թւում էր, թէ ես յաւիտեան կըմնայի այնտեղ.... բայց այդ անկարելի էր. մայրս դժգոհ էր ինձանից, երբեմն էլ ինքը Զինաիդան էր ինձ քշում։ Այն ժամանակ ես կամ

փակվում էի սենեակումս, կամ գնում էի պարտիզի միս ծայրը, բարձրանում էի քարաշէն ջերմոցի չքանդուած պատի վերայ և ոտներս կախ արած ժամերով նստում էի և նայում ճանապարհի վերայ, բայց ոչինչ չէի տեսնում: Այդտեղ թողուած աղինջների վերայ դանդաղ թռչկոտում էին սպիտակ թիթեռնիկներ. վոմտան ճնճղուկը նստել էր մի կոտրած, կարմիր աղիւսի վերայ և անդադար ճլվլում էր, դէս ու դէն էր պտտվում պոչը արձակած: Վախկոտ ագռաւները բարձր նստած թխտենու լերկ կատարին դարձեալ կրկռում էին. արևն ու քամին խաղում էին նորա ցրուած ճիւղերի մէջ: Երբեմն լսվում էր Վօնսկոյ վանքի զանգերի տխրագին ու մեղմ հնչիւնը — իսկ ես նստած նայում էի և լսում — և այդ միջոցին ինձ տիրում էր մի անասելի զգացմունք, որի մէջ ամէն բան կար. կար ուրախութիւն, տրտմութիւն և ապագայի նախազգացում, կեանքի ցանկութիւն և երկիւղ: Բայց այն ժամանակ ես ոչինչ չէի հասկանում և ոչինչ անուն չէի կարող տալ այն բոլորին, ինչ որ եռում էր իմ մէջ — այս բոլորին մի անուն կրտայի — Զինաիդայի անունը:

Իսկ Զինաիդան միշտ ինձ հետ այնպէս էր խաղում, ինչպէս կատուն մկան հետ: Նա կամ կոտրատվում էր, և ես հալվում ու մաշվում էի — կամ ինձ յետ էր մղում իրենից — և այն ժամանակ ես չէի իշխում մօտենալ նորան, չէի նայում նորա վերայ:

Յիշում եմ, մի քանի օր շարունակ նա շատ սառն էր վարվում ինձ հետ. ես բոլորովին վախեցել էի և երկչոտութեամբ էի գնում նոցա տունը, աւելի շատ տիկնոջ հետ էի լինում, թէպէտ և հէնց այդ ժամանակ նա աւելի գորգոռում և կռվում էր բոլորի հետ. նորա պարտամուրհակների գործը վատ էր գնում, և արդէն երկու անդամ բանը հասել էր ոստիկանութեան:

Մի անդամ պարտիզի ցանկի մօտից անցնելիս ես տե-

սայ Զինաիդային. երկու ձեռներին յենուած նա նստել էր ալօտի վերայ և չէր շարժվում։ Առաջ ես ուզում էի զգուշութեամբ հեռանալ, բայց նա յանկարծ գլուխը բարձրացրեց և մի հրամայական նշան արաւ ինձ։ Սառած մնացի տեղումս. ես առաջին անգամից չհասկացայ նորան։ Օրիորդը կրկնեց իւր նշանը։ Շուտով թռայ ցանկի վերայից և ուրախ-ուրախ վազեցի նորա մօտ. նա կանգնացրեց ինձ իւր հայեացքով և ցոյց տուեց ինձ իրենից մի երկու քայլ հեռու գտնուող ճանապարհը։ Նա այնքան գունատ էր, այնքան տխուր ու յոգնած էր երևում, որ սիրտս ճմլուեցաւ, և ակամայ բացականչեցի. ի՞նչ է պատահել ձեզ։

Զինաիդան ձեռը մեկնեց, մի խոտ կտրեց, կծեց նորան և դէն ձգեց։

— Դուք ինձ շա՞տ էք սիրում,—հարցրեց վերջապէս օրիորդը։—Այո՞։

Ես ոչինչ չպատասխանեցի—և ինչո՞ւ համար պիտի պատասխանէի։

— Այո,—կրկնեց նա, առաջուայ պէս վերաս նայելով։—Այդպէս է։ Նոյնպիսի աչքեր են,—աւելացրեց նա, ընկաւ մտածմունքի մէջ և ձեռներով երեսը ծածկեց։—Ամէն բանից զզուել եմ,—շարունակեց նա,—աշխարհիս միւս ծայրը կրգնայի, ես սորան տանել, դիմանալ չեմ կարող, ես չեմ կարող այդ անել.... Եւ ինչ է իմ ապագան.... Ա՜խ, դրութիւնս անտանելի է.... Ատուած իմ, ոլքա՛ն դժուար է։

— Ինչո՞ւ համար,—հարցրի ես երկչոտ։

Զինաիդան ինձ չպատասխանեց, այլ միայն ուսերը վեր քաշեց։ Ես դեռ ծնկաչոք, տրտում նայում էի նորա վերայ։ Նորա իւրաքանչիւր խօսքը դրոշմվում էր սրտումս։ Այդ լոպէին ես, երևի, աւելի շուտ ողջ կեանքս կըզոհէի, միայն որ նա չտխրէր։ Ես նայում էի նորա վերայ—և

կրկին չմանալով նորա տխրութեան պատճառը, երևակայեցի, թէ ինչպէս նա տխրութեան մէջ է ընկղմել, պարտէզ եկել և գետին ընկել հնձած խոտի պէս։—Զորս կողմը լոյս էր ու կանաչ. քամին շարժում էր ծառերի տերևները, երբեմն ճոճելով մորենու երկար ոստերը Զինաիդայի գլխի վերայ։ Լսվում էր աղաւնիների զրուցը—իսկ մեղրաճանճերը, թռչկոտելով արօտի վերայ, բզզում էին։ Երկինքը կապոյտ էր ու դեղեցիկ—բայց ես այնքան տխուր էի....

— Ասացէք ինձ մի ոտանաւոր,—շշնջեց Զինաիդան և ձեռքին յենուեցաւ։—Ես շատ եմ սիրում, երբ դուք ոտանաւոր էք ասում։ Ասելու ժամանակ փոքր ինչ երգում էք, բայց դա ոչինչ, դա երիտասարդութեան նշան է։ Կարդացէք «Վրաստանի բլուրների վերայ» բանաստեղծութիւնը։—Միայն առաջուց նստէք։

Նստայ և ասացի անդիր «Վրաստանի բլուրների վերայ» բանաստեղծութիւնը։

— «Որ նա չէ կարող չսիրել»,—կրկնեց Զինաիդան։—Ա՛յ, ինչով է բանաստեղծութիւնը լաւ. նա ասում է մեղ այն, ինչ որ չկայ, և որ ոչ թէ միայն լաւ է եղածներից, այլ և աւելի մօտ է ճշմարտութեան.... Որ նա չէ կարող չսիրել—և ուզենալ էլ, չէ՛ր կարող։—Օրիորդը կրկին լռեց, մի անդամից վեր թռաւ և ոտի կանգնեց։—Գնանք։ Մայդանովը այժմ մօրս մօտ է. նա բերաւ ինձ իւր պօէման, բայց ես նորան տանը թողի... Մայդանովն էլ վշտացած է.... ի՛նչ սրաձ. դուք մի ժամանակ կ'իմանաք.... միայն չբարկանաք ինձ վերայ։

Զինաիդան շտապով սեղմեց ձեռս և առաջ վազեց։ Եկանք տուն։ Մայդանովը սկսեց կարդալ մեղ իւր նոր տպագրուած «Մարդասպան» բանաստեղծութիւնը, բայց չէի լսում նորան։ Նա երգելով ու աղաղակելով կարդում էր իւր ոտանաւորը, իսկ ես շարունակ նայում էի Զի-

նախդայի վերայ և աշխատում էի հասկանալ նորա վերջին տողերի նշանակութիւնը։

«Գուցէ սիրտդ յանկարծ յաղթեց
«Մի անծանօթ ախոյեան».—

բացականչեց յանկարծ Մայդանովը քթի մէջ—և իմ ու Զինաիդայի աչքերը հանդիպեցան միմեանց։ Օրիորդը իւր աչքերը ցած ձգեց և թեթև կարմրեց։ Ես տեսայ, ինչպէս նա կարմրեց, և երկիւղից մեացի սառած։ Ես էլ առաջ նախանձում էի, բայց միայն այդ բոպէին զլխումս ծագեց այն միտքը, թէ նա սիրում է։ «Աստուած իմ, նա սիրում է»։

X.

Իմ իսկական տանջանքներս ու վշտերս այդ օրուանից սկսուեցան։ Խելքիս զօր էի տալիս, զանազան բաներ էի մտածում,—և անդադար դիտում էի Զինաիդային, թէպէտ և աշխատում էի, որ այդ ծածուկ լինի։ Նա բոլորովին փոխուեցաւ—այդ ակներև էր։ Նա միայն էր գնում ճեմելու և ճեմում էր երկար։ Երբեմն նա չէր երևում հիւրերին. ժամերով նստում էր իւր սենեակում։ Առաջ նա այդպիսի բաներ չէր անում։ Մի անգամից խիստ սրատես դարձայ, կամ գուցէ ինձ այդպէս էր թւում։ «Չլինի թէ սա է, կամ արդեօք նա՞ է», հարցնում էի ինքս ինձ և երկիւղով թուում էի մէկ մէկ նորա երկրպագուներին։ Կոմս Մալեվսկին (թէպէտ ես ամաչում էի Զինաիդայի տեղ, երբ այս միտս էր ընկնում) ինձ համար ամենավտանգաւորն էր երևում։

Իմ դիտողութիւնը շատ հեռու չէր գնում, և իմ ծածկամտութիւնը, երևի, ոչ ոքի էլ չխաբեց. գոնէ բժիշկ Լուշինը շուտով ինձ ճանաչեց։ Բայց վերջին ժամանակներս նա էլ փոխուել էր. նա լղարել էր, ծիծաղում էր

նոյնպէս շուտ շուտ, բայց խուլ կերպով և չարութեամբ— նորա նախկին թեթև հեգնութիւնն ու կեղծեալ ցինիզմը տեղի էին տուել մի ակամայ ջղային գրգռման։

— Պարո՛ն, ի՞նչ էք անդադար գալիս սոցա մօտ,— ասաց նա ինձ մի անգամ Զասէկինենց ընդունարանում, երբ մնացինք երկուսս։ (Օրիորդը զբօսնելուց դեռ չէր վերադարձել, իսկ տիկնոջ աղաղակը լսվում էր վերին յարկից. նա աղախնի հետ էր կռվում)։ Դուք քանի երիտասարդ էք, պէտք է սովորէք, բան անէք—իսկ դուք ի՞նչ էք անում։

— Դուք չէք կարող իմանալ, տանը ես բան անում եմ, թէ ոչ,— պատասխանեցի նորան գոռոզութեամբ ու շփոթուած։

— Ի՞նչ պարապմունք պիտի լինի, երբ ձեր ուշ ու միտքը ուրիշ բանի էք տուել։ Բայց, չեմ ուզում վիճել... այդ բանը յատուկ է ձեր հասակին։ Միայն ձեր ընտրածը շատ անյարմար է։ Զէ՞ք տեսնում, այս ինչ ընտանիք է։

— Ձեր ասածը ես չեմ հասկանում,— պատասխանեցի ես։

— Զէ՞ք հասկանում, աւելի վատ։ Ես իմ պարտականութիւնս եմ համարում ձեզ զգուշացնել։ Մենք, պառաւ աղաչնելս, կարող ենք գալ այստեղ. մեզ ի՞նչ կարող են անել. մենք բովուած մարդիկ ենք, մեզ դժուար է թակարդի մէջ ձգելը. բայց ձեր կաշին դեռ շատ քնքուշ է. այստեղի օդը շատ վնասակար է ձեզ համար—հաւատացէ՛ք ինձ, կարող էք վարակուել։

— Այդ ինչպէս։

— Ամենահասարակ կերպով։ Միթէ դուք առողջ էք հիմա։ Միթէ ձեր վիճակը բնակա՞ն է։ Մի՞թէ այն, ինչ որ դուք զգում էք, օգտաւէտ և լաւ է ձեզ համար։

— Բայց ի՞նչ եմ զգում ես,—հարցրի ես—իսկ ինքս խոստովանում էի սրտումս, որ բժիշկը իրաւունք ունի։

— Էհ, երիտասարդ, երիտասարդ պարոն, — շարունակեց բժիշկը այնպիսի ձևով, կարծես, թէ այդ երկու խօսքը ինձ համար շատ մեծ անպատուութիւն էր,—դո՞ւք էք կամենում խորամանկ ձևանալ, փառք Աստուծոյ, ինչ որ ձեր սրտումն է, նոյնն էլ ձեր երեսի վերայ է: Բայց ինչո՞ւ համար եմ ասում: Ես ինքս էլ չէի գալ այստեղ, եթէ.... (բժիշկը առաջնորդը սեղմեց միմեանց վերայ).... եթէ ես էլ ձեզ պէս տարօրինակ չլինէի: Բայց ահա՛, ինչ է ինձ շատ զարմացնում. ինչպէ՞ս դուք, այդպէս խելօք լինելով, չէք նկատում, թէ ինչ է կատարվում ձեր շուրջը:

— Իսկ ի՞նչ է կատարվում, — շարունակեցի ես, պատրաստ լինելով նորա ասածը լսելու:

Բժիշկը արհամարհական հայեացք ձգեց վերաս:

— Ես էլ պակաս չեմ, — ասաց նա, կարծես, ինքն իրեն,—ի՞նչ կարիք կայ այս բաների մասին նորա հետ խօսելու: Մի խօսքով, կրկնում եմ ես,—շարունակեց նա բարձրաձայն,—այս տեղի օդը ձեզ կարող է վնասել: Այստեղ լինելը ձեզ շատ հաճելի է, բայց ի՞նչ արած: Զերմոցումն էլ շատ ախորժելի ու անուշ հոտ է բուրում— բայց այնտեղ ապրել անկարելի է: Էհ, լաւ է, լսեցէ՛ք ինձ, կրկին վեր առէք Կայդանովի ձեռնարկը:

Իշխանուհին ներս մոտաւ և ասաց բժշկին, որ ատամները ցաւում են: Եկաւ և Զինաիդան:

— Ա՛յ, պ. բժիշկ, — շարունակեց իշխանուհին, — մի քիչ խրատեցէք սորան: Ամբողջ օրը սառուցով ջուր է խմում. միթէ այդ վնասակար չէ նորան, քանի որ կուրծքն էլ այսպէս թոյլ է:

— Ինչո՞ւ համար էք անում այդ,—հարցրեց Լուշինը:

— Ի՞նչ կըլինի որ:

— Ի՞նչ կըլինի. կարող էք մրսել և մեռնել:

— Ճի՞շդ: Միթէ: Էհ, ի՞նչ անենք—Աստուած բարի ճանապարհ տայ:

— Ահ՛ հինչ,—ասաց բժիշկը։ Իշխանուհին գնաց։

— Ահ՛ հինչ,—կրկնեց օրիորդը։—Մի՞թէ կեանքը այնպէս ուրախալի է, նայեցէք ձեր շուրջը.... Ի՞նչ է, լա՞ւ է։ Կամ գուցէ դուք կարծում էք, որ ես այդ չե՞մ հասկանում, չե՞մ զգում։ Սառուցով ջուրը—ինձ դուր է գալիս, և դուք կարող էք հաւատացնել ինձ, որ այսպիսի կեանքը այնքան դին ունի, որ նորա համար մի բոպէական զուարճութիւն, չեմ ասում բախտաւորութիւն վայելելու անարգուշութիւնը չունենամ։

— Ա՛յո՛,—նկատեց Լուշինը.—դա քմահաճութիւն է և անկախութիւն... Այս երկու բառերով որոշվում է ձեր բնաւորութիւնը։

Զինաիդան ծիծաղեց։

— Ուշ է, սիրելի բժիշկ։ Վատ էք դիտում, յետ էք մնում։—Ամենց դրէք։—Քմահաճութիւն անելու ժամանակ չունիմ. Է՜հ, ինչ զուարճութիւն պիտի ստանամ ձեզ էլ, ինձ էլ յիմարացնելով.—բայց ինչ վերաբերում է անկախութեան.... Մսիո Վոլդեմար,—աւելացրեց յանկարծ Զինաիդան, ոտը գետնին խփելով,—թողէ՛ք ձեր մելամաղձոտ հայեացքը։ Սիրտս ճաքում է, երբ ինձ խղճում են։

— Նա շուտով հեռացաւ։

— Վնասակար, այո, վնասակար է ձեզ համար այստեղի օդը, երիտասարդ պարոն,—դարձեալ կրկնեց Լուշինը։

XI.

Նոյն օրը երեկոյեան Զասկինենց տանը հաւաքուեցան սովորական հիւրերը. ես էլ այնտեղ էի։

Խօսակցութիւն բացուեցաւ Մայդանովի բանաստեղծութեան մասին. Զինաիդան անկեղծօրէն գովում էր նորա դրուածը։—Բայց դիտէ՛ք,—ասաց նա Մայդանովին,—եթէ

ես բանաստեղծ լինէի—ես ուրիշ նիւթեր կ'ընտրէի։ Դուցէ այս բոլորը ցնորք է—բայց և այնպէս ժամանակ առ ժամանակ շատ տարօրինակ մտքեր են ծագում գլխումս, նա մանաւանդ առաւօտեան, երբ քնած չեմ լինում, և երբ երկինքը վարդի գոյն է ստանում։—Ես, օրինակի համար.... Չէ՞ք ծիծաղել վերաս։

— Չէ, չէ՛,—բացականչեցինք ամենքս միասին։

— Ես կընկերկայացնէի,—շարունակեց նա, ձեռքը կրծքի վերայ խաչած և մի կողմը նայելով, — մի խումբ մատաղահաս օրիորդներ, գիշեր ժամանակ մեծ նաւակի մէջ — հանդարտ գետի վերայ։ Լուսինը փայլում է, իսկ աղջկերքը սպիտակ հագած և սպիտակ ծաղիկներից հիւսուած պսակներով զարդարուած՝ խմբովին երգում են, գիտէ՞ք, թէ ինչ — մի հանդիսաւոր երգ։

— Հասկանում եմ, հասկանում, շարունակեցէք,—ասաց Մայդանովը առանձին նշանակութեամբ և յափշտակութեամբ։

— Յանկարծ ափում լսվում են—աղաղակ, դոչիւն, ծիծաղ, երևում են կերոններ, ծնծղայք...։ Դա բաքոսուհիների մի խումբ է, որ երգելով վազում է։ Իսկ այժմ, պարոն բանաստեղծ, ձեր գործն է պատկերացնել այդ..... միայն ես կ'ուզենայի, որ կերոնները կարմիր լինէին և սաստիկ ծուխ արձակէին, որպէս զի բաքոսուհիների աչքերը փայլէին պսակների տակ, իսկ պսակները փոքր ինչ մութ պիտի լինին։ Մի՛ մոռանաք նոյնպէս վագրի մորթիներ ու բաժակներ—և ոսկի, շատ ոսկի։

— Ոսկին ինչտե՞ղ պիտի լինի,—հարցրեց Մայդանովը, յետ տանելով իւր մտքերը և ուռցնելով ռունդները։

— Ինչտե՞ղ. ուսերի, ձեռների, ոտների վերայ, ամէն տեղ։ Ասում են, թէ հին ժամանակը կանայք ոսկէ օղակներ էին կրում ոտի կոճերի վերայ։ Բաքոսուհիք իրենց մօտ են կանչում նաւակի մէջ նստած աղջկերանց։ Աղջկերքը այլ ևս չեն

երգում—նոքա անկարող են շարունակելու—և անշարժ նստած են. ջուլը բերում է նոցա դէպի ափը։ Եւ ահա նոցանից մէկը կամաց բարձրանում է...։ Այս լաւ պէտք է նկարագրել. թէ ինչպէս նա հանդարտ վեր է կենում լուսնի ժամանակ, և ընկերները վախենում են...։ Նա դուրս է գալիս նաւակից, բաքոսուհիք պատում են նորան և տանում գիշերային խաւարը.... Ներկայացրէք այստեղ սաստիկ ծուխ, և ամէն բան միախառնվում է։ Միայն թող լսուի նոցա ձիչը, իսկ պսակը պիտի մնայ ափին։

Զինաիդան լռեց։ (Ո՜հ, նա սիրահարուած է,—դարձեալ մտածեցի ես)։

— Միայն այդ,—հարցրեց Մայդանովը։

— Այո՛, միայն այդ,—պատասխանեց օրիորդը։

— Դա չէ կարող լինել մի պօէմայի նիւթ,—խրոխտ նկատեց նա,—իսկ քնարերգական կտորի համար ձեր յայտնած մտքից ես օգուտ կրքաղեմ։

— Ռոմանտիկաՙն ձևով,—հարցրեց Մալեվսկին։

— Յայտնի բան է ռոմանտիկական ձևով, Բայրընի պէս։

— Իմ կարծիքով Հիւգոն Բայրընից լաւ է,—առանց մտածելու արտասանեց երիտասարդ կոմը,—աւելի հետաքրքաշարժ է։

— Հիւգոն առաջնակարգ հեղինակ է,—պատասխանեց Մայդանովը,—և իմ բարեկամ Տօնկոշէևվը իւր իսպանական էլ—Տրօվադօր վէպի մէջ....

— Ա՜հ, այդ ա՞յն գիրքն է, ինչտեղ հարցական նշանները գլխի վայր են դրած, ընդմիջեց Զինաիդան։

— Այո՛։ Սպանացիք այդպէս են ընդունել։ Ես ուզում էի ասել, թէ Տօնկոշէևվը....

— Դէ՜հ, դարձեալ դուք պիտի վիճէք կլասսիկականութեան և ռոմանտիկականութեան մասին,—նորից նորա խօսքը կտրեց Զինաիդան։—Աւելի լաւ է խաղանք....

— Ցա՞նտ,—իսկոյն հարցրեց Լուշինը։

— Զէ՛, ֆանտը տխուր խաղ է. լաւ է համեմատութիւն խաղանք։ (Այս խաղը Զինաիդայի հնարածն էր. մի առարկայի անուն էին տալիս, ամէն մէկը աշխատում էր համեմատել նորան մի բանի հետ, և լաւ համեմատութիւն անողը վարձատրութիւն էր ստանում)։ Օրիորդը մօտեցաւ պատուհանին։ Արեգակը նոր էր մայր մտել, երկնքում երեւում էին երկար, կարմիր ամպեր։

— Ինչի՞ են նման այս ամպերը,—հարցրեց Զինաիդան և չսպասելով մեր պատասխանին շարունակեց.— ես նմանեցնում նոցա այն ծիրանի առագաստներին, որ կախած էին Կլէօպատրայի ոսկէ նաւի վերայ, երբ նա գնում էր Անտոնիոսի առաջ։ Յիշո՞ւմ էք, Մայդանով, շատ ժամանակ չէ, որ դուք այդ մասին ինձ պատմում էիք։

Ամէնքս միասին, ինչպէս Պօլոնիոսը «Համլէտի» մէջ, վճռեցինք, որ արդարև ամպերը նման են այն առագաստներին և այդ համեմատութիւնից լաւը չէր կարող լինել։

— Բայց այն ժամանակ քանի՞ տարեկան էր Անտոնիոսը,—հարցրեց Զինաիդան։

— Երևի, դեռ երիտասարդական տարիներումն էր,— պատասխանեց Մալեվսկին։

— Այո՛, երիտասարդ էր,—հաստատեց նորա ասածը Մայդանովը։

— Նկրեցէ՛ք,—բացականչեց Լուշինը,—նա քառասնից անց էր։

— Քառասնից անց էր,—կրկնեց Զինաիդան և արագ իւր հայեացքը նորա վերայ ձգեց....

Ես շուտով տուն գնացի։—«Նա սիրահարուած է», ակամայ դուրս էր գալիս բերանից.... «Բայց ո՞ւմ վերայ»։

XII.

Օրերը անցնում էին։ Զինսիդան աւելի ու աւելի տա-ժամանակ ու անհասկանալի էր դառնում։ Մի անգամ ես գնացի նոցա տունը, տեսայ, նա նստել է և գլուխը աթոռի մէջքին դրել։ Նա ուղղուեց.... ողջ երեսը արտասուքներից թրջուել էր։

— Ա՜, դուք էք,—ասաց նա խստասիրտ ծիծաղով։— Դէ՛, մօտեցէք ինձ։

Ես մօտեցայ նորան. ձեռը գլխիս դրեց, մազերս բռնեց և սկսաւ թափ տալ։

— Ցաւո՞ւմ է....—վերջապէս բացականչեցի ես։

— Հա՜, ցաւո՞ւմ է, իսկ ինձ համար ցաւ չկա՞ն,—կրկնեց նա։

— Ա՜յ,—բացականչեց օրիորդը, երբ նկատեց, որ մի քանի մազ է հանել։—Ի՞նչ արի։ Խե՜ղճ մանչ Վօլդեմար։

Օրիորդը զգուշութեամբ կարդի բերեց մազերս, մատի, վերայ փաթաթեց և օղակի ձև տուեց։

— Ես ձեր մազերը կրպահեմ մեդալիոնիս մէջ, նոքա միշտ ինձ հետ կը լինին,—շարունակեց օրիորդը արտասուալից աչքերով։—Դուցէ այս փոքր ինչ ձեզ մխիթարէ.... իսկ այժմ գնաք բարով։

Ես տուն վերադարձայ և մի անախորժ տեսարանի հանդիպեցայ։ Մայրս մի բանի մասին վիճում էր հօրս հետ. նա հօրս էր մեղադրում, իսկ հայրս ըստ իւր սովորութեան սառնասիրտ ու քաղաքավարի կերպով լռութիւն էր պահում և շուտով էլ հեռացաւ։ Ես չկարողացայ լսել, թէ ինչ բանի մասին էր խօսում մայրս, ինքս էլ բոլորովին չէի հետաքրքրվում։ Յիշում եմ միայն, որ խօսակցութիւնը վերջանալուց յետոյ նա ինձ կանչել տուեց իւր առանձնասենեակը և մեծ դժգոհութեամբ կշտամբեց ինձ, որ այսքան յաճախ եմ այցելում իշխանուհուն, որ, նորա ասելով, էր

une femme capable de tout [1]): Ես մոտեցայ, նորա ձեռքը համբուրեցի (միշտ ես այսպէս էի անում, երբ ուզում էի խօսակցութեան վերջ տալ) և սենեակս գնացի: Զինաիդայի արտասուքը ինձ բոլորովին շշմեցրին. ինքս էլ չգիտէի, թէ ինչ վճռեմ և պատրաստ էի լաց լինելու. ես դեռ երեխայ էի, չնայելով որ տասն և վեց տարեկան էի: Այլ ևս ես չէի մտածում Մալեվսկիի վերայ, թէպէտ Բէլովզորովը օրէ ցօր սարսափելի էր դառնում և ճարպիկ կոմսի վերայ այնպէս էր նայում, ինչպէս գայլը ոչխարի վերայ. չէ, ես ոչ ոքի և ոչնչի վերայ չէի մտածում: Ես մնացել էի բոլորովին մոլորած և միշտ աշխատում էի մենակ մնալ: Աւելի ևս սիրեցի ջերմոցի աւերակները: Երբեմն բարձրանում էի ահագին պատի վերայ, նստում էի մենակ, այնպէս տխուր ու անբախտ, որ ինքս ինձ խղճում էի—բայց ոլորքան ախորժելի և մսիթարական էին ինձ համար այդ զգացմունքները...:

Եւ ահա մի անգամ պատի վերայ նստած, նայում եմ հեռուն և լսում զանգակի ձայն... յանկարծ մի բան անցաւ մարմնովս—թէ ասեմ, քամի էր—քամի չէր, ոչ էլ սարսուռ. կարծես, թէ շունչ մէկի մօտ լինելու զգացում լինէր...: Ես ցած նայեցի: Այնտեղ ճանապարհով ացնում էր Զինաիդան մոխրագոյն թեթև շոր հագին և վարդագոյն ամպհովանին ուսին: Նա տեսաւ ինձ, կանգնեց և, յարդէ շլեսպը վեր բարձրացնելով, ինձ վերայ ձգեց իւր թաւշեայ աչքերը:

— Ի՞նչ էք անում այդտեղ,—հարցրեց ինձ օրիորդը մի տարօրինակ ժպիտ երեսին:—Ուրք անդադար ինձ հաւատացնում էք,—շարունակեց նա,—թէ ինձ սիրում էք—գետին թաւէք այդտեղից, եթէ արդարև սիրում էք ինձ:

Զինաիդան դեռ չէր աւարտել իւր խօսքը, ես ինձ վայր նետեցի, ասես, թէ մէկը յետևիս ինձ հրեց: Պատի բարձ-

---

[1]) Ամէն բանի ընդունակ մի կին:

բութիւնը կը լինէր երկու սաժէն։ Ես դետին թռայ ոտներիս վերայ և այնպէս ուժով թռայ, որ չկարողացայ ոտքի վերայ մնալ. ես փռուեցի դետնի վերայ և մի բոպէ ուշս գնաց։ Երբ ուշքի եկայ, դեռ աչքերս չբացած, զգում էի Զինաիդայի ներկայութիւնը։—«Սիրելի՛ տղաս,—ասում էր նա դէպի ինձ կռացած—և նորա ձայնը քնքշութեամբ դողդողում էր,—ինչո՞ւ արեցիր, ինչո՞ւ ինձ լսեցիր... ես հօ քեզ սիրում եմ.. վեր կաց»։

Նորա կուրծքը ինձ շատ մօտ էր բաբախում, նա ձեռքով բռնել էր գլուխս և յանկարծ—այն ի՞նչ էր, որ ես զգացի—նորա նուրբ, թարմ շրթունքները համբոյրներով ծածկում էին երեսս.... նոքա իմ շրթունքներիս կպան...։ Բայց յետոյ Զինաիդան, երևի, զլխի ընկաւ, դէմքիս արտայայտութիւնից հասկացաւ, որ արդէն ուշքի եմ եկել, թէպէտ աչքերս բաց չէի անում—և շուտով վեր կենալով ասաց.—«Դէ՛հ, վեր կաց էք, չար, անմիտ տղայ. ի՞նչ էք պարկել թոզի մէջ»։—Ես վեր կացայ։—Բերէք ամպհովանիս,—ասաց Զինաիդան,—տեսնում էք, ինչտեղ եմ ձգել. այդպէս մի՛ նայէք վերաս.... այս ի՞նչ յիմարութիւն է. չէ՞ք վնասուել. երևի, աղինջը ձեզ այրո՞ւել է։ Ասում եմ ձեզ, այդպէս մի՛ նայէք վերաս...։ Սա ոչինչ չէ հասկանում, չէ պատասխանում,—աւելացրեց՝ օրիորդը, կարծես, ինքն իրեն..։—Գնացէք տուն, մսեո Վոլդեմար, մաքրեցէք ձեր շորերը, միայն յետևից չգաք, թէ չէ կը բարկանամ և այնուհետև.....

Նա չվերջացրեց իւր խօսքը և շտապով հեռացաւ. իսկ ես նստայ ճանապարհի վերայ... ոտներս ինձ չէին հնազանդում։ Աղինջը ձեռներս այրել էր, մէջքս տքում էր, գլուխս պտտվում. բայց այն երջանկութեան զգացմունքը, որով այն ժամանակ լեքն էր սիրտս, այլ ևս չկրկնուեցաւ կեանքումս։ Նա ինչպէս մի քաղցր ցաւ թափանցել էր ողջ մարմինս և վերջը ես սկսայ յանկարծ բերկրութեամբ ոստոստել և ուրախութեան ճչեր արձակել. իրաւի, ես դեռ երեխայ էի։

XIII.

Ես այնպէս ուրախ ու հպարտ էի ողջ օրը, այնպէս կենդանի էի պահել դէմքիս վերայ Զինաիդայի համբոյները, այնպիսի բերկրութեամբ ու հրճուանքով էի արտասանում նորա իւրաքանչիւր բառը, այնպէս փայփայում էի իմ անակնկալ երջանկութիւնը, որ մինչև անգամ վախենում էի, չէի կամենում տեսնել իմ նոր զգացմունքների առարկային։ Ինձ թւում էր, թէ աւելի ոչինչ չէր կարելի պահանջել բախտից, թէ «վերջին անգամ պէտք է լաւ շունչ քաշել և մեռնել»։ Սակայն հետևեալ օրը, երբ ես գնացի նոցա տունը, շատ շփոթուած էի և 'ի զուր աշխատում էի թաղցնել այդ յուզմունքս պարկեշտ ու գաղտնապահ մարդու դիմակի տակ։ Զինաիդան ինձ շատ հասարակ ընդունեց, չվրդովուեց, միայն մատը ինձ վերայ թափ տուեց և հարցրեց, կապուտակ տեղեր չկա՞ն արդեօք մարմնիս վերայ։ Իմ համեստութիւնն ու ծածկամտութիւնը մի վայրկեանում անհետացան. անհետացաւ և շփոթմունքս։ Ի հարկէ, ես մի առանձին բան չէի սպասում, բայց Զինաիդայի սառնասրտութիւնը այնպէս ազդեց ինձ վերայ, կարծես, թէ սառը ջուր ածեցին գլխիս։ Ես հասկացայ, որ նորա աչքում ես դեռ երեխայ եմ—և այդ բանը ինձ շատ անհաճելի էր։ Զինաիդան ման էր գալիս սենեակում, նայում ինձ վերայ և արագ ժպտում. բայց նորա ուշ ու միտքը ուրիշ բանի վերայ էր, և այդ ես շատ լաւ էի նկատում.... «Ինքս խօսք բաց անեմ երեկուայ անցքի մասին,—մտածեցի ես,—թէ հարցնեմ նորան, ո՞ւր էր գնում այնպէս շտապով, որ վերջնականապէս իմանամ....» բայց այդ էլ չարի և նստայ մի անկիւնում։

Բէլովզօրովը ներս մտաւ, ես ուրախացայ։

— Ձեզ համար հանդարտ ձի չգտայ,—սկսեց նա ա-

հարկու ձայնով։—Ֆրէյտագը խոստանում է ինձ մէկը, բայց ես հաւատ չեմ ընծայում։ Վախենում եմ։

— Ինչո՞ւ համար էք վախենում,—հարցրեց Զինաիդան,—թոյլ տուէք, հարցնեմ։

— Ինչու համար։ Դուք հօ ձի հեծնել չէք իմանում։ Աստուած չանի, ո՞վ դիտէ, ինչ կարող է պատահել։ Եւ ինչ տարօրինակ ցանկութիւն է։

— Դէ՛, այդ իմ գործս է, իմ պարոն դաղան։ Եթէ այդպէս է, ես կընդրեմ Պեօտր Վասիլեվիչից.... (այդպէս էր իմ հօր անունը։ Ես շատ զարմացայ, որ օրիորդը այնպէս հեշտ ու արձակ արտասանում էր հօրս անունը, կարծես, բոլորովին համոզուած էր, որ հայրս պատրաստ է առաջարկելու իւր ծառայութիւնը)։

— Ա՜յ, բանը ինչ տեղ է,—պատասխանեց Բէլովզօրովը։—Դուք նորա՞ հետ էք ուզում գնալ։

— Նորա թէ ուրիշի հետ—ձեզ համար մի և նոյնն է։ Միայն ոչ ձեզ հետ։

— Ո՛չ ինձ հետ,—կրկնեց Բէլովզօրովը։—Ինչպէս կամենում էք։ Ոչի՛նչ. ես ձեզ համար ձի կըճարեմ։

— Միայն խնդրում եմ, կովի նման մի բան չլինի։ Ես առաջուց յայտնում եմ ձեզ, որ կամենում եմ լաւ ձի քշել։

— Դիշէք, ինչպէս կամենում էք.... Բայց ո՞ւմ հետ. չլինի՞ թէ Մալեվսկիի հետ։

— Թէկուզ նորա՞ հետ, զինուոր։ Դէ՛հ, հանդստացէք,—աւելացրեց նա,—թող այդպէս չփայլատակեն ձեր աչքերը։ Ձեզ էլ հետս կըտանեմ։ Դիտէք, որ Մալեվսկին այժմ ինձ համար—ֆի՛։—Նա գլուխը շարժեց։

— Դուք այդ ասում էք ի՞նձ մխիթարելու համար,—մրթմրթաց Բէլովզօրովը։

Զինաիդան աչքերը փոքր ինչ կկոցեց։—Այդ ձեզ մխիթարո՞ւմ է։ Օ.. հ.. օ... զինուո՛ր,—ասաց նա, կարծես, թէ

չկարողացաւ մի ուրիշ խօսք գտնել։—Իսկ դո՞ւք, մսեո Վոլդեմար, կրգաք մեզ հետ։

— Ես չեմ սիրում.... երբ շատ մարդ է լինում.... փնթփնթացի ես, աչքերս չբարձրացնելով։

— Դուք գերադասում էք tête-à-tête...? Է՜հ, ձեր կամքն է,—շարունակեց օրիորդը յոգւոց հանելով։—Դէ՛հ, գնացէք, Բէլովզօրով, հոգս քաշեցէք։ Էգուց ինձ ձի է հարկաւոր։

— Հա՛, իսկ փոՀ որ տեղից է,—մէջ մտաւ իշխանուհին։

Զինաիդան յօնքերը կիտեց։

— Ես ձեզանից չեմ խնդրում. Բէլովզօրովը ինձ կը հաւատայ։

— Կը հաւատայ, կը հաւատայ....—մրթմրթաց իշխանուհին—և մի անգամից դուրս եկաց.—Դուն եաՀշա։

— Maman, ես ձեզ մի փոքրիկ զանգակ եմ ընծայել,—նկատեց օրիորդը։

— Դուն եաՀշա,—կրկնեց իշխանուհին։

Բէլովզօրովը գլուխ տուեց և դուրս գնաց. ես էլ նորա հետ դուրս եկայ։ Զինաիդան ինձ չպահեց։

XIV.

Հետևեալ օրը առաւօտեան ես վաղ վեր կացայ, կարեցի ինձ համար մի փայտ և քաղաքից դուրս եկայ։ Գնամ, ասացի, մի քիչ մեն գամ, գուցէ սիրտս թեթևանայ։ Պայծառ, գեղեցիկ օր էր, շատ էլ շոգ չէր. փչում էր ուրախ ու զով քամի, խաղում էր և թեթև տատանում ամէն բան։ Երկար թափառում էի լեռներում ու անտառներում. ես ինձ երջանիկ չէի համարում, տանից դուրս եկայ այն յուսով, որ տխրութիւնս փարատեմ,—բայց երտասարդութիւնը, գեղեցիկ եղանակը, զով օդը, սրագ մեն գալու զուարճութիւնը, մենակ խիտ արօտի

վերայ պարկելու հաճոյքը—իրենցն արին. դարձեալ հոգիս լցուեցաւ այն անմոռանալի խօսքերի, այն համբոյրների յիշողութեամբ: Ես ախորժելով մտածում էի, որ Զինաիդան այսպէս թէ այնպէս չէ կարող չգնահատել իմ վճռականութիւնը, իմ հերոսութիւնը.... «Նորա համար ուրիշները ինձանից լաւ են,—մտածում էի ես,—թող այդպէս լինի: Բայց ուրիշները միայն ասում են, թէ կ'անեն, իսկ ես արդէն արել եմ: Եւ ինչ՞ը դեռ կարող եմ անել նորա համար»:—Իմ երևակայութիւնը բորբոքուեցաւ: Ես սկսայ երևակայել, թէ ինչպէս նորան կ'ազատեմ թշնամիների ձեռքից, ինչպէս ինքս բոլորովին արիւնաթաթախ կըլինեմ նորան բանտից, ինչպէս կըմեռնեմ նորա ոտների առաջ: Յիշեցի մեր սենեակում կախած պատկերը. Մալէկ-Ադելն, որ յափշտակում է Մատիլդային—և իսկոյն ուշադրութիւնս դարձրի մի մեծ խայտաճամուկ ծառկտուտի վերայ, որ արագ արագ բարձրանում էր բարակ թիտենու բունը և անհանգիստ կերպով ասջ ու ձախ էր նայում:

Յետոյ ես սկսայ երգել բարձր ձայնով արտասանում էի Երմակի խօսքերը աստղերի հետ՝ Խօմեակովի ողբերգութիւնից, փորձեցի մի սիրային ռոմանաւոր շարադրել, մինչև անգամ յօրինեցի ռոմանաւորի վերջին տողը. «ո՛, Զինաիդա, Զինաիդա!» բայց բան դուրս չեկաւ: Արդէն ճաշելու ժամանակ էր: Ես իջայ հովիտ. նեղ աւազուտ ճանապարհը տանում էր քաղաք: Ես այդ ճանապարհով գնացի.... Մի փոքր հեռու լսուեցաւ ձիան սմբակների խուլ տոփիւնը: Յետ նայեցի, ակամայ տեղումն կանգնեցի և գլխարկս հանեցի. ես տեսայ հօրս ու Զինաիդային: Նոքա գալիս էին իրար կողքի: Հայրս մի բան էր պատմում՝ ողջ մարմինը օրիորդի կողմը թեքած և մի ձեռով ձիու վզին թինկը տուած, նա ժպտում էր, իսկ Զինաիդան լուռ լսում էր նորան, աչքերը խոնարհած և պռոշները սեղմած: Ես ա-

ռաջ միայն սոցա տեսայ, բայց մի քանի լոպէից յետոյ երևեցաւ Բէլովզորովը հուսարի նշանագգեստը հագին՝ քրտնքի մէջ կորած սև ձիու վերայ։ Սիրուն ձին թափ էր տալիս գլուխը, փռնչում և խաղում։ իսկ Բէլովզորովը զբաղում էր նորան և խթանով կողքին խփում։ Ես մի կողմը անցայ։ Հայրս իրեն քաշեց սանձը և Զինաիդայից յետ քաշուեց. սա կամաց աչքերը ձգեց նորա վերայ—և երկուսն էլ ձիերի գլուխը բաց թողին...։ Բէլովզորովը թռաւ նոցա ետևից, թուրը էխչխկացնելով։ «Սա խեցգետնի պէս կարմիր է,—մտածեցի ես,—իսկ օրիորդը...։ Ինչո՞ւ համար նա այնպէս գունատ է, ողջ առաւօտը ման է եկել—և գունատ»։

Ես արագացրի քայլերս և ուղիղ ճաշի ժամանակ տուն հասայ։ Հայրս արդէն շորերը փոխել էր, լուացուել ու մաքրուել էր, նստել մօրս բազկաթոռի մօտ և հանդարտ ու զել ձայնով կարդում էր Journal des Débat-ի ֆէլիէտոնը, բայց մայրս առանց ուշադրութեան էր լսում նորան և, տեսնելով ինձ՝ հարցրեց, թէ ո՞ւր էի ամբողջ օրը և աւելացրեց, թէ չէ սիրում, երբ ողջ օրը քաշ են գալիս, Աստուած գիտէ, ինչտեղ և, Աստուած գիտէ, ում հետ։ Ես նայեցի նորա վերայ, ուզում էի պատասխան տալ, բայց նայելով հօրս վերայ, լռեցի, չգիտեմ թէ ինչու։

XV.

Հետևեալ հինգ-վեց օրը համարեա ես չտեսայ Զինաիդային, ասում էին, թէ նա հիւանդ է, և այդ անկասկած չէր արգելում մշտական այցելուներին շարունակել իրենց այցելութիւնը—ինչպէս իրենք էին ասում—օրապահիկ լինելու համար—այո՛, ամէնքը գալիս էին բացի Մայդանովից, որ միշտ վշտատում և տխրում էր, երբ հրաժեշտ առնելու առիթ չէր ունենում։ Բէլովզորովը արտում նստած էր մի անկիւնում. նա կարմիր էր։ Կոմս Մալեվսկիի խորամանկ դէմքի

վերայ նկատելի էր մի չար ժպիտ. այդպես, նա Զինաիդայի աչքից ընկել էր և դորա փոխարէն կոմսը մի առանձին պատրաստականութեամբ իշխանուհու հետ էր լինում, նորա հետ միասին նահանգապետին գնաց: Բայց պէտք է ասած, նահանգապետին գնալը անյաջող անցաւ, մինչև անգամ Մալեվսկին անբաւականութիւն պատճառեցին. նորան յիշել տուին մի անցք, որ տեղի էր ունեցել նորա և մի քանի սպաների մէջ — և նա իւր բացագրութիւնների ժամանակ պիտի ասէր, թէ անփորձ էր այն ժամանակ: Լուշինը օրը երկու անգամ էր գալիս, միայն երկար չէր նստում. մեր վերջին խօսակցութիւնից յետոյ ես մի քիչ վախենում էի նորանից, բայց մի և նոյն ժամանակ նա ինձ գրաւում էր: Մի անգամ նա ինձ հետ գնաց Նեսկուչնի զբօսնելու, շատ բարեսիրտ ու սիրելի էր, յայտնում էր ինձ տեսակ տեսակ խոտերի ու ծաղիկների անունները ու յատկութիւնները և մի անգամից՝ բոլորովին անտեղի, ճակատին խփեց և բացականչեց. իսկ ես, յիմարս, կարծում էի, թէ նա կոտրատուող է. երևում է, որ հաճելի է, քաղցր է իրեն զոհել ուրիշների համար:

— Դորանով ի՞նչ էք ուզում ասել,—հարցրի ես:

— Ես ձեզ ոչինչ չեմ ուզում ասել,—ընդհատմամբ պատասխանեց Լուշինը:

Զինաիդան ինձանից փախչում էր. իմ ներկայութիւնը — ես այդ չէի կարող ընկատել — անախորժ տպաւորութիւն էր անում նորա վերայ: Նա ակամայ էր հեռանում ինձանից.... ակամայ. ահա, ի՞նչ էր ինձ համար անախորժ, ի՞նչ էր ինձ վշտացնում: Բայց ի՞նչ արած — ինքս էլ աշխատում էի չերևիլ և հեռուից միայն սպասում էի նորան, բայց միշտ էլ չէի հասնում նպատակիս: Դարձեալ նորան մի անհասկանալի բան է պատահել. դէմքը բոլորովին փոխուել էր, փոխուել էր և ինքը: Նա մանաւանդ ինձ զարմացրեց մի փոփոխութիւն, որ

տեղի ունեցաւ մի տաք, խաղաղ երեկոյ։ Ես նստած էի մի սաղարթախիտ թանթրվենու թփի տակ՝ ցած նստարանի վերայ. ես շատ էի սիրում այդ տեղը, որովհետև Զինաիդայի սենեակի պատուհանը երևում էր այդ տեղից։ Ես նստած էի, բայց գլխիս վերայ՝ մութ ճիւղերի մէջ անհանդիստ թռչկոտում էր մի թռչնիկ։ Մոխրագոյն կատուն՝ մէջքը դուրս ձգած, զգուշութեամբ ու գաղտուկ մոնում էր պարտէզ, և բզէկները բզզում էին թափանցիկ, բայց ոչ պայծառ օդում։ Նստած ես նայում էի պատուհանին և սպասում էի, արդեօք նա չի բանալ պատուհանը. արդարև—նա բացեց, և ես տեսայ Զինաիդային։ Նորա հագին սպիտակ շոր էր—և ինքն էլ, դէմքը, ուսերը, ձեռները—բոլորը գունատ էր։ Նա երկար կանգնած էր անշարժ, երկար ուղիղ նայեց անշարժ՝ յօնքերը կիտած։ Ես չէի կարծում, որ նա այդպէս կարող է նայել, այդպիսի հայեացք կարող է ունենալ։ Յետոյ նա սեղմեց ձեռները, ամուր, շատ ամուր սեղմեց, շրթունքներին, ճակատին տարաւ—և յանկարծ մազերը ականջից վեր բարձրացրեց, թափ տուեց և մի անորոշ վճռողականութեամբ գլուխը ցած տարաւ ու պատուհանը փակեց։

Երեք օրից յետոյ նա պատահեց ինձ պարտիզում։ Ես ուզում էի ճանապարհս ծռել, բայց նա կանգնեցրեց ինձ։

— Տուէք ինձ ձեր ձեռը,—ասաց նա ինձ իւր նախկին փաղաքշանօք,—շատ ժամանակ է, որ մենք չենք խօսել։

Ես նայեցի նորան. նորա աչքերը հանդարտ վառվում էին, իսկ դէմքին կար մի քողարկուած ժպիտ։

— Դուք դեռ չէ՞ք առողջացել,—հարցրի նորան։

— Չէ՛, առողջ եմ,—պատասխանեց օրիորդը և մի փոքրիկ վարդ կտրեց։—Ես մի քիչ յոգնած եմ, բայց այդ էլ կ'անցնի։

— Եւ դուք առաջուայ պէս կըլինի՞ք,—հարցրի ես։

Զինաիդան մօտեցրեց վարդը երեսին—և ինձ այնպէս

էլ թուում, թէ նորա կարմիր թերթերի շողքը ընկել է օրիորդի թշերի վերայ։ — Մի թէ՞ ես փոխուել եմ, — հարցրեց նա։

— Այո՛, փոխուել էք, — կամացուկ պատասխանեցի ես։

— Ձեզ հետ ես սառն էի վարվում — ես գիտեմ, — սկսեց Զինաիդան, — բայց դուք ուշադրութիւն չպիտի դարձնէիք դորա վերայ.... Ուրիշ կերպ ես չէի կարող.... Դէ՞հ, էլ ինչ կարիք կայ դորա մասին խօսելու։

— Դուք չէք ուզում, որ ես ձեզ սիրեմ — այ ինչ է բանը, — պատասխանեցի ես մռայլ դէմքով, բայց ակամայ յուզուած։

— Ոչ, սիրեցէք ինձ, միայն ոչ այնպէս, ինչպէս առաջ։

— Ապա ինչպէ՞ս։

— Կըլինինք լաւ բարեկամներ — աւել ոչի՛նչ։ — Զինաիդան վարդը ինձ տուեց հոտ քաշելու։ — Լսեցէք, չէ՞ որ ես բաւականին մեծ եմ ձեզանից — ես կարող եմ ձեր մայրը լինել, եթէ մայրը չէ, գոնէ մեծ քոյրը։ Իսկ դուք....

— Ձեզ համար ես երեխայ եմ, — ընդմիջեցի նորան։

— Ի հարկէ, երեխայ էք, բայց սիրուն, լաւ, խելք երեխայ էք, որին ես շատ և շատ սիրում եմ։ Դիտէք, ի՞նչ կայ։ Ես այս օրուանից ընտրում եմ ձեզ մանկլաւիկ ինձ համար. իսկ դուք մի՛ մոռանաք, որ մանկլաւիկները չեն կարող հեռանալ իրենց տիրուհուց։ Ահա ձեզ նշան ձեր նոր աստիճանի համար, — շարունակեց նա, կպցնելով վարդը բաճկոնիս. — նշան առ ձեզ ունեցած ողորմածութեանս։

— Առաջ ես ձեզանից ուրիշ պարգևներ էի ստանում, — ասացի ես։

— Ա՜, — սկսեց Զինաիդան, կողքից վերաս նայելով։ — Ի՞նչ յիշողութիւն ունիք։ Այժմ էլ ես պատրաստեմ։

Եւ ինձ կռանալով, ճակատիս դրոշմեց մաքուր, համեստ համբոյր։

Ես նայեցի միայն նորա վերայ—բայց նա հեռացաւ ինձանից և ասաց.—եկէք յետևիցս, իմ մանկլաւիկ—և գնաց դէպի իրենց տունը։ Ես գնացի նորա յետևից—բայց բան չէի հասկանում։ «Միթէ՞,—մտածում էի ես,—այս հեզ, խելացի աղջիկը այն իսկ Զինաիդան է, որին ես ճանաչում եմ»։ Եւ նորա քայլուածքը ինձ աւելի հանդարտ էր թւում—և ողջ նորա կազմուածքը աւելի խրոխտ ու վսեմ....

Աստուած իմ, որպիսի նոր ուժով բորբոքուեցաւ իմ սէրը։

XVI.

Ճաշից յետոյ իշխանուհու տանը հիւրեր հաւաքուեցան—և Զինաիդան դուրս եկաւ նոցա մօտ։ Այդ շրջանի բոլոր անդամները ներկայ էին, ինչպէս ինձ համար այն անմոռանալի երեկոյեան. մինչև անգամ Նիրմացկին եկել էր։ Այս անգամ Մայդանովը ամէնից առաջ էր եկել—նա նոր ոտանաւոր էր բերել։ Կրկին սկսեցինք ֆանտ խաղալ, բայց ոչ այնպէս, ինչպէս առաջ. այս անգամ ոչ աղաղակ, ոչ էլ յիմարութիւններ կային։ Զինաիդան այլ բնաւորութիւն տուեց մեր ընկերութեան։ Ես նորա կողքին էի նստած, ինչպէս նորա մանկլաւիկը։ Ի միջի այլոց նա առաջարկեց, որ այն մարդը, ում որ վիճակը կ'ընկնի, թող պատմէ իւր տեսած երազը. սակայն այս չյաջողուեց։ Երազները կամ հետաքրքրական չէին լինում (Բէլովզորովը երազում տեսել էր, որ իւր ձիուն ձուկն է տուել ուտելու և թէ ձիու գլուխը փայտից է եղել), կամ անբնական, սուտ ու հնարած։ Մայդանովը մեզ մի մեծ վիպասանութիւն պատմեց. նորա պատմածի մէջ և գերեզմաններ կային, և հրեշտակներ քնարները ձեռներին, և խօսող ծաղիկներ, և հեռուից լսուող ձայներ։ Զինաիդան չթողեց, որ նա վերջացնէ։ Եթէ բանը շարադրելուն է հասնում—

ասաց նա—թող ուրեմն մեզանից իւրաքանչիւրը անպատճառ պատմէ մի շարադրած բան։—Առաջինը Բէլովզորովը պիտի պատմէր։

Երիտասարդ հուսարը շփոթուեց։—Ես ոչի՛նչ չեմ կարող հնարել,—բացականչեց նա։

— Ի՞նչ դատարկ բան էք ասում,—նկատեց Զինաիդան։—Դիցուք, թէ դուք պսակուած էք, պատմեցէք մեզ, թէ ինչպէս ժամանակ անց կըկացնէիք ձեր ամուսնու հետ։ Դուք նորան կըփակէ՞ք։

— Ես նորան կըփակէի։

— Դուք էլ նորա հետ կընստէի՞ք։

— Ինքս էլ անպատճառ կընստէի նորա հետ։

— Լաւ։ Իսկ եթէ այդ ձանձրացնէ՞ր նորան, և նա դաւաճանէ՞ր ձեզ։

— Ես նորան կըսպանէի։

— Բայց եթէ նա փախչէ՞ր։

— Յետևից կըհասնէի և դարձեալ կըսպանէի։

— Լաւ։ Իսկ եթէ ե՞ս լինէի ձեր կինը, ինձ ի՞նչ կ՚անէիք։

Բէլովզորովը լռեց։—Ես ինձ կըսպանէի.....

Զինաիդան ծիծաղեց։—Տեսնում եմ, որ պատմել շատ բան չէք կարող։

Երկրորդ վիճակը Զինաիդային ընկաւ։ Նա աչքերը առաստաղին ձգեց և մտածմունքի մէջ ընկաւ։—Ահա՛, լսեցէ՛ք,—վերջապէս սկսեց նա,—թէ ինչ մտածեցի ես։ Երևակայեցէք մի հոյակապ ապարանք, ամառնային գիշեր և զարմանալի պարահանդէս։ Այս պարահանդէսը տալիս է մի երիտասարդ թագուհի։ Ամէն տեղ նկատելի է ոսկի, մարմարիոն, բիւրեղ, մետաքս, ճրագներ, ադամանդներ, ծաղիկներ, անուշահոտութիւն, մի խօսքով՝ շքեղութեան բոլոր պահանջները։

— Դուք սիրո՞ւմ էք շքեղութիւն,—ընդհատեց նորան Լուշինը։

— Շքեղութիւնը սիրուն է, — պատասխանեց օրիորդը, — ես սիրում եմ ամէն մի սիրուն բան։

— Գեղեցկի՞ց էլ աւելի, — հարցրեց նա։

— Ձեր հարցը շատ խորիմաստ հարց է, և ես չեմ հասկանում։ Ինձ մի՛ խանդարէք։ Այսպէս, փառաւոր պարահանդէս է։ Հիւրերը բազմաթիւ են, ամէնքն էլ երիտասարդ, գեղեցիկ, քաջ, ամէնքն էլ խելագարի պէս սիրահարուած են Թագուհու վերայ։

— Կանայք չկա՞ն հիւրերի թուում, — հարցրեց Մալեվսկին։

— Ո՛չ — կամ սպասեցէք — կան։

— Բոլորն էլ ազնի՞ղ։

— Շատ սիրուն։ Միայն տղամարդիկ բոլորն էլ սիրահարուած են Թագուհու վերայ։ Նա բարձրահասակ է և վայելչակազմ։ Նորա սև մազերի վերայ դրած է մի փոքրիկ ոսկէ թագ։

Ես նայեցի Զինաիդայի վերայ — և այդ իսկ րոպէին նա ինձ այնքան բարձր երևեցաւ բոլորից, նորա սպիտակ ճակատը, նորա անշարժ յօնքերը այնպիսի պայծառ խելք և իշխանութիւն էին արտայայտում, որ ես մտածեցի. «դու ինքդ ես այդ Թագուհին»։

— Ամէնքը նորա շուրջն են հաւաքվում, — շարունակեց Զինաիդան, — ամէնքը ամենաշողոքորթ խօսքերն են շռայլում նորա առաջ։

— Նա սիրո՞ւմ է, երբ իրեն շողոքորթում են, — հարցրեց Լուշինը։

— Ա՜խ, ի՜նչ անտանելի մարդ էք, անդադար ընդհատում էք... Ո՞վ չէ սիրում շողոքորթութիւն։

— Մի վերջին հարց էլ — սկսեց Մալեվսկին։ Թագուհին ունի՞ ամուսին։

— Դորա վերայ ես բոլորովին չեմ մտածել։ Չէ, ինչու է հարկաւոր մարդ։

— *Silence!* [1]) — բացականչեց Մայդանովը, որ բաւականին վատ էր խօսում Ֆրանսերէն։

— *Merci,* [2]) — ասաց Նորան Զինաիդան։— Եւ այսպէս, Թագուհին լսում է նոցա խօսքերը, լսում է երաժշտութիւնը, բայց չէ նայում հիւրերից ոչ մէկի վերայ։ Վեց պատուհան՝ առաստաղից մինչև յատակ՝ բաց էին արած։ Այնտեղից երևում էր մութ երկինքը մեծ մեծ աստղերով, մութ պարտէզը մեծ մեծ ծառերով։ Թագուհին նայում է դէպի պարտէզ։ Այնտեղ՝ ծառերի մօտ կայ մի շատրուան, որ մթութեան մէջ սպիտակին է տալիս—երկար, երկար, ինչպէս մի ուրուական։ Խօսակցութեան և նուագածութեան միջոցին Թագուհին լսում է ջրի մեղմ կարկաջունը։ Նա նայում է և մտածում։ դուք ամէնքդ էլ, պարոնայք, ազնիւ, խելօք և հարուստ էք, դուք ինձ շրջապատել էք, ձեզանից իւրաքանչիւրը թանկ է գնահատում իմ ամէն մի խօսքը, ամէնքդ էլ պատրաստ էք մեռնելու իմ առաջ, դուք իմ ձեռքումն էք.... իսկ այն տեղ՝ շատրուանի մօտ, այն կարկաչող ջրի մօտ կանգնած սպասում է ինձ նա, որին ես սիրում եմ, որի ձեռքումն եմ ես։ Նա հարուստ շորեր չունի հագին, նորա վերայ թանկագին ակներ չկան, ոչ ոք նորան չէ ճանաչում, բայց նա սպասում է ինձ՝ հաւատացած լինելով, որ ես կըգամ—և կըգնամ, չկայ մի այնպիսի իշխանութիւն, որ կարողանար ինձ արգելել, երբ ես կամենամ գնալ նորա մօտ և մնալ նորա հետ, կորչել այնտեղ՝ պարտիզի մթութեան մէջ, ականջ դնելով ծառերի խշխշոցին, շատրուանի կարկաչին....

Զինաիդան լռեց։

— Այդ շարադրած բան է,—խորամանկութեամբ հարցրեց Մալեվսկին։

Զինաիդան մինչև անգամ չնայեց նորա վերայ։

---

[1]) Լռութիւն։

[2]) Շնորհակալութիւն։

— Իսկ մենք, պարոնայք, ինչ կ'անէինք,—յանկարծ բացականչեց Լուշինը,—եթէ մենք էլ հիւրերի թուում լինէինք և իմանայինք, որ շատրուանի մօտ կանգնած է այն երջանիկ մարդը։

— Սպասեցէք, սպասեցէք,—ընդհատեց նորա խօսքը Զինաիդան,—ես ինքս կ'ասեմ ձեզ, թէ ինչ կ'անէր ձեզանից իւրաքանչիւրը։ Դուք, Բէլովզօրով, նորան մենամարտութեան կրկանչէիք. դուք, Մայդանով, նորա համար էպիգրամմա կըգրէիք...։ Բայց ո՞չ,—դուք էպիգրամմա գրել չգիտէք. Բարբիէ'ի ոճով մի երկար եամբ կըգրէիք և կըտայիք «Տելէգրաֆ» ին տպելու։ Դուք, Նիրմացկի, նորանից պարտք կ'առնէիք..... ո՞չ, դուք փող կըտայիք նորան տոկոսով. դուք, բժիշկ...։—Նա կանգ առաւ...։—Մ՚ չգիտեմ, թէ դուք ինչ կ'անէիք։

— Ինչպէս պալատական բժիշկ,—պատասխանեց Լուշինը,—ես խորհուրդ կըտայի թագուհուն, որ պարտհանդէս չտայ, երբ հիւրերի վերայ մտածելու սիրտ չունի։

— Գուցէ, դուք արդարացի վարվուէիք։ Բայց դո՞ւք, կոմս....

— Ես,—կրկնեց Մալեվսկին իւր սովորական չար ժպիտով։

— Դուք նորան կըտայիք դեղած մի կոնֆէտ։

Մալեվսկին մի փոքր երեսը ծռեց և մի լոպէ ջհուդի նմանեց. նա իսկոյն ծիծաղեց։

— Ինչ որ ձեզ է վերաբերում, Վոլդեմա՛ր,—շարունակեց Զինաիդան—բայց բաւական է. լաւ է ուրիշ խաղ սկսենք։

— Մսեո Վոլդեմարը, ինչպէս մանկլաւիկ, թագուհու շէյֆը կըբռնէր, երբ որ նա վազէր պարտէզ,—կծու նկատեց Մալեվսկին։

Ես սաստիկ բարկացայ, բայց Զինաիդան շուտով ձեռը ուսիս դնելով ասաց դողացող ձայնով.—Ես երբէք իրաւունք չեմ տալ ձերդ պայծառափայլութեան այդպէս յան-

դուգն վարուելու, ուստի և խնդրում եմ, որ հեռանաք։— Նա ցոյց տուեց դուռը։

— Ներեցէք, օրիորդ,—փնթփնթաց Մալեվսկին բոլորովին գունատուած։

— Օրիորդը իրաւունք ունի,—բացականչեց Բէլովզորովը և տեղից վեր կացաւ։

— Աստուած վկայ, ես բոլորովին չէի սպասում,—շարունակեց Մալեվսկին.—իմ խօսքերը, կարծեմ, բոլորովին այսպիսի նշանակութիւն չունէին.... մինչև անգամ մոքով էլ չէր անց կացել ձեզ անպատուելու.... Ներեցէք։

Զինաիդան նայեց նորա վերայ և սառնութեամբ պատասխանեց։—Լաւ, մնացէք,—ասաց օրիորդը և անփոյթ կերպով ձեռը շարժեց։—Ի զուր ես և մեռ Վօլդեմարը բարկացանք։ Դուք սիրում էք խայթել. թող այդպէս լինի։

— Ներեցէք ինձ,—նորից կրկնեց Մալեվսկին. իսկ ես՝ յիշելով Զինաիդայի շարժուածքը, մտածեցի կրկին, որ ինքը թագուհին աւելի վսեմութեամբ չէր կարող ցոյց տալ դուռը այս յանդուգն մարդուն։

Այս փոքրիկ տեսարանից յետոյ Ֆանտը երկար չտևեց։ Բոլորեքեան սկսեցին քաշուել ոչ այնքան այդ անցքի պատճառով, որքան մի ուրիշ, ոչ այնքան որոշ, բայց ծանր զգացմունքից։ Ոչ ոք այդ զգացմունքի վերայ չէր խօսում, բայց ամէն մէկը զգում էր, որ այդ զգացմունքը ինքն էլ ունի, իւր դրացին էլ։ Մայդանովը կարդաց մեզ իւր ոտանաւորը—և Մալեվսկին տաքացած գովում էր նորա գրուածը։— Որքան նա կամենում է բարի երևիլ—փսփսաց սկանչիս Լուշինը։ Շուտով մենք ցրուեցինք։ Զինաիդան յանկարծ մտածմունքի մէջ ընկաւ. իշխանուհին մարդ ուղարկեց ասելու, որ գլուխը ցաւում է։ Նիրմացկին էլ սկսեց դանդատուել, որ ռէվմատիզմ ունի....

Երկար ժամանակ ես չէի կարողանում քնել. ինձ շատ էր զարմացնում Զինաիդայի պատմածը։—Մի՞թէ այս մի

ակնակ էր, — հարցնում էի ինձ ու ինձ. — և ո՞ւմ կամ ի՞նչի էր ակնարկում։ Եւ եթէ իրաւ մի բան կայ ակնարկելու.... ինչպէ՞ս նա վճռեց այդ անել։ Ո՞չ, ո՞չ, անկարելի է, — շշնջում էի ես մէկ կողքից միւս կողքի վերայ շուռ գալով.... Ես յիշում էի Զինաիդայի դէմքի արտայայտութիւնը... ես յիշում էի Լուշինի Նեսկուչնիում բացականչած խօսքը, մեր յարաբերութիւնների անսպասելի կերպով փոխուիլը — և ես շուարում էի ենթադրութիւններ անելով։ «Ո՞վ է նորա սիրածը»։ Այս խօսքերը, ասես, կանգնած էին աչքիս առաջ և գրած մթութեան մէջ. — կարծես, մի չարագուշակ ամպ էր պտտում գլխիս — և ես զգում էի նորա ճնշումը — և ես սպասում էի, որ ահա՛, այս րոպէիս կը-ճայթի։ Նստ բանի ընտելացայ վերջին ժամանակը, շատ բան աչքս սովորեց Զասէկինենց տանը. նոցա անկարգութիւնը, ճրագուէ մոմի մնացորդները, կոտրտած դանակներն ու պատառաքաղները, մեայլ Վօնիֆատին, անշնորհք աղախինները, իշխանուհու շարժուածքները — այս բոլոր տաբտրինակ կեանքը ինձ այլ ևս չէր զարմացնում.... Բայց ես չէի կարողանում սովորել Զինաիդայի մէջ նկատած փոփոխութեանը...։ Արկածախնդիրներից մէկն է — ասաց մի անգամ մեայրս նորա մասին։ Արկածախնդիր — նա, իմ կուռքը, իմ աստուածը։ Այս անունը այրում-խորովում էր ինձ, ես աշխատում էի ազատուել դորանից, գլուխս բարձի մէջ ծածկելով, ես բարկանում էի — բայց մի և նոյն ժամանակ ամէն բան յանձն կ'առնէի, ամէն բան կըտայի, միայն թէ ես լինէի շատրուանի մօտ կանգնած երջանիկ մարդը....

Արիւնս եռ եկաւ, բորբոքուեցաւ։ «Պարտէզ»... «շատրուան»... — մտածեցի ես...։ — «Գնամ պարտէզ»։ Ես արագ հագնուեցայ և տանից դուրս եկայ։ Մութ գիշեր էր, ծառերը հազիւ շարժվում էին։ Երկնքից թեթև հովութիւն իջաւ, ադարակից սամթի հոտ էր գալիս։ Անցայ բոլոր ծառուղիները. իմ քայլերի թեթև ձայնը ինձ և շփոթում

էր, և ոյժ էր տալիս. ես կանգ էի առնում, սպասում և ականջ էի դնում, ինչպէս արագ բաբախում էր սիրտս։ Վերջապէս ես մօտեցայ ցանկին և յենուեցայ բարակ ձողին։ Յանկարծ—գուցէ այդ ինձ միայն թուեցաւ—մի քանի քայլ ինձանից հեռու երևեցաւ մի կանացի կերպարանք.... Ես ուշադրութեամբ հայեացքս ձգեցի դէպի մութ կողմը—շունչս պահեցի։ Այ՛ս ինչ է։ Քայլերը են լսվում—թէ դարձեալ սիրտս է բաբախում։—Ո՞վ է այստեղ,—շշնջեցի ես հազիւ լսելի կերպով։ Այս ի՞նչ է դարձեալ զսպած ծիծաղը.... թէ տերևների շշշիւն.... թէ հառաչանք է ականջիս մօտ։ Ես սկսայ վախենալ...։—Ո՞վ է այստեղ,—կրկնեցի ես աւելի կամաց։

Մի րոպէ օդը շարժուեցաւ. երկնքում ցոլաց մի հրեղէն գիծ. աստղ վայր ընկաւ։—Զինաիդա՞,—ուզում էի հարցնել, բայց ձայնս մարեցաւ շրթունքներիս վերայ։ Եւ յանկարծ մեր շուրջը տիրեց խորին լռութիւն, ինչպէս այդ լինում է կէս գիշերին.... Մինչև անգամ ճռիկները ձայները կտրեցին—միայն մի տեղ լսուեցաւ պատուհանը փակելու ձայնը։ Ես կանգնեցի, կանգնեցի և ապա վերադարձայ սենեակս, մնայ սառն անկողնս։ Մի տարօրինակ յուզմունք էի զգում. կարծես, թէ ես տխրութիւն էի գնացել—մենակ էի մնացել և անցել էի ուրիշի բաղդաւորութեան մօտից։

XVII.

Հետևեալ օրը ես միայն հարևանցի տեսայ Զինաիդային. նա մօր հետ կառքով տեղ էր գնում։ Դորա փոխարէն ես տեսայ Լուշինին, որ դարձեալ հազիւ արժանացրեց ինձ իւր բարևին, և Մալեվսկիին։ Երիտասարդ կոմը ժպտեց և բարեկամաբար խօսեցաւ ինձ հետ։ Իշխանուհու տունը յաճախողներից միայն սա կարողացաւ ընդունելութիւն

գտնել մեր տանը և մօրս նա դուր եկաւ։ Հայրս նորան երես չէր տալիս և շատ քաղաքավարի կերպով էր վարվում նորա հետ, և այդ վերաւորում էր Մալեվսկիին։

— *Ah, monsieur le page,* [1]—սկսեց Մալեվսկին,—շատ ուրախ եմ, որ ձեզ պատահեցայ։ Ի՞նչ է անում ձեր գեղեցիկ Թագուհին։

Մալեվսկիի Թարմ, գեղեցիկ դէմքը այդ ըոպէին այնպէս անհաճելի էր ինձ—և նա այնպիսի արհամարհողական հայեացքով էր նայում վերաս, որ ես ամենևին չպատասխանեցի նորան։

— Դուք կրկին բարկանո՞ւմ էք,—շարունակեց նա։—Ի զուր։ Հօ ես չասացի ձեզ մանկլաւիկ, այլ Թագուհիներն են ունենում մանկլաւիկներ։ Բայց Թոյլ տուէք, ձեզ նկատեմ, որ դուք վատ էք կատարում ձեր պաշտօնը։

— Այդ ինչպէ՞ս։

— Մանկլաւիկները անպատճառ իրենց տիրուհու հետ պիտի լինին։ Մանկլաւիկները պիտի իմանան, Թէ ինչ են անում նոքա, մինչև անգամ նոքա պիտի հսկեն նոցա վերայ,—շարունակեց նա՝ ձայնը ցածացնելով—օր ու գիշեր։

— Ի՞նչ էք կամենում ասել։

— Ի՞նչ եմ կամենում ասել։ Կարծեմ, ես բաւականին պարզ եմ խօսում։ Գիշեր — և ցերեկ։ Ցերեկը դեռ վնաս չունի. ցերեկով լոյս է և մարդիկ շատ են լինում. իսկ գիշերը — փորձանքը հէնց գիշերը կարող է լինել։ Խորհուրդ եմ տալիս ձեզ, որ գիշերները չքնէք և հսկէք. հսկեցէք, որքան կարող էք։ Յիշում էք—պարտիզում, գիշերը, շատրուանի մօտ—այ, ինչտեղ դուք պիտի հսկէք։ Ինձանից դուք շնորհակալ եղէք։

Մալեվսկին ծիծաղեց և մէջքը ինձ դարձրեց։ Նա, երևի, մեծ նշանակութիւն չէր տալիս այն խօսքերին, որ ասաց

---

[1]) Ա՜հ, պարոն մանկլաւիկ։

ինձ։ Նա յայտնի էր որպէս երևելի միստիֆիկատոր և հռչակուած էր նորանով, որ լաւ գիտէր մարդկանց դժուարեցնել դիմակահանդէսներում։ Այս բանին շատ նպաստում էր այն համարեա անգիտակցական ստախօսութիւնը, որ նորա բնութեան յատկանիշն էր.... Նա ուզում էր միայն ինձ ծաղրել. սակայն նորա իւրաքանչիւր խօսքը ինչպէս թոյն հոսում էր ամէն մի երակիս մէջ։ Արիւնս գլուխս խփեց։ «Ա՜յ բանը ինչ տեղ է,—ասացի ինքս ինձ.—լա՛ւ։ Ուրեմն ես ի զո՞ւր չէի ուզում պարտէզ գնալ։ Ուրեմն այդ չի լինիլ» — գոչեցի ես՝ կրծքիս խփելով, թէպէտ իսկապէս չգիտէի—ինչ չի լինիլ։—«Արդեօք ինքը Մալեվսկի՞ն կրգայ պարտէզ,—մտածում էի ես (գուցէ, անգիտակցաբար նորա բերանից դուրս պրծան այդ խօսքերը. նա այսքան յանդգնութիւն կ՚ունենար)—կամ թէ մէկ ուրի՞շը կրգայ—(մեր պարտիզի ցանկը այնքան ցած էր, որ ոչ մի դժուարութիւն չկար նորա վերայից թռչելու)—բայց վա՜յ նորան ով ճանկս կ՚ընկնի։ Ոչ ոքի խորհուրդ չեմ տալ ինձ հանդիպել։ Ես ցոյց կըտամ ողջ աշխարհին և նորան, դաւաճանին (այսպէս ես Զինաիդային դաւաճան անունը տուի)—որ ես վրէժ առնել գիտեմ։

Ես վերադարձայ տուն, գրասեղանիցս հանեցի նոր գնած անգլիական գլուխհատոս, շօշափեցի նորա բերանը և յօնքերս կիտած, սառնասիրտ ու մտախոհ վճռողականութեամբ գրպանս դրի, ասես, թէ այսպիսի գործեր ինձ համար անսովոր չէին և առաջին անգամը չէր, որ ես պիտի անէի։ Սիրտս չարութեամբ լցուեցաւ և քարացաւ. մինչև գիշեր ես յօնքերս կիտած և շրթունքներս սեղմած շարունակ յետ ու առաջ էի գնում, ձեռքով գրպանումս սեղմում էի տաքացած դանակը և առաջուց պատրաստվում էի մի սոսկալի գործի համար։ Այս նոր, անսովոր զգացմունքը այնպէս զբաղեցնում էր ինձ և ուրախացնում, որ ես իսկապէս Զինաիդայի վերայ քիչ էի մտածում։ Միշտ

գլուխս էր գալիս. — Ալէքօ՝ երիտասարդ դնչուն, — «ուր, գեղեցիկ պատանի։ — Պարկած մնա», իսկ յետոյ. «Թաթախուած ես գու արեամբ.... Ո՜հ, ի՞նչ արիր.... Բան չկայ»։ Ինչ անգութ ժպիտով ես կրկնեցի. բան չկայ։ Հայրս տանը չէր. իսկ մայրս, որ՝ քանի ժամանակ էր, համարեա միշտ գրգռուած դրութեան մէջ էր, ուշադրութիւն դարձրեց դէմքիս վճռողական արտայայտութեան վերայ և ասաց ինձ. — Ի՞նչ ես քիթդ կախել։ — Ես միայն գլխողաբար ժպտեցի և մտածեցի. «եթէ նոքա իմանային»։ Խփեց տասն և մէկ ժամը. գնացի սենեակս, միայն շորերս դեռ չհանեցի, ես սպասում էի, որ կէս-գիշերը հասնի. վերջապէս խփեց տասն և երկուսը։ «Ժամանակ է», շշնջեցի ես, բոլոր կոճակներս ձգեցի, թևերս էլ յետ ծալեցի և գնացի պարտէզ։

Առաջուց ինձ համար թաք կենալու տեղ էի ընտրել։ Պարտիզն միւս ծայրում, ինչտեղ մեր և Հասէկինենց տունը բաժանող ցանկը միանում էր ընդհանուր պատի հետ, բուսնում էր մի եղևնի։ Նորա խիտ ու ցած ճիւղերի տակ կանգնած, ես կարողանում էի լաւ նկատել, ինչքան թոյլ էր տալիս գիշերուայ մթութիւնը, թէ ինչ էր կատարվում չորս կողմում. այստեղ ձգուած էր այն նեղ ճանապարհը, որ ինձ միշտ խորհրդաւոր էր թւում. նա օձի պէս անցնում էր ցանկի տակով, որ այստեղ վերայից անց կացածների ոտների հետքերն էր կրում և տանում էր դէպի ակացիաներից կազմած կլոր հովանոցը։ Ես հասայ եղևնի ծառին, յենուեցայ նորա բնին և սկսայ հսկել։

Գիշերը նոյնպէս խաղաղ էր, ինչպէս և նախընթաց օրը. միայն երկնքի վերայ աւելի քիչ ամպ կար — և թփերը, մինչև անգամ բարձր ծաղիկները որոշ նկատվում էին։ Սպասելու առաջին րոպէները սարսափելի ու անտանելի էին։ Ես վճռել էի ամէն բան անել և ինքս ինձ մտածում էի, թէ ինչպէս անեմ։ Դոռամ արդիօք. «Ուր ես գնում։ Կանգնի՛ր, խոստովանի՛ր — կամ մահ» — թէ ուղղակի

խփեմ.... Ամէն մի ձայն, ամէն մի շըշիւն ու խշխշոց ինձ համար նշանաւոր էր.... Ես պատրաստվում էի.... Ես առաջ թեքուեցայ.... Բայց անցաւ կէս ժամ, անցաւ մի ժամ. ալիւնս հանդարտվում էր և սառչում. կամաց կամաց գլուխս էր գալիս այն միտքը, որ ի զուր եմ ես անում այս բոլորը, որ մինչև անդամ սա ծիծաղելի է, որ Մալեվսկին միայն հանաք էր որ արաւ: Ես դուրս եկայ դարանից և պտտեցի պարտէզը: Կարծես, հակառակը, ոչ մի տեղ մի փոքրիկ անգամ ձայն չէր լսվում. ամէն բան հանդարտ էր. մինչև անդամ դրան մօտ կուչ եկած մեր շունը քնած էր: Ես բարձրացայ ջերմոցի աւերակի վերայ, տեսայ իմ առաջ հեռաւոր դաշտը, յիշեցի իմ տեսութիւնը Զինաիդայի հետ և մոտամոտուն մէջ ընկայ....

Ես վեր թռայ.... Մի ձայն լսուեցաւ, որ նման էր դրան ճրռռոցի. յետոյ, ասես, մի ճիւղ կոտրուեցաւ: Երկու ոստիւնով ցած իջայ աւերակից—և տեղն ու տեղը մարեցայ: Պարտիզում որոշ կերպով լսվում էին արագ, թեթև, բայց զգոյշ քայլեր: Քայլերը ինձ էին մոտենում: «Ահա՛ նա.... Ահա՛ վերջապէս նա», անցաւ մտքովս: Ես ցնցուեցայ, հանեցի գրպանից դանակս, բաց արի—աչքիս առաջ պտտվում էին մի տեսակ կարմիր կայծեր, երկիւղից ու բարկութիւնից գլխս մազերը շարժուեցան.... Քայլերը ուղղակի դէպի ինձ էին մոտենում—ես ծռվում, ձգվում էի դէպի այդ ձայնը.... Ստու

իմ, հայրս էր գալիս:

Ես իսկոյն ճանաչեցի նորան, թէպէտ նա բոլորովին ծածկուած էր թիկնոցով և գլխարկը աչքերի վերայ քաշել: Ոտի մատների վերայ նա անցաւ մոտիցս: Նա ինձ չնկատեց, թէպէտ ես ծածկուած չէի, բայց այնպէս էի կուչ եկել, որ համարեա գետնին էի հաւասարուել: Նախանձոտ, սպանութեան պատրաստ Օթելլոն յանկարծ մի համբակ դարձաւ.... Այնպէս վախեցայ հօրս անակնկալ երևելուց, որ առաջ չնկատեցի էլ, թէ ինչ տեղից է

գալիս, ուր գնաց և ինչ տեղ անհետացաւ։ Ես միայն այն ժամանակ ուղղուեցայ և մոռացեցի. «ինչո՞ւ համար է հայրս գիշեր ժամանակ մեզ գալիս պարտիզում»,—երբ դարձեալ ամէն բան հանդարտուեցաւ։ Վախից ես դանակս վայր ձգեցի արօտի վերայ, մինչև անգամ չորոնեցի էլ. ես սաստիկ ամաչում էի։ Մի անգամից ես լոջացայ։ Տուն վերադառնալիս ես դարձեալ քայլերս ուղղեցի դէպի իմ նստարանը և նայեցի Զինաիդայի ննջարանի պատուհանին։ Պատուհանի փոքրիկ, մի քիչ էլ դուրս ընկած ապակիները կապուտին էին տալիս գիշերուայ երկնքի աղօտ լուսից։ Յանկարծ—նոցա գոյնը սկսաւ փոխուիլ.... Յետոյ—այս ես տեսնում էի և տեսնում էի շատ որոշ կերպով—վարագոյրը զգոյշ ու կամաց ցած թողեցին—և այդպէս էլ անշարժ մնաց։

— Այս ի՞նչ է նշանակում,—ապտասանեցի ես բարձր ձայնով, համարեա ակամայ, երբ ես արդէն սենեակումս էի։ Երա՞գ է, թէ պատահմունք.... Այն ենթադրութիւններին, որ այնքան նոր և տարօրինակ էին ինձ համար, ես չէի վստահանում անձնատուր լինել։

XVIII.

Առաւօտեան որ վեր կացայ, գլուխս ցաւում էր։ Երեկուայ յուզմունքը չկար։ Բայց ես ընկել էի մի ծանր տարակուսանքի ու անսովոր տրտմութեան մէջ—ասես, իմ մէջ մի բան մեռնում էր։

— Դուք ուղեղն կէսը հանած ճագարի նման է,—ասաց Լուշինը, պատահելով ինձ։ Նախաճաշի ժամանակ աչքիս տակից նայում էի մերթ հօրս, մերթ մօրս վերայ. հայրս, ինչպէս և միշտ, շատ հանդիստ էր. մայրս, ինչպէս և միշտ, ծածուկ բարկանում էր։ Ես սպասում էի, արդեօք հայրս չի՞ խօսիլ ինձ հետ բարեկամաբար, ինչպէս

երբեմն պատահում էր.... Բայց նա մինչև անգամ չփայ-
փայեց ինձ իւր ամենօրեայ փաղաքշանքով։ «Պատմե՛մ ար-
դեօք բոլորը Զինաիդային», մտածեցի ես.... «Զէ՞ որ հաշիւը
մէկ է—ամէն բան մեր մէջ վերջացած է»։ Ես դնացի նորա
մօտ և ոչ միայն նորան բան չպատմեցի—խօսել էլ չկարո-
ղացայ նորա հետ, ինչպէս կամենում էի։ Իշխանուհու մօտ
եկել էր Պետերբուրգից հարազատ որդին, տասն և վեց
տարեկան մի կադէտ։ Զինաիդան իսկոյն իւր եղբօրը ինձ
յանձնեց։—Ա՛հա ձեզ, սիրելի Վոլոդեաս,—ասաց նա,—
(նա առաջին անգամն էր ինձ այսպէս անուանում) մի ընկեր։
Սորա անունն էլ Վոլոդեա է։ Խնդրեմ, սիրեցէք միմեանց,
թէպէտ սա մի քիչ վայրենի է, բայց բարի սիրտ ունի։
Յոյց տուէք նորան Նեսկուչնի պարտէզը, ճեմեցէք միասին,
թող սա ձեր հովանաւորութեան նեղքոյ լինի։ Այնպէս չէ՞,
դուք այդ կ'անէք, դո՛ւք էլ բարի էք։—Նա քնքշութեամբ
իւր երկու ձեռը դրեց ուսերիս—և ես բոլորովին շփոթուեցայ։
Այս երեխայի դալը ինձ էլ երեխայ պիտի դարձնէր։ Ես
լուռ նայում էի կադէտի վերայ, նա էլ անխօս ինձ վերայ
էր նայում։ Զինաիդան ծիծաղեց և մեզ միմեանց առաջ
մղեց։—Գրկուեցէ՛ք, երեխայք։—Մենք գրկուեցանք։—Կա-
մենա՞ք, ես ձեզ կրտանեմ պարտէզ,—հարցրի ես կադէտից։
— Խնդրեմ,—պատասխանեց նա ինձ խռպոտ՝ իսկը կա-
դէտի ձայնով։ Զինաիդան կրկին ծիծաղեց.... Ես կարողացայ
նկատել, որ երբէք նորա դէմքի վերայ այնպիսի գիղեցիկ
գոյներ չեն եղել։ Կադէտի հետ միասին հեռացանք։ Մեր
պարտիզում մի հին ճլորթի կար։ Ես նորան նստեցրի բա-
րակ տախտակի վերայ և սեկսեցի ճօճել։ Նա անշարժ
նստած էր իւր նոր, հատ մահուդից կարած՝ ոսկեզօծ
ժապաւէններով զարդարուած համազգեստը հագին և ա-
մուր բռնուել էր պարանից։—Արձակեցէք ձեր կօճակները,—
ասացի նորան։—Ոչինչ, մենք սովոր ենք,—պատասխանեց
նա և հաղաց։ Նա նման էր իւր քրոջը, մանաւանդ նման

էին աչքերը։ Ես և բաւականութիւն էի զգում Նորան ծառայելով, բայց մի և նոյն ժամանակ մի անասելի տխրութիւն կրծում էր սիրտս։ «Այժմ կարծես, թէ ես երեխայ եմ» մտածում էի ես, «իսկ երեկ....» Միտս ընկաւ, ինչտեղ ես երեկ դանակս վայր ձգեցի և գտայ։ Կաղէտը խնդրեց ինձանից դանակս, կտրեց մի հաստ եղէգն, շուտ շինեց և սկսեց շրուացնել։ Օթէլլոն նոյնպէս սկսեց շրուացնել։

Բայց երեկոյեան ինչպէ՞ս էր լաց լինում նա, այս իսկ Օթէլլոն՝ Զինաիդայի ձեռների վերայ, երբ սա՝ դանելով Նորան պալտիզի մի անկիւնում, հարցրեց, թէ ինչու համար է նա այնպէս տխուր։ Ես այնքան արցունք էի թափում, որ օրիորդը վախեցաւ։—Ի՞նչ է եղել, ի՞նչ է պատահել, Վօլոդեա,—կրկնում էր նա և, տեսնելով, որ պատասխան չեմ տալիս և անընդհատ լալիս եմ, ուզեց թաց թուշս համբուրել։ Բայց ես յետ քաշուեցի և լալով սրտատանջեցի. — ես բոլորը գիտեմ. ինչո՞ւ էլք խաղացնում ինձ.... Ձեր ինչի՞ն էր պէտք իմ սէրը։

— Ես մեղաւոր եմ ձեր առաջ, Վօլոդեա..... — ասաց Զինաիդան։ — Ախ, ես շատ մեղաւոր եմ.... — աւելացրեց նա և սեղմեց ձեռը։ — Որքա՜ն ես վատ եմ, մեղաւոր.... Բայց այժմ ես ձեզ չեմ խաղացնում, ես ձեզ սիրում եմ— և դուք չէք կասկածում, թէ ինչու և ինչպէս.... Բայց դուք ի՞նչ գիտէք։

Ես ի՞նչ կարող էի պատասխանել Նորան։ Օրիորդը առջևս կանգնած վերաս էր նայում—իսկ ես ոտից ցգլուխ Նորան էի պատկանում, երբ նա հայեացքը ինձ վերայ էր ձգում.... Քառորդ ժամից յետոյ արդէն ես վազվզում էի կաղէտի և Զինաիդայի հետ. ես լաց չէի լինում, ես ծիծաղում էի, թէպէտ ուռած կոպերիցս ծիծաղի ժամանակ արտասուք էր թափվում։ Իմ վզին փողապատի տեղ կապուած էր Զինաիդայի ժապաւէնը, և ես ուրախութիւնից դուռացի, երբ յանջողեցայ բռնել Նորա իրանից։ Օրիորդը իւր ուզածը անում էր ինձ հետ։

XIX.

Ես սաստիկ պիտի դժուարանայի, եթէ ինձ ստիպէին մանրամասնօրէն պատմել, թէ ինչ դրութեան մէջ էի ամբողջ շաբաթը իմ անյաջող գիշերային արշաւանքից յետոյ։ Դա մի տարօրինակ, տենդային ժամանակ էր, մի քաոս, ուր փոթորկի պէս խռնուած էին միմեանց հակառակ զգացմունքները. մտքեր, կասկածներ, յոյսեր, ուրախութիւն և տանջանք։ Ես վախենում էի նայել նեղքին մարդուս վերայ, եթէ միայն տասն և վեց տարեկան երեխան կարող է իւր անձը քննել, վախենում էի ինքս ինձ հաշիւ տալ, ինչ բանի համար էլ լինէր։ Ես ուզում էի, որ օրը շուտ անցնէր. իսկ գիշերը քնում էի.... մանկական թեթեւամտութիւնը նպաստում էր ինձ։ Ես չէի կամենում իմանալ, արդեօք սիրում են ինձ, և չէի կամենում ինքս ինձ խոստովանել, որ ինձ չեն սիրում. հօրից ես փախչում էի—իսկ Զինաիդայից փախչել ես չէի կարող.... Նորա ներկայութեան ժամանակ ես այրվում էի.... բայց ինչու համար ես պիտի իմանայի, թէ այդ ինչ կրակ էր, որից հալվում էի—բաւական է, որ ինձ համար քաղցր էր այդ այրուելն ու հալուելը։ Ես անձնատուր էի լինում ստացած տպաւորութիւններիս, ինքս ինձ խաբում էի, աշխատում էի հեռացնել ինձանից յիշողութիւններս և այն բոլորի առաջ փակում էի աչքերս, ինչ որ նախազգում էի...։ Այս անտանելի դրութիւնը երկար չէր կարող տևել... մի անակնկալ փոթորիկ բոլորին վերջ դրեց և ինձ մի նոր ճանապարհի վերայ կանգնեցրեց։

Մի անգամ՝ երկար ճեմելուց յետոյ տուն վերադարձայ ճաշի ժամանակ և զարմանքով իմացայ, որ միայն ես պիտի ճաշեմ. հայրս տանը չէր, իսկ մայրս տկար էր, չէր կամենում ճաշել և փակուել էր իւր ննջարանում։ Ծառայի

դէմքից իմացայ, որ մի անբաւականութիւն է տեղի ունեցել.... Հարց ու փորձ անել նոցա ես չէի համարձակվում, բայց ես մի բարեկամ ունէի՝ երիտասարդ բուֆէտչիկ Ֆիլիպպը, որ շատ էր սիրում ոտանաւորներ և լաւ կիթար էր ածում—սորան դիմեցի: Սորանից ես իմացայ, որ նոցա մէջ մի սարսափելի անախորժութիւն է պատահել (ծառաների սենեակում ամէն բան լսվում է եղել. շատ բան ասուած է եղել Ֆրանսերէն—բայց մեր Մաշա աղախինը հինգ տարի ապրել է մի Պարիզեցի կար անող կնոջ մոտ և բոլորն էլ հասկանում էր). մայրս առաջ մեղադրել է հօրս անհաւատարմութեան, դրացի օրիորդի հետ ծանօթ լինելու համար. իսկ հայրս առաջ իրեն արդարացրել է, բայց յետոյ բարկացել է և մի խիստ նկատողութիւն է արել «իբրու թէ մօրս տարիքների համար», մայրս էլ լաց է եղել. սա յիշել է հօրս այն պարտամուրհակի մասին, որ նա իբրու թէ տուել է պառաւ իշխանուհուն, և շատ վատ կարծիք է յայտնել թէ իշխանուհու և թէ օրիորդի մասին, և հէնց այդտեղ հայրս նորան մի բան է սպառնացել:—Բայց բոլորը սկսել է,—շարունակեց Ֆիլիպպը,—մի անանուն նամակից. իսկ թէ ով է գրել—յայտնի չէ. եթէ ոչ՝ ուրիշ կերպով այս բաները չէին յայտնուիլ:

— Բայց միթէ՞ բան է եղել,—շշնջեցի ես—մինչ ոտներս ու ձեռներս սառչում էին, և սիրտս դողդողում էր..:

Ֆիլիպպը խորհրդաւոր կերպով աչքով արեց:—Եղել է: Այդ տեսակ բաները չես ծածկիլ. ինչքան էլ ձեր հայրը զգոյշ է այս բանում,—բայց չէ որ պէտք է, օրինակի համար, կառք վարձել կամ մի ուրիշ բան է պէտք.... առանց մարդու հօ բան չես անել:

Ֆիլիպպին ճանապարհ դրի—և ես ընկայ անկողնիս վերայ: Ես լաց չեղայ, բոլորովին չյուսահատուեցայ. ինքս ինձ չէի հարցնում, ճիրք և ինչպէս է պատահել այս. ես չէի զարմանում, թէ ինչպէս ես առաջ, դեռ վաղուց դլխի

չեմ ընկել—ես մինչև անգամ չէի տրտնջում հօրս վերայ...։ Իմացածս կարողութիւնից վեր էր. այս անակնկալ գիւտը ինձ բոլորովին ճնշեց...։ Ամէն բան վերջացած էր։ Բոլոր ծաղիկներս մի անգամից պոկած, ցրուած ու ոտի տակ տուած չորս բոլորքս ընկած էին։

XX.

Հետևեալ օրը մայրս ասաց, թէ քաղաք պիտի տեղափոխուինք։ Առաւօտեան հայրս գնաց Նորա ննջարանը և երկար ժամանակ նստած էր նորա հետ։ Ոչ ոք չէր չիմացաւ, թէ ինչ ասաց նորան, բայց մայրս այլ ևս լաց չէր լինում. նա հանգստացել էր և կերակուր խնդրեց — սակայն չերևեցաւ և չփոխեց իւր վճիռը։ Յիշում եմ, ողջ օրը ես թափառում էի, բայց չգնացի պարտէզ և ոչ մի անգամ չնայեցի էլ Զասէկինենց տան վերայ—իսկ երեկոյեան ես ականատես եղայ մի տարօրինակ դէպքի. հայրս կոմս Մալեվսկիի ձեռից բռնած՝ տարաւ Նորան դահլիճից իւր առանձնասենեակը և ծառայի ներկայութեան սառնութեամբ ասաց Նորան. «Մի քանի օր առաջ մի տան մէջ ձերդ պայծառափայլութեան դուռն են ցոյց տուել. իսկ այժմ ես երկար չեմ խօսիլ ձեզ հետ, կ՚ասեմ միայն, որ, եթէ մէկ էլ շնորհք բերէք մեզ մօտ, պատուհանից ձեզ դուրս կընդեմ։ Ձեր ձեռքը ինձ դուր չէ գալիս»։ Կոմսը գլուխ տուեց, ատամները սեղմեց և կուչ եկած դուրս գնաց։

Ակսեցին պատրաստութիւններ տեսնել տեղափոխուելու քաղաք՝ Արբատ թաղը, ուր մեր տունն էր։ Հայրս, ինչպէս բանից երևում էր, էլ չէր կամենում մնալ ամարանոցում. բայց երևի նա կարողացել էր համոզել մօրս, որ անցածից մի անբաւականութիւն դուրս չքերէ։ Ամէն բան սուս ու փուս էր կատարվում, առանց շտապելու. մայրս մինչև անգամ խնդրեց, որ ողջոյնը յիշեն իշխանուհուն և յայտնեն

նորան իւր ցաւակցութիւնը, որ տկարութեան պատճառով ինքը անձամբ չէ կարող գնալ տեսութիւն։ Այստեղ ու այնտեղ թափառում էի ես գժուածի պէս—և միայն կամենում էի, որ այս բոլորը շուտով վերջանայ։ Մի միտք ամենևին չէր հեռանում գլխից. ինչպէս նա, այդ երիտասարդ աղջիկը—որ այսպէս թէ այնպէս իշխանի աղջիկ է, կարողացել է մի այդպիսի բան անել, քանի նա լաւ գիտէր, որ իմ հայրը ազատ մարդ չէ, և միջոց ունէր ամուսնանալու, դիցուք, թէ նոյն իսկ Բէլովզորովի հետ։ Ի՞նչ յուսով է նա արել։ Ինչպէս նա չէ վախեցել իւր ապագան փչացնելուց։ Ա՜հա, մտածում էի ես, ահա սա սէր է, սա կիրք է, սա անձնուիրութիւն է.... և ես յիշեցի Լուշինի խօսքերը։ Մի քանիսների համար անձը զոհել շատ քաղցր է։ Մի անգամ ես նկատեցի նոցա պատուհանում մի գունատ դէմք..... «միթէ՞ սա Զինաիդան է», մտածեցի ես.... արդարև, այդ նորս դէմքն էր։ Ես չկարողացայ ինձ զսպել։ Ես չէի կարող նորան թողնել՝ առանց տեսնելու և ասելու իմ վերջին մնաս բարևը։ Յարմար ժամանակ գտայ ու գնացի նոցա տունը։

Հիւրասենեակում ինձ ընդունեց իշխանուհին իւր սովորական անփոյթ բարևով։

— Ի՞նչ է պատահել ձերոնց,—հարցրեց իշխանուհին, քթախոտ լցնելով քթի ծակերը։ Ես նայեցի նորա վերայ և սիրտս թեթևացաւ։ Պարտամուրհակ խօսքը, որ ասաց Ֆիլիպպը, տանջում էր ինձ։ Այն ժամանակ գոնէ ինձ այնպէս երևեցաւ, որ իշխանուհին ոչինչ չէ կասկածում։ Կողքի սենեակից դուրս եկաւ Զինաիդան սև շորով, գունատ դէմքով, թափթփած մազերով. նա լուռ ու մունջ բռնեց ձեռիցս և տարաւ իրեն հետ։

— Ես լսեցի ձեր ձայնը,—սկսեց օրիորդը,—և իսկոյն դուրս եկայ։ Եւ դուք այդպիսի հեշտութեամբ կամենում էիք մեզ թողնե՞լ, չար տղայ։

— Ես եկել եմ ձեզ մնաք բարև ասելու, օրիորդ,— պատասխանեցի ես,— գուցե յաւիտեան։ Դուք, երևի, լսել էք, որ մենք գնում ենք։

Զինաիդան աչքերը յառեց վերաս։

— Այո՛, լսել եմ։ Շնորհակալ եմ, որ եկաք։ Ես կարծում էի, որ ձեզ այլ ևս չեմ տեսնիլ։ Բալի յիշատակ պահեցէք իմ մասին։ Ես երբեմն չալչալում էի ձեզ. ես այնպէս վատ չեմ, ինչպէս դուք երևակայում էք։

Նա շուռ եկաւ և պատուհանին յենուեցաւ։

— Ճշմարիտն եմ ասում, այնպէս վատ չեմ։ Ես գիտեմ, դուք վատ կարծիք ունիք իմ մասին։

— Ե՞ս։

— Այո՛ դուք... դուք։

— Ե՞ս,— կրկնեցի տխրութեամբ, և սիրտս առաջուայ պէս դողդողում էր նորա անասելի և յաղթահարող ազդեցութիւնից։— Ե՞ս։ Հաւատացէք, Զինաիդա Ալէքսանդրովնա, ինչ որ էլ անէիք ինձ, որքան էլ չալչալէիք, ես կրկին ձեզ կըսիրեմ, կրկին կըպաշտեմ մինչև կեանքիս վերջը։

Նա արագ դարձաւ իմ կողմը, ձեռքերը լայն պարզեց, գրկեց գլուխս և ջերմ ու ամուր համբուրեց ինձ։ Աստուած գիտէ, թէ այս վերջին ու թանկագին համբոյրը ում էր փնտռում, բայց ես ագահութեամբ վայելեցի նորա քաղցրութիւնը։ Ես լաւ գիտէի, որ այդ համբոյրը այլ ևս չի կրկնուիլ։ Մնաք բարեաւ, մնաք բարեաւ, կրկնում էի ես....

Նա թողեց ինձ և դուրս եկաւ։ Ես էլ հեռացայ։ Դժուարանում եմ մեկնել այն զգացմունքը, որով ես հեռացայ այն տեղից։ Ես չէի կամենալ, որ նա կրկնուի. բայց ես ինձ անբաղդ կըհամարէի, եթէ երբէք փորձած չլինէի այդ զգացմունքը։

Եկանք քաղաք։ Անցեալը ես շուտ չմոռացայ, շուտ չսկսայ պարապել։ Իմ վէրքը շատ դանդաղ կերպով էր լաւանում. բայց իսկապէս հօրս վերաբերութեամբ ոչ մի

վատ զգացմունք չունէի։ Ընդ հակառակը. իմ աչքում, կարծես, նա աւելի մեծացաւ.... Թող հոգեբանները մեկնեն այս հակասութիւնը, ինչպէս կամենում են։ Մի անգամ ես անցնում էի ձեմելիքով, պատահեցայ Լուշինին և սաստիկ ուրախացայ։ Ես նորան սիրում էի ճշմարտասէր ու անկեղծ բնաւորութեան համար, բացի դրանից նա թանկագին մարդ էր այն յիշողութեանց համար, որ նա զարթեցնում էր իմ մէջ։ Ես մօտեցայ նորան։

— Ա՜հ,—ասաց նա յօնքերը կիտելով։—Դուք էք, երիտասարդ պարոն։ Ապա ցոյց տուէք ձեզ։ Դուք դեռ ևս դեղնած էք, բայց էլի ձեր աչքում չէ երևում առաջուայ ախտը։ Այժմ մարդու նման էք ոչ ձեռի շան։ Այդ լաւ է։ Ի՞նչ է, բան անո՞ւմ էք։

Ես յոգւոց հանեցի։ Ստել ես չէի կամենում. իսկ ճիշդն էլ ասել ամաչում էի։

— Դէ՜հ, ոչի՜նչ,—շարունակեց նա,—մի՛ վհատիք։ Ամենադլխաւորը այն է, որ մարդ կանոնաւոր ապրի և յափշտակութեանց անձնատուր չլինի։ Թէ չէ՝ ի՞նչ օգուտ։ Ալիքը ուր էլ որ տանէ—կրկին վատ է. լաւ է մարդ քարի վերայ կանգնի, միայն իւր ոտների վերայ։ Ես ահա հաղում եմ... իսկ Բէովզօրովը—լսո՞ւ էք։

— Ի՞նչ է եղել, չեմ լսել.

— Անհետ կորել է. ասում են, թէ Կովկաս է գնացել։ Թող ձեզ խրատ լինի, երիտասարդ պարոն։ Եւ բոլորը նորանից է, որ իւր ժամանակին մարդ չէ կարողանում հրաժարուել, ազատուել թակարդից։ Դուք, կարծեմ, լաւ էք ազատուել։ Զգոյշ կացէք, որ նորից չընկնէք։ Մնաք բարև։

— Ձեմ ընկնիլ, մտածում էի ես.... այլ ևս օրիորդին չեմ տեսնիլ. բայց ինձ վիճակուած էր մի անգամ էլ տեսնել նորան։

XXI.

Հայրս ամէն օր գնում էր ձիով մեն գալու. նա մի լաւ անգլիական ձի ունէր, երկար ու բարակ վզով, երկար ոտներով, որ յոգնել չգիտէր, շատ էլ շար էր: Նորա անունը Էլէքտրիկ էր: Բացի հօրից ոչ ոք չէր կարողանում նորա վերայ նստել: Մի անգամ նա լաւ տրամադրութեան մէջ մնացաւ ինձ, որ վաղուց էր, ես չէի տեսել. արդարև նա պատրաստվում էր գնալու և կոշիկներին կպցրել էր խթանները: Ես խնդրեցի, որ ինձ էլ տանի հետ:

— Աւելի լաւ է, ասի, աթրմա խաղանք, — պատասխանեց ինձ Հայրս,—թէ չէ դու քո քոսոտ ձիով ինձ չես հասնիլ:

— Կըհասնեմ. ես էլ կըկպցնեմ խթաններս:

— Դէ՛, լաւ:

Երկուսս գնացինք: Իմ ձին մի փոքրիկ, բրդոտ ու սև ձի էր, ամուր ոտներով և բաւականին աշխոյժ: Իրաւ է, երբեմն երբեմն նա ստիպուած էր լինում փախչել, ոլքան որ կարող էր, երբ Էլէքտրիկը իւր սովորական հանդարտ քայլերովն էր գնում. բայց էլի ես յետ չէի մնում: Հօրս նման ձի նստող ես չէի տեսել. նա այնպէս գեղեցիկ ու ճարպիկութեամբ էր նստում, որ, կարծես, ձին ինքը այդ ցգում էր և ուրախանում: Մենք անցանք բոլոր ղբօսարանները, գնացինք «Դէվիչի պոլէն», թռանք մի քանի ցանկի վերայով (առաջ ես վախենում էի թռչել, բայց Հայրս չէր սիրում վախկոտ մարդկանց—ես էլ թողեցի վախս), երկու անգամ անցանք Մոսկուա գետը և ես կարծում էի, թէ արդէն տուն ենք վերադառնում, նա մանաւանդ Հայրս նկատեց, որ ձիս յոգնել է, բայց նա յանկարծ «Կրիմկի բրօդ» ից ծռեց մի կողմը և ձիու գլուխը բաց թողեց:—Ես հետևեցի նորան: Երբ հասանք մի տեղ,

ուր շատ հին գերաններ էին դասսած, նա ցած իջաւ, հրամայեց, որ ես էլ իջնեմ և ինձ տալով իւր ձիու սանձը, ասաց, որ գերաններին մօտ սպասեմ իրեն. իսկ ինքը ծռեց դէպի մի փոքրիկ փողոց և անհետացաւ: Ես յետ ու առաջ էի գնում, ձիանը ձեռքիցս քաշելով և բարկանալով էլէքտրիկի վերայ, որ անդադար գլուխը թափ էր տալիս, փռնչում էր և խրխնջում. իսկ երբ կանգ էի առնում, սմբակներով նա փորում էր գետինը կամ կծում իմ ձիու վիզը, մի խօսքով, իրեն պահում էր ինչպէս երես առած pur sang: [1]) Հայրս չէր վերադառնում: Գետից անախորժ խոնաւութիւն էր փչում: Բարակ անձրև եկաւ և մանր ու մութ կէտերով ծածկեց գորշ գերանները, որոնց մօտ ես թափառում էի: Սաստիկ տխուր էի, բայց հայրս դարձեալ չէր վերադառնում: Մի չուխոնցի պահապան, նոյնպէս գորշ, ահագին՝ կճուճաձև հին գլխարկը գլխին, մօտեցաւ ինձ և իւր թաւամած ու կնճռոտած դէմքն ինձ դարձնելով՝ ասաց.

— Ի՞նչ էք անում այստեղ, պարոն, այս ձիան հետ: Լաւ է տուէք, ես պահեմ:

Ես նորան չպատասխանեցի, նա ծխախոտ խնդրեց ինձանից: Որպէս զի դորանից ազատուեմ (մանաւանդ որ համբերութիւնս էլ հատել էր), ես մի քանի քայլ արի դէպի հօրս գնացած փողոցը. յետոյ գնացի-անցայ մինչև փողոցի միւս ծայրը, թեքեցի դէպի միւս փողոցը և կանգնեցի: Այդ փողոցում, մի քառասուն քայլ ինձանից հեռու, մի փայտաշէն տան բաց պատուհանի առաջ կանգնած էր հայրս՝ մէջքը ինձ արած. կրծքով նա դէմ էր տուել պատուհանին. իսկ ներսը՝ կիսով չափ վարագուրով ծածկուած՝ նստել էր սև շորով մի կին և խօսում էր հօրս հետ. այդ կինը Զինաիդան էր:

---

[1]) Արաբուր արիւն (լաւ տեսակի ձի):

Սառած մնացի։ Մի այդպիսի բան, խոստովանում եմ, ես երբէք չէի սպասում։ Իսկոյն կամենում էի փախչել։ «Հայրս կարող է յետ նայել,—մտածեցի ես,—և իմ բանը բուրդ է»…. բայց մի տարօրինակ զգացմունք, հետաքրքրութիւնից, կասկածից, մինչև անգամ վախից աւելի զօրեղ մի զգացմունք ինձ կանգնեցրեց։ Ես սկսայ նայել դէպի այն կողմը և աշխատում էի մի բան լսել։ Հայրս, կարծեմ, անգադար մի և նոյն բանն էր պնդում։ Զինաիդան չէր համաձայնում։ Կարծես, թէ հէնց հիմա եմ տեսնում, այնպէս եմ յիշում նորա դէմքը — տխուր, լուրջ, գեղեցիկ, անձնուիրութեան, վշտի, սիրոյ և մի տեսակ յուսահատութեան — ես ուրիշ խօսք չեմ կարողանում գտնել — անմեկնելի կնիքը վերան։ Զինաիդան միավանկ բառեր էր արտասանում, աչքերը չէր բարձրացնում և միայն ժպտում էր — խոնարհ ու յամառ։ Միայն այդ ժպիտով ես ճանաչեցի իմ նախկին Զինաիդային։ Հայրս ուսերը վեր քաշեց և ուղղեց գլխարկը — որ նորա անհամբերութեան նշանն էր…. Յետոյ ականջիս հասան այս խօսքերը. *Vous devez vous séparer de cette….* [1]). Զինաիդան ուղղուեցաւ և ձեռը մեկնեց…. յանկարծ աչքիս առաջ կատարուեցաւ մի անհաւատալի բան. հայրս բարձրացրեց ճիպոտը, որով թափ էր տալիս իւր շորերի փոշին—և ամուր զարկեց Զինաիդայի մինչև արմունկը բաց ձեռին։ Ես հազիւ ինձ զսպեցի, որ չդոռամ. իսկ Զինաիդան վեր թռաւ, լուռ ու մունջ հօրս վերայ նայեց և ձեռը կամաց պռօշներին տանելով, համբուրեց կարմրած տեղը։ Հայրս դէն ձգեց ճիպոտը, արագ բարձրացաւ դրան աստիճաններով և մտաւ նոցա տունը»…. Զինաիդան շուռ եկաւ—ձեռները մեկնած, գլուխը յետ ձգած նոյնպէս հեռացաւ պատուհանից։

---

1) Դուք պիտի բաժանուէք այս….

Վախից սառած և տարակուսանքի սարսափը սրտումն՝ ես շուռ եկայ, վազեվազ անցայ փողոցը և քիչ էր մնացել, Էլէքտրիկին ձեռիցս բաց թողնէի և կրկին գետեզրը եկայ: Ոչինչ չէր գալիս գլուխս: Ես գիտէի, որ իմ սառնարիւն ու լուրջ հայրս երբեմն երբեմն կատաղում էր— բայց կրկին ես չէի կարողանում հասկանալ տեսածս.... Այդ իսկ ժամանակին ես զգացի, որ ինչքան էլ ապրեմ, կրկին յաւիտեան չեմ կարող մոռանալ Զինաիդայի այս շարժուածքը, հայեացքը, ժպիտը, որ նորա պատկերը, այս նոր, անսպասելի կերպով յայտնուած պատկերը՝ յաւիտեան տպաւորուեցաւ յիշողութեանս մէջ: Ես անմիտ կերպով նայում էի գետի վերայ և չէի նկատում, որ արտասուք եմ թափում: Նորան ծեծում են, մտածում էի ես.... ծեծում են.... ծեծում են.....

— Դէ, ձիս ինձ տո՛ւր,—լսուեցաւ հօրս ձայնը:

— Մէքենայաբար մեկնեցի նորան ձիու սանձը: Նա նստաւ իւր Էլէքտրիկի վերայ.... ցրտից սառած ձին յետևի ոտների վերայ կանգնեց և մի անգամից սաժէն ու կէս առաջ թռաւ.... բայց հայրս շուտով սանձահարեց նորան. խթաններով զարկեց կողքին նորա և վզին բռունցքով խփեց.... Է՜հ, ճիպոտս չկայ, փնթփնթաց նա:

Յիշեցի ճիպոտի մի փոքր առաջ հարուածը և գողացի:

— Ի՞նչ արիր ճիպոտդ,—հարցրի հօրս մի քիչ սպասելուց յետոյ:

Հայրս ինձ չպատասխանեց և ձին առաջ քշեց: Ես հասայ նորան: Ես անպատճառ ուզում էի տեսնել նորա երեսը:

— Ձանձրացա՞ր առանց ինձ,—ասաց հայրս:

— Մի փոքր ձանձրացայ: Ինչտե՞ղ ես վէր ձգել ճիպոտդ,—կրկին հարցրի ես:

Հայրս արագ վերաս նայեց:—Ես վէր չեմ ձգել,—պատասխանեց նա,—ես ինքս նորան դէն ձգեցի:—Նա մտած-

մունքի մէջ ընկաւ և գլուխը կախ արեց.... և այդ ժամանակ ես առաջին և համարեա թէ վերջին անգամ նշմարեցի, թէ որպիսի քնքշութիւն, ցաւակցութիւն կարող էր արտայայտել նորա խստահայեաց դէմքը:

Նա կրկին ձին քշեց, բայց այս անգամ ես չկարողացայ հասնել նորան. քառորդ ժամ նորանից ուշ տուն եկայ:

«Ա՛յ, սա սէր է», նորից ասում էի ինքս ինձ՝ գիշերը նստած գրասեղանիս առաջ, որի վերայ արդէն սկսել էին երևիլ տետրակներ ու գրքեր.... «այս կի՛րք է».... Ինչպէ՛ս մարդ չկատաղի, թւում է մեզ, ինչպէ՛ս մարդ տանէ, ինչ ձեռից էլ ուզում է լինի, թէև ամենասիրելի ձեռից ստացած հարուածին: Երևի, կարելի է, երբ մարդ սիրում է.... Իսկ ես.... ես երևակայում էի».....

Վերջին ամիսը ես շատ ծերացայ — և իմ սէրը իւր բոլոր յուզմունքներով ու տանջանքներով այնքան ընչին, երեխայական ու ողորմելի էր երևում այն ուրիշ, անյայտ բանի առաջ, որ ես հազիւ կարողանում էի գուշակել, որ և ինձ վախեցնում էր, ինչպէս մի անծանօթ, գեղեցիկ, բայց ահարկու դէմք, որ մարդ 'ի զուր աշխատում է նշմարել մթութեան մէջ».....

Տարօրինակ ու սարսափելի երազ տեսայ այդ գիշեր: Ես տեսայ, որ մտնում եմ մի ցած, մութ սենեակ.... Հայրս կանգնած է ճիպոտը ձեռին և ոտները դեռնին է տալիս. անկիւնում կուչ է եկել Զինաիդան և ոչ թէ ձեռի, այլ ճակատի վերայ մի մեծ կարմիր դիծ կայ.... իսկ նոցա յետևից երևում է Բէլովզորովը բոլորովին արիւնաթաթախ, բաց է անում գունատ շրթունքը և բարկութեամբ սպառնում է հօրս:

Երկու ամսից յետոյ ես մնայ համալսարան, իսկ կէս տարուց յետոյ հայրս մեռաւ (կաթուածից) Պետերբուրգում, ուր նոր էինք տեղափոխուել ընտանիքով: Մահից մի քանի օր առաջ նա ստանում է Մոսկուայից մի նա-

մակ, որ շատ վրդովում է նորան..... Նա գնացել էր մի բան խնդրելու մօրից։ և, ասում են, մինչև անգամ լաց է եղել, նա, իմ հայրը։ Նոյն օրը առաւօտեան, երբ նա կաթուած է ստանում, սկսել է գրել ինձ մի նամակ փրանսերէն. «Որդեակս,—գրում էր նա ինձ,—վախեցի՛ր կանացի սիրուց, վախեցի՛ր այդ երջանկութիւնից, այդ թոյնից»..... Նորա մահից յետոյ մայրս մի նշանաւոր գումար ուղարկեց Մոսկուա։

XXII.

Անցաւ չորս տարի։ Ես նոր էի աւարտել համալսարանական ուսումս և լաւ չէի իմանում, թէ ի՞նչ անեմ, որ դուռը ծեծեմ. առ ժամանակ անգործ մնն էի դալիս։ Մի գեղեցիկ երեկոյ թատրոնում պատահեցայ Մայդանովին. բայց նորանում ես փոփոխութիւն չէի գտնում։ Նա դարձեալ անտեղն ոգևորվում էր, նոյնպէս յանկարծ էլ վհատում էր։

— Գիտէ՞ք,—ասաց նա ինձ,—ի միջի այլոց. տիկին Գոլսկաեան այստեղ է։

— Ո՞վ է այդ տիկինը։

— Մի՞թէ դուք մոռացել էք. երբեմն իշխանուհի Զասէկինան, որի վերայ մենք ամէնքս սիրահարուած էինք, դուք էլ նոյնպէս։ Յիշում էք, ամարանոցում, Նեսկուչնիի մօտ։

— Նա մարդո՞ւ է գնացել։

— Այո՛։

— Եւ նա այստե՞ղ է, թատրոնո՞ւմ։

— Ո՛չ, Պետերբուրգումն է. մի քանի օր է, որ եկել է. նա պատրաստվում է արտասահման գնալու։

— Ի՞նչ մարդ է նորա ամուսինը,—հարցրի ես։

— Բաւականին գեղեցիկ մարդ է, կարողութեան տէր։

Ինձ հետ միասին նա ծառայում էր Մոսկուայում։ Յիշում էք—այն անցքից յետոյ.... այս բոլորը ձեզ լաւ յայտնի պիտի լինի.... (Մայդանովը խորհրդաւոր կերպով ժպտեց) նա հեշտութեամբ չէր կարող մարդու դնալ. հետևանք էլ ճնաց.... բայց նորա խելքը ունեցողը ամէն բան կարող է անել։ Գնացէք նորա մօտ. նա շատ կ'ուրախանայ։ Նա աւելի ևս գեղեցկացել է։

Մայդանով տուեց ինձ Զինաիդայի հասցէն։ Նա իջել էր Դեմութի հիւրանոցում։ Հին յիշողութիւններս նորից զարթեցան իմ մէջ... խօսք տուի հէնց միւս օրը այցելել իմ Նախկին «աէրը»։ Բայց չեմ իմանում, ինչ արգելք դուրս ընկաւ. անցաւ մի երկու շաբաթ, և երբ վերջապէս ես գնացի Դեմութի հիւրանոցը և հարցրի տիկին Դօլկայեա—ինձ ասացին, թէ չորս օր առաջ համարեա յանկարծակի մեռաւ՝ աղատուելուս։

Կարծես, մի բան զարկեց սրտիս։ Այն միտքը, որ ես կարող էի նորան տեսնել և չտեսայ և երբէք չեմ տեսնիլ—այս դառն միտքը, իբրև սարսափելի յանդիմանութիւն, տանջում էր ինձ։ Մեռաւ,—կրկնեցի ես, բթամիտ կերպով ծառայի վերայ նայելով, կամայ դուրս եկայ փողոց և չգիտեմ, ուր գնացի։ Բոլոր անցեալս մի անգամից կենդանացաւ և կանգնեց առաջիս։ Եւ ահա ինչով վերջացաւ, ահա ուր էր դիմում՝ շտապելով և յուզուելով այս երիտասարդ, եռուն ու փայլուն կեանքը։ Ես այս մտածում էի, ես երևակայում էի այն սիրելի դէմքը, այն աչքերը, այն գանգուրները—երևակայում էի մի նեղ արկղի, խոնաւ, ստորերկրեայ խաւարի մէջ, ոչ հեռու ինձանից, որ դեռ կենդանի եմ և մի քանի քայլ, գուցէ, հեռու հօրից.... Այս բոլորը ես մտածում էի, լսում էի երևակայութիւնս, բայց կրկին

«Լսում էի մահուան գոյժը ես անտարբեր շրթունքից
«Եւ սառնութեամբ ականջ էի դնում նորան»—

լսվում էր հոգուս մէջ։ Ո՜հ երիտասարդութի՛ւն, երի-տասարդութի՛ւն. դու ոչ մի հոգս չունիս, դու, կարծես, տիեզերքիս բոլոր գանձերի տէրն ես, մինչև անգամ թա-խիծը քեզ զուարճացնում է, մինչև անգամ տխրութիւնը վայելում է քո դէմքին, դու ինքնահաւան ես և բաւա-կանին յանդուգն, դու ասում ես, նայեցէ՛ք — միայն ես եմ ապրում, բայց օրերդ անհիտ ու անհաշիւ կորչում են և քեզանում ամէն բան ոչնչանում է, ինչպէս մոմը արևի տակ, ինչպէս ձիւնը.... Եւ գուցէ քո գեղեցկութեան բոլոր գաղտնիքը նորանում չէ, որ ամէն բան կարող ես անել — այլ կարող ես մտածել, որ ամէն բան կ'անես — և մանաւանդ նորանում է, որ դու քամուն ես տալիս այն ուժերդ, որ ուրիշ բանի վերայ էլ չէիր կարող գործ դնել, — նորանում, որ մեզանից իւրաքանչիւրը առանց կատակի իրեն վատնող է համարում, առանց կատակի կարծում է, որ ինքը ունի իրաւունք ասելու. Ո՜հ, ես ինչեր կ'անէի, եթէ ի զուր չկորցնէի ժամանակս։

Ահա և ես... ի՞նչ յոյսեր ունէի, ինչե՞ր էի սպասում, ի՞նչ հարուստ ապագայ էի գուշակում, երբ ես մի հա-ռաչանքով, մի տխրամած զգացողութեամբ նոր ճանապարհ էի դրել առաջին սիրոյս մի լոպէ զարթնած պատկերը։

Բայց ի՞նչը կատարուեցաւ այս բոլորից, որի վերայ ես յոյս էի դրել։ Եւ այժմ, երբ արդէն երեկոյեան ստուեր-ները իջնում են կեանքիս վերայ, ի՞նչ է մնացել ինձ համար աւելի թարմ, աւելի սիրելի բան, քան այն արագ ան-ցած, գարնան առաւօտեան ու երեկոյեան վոթոլիկի յի-շատակը։

Սակայն անտեղի եմ զբաղարտում ինձ։ Եւ այն ժամա-նակ, այն թեթեւամիտ երիտասարդ ժամանակ, ես խուլ չմնացի դէպի ինձ կանչող տխուր ձայնը, դէպի այն հան-դիսաւոր ձայնը, որ ինձ էր հասնում գերեզմանից։ Յիշում եմ, մի քանի օր անցած այդ օրուանից, երբ ես իմացայ

Զինաիդայի մահը, ես ինքս իմ անդիմադրելի ձգտմամբ, ներկայ եղայ մի աղքատ պառաւ կնոջ մահուան, որ ապրում էր մի և նոյն տանը, ինչպես և մենք էինք։ Ցնցոտիներով ծածկուած, չոր տախտակների վերայ, մի պարկ գլխի տակին, նա տանջուելով բաժանվում էր կեանքից։ Նորա բոլոր կեանքը անցել էր աստուծոյ կարիքի հետ դառնութեամբ մաքառելով. նա չէր տեսել ուրախութիւն, երջանկութեան քաղցր մեղրը նա չէր ճաշակել—էլ ինչո՞ւ, ըստ երևութին, նա պիտի չուրախանար, որ մեռնում է, ինչո՞ւ պիտի չցանկանար մահուան ազատութիւնը, մահուան հանգիստը։ Բայց մինչ նորա զառամած մարմինը դեռ ընդդիմանում էր մահուան, մինչ դեռ տանջուելով բաբախում էր նորա կուրծքը սառեցնող ձեռի բեռան տակ, քանի որ մնում էր նորա մէջ վերջին ոյժը—պառաւը անդադար խաչակնքում էր երեսը և շշնջում.—Տէր, թող իմ մեղքերը—և միայն դիտակցութեան վերջին կայծի հետ անհետացաւ նորա աչքերում մահուան սարսափի ու երկիւղի արտայայտութիւնը։ Եւ ես յիշում եմ, որ այստեղ, այս խեղճ պառաւի մահճի առաջ սարսափ եկաւ վերաս Զինաիդայի համար և ես կամեցայ աղօթել նորա համար, հօրս և ինձ համար։

*
* *

Արազն էկաւ լափին տալով,
Ծէռ քարերին, ափին տալով.
Ո՞ւրտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխըս տափին տալով։

Ա՜յ իմ Արազ, ջուրըդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսաք.
Ես չըհասայ իմ մուրազին,—
Արազ, եարաբ կարօտս առաք։

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին.
Աստօծ սիրես, էրուած սրտիս
Զուղաբ բերես էկող տարին։

Քշերն անքուն գիր կըգրեմ—
Արտասունքս գետ կըշինեմ.
Արազ, ծէղը ջըրդ չառած՝
Իմ սև դարդը քեզ կըբերեմ։

Կ՚ասես՝ շողքը քարին ընկաւ,
Կըրակըն իմ սրտին ընկաւ.
Կամար ունքից, թուխ աչքիցը
Ցաւն իմ ջիւան ջանին ընկաւ։

Արազն էկաւ լափին տալով,
Ծէռ քարերին, ափին տալով.
Ո՞ւրտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխըս տափին տալով....

1887. 21 յուլիսի.

Մ—ԻՆ.

—

Կ'ուզէի լինել կարկաչուն վտակ,
Վազիտ ալիքը դրախտի բուրմունքով,
Եւ առաւօտեանն, ինչպէս ցօղ յստակ,
Երեսդ առոգել գոհար շիթերով:

Կ'ուզէի դառնալ սօսի հովասուն,
Համարձակ փռուած կանաչ սաղարթով,
Եւ միջօրէին այդ դէմքիդ սիրուն
Հովանի լինել հեզիկ շշշիւնով:

Կ'ուզէի լինել ծաղկոցում բացուած
Քաղցրաբոյր մի վարդ, երկնից ալիժանի,
Եւ սիրոյ ժամին, խանդիցը ալբած,
Զարդարանք լինել կուրծքիդ դեղանի:

Եւ շող դառնալով դարնան արևի
Կ'ուզէի պայծառ աչերումդ վառուել,
Կամ ինչպէս քնքուշ ոսկէվառ գօտի
Զքնաղ իրանիդ փաթաթուել, փարել...

Լուսավառ աստղիկ կ'ուզէի դառնալ,
Քաղցր մանկան պէս ծիծաղն երեսին,
Ինչպէս ադամանդ շողշողել, ցոլալ,
Ո՛վ իմ թագուհի, քո բաց ճակատին:

Կ'ուզէի լինել լուսին ամոթխած,
Արծաթի փայլով մազերդ շոյել,
Այտերդ գգուել, սիրուց բորբոքուած,
Դողդոջ շրթունքիդ համբոյրներ դրոշմել:

Կ'ուզէի լինել սիրահար սոխակ
Եւ ձեռիդ գերի, վանդակում փակուած,
Ականջիդ հնչել հրաշալի նրւագ,
Մեղմ օրօր ասել քո հոգուն զմայլուած:

Եւ կախարդական տաճարում կանգնած
Կ'ուզէի տեսնել ես քեզ Անահիտ,
Եւ երկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ գեղեցկութեան անմահ տիպարիդ:

1888. 17 յունվարի:

ԵՐԳՉԻ ԱՆԻՓՔԸ.

(Ուլանդից)։

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղեակ—
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչ ովկիան կապուտակ.
Շուրջը փռուած ծաղկապսակ անուշաբոյր պարտէզներ,
Թարմ ղովաշունչ շատրուաններ ցայտում էին վառ շեթեր։

Եւ բազմայաղթ այնտեղ նստող գոռոզ արքան հողաշատ
Բազմած էր իւր գահի վերայ մռայլ դէմքով ու գունատ.
Ամէն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութի՛ւն աչքերում,
Նորա ամէն խօսքը—կորուստ, արիւն էր նա միշտ գրում։

Այս ամրոցը երկու աղնիւ երգիչ գնացին միանգամ,
Մէկն ալեզարդ, մին պատանի ոսկէգանգուր ու փարթամ.
Ցաւիղն ուսին, մի գեղեցիկ նժոյգ հեծած ծերունին,
Նորա կողքին գնում էր առոյգ ծաղկահասակ պատանին։

Ծերուկն ասաց իւր ընկերին. «Պատրաստ եղիր, իմ որդեակ,
Մեր սրտառուչ տաղերն յիշիր, երգիր ազատ, համարձակ.
Երգիր և վիշտ և խնդութիւն մատաղ ձայնով դու հլոր,
Գոռ արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք այսօր։»

Արդէն շքեղ և սիւնազարդ նոքա սրահումն են կանգնած.
Գահի վերայ թագաւորը և թագուհին են բազմած.
Նա սիգապանծ ինչպէս փայլը արիւնավառ հիւսիսի,
Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին լուսալի։

Զարկեց ծերուկն ոգևորուած նուրը լարերին մատներով,
Ձոխ արձագանգ տուին նոքա լիահնչիւն ձայներով.
Եւ գեղգեղեց տաղ երկնարժան չքնաղատես պատանին,
Ինչպէս համերգ ոգիների և խլաձայն ծերունին։

Նոցա երգն է գարուն և սէր, երանաւէտ ոսկէդար,
Ազատութիւն, խօսք ճշմարիտ, արիութեան գործ արդար,
Եւ հեշտութեան ամէն վայելք որ յուզում է սիրտ մարդկան,
Եւ այն ամէնն որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան։

Պալատական ասպետները ծաղու խօսքեր մոռացան
Եւ անվեհեր ալինուորները հզօր երգիչն յաղթուեցան.
Իսկ Թագուհին՝ սիրտը շարժուած, աչքին արցունք բերկրալից,
Ահա հանեց ձգեց երգչին չքնաղ մի վարդ իւր կուրծքից։

«Գայթակղեցիք դուք իմ ազգը, կամիք խլել և իմ կին»,—
Հեղ գոչեց, դողաց մարմնով Թագաւորը մոլեգին.
Ձգեց սուսերն, օգում՝ ցոլաց, մատաղ կուրծքը պատառեց,
Ոսկեհնչիւն երգերի տեղ կուրծքիցն արիւն դուրս ցայտեց։

Ասես մրրիկ իսկոյն ցրուեց այն ունկնդիր ամբոխին.
Իւր վարպետի գրկումն հոգին փչեց դժբաղդ պատանին.
Ծածկեց մարմինն նա Թիկնոցով, նստացրեց երիվար,
Ամուր կապեց և ամրոցից նա հեռացաւ վշտահար։

Եւ դուրս եկաւ կանգնեց բարձր դարպասի դէմ ծերունին
Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամէն տաւիղներից մեծագին.
Ջարկեց նորան կճեայ սեանը, փշուր փշուր խորտակեց,
Դէպի ամրոցն ու պարտէզներ սոսկալի ձայն արձակեց.

«Վա՜յ քեզ, խրոխտ դու ապարանք, Թող ոչ մի ձայն քաղցրութեան,
Լարի հնչիւն, երգ չլսուի քո յարկի տակ յաւիտեան,
Այլ ստրուկների երկչոտ քայլեր և հառաչանք, հեծութիւն,
Մինչ չար ոգին վրէժխնդրութեան քեզ դարձընէ սև աճիւն։

«Վա՜յ ձեզ, և դուք անուշաբոյր դարնանագեղ պարտէզներ,
Ցեսէք ահա մանուկ երգչի դէմքին սառած տանջանքներ.
Թող սորա տեղ դուք Թառամիք, աղբիւրներդ ցամաքեն,
Գալ օրերին Թող քար կտրած և ամայի ձեզ տեսնեն։

«Վա՜յ քեզ, նզովքդ երգիչների, վա՜յ քեզ, անարգ մարդասպան,
Արիւնպսակ փառքի համար մարտդ լինի Թող ունայն.
Թող մոռացուի քո անունը մշտագիշեր խաւարում,
Ինչպէս մահուան վերջին հառաչք, սին ձայն, ցնդի Թող օդում»։

Ծերուկն ասաց, և երկինքը լսեց Նորա պաղատանք.
Պարիսպները փոշի դարձած, կործանուած է ապարանք.
Բարձր մի սիւն դեռ վկայ է անցեալ աւուրց փառաւոր,
Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սգաւոր։

Չկայ բուրմունքն այգիների, շուրջը միայն անապատ,
Չկայ վտակ, սաղարթախիտ չկայ մի ծառ ստուերաշատ,
Եւ չէ յիշում մի տարեգիր կամ երգ անունն արքայի։—
Այսպէս ահա կատարուեցաւ անէծքն ահեղ ծեր երգչի։

1888. 29 յունվարի։

ԿԵԱՆՔ.

Որպէս մի անուրջ դու պիտի անցնես,
Լոկ ունայն տեղը յուզելով արիւն.
Ամէն քաղցրը խղճ դու պիտի տանես,
Անհոգ բերկրութիւն և սէր և աւիւն:

Մանուկ օրերից քո յուսով ապրած,
Մենք քեզ ենք սպասում անձուկ կարօտով.
Բայց միշտ թռչում ես դու թեւեր առած,
Եւ մենք միշտ նոյնն ենք խորտակուած սրտով:

Ընչին վշտերով միշտ քո տառապանք՝
Արժանի էլ չեն երբէք վեհ հոգու,
Վայելքդդ առ ժամ՝ միայն զառանցանք
Կարող լինել տհաս պատանու:

Տ՛ուր մշտականաչ հրաշագեղ գարնան
Վառ, երանաւէտ, անանց երազներ.
Թող մենք անձնատուր մի անհուն զգացման
Անվիշտ քուն լինինք օրեր, տարիներ.

Կամ բաց մեզ մարտի ազատ ասպարէզ,
Անշղթայ ձեռքով չարի հետ կռուենք—
Կամ անմահութեան փառք պսակէ մեզ,
Կամ ինչպէս ՃՃի՝ ոտի տակ կոչնենք...

1888. 30 յունվարի. Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԱՆԿՈՉ ՀԻՒՐԸ.

I.

Օգոստոսի վերջերում Կովկասի մայրաքաղաք լեռնապատ Տփղիսը ծածկուած էր մի թանձր ու խոնաւ մառախուղով, և երկու օրուայ տեղացող փոշենման անձրևն արդէն լճակներ և առուակներ էր ձևացրած զառիվայրերի և քարայատակ փողոցների փոսերին մէջ։

Այնքան խտացած էր օդը, որ միջօրէի թնդանօթին հարուածն անգամ խուլ էր հնչում, և վառօդի սպիտակ ծուխը գոնէ մի վայրկեան սքօղում էր Աղէքսանդրեան այգիի վանդակապատ մուտքը, ուր ուրիշ օրերի նման չէր երևում շրջագայողների յամրագնաց շարժմունքը. հապիւ մի քանի գործազրաղ մարդիկ կամ կանայք կ՚անցնէին շտապ, ցեխի և ջրերի մէջ ոստոստելով։

Այդ ծանր ու խոնաւ մթնոլորտը, որ յանկարծ կը-յաջորդէ անտանելի շոգերին, վատառողջ է ամէն կարգի և կազմուածքի տէր անձանց և բարոյապէս տխուր կերպով կ՚ազդէ հիւանդ ջղոտների վերայ։ Մանաւանդ Կուր գետի մռայլ երևոյթը, որի դեղնած և պղտոր ջուրը՝ սպունգի նման փրփուրի պղպջակներով ծածկուած, վազում է վազում, աջ ու ձախ գետեզերքի վերայ թողնելով իւր մակերևոյթում լողացող մարմինները—փայտի կամ գործարանաց ածուխի փշուրն ու կտորտանք, ցնցոտիք, մամռապատ եղէգներ. այս վերջիններին ջրեղէն բաղեղների նման գալարուելով կրփաթաթուէին ցիցերի, լաստերի և Միքայէլեան կամրջի ստորոտին թմբոցը, ուր ջուրը՝ քմահաճ և խելապտոյտ շրջաններ անելով, փրփրալով, ֆշշալով, կ՚եռայ ու կրդաւնայ և կրշարունակէ իւր ճանապարհը։

Կամրջի երկու կողման հեռաձիգ տեսարանները ծածկուած են գոլորշիով, և չեն երևիր այն անյողդողդ ժայռերի ու բլրակաց վերայ հիմնարկուած պատշգամաւոր տները, ցան ու ցիր եղերքում սփռուած անակ, խրճիթ և գործարան: Այլ միւս կողմից տեղ-տեղ կ'երևին ծառեր, ծխող ծխնելոյզք, որոց ետևից՝ երկնից պարզութեան ժամանակ, մի կապարագոյն մշուշով պատած կրնշմարուին սրածայր լերանց գագաթները մերթ վարդակարմիր և մանուշակագոյն, երբեմն էլ սպիտակ, արեգական ընթացքին համեմատ:

Կամրջի տակից անցնող ջրին նման մարդկային մի հոսանք էլ նոյա վերայից միշտ անց ու դարձ կ'անէ, որի կարծես բարեկարգութիւնը անվրդով պահպանելու համար կրհրամայէ հսկել Վարանցովի խստահայեաց և շքեղադիր պղնձեայ պատկերը՝ իւր լայնանիստ պատուանդանին վերայ արթուն և կանգուն:

Գիշերն աւելի քստմնելի է այդ դեղին երևոյթը, այդ բազմամարդ, դողտրիկ և ծաղկեալ քաղաքի կեդրոնում վաղող ու փրփրացող սարսափելի գաղտնեաց նեղ և ընթացիկ ովկիանոսը, որի տափարակ և պռոտուն ալիքները աղօտ կերպիւ կ'անդրադարձնեն եզերքի վառուած լոյսերը, որ իւր լռութեան մէջ անգամ ունի մի խորհրդաւոր մրմունջ և իւր յատակում թաղուած յոյսերն ու գաղտնիքները կրպատկերացնէ երբեմն մահասարսուռ ժպիտով, իւր պսպղուն ալիքների մակերևոյթում:

Այլ երբեմն արշալուսոյ խաղաղ և փայփայող լուսովը կրհանդարտի, կրկանոնաւորէ իւր ընթացքը, գրաւիչ մի պատկեր կրստանայ ու կրհանէ իւր ծոցիցը կապուտակ դոլորշիներ, որք մերթ կրպատեն եզերքը մառախուղի քողով՝ յետոյ ծանր առ ծանր արեգակին հետ բարձրանալով՝ ամպ կրկազմեն երկնքում:

Սակայն երբ ամառուայ շոգերն կրսկսին, և քաղաքը կը-

ծածկուի ծանրակշիռ մթնոլորտով, երբ գերդաստանք շրջից պատսպարան կ'որոնեն շրջակայ դիւղերում, այն ժամանակ քաղաքում մնացող գործատերց համար դեռեղերքի մօտ շատ անգամ կարելի է շունչ քաշել, լողանալ։ Արդէն շատերն իրենց գործերի բերմամբ էլ այնտեղ են հաստատած բնակարան, գործատուն և դրասենեակ, որոց մէջ նշանաւորներից մինն է Գողթունու ալիւրի գործարանը, որի կից է նաև դրասենեակը մի յարկի վերայ՝ անմիջապէս ջուրին մօտ, ուր ազան երբեմն գիշերները կ'անցնէ իւր գործի շահերից ստիպեալ, ուր կըպահէ մի երկաթէ արկղ մէջ իւր փողն ու թղթերը և թանկագին առարկայք.... Արկղին աջ կողմն է դրասեղանը կանաչ ջուխայով և զանազան գրելու պիտանի առարկաներով ծածկուած. մեծ հաշուագրքեր, հաշուաշար, փոքր քսակների մէջ ցորենի օրինակներ։ Պատին մէջ հաստատուած մի ճանկից կախվում են մեծ ու փոքր թղթերի և հաշիւների թերթեր, նոցա մօտ մի օրացոյց դարձեալ պատից կախ, այլ աջ կողմի պատում կայ մի կրակարան նոր ձևով ծեփած. նորա կողքին մի կլոր սեղան ու վերան թէյի մի բաժակ իւր ալծաթէ բաժակալովը, որով ամէն երբեմն թէյ կըխմէ՝ կրակարանին մէջ փայտ նետելով՝ օդին և դեռի խոնաւ զովութիւնը մեղմելու համար, որից շատ էլ զգուշանալու տեղի չունէր, նայելով իւր քաջառողջ կազմուածքին, որով կարող էր մրցել տակաւին իւր 55 տարեկան հասակում շատ երիտասարդների հետ։ Սակայն իւր առատ մազերն ու բեխերը բաւականին ապիտակ էին արդէն. այլ աչքերը ուրտասողոր կերպիւ կըփայլէին այն թխագոյն պատկերին վերայ, նեղ և բարձր ճակատով ու գեղեցկաձև քթով, իսկ կարմրաշուրթ բերանը մեծ էր, և երկու անկիւններում լայն կնճիռները կըկոչէին բեխերի մազերին մէջ։ Դէմքի վարի մասը վերևից աւելի ընդարձակ էր, այտերը փոքր ինչ ծալուած ականջների մօտ, նոյն-

պէս մի խորին ծալք երկու յօնքերի մէջտեղ, որ սպառնալից նիզակի նման կըցցուէր բարկացած ատեն։ Այսու հանդերձ այս ամբողջութիւնը իսկապէս մի տգեղ երևոյթ չունէր, միայն թէ լաւ ազդեցութիւն չէր գործում ընդհանրապէս առաջի նորա հանդիպող անձին։ Բայց նա գիտէր գրաւել բոլորին փաղաքուշ ժպտով և ձեւերով, ունէր և գրաւիչ և համոզող մի ձայն, որ ուղած ատեն կարող էր շատ կատաղի և խրոխտ կերպիւ հնչեցնել։ Բայց այդ մեղմյշ ձեւերը կարող էին և կեղծիք լինել. սակայն միթէ կարելի՞ է դատել մարդկանց նոցա արտաքին երևոյթի վերայ հիմնուելով, չէ՞ որ միայն արտաքինը երբեմն խաբէական կարող է լինել. միայն կարելի է մարդս իւր գործերից դատել, և շատ անգամ մեր վերայ գործած տպաւորութեամբ, որով քիչ կըպատահի, որ խաբուինք, և այդ բանը կարող է զգալ դիտող և զգայուն մարդը, և կամ ըմբռնել Լաֆատէրի և Գալի դրութիւնը ուսումնասիրած անձինք, որոնք դարձեալ իրրև դիմագէտք կամ գանգաբանք պատահի որ սխալուին։ Ահա այդ պատճառաւ դիմագիտութիւնը տակաւին հաստատուն գիտութեանց կարգը անցած չէ։ Անհրաժե՞շտ ուսումն, որ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէր մարդկութեան, զի մեծամեծ չարեաց առաջն պիտի կարողանայինք առնել, եթէ հնարաւոր լինէր մեզ զանազանել կեղծ մարդասէրը աղնիւ մարդասպանից։ Առ այժմ դատում են մարդուն իւր հրապարակական գործունէութիւնից, բարձրահնչիւն անունից և նորա հասարակութեան տեսակէտից, մանաւանդ եթէ նորա այդ առաւելութիւններով մեզ օգուտ և շահ ծագի, եթէ նորա դրութեան շնորհիւ կարողանանք մենք ևս բարեւոքել մերը. Ինչպէսը ո՞ւմ հոգն է։

Ահա ձեզ մի անձնաւորութիւն որ բոլորից սիրուած է և յարգուած, չնայելով որ խօսել են նորա համար էլ չար լեզուներ ո՛չ նպաստաւոր. բայց ո՞վ կըհաւատայ, թէ նա

Պետերբուրգում ունեցել է մի գայթակղեցուցիչ դիպուած. զրպարտութիւններ, որովհետև ահա վեց տարի կը լինի որ Գողթունի հաստատած է Տփղիսում իւր գործերն և բնակութիւնը, և այս վեց տարուայ ընթացքում բարեգործութիւնից ի զատ ոչ ոք ոչինչ չէ տեսել նորանից։ Ամենքին իրեն գրաւած՝ այնքան բարձր է ընդհանուրի կարծիքը նորա մասին, որ քաղաքում փոխանակ անուանելու իւր Գողթունի ազգանունով՝ կոչում են «բարերար տէր» կամ «աղա»։

Ցնայելով որ մի մեծ հարստութիւն էլ չունի և իւր ալիւրի գործարանից դէն մի շահ չէ կարողացել ստանալ, այսու հանդերձ ձոխ կ'ապրի։ Ուր որ լինի, առանձին ճարտարութեամբ կը խօսի առաքինական յատկութեանց վերայ, անիրաւութեանց թշնամի է կամ լինել կը ձևացնէ, տարօրինակ գաղափարներ կը յայտնէ։ Օրինակի համար, երբ հարցնէին թէ ինչու հրաժարուեցաւ փաստաբանութիւնից, ինչու առանց աւարտելու իրաւաբանի ուսումը թողուց համալսարանը և վաճառականութեան գործերով պարապեց,—նա կը պատասխանէր, թէ ատում է այն արուեստը, ուր հարկադրուած է փող վաստակելու համար մարդասպանին, դողին և առաքինուոյն հաւասար եռանդեամբ պաշտպանել. երբէք չկարողանալ ասել իւր սեպհական կարծիքը, սեր սպիտակ հանդիսացնել և սպիտակը սև, իրեն համար ապրելու նպատակաւ այլոց համար խորհիլ և խօսել՝ մարդկութիւնից հրաժարուած, մի խօսուն մեքենայ դառնալ, որին կարելի է լարել որուելիք դումարին համեմատ ևայլն։ Սորա նման գաղափարներ կ'այտայտէր, որպէս զի ուրիշներից Ջոկուի և բարձր կարծիք ունենան իւր վերայ։

Ամիթ բաց չէր թողնում ձեռքից իւր առաքինասէր կողմը ևս ցոյց տալու, օրինակ. փաստաբաններ վարձելով, պաշտպանեց իւր երկու գործաւորաց դատը և նոցա փրկեց

դատապարտութիւնից։ Երեք աղքատ աղջիկներ օժտեց և հարստացուց՝ նոցա միոյն ինքահայր դառնալով, որոց երկուսը աղախնոյ պաշտօն վարած էին իւր տան մէջ։ Այսպիսի գործեր. աւելացրէք սորա վերայ մի քանի ազգասիրական ճառեր, որ արտասանեց տարբեր առիթներով, բարեգործական ընկերութեան գանձանակին նիւթապէս տուած օգուտները—այս բոլորը այնքան բարձրացրին իւր անունը ժողովրդեան մէջ, որ ուսեալ և տգէտ, գործաւոր և ռամիկ, բարերարի մակդիրը դրոշմեցին նորա ճակատին. իսկ աղքատներն իրենց պահապան հրեշտակն էին անուանում։

Առաւօտից մինչև երեկոյ պարապում էր դրասենեակի մէջ գործատան հաշիւներով և կարգադրութիւններով։ Կէսօրուայ նախաճաշիկի կըզար տուն, յետոյ նորից դրասենեակը վերադառնալով, մինչև երեկոյ կը զբաղէր. կը պատահէր, որ մինչև հետևեալ օրը ստիպուած գիշերն այնտեղ մնայ, այլ ընդհանրապէս սովորութիւն ունէր երեկոները տուն վերադառնալ թէյի ժամանակ, եթէ չի գնար այցելութեան մի տիկնոջ, որին հետ շատ սերտ յարաբերութեամբ կապուած էր։

Տանը իւր վերադարձին կըսպասէին տան և ինն ամեայ աղջիկը պառաւ խնամակալուհու հետ. այս վերջինը՝ գլուխը ձեռքում հիւսած գուլպային վերայ խոնարհեցնելով, ծնկան վերայ նստած կատուին հետ կըմրափէին։ Պառաւը, միայն գլուխը բարձրացնելով, նիհար ձեռքով ինքնաեռը կըշոշափէր նայելու համար, որ ջուրը սառած չլինի, և եթէ աղան յանկարծ գալու լինի, թէյը ժամանակին պատրաստ չգտնէ և բարկանայ։

Որովհետև արտաքին անձանց հետ հեղաբարոյ և քաղցր վարուող աղան նոյնը չէր դժբաղդաբար իւր տանը մէջ,—մանաւանդ մի քանի օրից ի վեր զգալի կերպով փոխուած էին թէ իւր սովորական վարմունքը և թէ երեսի արտայայտութիւնը, առանց դորան էլ մեծաւ մասամբ վատ

կրվարուէր իւր աղջկան հետ,— խեղճ Երանուհին շատ էր տառապում այդ վարմունքից։ Հեշտ չէ մի երիտասարդ օրիորդի իւր մատաղ հասակում տեսնել իւր մօրը, մանաւանդ իւր միակ բարեկամուհուն մահը, որի գգուանքն ու խանդաղատանքը պաշարած ու օրօրած էին իւր մատղաշ տարիքը, որք իւր սրտին անհրաժեշտ մի պէտք և սնունդ դարձել էին։ Յանկարծ կորցնել այդ բոլորը, զգալ ինքն իրան մի ցաւալի դատարկութեան մէջ, ուր միայն նշմարելի էր հօրը դաժան և խստահայեաց պատկերը, ցամաք խօսքերը.... վշտալի՞ փոփոխութիւն։ Սակայն Երանուհի, իբրեւ արդարակորով, սովորականից դուրս խելացի եւ առաքինի մի աղջիկ, տանում էր այդ հրեշտակային համբերութեամբ.—քիչ առ քիչ վարժվում էր այդ առանձնութեան եւ մաշող կեանքին, թէպէտ ցաւելով՝ այլ առանց երկիւղի տեսնում էր հօրը վարմունքը, սակայն ընդհակառակն երկիւղ կրզդար այն ատեն, երբ հայրը ծիծաղէր և ձայնը հրամայողական կերպիւ շեշտէր..... որ երբեմն սաստիկ բարկութեան եւ աղետից հետեւանք կամ աւետաբեր սուրհանդակ համարէին։

Անմայր, բոլորովին անընկեր, միայն մի պառաւ խնամակալուհու հսկողութեանը տակ՝ օրերը կ'անցնէին, որից իբրեւ զաւակ սիրուած էր արդէն. բայց կարելի՞ է միթէ, որ եւ է մի ուրիշ սիրով մոռացնել նորան իւր վաղամեռիկ մօր յիշատակը։ Այսու հանդերձ Երանուհի սիրում էր իւր խնամակալուհուն, իւր միակ, բայց տկար պաշտպանը՝ խիստ հօր յարձակմանց դէմ, որոյ կնճռոտիծ պառաւի ձակատը վաղուց արդէն ծածկում էին արծաթափայլ մազեր, այդ տաղտկալի կենաց փոթորկալից վէճերը տանելով ի սէր որբ աղջկան, ներկայ լինելով նոյնպէս հանգուցեալ մօր կրած տառապանքին ու վշտաց, որից միայն մահը կարողացաւ փրկել, եւ որին նա քոյր էր անուանում։

Սակայն տարիներն ու հոգսերը չէին կարողացել ջնջել

նորա դէմքի ազնուական եւ բարի արտայայտութիւնը՝ խոր աչքերով եւ արծուունդն քիթով, որ բոլոր տեսնողաց պատկառանք կ՚ազդէր։

Տիրագին լռութեամբ կընայէր Երանուհու երեսին, որոյ գեղեցկութիւնը դեռ չէին կարողացեր մթագնել արտասուք եւ տառապանք։ Այո՛, գեղեցիկ էր Երանուհի այն գեղեցկութեամբ, որ շատ անգամ կը գոյանայ հոգւոյ ազնուութեանց դէմքին վերայ անդրադառնալովը. համակրելի է, քաղցր ու գրաւիչ առանց ունենալու կլասսիքական արուեստապահանջ գծերը. գեղեցկաց գեղեցիկն է նա իւր գունատ պատկերով, մոտ շրթունքներով եւ աչքերով, որոց կապոյտ երանգն ու լայնահատ շրջանակը պարունակէին մի անյողդողդ նայուածք, ուր կարելի էր նշմարել առաքինութեան, խելքի եւ անձնուիրութեան նշոյլները։ Հասակը միջին՝ նուրբ եւ դիւրակոր, համեստաքայլ. ոտից ցղուխ կուսական շնորհաց մի կենդանի ծաղիկ։

Բոլոր օրը կը զբաղուէր տան գործերով, երբեմն էլ ընթերցմամբ՝ անշուշտ տխուր մտածութիւնքն ու ձանձրոյթը վանելու համար։ Նատ քիչ անգամ դուրս կ՚ելլէր տանից, այն էլ այգիում շրջագայելու երեկոները խնամակալուհուն հետ, կամ երբեմն հօրը հրամանաւ կ՚երթան այցելել մէկ երկու բարեկամուհեաց, գպրոցական դասակիցք, որոց չափահաս եղբայր կամ ամուսին չունենալուն նախապէս տեղեակ էր հայրը. ապա թէ ոչ՝ նոցա հետ էլ տեսնուիլը անհնարին կը դառնար, որովհետեւ հայրը մտադիր էր մի հարուստ եւ մեծ անուան տէր փեսի տալ իւր աղջիկը... որովհետեւ Գողթունի դեռ չէր բաւական իւր վայելած յարգանքիցը. նա աւելի հեռուներն էր ակնարկում։ Նա մեծամեծ նպատակներ ունէր, որին հասնելու միակ միջոցն էր առատ փող եւ բարձրաստիճան անձանց ազդականութիւնը կամ, լաւ եւս ասել, խնամութիւնը. առ այժմ կարող էր գոնեա մինը այդ նպատակաց իրագործել, եւ Երանուհի թերեւս

գործիք դառնար։ Թշուառ զոհ... Է՜հ, ի՞նչ փոյթ,—բաւական էր որ ինքը բարձրանայ. ո՞վ է փնտռում եւ քննում, թէ արձանին պատուանդանը ինչի՞ց է շինած կամ ինչո՞վ է յօրինուած.....

Դժբաղդ էր Երանուհի. անապատաց լքեալ բուսեկին նման՝ իւր վառ երեւակայութեան մէջ տպաւորուած էին ցաւալի յիշատակաց սեւագոյն պատկերներ, որոց մէջ առաջին տեղը կրբռնէր իւր մօր մահը, այն օրից՝ որ նորան կորցրուց, իւր շուրջը ամէն բան սուգ զգեցաւ, աշխարհս չունէր այլ իւր հրապոյրն իրեն համար։ Այն սիրտը, որի մէջ ինք ապրում էր, երբ սառեցաւ մահի ճիրանների տակ, իւր կեանքն էլ կիսով չափ սառեցուց, կարծես մի բան պակասում էր իրանից, որին մայրը հետը գերեզման էր տարած։ Բոլոր իւր յոյսերը, անխառն ծիծաղը, անմեղ զբօսանքները, ամէնը, միով բանիւ, կորած էին, մինչեւ անգամ քերթողաց ընթերցումը. սիրելի Էրմենտովը, որն որ շատ գիշերներ ձեռքումը անկողնին մէջ կարդալով կընջէր, ու երբ կիսաբաց դիրքը ձեռքերից ինկնար..... նա արդէն երազումը սկսել էր Թամարա դառնալ, գեւի գրկացը մէջ սաւառնիլ երկնից անհուն եւ ընդարձակ կամարին վերայ, ուր իւրաքանչիւր երկնային մարմինք մի նոր, հրաշալի տեսարաններ կըներկայացնէին իւր զմայլած հոգւոյն աչացը։ Եւ այդ բոլոր նիրհմանց յարիշտակիչ ցնորքն ու պատիրքը առաւօտեան լուսով կըսրբագործուէին մօր համբոյրների քաղցրութեամբ, երբ նա անկողնին մօտ նստած՝ մայր եւ աղջիկ գրկախառն համբոյրներով բարի լոյս կը մաղթէին միմեանց։

Իրականութիւն եւ երազ, ամէն ինչ անհետացան, խափանուեցան գերեզմանի քարի տակ, եւ նա ապրում է այժմ, ինչպէս իւր բնիկ կլիմայից եւ սովորական սնունդիցը զրկուած մի թռչնիկ։ Նաբաթը մէկ կամ երկու անգամ գնում էր այդի ման գալու խնամակալուհուն ընկերակ-

ցութեամբ. իւրաքանչիւր ծառուղիք, հովանիք կամ նստարանք յիշեցնում են անցեալը: Տեսնում է օտար աղջկանց իրենց մայրերի հետ ման գալը ու արտասվում է լռելեայն, ծածկելով աչքերը սգաւորի գլխարկի սև ու թանձր քողովը:

Մի երեկոյ ընդունելով հօր առաջարկութիւնը, խնամակալուհին էլ առած՝ երեքը միասին պարտէզ գնացին, ուր մի երիտասարդ, որ վաղուց նշմարած էր Երանուհուն, հօրը երևի ծանօթ լինելով արդէն ու առիթ քաղելով նորա աղջկան մօտ գտնուելուց, գնաց ողջունեց Գողթունուն, որին այս վերջինը իսկոյն աղջկանը հետ ծանօթացուց:— Այն երեկոյից յետոյ երկու անգամ ևս գնացին այդի եւ ամեն անգամ էլ հանդիպեցան Զարեհ իշխանին, որոյ ընկերութեան պատճառած ձանձրոյթը գրեթէ անմարսելի էր Երանուհու համար. այն ատիճան, որ վերջերումս տկարութիւն կամ գլխի ցաւ պատճառ բերելով՝ այլ ևս այդի չէր ուզում գնալ.—եւ երբ հայրը բարկացած կրպնդէր, որ ընկերէ իրեն, Երանուհի՝ երեկոների զովութիւնը իւր առողջութեան վնասակար լինելը յայտնելով՝ կրմերժէր:

Մինչև անգամ մի երեկոյ իւր խուցը քաշուած էր, երբ իշխանը իրենց մօտ եկաւ հօրը հետ առաջին անգամ. այլ Երանուհի չերևեց: Այս բանից սաստիկ զայրացել էր հայրը. ուզեց խօսել աղջկանը հետ, բայց տեսնելով, որ բարկութիւնը չպիտի կարողանայ զսպել, որովհետև շատ վատ միջոց էր Երանուհուն միտքը բացագրելու համար տանից դուրս գալով իշխանի հետ, գնացին կրուբ, ուր աշխատեց լուռ եւ մտաղբաղ վիսթի կամ գինուոյ մէջ մոռանալ աղջկան յանդուգն վարմունքը եւ յակամայս խեղդել իւր զայրոյթը:

II.

Մի երեկոյ Գողթունին սովորականից շատ աւելի վաղ էր վերադարձել տուն ու վեր բարձրանալով, ուղղակի սրահ մտաւ, ուր գտաւ աղջկանը դաշնակին առաջ նստած, որի վերայ Բէթհովէնի եղերերգական եւ իւր մօրը կենդանութեան ժամանակ նորա սիրելի մի հատուածն էր նուագում։ Տեսնելով հօր մտնելը, չկարողացաւ զսպել յանկարծայս մի սարսուռ, որն որ իսկոյն տեղի տուաւ երկիւղի, նշմարելով հօրը երեսին վերայ մի ժպիտ, այն ազնուալի եւ չար ծիծաղը, որ չէր կարող առանց սոսկումի տեսնել։ Այսու հանդերձ առանց այլայլելու դիմաւորեց հօրը, մատուցանելով ճակատը հայրական համբոյրին, եւ կրկին նստեց իւր առաջին տեղը։

Խնամակալուհին, նստած մի անկիւնում, լռիկ թէյ կը խմէր։ Գողթունի գլխով ողջունեց նորան, եւ մի քանի տարտամ հարցեր անելուց յետոյ, մտաղրաղ վերադարձաւ ու կանգնելով խնամակալուհու առաջ, մեղմ ձայնով ասաց.

— Խնդրեմ, հրամայեցէք, որ վերարկուիս ցեխերը մաքրեն։ Յետոյ սպասեցէք ինձ վարի սենեակում, ես կ'իջնեմ շուտով։ Ձեզ հետ առանձին խօսելիք ունիմ։

Սոքա միայն պատրուակներ էին նորան այնտեղից հեռացնելու համար, որն որ թէյի բաժակը ձեռքին, դեռ չաւարտած եւ առանց պատասխանելու՝ հեռացաւ, Գողթունու քամակիցը կասկածոտ մի հայեացք ուղղելով։

Գողթունի մի բազկաթոռ դլորեց դաշնակի աթոռակին մօտ, որի վերայ նստած էր Երանուհին եւ թաւ ձեռքովը աղջկայ փափուկ բաղուկը շօշափելով, սկսեց ուշադրութեամբ նորա աչացը մէջ նայել, հարցաց, ժպտեց եւ յետոյ այսպէս բաց արաւ խօսակցութիւնը։

— Դարձեալ երկիւղ եմ ազդում քեզ, որ չես ուզում գլուխդ բարձրացնել եւ ուղիղ երեսս նայել, չպէտք է

մարդկանց դատել գահավիժաբար, — երբ որ մարդուս հոգին յուզուած է հոգսերով, ի՞նչպէս կ՚ուզես որ երեսը ուրախութիւն ցոլանայ. իրենց նկրքին զգացումը արտաքուստ չայայտնելու յատկութեան մէջ կանայք են միայն ընդունակ..... Արտաքին դաժան կերպարանքս չէ կարող երբէք հաստատել, որ անդութ լինիմ, կամ լաւ ևս ասած, աղջկանս օգուտը չմոռանամ, չճանաչեմ իմ հայրական պարտականութիւնս. ընդհակառակն խիստ լաւ գիտեմ, որ արդէն վաղուց ժամանակ է խորհել քո ապագայի մասին... գիտեմ: Եւ լաւ նկատած եմ այս կեանքին քո հասակիդ պահանջմանց բոլորովին անհամաձայն լինելը, եւ վերջապէս մի՞թէ ես չեմ ցանկար քո երջանկութիւնը... ի՞նչ ես կարծում... չէ՞ որ այդ իմ հայրական պարտականութիւնն է... ուստի.....

Ճակատը սկսաւ շփել, կարծես լաւ շարադրելու համար ասելիքը եւ փոքր ինչ լուռ մնալուց յետոյ՝ շարունակեց.

— Ես այդ մասին միշտ հոգատար էի, միշտ խորհում էի.... սպասելով մի յարմար եւ վայելուչ առթի.... Եւ ահա այդ առիթն էլ ներկայացաւ...

Երանուհի թէպէտ նախադուշակած էր հօրը դիտաւորութիւնը, բայց խաբում էր տակաւին ինքն իրան, չուզելով հաւատք ընծայել այդ ստուգութեան, որ իրեն համար շատ դառն էր: Նա աչքերը մեծ մեծ բանալով, անձկութեամբ նայում էր հօրը երեսին, որն որ տեսնելով աղջկան վարմունքը, շարունակեց կրկին մի փաղաքուշ ձայնով, որ հարկ եղած ատեն գիտէր ճարտարութեամբ գործ ածել:

— Յիշում ես, Երանուհի, սորանից մի քանի շաբաթ առաջ այգիում քեզ հետ ծանօթացող երիտասարդ զինուորականը, վերջապէս Զարեհ իշխանը, որ վաղուց քեզ նշմարած էր եւ համեստ դիտաւորութեամբ ուզում էր հետդ ծանօթանալ, որին դու շատ սառն կերպով ընդու-

նեցար. մինչև անդամ անցեալ երեկոյ նորա մեզ մօտ եղած ժամանակը սենեկիցդ չուզեցիր դուրս գալ, այդ բանը ինձ շատ նեղացրեց։ Ես քեզ ոչինչ չեմ ասել մինչև այժմ, սակայն կարծեմ, որ դու այդպէս վարուելով հօրդ նախ անպատուած կըլինիս, յետոյ այն անձին, որ բարձր դիրք ունի ընկերութեան մէջ եւ ազդեցութիւն, առանց հաշուելու իւր երեք միլլիօնի արժողութեամբ փողերն ու կայքերը. պէտք է նոյնպէս ի նկատի ունենալ, որ շատ լաւ ընդունուած է մեծ դքսի պալատում եւ բոլորից յարգուած.... Ես, կարծեմ, որ մեզ պատիւ պէտք է համարինք այսպիսի անձանց ծանօթութիւնը...։

Հայրը այս վերջին խօսքերը արտասանելով ծանր կերպով ձեռքերը կըշփէր ու Երանուհու երեսը կընայէր, որն որ ջղային մի բնիկ դողով ոտք ելաւ, ձեռքը մեքենայաբար գաշնակի մատնատեղեաց վերայ դնելով, որոնք մեռելային զանգակի նման հնչեցին այդ սպառնալից լռութեան մէջ, յետոյ հօրը աղաչագին նայուածք մը տալով՝ ասաց.

— Հայր, առաջին անգամն է, որ այսպէս երկար խօսում ես ինձ հետ առանց բացարձակ միտքդ յայտնելու. դու ինձ երկիւղ ես պատճառում. գոնեայ....

Իսկ Դողթունի մի քմծիծաղով պատասխանեց աղջկայ այս խօսքերին, ձեռքիցը բռնելով նորից իւր տեղը նստեցուց, յարելով.

— Երախայական զգայմունքներդ մէկդի թող և նիստ այստեղ, դեռ խօսքս չեմ վերջացրել եւ դու շտապելու ոչինչ պատճառ չունիս. լսի՛ր... ու ցուցամատովը Երանուհու ծնօտը շոշափեց, ստիպելով որ գլուխը քիչ բարձրացնէ, և ապա շարունակեց.

— Այսօր, ինչպէս շատ օրեր, Հանգիստեցյայ կրկին Զարեհ իշխանին. նա համարձակ յայտնեց ինձ քո վերայ զգացած սէրն ու յարգանքը եւ աղերսագին խնդրեց իմ հաւանութիւնը քեզ իրեն հարսնացնելու համար... Ես ան-

շուշտ շատ ուրախ էի նորա առաջարկութիւնից եւ պատրաստ էի նաեւ տալ լեռվին իմ հաւանութիւնը... սակայն նախապէս ուզեցի քեզ յայտնել այս ուրախտութիւնը, որպէս զի այսուհետեւ սառն չվարուիս նորա հետ, դու եւս տաս քո հաւանութիւնը, ընդունիս նորա այցելութիւնները, որովհետեւ մտադիր եմ շտապել հարսանիքը... Սա մի անսպասելի բաղդ է, որ ձեռքից բաց թողնելը կատարեալ յիմարութիւն կլինի:

Անբացատրելի նեղքին այլայլութեամբ լսեց Երանուհի այս սոսկալի յայտարարութիւնը ու մունջ կանգնած խորհում էր, մտաբերելով իւր մօր կրած տառապանքները հօրը ձեռքից.... Նա արդէն զզուած ու սարսափած էր ամուսնական վիճակից եւ շատ ցաւալի դաղափար էր կազմել այդ մասին:

Մանաւանդ իւր թշուառ մօր մահը այնպիսի մի լայն վէրք բացաւ իւր սրտում, այնպիսի մի սուդով պատեց, որ երկար ժամանակ դժուար պիտի լինէր մերկացնել այդ սիրտը սուդից՝ կրկին մի նոր սիրով կամ ղդացմամբ պատելու համար: Իսկ եթէ երբէք ժամանակը ջնջէր այդ սուդն ու ցաւը, եթէ այդ արդար եւ անաչառ հոգին սիրէր մէկին՝ ընտրելով իւր կենաց ընկեր,—անշուշտ նա չպիտի որոնէր նորանում ոչ հարստութիւն, ոչ անուն եւ ոչ արտաքին ձեւեր, այլ անձնուէր եւ անկիւթ բարեկամութեան կապը պիտի լինէր իւր առաքինահիւս սիրոյ շղթան:

Գուցէ այս կուսական անմեղ հաստակի պահանջները կամ երեւակայութիւնքը անիրագործելի համարուին իրականութեան մէջ, բայց նա առ այժմ այդ անդամ որոնելու ոչ տրամադրութիւն ունի եւ ոչ կամք: Ո՞ւր ճնայ լինել ամուսին մի որ եւ է անծանօթի... մի մարդու, որին հազիւ երկու կամ երեք անդամ հանդիպած ու հետը խօսած է, մի երիտասարդ իշխանի՝ դեռ կեանքի անփորձ եւ անտեղեակ, նորա միայն վարդագոյն կող-

մերը տեսած է 'ի շնորհս իւր հարստութեան։ Ի՞նչ ընկեր կարող է լինել Երանահուն զուարճութեամբ յափշտակուած մի անձ՝ պչրող եւ կանացի, իւր զինուորականի պրական համազգեստին մէջ, իւղոտած մազերով, սրածայր բեխերով եւ ոտիցը խթանի բոժոժներով, որ քայլած ու խոնարհած ատեն, կոշիկները միմեանց կը խփէ, մեստաղի հնչիւններ հանելով, որոց սպիտակ ձեռնոցները աւելի դուրս կը ցայտեցնեն երեսի թուխ գոյնը, գուցէ թեթեւամտութիւն. երկոտանի եւ շարժուն մի պաճուճապատանք, որի մէջ ոչ գիտէ, կարող է թերեւս գտնուիլ մի ազնիւ սիրտ, եւ կամ զանազան ունակութիւններ ու ախտեր են ծածկուած,—վատ դասատիարակութեան կամ բնոյթի հետեւանք։

Մօրը մահիցն յետոյ մի տարին հաղիւ լրացած, հանել իսկոյն սգոյ սեւ զգեստները հագնելու համար հարսանիքի կուսափայլ սպիտակ հանդերձանքն, գերեզմանատան մէջ պարահանդէս սարգել..... սրտագին արցունքները կեղծ ծիծաղի փոխարկել... զարհուրելի էր..... Մեքենայաբար ոտքի կանգնեց Երանուհի, գնաց շտապ միջին սեղանի մօտ ու ջուր լցնելով բաժակում՝ խմեց մի քանի կաթիլ, յետոյ բարակ թաշկինակը շրթունքների վերայ սեղմած, միւս ձեռքը սեղանին յենլով, մտածկոտ ու շուարած կանգնէր։ Երբ հայրը նոյնպէս կանգնելով, մօտեցաւ ու հարցրուց.

— Ի՞նչ ես խորհում. ինչու չես պատասխանում հարցիս....

— Պատասխանս համառօտ եւ կարծեմ շատ էլ բնական է, հայր։ Եթէ ասելու լինիմ, որ չեմ կարող ընդունել այդ առաջարկութիւնը, ոչ ոք ինձ չէ կարող մեղադրել, մանաւանդ դու, հայր իմ, որովհետեւ դու ինքդ ասացիր, որ իմ երջանկութիւնը կը ցանկաս, եւ հէնց ես այդ խօսքին վերայ հիմնուելով, մերժում եմ համարձակ, զի եթէ

հաւանութիւն տամ նորա կինը դառնալ, որին ոչ կը ճանաչեմ եւ ոչ կարող եմ զգալ փոխադարձաբար սէր կամ համակրութիւն, դժբաղդ պիտի լինեմ։ Չի կարողացաւ շարունակել եւ շուարած հօրը երեսը կը նայէր, որ ուզել էր մի քանի անգամ ընդմիջել իւր աղջկան։ Նորա կնճռոտ դէմքի դունատութիւնը ցոյց էր տալիս մի մօտալուտ փոթորիկ. բեխերի միջից ֆշալով շունչ փչեց, եւ ինքն իրան դեռ զսպելով, մօտեցաւ ընտանեբար ու Երանուհու զգեստիցը կախուած սև ժապաւէններից մինը մատերին մէջ բռնած՝ խօսելով ասաց.

— Այլ եթէ այդ խնամութիւնը ես ինձ, իմ նպատակների համար անհրաժեշտ համարէի, մէկ խօսքով մի բաղդաւորութիւն, այն ժամանակ չէիր կամենալ արդեօք մէկդի թողնել այդ երեւակայական ցնորքները եւ հօրդ լաւութիւնը միայն աչքի առաջ ունենալ....

— Քո լաւութիւնը, հայր...—բացագանչեց Երանուհի ընդմիջելով հօրը,—ուրեմն քո լաւութիւնը ուզում ես ապահովել, հիմնել աղջկանդ դժբաղդութեան մէջ. ո՜հ, չէ, անկարելի է որ դու այդ բանին հաւանութիւն տաս։ Գուցէ հարստութեան հրապոյրը մի րոպէ գրաւած լինի քո սիրտը. սակայն խորհիր մի անգամ, որ այդ բանը ուրիշ մի արդիւնք չունի ինձ համար, բայց միայն դառնացնել իմ գրեթէ բանդարկեալի վիճակս, զուրկ ամէն իմ տարիքս ունեցող աղջկանց անմեղ հաճոյքներից. անմայր, տխուր, լքեալ, մինչեւ անգամ չի վայելելով քո խանդաղատանքը, աշխատում եմ լքցնել իմ մենարանի առանձնութիւնը մօրս քոյր յիշատակով, որ միակ սփոփանքս ու սրբազան պարտամունքս է։ Դու ուզում ես նորանից էլ զրկել ինձ, ուզում ես այս սուրբ յիշատակով տոչորուող ու շնչող սրտին մէջ մի օտարի դէմ յանկարծ ատելութիւն սերմանել, որի անշուշտ գերին կամ վերջ ի վերջոյ զոհը կարող եմ դառնալ. ո՛չ, հայր իմ, ո՛չ. Ասուած չի՛ ներեր այդ բանը,

չի թողներ որ վաղամեռիկ մօր գերեզմանը նորա աղջկանը հարսանեաց պսակին սեղան եւ զոհի բագին դարձնեն։

Արցունքները խցկեցին ձայնը կոկորդում, եւ սկսեց հեծկլտալ. մինչ դեռ հայրը՝ երկու ձեռքերը քամակին վերայ ծալած, կատաղի աչքերը գետին սեւեռելով, աջ ու ձախ ման կուգար սրահին մէջ, յանկարծ երկու երեք անգամ կեղծ հաղաց, իբրեւ թէ մի զայրոյթի աղաղակ խեղդել ուզենար կուրծքին մէջ։ Մօտեցաւ աղջկան, կանգնեց մօտը ու աջ ոտքը մեքենայաբար դողացնելով, ցասկոտ հեգնութեամբ ասաց.

— Այսպէս ուրեմն հա..—բացագանչեց։—Ո՞յս է իմ այսքան տարուայ քեզ տուած դաստիարակութեանս պտուղը. դպրոցում ստացած ուսումներդ հօրդ կամքը քեզ բռնաբարել սովորեցրի՞ն, նորա դաշն եւ լերը պատասխաններ տալ, ընդդիմանալ.....

Այստեղ նկատելով Երանուհու յակամայս ցաւալի մի շարժումը՝ ձայնը մեղմեց եւ համոզողական կերպով բառերը շեշտելով, շարունակեց.

— Հասկացի՛ր գոնեայ մի անգամ ընդ միշտ, որ ես ոչ՝ ոքի չարիք չեմ կամենար, ո՛ւր մնաց իմ աղջկանս. սակայն չեմ էլ թոյլ տար, որ այլք նոյնը ցանկանան ինձ համար, մանաւանդ երբ ձեռնարկած գործիս մէջ նիւթական շահերս լինին ինձ շարժառիթ. այն ատեն վա՜յ նորան, որ կը յանդգնի խոչընդոտան կանգնել իմ ճանապարհի վերայ... Անկասկած ես անարգել կըփշրեմ եւ յառաջ կըգնամ... ո՞վ որ լինի, կատուին ճիրանները, մինչեւ անգամ օձին թունաւոր ակռան կարող եմ խլել, եթէ ինձ վնասել ուզենան.. հէ՜ հէ՜....—Երանուհի գլուխը կըշարժէր, միշտ մերժողական կերպիւ։ Դողթունի այս տեսնելով, մռնչեց.

— Մայրդ էլ յամառ էր քեզ նման, բայց վերջապէս լռեց.....

Այս վերջին բառերը՝ զայրագին հեգնութեամբ արտասանուած, չարաչար վերաւորեցին համբերատար աղջկան, այնպէս որ քիչ մնաց նուաղեալ գետին ինկնար։ Սակայն բոլոր ոյժը քաղելով իւր որդիական սիրոյն մէջ, ազնիւ խրոխտութեամբ բարձրացուց գլուխը եւ բողոքանաց յստակ մի ձայնով, որ յատուկ է ընդհանրապէս երկար ժամանակ ընկճեալ եւ բռնաբարեալ անձանց, որոնք ի վերջոյ իրաւամբ կ՝ապստամբին, գոչեց.

— Լսէ՛, հայր, եւ յիշէ՛ր միանգամայն, որ դու պարտական ես յարգել իմ մօր յիշատակը, այդ տառապեալ կնոջ, որի ամբողջ կեանքը արցունք, ողբ ու կոծ էր քո պատճառաւ... Նա այժմ Աստուծոյ է պատկանում. անմահութեան աւար դարձած՝ ազատուած է աշխարհից եւ ոչ ոք իրաւունք չունի նախատել մեռեալին ոսկերտիքը։ Մտաբերի՛ր, հայր, որ մի Աստուած կայ երկնքում, որ չի ներեր բնաւ առ ինքն փոխադրուած հոգւոց յիշատակին եղած նախատինքը եւ ոչ անմխիթար որբին արցունքը.... Պատրաստ եմ ամէն բան տանել, ամէն բանի ներողամիտ լինել. սակայն.....

Դեռ խօսքը չէր աւարտած, մինչ հայրը, կատաղի գալով, դէմը արձանացաւ՝ ձեռքի բուռը օդին մէջ բարձրացնելով, ուզում էր գուցէ հարուածել իւր զաւակին, երբ յանկարծ դրան կողքից խեղդուկ մի ճիչ ստիպեց նորան գլուխը դարձնել։ Նա տեսաւ պառաւ խնամակալուհուն՝ շուարած ու գունատ, որ շտապէր գրկացը մէջ առնել արտասուաթոր Երանուհուն և կցկտուր ձայնով մրմնջէր. Տէր Աստուած, դո՛ւ ողորմիր. յետոյ աղային դառնալով կ՝ասէր.

— Գոնեայ փոքր ինչ դութ ունեցէ՛ք, մեղք է ձեր աղջկան. վերջապէս մտածեցէ՛ք, տանը ծառայք կարող են լսել այս աղմուկը, յետոյ ձեր պատիւը....

Գողթունի ուշադրութիւն անդամ չդարձնելով նորա

խօսքերին, մտեցաւ բազկաթոռին մէջ հեծեծող աղջկանը եւ հազիւ հաղ բարկութիւնը զսպելով, արտասանեց խրոխտաբար.

— Լսի՛ր, Երանուհի. արցունքներ ու ողբերգական կերպերն բոլորովին անտեղի են եւ չեն կարող դղրդել իմ դիտաւորութիւնը. ասածս ասած է։ — Յետոյ դառնալով խնամակալուհուն, որ ձեռքերը միմեանց կցած, աջ ու ձախ գլուխը տատանէր, հրամայական ձայնով ասաց.

— Ահա հրապարակաւ նորա առաջ քեզ եւս ասում եմ. աշխատի՛ր համոզել սորան, թէ կինդանիք չեն կարող մեռեալներին զոհել իրենց շահերը.... Կենդանի մնացողներին ապրուստ եւ մի դիրք հարկաւոր է ունենալ ընկերութեան մէջ։ Մեռեալների հետ գործ չունիմ, այլ կենդանիներից կըսպասեմ ապագայ. Ջանա՛, սորան հասկացնել այս։ Եթէ այսուհետեւ կրկին յանդգնի մերժել իմ առաջարկութիւնները, վիճել ինձ հետ, այն ժամանակ կարող եմ ենթադրել, որ դու ես դրդռում նորան ինձ դէմ, եւ յետոյ.... Ուստի իմացի՛ր, որ աղջիկս իշխանուհի պիտի լինի, այդ վճռած է, եթէ մինչեւ անգամ բոլոր ունեցածս նորա օժիտ պահանջեն,— պատրաստ եմ տալու։— Յետոյ դառնալով Երանուհուն.

— Էհ, բաւական են հառաչանք եւ արտասուք, կանացի տկարութեան ախտանիշներ, որոնք կարող են ծիծաղի փոխարկուիլ հարսանեաց հետեւեալ օրը...

Խեղճ Երանուհի խօսելու անկարող, հեծկլտալով, ձեռքերը մերժողական նշանով օդի մէջ կըտարուբերէր.... Հայրն այս տեսնելով, յարձակուեց եւ կոպտաբար մի կողմ հրելով խնամակալուհուն, որ ուզում էր արգելել, ուժգին բռնեց աղջկան բազկիցը ու ցնցելով բարձրացուց նորան. յետոյ խուլ բարկութեամբ եւ կերկերեալ ձայնով հրամայեց.

— Կորի՛ր սենեակդ, գնա՛..... յուսամ մինչեւ վաղը միտքդ կըփոխուի։— Յետոյ յամրաքայլ մտեցաւ սեղանին,

առաւ ճրագը եւ առանց իսկ նայելու աղջկայ վերայ, հայհոյանք մրմռալով՝ անհետացաւ միջին դռնից։

Երանուհի առանց մի բառ արտասանելու դրեց իւր վշտերով յուզեալ գլուխը պառաւ ընկերուհուն կուրծքին վերայ, եւ երկուսն էլ արտասուէին։

Սենեակը լուսաւորուած էր աղօտ մի կանթեղով միայն, որն որ վառած էին անկիւնում զետեղուած ոսկեպատ շրջանակով Սատուածամօր պատկերին առաջ, որի միայն աչքերը լուսաւորուելով, մթութեան մէջ կ'երեւէր գթալից հայեացքը, որ կըտարածէր այդ տառապեալ խմբեակին վերայ, իբրեւ պատասխան եւ քաջալեր նոցա աղերսանաց հայեացքին։

III.

Այն երեկոյից սկսեալ զգալի մի փոփոխութիւն երեւեց Երանուհու վարմունքի եւ բնաւորութեան մէջ. տարտամ եւ անհաստատ էր նայուածքը, խօսքերը մեղմ եւ սառն, գլխակոր, կարծես բոլորովին պատրաստ գալիք եւ ներկայ թշուառութեանց անձնուէր մի ողջակէզ դառնալ։

Մանաւանդ երկրորդ օրուայ հօրը եւ իւր մէջ տեղի ունեցած բանակցութիւնից յետոյ՝ նա բոլորովին կորցրուց իւր հաստատամտութիւնը։

Գողթունի առաւօտեան կանուխ մտնելով իւր աղջկան սենեակը, աշխատել էր քաղցրօրէն համոզել նորան, ասելով.

— Ես մտադիր չեմ բռնաբարել քեզ, աղջիկս, քա՜ւ լեցի. սակայն խորհի՛ր մի անգամ, որ ամբողջ կեանքումս աշխատել եմ՝ մեծամեծ դժուարութեանց յաղթելով, ունենալ մի դիրք, մի փոքր ինչք ու հարստութիւն, եւ մինչեւ այժմ ստիպուած եմ տակաւին գլուխս խոնարհեցնել դռռող հարուստների առաջ։ Այն գործարանը, որ բաց արի, մնասից աւելի ոչինչ չէ տուել ինձ. դեռ չի կարողացայ նորա պատ-

ճառաւ արած ծախքերս ծածկել.... Եւ հիմակ դու ես իմ միակ յոյսս. եթէ դու ի սէր քո հօրդ՝ վերջապէս նորան ամօթից ազատելու համար՝ հաճութիւն տաս Զարեհ իշխանի կինը դառնալ, մի խօսքով, եթէ մի իշխան փեսայ ունենամ, որոյ շնորհիւ կարող լինիմ ծանօթութիւններ հաստատել եւ մի կերպով ազատուիլ իմ պարտքերից, այն ատեն յուսամ ինձ բաւական կը լինի դործարանիս բերած շահը հանգիստ ապրելու համար..... Եթէ ոչ, կարելի է որ ընկնեմ յետին աղքատութեան մէջ, եւ կամ այս անելանելի դրութիւնից ազատուելու համար կարելի է որ...—Նա չաւարտեց խօսքը, տեսնելով Երանուհու երկիւղալի հայեացքը.—Ո՜հ, ո՛չ, ո՛չ, աղջիկս, եթէ մի ցածութեան ընդունակ լինէի... այն ատեն.... Այսու հանդերձ, կարծեմ, քեզ հաճելի չէ քո սրտի ազատութիւնը վայելելու համար տեսնել հօրդ բանդում կամ չքաւորութեան մէջ.... Դիցուք թէ չես սիրում իշխանին, բայց խորհի՛ր, որ նա միակ մարդն է, որին կարող ենք ապաւինել, միակ ապաստանելու տախտակը այս փոթորկալից դրութեան մէջ։

Գողթունի փոքր ինչ սպասեց և ապա յարեց.

— Մի՞թէ քեզ համար պարծանաց առիթ չէ՞, աղջիկս, երբ յաղթելով քո հակակրութիւնն ի սէր քո հօր փրկութեան, մի փոքր զոհողութիւն անես, նորա ազատարարը դառնաս, ամուսնանալով Զարեհ իշխանի հետ, որ դուցէ այնքան հակակրելի եւ վատ չէ, որքան որ դու կարծում ես....—Յետոյ սենեկին մէջ մի շրջան անելով, յարեց կեղծաւորաբար.—Մի՛ կարծիր, որ ես չեմ գնահատում այդ սուրբ յարգանքը, որ սրտումդ տածում ես մօրդ յիշատակին համար. բայց ես էլ, իբրեւ հայր, գոնեայ կիսով չափ իրաւունք չունե՞մ քո ծնողը կոչուելու, քո կարեկցութեան արժանանալու։

Եւ նկատելով Երանուհու լռութիւնը, որ կարող էր իբրեւ հաւանութիւն մեկնել, ձայնն ու կերպը փոխելով,

ժամացոյցը հանեց ու նայելով ասաց.—Օ՜, արդէն ժամը տասն է, ինձ հարկաւոր է շտապել երթալ գործատուն... Հա՜, լաւ միտքս եկաւ, կը հաճի՞ս այս երեկոյ Մուշայիդի այդին երթալ։—Երանուհի հաղիւ նշմարելի կերպով գլուխը ծռեց,—Գողթունուն այդքանն էլ բաւական էր, որ դլխարկը առնելով ասաց.—Այսպէս ուրեմն երեկոյեան ժամը 5-ին երեքը միասին կ՚երթանք։ Ես կուգամ ձեզ առնելու։ Յաւետութիւն, աղջիկս։

Երանուհի ոչ մի բառ չարտասանեց։ Նա այժմ գանվում էր մի տաղտուկ դրութեան մէջ, խորհելու եւ որոշելու անկարող, դժբաղդ ճակատագրին անձնատուր եղած, նման մի երեխայի, որի ձեռքիցը բռնած մանն են ածում փողոցների մէջ եւ որի շուրջը բարձած աղմուկն ու գոնուած առարկաները կարող են միայն ապշեցնելով թմրեցնել նորան։

Երեկոյին, հայր եւ աղջիկ՝ խնամակալուհուն հետ մի շքեղ կառքի մէջ նստած, գնացին Մուշայիդ։ Գնալ ու դալը գրեթէ 50 վայրկենի ճանապարհ, կառքեր ու խուռն բազմութիւն եւ փոշոյ մէջ՝ հրապուրիչ մի շրջագայութիւն չէր անշուշտ Երանուհու համար։ Սակայն հօրը կամացը դէմ չի վարուելով՝ ստիպուած էր բազմութեան երեւիլ, այդ ուրախ եւ ժպտերես ու նոր-նոր հանդերձներով պճնեալ տիկնանց շարքում իւր սգաւորի պարզ սեւ գլխարկովն ու զգեստովը հակապատկեր հանդիսանալ։ Կառքերի կակուղ բարձերին վերայ թեք ընկած անձինքների ոմանց քաղաքավարական ողջոյնը նա ստիպուած էր փոխադարձաբար ընդունել, մինչեւ անգամ ժպտել յակամայս, նեղքին վիշտը արտաքուստ չի յայտնել։—Մ՚անուանդ երբ պարտիզի ծառուղիներին մէջ կառքերը կրսկսին յամրաքայլ շրջագայել, այնտեղ բոլորը մօտից միմեանց հագուստը եւ երեսը կը ննեն. այդ առաջնոյն քննութիւնը անշուշտ աւելի կանանց սեռին կը վերաբերի։

Իսկ երիտասարդք, սպայք եւ մեծատանց որդիք, ոմանք

հեծեալք, այլք կառքերի մէջ, աչքերով տիկնանց կ՚ուտեն, եւ մի բոպէ զբօսարանի դրանն առաջ կանգնելով, գարեջրով կամ որ եւ իցէ մի ըմպելիքով կրմեղմեն իրենց ծարաւը՝ առանց մի բոպէ նստելու: Շատ քիչերը բարձրանան զբօսարանի սանդուղներից, ուր տեղից կը լսուին առանձին սենեակներին մէջ Կախէթի գինարբուքեամբ զուարթացած մի քանի խառնակեաց օտարուհիների ծիծաղին քրքիջը ու յստակ ելեւէջները եւ կամ սրտաբաց թամադայի եւ սեղանակցեաց գինեհոտ շրթանց պռօշտիների շփշփոցը: Այս ներքին վիճակը բոլորովին չի համապատասխաներ արտաքինին. դուրսը հաղիւ թէ լսելի են կառաց անիւների աղմուկը, մօտակայ գործարանի շոգւոյն միակերպ ֆշֆշալը եւ գազոտ պտղաջրերի խցանին պայթիւնը:

Պարտիզում ամենքը լուրջ են եւ զգաստ, ուր միմեանց տեսնելու համար մաքուր օդ ծծելը առիթ առնելով, այնտեղ են եկած. այլ գեղեցիկ տիկնայք—երիտասարդներին զմայլեցնելու:

Գողթունի կառքին մէջ նստած՝ անոյշ ժպիտով եւ հովանաւոր նայուածքով երկու կողման ողջունողներին վայելուչ կերպով կը պատասխանէր:

Մին քանիսը մատնանիշ կ՚անէին նորան, անուանելով բարերար աղան. ուրիշներն՝ հաւատք ընծայելով նորա մասին տարածուած բարի լուրերին, պատկառանօք կ՚ընդունէին նորա ողջոյնը: Կային, որ չէին համակրում նորան, կասկածում էին եւս, սակայն թուով քիչ. չէին կարող ազդեցութիւն ունենալ ընդհանուրին վերայ:

Այնտեղ Գողթունի բոլորովին ուրիշ մարդ էր պատկերանում. ոչ խոժոռ նայուածքն ունէր եւ ոչ այդ անգութ ծիծաղը. մանաւանդ այն երեկոյին սովորականից աւելի վստահեցուցիչ էր իւր դէմքի արտայայտութիւնը: Երանուհու հետ ունեցած խօսակցութիւնը մի ամոքիչ յոյս էր տուած իւր սրտին: Եւ անկասկած, եթէ իշխանը մի լաւ

բռնուէր իւր ճանկում կամ, լաւ եւս ասել, աղջկանը սիրով, այն ժամանակ մի քանի հարիւր հազարներ ստանալու յոյս կար իրեն համար։ Անշուշտ, եթէ իշխանը խելակորոյս կերպիւ սիրէր Երանուհուն, միթէ կարող էր ի բաց թողնել իւր սիրելւոյն հօրը օգնելու առիթը մի գումարի փոխադարձութեամբ, որ բաղդատելով իւր հարստութեան՝ քառորդ մասն անգամ չէր համարուիլ։

Յետոյ գուցէ կարողանայ մի օր հոգաբարձու դառնալ քաղաքային բանկի մէջ. ո՞վ գիտէ..... այդ ապագան է, որին քիչ առ քիչ կարող է տիրանալ. յոյս ունի իւր բնիկ ճարպիկութեան նորագիւտ միջոցներին վերայ, մնացեալը ինքն իրեն կ'երթայ։ Եւ մի անգամ որ աղջկանը տեղաւորէ, այնուհետեւ ո՞վ կարող է նորան մեղադրել, եթէ իւր ամուսնոյն մահից յետոյ ամուսին առնէ այն կնոջ, որին հետ արդէն վաղուց ծանօթ էր, որոյ համար զգար գուցէ անսանձելի եւ մարմնական մի կիրք, որն որ ստէպ յաղենալով, կարծես աւելի սաստիկ կըստիպէր նորան կնութեան առնել այդ վատթար և անզգամ արարածին, մի ուրիշ մայր տալ իւր աղջկան, որին աղախինը անգամ արժանի չէր լինել։

Այդ կինը գրեթէ ոչինչ չունենալով, համարեա մի ժամանակ նորա հետ Տփղիս եկած, անկասկած չէր կարող Գողթունուն շահասիրութիւնից չդրդել այս միութիւնը կատարել. անշուշտ ունէր մի ուրիշ զօրաւոր պատճառ... Սակայն ինչ որ էլ լինի, ամենից առաջ հարկաւոր էր փող ճարել, հարստանալ. եւ այդ միմիայն կարելի էր Երանուհուն իշխանի վերայ ազդած սիրոյն շնորհիւ։ Այո՛, իւր աղջկան զոհաբերութեամբը, որին պիտի ծախէր կամքին հակառակ, անարդարար իւր ընչասիրութիւնը յագեցնելու եւ զանազան ամօթալից նպատակներին ծառայելու դիտաւորութեամբ։ Պիտի ծախէր այնպէս, ինչպէս հասարակաց տների մէջ ծախում են կանանց՝ սա տարբերու-

թեամբ, որ նոքա ծախվում են իրենց անառակ հաճուլթեամբը շատ մարդկանց եւ քիչ փողով, իսկ Գողթունի ծախում էր իւր աղջկան առանց իւր հաճուլթեանը մի մարդու շատ փողով։ Սոսկալի եւ արիւնազանգ նախատինք, որ երբեմն շահասէր ծնողք անում են իրենց անմեղ զաւակացը եւ այնպէսով յօրինում են դժբաղդ դերդաստաններ եւ քանդում են տներ։

Երկձի կառքը՝ շարունակելով իւր պտոյտը՝ հետեւում էր միւս կառաց, երբ խնամակալուհին մեղմով դրդեց Երանուհու թեւը ցոյց տալու համար երեսուն քայլ հեռաւորութեամբ իշխան Զարեհին, որ մի սպիտակ ձիու վերայ հեծեալ՝ հեռուից նորանց նշմարելով, փութանակի յառաջ կրգար։ Գողթունի եւս իսկոյն նշմարելով, հրամայեց կառապանին, որ կանգնի եւ կիսով չափ տեղեցը բարձրանալով, փեղոյրը բացաւ ու յարգանօք ողջունեց։ Իշխանը ամնապարեց պատասխանել Գողթունու ողջունին, զինուորական գտակը ձեռքում բռնած՝ աջ այտին մօտ. մի քանի քաղաքավարական խօսքեր արտասանեց, որոց Երանուհի պատասխանէր մի մունջ ժպիտով։

Յետոյ իշխանը առաջարկեց մի փոքր ման դալ պարտիզի մէջ. առաջարկութիւն, որ շատ սիրով ընդունուեցաւ Գողթունուց։ Իշխանը ձեռք կարկառեց օրիորդին եւ իւր խնամակալուհուն կառքից իջեցնելու համար, եւ մտան պարտիզի միջին հրապարակը՝ զբօսարանին հանդէպ՝ շրջապատուած խիտ ծառուղիներով։ Իշխանը քայլում էր Երանուհու մօտից, առանց երկար ժամանակ մի բառ կարողանալ արտասանելու։ Բայց նայելով նորա դէմքի գունատութեան եւ շրթանցը դողդողալուն, կարելի էր հղբակացնել, որ սրտումը ունէր մի որ եւ է զօրաւոր շարժառիթ այնպէս այլայլելու,—մի բուռն պատճառ, որին դժուար է իսկոյն սէր անուանել. կարող էին տրփանք լինիլ։

Երբեմն օրիորդի կողմը դառնալով, տեսնում է նորա

ծանրաբարոյ ու լուրջ կերպը եւ չէ համարձակվում մի բառ արտասանել. թերեւս չէր էլ ուզում խանդարել նորա մտածութիւնքը... Այսու հանդերձ երջանիկ էր այն բոպէին, դտնուելով Երանուհու կողքին, շնչելով նորա հետ մի և նոյն առողջարար եւ մաքուր սիրքը, ուր խառնվում էին շրջակայ ծառերի անուշահոտ բոյրը: Այո՛, սիրում էր իշխանը, սիրում էր... Սակայն ի՞նչ տեսակ սիրով. նորա կանացի նիւթական ձիրքերիցը դրաւուած, թէ հոգեկան ազնիւ յատկութիւններիցը, որոց պէտք է ասած իշխանը չէր կարող դեռ տեղեակ լինել:

Գողթունի այդ տարտամ դրութիւնից իշխանին հանելու նպատակաւ ասաց.

— Վաղո՞ւց է, որ այստեղ չէք եկած, իշխան:

— Այո՛,—պատասխանեց իշխանը,—մանաւանդ որ այս վերջին շաբթու մէջ շարունակ անձրեւների պատճառաւ կրուժոկ անգամ երթալը դրեթէ մի հրապոյր չունէր:

— Ե՞րբ պիտի փոխադրուին ձմեռնային կլուբի մէջ:

— Կարծեմ երեք օրից,—պատասխանեց իշխանը՝ յետոյ դիմելով Երանուհուն.—այլ դուք, օրիորդ, գրեթէ բոլորովին տանից դուրս չէք գալիս, հաւանականաբար ձեզ չեն հրապուրում բոլոր այս զբօսանաց տեղերը:

— Ո՛չ,—ասաց Երանուհի.—այդ գրեթէ սովորութիւնից կախումն ունի. ես վաղուց տանը նստելու աւելի վարժուած եմ:

Իշխան Զարեհ իւր բարձր հասակը օրիորդին կողմը խոնարհեցնելով, կաղամախի ծառի նման, որ իւր մօտը ծաղկած տկար բուսիկը կամենար ձմրել իւր ծանրութեան տակ, ասաց ժպտելով.

— Ներեցէք ինձ ասել, օրիորդ, որ դուք փոքր ինչ անձնասէր էք այդ մասին, որովհետև պէտք է 'ի նկատի ունենաք ուրիշներին, խորհելով որ եթէ դուք չէք ցանկար նոցա տեսնել, կան անձինք, որք իրենց բաղդաւորու-

թիւն կը համարին տեսնել ձեզ, խօսել ձեզ հետ եւ...— չէ կարողանալով յաջողութեամբ աւարտել իւր սիրահարի ճառը, շփոթուած երեխայի պէս Երանուհուն կը նայէր: Սորա համար շատ ծանր էր լսել այսպիսի մի բարբառ առաջին անգամ եւ այն այդ անձից, որի համար ոչ սէր կարող էր զգալ եւ ոչ համակրութիւն: Սակայն իւր կանացի հպարտութիւնն էլ չէր թոյլ տար չը պատասխանել, որովհետեւ կանացի նրբամտութեամբը հասկանում էր, որ իւր լռութիւնը իշխանը ըստ իւր քմաց եւ հաճոյից կարող է մեկնել, ուստի այդ բանի առաջն առնելու համար պատասխանեց.

— Ես շատ շնորհակալ եմ այն անձինքներից, միանգամայն եւ կրցաւիմ նոցա վերայ, որոնք կարողանում են հաճոյք զգալ տեսնելով մի անձի, որ գրեթէ անզգայ եւ անտարբեր է ամեն բանի...

Այս վերջին երեք բառերը դիտաւորութեամբ շեշտելով արտասանեց, որ շատ մխիթարիչ եւ քաջալերական չէին իշխանի համար: Բայց խնամակալուհին, որ բնիկ մի հակակրութիւն կրզգար զինուորականների դէմ, սրտից ուրախ էր, թէպէտ տեսնում էր իշխանի շփոթութիւնը, գունատ պատկերը, եւ ինքն իրան խորհրդածելով՝ կ'ասէր, գուցէ եւ սիրում է, բայց ի՞նչ օգուտ, եթէ Երանուհին չէ սիրում նորան.... Հետեւաբար ո՞վ կարող է հաստատել, որ նորա այժմեան սէրը, պիտի տայ Երանուհուն երջանկութիւն եւ հաղիստ. քի՞չ սիրահարներ կան, որոնք չ'ամուսնացած, պատրաստ են կեանքերնին զոհել իրենց պաշտամանց առարկային, եւ մէկ քանի ամսից յետոյ հէնց իսկ իրենց սիրոյ առարկան կրզոհեն իրենց կենաց հաճոյքը, կամ ուրիշ կանանց սիրոյն.... Սիրում է, էհ... ի՞նչ արած. կրսիրէ ու կրդադրի....

Գողթունի էլ լսած էր իւր լրտեսի ականջովը Երանուհու խօսքերը եւ յանկարծ զայրոյթը զսպելով ու չարութեամբ հաղալով, ձայն տուաւ իշխանին.

— Եթէ կրկամենաք, նստինք փոքր ինչ այս սեղանին մօտ,—ասաց նա ու դաւաղանովը հեռուից նշան արաւ ծառային, որ աթոռներ բերէ։ Իշխանը կանգ առաւ, եւ խթանները միմեանց խփելով, գլուխը ծռեց 'ի նշան խոնարհ հաւանութեան։ Խնամակալուհին Երանուհու աջ կողմը նստեց նստարանի վերայ, մինչդեռ իշխան ու Գողթունի աթոռներ առած, նոցա դէմը բազմեցան։

Նստած խօսում էին անկարեւոր եւ օտար նիւթերի վերայ. ընտանեկան երեկոյթ կլուբում, թարմն, Դումայի կարգադրութիւնք։ Երբ նոքա խօսէին, մի վրայի մուրացիկ կին՝ կարկտաններով ծածկեալ, կեղտոտ մի զգեստ հագած, գրկում մի երեխայ խիտ եւ խուլ մաղերիցը սքողեալ սև աչքերովը՝ ցաւագին նայելով, մօտեցաւ ակումբին ողորմութիւն խնդրելու։ Երանուհի այս նկատելով, իսկոյն խնդրեց խնամակալուհուց փողի քսակը եւ մի հինգ ռուբլիանոց ամաչելով ու կարմրելով, մատուց մուրացկուհուն։ Երբ այս վերջինը, երեսը խաչակնքելով շնորհակալութեան աղօթք եւ օրհնէնք կրփսփսար, իշխանը ժպտելով եւ զգացուած, քաղաքավարի ընտանութեամբ ասաց Երանուհուն.

— Ուրա՛խ բարի եւ ողորմասիրտ էք, օրիորդ...—Եւ յետոյ Գողթունեան դառնալով յարեց.

— Ձեմ զարմանար օրիորդի առատաձեռն բարերարութեանը. նա դորանով ապացուցանում է ում դուստրը լինելը։

Գողթունի ուսերը բարձրացնելով, գլուխը խոնարհեցուց, եւ ձեռքերը բաց արաւ, իբրեւ թէ ասել կամենար մի կեղծ համեստութեամբ, թէ ի՞նչ մեծ բան, մեր ամենիս պարտքն է այնպէս վարուել, ես անարժան եմ ձեր գովեստին։

Թէպէտ մի որ եւ է մուրացկան աղքատի հինգ ռուբլի ողորմութիւն տալը սովորութիւն չէ եղած, եւ գուցէ

շռայլ ցուցամոլութիւն դատէին տեսնողները, բայց ով որ լաւ ճանաչէր Երանուհուն և նորա բնիկ ողորմած սիրտը, իսկոյն կ'ըմբռնէր, որ նա հինգ լուբլին շնորհեց ոչ միայն մուրացկանին, այլ մի թշուառ մօր, յիշելով իւր դժբաղդ հանգուցեալ մօրը, որ իրաք նորանից շատ աւելի թշուառագոյն էր բոլորովին մի տարբեր վիճակի մէջ։ Եւ այդ ինչին ողորմութեամբ, կարծես, ուզում էր բողոքել մարց թշուառութեան դէմ, մի ինչին յարգանք եւս մատուցանելով իւր սիրելի մօրը յիշատակին։ Իսկ մարդիկ, այդ բարի վարմունքը (բարերար աղա) հօրիցը ժառանգած համարեցին։

Սեպտեմբերի վերջերում երեկոները շատ ցուրտ կը լինին։ Ցերեկը քաղաքի մէջ տիրած բարեխառն եւ դաղջ օդը՝ արեւու մար մնելուց յետոյ՝ տեղի կրտայ ցրջակայ լեռներից իջնող սառնութեան, ուստի իւրաքանչիւր ոք կրփութայ տուն վերադառնալ բաց ախորժակով, ուր տաք թէյը իրեն կրսպասէ։

Գողթունի իւր ընտանիքով նոյնպէս պատրաստուեցաւ վերադառնալ տուն, կրկին եւ կրկին խնդրելով Իշխանից, որ իրենց պատուէ իւր այցելութեամբը։ Իշխանը լսելով Գողթունուն, տեսնում էր նսեւ Երանուհու երսին անտարբեր սառնութիւնը։ Տխուր քաղաքավարութեամբ շնորհակալ եղաւ, խոստանալով որ առաջին առթիւ կրփութայ օգտուիլ այդ հրաւէրից, եւ կուգայ անձամբ մատուցանել իւր յարգանքն ու համակրութիւնը։ Այս խօսքերը արտասանեց շեշտելով և վարանմամբ՝ կրկին Երանուհու երեսը նայելով, որ զգալի կերպիւ և ծանրութեամբ խոնարհեցնում էր։ Իշխանը մի երկու վհատեալ քայլեր անելուց յետոյ, թոյլ կերպով գլուխը ծռեց, առանց այս անգամ խթանները միմեանց խփելու. այդ երաժշտութիւնը անհամաձայն էր սրտին տխրութեան հետ։

Եւ երբ Գողթունի ցած ձայնով կրյայտնէր Երանուհուն

իւր դժգոհութիւնը իշխանին արած սառն ընդունելութեան մասին, արդէն նա իւր սպիտակ ձիուն վերայ շտապով հեռացել էր այն տեղից։

IV.

Այդ երեկոն Երանուհու համար շատ յուզեալ և տխուր անցաւ, ինչպէս շատ անգամ։ Հայրը տանից դուրս էր գնացել, ըստ սովորութեան, թէյ խմելուց յետոյ. իսկ նա, մնալով առանձին իւր խնամակալուհու հետ, չէր կարողանում մինչև իսկ լսել նորա միակերպ, այլ բարի սրտից բղխած մխիթարական խօսքերը, որ սովորութիւն ունէր մի ձայնի վերայ արտասանել։ Գիշեր բարի մաղթելով նորան, գնաց ու սենեակը առանձնացաւ և, անկողին մտնելով, առաւ իւր պաշտելի հեղինակին՝ Շէքսպիրի մի հատորը և սկսաւ կարդալ։ Դիպուածով բացել էր այն էջերը, այն հրաշալի տեսարանը, ուր Լիր թագաւորը ճանաչում է վերջապէս իւր սիրելի և անձնուէր դստեր՝ Կորդէլիային և, գնահատելով նորա որդիական սէրը, օրհնում է նորան և լալիս։ Հրաշալի ողբերգութեան այդ պատկերը միշտ խորին և բուռն տպաւորութիւն թողած էր նորա վերայ։ Բայց այս անգամ անհուն և տարօրինակ հոգեկան յուզմանց մէջ գտնուելով, աւելի ուժեղ զգայ այդ տպաւորութիւնը, աւելի յափշտակիչ և վառ գոյներով հանդիսացան իւր երևակայութեան առաջ, համակրելի և հայրասէր դիւցազնուհուն զոհաբերութիւնքն, զրկանքն և հոգսերը։ Նա Կորդէլիային ներկայացնում էր իւր հոգւոյն սառն լուսեղէն շրջանակի մէջ բոլորուած, մի պսակի, որն որ կազմվում էր իւր առաքինական գործերից. գուցէ իւր կամշոտ, կրքոտ և հրամայելու վարժուած հօրը՝ ալեզարդ թագաւորին օրհնութիւնն էր նորա աղբիւր։ Ինկած ամենայետին թշուառութեան մէջ, թափառելով ժայռոտ

լերանց և անձաւների խորքում, որք զարհուրելի արձագանգներով կրկնում են նորա ողբաձայն աղաղակները ու գանգատանաց հառաչանքները, իւր դահազուրկ հայրը, փոխանակ արքայական ծիրանւոյ՝ վայրի բաղեղներով և եղէգներով է զարդարել իւր նիհար մարմինը ծածկող ցնցոտի կապան։ Արտասուաթաց և ցաւալի գլուխը՝ փոխանակ իշխանութեան թագին՝ թառամեալ և գլխակոր ծաղիկներով է պսակուած։ Նա լոյս է փնտռում իւր խաւար կենացը մէջ կոյր աչքերով և կոյր մտքով. նորա մօտ իւր ծաղրածուն խելացի է համարվում, նորա չէ կարողանում փրկել իւր հաւատարիմ Կէնտին անձնանուէր բարեկամութիւնը անդամ։ Իւր աղջկանց ապերախտութեամբը հալածեալ ու շանթահար թափառում է նա ինչպէս մի արքայազն Ագամեմնէր, մինչև որ գտնելով իւր խանդակաթ աղջկան, Կորդէլիային, ինկնում է նորա գիրկը, ուր և գտնում է վերջապէս իւր աղօտ մտացը նշոյլ և մնացեալ աւուրցը համեստ երջանկութեան մի յոյս։ Իւր միակ, անձնուէր աղջկան կողքին հայրն ու թագաւորը միանգամայն զարթնում և կանգնում են կրկին նորա մէջ.... այլ աւաղ, ամենայն ինչ անշնչանում է մահուան գրկում։ Հօր սպիտակ ալիքը մեռեալ աղջկայ մարմնոյն պատանք է դառնում, որոյ վերայ և հայրը գտնում է իւր անտանելի ցաւոց գերադոյն հանդիստն ու անդորրը։

Կորդէլիայի միւս քոյրերը կորչում են թշուառացեալ իրենց հօր անէծքից։ Ո՜հ, այդ բոլորը սարսափելի է, քստմնելի, սրտառուչ և ահեղ։

Սակայն ո՛չ. Երանուհին չէ կարող տանել, չէ կարող արժանանալ հօրը անէծքին.... Նա խորհում էր, որ լիովին տրամադիր է՝ զգալով իրանում բաւականի ոյժ և անձնուիրութիւն, մի Կորդէլիա դառնալ իւր հօրը համար։ Նա անկասկած կարող է անել այդ բոլորը, ինչ որ արած էր Կորդալիան ի սէր իւր հօրը թագաւորին։

Սակայն մի՞թէ նորա հայրը կարելի էր բաղդատել Կօրդէլիայի հօրը հետ. մի՞թէ նա այնքան թշուառ և կարօտ էր իւր զՀաբերութեան: Հետևաբար իւր անելու զՀը աւելի ծանր չէ՞ր, քան այդ արքայադստեր, զի հակառակ իւր հաւանութեան և կամքոց՝ պահանջում են իրանից ամուսին, բարեկամ և վերջապէս կենակից ընտրել այն մարդուն, որին նա չէ սիրում, որի արտասուալից տխուր դէմքիցը պահանջում են միանգամայն զՀունակութեան ժպիտ:

Երկինքը միայն կարող է Ծիրանի գօտի ցոյց տալ անձրևի կաթիլների միջից: Նա պատրաստ է տանել ամենայն նեղութիւն ու վիշտ, բացի այդ ամուսնութիւնից... Բայց այն ժամանակ մտաբերից Երանուհի իւր հօր խօսքերը, «թէ իւր բաղդը կախուած է այս խնամութիւնից և թէ առանց դորան պիտի լինէ յեղածայր չքաւորութեան մէջ»:

Յետոյ երևակայեց իրեն արդէն ամուսնացած իւր սրտին սիրելի, բայց աղքատ մի անձի հետ, և նոյն միջոցին աչքն առաջ եկաւ իւր հայրը, թշուառ, օրեկան հացին կարօտ: Գուցէ այն ժամանակ իւր աղջկանը համեստ օգնութիւնն էլ պիտի մերժէր արհամարհանօք, ողորմութիւն և նախատինք համարելով իրեն, և պիտի մեռնէր քաղցած, մինչև վերջին շունչը անիծելով իւր զաւակին:

Դորանից յետոյ պիտի կարողանա՞ր արդեօք նա երջանիկ լինել, թէև իւր սրտին սիրելւոյն մօտ իսկ գտնուի....

Ո՜հ, ո՛չ.... անհրաժեշտ է, հարկաւոր է տեղի տալ անողոք ճակատագրին, գլխակոր և լռելեայն հնազանդիլ ծնողի հրամանացը, եթէ մինչև անգամ կեանքը զՀել հարկ լինի....

Մի բոպէ մնաց լուռ և երազացնոր: Գիլքը հանգչում էր ծնկացը վերայ, և իւր կուսական անուշահոտ սենեակում տիրած լռութեան մէջ որոշ զգում և լսում էր

ազնիւ պտին կանոնաւոր, այլ զօրեղ բաբախումը։ Գլուխը արմուկին յենած կրխորհէր, բայց յանկարծ ցնցուելով, երկու ձեռքը ճակատին դրաւ և հարցուց ինքն իրեն. «Թէ արդեօք այդ ծանր զոհողութեամբ պիտի կարողանայ ինքն էլ արժանանալ հայրական օրհնէնքին. արդեօք կարող պիտի լինի վանել նորա դէմքից այդ տխուր և վայրագ արտայայտութիւնը, որ այնքան սարսափ կ՚ազդէր իւր վերայ»։

Նա միայն այս էր սպասում վարձատրութիւն իւր անձնուիրութեանը. ցանկանում էր տեսնել հօրը գոհ և ժպտերես. այո՛, վայելել նորա ժպիտը ի գին իւր ազատութեան.....

Այլ իսկոյն մի տխուր ծիծաղ փայլեց իւր վեհանձն դէմքին վերայ, մինչ դեռ շրթունքը մրմնջում էին այս բառերը. «առաքինութիւնը առանց որ և է վարձատրութեան նկատմունքի կարող է առաքինութիւն կոչուել։ Նա պէտք է որ իւր մէջը պարունակէ անձնուրացութիւն և անշահասիրութիւն, առանց դորան».....—Անկողնին մօտ վառուող ճրագը արդէն պլպլալով արձակում էր իւր վերջին կայծերը, որ մի վերջին անգամ ևս անդրադարձաւ Երանուհու երեսին՝ փայլելով մի զոյգ արտասուաց մարգարտի մէջ, և յետոյ ամէն ինչ ծածկեց մի խորին, լուռ մթութիւն։

Քնած էր Երանուհի անմեղ և տանջեալ զոհերի յատուկ քնով, որի քաղցրութիւնը կրկնապատկվում էր իւր դիւցազնական որոշումից, այսինքն՝ հնազանդիլ անտրտունջ իւր հօրը կամաց։

Բայց առաւօտուն, երբ աչքերը բացաւ, գիշերուան ցնորքների հետ փարատած էին հոգին ճնշող զգացմունքները։ Սակայն կրկին իրականութեան մէջ վերադառնալով, զգում էր եթէ ոչ զղջումն, գոնէ մի ցաւ՝ իւր արած որոշման հեռևանքը մտածելով, որովհետև որքան անձնուէր լինինք,

ոլքան էլ հաստատակամ լինի մեր ըՀաբերութիւնը, դարձեալ մի բնիկ զգացմանց ձայն կայ մեզանում, լիովին մեր անձնական շահերի սեպհական և օրինաւոր աղաղակը, որ կրբողքի մեր ոլոշմանց դէմ։ Հոգեկան մեծ ոյժ և կոլով է հարկաւոր լռեցնելու համար այդ ձայնը, և ուր որ նա կրլռէ, առաքինութիւնը այնտեղ միշտ կրյաղթանակէ։

Երանուհի ևս այդ ներքին պատերազմով յուզուած էր, այլ նա յուսալիր հաւատում էր իւր առաքինական ոյժին և նահատակի համբերութեանը, միմիայն իւր հօր բարեբաղութիւնը ի նկատի ունենալով, որ նոյն գիշերը՝ առաւօտից մինչև երեք ժամը նստած էր կլուբում, մինչև փակման ժամու վերջին զանգակը։ Հիւրասիրում էր իշխանին, խօսելով նորա հետ ընտանեբար զանազան գործերի վրայօք, անուանում էր նորան իւր որդին։ Իսկ իշխանը Գողթունու վարմունքից քաջալերեալ և Համպանի գինուց զուարթացած, խնդրում էր, որ յառաջիկայ շաբթուն՝ իւր տօնախմբութեան օրը՝ բարեհաճի երեկոյին իրեն մօտ գալ օրիորդ Երանուհու հետ, հրաման ուղելով միանգամայն Գողթունուց, որ թոյլ տայ իրեն անձամբ գնալ հրաւիրել օրիորդին։

Գողթունի շնորհակալ կրլինէր իշխանից բոլոր իւր փափուկ դիտաւորութեան մասին, կրկին խնդրելով որ իրենց մօտ գալու համար երբէք հրամանի կամ թոյլտուութեան չսպասէ։

Այս սիրալիր խօսքերից յետոյ իշխանը մի բաժակ առաջարկեց բացակայից կենացը և, Գողթունուն իւր սեպհական կառքին մէջ առնելով, տարաւ և իւր տան դրան առաջ իջեցուց։

Լաւ վնենելով իշխան Զարեհի պատկերը, չէր կարելի հաստատ ասել, որ նա մի անսիրտ և անխելք մարդ լինի. ընդհակառակը, իւր վարմանցը մէջ ընդհանրապէս ցոյց էր տալիս և բաւականին մտաւոր կարողութիւն, որ կորցրել

էր իւր նախկին ոյժը արած քէֆերուն շնորհիւ։ Ուսում առած էր Պետերբուրգում և երկար ժամանակ էլ ապրած լինելով այդ խոնաւ և սառն կլիմային տակ, ոչ մի կերպիւ չէր կորցրել իւր տփղիսեցու եռանդուն արիւնը և յափշտակող ու հիւրասէր բնաւորութիւնը։ Իսկ իւր առած ուսման, կարելի է, մի մասին երեք քառորդը մոռացած լինէր։ Երբեմն այնպէս տգէտ էր ամենապարզ խնդիրներու մէջ անգամ, որ համարձակ կարելի էր եզրակացնել, թէ Պետերբուրգում եղած ատեն աւելի գիշերները պարապեր է ուսմամբ քնոյն մէջ, այլ ցերեկին արթնութեան ժամանակ—քէֆով. այսու հանդերձ շատ է սիրում մատենագրութիւն, գեղարուեստիւք կրկրթէ ճաշակը։ Սակայն արդէն երեսունին հասած մի մարդու մօտ, որ քէփ է սիրում, բնականաբար տկարանան ուղեղի ընդունակութիւնները և կրկորչի յիշողութիւնը, ճակտի մազերուն պէս, որք քիչ առ քիչ սկսած են մորթին վերայ լուսանցք բանալ։

Գեղեցիկ սեռին մոլեգնաբար պաշտող և հակամէտ՝ ունեցել է ինքն էլ իւր ժամանակին սիրոյ յաղթանակներ ոսկեհեր օտարուհեաց ակումբին մէջ իւր երենոսին նման սեւափայլ մազերի գանգուրներովը,—թէպէտ այժմ էլ շարունակում է, ինչպէս մի անհրաժեշտ պէտք և ունակութիւն, հետևել կանանց։ Այդ է իւր ղլխաւոր տկարութիւնն ու պակասութիւնը, որի վնասը շատ անգամ միայն ինքն է զգացել,—և այդպիսի մի պատկեր ունեցող անձ ուրիշ կերպ չէր կարող վարուել։ Սև ու մեղմահայեաց աչքերը մի տեսակ տռփանաց կայծ ունէին, աւելացրէք նոցա վերայ մի մեծ քիթ՝ շարժուն ռնդունքով, նիհար այտեր և լայն պրկանքներ։ Սակայն այդ բոլորը կարող էին և նշանակ լինել մի քաջ ու աղնիւ սրտի։

Բայց ինչպէս ենթադրել, որ այս Կովկասցի Դոն-Ժուանը, այս մեղրածուծ մեղուն, որ հազարաւոր ծաղկանց վերայ թռչկոտելով, նոցա բոյրն ու քաղցրութիւնն էր քաղել,

նոցանից հեռանալուց յետոյ յանկարծ պիտի կանգնի և հանդարտի մի պարզ և համեստ ծաղկի հովանոյն տակ այնպէս, իբրու թէ այլ ևս թևեր չունենար թռչտելու։ Եւ ով պիտի կարողանար կտրել նորա թևերը. մի՞թէ նա պիտի բաւականանար մի ծաղկի մեղրովը։ Մի՞թէ հոգւոյն սէրը այնքան զօրաւոր պիտի լինէր, որ յաղթէր անասնական զգացմանց։

Իւր կենաց մէջ առաջին անգամ նա հանդիպեցաւ մի աղջկայ, որի ազգած սէրը չէր նմանում ուրիշ կանանց մօտ զգացածին։ Այո՛, այս առաջին սուրբ սէրն էր, որ զգում էր իւր կենացը մէջ Երանուհու համար, առանց, անշուշտ, հաշուելու այն տրփանքը, որ բորբոքուեցաւ իւր մէջ՝ 20 տարեկան հասակում, գրեթէ անփորձ եղած ժամանակը,—տրփանք մի գերմանացի գերասանուհու համար, որոյ պատճառաւ քառասուն հազար լուբլին ադամանդեայ ընծաների, հանդերձանաց, ոստրէների և Եամպանի գինու փոխարկելուց յետոյ՝ հեռացաւ Պետերբուրգից, իբր յիշատակ տանելով հետը մի զզուած սիրտ, հիւծեալ մարմին ու դատարկ մի քսակ, որին յետոյ լցցնելը դժուար եղաւ, որովհետև հայրը՝ ամէն բանի տեղեակ լինելով, համառօտ կերպիւ յանդիմանեց որդւոյն։ Բայց իւր որոշումը յանդիմանութեանը պէս համառօտ չեղաւ դժբաղդաբար, և նա կրտար իւր որդւոյն այնքան դումար, ինչքան որ անհրաժեշտ էր և անվրէպ նորա կարևոր ծախքերին։ Ամենայն ջանք անհնարին եղան հօրը համոզելու, երբ ասէին թէ սորանից յետոյ որդին խրատուած է, թէ այլ ևս չպիտի հետևի կանացի պատկերով քսակաց սիրուն տղուկներին և այլն։ Սակայն նա անյողդողդ մնաց իւր կարծիքի վերայ։

Ճշմարիտ որ այնքան էլ խիստ վարուել չէր կարելի մի երիտասարդ անձի հետ. սկզբից եթէ նորան վարժեցրած լինէին խնայողութեան և ժուժկալ կեանքի, նոյնը իրաւունք

հ՝ունենային այժմ էլ պահանջկ նորանից։ Դարձեալ ծնողքն են մեղաւոր, որք սովորեցնում են իրենց որդիքը մի հեշտ կեանքի, իրենց կրքերն ու ցանկութիւնները դիւրաւ յագեցնելու փոխն առատութեամբ։ Իսկ երբ այս կեանքից վնասվում է նոցա առողջութիւնը, ծնողք դեռ ոչինչ չեն նկատում. այլ կոյր աչքերնին բացվում եւ սրտերնին զգում է ցաւ այն ատեն, երբ քսակնին է վնասվում, երբ հարկ է լինում նիւթապէս տուժել իրենց անփոյթ ոգիտութիւնը։

Իշխանի հայրը վախճանեցաւ վերջապէս (բարեբաղդաբար գուցէ), թողով իւր որդին ինքնիշխան ժառանգ բոլոր իւր հարստութեանը։ Սակայն դորանից յետոյ Զարեհ իշխանը առիթ էլ չունեցաւ յիմար ծախքեր անելու։ Ի սկզբան վայելուչ կերպով տարաւ հօր սուդը և յետոյ՝ նորա տեղը բռնելով, կարծես աւելի ծանրաբարոյ դարձաւ ու լուրջ, մանաւանդ որ նա արդէն հասած էր այն տարիքին, երբ մարդս աւելի մի հաւատարիմ և սիրող տիկնոջ բարեկամութեանը կրկարօտի, քան թէ դեղապաճոյճ սիրուհոյ վաղանցուկ և շահանկատ փաղաքշանացը։

Եւ այդ ընկերը, այդ ամուսինը նա յոյս ունէր գտնել Երանուհու մէջ, այն վաղուց երազած գաղափարական արարածը, որի սիրովը շանթահար եղած էր յանկարծ ու յանպատրաստից, — այժմ ամէն ջանք գործ էր դնում հանել իւր նպատակին։ Բայց պէտք է ասել, որ Երանուհի գրեթէ առաջին անառիկ կինն էր, որ պատահում էր նորան կեանքում. սա չէ՛ր այն փաղաքուշ սեղեխներից, որոց կարելի է հրապուրել քաղցրահոտ նամակների, ծաղկանց փնջերի անձրևով, ականակուռ ընծաների աչք և երբեմն առաքինութիւն անգամ շլացնող փայլովը։

Սակայն չէր յուսահատվում, մտածելով որ գուցէ ժամանակ անցնելուց յետոյ միտքը փոխէ, և բարեբաղդաբար էլ թոյլատրութիւն ունէր մտնել նոցա տունը, տեսնել

նորան մօտից, խօսակցել հետը.... Եւ դուցէ այսպէս շարունակ յաճախելով, կարողանար վարժեցնել օրիորդին իւր ներկայութիւնը առանց հակակրութեան տանելու.... Եւ թերևս ով գիտէ՝ ժամանակաւ վարժուելով, անհրաժեշտ համարէր իրեն համար այդ ընկերութիւնը իւր տխուր կենացը առանձնութիւնն զուարթացնելու համար.... Սրբիդ Միւսսէ ասում է, թէ կանանց սիրտը մի մոյր եկեղեցի է, Աստուծոյ սուրբ տաճարի խորանը հէնց իսկ սրտի մէջտեղն է. սակայն ինչքան անթիւ մատուռներ կան իւր շուրջը: Իշխան Զարեհ բաւական կը լինէր մի մատուռով ևս, միայն թէ թոյլ տային կամ ընդունէին իրեն այդ մոյր եկեղեցւոյն մէջ. մատուռից աւագ խորան հասնելու ճանապարհը շատ երկար չէր՝ այսինքն—համակրութիւնից դէպի սէր:

Այս խորհրդածութեամբ և յոյսերից քաջալերեալ՝ հրամայեց, որ կառքի ձիերը լծեն: Հազաւ ամենանոր համազգեստը՝ ոսկէ ծոպերով զարդարուած, ծածկեց ձեռքերը ամենամաքուր սպիտակ ձեռնոցներով և հայելիի մէջ մի ակնարկ տալուց յետոյ՝ ինքն իրենից գոհ դնաց և նստեց իւր երկձի կառքի մէջ:

Գողթունի սրդէն յայտնել էր իւր աղջկան իշխանի այն օրերը իրենց մօտ գալու դիտաւորութիւնը, և խնամակալուհին մի քանի օրից ի վեր միշտ աշխատում էր կոկիկ և վայելուչ կերպիւ հագնուիլ, որոշ չգիտնալով իշխանի ո՞ր օր գալը և վախենալով, որ Երանուհի առանձին չլինի նորան ընդունելու ժամանակ: Կէս օրից մի քառորդ ժամ անցած հնչեցին դրան զանգակը և քիչ յետոյ—իշխան Զարեհի խթանների հնչիւնը լսուեց, որ սանդուղներից կը բարձրանար:

Մի ջին դռնից ներս մտաւ՝ փոքր ինչ դունատ և մի քանի քայլ առաջ գալով՝ խոնարհուեց և մերձենալով միմեանց, ձեռք տուին, նոյնպէս և պառաւ խնամակալու-

հուն։ Յետոյ Երանուհու հրաւիրանոք նստեց սեղանին մօտ բազկաթոռին մէջ. իսկ օրիորդն իւր խնամակալուհուն հետ նորա հակառակ կողմը նստեցան։ Փոխադարձ քաղաքավարական, բայց անհրաժեշտ խօսքերից յետոյ՝ երկու վայրկենի չափ լռեցին. Իշխանը արագ շունչ էր առնում սանդուղները բարձրանալուց դադարած և ձեռնոցները հանելով։ Խնամակալուհին ձեռքը բերնին դնելով՝ երբեմն մեղմ կրհաղար, երբեմն էլ պարապ չմնալու, իւր շփոթութիւնը ծածկելու համար զգեստին ծալքերը կ'ուղղէր, բայց Երանուհի՝ աչքերը դեռին սևեռած, խօսակցութեան մի յարմար նիւթ կրփնտռէր. նոյնը անում էր Իշխանը, իւր շուրջը պատերին նայելով։ Վերջապէս երկչոտութեան քողը պատռելով, ինքը Իշխանը առաջին անգամ սկսեց խօսել իրենց տան դիրքին, օդի լաւութեան մասին։ Պատից կախուած Այվազովսկու երկու պատկերաց նկատմամբ դիտողութիւններ արաւ, որոնք բուն իսկականին իւրատիպ օրինակները լինելով, ներկայացնում էին Կոլոմբոսի ճանապարհորդութեանց դէպքերը, ասելով թէ ինքը տեսած է բուն վարպետինը,—երկու հրաշալի նկարներ, որոնք շատ վատ են լինում իւղաներկ տպուած. այդ միջոցը դրեթէ նուաստացնում է իսկականին արժէքը, և երբէք տպագրութեամբ նոցա ճիշդ գաղափարը չէ կարող տալ։— Խօսեցան նաև ընտանեկան երեկոյթների և զբօսանաց վերաբերեալ հարցեր։ Իշխանը մի յարմար միջոց գտնելով, ասաց վերջապէս Երանուհուն երկչոտ կերպիւ, տեսնելով նորա լուրջ և բռնազբօսեալ ժպիտը.

— Ներեցէ՛ք, օրիորդ, իմ համարձակութեան. սակայն ձեր հօր ազնիւ վարմունքը քաջալերեց ինձ այսօր ձեզ մօտ գալու հաճոյքը վայելել և միանգամայն հրաւիրել ձեզ իմ տօնախմբութեան յառաջիկայ ուրբաթ երեկոյին։ Եթէ ունենամ ձեզ ինձ մօտ տեսնելու պատիւը, երջանկութիւնս և երախտիքս անսահման պիտի լինին։—Այս

խօսքերը նա այնպիսի քաղցրութեամբ արտասանեց՝ գլուխը աջ ուսին վերայ ծռելով, աղաչական կերպիւ, որ ճշմարիտ դժուար էր իսկոյն մերժելը։ Երկու կանայք շուարած միմեանց երեսը նայեցան։

Խնամակալուհին, որ իւր յամառ ներկայութեամբը շատ հաճելի չէր եղած իշխանին, Երանուհու վերայ մի վայրկեան նայուածք ձգելով, իւր միահնչիւն ձայնովը պատասխանեց.

— Գիտէք, իշխան, որ Երանուհին դեռ սուգի մէջ է և շատ անյարմար կըլինի, եթէ նորան տեսնեն յանկարծ մի տօնախմբութեան մէջ. կարծեմ.....

Երանուհի տեսնելով խնամակալուհու տարակուսանքը, յարեց. — անտարակոյս որ գորանում ոչ մի մեղադրելի բան չկայ։ Սուգը մարդուս սրտումը կըլինի և ոչ արտաքին ձևերում. սակայն անշուշտ ձեզ էլ յայտնի է, որ մարդիկ այնպէս չեն մեկներ. մարդիկ սովոր են արտաքին երևոյթից դատել ամեն բան.....

Գողթունի՝ որ սրահ մտած ատեն լսած էր այս վերջին խօսքերը, բարձրաձայն ու սիրով ողջունեց իշխանին և ձեռքը նորա ուսին վերայ դնելով՝ դարձաւ Երանուհուն ու ասաց գոհունակ ծիծաղով.

— Մի՛ վախիր, աղջի՛կս, մարդիկ կարող են անվայել համարել, երբ տեսնեն սգաւորին օտարների տան կամ հասարակաց զբօսավայրերի մէջ։ Սակայն մի եղբօր, մի բարեկամի տան մէջ քո ներկայութիւնը ոչ ոք իրաւունք չունի մեղադրելու, որովհետև ես հաւատացած եմ, որ իշխանը մեզ համար մի բարեկամ է.... և մինչև անգամ յոյս ունիմ, որ շուտով ինձ որդի էլ լինի.....

Երանուհի և մինչև իսկ իշխանը՝ սաստիկ ամաչելով այս խօսքերից, կարմրեցան. առաջինը—շանթահար, իսկ երկրորդը ուրախութիւնից ևս, որն որ զսպելով՝ երախտագէտ նայեցաւ Գողթունուն, յետոյ օրիորդին դառնալով ասաց.

— Դուք, անկասկած, լեռվին իրաւունք ունիք վարուելու այնպէս, ինչպէս որ պատշաճ կը դատէք. բայց այսքանս միայն թոյլ տուէք ինձ ասել, որ իմ տօնախմբութեան երեկոյին ձեր բացակայութիւնը կարող է իմ տունս էլ այնքան սգով լցնել, որքան այժմ ձեր սիրտը։ — Եւ 'ի վերջոյ վախենալով, որ Երանուհի ժամանակ կ'ունենայ նորից մի մերժողական պատասխան տալու, իսկոյն լռութիւնը ընդմիջեց և դառնալով Դոկթունուն՝ խնդրեց նորանից, որ երեկոյին բարեհաճի գալ կլուբ. յետոյ իւրաքանչիւրին ողջունելով, ասաց ցտեսութիւն և մեկնեցաւ։

Իշխանի մօտ իւր տօնախմբութեան օրը՝ բայի մի քանի հեռաւոր աղգականներից ու ծանօթներից, ուրիշ ոչ ոք չպիտի գտնուէր։ Իշխանը ցանկանում էր Երանուհուն ծանօթացնել նոցա հետ, մանաւանդ մօրաքրոջ հետ, որ մի զուարթաբարոյ պառաւ էր, որպէս զի Երանուհու և նորա մէջ սերտ յարաբերութիւն հաստատէ, կարողանայ աւելի ստէպ օրիորդին հետ տեսակցելու առիթներ ունենալ և մի կերպիւ փութացնել հարսանիքը։

Հայրն էլ եռանդեամբ սպասում էր այն օրին, սակայն արտաքուստ շատ լուրջ և ծանր էր բռնում իրեն։ Մինչև սանդուղի գլուխը իշխանին առաջնորդելուց և ուժեղ նորա աջը սեղմելուց յետոյ՝ սրահ վերադարձաւ. բոլոր դէմքովն ու ձևերովը գոհունակութիւն էր արտայայտում։ Ձեռքերը միմեանց շփելով, մէկ երկու շրջան արաւ սրահին մէջ ու աղջկանը մօտ մի բազկաթոռի մէջ ինկնալով, ուրախ ձայնով ասաց.

— Էհ, աղջի՛կս, կարծեմ իշխանը այնքան երկիւղալի մի երեւոյթ չունի, որքան որ դու կարծում էիր. վատ տղայ չէ՛... լաւ է, լաւ է, ինչպէս որ ասում են Տփղիսում։ Սակայն լաւիք ընդհանրապէս լաւ մարդիկ են լինում, միայն հարկաւոր է հետերնին վարուելու կերպը լաւ իմանալ, օրինակ. պէտք չէ մերժել իւր հրաւէրը.... յիմարութիւն կլինի մեր կողմից, եթէ....

Երանուհի նայում էր պատուհանից դուրս, բոլորովին տարբեր մտքերով զբաղուած՝ առանց լսելու հօրը խօսքերը, երբ խնամակալուհին ընդմիջեց, ծանուցանելով թէ նախաճաշիկը արդէն պատրաստ է։

V.

Երանուհի այն փափուկ և երազացնող տարիքին մէջ որոշեց վերջապէս իւր սրտին սլացմանց և յոյսերին փականք դնել և ոտքի տակ կոխոտելով հոգւոյն բնիկ և իրաւացի պահանջները՝ միմիայն իւր որդիական պարտքը կատարելու դիտաւորութեամբ իշխան Զարեհի կինը դառնալ։ Սակայն վաղուց իւր մէջ յուզուած տարբեր և խառն զգացմանց պատերազմիցը սաստիկ վնասուած էր խեղճին առողջութիւնը, իւր դէմքի այդ անոյշ և թափանցիկ դալկութիւնը սկսել էր կանաչ երանգներ դոյացնել երեսի ոսկորոտ մասերին վերայ։ Նարժմունքը դանդաղ և մեղմ էին, խօսքերը — սակաւ։

Հէնց իսկ իշխանի տօնախմբութեան օրը՝ ի սրտմտութիւն իւր հօրը, ինքն իրան շատ վատ էր զգում և ընայելով հօրը, մանաւանդ իշխանին անդադար թախանձանացը, չկարողացաւ անկողնից դուրս գալ և գնալ հօրը հետ իւր ապագայ ամուսնոյն տունը։

Այսու հանդերձ հայրը գործում և կարգադրում էր ամէն բան։ Այժմ զրեթէ վստահ էր աղջկան հաւանութեանը։ Սերտ բարեկամացաւ իշխանի մօրաքրոջ հետ, նա էլ փոխադարձաբար եկաւ Երանուհուն այցելելու և երկու անգամ էլ երեկոյեան թէյի, ուր իշխանը մօրաքրոջը տուն վերադարձնելու պատրուակաւ կրգալ փոքր ինչ վաղ, ժամերով կընստէր և կրխօսէր, բայց միշտ լուրջ և զգաստ։

Ի վերջ բանի, իշխանի Ֆեցիֆոնը մօրաքոյրը և Գողթունի

այնպէս գործը կարգադրեցին, որ վերջապէս նշանի մատանիքը օրհնուեցան։ Բացի Երանուհուց բոլորը գոհ էին և ուրախ, և հարսանեաց օրը կրջանային փութացնել ընդդէմ Երանուհու պաղատանաց, որ խնդրում էր գոնէ դեռ մէկ տարի յետաձգելով հարսանիքը, թոյլ տան իրեն երկարել իւր մօրը սուգը. սակայն անլսելի եղան իւր աղաչանաց ձայնը։

Գողթունին յուսալիր և շատ բաւական սրտով աղջկան օժիտովը կրպարապէր։ Երբեմն կ'երթար այդ կնոջ տեսութեան, որը երեսուն և հինգ տարին անցնելուց յետոյ՝ սպիտակն ու կարմիրը առատօրէն գործ ածելով, կ'ուզէր տասը տարի աւելի պակաս ցոյց տալ։ Նա խիստ կրվարուէր Գողթունու հետ — բարձրահայեաց, քիչ անգամ փայփայող. սակայն կ'ուզէր մի ժամ առաջ դառնալ նորա կինը.... Երկուքն էլ միմեանցից ակնարկութիւններ ունէին, բայց բոլորովին տարբեր տեսակէտով։ Այդ գոռող և խորամանկ մարդը՝ իւր կրիցը և անցելոյն գերի, մի սողացող ղեռուն կրդառնար այդ գիշատիչ ագռաւի ճիրաններին մէջ։ Նրբամիտ կինը, երևի, լաւ էր ճանաչում նորան, շատ լաւ տեղեակ էր նորա խակութեան, քան մի ուրիշը։

Շատ նեղ պարագաներում Գողթունի խորհուրդ կրհարցնէր նորանից, մինչև անգամ աղջկանը հարսանեաց կարգադրութեան մասին.... Բայց վերջերումս չէր կարողանում գնալ ստէպ նորա տեսութեան, սաստիկ զբաղուած լինելով ցերեկ ու գիշեր թէ՛ տանը մէջ և թէ՛ գործարանին վերաբերեալ գործերով։ Պետերբուրգից ստացել էին արդէն օժտին վերաբերեալ ամենայն առարկայք, Մոսկուայից — մետաքս, թաւիշ և այլն։

Մի շաբաթ ժամանակ էր մնացել հարսանեաց։ Պատրաստ տպուած էին ոսկեգիր հրաւիրատոմսերը, որոց պահարանին վերայ Գողթունի հասցէն կրգրէր, նստած գրասենեակում, երբեմն հաշիւները աչքէ անցուցանելով։ Գի-

շերուան ժամը տասը լրացել էր, իսկ նա մոռզբաղ չէր զգում ժամանակին այնպէս արագ թռչելը, մանաւանդ որ այն օրուան արած զանազան երթևեկութիւններիցը դադրած էր և նստած հանգիստ կրպարապէր։

Գրասենեակում բացի նորանից ոչ ոք չի կար. արդէն գրագիրը արձակուրդ առնելով՝ գնացել էր Գօրի ծնողացը տեսութեան։ Գործարանը, ուր շատ անգամ գիշերներն էլ գործէին, այն օրը փակ էր բոլորովին, և գործաւորք ու ծառայք, անշուշտ առթից օգուտ քաղելով, գնացել էին ոմանք զբօսնելու, այլք տան մէջ եղած պատրաստութեանց կ՚օգնէին։ Գրասենեակի ծառան ուղարկուած էր զանազան տեղեր յանձնարարութիւններով։ Գողթունին նորան կրսպասէր, որ տուն վերադառնայ։

Սաստիկ էր ցուրտը։ Աղան վեր կացաւ և մի քանի փայտ ևս նետեց կրակարանին մէջ, յետոյ կրկին իւր տեղը վերադառնալով, ծրարեց ամբողջ տոմսակները, դրաւ մի կողմ ու մի բոպէ գլուխը ձեռացը մէջ առնելով, սկսաւ ճակատը շփել, իբրև թէ մի ծանր խնդիր կամենար լուծել։

Ոչ մի ձայն չէր լսվում շրջակայքում, բացի պատուհանի կիսաբեկ ապակուց դեռի ընթացքին մեղմ մրմունջը, որ գործարանի և գրասենեկի պարսպաց ստորոտը կ՚ողողէր։ Գուցէ անիսոհեմութիւն լինէր նորա կողմից առանձինն մնալ այնտեղ գիշեր ատեն բաց գրասենեակում, բայց այդ առաջին անգամը չէր որ պատահում էր։ Հետևաբար ումից կարող էր նա երկիւղ ունենալ. ամենից սիրուած ու պատուած՝ անուանում էին բարերար տէր. ով կըհամարձակէր վնասել նորան։ Եթէ իսկ գտնուէր մի այնպիսի յանդուգն, նա էլ մի գող կարող էր լինիլ, որին ընդունելու համար միշտ ունէր լիքն և պատրաստ գրասեղանին վերայ դրուած Սմիթ-Վէսթոնի ընտիր վեցահար ատրճանակը։

Տեսնելով որ ծառան դեռ չէ երևում, ուզեց կրկին հա-

շիւնելով զբաղել մինչև նորա գալը։ Երբ ձեռը երկարեց, որ տետրակը առնէ, նոյն միջոցին յանկարծ դուռը դրսից բաց արին։ Գողթունի աչքերը դարձուց դէպի դրան կողմը և տեսնելով որ մտնողը մի օտար է, ոտք ելաւ և ձրագը ձեռքին նորան մօտեցաւ։ Երեսին գոյնը խսկոյն փոխուեցաւ, ոտից ցղուխ սկսաւ դողդղալ, ուղեց խօսիլ, այլ լեզուն չէր կարողանում գլորել բերնին մէջ։ Փորձեց երկու քայլ անել, անկարելի եղաւ և յետս ընկրկելով՝ ինկաւ մի աթոռի վերայ, աչքերը ձիգ ներս մտնող ստուերին վերայ ուղղելով։ Սա բարձրահասակ էր և նիհար, մօրուքն ու մազերն երկար և սպիտակախառն՝ մի հին կապայի մէջ փաթաթուած, կանգնել էր մունջ արձանի նման՝ այնտեղ տիրած կիսաստուեր լուսին մէջ,—միայն աչքերն էին փայլում հանդարտ, բայց վայրագ ծիծաղով։

Գողթունի յանկարծ ցնցուեց, զարթեցաւ երկիւղալի թմրութիւնից, կծկտեալ շրթունքը բացուեցան, և խռպոտ ձայնով ու զարհուրանաց զարմանօք դոչեց.—Արտաշ... Արտաշ...—Նա չորս կողմը նայեց և ինքն իրեն ոյժ տալով, վազեց գրասեղանին մօտ և դեռ ձեռքը ատրճանակին չէր տարած, երբ Արտաշ կայծակի արագութեամբ յարձակուեց և յափշտակելով ատրճանակը՝ գրպանը դրեց, վազելով դրան փականքը դրաւ և Գողթունու առաջը կանգնելով՝ ձեռքերը խաչաձև կուրծքին վերայ ծալած՝ դաշն ու հանդարտ ձայնիւ մռնչեց.

— Անդրամ, ճանաչեցիր ինձ վերջապէս. ճանաչեցիր նորան, Անդրէաս, որի կեանքը բարոյապէս սպաննելուց յետոյ՝ ուզում ես նիւթական կեանքն էլ դաւաճանել.... Չէիր գուշակում իմ գալուստը, այնպէս չէ՞.... Բայց մոռացար որ հարսանիք ունիս շուտով, և ես ինքս անձամբ եկել եմ ընդունելու իմ հրաւէրի տոմսակը քո ձեռքիցը. այսպիսի մի անկոչ հիւր չէիր սպասում, այնպէս չէ՞... հէ՞, հէ՞, հէ՞.... Ի՞նչ ես դողում. գուցէ կարծում ես, որ քեզ

սպաննելու համար եկած լինիմ այստեղ.... Չէ, իմ նպատակս բոլորովին ուրիշ է. ես եկել եմ պարզապէս տեսնուելու հետդ: Շատ հեռուից՝ Սիբիրից եմ եկել, կ'ուզեմ բայց անել կոյր աչքերդ, որ մի անգամ ևս դու քեզ ճանաչես, տեսնես անցեալդ: Եկել եմ արդար և իրաւացի վրէժ լուծելու քեզանից, խոնարհեցնել այդ անիծապարտ դլուխդ, որ մինչև այժմ պէտք էր որ ջախջախած լինէր շատ անմեղների արեան ծանրութեան տակ, որին տակաւին ուզում ես կանգուն և հպարտ բարձրացնել ուսերիդ վերայ, նորանոր ոճիրներ նեցուկ առնելով.... Պիտի աղատեմ վերջապէս մարդկային ընկերութիւնը քեզ նման մի անզգամ հրէշից, որոյ դլխաւոր զոհերն են. նախ՝ ես, յետոյ՝ իմ անպամալոյծ խեղճ հայրս, որ չկարողանալով տանել իմ դատապարտութեան լուրը, մեռաւ յուսահատ, ինձ անիծելով. երրորդ՝ իմ քոյրս՝ կորսուած, անհետացած. յետոյ—կինդ: Դո՛ւ, շատերի մահուան և աղետից պատճառ, պէտք է որ վերջ դնես քո ոճիրներիդ, պէտք է որ տուժիս բոլորին և ինձ մանաւանդ տուած հարուածներդ....

Գողթունի դիականման և դողդոջուն, կատաղաբար ձեռքերը տարաւ վզին փողապատը լայնացնելու, որ աւելի ազատ շունչ քաշէ, իսկ յետոյ մնչեց խեղդուկ ձայնով.

— Դու ի՞նչ իրաւամբ ինձանից համար և տուդանք ես պահանջում.... Ի՞նչ եմ արած քեզ, որ դաղանի նման դողունի յարձակվում ես իմ վերայ.... Ծիւա՛ղ.... քո կորստեան պատճառը դու ինքդ ես: Ես առաջարկեցի քեզ, ճշմարիտ է.... բայց դու ազա՛ռ էիր մերժելու կամ ընդունելու:

— Ազա՛ռ էի ես, ազա՛ռ էի,—բացագանչեց Արտաշ:— Եւ դո՛ւ ես համարձակվում ասել ինձ այդ բանը, դո՛ւ, անօրէն, որ այդ արբանեակ կնոջդ ինձ ազդած տուփանքովը յաջողեր էիր կաշկանդել իմ կամքը և սիրտը: Այո՛, քեզանից դեռ տարիքով փոքր, քաջառողջ էի, և արիւնը

եռում էր երակաց մէջ. մինչև այն օրը, որ քեզ հետ ծանօթանալու աղէտքը ունեցայ, ապրում էի խօթացեալ հօրս և քրոջս կողքին, պահպանելով նորանց իմ համեստ վաստակովը: Երջանիկ էի՝ սիրուած բոլորից, և Պետերբուրգի պէս մի քաղաքի մէջ յաջողել էր ինձ լաւ ճարտարապետի համբաւին արժանանալ. ամենքը հաւանում էին իմ ջրաներկերի գծագրութեանց և յատակագծերին, գովեստով էին խօսում իմ վերայ... Եւ յանկարծ մի օր դու կարծես դժոխքից վիժեցիր և կանգնեցար իմ յաջողութեան ճանապարհին վերայ, տարիր ինձ այն անարգ կնոջ տունը:

— Ո՜հ, լռէ, լռէ, մի՛ տար նորա անունը....

— Ո՛չ ընդհակառակը, պէտք է որ յիշեմ. դու և նա մի անձ էք կազմում, նորա հետ միասին հրապուրեցիք ինձ.... Հրապուրեցիք իմ արուեստաւորի անձնասիրութիւնը, գովելով իմ ջրաներկ գծագրութեանց նրբութիւնը, և մինչև անգամ մի երեկոյ յանդգնեցար ծիծաղելով ասել, որ եթէ կեղծ հինգ կամ երեք բուբլեանոցներ յօրինել ուզենայի, այնքան պիտի յաջողէր, որ շատ վարժ աչքերն իսկ չպիտի կարողանային նորան իսկականիցը զանազանել: Մի և նոյն հեգնական կերպով ասուած խօսքերը քանիցս հեղ կրկնեցիր ինձ պաղ արեամբ, երբ գործակից և արբանեակ այդ վհուկի սիրովը զբաղեալ ուզում էի վայելել նորան: Մի տափայայլ անբան էի դարձել, բոլոր ցանկութիւնս և նպատակս մի էր—ունենալ այն կնոջ, և այդ բանի միակ միջոցն էր շատ փող ունենալ. բայց ինչպէս, ի՞նչ կերպով և ո՞ւրտեղից ճարէի: Կուրացեալ և շուարեալ խորհած ժամանակս՝ դու օգուտ քաղելով իմ սոսկալի դրութիւնից, արբածի վիճակիցս, եկար կրկին իբրև չարութեան ոգի, օձի նման սկսեցիր ֆշալ ականջիս՝ համոզելով ինձ, որ կեղծ թղթադրամ շինելը մի յանցանք չէ, թէ կայսրը փող շատ ունի.... մեղքը ադքատին դողանալը չէ,

այլ հարուստին էր։ Ես կրխոստովանիմ, թոյլ գտնուելով, լսեցի քո աղետաբեր խորհրդին, միջամուխ եղայ այդ ձեռնարկութեան։ Այն ժամանակ դու ինձ օգնեցիր կնոջդ փողերով, գործատունս հաստատելով առանձին մի տան մէջ և ամեն զգուշութիւն ի գործ դնելով, որ չիմացուին քո ինձ հետ ունեցած յարաբերութիւններդ։ Յետոյ իմացայ նաև, թէ ինչո՞ւ իմ նամակաց գրութեամբ չէիր պատասխանում և թէ ինչու այլում էիր իմ նամակները.... Ունէիր նոյնպէս մարդիկ, որոնք պատրաստի շինուած կեղծ թղթադրամները զանազան տեղեր փոփոխում էին իսկականների հետ, որոնց անշուշտ քո մօտդ էիր հաւաքում, իբրև ընկեր, հէ՞... Առաջին փորձերը յաջող անցան և մի քանի անգամ տուիր ինձ իմ անարդ աշխատութեանց մի մասը, և արբանեակդ սկսում էր նուազ հակառակիլ ինձ..... Մէկ օր էլ յանկարծ, չգիտեմ ինչպէս, ոստիկանութիւնը պաշարեց իմ գործատունը, ուր միայն ես կայի պարապած իմ վատթար զբաղմունքով, ձեռքերս կապեցին և նետեցին ինձ ի բանտ.... Մի ամսի չափ տևեց դատաստանս, այն միջոցին մատնեցի քեզ դատաւորաց, բայց նոքա ոչ քո ընթացքին և ոչ մօտդ գտնուած թղթերի մէջ մի որ և է փաստ կամ մեղսակցական ապացոյց չգտնելով՝ ազատ թողուցին քեզ։ Այդ վհուկ կինը և արբանեակներիցդ երկուսը փախած, անհետեւութացած էին։ Բայց այժմ նա այստեղ է գտնվում և մատնուած ոստիկանութեան, որն որ յանկարծուստ կ'երթայ այս գիշեր թղթերը ձերբակալելու և նորան հարցաքննութեան ենթարկելու։ Անշուշտ, նորանից ինչպէս էլ որ լինի, կ'իմանան քո մասին տեղեկութիւններ, որից դու վախենալով ուզում էիր ամուսնանալ հետը, ճանկերիդ մէջ առնել ամեն մի բոպէ քեզ խայթել սպառնացող թունաւոր օձը։ Եւ յետոյ.... հօրս իմ վերայ կարդացած անէծքին մասամբ դու մասնակից ես, և ահա եկաւ այն բոպէն, որ օձը թոյնը թափէ,

որոյ միջնորդութեամբ սորանից 6 տարի առաջ ինձ այնտեղ ուղարկեցիր։ Հայրս մեռաւ.....

Գողթունի ցրտասարսուռ կրդողար և հազիւ հաղ կարողանում էր արտասանել.—ոչ, ոչ, նա չի յանդգնիլ ասել այդ բոլորը. անկարելի է այդ, սուտ է, սուտ... Այնտեղ գնալուդ պատճառը քո անխոհեմութեան հետևանքն է, դու ստում ես։

— Ո՛չ, ոչ, ընդ հակառակը, ճշմարտութիւն եմ ասում, այնպէս հաստատ, ինչպէս իմ վեց տարուայ տանջանքս ու տագնապս։ Այո՛, բանտարկուեցայ ես այնտեղ, որոյ տեսքը ամէն արդար հոգւոյ սարսափ ազդէ, այնտեղ, ուր փոխանակ սփոփիչ առանձնութեան յանկարծ ինկայ բնիկ դաւաճան ոճրագործների բազմութեան մէջ, որք վարվում էին հետս, ինչպէս իրենց հաւասարի հետ։ Սկզբում չէի կարող զայրոյթս սանձել և ամօթահար՝ արիւնս գլուխս կրբարձրանար. այդ տագնապայոյզ կեանքին մէջ հիւանդացայ.... սակայն Աստուած չկամեցաւ իմ մահս, երկար տևեց ապաքինութիւնս։ Ամենայն օր կրտեսնէի ինձ շրջապատուած եղեռնատիպ պատկերաց ստուերներով, կրլսէի հայհոյութիւնք Աստուծոյ դէմ, ամէն լոսկ յիշոցք և աղտեղի խօսքեր.... Հոգիս դժուարաւ կրհանդուրժէր այս բոլորը, և սիրտս տանջանօք կ՚ընդունէր իւր մէջ այդ տեղն դարշահոտ և ապականեալ օդը, որ ստիպուած էի շնչել շաղախեալ անիծիւք և վրէժխնդիր բողոքանօք ընդդէմ մարդկային դատաստանի։ Սակայն խեղճ հօրս զգօն խրատները, իբրև սկզբունք սրտումս արմատացած (որք առ ժամանակ զրդռում էին մի մեղսալից ջերմի կրակով), յանկարծ երևան ելան և փոխանակ իմ թշուառ բանտակցաց նմանելու՝ աշխատեցայ նորանց համոզել ի բարին, խրատել և մխիթարել, և փոխանակ զզուանքի միմիայն ցաւակցութիւն զգացի նոցա վերայ.... Սակայն մի նպատակ ունէի, մի յոյս, այն էր՝ փախչել կալանքից և հօրս գերեզմանին

վերայ երդուեցայ՝ քեզ գտնելով, վրէժս առնել.... Հինգ տարիներ անցան, տանջանաց ու անձկութեան հինգ տարիներ, բայց ես յոյսս չէի կտրում.... Մի երեկոյ՝ դաշտային աշխատութիւնը աւարտելուց յետոյ՝ կալանաւորաց խումբը, որ քառասուն հոգւով էր բաղկացած, ի բանտ վերադառնային, և դրան մօտ ըստ սովորութեան երբ կրկին համարելով ներս թողնէին մի առ մի, փոխանակ քառասունի դտան միայն 39 հոգի. քառասներորդը անհետացել էր: Այն ժամանակ միայն յայտնի եղաւ փախուստս, բայց ես արդէն շատ հեռու էի:

Աստուծոյ միայն յայտնի է, թէ ինչ քստմնեցուցիչ երկիւղ, հոգ ու տառապանք եմ կրել, ինչ արգելքների եմ յաղթել, մինչև որ ինձ որոնողների սահմաններից դուրս ելայ, նոցա հսկողութիւնից կարողացել եմ ազատել ինձ: Ոչքա՛ն խորամանկութիւն և զգուշութիւն եմ ի գործ դրել քո մասին տեղեկութիւններ առնելու, միով բանիւ քեզ գտնելու համար.... Եւ վերջապէս իմացայ, որ այդ դիպուածից յետոյ՝ գուցէ ամաչելով կամ արբանեկիր հնազանդելով, եկել ես այստեղ, քաղաքացի ես դարձել, կնոջդ փողերը լեռվին կողոպտելով (որ իբրև օժիտ և աղջկանը պահում էր), հիմնել ես այս գործատունը և արտաքին պաշտպանողական ձևերով ու բարեգործի կեղծ վարմունքով, շատերի առաջ պատիւ և յարգանք ես ունեցել... Ահա մի տարու մօտ է, որ հետևում եմ քեզ քայլ առ քայլ, դիտելով բոլոր վարմունքդ և յարմար ժամանակի սպասելով, որ յայտնուիմ աչացդ: Այստեղ իմ ուխտս կատարելուց յետոյ՝ պիտի գնամ Տփղիսից, որպէս զի կորած քոյրս որոնեմ և գտնեմ: Բայց նախ պէտք է, Անդրէաս, որ քեզ հետ վերջացնեմ հաշիւները:

Անդրէաս, այսինքն Գողթունին, զարհուրանաք, ակռաները պինդ սեղմած, մինչև վերջը առանց շունչը ազատ առնելու, լսում էր Արտաշի արած պատմութիւնը, որոյ

փրփրած բերանից կայծակի նման ինկնում էին բառերը, դողում էր բոլոր մարմնովը։ Սակայն զգալով իւր մեծալուտ կորուստը, ուզեց մի վերջին փորձ անել, դիմելով Արտաշի բնական գթասրտութեանը, և մի երկչոտ շան կաղկանձող ձայնով և աղաչական հայեացքով՝ նայեց Արտաշին և ասաց.

— Կարող ես ինձ սպաննել, թալանել, պատառ պատառ անել, կարող ես վերջապէս լիովին օգտուիլ առանձին, անօգ վիճակիցս, գիշերուայ մթութիւնից։ Բայց դու մոռացար, որ ես մի աղջիկ ունիմ.... և դու, կորցնելով հօրը, կարող ես պատճառ դառնալ աղջկանը մահուան։ Գիտես, որ նա հիւանդոտ է արդէն, և մի քանի օրից պէտք է հարսանիքը կատարուի։ Արդէն ամենը պատրաստ է. ի՞նչ պիտի ասեն մարդիկ, եթէ նորա և իւր հարսնեաց խորանին մէջտեղ գտնին իւր սպաննած հօր դիակը.... Մտածի՛ր մի անգամ այն ողորմելի աղջկան վիճակը. ի՞նչպէս պիտի կարողանայ տանել այնուհետև այդ ամօթն ու ցաւը, ինչպէս....

Արտաշի յանկարծական բուռն մի ծիծաղը Անդրէասի կոկորդի մէջ ձայնը կարկեց։ Արտաշ ուղիղ և ցասկոտ նորա աչաց մէջ նայելով, մռնչեց.

— Է՜հ, բաւական են կեղծաւորութիւն և նենգ։ Կարծում ես, որ ինձ էլ կարելի՞ է խաբել. կարծում ես, չգիտե՞մ որ աղջիկդ հակառակ իւր ցանկութեան և կամքին ուզում ես հնազանդեցնել քո ցած շահերիդ համար, բարի հայր ձևանալով, ինչպէս որ միշտ բարի տէր ես ձևացել, միամիտներին խաբելու ու բարեգործի դիմակին տակ դայլի բէխդ ծածկելու համար.... Կարծում ես, թէ անտեղեակ եմ գործերիդ, չգիտե՞մ թէ ինչպէս տանդ երկու սպասուհիները բռնաբարեցիր և երեքը հարնացուցիր։ Նոցանից մինը քեզանից մի զաւակ ունեցաւ, որ խեղճն անելուութացաւ.... Այդ քո գործաւորներից լսեցի

անձամբ, որոց երկուսին դատն էլ պաշտպանել տուիր քո ծախքով՝ նոցա լռութիւնը շահելու համար, որովհետև նոքա կարող էին մի որ և է արատ բերել բարերարի համբաւիդ։ Է՜հ, ինչպէ՞ս է, հաւանո՞ւմ ես տեղեկութիւններիս. այժմ ինձ էլ կարո՞ղ ես խաբել.... յիմար կեղծաւորութեամբ, աղջկանդ ետև ծածկուելով՝ նորան պաշտպանել ձեւացնելով.... Ո՛չ, ընդհակառակն, քեզ կորցնելով, իմ նպատակս է գոնէ անմեղ աղջկանդ փրկել և քեզ դնել այդ վիճակին մէջ, որ չկարողանաս հանել նպատակդ իրագործելուն։

— Ահա՛ ուրեմն,—գոռաց Անդրէաս, երկաթէ արկղին բանալին նետելով գրասեղանին վերայ,—սո՛ւռ ահա, սա չէ՞ միթէ պահանջածդ. սո՛ւռ, գողացի՛ր.... բայց լռէ՛....

Արտաշ լուրջ բարկութեամբ ժպտելով պատասխանեց.

— Այդ խօսքը մի ուրիշի բերանից մի արիւնաղանգ նոսխատինք կարող եմ համարել, այլ քեզանից լսելը շատ բնական է։ Բայց հասկացիր գոնէ մի անգամ ընդ միշտ, որ իմ նպատակս քո փողերդ կամ հարստութիւնդ գողանալ չէ։

— Հապա ի՞նչ ուրեմն։

— Ահա այժմ կըտեսնես։

Արտաշ մի չուան առաւ, սեղմեց ակռաների մէջ և երկու զօրեղ ձեռքերով զսպելով Անդրէասի, որ սաստիկ ճդամբ կ՚ուզէր դիմադիր լինել, բռնի նստեցուց նորան բազկաթոռի վերայ և այնտեղ նորան այնպէս պինդ կաշկանդեց չուանով, որ չկարողանայ շարժիլ։ Յետոյ առնելով բանալին, բացաւ արկղը և հաւաքելով զանազան ոսկի ու արծաթէ իրեղէններ, սկսեց պատուհանից մի առ մի ջուրը գցել նորանց. ոսկի ապարանջանք, դինտեր, բրոշ և ականակուռ զարդեր, գոհարեղէնք, անձրևի պէս դեան էին թափվում մինը մուսի ետևից, մի խուլ ձայն հանելով ու պղպջակներ կաղմելով ջրին մէջ, և գետը

դարձեալ կրշարունակէր իւր անտարբեր ընթացքը, իրայ պատկանը ստացած պարտատէրի նման։

— Սոքա կնոջդ հարստութեան յետին մնացորդն էին,— ասաց Արտաշը,—որոյ մի մասը ուզում էիր անշուշտ աղջկանդ օժիտ տալ. բայց այլ ևս չկան. թաղեալ մեռելին հարստութիւնը այժմ նորա հետ թաղուեցաւ, անյայտացաւ... Այժմ գանք ամենակարևորին։

Գողթունի ոչ ձայն ունէր, ոչ էլ շարժվում էր. մի թանձր քող կարծես մթագնել էր իւր մտածելու և դատելու կարողութիւնը։ Աչքերը մեծ մեծ բաց արած՝ անստոյգ հայեացքով նայում էր Արտաշի վերայ, որ ստուերի նման մունջ ու լուռ ման դար ու շարժէր, մի սահգին հսկայի ձևերն ու մեծութիւնը ստանալով, անսողջոյդ կերպիւ քանդում ու կործանում էր Անդրէասի կեանքը, ապագայ յոյսերը, ապրուստը, միով բանիւ ամէն բան։ Զուրը իւր պաշարը առնելուց յետոյ՝ կարդը եկած էր կրակին, որ սկսեց կատաղաբար ճարճատելով սպառել ու մոխիր դարձնել հազարաւոր լուբլիների արժողութեամբ թղթադրամներ, պարտամուրհակներ, դաշնադիրք, վիճակախաղութեան տոմսակներ և մինչև իսկ հրաւիրատոմսերը,—բոլորը, բոլորը կատաղի մռնչմամբ ոչնչացնում էր բոցը։ Արտաշը կանգնած էր կրակին մօտ, իբրև մի դժոխային պաշտօնեայ, մահածիծաղ երեսով, որոյ աւելի մի խօլական երևոյթ էր տալիս բոցի անդրադարձումը, որ նա արձարձում էր 'ի վնաս Անդրէասի, նորա դոյքը պաշար տալով իւր ճարակող բոցերին։

Անդրէաս խոկալով և անշարժ տեսնում էր այս բոլորը, ամբողջ արիւնը սրտում հաւաքած. գունատ էր, բերանից ժայթքած փրփուրին նման, որ շրթանցը անկիւնից մինչև սև զգեստի ծալքերին վերայ տեղ տեղ սպիտակ բիծեր էր կազմում։ Կորսուած էր անդարձ և անյոյս... Ամբողջ գետը եթէ արցունք դառնար իւր աչքերում, չպիտի

կարողանար ամբիկ յուսահատութիւնն ու կատաղութիւնը. նոյն իսկ այդ մահառիթ բոցերի ջերմութիւնը կարող չէր ցամաքեցնել իւր արտասուքը,—զգում է, որ անցոյս կորած է։ Աչքի առաջ տեղի ունեցած տեսարանը մի երազ չէր. նա դեռ տեսնում է այրուած հարստութիւնը, սեւցած մոխրակոյտը, այնտեղ է դեռ զարհուրելին Արտաշ, անողոք վրէժխնդիրը, որ ծաղրելով նայում է նորա երեսին։ Այլ Անդրէաս, չկարողանալով այլ ևս տանել այդ քսամնելի և կասեցուցիչ հայեացքը, բոլոր թոքերի ուժովը սկսեց մռնչել, կերկերեալ և հոգեվարքի ձայնով.

— Ինչո՞ւ համար... ինչո՞ւ համար...։—Եւ արտասուաց ահագին մի հեղեղ, կարծես արեան փոխուելով, լքցվում էին լայնաբաց աչքերին մէջ, կարմրացնելով նորանց, երբ շրթունքները արտասանէին.—Անիծեա՜լ... անիծեա՜լ... ՈՒՀՀ... ի՞նչ նպատակաւ.... անօրէ՜ն...

— Հա՜, հա՛, հա՛,—գոռաց Արտաշ,—ի՞նչ նպատակաւ.... Այն նպատակաւ, որ՝ եթէ հրաշքով ազատուիս դատապարտութիւնից, այլ ևս բարեգործ չձևանաս. այն նպատակաւ, որ այսուհետև չխաբես ուրիշներին, չձևանաս կեղծ աղգասէր, խարդախ մարդասէր։ Վերջապէս այն նպատակաւ, որ ապրելով աղքատ և դատապարտուած, գոնէ մի փոքր ճաշակ կարողանաս առնել այն տաղնապայոյզ վշտերից, որ այլոց և մանաւանդ ինձ պատճառեցիր չկարողանաս էլ այսուհետև ժառանգութիւն թողնել աղջկանդ այնպիսի մի հարստութիւն, որին նա զզուանօք պիտի մերժէ, տեղեկանալով նորա աղբիւրը, և չկարողանաս մինչև անգամ կաշառել նորանց, որոնք շուտով դան քեզ ևս ձերբակալելու այն լոպէին, երբ ես այստեղից շատ հեռու կը լինիմ։

Արտաշ մի անբացատրելի կերպով ծիծաղեց, որ նմանում էր պողպատի կամ յախճապակեայ մի անօթի վե-

բայ քսուած խարտոցի, կամ պողպատի ձայնին։ Այդ ծիծաղը արմատից դողացուց Անդրէաս Գողթունու ջղերը, որ մի յետին և գերագոյն ոյժ տալով ինքն իրեն, թոթուեց իւր բազկաթոռին մէջ, իբրև թէ կամենար իրեն կաշկանդող կապերը խզելու և բազկաթոռը հետը քարշ ածելով, յարձակուիլ Արտաշի վերայ, երբ յանկարծ հաւասարակշռութիւնը կորցնելով, գետին գլորուեց մարմնոյն և բազկաթոռին բոլոր ծանրութեամբը։ Իսկ Արտաշ՝ հոգէառ հրեշտակի նման յաղթական մի վայրագ ծիծաղ արձակելով, աներևութացաւ այնտեղից։

Այս սոսկալի երեկոյից երեք ամիսներ անցան։ Մի օր Դվօրցովայեա փողոցին ճեմելեաց անցքերի մէջ անց ու դարձ անող հետաքրքիր մարդիկ՝ աչքերնին շփելով և ապուշ ու զարմանաց հայեացքով՝ տեսան տասը սուսերաւոր զինուորաց մէջ շրջապատեալ Գողթունին, այն բարերար աղան, կալանաւորի կապան հագած, ոտքերը շղթայակապ՝ հինգ ուրիշ կալանաւորաց հետ անցնելը, համարձակ և հաստատ մի հայեացք տալով իւր շուրջը։ Անզգամութիւնը դեռ նշմարվում էր այն կարծր, նիհար ու ոսկրոտ երեսին վերայ, ուր իւր վաղամեռիկ աղջկան յիշատակին անգամ չէր կարողացել ցաւոց մի հետք դրոշմել, և որոյ սուգն անգամ պահելու անզգայ և անարժան էր։

1885 Թ. 16 Սեպ.
Տաղանրոգ.

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ.

ՄՏԻՐ ԿՈՒՍԱՍՏԱՆ.

Մօրդ համբոյրներով այտերդ են շիկնած,
Երկնային ոսկւով նուրբ մազերդ օծած.
Եւ գունատ մարմնով զինչ շուշան, ծաղկունք,
Ոտից մինչ ՝ի գլուխ քաղցր ես, երդոց խունկ.
Այլ թէպէտ լինիս ամաց վեշտասան՝
Մտիր կուսաստան:

Հաղուագիւտ բոյսերն խնամքով միշտ պահուին,
Որ չլինի տաքից, կամ ցրտից վնասուին.
Բայց քեզի նրման բոյսիկն՝ որ հաղիւ
Տեսել է գարնանց մի շատ փոքրիկ թիւ՝
Որոյ լոկ վայել է գրախտ և բուրաստան,
Մտիր կուսաստան:

Այն պարզ, անթառամ ժըպիտն որ ունիս,
Նրման երկնային հոգւոց, նազելի՛ս,
Քոյրերն քո, եղբարք, որոց թողել ես,
Կրկին նոցա մօտ դառնալ թէ չուզես,
Գիտցի՛ր, որ յերկրումն իշիւէ չար սատան,
Մտի՛ր կուսաստան:

Անցեալ հոգեղէն կենացըդ վայելք
Թողել են քո վրայ անջնջելի հետք.
Ո՞ր անդութ սիրտը վասն իւր հաճոյից
Մահացրել է քեզ 'ի կեանս այս թախիծ,
Որոյ անորոշ, մութ է ապագան.
Մոլոր կուսաստան:

Մեր իւրաքանչիւր սէրն երբ յաղենայ,
Կարծես մի հրեշտակ յերկինս մահանայ.
Յաշխարհ գայ բռնի մարմնով սիրաւանդ,
Յղանայ ի ցաւս մեղսակիցն արգանդ,
Եւ հրեշտակըն մարդ դառնայ յետ անկման.
Մոլոր կուսաստան:

Արարիչն Աստուած իւր փառքիցն անհուն
Երբ մարդուն նուիրէր ի դրախտ ի դարուն,
Նախապէս ասաց. «որ զդոյշ լինի
Ուտել զարգելեալ պտուղըն սիրայնի»...
Օձի խորհուրդ է ծնունդը մարդկան.
Մոլոր կուսաստան:

Չի կոյ մի ծաղիկ, վարդ մ'անուշահոտ,
Որ առանց աղբի դարշաբոյր ցեխոտ
Սնանի ու բուրէ, ժպտի երփներանգ,
Ճոխ բնութեան դառնայ հարս և զարդարանք.
Փառութիւն սիրեն մարդն ու ծաղկաստան.
Մոլոր կուսաստան:

Շատ հեղ էլ մարդոս, նրման Համլէթի,
Խոկմանց, վշտերու կրգատապարտի.
Խմելով ծծէ մրուրըն բաժակին,
Եւ երբ հասկանայ կեանքն ու նորա գին,
Ցոյց տայ անմեղին փրկութեան ճամբան.
Մոլոր կուսաստան:

Եւ ինչո՞ւ իրօք կեանք տալ թշուառին,
Գուցէ առանց նրա ցանկութեան, կամքին,
Ու գլորել նորան ի մահիճ վշտաց,
Որ յառաջաստում ի քիրտ տրփանաց
Յաղենայ գրգիռն մեր վայրկենական.
Մոռ՛ր կուսաստան:

Շուտ հասնի ժամը, յոր կեանքն էլ խաղաղ
Խեռ կրից եւ զգացմանց դառնայ դառըն խաղ.
Մի ժըպիտն անթիւ արցունքով, ցաւով
Հարկադրի զընել, եւ կենաց ի ծով
Մահն է սառնասիրտ լոկ մեր ապաստան.
Մոռ՛ր կուսաստան:

Այս աշխարհում միայն կրքերն տան պսակ
Ունակութեանց բիւր, լերբ եւ անառակ.
Նենգ, ատելութիւն, զըպարտանք, ոճիր,
Մարդու միտքն-հոգին ծալլեն ի կնճիռ,
Չի դժոխք այս տեղ է դրած իւր պատուանդան.
Մոռ՛ր կուսաստան:

Արդեօք պիտ լինի՞ս այնքան բաղդաւոր
Գտնել սիրոյդ մէջ դէթ մի ուրախ օր,
Կամ զաւակիցդ երբէք պիտ խնդա՞ս.
Գուցէ դեռ գրկումդ նորա մահն ողբաս,—
Միմեանց շո՛ւտ մօտ են շիրիմն եւ օրրան....
Մոռ՛ր կուսաստան:

Թէ մի մարդ հարուստ, այլ ծեր եւ անպէտ
Քեզ ընկեր ընտրեն, հնազանդիս թէպէտ,
Այլ սրտով սիրես պատանին դողտրիկ.
Բնական է այդ... բայց... քեզ կոչեն պոռնի՛կ....
Իրենց մեղքն մոռցած՝ քեզ միայն վա՜յ կըտան.
Մոռ՛ր կուսաստան:

Կամ նրման իբրև մի նոր Ժիւլիթի՝
Գանես Թօմէօդ ընտրեալն քո սրտի.
Երբ ի սէր, ի յոյս լոգանաք միասին,
Նոքա տեղի տան իսկոյն զզուանքին,
Զի հեշտութիւնք սէրն դընեն ի դամբան.
Մտի՛ր կուսաստան:

Ինչ որ ես, ջանա նոյնը մընալ միշտ,
Երկնային սիրով՝ կուսութեան նաժիշտ.
Մի՛ գերեր անձրդ երկրիս կրքերուն,
Զի՝ նոքա փոխեն զանմեղն զուարթուն
Անկեալ մի ոգւոյ, սեգ ամբարտաւան.
Մտի՛ր կուսաստան:

Կ'ուզէի սիրուիլ.... սիրել կոյսդ ամբիծ,
Զը սարսափէի թէ ապագայից.
Բայց սիրոյ կրակը գուցէ մեզ խանձէր
Եւ հաճոյքի տեղ տար անբոյժ խոցեր,
Արեամբ ներկելով պրսակդ հալսնական....
Մտի՛ր կուսաստան:

Դորա համար իսկ չի պահանջիցի
Ո՛չ սէրդ և՝ ոչ քոյ կիրք կանացի.
Ապաւինում եմ ես անմեղ հոգւոյդ,
Փափաքիմ նորան ապատել ի փոյթ
Երկրից, ուր չի կայ սիրոյ հրուանդան.
Մտի՛ր կուսաստան:

Ահա և վանքի զանգակներն հնչեն,
Ի սփոփանս, յաղօթս նոքա մեզ կոչեն.
Կաճեայ սառն ոլմունք տաճարին սրբոյ
Զովացնեն միշտ կիրքն ու սրտերի բոց,
Ուր քեզ արժանի կայ աղօթարան.
Մտի՛ր կուսաստան:

Դու փորձութիւնից կըմնաս այնտեղ զերծ՝
Կուսական համեստ հաղած ըզհանդերձ.
Քո աղօթից մէջ յիշէ ինձ, ով կոյս,
Թէ հէգ այս կեանքում, թէ շիրմից յայնկոյս,
Ուր մղէ մեզ հնձող գերանդին մահուան.
Մտի՛ր կուսաստան։

Երբ արփիափայլ թեւերդ էլ պարզած
Բարձրանաս, դիմես յերկինս առ Աստուած,
Յիշէ ինձ կրկին Բարձրելոյն առաջ,
Հաղորդէ նորան մեղացն իմ հառաչ,
Ցոյց տուր լուսահետ ինձ երկնից ճամբան.
Մտի՛ր կուսաստան։

27 Յունիսի 1885. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ։

ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔ.

Աշխարհիս վերայ մէկը կար միայն,
Որ ինձ սիրում էր հոգւով անարատ.
Նա իմ մայրիկն էր, իմ անուշ Աղին,
Հոգուս ու մարմնուս ծնողն հարազատ։

Միտքս թռչում է միշտ դէպի երկինք,
Երբ որ յիշում եմ մայրիկիս անուն.
Այդ նորանից է, որ չեն երկրային
Ոչ նորա ըստինք, ոչ նորա լեզուն։

Նա ինձ կաթ տուաւ, տուաւ և լեզու,
Մինը քան զմիւսն աւելի անուշ.
Մէկով իմ փափուկ մարմինն էր սնվում,
Միւսով զարգանում իմ հոգին քնքուշ։

Ի՞նչ կայ այնքան քաղցր ու սնդարար,
Որքան անարատ կաթն է մայրական,
Ո՞վ կարէ խօսել այնպէս սրտաբուղխ
Ինչպէս որ մայրն է թոթովում մանկան։

Կարծես հիմա էլ տեսնում եմ մօրը.
Ես իբրև մանուկ գրկումն եմ ահա.
Նուրբ շրթունքներիս զարկում է մատով,
Որ իւր հետ ձայնեմ «ադա՜» կամ «ատա՜»։

Ես թոթովում եմ. հրճվում է մայրը,
Իմ մէջ տեսնում է շնորհքի նշան,
Զար աչքից ազատ պահելու համար՝
Վերաս կարում է պէսպէս թալիսման։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ։

ՅԻՄԱՐ ՈՉԽԱՐՆԵՐ

(առակ մեծերի համար).

Շատ, շատ տարիներ սրանից առաջ լեռնաւանդ երկրներում ապրում էր մի խաշնարած և Աստուծոյ ողորմութեամբ ապրում էր բաղդաւոր ու երջանիկ: Միշտ առողջ, միշտ ուրախ և գոհ իւր ճակատագրից, նա սիրում էր իւր ոչխարները, իւր դառնուկները, փայփայում էր նոցա, պահպանում էր թշնամի գայլերի յարձակումներից և այդպէս խնամելով իւր հօտը, նա օրէ ցօր աւելացնում էր նորա թիւը, աճեցնում էր նորան.... Եւ ոչխարները հասկանում էին այդ, տեսնում էին բարեսիրտ խաշնարածի իրենց վերայ ունեցած հոգսը և իրենց ոչխարային սրտի խորքերում տածում էին դէպի իրանց հովիւը սիրոյ և երախտագիտութեան ամենաւառ զգացմունքները: Եւ ինչպէս կարող էին նոքա ապերախտ մնալ դէպի իրենց միակ պաշտպանը.... Ճշմարիտ է, որ այն հին, անցած-գնացած ժամանակներում ևս, ինչպէս և մեր օրերում, ոչխարները չունէին բախտաւորութիւն մարդկային սեռին պատկանելու, և ուրեմն նոցա երախտագիտութեան զգացմունքը այնքան նուրբ և զգայուն չէր, ինչպէս մերը, բայց այնու ամենայնիւ նոքա լաւ էին տեսնում և հասկանում, որ իրենց խաղաղ և անպորը կեանքի, իրենց երջանիկ և ուրախ օրերի միակ պատճառը—իրենց խաշնարածի քաջութիւնը, խելքը և բարի սիրտն էր, և մանաւանդ, որ այդ բաղդաւոր ոչխարները ամէն րոպէ կարող էին համոզուել երևոյթի ճշմարտութեան մէջ.... Հարկաւոր էր միայն մի փոքր դիտողութիւն, լինի դա անգամ ոչխարային դիտողութիւն, հարևանցի համեմատելու իրենց անձնական կեանքը ուրիշ, օտար ոչխարների կեանքի

հետ, ոչխարների, որոնք իրենց խաշնարածի անհոգութեան և նորա այլ և այլ բարոյական պակասութիւնների պատճառով համարեա ամէն մի բոպէ դողում էին իրենց ոչխարային հոգիների ապահովութեան մասին։ Իսկ շատ անգամ, երբ նոքա վհատած, ուժից ընկած, անզօր պաշտպանվում էին իրենց ոխերիմ թշնամիներից, նոցա բորբոքուած ուղեղում ծագում էր մի սուր, տանջող միտք.

— Իրաւ.... ունի՞նք արդեօք իրաւունք ապրելու.... թէ.... թէ....

Եւ այդ իսկ միջոցին խեղճ ոչխարը սարսափելով վերջացնել իւր խօսքերը, փակում էր իւր յուսահատ, լայնացած, շաշ աչքերը և սարսռալով անձնատուր էր լինում գայլի արիւնահետ ճանկերին.... Գտնո՞ւմ էր նա այնտեղ իրեն մաշող հարցի լուծումը,—չգիտենք....

Ահա այդ «ունինք արդեօք իրաւունք ապրելու.... թէ....» երբէք չէր անցնում մեր երջանիկ ոչխարների մտքով, երբէք։ Նոքա ծնվում էին, ապրում էին, մեծանում էին, ծերանում էին և սատկում էին, ճշտապէս կատարելով հինաւուրց Աստուածային «աճեցէք և բազմացարո՛ւք»-ի օրէնքները և պահանջները առանց որ և է հարցերի, մտատանջութիւնների և տարակուսանքների։ Առանց երկբայելու նոքա առնում էին կեանքից միայն այն, ինչ որ տալիս էր իրենց և աւելի քաջ, քան թէ XIX դարում, երբ ոչ թէ քիչ շատ պատուական ոչխարը, այլ մինչև անգամ յետին տղրուկը և ճանճը ունին իրենց անխախտ համոզմունքը, ասում ենք, աւելի քաջ մեր հերոսները համոզուած էին, որ այդ այդպէս էլ պիտի լինի, որ երջանկութիւնը այս աշխարհումն մշտնջենական է և իրենց, ոչխարների, ճակատագիրն է, որ այդ ամէնը շատ բնական է և իբրև նոյն իսկ բնութեան օրէնք կարող չէ լինել այլապէս։

Եթէ մինչև անգամ մէկը աշխատէր ձգել նոցա ոչխա-

բային սրտերում տանջող երկբայութեան սերմը, մենք հաւատացած ենք, որ նորա, այդ մէկի, ջանքերը կրնային ապարդիւն և մեր բաղդաւոր, երջանիկ ոչխարները՝ պինդ ծիծաղելով հարցնողի երեսին, անպատճառ կ՝ասէին.

— Արդեօք առո՞ղջ էք, պարո՛ն....

Եւ այդ «արդեօք առո՞ղջ էք, պարո՛ն» այնպէս կծու, այնպէս հեգնօրէն արտասանում էին համոզմունքի տէր և բաղդաւոր համարուող ոչխարները, որ հարցնողը սկսում էր տեղն ու տեղը կարմրել և ամաչելով խոստովանում էր, որ, իրաւ, այդ ջանքերը և անտեղի են և յիմար....

Եւ այսպէս ուրեմն երկբայող պարոնը հիւանդ է և մեր ոչխարները բոլորովին, բոլորովին բաղդաւոր....

Բայց «ամէն սկզբունք ունի իւր վախճանը» — ասած է դեռ հին ժամանակներում և այդ փիլիսոփայութեան ճշմարտութիւնը զգացին տարաբախտաբար և մեր ոչխարները:

Անցան բաղդաւորութեան, ապահով երջանկութեան օրերը և անդարձ տարան իրենց հետ ժամանակով խելքը, բարեսիրտ խաշնարածի, և՛ խելքը, և՛ քաջութիւնը, և՛ բարեսրտութիւնը: Մերացաւ, պառաւեց խեղճը, ընկաւ ուժից, կամայ-ակամայ թողեց իւր պաշտօնը, իւր խնամատար հովանաւորութիւնը և քաշուեցաւ մի կողմ, հլու համբերութեամբ սպասելով ահաւոր մահուան անխիղճ մանգաղին...

Եւ մի գեղեցիկ օր մեր ոչխարները մնացին բոլորովին որբ:

Խաշնարածը մեռաւ:

Երեսի վերայ թողնուած հօտում սկսուեցան տրտունջ, անհամաձայնութիւններ, երկպառակութիւններ....

— Ի՞նչ կըլինի մեր վիճակը.... ա՜խ, ի՞նչ կըլինի մեր վիճակը, տրտնջում էին դեռ փոքրիկ, անզարգացած գառնուկները և յուսահատ նայում էին մեծերի երեսին: Մեծերը

արձակում էին մի ինչ որ է անորոշ, խուլ հնչիւն, որ կարելի էր թարգմանել և «այո» և «ոչ»-ի և մի անբնական, կեղծ, շինծու սառնասրտութեամբ դիտում էին փոքրիկ, շուարած գառների անհանգստութիւնը: Բայց այդ սառնասրտութեան, այդ կարծես անվրդով հանգստութեան տակից յայտնի երևում էր և նոցա, այդ մեծ ոչխարների, անսովոր յուզմունքը: Եւ նոքա նոյնպէս տանջվում էին այդ «աֆ, ի՞նչ կլինի մեր վիճակը»—սարսափելի, անորոշ հարցով և նոյնքան ևս մեքենայաբար դարձնելով իրենց յուսահատ աչքերը մեծ և ծեր այծերի վերայ: Վզերը ձկած նայում էին նոցա երեսին, կարծես, այնտեղ որոնում լինէին իրենց մաշող հարցի լուծումը: Եւ, երևի, ժամանակով բախտաւոր ոչխարները գտնում էին այնտեղ, այծերի մօտ, իրենց փրկութիւնը, գտնում էին, որովհետև, ճշմարիտ, այծերը այնպէս անվրդով և հանգիստ պահում էին իրենց, այնպիսի մի հպարտ արժանաւորութեամբ շարժում էին իրենց երկար մօրուքը այդ համառչխարային տագնապի միջոցին, որ մի բոպէ անգամ կարելի չէր կասկածել նոցա մեծութեան և անվեհերութեան մասին, մանաւանդ որ այդ «անվեհերութիւնը» և «մեծութիւնը» խոշոր տառերով արձանագրուած էր նոցա լուրջ, խելօք, այծային ճակատների վերայ և միայն այդ փոքրիկ անհեռատես գառներն էին, որ չէին տեսնում այդ և 'ի զուր ընկնում էին յուսահատութեան և անվերջ տարակուսանքի մէջ:

— Էհ... չէ՞ք տեսնում... ի՞նչ է... մենք ենք ձեր միակ յոյսը և ապաւէնը... մենք ենք... միայն մենք... կարծես ասում էին այծերը մի այնպիսի վճռողական եղանակով, որ չէր պահանջում ոչ բացասական պատասխան և ոչ զանազան անտեղի «բայց»-երի, «'ի հարկէ», «սակայն»-ների և այլն....

— 'Ի հարկէ, դուք էք... միաբերան պատասխանում

էին արդէն ծերացած, փորձառու ոչխարները և յանդիմանօրէն նայում էին փոքրիկ, անխելք, շաշուած լակոտների վերայ։

— Դուք էք.... միայն դուք....

Եւ սակաւ առ սակաւ վախը, յուսահատութիւնը և մաշող, տանջող երկբայութիւնը հեռանում էր, անհետանում էր նոցա սրտերից և այնտեղ կրկին տիրում էր ճիշտ ոչխարային անվրդով, երջանիկ, խաղաղ անդորրութիւն։ Իսկ այծերը ինքնահաւան բաւականութեամբ շարժում էին իրենց երկար, սրածայր, սպիտակ մօրուքը։

— Ահ, ի՞նչ կրլենի մեր վիճակը, ա՜խ, յանկարծ լսվում էր լռութեան մէջ անվորձ, վախկոտ գառնուկների բոլորովին անտեղի տրտունջը....

— Այծերն են մեր փրկիչները.... այծերը, ընչասպառ գոռում էին ոչխարներից աւելի հեռատեսները և ցոյց էին տալիս այծերի վերայ։

— Ա՜խ, ի՞նչ կրլենի մեր....

— Այծերը, այծերը, այծերը, անընդհատ լսվում էր ամէն կողմից։

— Բայց ախր մենք....

— Այծերը և մենք ձեռք ձեռքի տուած, եղբայրական սերտ կապերով կապուած... սկսում էին ոգևորուած մի ինչ որ ինքնամոռացութեան, զանցառութեան մէջ ոչխարները և ծածկում էին իրենց աղաղակներով գառնուկների թոյլ, անզօր ձայները և հիծկլտանքը....

Եւ կրկին այծերը անվրդով, ինքնահաւան շարժում էին իրենց երկար, սրածայր մօրուքը....

Անցան օրեր, ամիսներ, և գառնուկները առաջին անգամ չէր, որ տխուր, յուսաբեկ, ճմլուած սրտով յիշում էին իրենց մեռած խաշնարածին։ Ինքնավար այծերը, որոնց

հեռատես և փորձառու ոչխարները ընտրել էին իրենց տէր և պաշտպան, 'ի դերև հանեցին հօտի յոյսերը, ապագայի բաղձանքները և ցանկութիւնները։ Օր ըստ օրէ աւելի և աւելի յաճախ կրկնվում էին Թշնամի գայլերի անակնկալ այցելութիւնները, օր ըստ օրէ սաստկանում էր նոցա անզուսպ, յանդուգն վարմունքը խեղճ, բայց ժամանակով բաղդաւոր, ոչխարների հետ, օր ըստ օրէ բաղմապատկվում էր նոցա չարաչար բռնաբարութիւնների և անմեղ զոհերի թիւը։

Դաշտում, ձորերում, անտառում՝ մութ, ամպամած գիշերները լսվում էր գառների և ոչխարների օրհասական, սիրտ պատառող բառաչումը. գայլերի արիւնաթաթախ ճանկերում էր լսվում և՝ խառնուելով մի ուրիշ անբաղդի վերջին, մահուան խռմփոցի հետ, կրկնվում էր մի հեռու, խուլ և անորոշ արձագանքով....

— Իսկ այծերը....

Օ՜.... այծերը, և ո՞վ կարող էր սպասել։ Նոքա հանդիսացան իբրև ամենաճարպիկ, քաղաքակիրթ այծեր։ Նոքա մտերմացան Թշնամի գայլերի հետ, գրաւեցին նոցա սէրը, համակրութիւնը և անընդհատ, պարբերական զիջումների, «պօլիտիկայ»-ի շնորհիւ կարողացան պահպանել իրենց կաշին, կեանքը, հոգին, բալք ու վարքը և մինչև անգամ իրենց այծային ժողովրդական լեզուն և աւանդութիւնները։ Նոքա հրապարակաւ խոստովանում էին, որ իրենց ընտրած ինքնավարութեան և միջազգային յարաբերութիւնների եղանակը հիմնուած է ժամանակիս քաղաքակրթութեան ամենաանհրաժեշտ պայմանների վերայ և կարող չէ լինել այլապէս։

— Իրերի այժմեան դրութիւնը, նկատում էին նոքա ըստ օրէն, և բնութեան անխախտ օրէնքները ցոյց են տալիս մեզ, որ կեանքը մի անվերջ, սաստիկ պատերազմ է, ուր յաղթողը ուժեղն է, իսկ յաղթուողը—անզօրը....

օրինակ ձեզ Եւրոպան և Ասիան.... Ուրեմն եթէ ժամանակ առ ժամանակ մեր հօտից պակասում են ոչխարներ, որոնք զոհ են գնում յարդոյ դայլերի անմեղ ցանկութիւններին.... Բայց այդ իսկ լոպէին ձորում կրկին լսվում էր բառաչող ոչխարի վերջին օրհասական, խռպոտ ճիչը, և այծերը երևի աւելորդ էին համարում շարունակել իրենց պարզաբանութիւնները . . . . . .

. . . . . .

Եւ պակասում էր օրէ օր երբեմն ոչխարաշատ հօտը, անհետանում էին, փչանում էին ցեղային առանձնայատկութիւնները և դեռ, Աստուած գիտէ, ինչ հրաշքով, կենդանի մնացած, թշուառ, միշտ դողացող, միշտ շաշ ոչխարների և գառնուկների հիւանդ, լարուած, բորբոքուած ուղեղում շուտ շուտ անցնում էր միշտ տանջող, միշտ մաշող, բայց երևի և միշտ անպատասխան հարցը.

— Ունի՞նք արդեօք իրաւունք ապրելու.... թէ.... թէ....

Գ. ՁՈՒԲԱՐ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ.

(Եվրէինովից)

Սիրուն, հին Մօսուլ քաղաքում ապրում էր կրբեմն մի վաճառական՝ Մահմէդ-Ալի անունով, որին ամէնքը յարգում էին: Երկինքը օրհնել էր նորան, տալով այն բոլորը, ինչ որ մարդուս հաճելի է, ինչ որ նորան ուրախութիւն է պատճառում: Հարիւրաւոր ուղտերից բաղկացած մեծ կարաւանները, որոնց ուղեկցում էին բազմաթիւ ծառաները և ստրուկները, աշխարհիս չորս կողմից բերում էին նորան երկրիս ամենալաւ բերքերն ու բարիքը: Մահմէդ-Ալին ամէն բան ունէր. Քիշմիրի քնքուշ ու նազուկ գորգուածքներ, Հնդկաստանի ակնեղէններ, Դամասկոսի պողպատ, Արաբիայի սիրուն նժոյգներ, հեռու հիւսիսից բերած սամոյրներ ու կղնաքիներ, փղոսկր, համով-հոտով համեմներ, անուշահոտութեան առարկաներ, — ամէն, ամէն բան ունէր Մահմէդ-Ալին, ամէն բան նա ծախում էր իւր մայրենի քաղաքի փառքի, իւր և ժառանգների ուրախութեան համար: Բայց այդ ծերունին միայն հարստութիւնով չէր երջանիկ: Նա իմաստուն էր ու խելացի, և յաճախակի ինքը մեծ խալիֆը կանչում էր նորան խորհուրդ հարցնելու: Ոչ նա բայց սիրտ ունէր, բարի, պատրաստակամ և հիւրասէր էր,—այդ գիտէր համայն Արևելքը: Օտարականներից ոչ ոք չէ եղել, — ով ուզում է թող լինի նա,—որ անցած լինի Մահմէդ-Ալիի դարպասի մօտից և ծառաները տարած չլինին նորան ծերունու ամէն տեսակ առասպելական պաճուճանքներով զարդարուած գահլիճները: Մի դժբախտութիւն պատահած ժամանակ ոչ ոք չէ տացել նորա վերժումը, այլ միշտ վայելել է նորա օգնութիւնն ու խորհուրդը: Ծերունու ապարանքում ամէն

բան կարելի էր դանել, ինչ որ մարդիկ հնարել են մարմնի յարմարութեան ու բաւականութեան համար. նորա սիրտն ու միտքը միշտ այն էին թելադրում, ինչ որ կարող էր հնարել մեծ ու լուսաւոր մարդու հոգին։ Թէ՛ վաճառականներ ու զինուորներ, թէ՛ պալատականներ ու հասարակ մահկանացուներ, թէ՛ մուսուլմաններ ու այլադաւաններ, ով որ էլ դար նորան,—ամէնքը հեռանում էին, ապշած ճնալով որպէս ծեր Ալիի հարստութիւնից, ճաշակից, բնակարանի ճոխութիւնից, այնպէս էլ նորա հասարակ վարուողութիւնից, մտքի, դիտութեան ու փորձառութեան առատութիւնից։ Ով որ դուրս էր գալիս այդ հիւրասէր տանից, ինդրում էր, որ Երկնքի օրհնութիւնը այդ տան վերայ լինի, և Երկինքը խուլ չէր ճնում դէպի մարդկանց աղօթքը. ժամ ժամ հարստանում էր ծերուկը, օրէ օր մեծանում էր նորա փառքը....

.... Այնու ամենայնիւ ծերունու պարծանքը, յոյսն ու ուրախութիւնը երկու որդիքն էին, որոնք մեծանում էին տարիների ընթացքում, երբ ծերունին խոնարհեցնում էր իւր գլուխը դէպի երկիրը։ Մեծ որդին, Զաֆֆարը, բարձրահասակ, վայելչակազմ երիտասարդ էր. նորա հայեացքը անվեհեր էր, աչքերը—կրակոտ։ Այդ երկաթէ կազմուածքին տիրում էր մի անհանդիստ, բորբոք հոգի։ Մանկութիւնից արդէն նա ծարաւի էր սխրագործութիւնների, վեհութեան, արտասովոր բաների,—նա ցանկութիւն էր յայտնում ամենից առաջ և ամենից բարձր լինելու։ Ուրիշ էր միւսը, Նուրրէդինը. նորա մէջ միաձուլուած և միացած էին խաղաղ մտածողութիւն, հեզ քնքշութիւն և հոգեկան բարութիւն։ Եթէ առաջին նմանում էր կիզիչ կէսօրին, երկրորդը յիշեցնում էր մեղմ ու հանդարտ երեկոյ։ Երկուսն էլ գեղեցիկ էին և սիրուն։ Զաֆֆարը սիրում էր զէնք, փարթամութիւն, շքեղութիւն և վտանգներ, որոնցից նա միշտ յաղթող էր դուրս գալիս. իսկ Նուրրէդինը

հաւանում էր ասահղաղարդ երկինք, լայնածաւալ երկնքի տակ հեղասահ դեռ։ Ծամերով նա կարողանում էր կանգնել ապարանքի հարթ կտրին, երբ մութը պատում էր երկիրը, սուր ականջներով լսում էր գիշերուայ շշուկը և այդ ժամանակ նորա աչքերը՝ նորա խոշոր ու խոհեմութիւն արտայայտող աչքերը՝ ինչպէս լենում են առ հասարակ արևելքի աղջկերանց աչերը, մի առանձին փայլ էին ստանում,—նոցա մէջ բորբոքվում էր մի խոր միտք։ Ծերուկը հաւասարապէս սիրում էր երկուսին և հպարտութեամբ նայում էր նոցա դեղեցկադէմ և վայելչակազմ հասակին ու ազնիւ երեսներին։

— Ես կամենում եմ մեծ լինել,—յաճախակի ասում էր Զաֆֆարը իւր հօրը, և նորա դէմքը այդ միջոցին արտայայտում էր գոռ վստահութիւն իւր ուժի ու քաջութեան վերայ. իսկ ձեռքերը վեր էին բարձրանում, ասես, մի գրաւիչ, վեհ բան էին ուզում բռնել։

— Դա հեշտ բան չէ, որդեակս,—հանդիստ պատասխանում էր հայրը, նայելով որդու դանդրահեր գլխին։ Դրժուար է հասկանալ և գտնել ճշմարիտ մեծութիւն ասած բանդ։

— Ես ուզում եմ բարի լինել,—ասում էր Նուրրէդինը, նայելով փողոց, որ արեգակի անխնայ տօթից բոլորովին տաքացել էր, ինչտեղից յամր քայլերով՝ բեռնուած ուղտերի հետ, կարդ-կարդ անցնում էին գլխաբաց ստրուկներ, գնում էին ծառաներ, շտապում էին աղքատ կանայք չարսաւով ծածկուած։ Ծերունին ոչինչ չէր ասում, պատասխան չէր տալիս,—նա միայն քնքուշ հայեացք էր ձգում պատանու վերայ։

Զաֆֆարը արդէն տասն և ութ տարեկան է։ Պատերազմից դղրդուած է թագաւորութիւնը։ Պատանին վաղուց կամենում է տեսնել իրագործուած իւր երազները, որոնց

մասին համայն աշխարհս պիտի իմանար, և, լսելով եռացող արեան ձայնին, խնդրեց հօրը, որ թոյլ տայ աշխարհիս չորս կողմը գնալու։ Նուրրէդինը տանն էր ուզում մնալ։

— Ես կըվերադառնամ մեծ ու փառաւոր անունով,— ասաց Ջաֆֆարը, հրաժեշտ տալով հօրը։ Ծերունին օրհնեց իւր որդուն։

Անցաւ մի տարի, անցաւ միւսը, անցաւ և երրորդը, վերջացաւ պատերազմը... Ողջ Մօսուլը մեծ տագնապի մէջ էր — մի սակաւապատեհ, ճոխ հանդիսի պատրաստութիւն էին տեսնում։ Այդ քաղաքի զաւակը, մեծ ու հռչակուած զօրավարը այդ օրը քաղաք պիտի դար պատուով։ Անհուն ամբոխը խռնուած էր քաղաքի դրունքի մօտ։ Անուանի զօրավարի անցնելու ճանապարհը ծաղկներով ու կապերանելով էին ծածկել,—այդպէս պիտի ընդունէին քաղաքի պարծանքին, խալիֆի սիրածին, երկրին պատիւ բերողին։ Ծերունիներ ու երիտասարդներ, կանայք ու երեխայք, ամէնքը ուրախ ու անհամբեր սպասում էին նորան։ Ամբոխի առաջ կարելի էր տեսնել պատանու ուսին կրթնած մի ծերունու խրոխտ դէմքը։ Պատանին էս ուրախ ու զուարթ էր, և նորա դէմքը անհամբեր բերկրութիւն էր արտայայտում։ Դոքա Հերոսի հայրն ու եղբայրն էին....

Ահա կամաց-կամաց մօտենում է մեծ հիւրին դիմաւորողների խումբը։ Ամբոխի մէջ շարժումն է նկատվում։ Առաջ երևում է մի ձիւնափայլ, արագավազ նժոյգ, որ խրոխտ ու հպարտ փոխում է իւր քայլերը,—դալիս է նա, որին ակնկառոյց սպասում էին հազարաւոր մարդիկ։ Ամբոխը ընդունեց նորան ցնծութեան, զարմանքի բարձր աղաղակով։ Երբ նա մօտեցաւ ամբոխի առաջ կանգնած խմբին, ձին կանգնեցրեց և ցած իջաւ.... Անդորրութիւն տիրեց.... Հերոսը խոնարհագոյն բարև տուեց հօրը և ապա հարցրեց նորան.

— Մեծ չե՞մ այժմ։

— Ո՛չ, որդեակս,—պատասխանեց հայրը հաղիւ լսելի ձայնով։

Ոչ ոք չլսեց, թէ ինչ պատասխանեց հայրը, սակայն ամենքն էլ տեսան, ինչպէս մի տխրութիւն պատեց, ինչպէս արտասուքը սկսաւ կաթկթել այն մարդու աչքերից, որի հայեացքից սաստիկ շփոթութեամբ և խառնակութեամբ փախչում էին թշնամիները։ Նոքա տեսան, ինչպէս նա տատանուելով մօտեցաւ ձիան, շատ տխուր մտածմունքի մէջ ընկղմած հեծաւ և շարունակեց իւր ընթացքը։ Որանից յետոյ նա չէր լսում բերկրութեան ողջոյնները, նա չէր տեսնում ճանապարհին փռուած և իրեն վերայ թափուող ծաղիկները։ Հետևեալ օրը անհետացաւ մեծ զօրավարը, տէրութեան նեցուկը, երկրի պարծանքը.....

..... Անցաւ մի քանի տարի։ Խալիֆայի համայն տէրութեան մէջ խօսում էին մի երիտասարդ ուսումնականի վերայ, որ բժշկել էր ծանր հիւանդութիւնից հարեւան թագաւորի աղջիկը։ Ամենքը նորա գիտութեան, իմաստութեան մասին էին խօսում. ասում էին, թէ թագաւորը՝ ուրախացած լինելով, որ աղջիկը առողջացել է, առաջարկել է նորան, ինչ որ կամենում է։ Նա առել է մի կտոր աւազուտ անապատ և իւր հնարած ոռոգելու նոր միջոցով պարտէզ է դարձրել այդ տեղը և թագաւորին ընծայել։ Ահագին նահանգներ, որոնք մինչև այդ ժամանակ անապատ ու անմարդաբնակ էին, այժմ բնակութեան տեղ էին դառնում, մեծանում էր բնակիչների երջանկութիւնն և շատանում հարստութիւնը,—մի խօսքով, ժողովուրդը նորան երկնքից ուղարկուած մարդարէ էր համարում։ Ոչ ոք չգիտէր, թէ որտեղացի է նա, բայց ամենքն էլ ուրախութեամբ էին յիշում Զաֆֆարի, մեծ ուսումնականի, անունը, որի համար բնութիւնը գաղտնիք չունէր։

Խաղաղ, ամառնային երեկոյ էր։ Համեստ հագնուած մի

երիտասարդ բաղնում է Մահմէդ-Սլեի դուռը և աշխատում է ծածկել իւր դէմքը, խնդրելով ծառային, որ տանէ տան տիրոջ մօտ։ Ծառան զարմացել էր, տեսնելով անծանօթ ու խորհուրդաւոր մարդուն, բայց կրկին բերաւ նոյան մի փոքրիկ սենեակ, թէպէտ այդ միջոցին ալեզարդ Մահմէդ-Սլին քէֆ էր անում, թեկ էր ընկել փառահեղ բարձին և անուշահոտ սուրճ խմում։ Օտարականը համեստութեամբ նստաւ մօտաւ, դարձեալ դէմքը ծածկելով։ Նա ողջունեց ծերունուն։ Օտարականի ձայնը ստիպեց ծերունուն տեղից բարձրանալ։

— Ջաֆֆա՞ր։

— Ես եմ։

— Այսքան ժամանակ ինչա՞ղ էիր, որդիս։

— Դու լսած կը լինիս այն բժշկի մասին, որ բժշկել է թագաւորի դուստրը։ Լսած կը լինիս այն ուսումնականի մասին, որ նուիրել է երկրին նոր հոդեր, նոր հաստատութիւն։ Սա՝ այժմ էլ մեծ չեմ, երբ ոչնչացնող սուր ու սուսեր չեն իմ ձեռքիս, այլ խաղաղութեան օտար, երբ ամէնքը՝ առանց ազգի խտրութեան, փառաբանում են իմ անունը։

Ծերունին տխուր ու տրտում նայեց պատանու վերայ և կամաց, սակայն հաստատ պատասխանեց նոյան. Ոչ։

— Կրկի՞ն ոչ։—Երիտասարդը խոնարհ դլուխ տուեց հօրը և դուրս եկաւ։

..... Էլի մի քանի տարի անցաւ..... Մօսուլում, Բաղդադում, Հալեպում, Դամասկոսում ու Զմիւռնիայում փառաբանում էին մի նոր բանաստեղծի անուն, որ խոստանում էր դերազանցել իւր նախորդներից, ի միջի այլոց և Մահմէդ-Սլեի որդուց,—Նուրրէդինից։ Ինչպէս պայծառ լուսինը երևում է կապուտակ հորիզոնում և, սահելով, ստիպում է աստղերին կամաց-կամաց անհետանալ, իսկ մահկանացուի աչքերը, ակամայ ընկնելով նոյա վերայ, չեն տեսնում աստղերի աղօտ լոյսը, այնպէս էլ դուռնա-

տուելով աներևութանում էին միւս բանաստեղծների անունները Զաֆֆարի անուան առաջ։ Ոչ մէկը այնպէս գեղեցիկ չէր գրում, ոչ մէկը չունէր այնպիսի հարուստ առասպելական ֆանտազիա, ինչպէս Զաֆֆարը։ Նորա բանաստեղծութիւնների ճոխ լեզուն, պատկերների գեղեցկութիւնը գրաւում էին ամէնքին։ Ծերեր, հասակաւորներ, պատանիներ, ամէն ոք անգիր էր անում նորա գրուածների ընտիր տեղերը։ Ինչպէս պարզավճիտ, խոր ջրհորը անապատում, այնպէս էլ նա էր բուսականութիւն տալիս իւրաքանչիւրին իւր սրտի հարուստ զգացմունքներով, բառերի ներդաշնակութեամբ ու խորիմաստ մտքերով։ Ի զուր էին մունետիկները քաղաքի հրապարակներում գոռում-գոչում, կանչելով սքանչելի բանաստեղծութիւնների անպայտ հեղինակին, որ ներկայանայ խալիֆի դահին, ուր սպասում էր նորան փառք ու պատիւ։ Սակայն նոցա հեղինակը հանդէս չէր գալիս։ Ոչ ոք նորա մասին բան չգիտէր, բացի անունից։

Մի օր կանուխ, երբ արեգակը դեռ նոր էր ծագում, Մահմեդ-Ալիի դարպասին մօտենում է մի թոզոտ, յոգնած մարդ, կրթնած իւր ամուր գաւազանին։ Նա վայելչակազմ էր, գեղեցիկ ու ծաղկահասակ, նորա դէմքի վերայ նշմարելի էր մտքի ու ոգևորութեան կնիք։ Ծառաները իսկոյն ծանաչեցին Զաֆֆարին, և ուրախութեան ձայները սփռուեցան ողջ տունը։ Նորան տարան ներսի մարմարիոնապատ բակը։ Մէջ տեղում կարելի էր տեսնել մի շատրուան, ուր կարկաջում էր պարզավճիտ ու պաղ ջուր։ Իսկ երկնքի տեղ պատել էր գեղեցիկ ցանցի վերայ տարած բաղեղը, որ տօթակէզ միջօրէին հովանաւորում էր այնտեղ եղողին։ Այստեղ Զաֆֆարը տեսաւ իւր ծերունի հօրը, որ նոր էր վերջացրել նամազը։ Տարիների ընթացքում ծերունու մէջքը կռել էր, սակայն նորա հայեացքը առաջուայ պէս փայլուն էր, բարութիւն ու իմաստութիւն էր արտա-

յայտում, և, երբ ծառաները հեռացան, որդին ծնկաչոք հարցրեց հօրը սրտայոյզ ձայնով.

— Ա՞յժմ էլ մեծ չեմ։ Ես Զաֆֆարն եմ, որի անունը իւր գրուածների շնորհիւ դարէ դար կ'տպրի, պարգեւելով մարդկանց անդորրութիւն, բաւականութիւն և երջանկութեան լոպէներ։ Եւ հասկացայ քեզ. ամէն մէկը չէ կարող հարստանալ, բայց իմ բանաստեղծութիւնները տարուկին էլ են տալիս այն բերկրանքը, ինչ որ և դահակալ իշխանին։

Ծերունին կրծքին սեղմեց իւր որդուն, համբուրեց նորան և կամաց ասաց.—Մեծ լինելու մօտ չես։

Եւ կրկին անհետացաւ Զաֆֆարը։

..... Անցաւ երկու տարի.... Մի լուսընկայ գիշեր Մահմէդ-Ալին դուրս եկաւ իւր տան կտուրը մաքուր օդ ծծելու և հիանալու գիշերուայ խորհրդաւոր երկնքից։ Նա նկատեց ցածում մի թափառող ստուեր։ Ծերունին նայում է և դիտում։ Նա տեսաւ մի մարդ թափառական դերվիշի կեղտոտ, պատռտած շորով. սա ոտաբոբիկ էր, գլուխը բաց ու չթրաշած։ Դէմքը նկատելի չէր, իսկ ծանօթ կերպարանք էր երևում, աւելի ևս,—ծեր Ալին ծանօթ ու մօտ մարդու դէմք էր երևում, և նա յառեց իւր թալկացած աչքերը։ Այդ միջոցին նա անց ու դարձ էր անում, անկասկած, չէր իշխում բաղնել դուռը։ Ծերունին կռացաւ իւր կարան վանդակի վրայից և ձայնեց.

— Համարձակ բաղնի՛ր։ Իմ տունը գիշեր ցերեկ բաց է օտարականի համար։ Ծերունու ձայնը, որ խանդարեց դիշերուայ դերեզմանական լռութիւնը, կարծես, վախեցրեց դերվիշին։ Նա քաշուեց պատից։ Լուսնի նշոյլները ընկան նորա երեսի վերայ, և մաշուած ու թօշնած դէմքի դծագրութիւնից ծերունին ճանաչեց իւր որդուն, թէպէտ և աչքերը տկար էին, վատ էին տեսնում։

— Զաֆֆա՛ր։

— Հայր, — լսելի եղաւ ցածից.... Ես հրաժարուեցայ աշխարհիս բաներից։ Ես հասկացայ, որ հարստութիւնն էլ, պատիւն էլ—բոլորն էլ ունայնութիւն է։ Աստուծուն, միայն Աստուծուն եմ նուիրել ես իմ ուշն ու միտքը, իմ կեանքը։ Ամէն կողմից աշակերտներ են հաւաքվում շուրջս։ Ես մոռացայ ինձ այն ժամանակից, երբ հասկացայ, որքան չնչին ու աննշան բան էի հպարտութեանս ժամանակ։ Այժմ մարդիկ ինձ սուրբ են համարում, զարմացած լինելով կենցաղավարութիւնիցս։

Դէրվիշը լռեց. նա սպասում էր հօր պատասխանին։ Լուռ է Ծերունին։ Նորա դէմքը տխրամած էր. նա իւր հայեացքը բևեռել էր որդու մաշուած դէմքին։

— Չէ, — վերջապէս լսուեցաւ կտրից Ծերունու ձայնը, դու չես գտել ճշմարիտ ճանապարհը։—Այս պատասխանը շանթահարեց դէրվիշին։ Երբ Ծերունին աչքերը դէպի երկինք ուղղեց աղօթելու համար, որդին արդէն հեռացել էր.....

Կարճ միջոցում տէրութեան սոսկալի աղէտ է հասնում։ Նոր պատերազմ էր սկսուել, և խալիֆի զօրքը բոլորովին ջարդուել էր։ Նուաճուած էին շատ քաղաքներ, որոնց թուումն էր և Մօսուլը,—դոքա աւերուած էին ու կողոպտուած։ Մահմէդ-Ալին ամէն բան կորցրել էր։ Չկար հայրերի ու պապերի դիզած գանձը, չկային և ապարանքներն, որոնք հրոյ ճարակ էին դարձել, չկային նոյնպէս և ծառաները, որոնք մասամբ կոտորուել էին, մասամբ էլ գերի գնացել։ Ինքը Ծերունին վերաւորուած էր։ Տաքարիւն երիտասարդի պէս նա պաշտպանում էր իւր տունը և իւր աչքով տեսաւ, ինչպէս Նուրրէդին որդին՝ գլխին վէրք ստացած, գերի գնաց։ Ծերունին չէր ցաւում, որ հարստութիւնը կորչում է. նորա լեղին պատռվում էր, երբ մտածում էր, որ ինքը Ծերուկը միայն է մնում, երբ տեսնում էր իւր որդու անմխիթար կնոջը։ Նուտով նա տեսնելուց էլ զրկուե-

ցաւ։ Տարէ ցտարի թուլացող նորա աչքերը մատնեցին նորան, և յաւիտենական խաւարը, անջատելով նորան իրականութիւնից, կարծես, հանգստացրեց ծերունուն։ Սրտճմլիկ տեսարան էր ներկայանում, երբ կուչ եկած կոյր ծերուկը՝ անշուք շորերով անցնում էր շուկան մի մատաղահաս կնոջ ուղեկցութեամբ, որի աչերից անբաժան էր տրտմութիւնը։ Միայն լուրջ խոհականութիւնը չէր մատնել նորան։ Առաջուայ պէս իւրաքանչիւրը երկիւղածութեամբ լսում էր նորա խորհուրդները, առաջուայ պէս ամէն մէկը գնում էր նորանից մխիթարութիւն ստանալու, առաջուայ պէս ամէնքը յարգում էին նորան, և Մոսուլի բոլոր դռները բաց էին ծերունու համար։ Բայց, ինչպէս երևում էր, նա հանգիստ էր, և դիշերները միայն, առանձնացած միջոցին, երբ շուրջը անդորրութիւն էր տիրում, մէկի տան կտրին, ծնկները գրկած և գլուխը խոնարհած՝ նա տխուր ու տրտում կրկնում էր.

— Ջաֆֆար, Նուրրէդդի՜ն։

Մի օր լուսինը ծագելիս,—բայց աւաղ, նորա աչքերը չէին տեսնում լուսնի շառաւիղները,—Մահմէդ-Ալին նստած իւր բարեկամներից մէկի կտրին լսեց, որ մէկը իւր կողքին խեղդուկ ու խուլ կերպով լալիս է։ Նա կասկածում էր, չգիտէր, թէ ով է լալիս։ Անվստահ ձեռքը չորս կողմը տարաւ և կպաւ մի դանդրահեր գլխի։ Նա կարծում էր, թէ Նուրրէդդինի կինն է, դորա համար էլ սկսեց փայփայել և սփոփել նորան։ Հեծեծանքը չէր ընդհատվում։ Ծերունին շփոթուել էր և չէր իմանում, թէ ինչ ասէ. բայց կրկին յաղթեց իւր տխրութիւնը և ասաց.

— Մի՛ լար, Ալֆայիմա, մի՛ լար,—եղաւ նորա խօսքը։—Քո ամուսինը եղբայր ունի։ Նա աներկիւղ է, ուժեղ է։ Նա կըվերադարձնէ ինձ որդուս և քեզ—ամուսինդ։

Ծերունին զգում էր, որ մէկը արցունքներով թրջում է իւր ձեռքերը, որ մէկի շրթունքներ ջերմ համբոյրներով են ծածկում նոցա։

Մօսուլում մեծ և հանդիսաւոր օր էր։ Տանից վաղուց հեռացած Զաֆֆարը, Մահմեդ-Ալիի որդին, յայտնուել էր։ Դա այն Զաֆֆարն է, որին որանում էր խալիֆան վերջին պատերազմի ժամանակ, այն մեծ զօրավար Զաֆֆարն է, և բոլորի սիրտը սաստիկ բաբախում էր, որովհետև մեծ յոյս ունէին, որ նա վրէժխնդիր կը լինի, սպասում և հաւատացած էին, որ մօտ ապագայում յաղթութիւնը իրանք պիտի տանեն և երջանիկ պիտի ապրեն.... Բայց այժմ պատերազմի մեծահռչակ սխրագործութիւնները չեն ստիպում կրկնել նորա անունը, այլ մի խոհեմ, մի և նոյն ժամանակ առասպելական դժուարութեան գործ։ Զաֆֆարը, իմանալով, ինչտեղ է բանտարկուած իւր Նուրրէդին եղբայրը, մտնում է թշնամիների քաղաքը, ապրում է նոցա շրջանում, թէպէտ միշտ վտանգի մէջ է լինում, մի գուցէ զաղրւիի անցնեն իրան. անպատմելի խորամանկութեամբ մտնում է բանտը և ազատում իւր եղբօրը։ Նոցա փախուստը հապարաւոր վտանգներից էր կախուած։ Նոքա անապատներ, անտառներ, լեռներ, գետեր պիտի անցնէին, պէս պէս զրկանքներ պիտի կրէին, դաշտանների հետ պիտի կռուէին, բացի դրանից մաշուած և վէրքերից նուազած Նուրրէդինը Զաֆֆարի համար խոչընդոտ էր լինում և ծանրութիւն։ Ամէն մի բանի նա դիմացաւ, ամէն բան նա յաղթեց, և մի պայծառ ամառնային օր ամբոխը անհուն բերկրութեամբ ընդունում էր նորան շուկայում, թէպէտ հազիւ հազ կարողացաւ ճանաչել նորան։ Այդ բազմախիտ ամբոխի միջից նա մօտեցաւ մի տխուր, բայց սիրուն կնկայ ձեռքից բռնած ծերունու։ Ալֆայիման արտասուաթոր աչքերով փաթաթուեցաւ ամուսնու վզից և չէր հաւատում իւր երջանկութեան։ Լռութիւն էր տիրում ամբոխի մէջ, երբ Նուրրէդինը պատմում էր իրանց փախուստը, և պատմութեան վերջում լսուեցան ցնծութեան խառնիճաղանճ գոչիւններ ու բերկրալի խո-

սակցութիւններ։ Ծերունին ջերմ համբուրեց մեծ որդուն և մի ինչ որ բան ասաց նորա ականջին։ Զաֆֆարի դէմքը փայլեց, ինչպէս մի սիրուն վարդ, իսկ աչքերը հպարտութեամբ վառուեցան։

— Այժմ, միայն այժմ, որդեակս,—ասաց նորան Մահմէդ-Սալին,—մեծ լինելու ճանապարհին ես։ Դա քո առաջին սխրագործութիւնն է։ Դու այդ արիր ուրիշների համար, ինքդ քեզ մոռացութեան տալով։

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑԻՆ

(25 ամեայ յօբելեանի առթիւ).

Եթէ երկնային հզօր Արարիչ
Տար քեզ ձիրք, տաղանդ գեղարուեստական,
Եւ դու դառնայիր յայտնի նկարիչ,
Քեզնով հիանար ամբողջ Եւրոպան—
Մի՞թէ դու ևս ազգդ մոռացած՝
Պէտք է զոհուէիր օտարի փառաց...

Եթէ կոյր բախտը քեզ ևս ժպտար,
Դառնայիր դու հայ Կրեսոս մեծատուն.
Անթիւ գանձերիդ նախանձէր աշխարհ,
Եւ ամենուրեք թնդար քո անուն—
Մի՞թէ դու ևս պէտք է շուռ գայիր
Եւ ազգա՜ս, թշնա՜ռ ազգդ ատէիր:

. . . . . .

Բայց ո՜չ.... ով անմահ, քաղցրախօս Երգիչ,
Դու մի պարզ էակ ծնար այս աշխարհ.
Դու ծնար պօէտ—Սիրոյ քարոզիչ.
Դու ծնար ազգիդ անկեղծ սիրահար:
Եւ հնչեց քնարդ ազատ, համարձակ,
Նա ոգևորեց մեր սիրան ու հոգին,
Եւ ահա՛ այսօր յարատև քեզ կեանք
Բարեմաղթում է քո ազգի որդին:

Մոսկուա. ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ԱԳԵԻՈՍ ԻՇԽԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Կ. Գարշինից).

Մի նահանգում իշխում էր Ագեւոս անունով մի գոռոզ իշխան: Թագաւորը նորան տուել էր լիազօր իշխանութիւն նահանգի բոլոր ժողովրդի վերայ. թշնամիները նորանից սարսափում էին, իսկ բարեկամների հետ չէր էլ խօսում: Նորա ժողովուրդը խաղաղ ապրում էր, իմանալով իւր կառավարչի փառքը: Եւ հպարտացաւ իշխանը, և սկսեց կարծել, որ աշխարհումն իրենից զօրեղ և իմաստուն մարդ չկայ: Ապրում էր նա ճոխ ու փարթամ. անհամար էր նորա հաստատութիւնը, անթիւ էին ծառաները, որոնց հետ նա երբէք չէր խօսում,—անարժան էր համարում: Իւր կնոջ հետ նա լաւ էր ապրում, բայց նորան էլ խիստ էր պահում, այնպէս որ նա չէր համարձակվում ինքը խօսել, այլ սպասում էր մինչև որ մարդը մի բան հարցնէ կամ ասէ:

Այսպէս ապրում էր Ագեւոսը, ամէնքից հեռու, իւր ճոխ պալատում՝ կարծես միշտ կանգնած լինէր մի բարձր աշտարակի գլխին, իսկ ցածը, ներքևում մարդիկ լինէին կանգնած:

Մի ան օր գնաց Ագեւոսը եկեղեցի: Նա գնաց իւր կնոջ հետ պերճ շքերով. ոսկեհուռ թիկնոց, ականակուռ գօտի, իսկ նոցա գլխին բռնած տանում էին դիպակէ հովանի: Առաջից և յետևից զինուորներ էին գնում սրերով ու սուսերներով և այդպէս հասցրին նոցա մինչև եկեղեցում իրենց կանգնելու տեղը: Նոցա չորս կողմը կանգնեցին կառավարիչներն ու պաշտօնեաները: Լսում էր Ագեւոս պատարագը և ինքն իրեն մտածում՝ ճի՞շդ է ասած սուրբ Գրքումը, թէ ոչ:

Սկսեց տէր Հայրը կարդալ գիրքը և հասաւ այնտեղը, որ ասում է. «Հարուստները կ'աղքատանան և աղքատները կըհարստանան». այս բառերը որ լսեց Ագեւոսը, սաստիկ բարկացաւ և գոռգոռաց տէր-Հօր վերայ.

— Այդ ի՞նչ կարդացիր դու, սեւաւո՛ր, չե՞ս տեսնում, որ այդ սուտ է. միթէ՞ կարող եմ ես աղքատանալ:

Տէր-Հայրը ուշ չդարձրեց անգամ իշխանի ասածին և դարձեալ շարունակեց կարդալ:

Ժամասացութիւնը վերջացաւ: Զայրացած իշխանը հրամայեց տէր-Հօրը շղթայով կապել ու բանտը ձգել. իսկ այն թերթը, որի վերայ գրած էին այդ բառերը, պատռել, ոչնչացնել տուեց:

Հրամանը իսկոյն կատարեցին՝ թերթը պատռեցին, խեղճին ձգեցին բանտը: Ագեւոսը գնաց իւր պալատը ուրախութիւն անելու:

Մի օր մի պատանի քաղաքից դուրս՝ դաշտում տեսնում է մի սիրուն, աննման եղջերու և մտածում է յայտնել իշխան Ագեւոսին իւր տեսածը ու այդպէս նորա սիրտը շահել: Վազում է քաղաք, գալիս է իշխանի պալատը և յայտնում սպասաւորներին. լուրը հասնում է իշխանին, որ և իսկոյն հրամայում է պատրաստութիւն տեսնել դուս գնալու:

Իշխանը որսորդների հետ միասին դուրս է գալիս դաշտը — տեսնում է եղջերուին և ընկնում ետևից. իսկ եղջերուն հանգիստ կանգնած մտիկ է տալիս որսորդներին և կարծես մի բան է սպասում: Ագեւոսը իւր կեանքում երբէք չէր տեսած այդպիսի մի սիրուն եղջերու. զմայլուած իշխանը ընկնում է ետևից և զարմանում, որ եղջերուն չէ հեռանում, փախչում, այլ կանգնած հանգիստ մտիկ է տալիս նորան իւր մեծ աչքերով՝ կարծես մի բան է կամենում ասել:

Իշխանը մտենում է և կամենում է նիզակով տալ. եղջերուն շուռ է գալիս, թափ է տալիս իր ճիւղաւոր եղջիւրները և փախչում. իշխանը ընկնում է նորա ետևից— բայց ձին յետ է մնում:

Մի փոքր անցնում է, յետ է նայում իշխանը և տեսնում, որ որսորդները շատ են յետ մնացել: Շուռ է գալիս կրկին և տեսնում, որ եղջերուն կամաց է գնում: «Ա՜յ, այժմ կբռնեմ»,—մտածում է ինքն իրան իշխանը և ձին քշում: Դարձեալ իշխանը բոլորովին մոտեցած կամենում է նիզակով տալ, բայց եղջերուն դարձեալ թափ է տալիս իրան և փախչում: Որսորդները վաղուց անհետացել էին և դաշտումը մնացել էին եղջերուն և իշխանը:

Ամբողջ կէս օր իշխանը ընկած էր եղջերուի ետևից, բայց չէր կարողանում բռնել: Յանկարծ տեսնում է, որ եղջերուն գետի մօտ է գնում. «ա՜յ, այժմ կբռնեմ»,— ասում է ինքն իրան ու դարձեալ ձին քշում: Գետի մէջտեղը մի փոքրիկ կղզի կար փշերով ու խիտ ծառերով պատած. եղջերուն վազում է, գալիս հասնում ափը, իրան ջուրը ձգում, լող տալիս, դուրս է գալիս կղզին և ծառերի մէջ կորչում:

Ագևոսը տեսնում է այս, ուրախանում է, մտենում է ջրին, ձին քշում ջուրը: Բայց գետը խոր էր. մի քանի քայլ անում է ձին, ոտքերը կտրվում են գետնից, երևում է միայն ձիան գլուխը. «այսպէս անցնելը անկարելի է»,— մտածում է իշխանը, ձին յետ է դարձնում, դուրս բերում ափը, կապում ծառիցը, շորերն էլ հանում է, ճիւղերից կախ անում և ինքը մտնում է ջուրը: Լող է տալիս, հասնում միւս ափը, դուրս գալիս ջրից և սկսում է որոնել եղջերուին: Նայում է վերևից Աստուած և բարկանում Ագևոսի վերայ. հրամայում է հրեշտակին, որ գնայ Ագևոսի կերպարանքը ստանայ, հագնի նորա շորերը,

նսաի նորա ձին և գնայ քաղաք. և հրեշտակը կատարում է Տիրոջ պատուէրը:

Իսկ Ադեռսը այդ ժամանակ ոլոնում էր եղջերուին. խեղճը շատ դէս ու դէն ընկաւ, բայց չիմացաւ, թէ ո՞ւր է փախել: Ո՞ւր կարող էր փախչել, մտածում էր ինքն իրան, առաջը մեծ գետ է, ոչ մի գազան չէ կարող անցնել գետը և վերջապէս կըտեսնէի թէ անցնելու լինէր: Մտածեց, մտածեց, տեսաւ որ զուր է չարչարվում. բայց տեսաւ որ ոչ ձի կար և ոչ թողած շորերը: Իշխանը սաստիկ բարկացաւ այս բանի վերայ. նա կարծում էր, որ մի գող պէտք է տարած լինի ձին ու շորերը և մտքումը արդէն պատժի էր ենթարկում գողացողին: Բայց յաւալի էր նորա դրութիւնը՝ խեղճը անսովոր, ոտաբոբիկ ընկել էր դաշտով գնում, քարը ու աւազը կտրտում էին խեղճի ոտները, խոտը ծակում էր. երբէք իւր կեանքում այդպիսի օր կրած չէր: Այսպէս խեղճը գնայ բաւական տեղ, մօտեցաւ բլրին, բարձրացաւ վերան և տեսաւ, որ Հովիւը այնտեղ տաւար է արածեցնում:

— Ա՛յ մարդ,—ասայ նա,—արի՛ այստեղ:

Հովիւը նայեց վերան և շատ զարմացաւ. «որտեղի՞ց դուրս եկաւ այս տկլոր մարդը»,—մտածեց նա. առաւ մի ձեռքը մտրակ, միւսը՝ շուրն և կամաց կամաց մօտեցաւ նորան:

Ադեռսը որ նորան տեսաւ, ամպի պէս գոռաց վերան.

— Քաո՛ ես, ինչ է, ա՛յ մարդ, ինչո՞ւ չես դալիս, երբ մարդ կանչում է:

— Իսկ դու ո՞վ ես—հարցնում է Հովիւը:—Ի՞նչ ես կամենում:

— Ասա՛, ո՞վ է փախցրել իմ ձին ու շորերը:

— Ասա՛, դու ինքդ ո՞վ ես—դարձեալ հարցնում է Հովիւը:

— Ինչպէս թէ ո՞վ եմ. անպիտա՛ն, չես տեսնում, որ ես ձեր իշխան Ադեռսն եմ:

Այս որ լսեց Հովիւը, նայեց վերան ու ակամայ ծիծաղեց. «Այ յանցաւոր, ի՞նչ ես դուրս տալիս. մեր իշխանը հէնց այս բոպէիս օրսորդների հետ միասին վերադարձաւ քաղաք»:

— Այդ ի՞նչ ասացիր, ինչպէս համարձակուեցար, անպիտան,—գոռաց Աղեւոսը:

— Կորիր, գնա, թէ չես կամենում մարակիս համը տեսնել:

Բարկութիւնից Աղեւոսը չէր իմանում, ինչ անէր. նա մոռացաւ, որ տկլոր էր և ընկաւ Հովուի վերայ: Բռնեց թեւից, կամեցաւ խփել, բայց Հովիւը դուրս պրծաւ, Աղեւոսին դեռնովը տուեց և մի քանի անդամ մարակի ոյժը փորձեց վերան:

— Ա՜յ քեզ խօսքերիդ համար. այժմ գնա, ուր կամիս:

Խեղճ Աղեւոսը ծեծ կերած վիր կացաւ և կամայ կամայ հեռացաւ: Անցաւ մի փոքր, Հովիւը խղճահարուեց. «զուր տեղը էս մարդուն ես ծեծեցի»,—մտածեց նա,—«կարելի է խելագար է»:

Աղեւոսը բաւական անցել էր. յանկարծ լսեց որ մէկը կանչում է.

— Ա՛յ մարդ, յետ դարձի՛ր:

Աղեւոսը յետ դարձաւ, տեսաւ՝ Հովիւը մի ձեռքով մի բան բռնած, միւսով կանչում է նորան:

— Յետ դարձի՛ր, այդպէս տկլոր ո՞ւր ես գնում. ա՛յ քեզ այս տոպրակը, շապկի տեղ անց կացրու վերադ:

Աղեւոսը քարացել էր հեռացել. ամօթից դեռինն էր մնում: Հովիւը հանեց գօտիից դանակը. երեք տեղ բաց արեց տոպրակը վերայ. մէկը՝ որ գլուխը անց կացնի միջից. իսկ միւս երկուսը ձեռների համար, և մօտենալով Աղեւոսին ասաց՝ տոպրակը դատարկ է, պէտք չէ ինձ—միջի հայը հատել է. լաւ չէ, որ մարդ տկլոր գնայ. ա՛ռ, շապկի տեղ հագի՛ր:

Ագեւոսը ոչինչ չասաց, հագաւ տոպրակը և ուղեւորուեց քաղաք։ Ճանապարհին նա մտածում էր իւր թշուառութեան վերայ. որտեղից եկաւ այս օրը իմ գլխին. երբեմ, մի խաբերայ հագել է իմ շորերը, նստել իմ ձին ու գնացել։ Քանի գնում էր, Ագեւոսը բարկութիւնից պատռվում էր. «Ես, ես ցոյց կըտամ անպիտանին, թէ ով եմ. կըհրամայեմ հրապարակաւ գլխատել. հովուին էլ կըհանեմ»,— մտածում էր նա. բայց յանկարծ միտքն ընկաւ տոպրակը և ամօթից կարմրեց։ Այսպէս, մտքերի հետ ընկած գնում էր Ագեւոսը, մինչև որ մութը ընկաւ։ Սոխպուած խեղճը պէտք է դաշտումը գիշերէր։ Արտից առաւ մի խուրձ խոտ, դրեց գլխատակը և քնեց մինչև առաւօտ։ Ծէգը որ ընկաւ, վեր կացաւ Ագեւոսը քնից և շարունակեց իւր ճանապարհը։ Ճանապարհին տեսաւ որ մի բազմութիւն իւրեանց սայլերով գնում է քաղաք։ Մարդիկ որ տեսան նորան, մօտեցան և հարցրին, թէ ի՞նչ մարդ է, ո՞ւր է գնում և ինչո՞ւ տոպրակ է հագել։ Ագեւոսը մտաբերեց կերած ծեծը և սկսեց խաբել՝ ես, ասաց նա, այստեղացի չեմ։ Ես ձեր քաղաքովը անցնում էի, ճանապարհին աւազակները ընկան վերաս, ծեծեցին, ջարդեցին, ձիս, շորերս ու փողերս խլեցին, ինձ էլ այս տոպրակը հագցրին ու բաց թողեցին։

Մարդիկը խղճացին վերան. հաւաքեցին՝ որը շապիկ, որը վարտիկ. մէկը տուեց նորան իւր մաշուած ոտնամանները, միւսը՝ հին արխալուղը, երրորդը՝ գոտակը։ Ագեւոսը շնորհակալութիւն արեց, հարցրեց նոցա անունը, որտե՞ղ են ապրում և ուղեւորուեց քաղաք. այժմ նա մի փոքր ուրախ էր։

«Շուտով նեղ օրերս կ'անցնեն,—մտածեց նա։—Զարադրծին կըպատժեմ, ինձ օգնողներին կըվարձատրեմ»։

Այսպէս մտածելով նա մտաւ քաղաք, գնաց ուղղակի վանքի հրապարակը. այնտեղ էր նորա պալատը։ Կամեցաւ դարաւաղէքը մտնել, բայց պահապանները չճանաչեցին նո-

բան և ներս չթողեցին. միտքն ընկաւ հովուի ծեծը, դողը ընկաւ սիրտը, թողեց հեռացաւ ու սկսեց մտածել, թէ ի՞նչ անէր։ Ուղղակի տուն մտնել անկարելի էր՝ մինչև որ երթաս, հանես խաբերային, կրծեծեն, կրջարդեն, բանտն էլ կրձգեն. ո՞վ գիտէ, գուցէ սպանեն էլ։ «Պէտք է սպասեմ», — ասում էր նա։ Գնաց բաղար, մտաւ բանուորների շարքը. մի մարդ չնչին գնով վարձեց նորան աղուս կրելու մի շինութեան համար։ Ծանր էր թւում նորան աշխատանքը—ուսերը անսովորութիւնից արիւնլուայ էին եղել, ինքն էլ մի ծեծուած ջարդուածի էր նմանում։ Երեկոյեան, վարձը որ ստացաւ, երեք մաս բաժանեց՝ մի մասը տուաց հացի, միւսը պահեց գիշերելու համար, իսկ երրորդը տուաց թղթի, որ նամակ գրէ կնկանը։ Մարդ ու կնիկ իրար մէջ մի գաղտնիք ունէին, բացի նոցանից այդ գաղտնիքը ոչ ոքի յայտնի չէր. որպէս զի կնիկը հաւատայ մարդու խօսքերին, մէջն էլ յիշեց այդ գաղտնիքը։ Նամակը գրեց, մօտեցաւ իւր պալատին, տեսաւ իւր կնկայ աղախիններից մէկին, տուաց նորան, որ տայ կնկանը, ինքն էլ գրան մօտ կանգնած սպասում էր պատասխանին։

Կնիկը նամակը կարդաց ու շատ զարմացաւ. նա բոլորովին հաւատ չընծայեց գրածին, որովհետև մարդը մօտը կանգած էր։ Երևի, մարդս չէ կարողացել ծածկել մեր գաղտնիքը և մէկին ասել է, մտածեց նա։ Նա վախենում էր ամուսնուց, նա գիտէր, որ ամուսինը եթէ իմանայ նամակի մասին, իրան անշուշտ կրպատժէ — և որ նամակ գրողին վախեցնէ, հրամայեց նորան բռնել, բերել բակը և մի լաւ ծեծել։ Ծառաները կատարեցին հրամանը՝ ներս բերեցին Աղեւոսին, լաւից ծեծեցին և կիսակենդան բաց թողեցին։ Խեղճ Աղեւոսը թողեց գնաց, մի կերպ հասաւ քարվանսարէն, որտեղ իջել էր. ամբողջ գիշեր խեղճը տանջվում էր, մինչև որ լուսադէմին կարողացաւ քնել. մարմինը ծեծից ցաւում էր, իսկ սիրտը աւելի վատ՝ բարկութիւնն ու կատաղութիւնն ուտում էին նորան։

Առաւօտը լուսացաւ։ Քարվանսարայի տէրը կնկայ հետ պատրաստուեցան ժամ գնալու։ Կնիկը զուքուած դուրս եկաւ դարուազից. իսկ մարդը մնաց բակում։ Կնիկը սկսեց մարդուն ձայն տալ.

Արի՛,—ասում էր նա,—թէ չէ իշխանը կ՚երթայ կրմոնի եկեղեցի, էլ չենք տեսնիլ։

Այս որ լսեց Ագեւոսը՝ հարցրեց.

— Ո՞վ է ձեր իշխանը։

— Իսկ դո՞ւ ով ես. երևի, այստեղացի չես, որ չես իմանում. մեր իշխանը Ագեւոսն է. 12 տարի տիրում է նա ամբողջ քաղաքին և նահանգին։ Շատ ահարկու է մեր իշխանը. անցեալ օրը տեսայ թէ չէ, քիչ մնաց վախից սիրտս գնար։

Ագեւոսը չգիտէր, գնա՞ր եկեղեցի թէ չէ. «Հ՚հ,—ասաց նա մի փոքր մտածելուց յետոյ,—ինչ լինի, լինի, կ՚երթամ»,—ասաց ու գնաց, մտաւ եկեղեցի և կանգնեց դաւթումը բազմութեան հետ, որտեղ պէտք է դար իշխանը։

Ահա տեսնում է նա՝ թիկնապահները սրերով, աստիճանաւորները իւրեանց զարդարուն շորերով գալիս են։ Եւ իշխանը ամբոխանու տակ գալիս է իշխանուհու հետ միասին ոսկէթել շորերով ու թանկագին քարերով շարած գոտիներով։ Ագեւոսը նայեց իշխանի դէմքին և դողաց վախից՝ Աստուած բացեց նորա աչքերը։ Նա տեսնում էր այժմ, որ Աստուծոյ հրեշտակն է այդպէս իշխանի կերպարանք ընդունել. վախից թողեց եկեղեցին, թողեց, փախաւ քաղաքից դուրս....

Երկար փախչում էր նա, ինքն էլ չգիտէր, թէ ո՞ւր է գնում։ Եւ յանկարծ նա ընկաւ մի խիտ անտառի խորքը. յոգնածութիւնից նա ընկաւ խոտի վերայ ծառի տակ և երկար ժամանակ այսպէս ուժաթափ, թուլացած ընկած մնաց. կարծես հոգին թռած լինէր նորա մարմնից....

Կէս գիշերին նա արթնացաւ. նա այժմ մոռացել էր բոլոր պատահածը. նա չգիտէր, ինչո՞ւ աստղերը ծառերի միջից նայում են նորան, ինչո՞ւ գլխավերևը ծառերը քամուց խշխշում են, ինչո՞ւ է ցուրտ և ինչո՞ւ փափուկ անկողինը թողած տանը՝ այստեղ խոնաւ խոտի վերայ է պարկել: Սկսեց անցեալը մտաբերել—և սաստիկ լալ՝ միտքն ընկաւ իւր բոլոր կեանքը. նա հասկացաւ վերջապէս, որ Աստուած ոչ թէ նորա համար էր պատժել նորան, որ սա հրամայել էր սուրբ գրքի էջերը պատռել, ո՛չ. նա տեսաւ, որ Աստուած նորան պատժել էր նորա ամբողջ կեանքի համար: «Աստուծոյ բարկութիւնը շարժեցի,—մտածեց նա,—արդեօք կըտա՞յ նա ինձ թողութիւն իմ մեղքերիս համար»: Երկար ժամանակ այս գրութեան մէջ պարկած լաց էր լինում և Աստուծուց թողութիւն խնդրում: Աստուած լսեց նորա ձայնը և զօրութիւն պարգևեց նորան:

Արդէն լուսացել էր: Ագևոսը վեր կացաւ տեղից և գնաց տեսնելու, թէ ի՞նչ կայ աշխարհումը:

Անցնում է 2 տարի: Ագևոսի կնիկը կարծում է, թէ մարդը իւր հետ միասին պալատումն է ապրում:—Միայն այժմ զարմանում է, ինչից է որ մարդը այժմ բարի է և հանգարտ, ոչ ոքին չէ զլխատում, ոչ ոքին չէ պատժում, չէ գնում այլ ևս որսի, այժմ միայն եկեղեցի է գնում, մարդկանց կոիւներն ու վէճերն է քննում և հաշտեցնում իրար հետ: Շատ էլ սակաւ է տեսնում մարդուն, այն էլ ինչպէս՝ հեզութեամբ կընայի վերան, մի քաղցր խօսք կ՚ասէ և կըհեռանայ, կ՚երթայ, կրփակուի սենեակում: Վերջապէս մի օր կնիկը չէ համբերում, գալիս է մօտը և ասում: «Տէր իմ, ասա՛ ինձ, ի՞նչ եմ արել քեզ, ինչո՞ւ ինձանից քեզ հեռու ես պահում, ասա՛, որ ես էլ իմանամ»:

Հրեշտակը նայում է վերան և ժպտալով պատասխանում.—«Ոչինչ չես արել, սիրելիս, միայն ես Աստուծուն խօսք եմ տուել 3 տարի քեզ մաքիցս ձգեմ. ահա անցնում է երրորդ տարին, շուտով կըսկսես ապրել դարձեալ քո մարդու հետ»,—ասաց և գնաց փակուեցաւ սենեակում: Խեղճ կինը շատ լացեց և վերադարձաւ իւր սենեակը:

Այսպէս նոքա ապրեցին շարունակ երեք տարի:

Մի շաբաթ էր մնում, որ երրորդ տարին լրանայ, երբ իշխանը հրամայում է ժողովել իւր մօտ դաւառի ամէն ծայրից բոլոր ողբերին ու աղքատներին՝ կամենում էր նոցա հիւրասիրել և ընծաներ տալ: Ձիաւորներ գնացին ընկան քաղաքից քաղաք, գիւղից գիւղ հրաւիրուածներին կանչելու: Իշխանի բակը շուտով լցուեցին ամէն տեղից ողբերն ու աղքատները, կաղերն ու կոյրերը, անդամալոյծներն ու ծերերը: Եկողների թիւը այնքան շատ էր, որ տեղ չլինելու պատճառով, մի քանիսը նոցանից տեղաւորուեցին վանքի բակում:

Իշխանը եկաւ մոտաւ եկեղեցի. աղքատներն էլ հետը մտան, ինչքան որ եկեղեցին կարող էր տանել, իսկ մնացած ամբոխը կանգնեց եկեղեցու դրան մօտ: Իշխանի սպասաւորները այդ ժամանակ հրապարակում բաց էին անում սեղանները և հացը ձգում. դարսում էին խմորեղէն, արդանակ, միս և գինի. բոլոր ողբերին տեղ եղաւ սեղանների շուրջը:

Շուտով երևեցաւ իշխանը. նա եկեղեցու դրանը կանգ առաւ, ձեռքով արաւ՝ բոլորը լռեցին:

—Շատ ուրախ եմ, օր ձեզ տեսնում եմ, բարի մարդիկ,—ասաց նա,—խնդրեմ, նստէք ձեր տեղերը և անուշ արէք. և երբ կրվերջացնէք, ես դարձեալ կըգամ ձեզ մօտ:—Իշխանը գնաց պալատը: Հրաւիրուածները նստեցին սեղան. մի շարք կոյրեր տեղաւորուեցին մի սեղանի շուրջը. նոքա 12 հոգի էին բացի իւրեանց դլխաւորից: Սա նստե-

ցրեց նոցա և սկսեց ծառայութիւն անել՝ արգանակը ամանները ածեց, բաժանեց հացը, խմորեղէնը, կտրատեց միսը, դգալները տուեց նոցա։ Կոյրերը վայելում էին, իսկ ինքը մէկից անցնում դալիս էր միւսի մօտ ծառայութիւն անում։

Ճաշը վերջանում էր, իշխանը դարձաւ պալատից և անցաւ աղքատների շարքը։ Նա մէկին մի բան էր ասում, միւսին հարցնում, երրորդին մխիթարում. իսկ նորա սպասաւորները հանդերձներ և փող էին բաժանում ամէնքին։ Վերջապէս իշխանը մօտեցաւ վերջին սեղանին, որտեղ կոյրերն էին։ Նոցա գլխաւորը (մեծ ածողը) երբ իշխանին տեսաւ, դողդողաց և սպրդնեց։ Իշխանը մօտեցաւ նորան և հարցրեց.

— Դու էլ աղքատ ես։

— Ո՛չ, վսեմափայլ իշխան, ես աղքատ չեմ. ես աղքատների ծառան եմ։

— Լաւ ասացիր, այ մարդ. ինչպէս է անունդ։

— Ինձ Ալեքսիանոս են ասում,—ասաց նա գետնին նայելով։

Հրեշտակը նայեց նորա աչքերին, ժպտաց և ասաց.

— Ամէն սուտ ստի տեղ չի՛ անցնիլ։ Արի՛ յետևիցս։

Թողնելով իւր կոյրերին, նոցա գլխաւորը գնաց իւր իշխանի հետ պալատ։ Անցնում են նոքա բազմութեան միջով և ահա ամէնքը աչքերը դարձրել են նոցա, կարծես, երկու եղբայր լինին նոքա, այնքան նման են միմեանց, երկուսն էր բարձրահասակ, սև մազերով, դէմքի գծագրութիւնը բոլորովին մէկ է. միայն Ալեքսիանոսի մազերը չալ են ընկել, դէմքն էլ արևից ու քամուց թուխ է դարձել, մինչ դեռ իշխանի երեսը սպիտակ է և պարզ։ Բազմութիւնը ճանապարհ տուեց, նոքա անցան պալատը։ Հրեշտակը տարաւ նորան հեռաւոր սենեակներից մէկը և փակեց դուռը։

— Ես քեզ ճանաչեցի, Ագեռոս,—ասաց Նորան իշխանը,— բայց դու ինձ ճանաչո՞ւմ ես։

— Գիտեմ, Տէր, դու եկել ես Աստուծոյ մօտից ինձ պատժելու։ Մեղայ մեղքերիս և ողջ անցեալ կեանքիս համար։ Նատ լացեց Ագեռոսը, աղի արտասուք թափելով։ Իսկ Հրեշտակը կանգնած է Նորա դիմաց՝ պայծառ դէմքով և ժպիտը երեսին։ Բարձրացրեց Ագեռոսը գլուխը, կտրեց լացը՝ երբէք այդպիսի ժպիտ նա չէր տեսել։

— Վերջացաւ քո պատիժը,—ասաց Նորան Հրեշտակը,— ա՛ռ իշխանական ծիրանիդ, սուրդ և գաւազանդ, իշխիր ժողովրդին իմաստութեամբ և հեզութեամբ, այսուհետև եղի՛ր ժողովրդի եղբայրը։

— Չէ՛, Տէր իմ, չեմ կամենում ես ո՛չ սուր, ո՛չ գաւազան, ո՛չ դտակ, ո՛չ էլ ծիրանի։ Ես չեմ կամենում թողնել իմ կոյր ընկերներին, ես նոցա համար և լոյս եմ, և կերակուր, և բարեկամ, և եղբայր։ Երեք տարի շարունակ ես աշխատում եմ նոցա համար, սրտով և հոգւով ես կապուած եմ նոցա հետ։ Ների՛ր ինձ, թո՛ղ դնամ նոցա մօտ։

— Լաւ ես ասում, Ագեռոս,—ասաց Հրեշտակը,—գնա՛ խաղաղութեամբ։

Վերկացաւ Ալեքսիանոսը, գնաց կոյրերի մօտ. ամբողջ կեանքը աշխատեց նոցա համար, շատ տարի նա այսպէս ապրեց մինչև իւր մահը։

Իսկ Հրեշտակը երեք օրից յետոյ թողեց իշխանի մարմինը։ Թաղեցին մարմինը։ Շատ ցաւեց ժողովուրդը իւր իշխանի մահուան վերայ, որ սկզբում գոռող էր, իսկ վերջը հեզ ու խոնարհ։

Իսկ Հրեշտակը բարձրացաւ երկինք՝ Աստուծոյ մօտ։

Վ. Մ.

---

* * *

(Նաղասոնից).

Զեմ աղօթում ես առ Այն, զոր հաղիւ հազ իմ հոգին
Երկիւղալից զարմանօք յանդգնում է անուանել.
Ում առաջ իմ խելացս ոյժ մնում է տկար և լռին
Եւ սիգամոլ անմտութեամբ ձկտի Նորան ըմբռնել.
Զե՛մ աղօթում ես առ Այն, ոյր խորանացն ընդ առաջ
Ի ծունր իջնեն ժողովուրդք՝ խոնարհ և լուռ երկրպագ,
Ուր շողշողան հուլք անշէջ, և ձայնեն երդք ի հառաչ,
Բիւր բուրմանց մէջ քաղցրասիւք, վէտ վէտ խնկոց սիրառաք.
Զեմ աղօթում ես Նորան, զոր և ամբոխն սուրբ հոգեայ
Երջապատէ ի պատկառ, յահ և ի դող սրբազան,
Անեղեւոյթ որոյ գահն՝ ընդ աստեղօք լուսազգեաց
Թագաւորէ խառնացրիւ աշխարհաց վրայ անսահման.—
Ո՛չ, նրա առաջ ես հա՛մր եմ... Գիտակցութիւնն իմ խորին
Ոչնչութեանն էակիս կաշկանդում է իմ բարբառ,—
Մ'ի ա՛յլ սիրոյ քաղցր հրճուանք գրաւում է ինձ կաթոգին—
Ո՛չ արքայից փառքն և գահ,—այլ վիշտք խաչին սիրափար։
Իմ Աստուածն է ինձ քարշում, տառապելոյ իմ Աստուած,
Աստուած արեամբ ողողեալ, որ երկնային իւր հոգւով
Աստուած է մարդ և եղբա՛յր, որոյ հանդէպ տանջանաց
Եւ սուրբ սիրոյն ծունր իջնեմ իմ ջերմաջերմ աղօթքով։

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐ

Աւանդութիւն

(Շչեղրինից).

Դաշտավայրը դեռ կարկամած, անշարժ է. բայց գիշերային խորին լռութեան մէջ, ձիւնէ պաստառի տակից ահա արդէն լսվում է սթափուող առուակների խոխոջիւնը: Ձորերի և նոճիների մէջ այդ խոխոջիւնը փոխվում է մի տեսակ խուլ վշշոցի և նախազգուշացնում ուղևորներին, որ այդտեղ ճանապարհը փչացած է, որ այդտեղ ձիւնի տակ փոքրիկ ջրալեց գբեր են գոյացած: Բայց անտառը դեռ լուռ է և ճնշուած եղեամից, որպէս առասպելական հսկան երկաթէ գլխարկից: Մթագոյն երկինքն ամբողջապէս սփռուած է ասաղերով, որոնք ցողում են երկրին սառն և դողդոջուն լոյս: Նորա խաբուսիկ, աղօտ փայլի մէջ մերթ առկայծում և մերթ չքանում են ձիւնաշեղջերի մէջ ընկղմուած ծառերի մութ և խաւար կէտերը: Ոլբութեան, աղքատութեան և անտիրականութեան կնիքը դրոշմուած է ամեն տեղ—և՛ սառած ու փետացած դաշտավայրի վերայ, և՛ անխօս ու պապանձուած անտառում: Ամեն ինչ կապուած, կաշկանդուած է լուռ և անօգնական. կարծես թէ մի անելուլթ, բայց սոսկալի սարկութիւն է տիրապետում այստեղ:

Բայց ահա յանկարծ դաշտավայրի մի ծայրում հնչուեցաւ կէսգիշերային զանգակի զողանջիւնը. նորան հանդէպ, հակառակ ծայրից սլացաւ մի ուրիշ զողանջիւն, նորան հետեւեց երրորդը, չորրորդը: Գիշերային մռայլում երևան եկան եկեղեցիների վառվռուն գմբէթները և շքջակայքը յանկարծակի կենդանացաւ: Ճանապարհների վերայ շղթայաձև

փառուեցաւ գիւղական ժողովուրդը։ Առջևից գնում էին մոխրագոյն մարդիկ, մարդիկ տանջուած ու չարչարուած աղքատութիւնից և կեանքի հոգսերից, մարդիկ, մաշուած սրտերով և մինչ երկիր խոնարհած գլխներով։ Նոքա գնում էին՝ իրենց խաղաղասիրութիւնը և հառաչանքները տանելով տաճար։ Այդ էր այն ամենը, ինչ որ նոքա կարող էին նուիրաբերել յարուցեալ Աստծուն։ Նոցա ետևից, հեռաւորութեան մէջ ընթանում էին գիւղական հարուստները, վաշխառուները և գիւղի այլ իշխանաւորները զուգուած ու կոկուած տօնական հագուստներով։ Նոքա ուրախ-ուրախ զրոյց էին անում միմեանց հետ և նոյնպէս գնում տաճար, ուր տանում էին իրենց տենչալից բաղձանքներն առաջիկայ շաբթին գարձեալ խնդալու, գարձեալ զուարճանալու։ Բայց շուտով մարդկանց խմբերը խորասուզուեցան անտառի խորքը։ Օդի մէջ մարեց հրաւիրական զանգակի վերջին հնչիւնը և ամեն ինչ դարձեալ ընկղմուեցաւ փառաշուք և հանդիսաւոր լռութեան մէջ։

Մի խորին գաղտնիք զգացուեց նոր սկսուած շարժողութեան այդ յանկարծակի ընդհատման մէջ. կարծես տիրող լռութեանը հետևում էր մի հրաշք, որը պէտք է կեանք և վերածնութիւն ներշնչէր աշխարհին։ Եւ իրաւ, դեռ արևելքը չը շառագունած՝ տենչալից հրաշքը յայտնուեց։ Յարեաւ հայհոյուած և խաչուած Փրկիչը։ Յարեաւ Աստուած, որին ի սկզբանէ անտի զայրացեալ և հիւանդոտ սրտերն աղերսում են. «Տատապի՛ր, ով Տէր»։

Յարեաւ Աստուած և նորա շնչով լցուեցաւ ամբողջ տիեզերքը։ Լայնարձակ անապատը գիմաւորեց Նորան իւր ձիւնապատ դէմքով, իւր բուք ու փոթորիկներով։ Անապատի ետևից տարածուեց հզօր անտառը, որը նոյնպէս զգաց Յարուցեալի մերձենալը։ Հսկայ եղևնիներն երկինք բարձրացրին իրենց թաւոտ թաթերը. հարիւրամեայ մայրիների գագաթներն օրօրուելով՝ ճարճատեցին ու ճայթճայթե-

ցին. ձորերն ու գետերը ողողանջեցին. գազանները դուրս վազեցին իրենց խորշերից ու որջերից. թռչունները դուրս թռան իրենց բներից. — ամենքն էլ իմացան, ամենքն էլ զգացին, որ հեռու, անսահման խորքից առաջ էր գալիս մի ինչ-որ լուսաւոր, հզօր և վեհ զօրութիւն, որի փայլը նսեմացնում էր լոյսն ու ջերմութիւնը: Ամենքն էլ աղաղակեցին. «Արդեօք այդ Դո՞ւ ես, ո՛վ Տէր»:

Տէրն օրհնեց երկիրն ու ջուրը, գազաններին ու թռչուններին և ասաց.

— Խաղաղութի՛ւն ձեզ: Ես ձեզ համար բերել եմ և՛ գարուն, և՛ ջերմութիւն, և՛ լոյս: Ես գետերը կ'ազատեմ սառցեայ կապանքներից. անապատը կրծածկեմ կանաչ դորգերով. անտառը կրկենդանացնեմ քաղցր մեղեդիներով և անուշ բուրմունքներով: Ես կրզօվայնեմ և կրսնուցանեմ թռչուններին ու գազաններին և բնութիւնը կրգեղազարդեմ հազարաւոր հրաշալիքներով ու զուարճութիւններով: Թող նորա օրէնքները թեթեւանան ձեզ համար. թող նա իւրաքանչիւր էակի, իւրաքանչիւր հազիւ նկատելի միջատի համար անգամ գծագրէ շրջան, որի մէջ նոքա կարողանան հաւատարիմ մնալ իրենց սկզբնական, բնատուր կոչմանը: Դուք անդատելի էք, որովհետև կատարում էք այն, ինչ որ տրուած է ձեզ դարերի սկզբից: Մարդն անընդհատ պատերազմ է մղում բնութեան դէմ՝ թափանցելով նորա գաղտնիքների մէջ և երբէք չը կարողանալով նախատեսել ո՛չ վերջ և ո՛չ սահման իւր աշխատութիւններին: Նորան անհրաժեշտ են այդ գաղտնիքները, որովհետև նոքանք կազմում են նորա բարօրարութեան և յառաջադիմութեան անխուսափելի պայմանները: Բայց բնութիւնը միշտ ինքնիշխան է—և հենց դորա մէջն է նորա առաւելութիւնը, նորա գերազանցութիւնը: Հոգ չէ, թէ մարդս կամաց-կամաց ներս է թափանցում նորա գիրկը— նա տիրապետում է միայն նորա ամենափոքրիկ մասնիկ-

ներին իսկ բնութիւնը շարունակում է հանապազ ներկայանալ նորան իւր սկզբնական անմերձենալի դիրքով և ճնշում, յաղթահարում է նորան իւր հզօրութեամբ: Խաղաղութի՛ւն ձեզ, անտառներ և անապատներ, գաղաններ և թռչուններ. թող կեանք և ջերմութիւն ներշնչեն ձեզ Իմ Յարութեան ճառագայթները:

Բնութիւնն օրհնելուց յետոյ, Յարուցեալը դարձաւ մարդկանց: Ամենից առաջ Նորան ներկայացան մարդիկ՝ արտասուախառն աչքերով, ճնշուած հոգս ու վշտերից, կորացած աշխատութեան լծի տակ: Եւ երբ Նա ասաց նորանց. «խաղաղութի՛ւն ձեզ»—նորանք իսկոյն օդը լցրին իրենց հառաչանքներով և երեսի վերայ տարածուեցան գետին՝ լուռ ու մունջ փրկութիւն հայցելով Տիրոջից:

Եւ Յարուցեալին նորից պաշարեց այն մեծ և մահացու վիշտը, որով մինչ ավուրքը լցուեցաւ Նորա սիրտը Գեթսեմանի ձորում, երբ Նա սպասում էր Իւր համար պատրաստուած դառն բաժակին: Այդ բազմաչարչար զինուորականների ամբողջ խումբը, որ խոնարհուեց Նորա առջև, կրում էր իւր վերայ կեանքի բեռը 'ի սէր Նորա անուան: Նորանք առաջինն ունկնդիր եղան Նորա խօսքին և այդ խօսքն յաւիտեան դրոշմեցին իրենց սրտերում: Նա նորանց բոլորին էլ տեսաւ Գողգոթայի ծայրից, թէ ի՛նչպէս նորանք կաշկանդուած սարկութեան կապանքներով՝ անքում, հեծում էին: Նա խաչն ուսին՝ շարունակելով իւր ծանր ճանապարհը՝ բոլորին էլ օրհնեց, բոլորին էլ խոստացաւ փրկութիւն: Եւ ահա այդ օրից նորանք բոլորն էլ կարօտում են տեսնել Նորան, դլխապատառ դիմում են դէպի Նա: Ամենքն էլ անկեղծ և անխարդախ տարածում են դէպի Նա իրենց բաղուկները. «Արդեօք այդ Դո՞ւ ես, ով Տէր»:

— Այո՛, այդ ես եմ,—ասաց Նա նորանց:—Ես խորտակեցի մահուան կապանքները, որպէս զի դամ ձեզ մօտ, ով իմ հաւատարիմ ծառաներ, իմ թանկագին չարչա-

բակից եղբայրներ։ Ես միշտ և ամեն տեղ ձեզ հետ եմ։ Եւ ամենուրեք, ուր միայն թափուած է ձեր արիւնն— այնտեղ՝ ձերի հետ միասին՝ թափուած է և՛ Իմ արիւնը։ Դուք մաքուր և անկեղծ սրտով հաւատում էք Ինձ նորա համար միայն, որ Իմ քարոզը պարունակում է իւր մէջ ճշմարտութիւն, առանց որի տիեզերքը ներկայացնում է մի սանդարամետական դժոխք, մի մեծաբովանդակ պահարան քայքայման և զեղխութեան։ Սիրի՛ր Աստծուն և սիրի՛ր քո մերձաւորին, ինչպէս քո անձը—ահա՛ այդ ճշմարտութիւնը՝ իւր պարզութեամբ և իւր անկեղծութեամբ հանդերձ. և նա աւելի մատչելի է ո՛չ թէ աստուածաբաններին ու սաղմոսերգուներին, այլ միայն ձեզ՝ ձեր պարզ և չարատանջ սրտերին։ Դուք հաւատում էք այդ ճշմարտութեան և սպասում նորա դալստեան։ Ամառը, արեգակի կիզիչ ճառագայթների տակ, դաշտում քրտինք թափելիս՝ դուք ծառայում էք նորան. ձմեռը, երկար ու ձիգ գիշերներին, շարուած ընթրիքի աղքատիկ սեղանի շուրջը՝ աղօտ պլպլացող ճրագի առջև, դուք ուսուցանում էք այդ ճշմարտութիւնը ձեր զաւակներին։ Թէև նա ինքն ըստ ինքեան շատ համառօտ է, սակայն ձեզ համար այդ ճշմարտութիւնն ամփոփում է իւր մէջ կեանքի ամբողջ իմաստն ու նշանակութիւնը. նա ծառայում է ձեզ, որպէս անսպառ աղբիւր ձեր նորանոր զրոյցների։ Այդ ճշմարտութիւնը սրտերիդ մէջ՝ դուք քուն էք մտնում դիշերը. այդ ճշմարտութեան հետ անբաժան՝ արթնանում էք առաւօտեան։ Այդ ճշմարտութիւնն է, որ նուիրաբերում էք Իմ սեղանիս վերայ՝ փոխած նորան արցունքների և հառաչանքների, որոնք խնկի հոտիցն էլ աւելի քաղցր և անուշ բուրմունքով լուծում, հալեցնում են սիրտս։

Գիտցած եղէք, որ թէպէտ և ոչ ոք չէ կարող նախատեսնել, թէ երբ կըհնչէ ձեր ժամը, բայց նա արդէն մօտենում է։ Այո՛, շուտով կըհնչէ այդ ժամը և կըծագէ լոյս,

որին չէ կարող յաղթել խաւարը։ Եւ դուք կրթօրթափէք ձեր վերայից վշտի, կարիքի և թախծութեան լուծը, որ տանջում, չարչարում է ձեզ։ Ասում եմ հաստատապէս և որպէս մի ժամանակ Դողգոթայի գագաթից էլ օրհնում և առաքում ձեզ հոգեկան փրկութիւն, նոյնպէս և այժմ եմ օրհնում ձեզ վայելելու նոր կեանք լուսոյ, բարութեան և ճշմարտութեան թագաւորութեան մէջ։ Թող ձեր սրտերը չը հակուեն դէպի նենգաւորութիւնն ու խարդախութիւնը. թող նորանք մնան միշտ մաքուր և պարզ, ինչպէս մինչև օրս էին, և թող Իմ խօսքը հանապազ ճշմարտութիւն մնայ։ Խաղաղութի՛ւն ձեզ։

Յարուցեալն առաջ գնաց և ճանապարհին հանդիպեց այլ մարդկանց։ Նորանց մէջ կային և՛ ունևորներ, և՛ վաշխառուներ, և՛ խստասիրտ կառավարիչներ, և՛ գողեր, և՛ մարդասպաններ, և՛ երեսպաշտներ, և՛ անարդար դատաւորներ, և՛ կեղծ բարեպաշտներ։ Նորանք ամենքն էլ գնում էին՝ սրտերը լցրած անցեալի յիշատակներով և ուրախ-ուրախ զրոյց էին անում՝ դիմաւորելով ոչ թէ Փրկչի Յարութեանը, այլ ապագայ մեծաշուք ունայնութիւններին և տօնական զեղխութիւններին։ Բայց զգալով Յարուցեալի մերձենալը՝ նորանք ևս շփոթուած կանգ առան։

Յարուցեալը նոցա առջև նոյնպէս կանգնեց և ասաց.

— Դուք դարուս զաւակներն էք և ձեր այդ դարի ոգովն էլ առաջնորդվում էք։ Շահախնդրութիւն և իշխանական փառասիրութիւն—ահա՛ ձեր գործունէութեան զեկավարները։ Զարութեամբ լցուել է ձեր բովանդակ կեանքը, բայց դուք այնպիսի թեթևութեամբ կրում էք այդ չարութեան լուծը, որ ձեր խղճի հաղարերորդ ման անգամ չի սարսում այն ապագայի առջև, որ պատրաստում է ձեզ համար այդ լուծը։ Ձեր ամբողջ շրջապատը ներկայանում է ձեզ խոնարհուած, գլխակոր. ձեր շուրջը գտնուող ամեն ինչ կարծես կոչուած է ծառայելու ձեզ։ Բայց դուք

տիեզերքը տիրապետել է. ոչ թէ այն պատճառով, որ ինքն ըստ ինքեան ուժեղ է, ոչ, այլ որովհետև այդ ոյժը դուք ժառանգել է ձեր նախահայրերից: Այդ օրից սրդէն դուք ամեն կողմից պաշտպանուած է. և աշխարհիս հզորները ձեզ համարում են մշտակեաց, յաւիտենական: Այդ օրից դուք հուր ու թուր ձեռքին առաջ և միշտ առաջ է գնում: Դուք գողանում և սպանում է. դուք, առանց պատժուելու, յանդգնում է անդոսնելու ու պսրսաւելու աստուածային և մարդկային օրէնքները և պարծենում է, որ այդ յանդգնութիւնը ձեր սկզբնական ժառանգական իրաւունքն է: Բայց ասում եմ ձեզ—կրդայ ժամանակ, և նա շատ հեռու չէ, երբ ձեր բոլոր խորհուրդներն ու բաղձանքներն օդ կրցնդեն և կրցրուեն, որպէս փոշի: Թոյլերը նոյնպէս տէր կրկանգնեն իրենց ոյժին. իսկ դուք կրխոստովանէք ձեր ոչնչութիւնը այդ ոյժի առջև: Արդեօք երբ և իցէ նախատեսե՞լ է դուք այդ ահաւոր ժամը: Արդեօք երբ և իցէ խռովուե՞լ, մտայուզուե՞լ է դուք այդ նախատեսութիւնից՝ խորհելով ձեր և ձեր որդոց մասին:

Մեղաւորներն ոչինչ չէին պատասխանում այդ հարցերին: Նորանք աչքերը գետին խոնարհած՝ կանգնած էին, կարծես, սպասելով աւելի դառն նախատինքների: Յարուցեալը շարունակեց.

— Յանուն Իմ Յարութեան Ես ձեր առջև նոյնպէս բաց եմ անում փրկութեան ճանապարհը: Այդ ճանապարհը—ձեր սեպհական խղճի դատաստանն է: Նա ձեր առջև կրմերկացնէ ձեր անցեալը իւր բոլոր գոյներով: Նա դուրս կրկոչէ ձեր ըՀերի ուրուականներին և իբրև պահապաններ կրկանգնեցնէ նորանց ձեր գլխավերևը: Չայրացեալների ատամների կրճտոցը կրդղրդեցնէ ձեր տները: Կանայք չեն ճանաչել իրենց ամուսիններին. որդիք—իրենց հայրերին: Բայց երբ ձեր սրտերը կրթոշնեն, կրցամաքեն վշտից ու թախծութիւնից, երբ ձեր խիղճը կրթափթաղուէ, որպէս մի բաժակ,

որ չէ կարողանում պարունակել իւր մէջ մինչ ափունքը լցուած դառն հեղուկը — այն ժամանակ ձեր գոհերի ուրուականները կրհաշտուին ձեզ հետ և կրբանան ձեր առջև վրկութեան ճանապարհը: Եւ այն ժամանակ էլ չեն լինիլ ոչ դողեր, ոչ մարդասպաններ, ոչ կեղծ բարեպաշտներ, ոչ կաշառակերներ, ոչ անարդար իշխանաւորներ. այն ժամանակ ամէնքն էլ միակերպ կրլինեան, կրհրճուին Իմ օթեւանում, հասարակաց սեղանի շուրջ: Գնացէք և դիտցած եղէք, որ Իմ խօսքը — ճշմարտութիւն է:

Այդ բոպէին արևելքը շառագունեց և անտառի անօր աղջամուղջի մէջ պատկերացաւ մարդկային մի այլանդակ մնագունա, որը կաղամախի ճիւղից կախուած՝ ճօճում էր: Կախուածի գլուխը, համարեա բոլորովին անջատուած էր ընից, քարշ էր ընկել ներքև: Ագռաւներն արդէն դուրս էին փորել նորա աչքերը և ամբողջապէս կոցակեր արել այտերը: Իսկ նորա բունը տեղ-տեղ մերկ էր և ծածկուած նեխուած վէրքերով: Դիշատիչ թռչունների երամը ճախրում էր մնագունայի շուրջը, իսկ աւելի համարձակները շարունակում էին իրենց աւերիչ կոցահարութիւնը:

Դա մանուչի մարմինն էր, որն ինքը իւր անձը դատեց:

Բոլոր ներկայ եղողները սարսափած և զզուանքով երեսները շուռ տուին այդ սրտայոյզ տեսարանից: Յարուցեալի հայեացքը վառուեց բարկութեան հրով:

— Օ՜, մանչի՛չ, — ասաց Նա, — դու կարծում էիր, թէ ինքնակամ մահով արդէն ազատուած ես քեզ ճնշող դատաճանութիւնից: Դու շուտով խոստովանեցիր քո սոսկալի յանցանքը և շտապեցիր վերջ տալ ամօթալի կեանքիդ: Գործածդ ոճիրն այնպէս որոշ պատկերացաւ քո առջև, որ դու սարսափած երես դարձրիր ընդհանուր արհամարհանքից և գերադասեցիր հոգեկան անկումը: «Մի ակնթարթ, — ասացիր դու ինքդ քեզ, — և իմ հոգին կրխորասուզուի անդոյս խաւարի մէջ և սիրտս կրդադարի խղճի

խայթումներին հպատակուելուց»։ Բայց այդպէս չէ լինիլ։ Իջի՛ր այդ ծառից, ով մատնիչ, թո՛ղ քո դուրս փորուած աչքերը դարձեալ իրենց տեղը բռնեն. թո՛ղ քո նեխուած վէրքերդ դարձեալ փակուեն և թո՛ղ նախատելի կերպարանքդ վերակենդանանայ նոյն տեսքով, որպէս նա էր այն րոպէին, երբ դու համբուրում էիր քեզնից մատնուածի դէմքը։ Ապրի՛ր։

Այդ խօսքերի վերայ, ամենքի աչքի առջև, մատնիչը ցած իջաւ ծառից և Յարուցեալի ոտների տակ ընկաւ՝ մահ աղերսելով Նորանից։

— Ես ամենքին էլ ցոյց տուի փրկութեան ճանապարհ,— շարունակեց Յարուցեալը,—բայց քեզ համար նա, ով մատնիչ, յաւիտեան փակուած է։ Դու անիծուած ես Աստծուց և մարդկանցից. դու անիծուած ես յաւիտեանս յաւիտենից։ Դու ո՛չ թէ սպանեցիր քո բարեկամին, քո սրտաբաց մտերմին, այլ անակնկալ վերայ հասնելով՝ մատնեցիր նորան հրապարակական պատժի և նախատինքի։ Դու կրշջես քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ և ո՛չ մի տեղ քեզ ապաստան չես գտնիլ։ Դու կրբաղնես ամենքի դուռը և ոչ ոք չէ բանալ նորան. դու հաց կրխնդրես և քեզ քար կրտան. դու ծարաւից պապակած ջուր կ՝աղերսես և քեզ կրտան քո վաճառած արիւնով լի բաժակ. դու կ՝արտասուես և քո արցունքները հրային հեղեղների փոխուելով՝ կ՝այրեն քո այտերը և կրծածկեն նորանց վէրքերով։ Այն քարերը, որոնց վերայով դու անցնելիս կրլինես՝ կ՝աղաղակեն. «մատնի՛չ անիծու�դու»։ Մարդիկ փողոցներում ետ քաշուելով՝ ճանապարհ կրտան քեզ և դու ամենքի երեսներին կրկարդաս. «մատնի՛չ անիծուإ դու»։ Դու մահ կրփնտռես թէ՛ ցամաքի և թէ՛ ջրի վերայ, և մահը զզուանքով կրթողշայ ականջիդ. «մատնի՛չ անիծուإ դու»։ Այդ բաւական չէ. առ ժամանակ բախտը կրխղճայ քո վերայ, դու կրգտնես քեզ բարեկամ և կրմատնես նորան, և այդ բարեկամը բան-

տի խորքից վշտակոծ ձայնով կ՝աղաղակէ. «մատնի՜չ, անիծու�՞ս դու»։ Քեզ ընդունակութիւն կրտրուի բարիք գործելու, բայց գործած բարերարութիւնդ կրթունաւորէ քո բարիքները վայելողների սրտերը։ «Մատնի՜չ, անիծուե՞ս դու,—կ՝աղաղակեն նորանք,—անիծուե՞ս դու էլ, քո բոլոր գործերն էլ»։ Եւ կըշրջես դու դարէ յդար, կըշրջես խորտակուած հոգով, արթուն և աւերիչ ճիճուն սրտիդ մէջ։ Ապրի՛ր, անիծեա՛լ և սպագայ սերունդի առջև վկայիր այն անվերջ պատժի ու տանջանքների համար, որոնց սպասում է մատնութիւնը։ Վե՛ր կաց և, գաւազանի փոխարէն, ձեռքդ առ այդ ծառի ճիւղը, որից կախուելով՝ յոյս ունէիր դու մահուան արժանանալ։ Վե՛ր կաց և գնա։

Եւ հաղիւ թէ Յարուցեալի խօսքը մարեց օդի մէջ, մատնիչը վեր կացաւ, առաւ իւր գաւազանը և շուտով նորա քայլերի ձայնը խլացաւ այն անեզը և խորհրդաւոր հեռաւորութեան մէջ, ուր սպասում էր նորան դարէ դար տևող անվերջ կեանքը։ Եւ նա մինչև օրս էլ շրջում է երկրի վերայ՝ սերմանելով ամենուրեք խառնակութիւն, դաւաճանութիւն և քայքայումն....

Մոսկուա ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

ԳԻՒՂԻ ԱՍՊԵՏՆԵՐԸ

(Զրոյց Մենսըլէի).

Հաղիւ թէ ամբողջ գաւառումը հայր Տալօնից աներկիւղ ու քաջ մի բռակոնիէր [1]) դանուէր։ Նորա հրացանը ճանաչում էին բոլոր շրջակայքում, տաս ժամուան տարածութեան վերայ. գիտէին նաև այն, որ նա ոչ մի անգամ դեռ չէր վրիպել հրացան արձակելիս։ Վերդէսին մօտ, անտառի խորքումը, նա մի խրճիթ էր շինել իւր համար քարայրի ձևով. խրճիթի կտրի վերայ մի մեծ ցախաւել էր ցցուած, ասես թէ այդ մի պանդոկ լինէր։

Ծերունի Տալօնը տանից դուրս էր գալիս միշտ իւր շան և աղջկայ հետ միասին։ Նորա շունը մի անտանելի կեղտոտ և միևնոյն ժամանակ շատ խելօք կենդանի էր. չգիտեմ ինչու հայր Տալօնը նորան «ժանդարմ» էր ասում։ Աղջկայ անունն էր Յովհաննա։ Սա զարմանալի փայլուն աչքեր ու շքեղ մազեր ունէր. իսկ տեսքը՝ տարիքին նայած, խիստ այրական էր ու հպարտ։ Թէպէտ նորա զուարթ կարմիր շրթունքը մի տեսակ արհամարհական ժպտի արտայայտութիւն ունէին, իսկ ճակատը կատարեալ առնացի անվեհերութիւն էր ցոյց տալիս, այնու ամենայնիւ երբ մարդ տեսնում էր նորա կարմիր թշերը և կզակի չքնաղ փոսիկը, ակամայ մոռանում էր նորա դէմքի մի քանի դծերի կոշտութիւնը։ Պէտք է աւելացնեմ և այն, որ Յովհաննան բարձր հասակ ունէր, ուստի զարմանալի չէ որ, երբ այդ թարմ գեղեցիկ աղջիկը երբեմն կիրակի օրերը երևում էր ծառերի տակին պարողների թուում, ընկերուհիներից և ոչ մինը նորան հաւասարուել չէր կարող։

---

[1]) *Braconier*, որ թարգմն որս է անում ուրիշների կալուածներում։

Միակ բանը որ միացնում էր հօրն ու աղջկանը՝ արեան կապն էր. նա պահում էր աղջկանը, սա յարգում էր նորան,—սորանով սահմանափակվում էին նոցա յարաբերութիւնները. խօսք չկայ որ քնքշութիւն ասած բանը այստեղ չէր կարող լինել: Յովհաննայի պարտաւորութիւնները շատ պարզ էին. որսորդի պայուսակը ձեռին, ոտաբոբիկ, շրջազգեստի փեշերը կշտած՝ ուղեկցում էր նա միշտ հօրը որսի ժամանակ:

Յայտնի բան է, անտառներում ու դաշտերում շարունակ մեն գալով հրացան բանեցնելը նա լաւ սովորեց: Նա կատարելապէս երջանիկ համարեց իրան այն օրը, երբ առաջին անգամ անձամբ մի վայրի բադ սպանեց: Այդ օրից նա հօր աներկիւղ, բայց հլու աշակերտուհին դարձաւ և շատ ճիշդ նշանի էր զարկում: Նա Ծերունի Տալօնի պարծանքը դարձաւ, և եթէ սա մի փառք ունէր, նորա մի մասը պատկանում էր Յովհաննային:

Այս պարզ, կիսավայրենի մարդիկը միասին որս էին անում, միասին կռվում էին գոյութեան համար: Երկուսն էլ հաւատարապէս լռութիւն սիրող էին և վճռողական. յաճախ ամբողջ ժամեր նոքա մի ձայն չէին հանում, ոչ մի հայեացք չէին ձգում իրար վերայ: Մի բանում կարելի է ասել նոքա միշտ համամիտ էին, այն է՝ երբ պէտք էր լինում ժանդարմին կանչել:

Ինչ և իցէ, մինչ Յովհաննան հալածում էր օդի ու անտառի բնակիչներին, սիրոյ փոքրիկ աստուծոյ նետը երիտասարդ որսորդուհու սիրտը խոցեց: Նատ անգամ արդէն բարձրացրած հրացանը նա ցած էր թողնում և կանգնում էր, կարծես մի բանի վերայ մտածում լինէր. այս պատահում էր մանաւանդ այն ժամանակ, երբ նա տեսնում էր հողմաղացքի թևերը, որի շեմքում կանգնած էր լինում մի քսան տարեկան պատանի, շէկ մազերը սպիտակ սրածայր դդակի տակից դուրս թափած: Յա-

ճախ նա տուն էր դառնում բոլորովին դատարկաձեռն ու շփոթուած։

Այս բանը Հայր Տալբնից թաղուն չմնաց։ Երբ մի անգամ նա աղջկանը չափազանց յուզուած նկատեց, սկսաւ անկեղծներ թափել նորա գլխին և քթի տակից մի բան էր փնթփնթում որ անում էր նա միայն այն ժամանակ, երբ բարկանում էր։ Նոքա մի միջոց լուռ գնում էին. յանկարծ ծերուկը դարձաւ աղջկանն ու ասաց շտապով.

— Հա՛, չմոռանամ, Յովհաննա՛. ես մոքումն դրել եմ քեզ մարդու տալ։

— Ո՞ւմ, հայր։

— Պիէռ Լաւալն է խնդրում. նա պատուական մարդ է և իմ բարեկամն է։ Ես նորան խօսք եմ տուել արդէն։

Աղջիկը սկիզբը կարմրեց, յետոյ զարմացած բարձրացրեց գլուխը և իւր սովորական ժպտոմն ասաց.

— Իսկ ես Պիէռին ամենևին չեմ հաւանում։

— Գուցէ, բայց ես հաւանում եմ։

Յովհաննան նայեց նորա վերայ, կարծես կամենում էր համոզուել որ նա հանաք չէ անում, և տխուր արտասանեց.

— Ես չեմ ուզում մարդու գնալ։

Հայրը ուշադրութիւն չդարձրեց։ Նա կամաց վերցրեց հրացանը, նշանեց, լսուեցաւ հրացանի ձայնը, թռչունը վայր ընկաւ և միայն այն ժամանակը կարծես կողմնակի կերպով ասաց.

— Պիէռը վաղը կըգայ։ Ես նորան վաղուց արդէն խօսք եմ տուել։ Ութն օրից յետոյ նա քո ամուսինը պիտի լինի։ Նա այս ասաց արագ, և պարզ էր որ պատասխանելն անօգուտ է։ Յովհաննան կամայ-ակամայ զըսպեց իրան և ոչինչ առարկութիւն չարեց։

Պէտք է ճշմարիտն ասել. Պիէռը բռսկոնիէրի աղջկայ համար շատ լաւ փեսացու էր։ Նա ծառայել էր Ապրի-

կէում, քաջութեամբ կռուել էր արաբների հետ, և նորա յանդուգն սիրագործութեանց մասին շատ խօսք ու զրոյց էին անում: Դա մի երկաթէ կամքով և սառնարիւն մարդ էր. քիչ էր խօսում, բայց խօսքին միշտ հաստատ էր: Եօթնամեայ ծառայութիւնից յետոյ սերժանտի աստիճանով նա տուն վերադարձաւ և ապրում էր մօրիցը ժառանգութիւն ստացած ագարակումը: Նորա կոպիտ, բայց հանդարտ դէմքի դծագրութիւնը նորան միաժամանակ և գիւղացի և զինուոր էր ցոյց տալիս: Հետևեալ օրը Ծերունի Տալօնը, Յովհաննան և Պիէռը միմեանց հանդիպեցան մի պանդոկում: Պիէռը բոլորովին սառնասիրտ կերպով լսեց օրիորդի խոստովանութիւնը թէ նա սիրում է ուրիշին: Երբ Յովհաննան վերջացրեց խօսքը, Պիէռը բարեկամաբար նորա ձեռը սեղմեց ու ասաց.

— Դու պատուական երեխայ ես. շնորհակալ եմ:

Եւ նա հեռացաւ օրիորդիցը:

— Բայց ի՞րը է հարսանիքը — գոչեց նորա յետևից բռակոնիէրը սենեակը մտնելով, ուր երիտասարդին ուղղանը մենակ էր թողել:

— Ութ օրից յետոյ, ինչպէս որ պայման ենք արել:

— Ի՞նչ ես ասում, — բացագանչեց Յովհաննան:

— Որ մենք ութ օրից յետոյ կըպսակուենք:

— Բայց չէ՞ դու գիտես որ ես քեզ չեմ սիրում:

— Այո՛, ես այդ լսեցի:

— Յետոյ դու գիտես որ ես սիրում եմ Բազելին:

— Ի՞նչ անենք: Այդ կ'անցնի, միայն թէ ես համբերեմ:

Յովհաննան տեսաւ որ էլ յոյս չկայ, և ներքուստ սարսափելի ատելութիւն զգաց դէպի այդ մարդը:

Բազելը, ջաղացպանի սիրուն տղան, նոյն երեկոյին իմացաւ այս ամէնը և այնու ամենայնիւ չկարողացաւ մխիթարել օրիորդին: Նոքա երկսով նստած էին կսկուղ մտմտի վերայ, մի բաց տեղ, անտառումը, և մինչ լուսինը

փայլում էր երկնքումը, նոքա միմեանց սիրոյ երդումներ էին տալիս։ Բայց ինչպէս քաղաքում, նոյնպէս և գիւղում, աղօրիքներումն, ինչպէս և սալօններում, շատ թեթեւամիտ, պճնասէր անձինք են լինում։ Բաղելը խակ և խակ դոցանից էր և բլուզը հագին նա ֆրակ հագածի էր նմանում։ Իրաւ, նա իւր գիւղական փայտէ ոտնամաններով ման էր գալիս ճիշդ այնպէս, ինչպէս ուրիշները լայկի կօշիկներով։

Ինչպէս Յովհաննան կարողացաւ սիրահարուել այդ ալիւրաթափախ երեսի վերայ—դժուար է մեկնելը. բայց ինչ և իցէ ընդունուած փաստ է որ առնացի, զօրեղ կանայք յաճախ անճնատուր են լինում այդ տեսակ քամի քշողներին։

Ճշմարիտ է, բացի մի սրտից Յովհաննան ուրիշ ոչինչ չէր տուել նորան. բայց այդ էլ արդէն չափազանց մեծ բան է։ Բաղելը ինքը շատ անգամ վախենում էր այն զգացմունքից, որ հանպաքով զարթեցրել էր օրիորդի սրտումը. մի ընչին կայծից ահագին հրդեհ էր առաջացել որ նա ամէն կերպ աշխատում էր հանգցնել։ Յովհաննան, ընդ հակառակը, խաբում էր իրան վայրենի ցնորքներով, և երբ գլուխը բարձրացրեց, Բաղելը նորա լացած աչքերի մէջ մի այնպիսի վճռողականութիւն նկատեց, որ սաստիկ վախեցաւ։

Երիտասարդ որսորդ աղջիկը ըստ երևութին վճռել էր հնազանդուել իւր վիճակին, և ծերունին շտապով հարսանիքի պատրաստութիւն էր տեսնում։ Հարսանիքի նախընթաց երեկոյին նա աղջկանը տանը թողեց և ինքը գնաց քաղաք։

Գեղեցիկ արևի լոյսը Յովհաննայի սենեակն էր թափանցում։ Օրիորդը ոտը նստարանին դրած՝ հրացանն էր սրբում. յանկարծ դուռը ծեծեցին։ Այդ Պիէռ Լուաշն էր։

Պատկառանքով գլխարկը հանելով՝ նա տեղեկացաւ

Հայր ՏալՕնի մասին և նատաւ պատուհանի առաջ ու նորան էր սպասում։ Նա սկսաւ ծխաքարշը լցնել։ Յովհաննան շարունակում էր իւր գործը։ Դրսևը փայլում էր կապոյտ երկինքը, ծառերը բուրում էին իրանց անուշահոտութիւնը, օդում տարածուած էր նոր հունձքի հոտը. իսկ ներսը զարմանալի ցուրտ էր։ Պիէռը լուռ հետևում էր Յովհաննայի պարապմունքին և ծխի ամպեր էր թողնում ծխաքարշից։ Վերջապէս օրիորդը գործից պրծաւ ու առաջինը խօսք բաց արեց.

— Հը՛, դեռ չե՞ս թողել ինձ հետ ամուսնանալու ցանկութիւնդ։

— Ճիշդ այնպէս, ինչպէս և ապրելու ցանկութիւնս։

Ամբողջ կեանքումս ես երեքին եմ սիրել միայն—մօրս, Ֆրանսիան և քեզ։

— Զէ՞ ես քեզ արդէն յայտնել եմ որ ես քեզ չեմ սիրում—ասաց օրիորդը դառնութեամբ։

— Ի՞նչ անենք. ժամանակով կըսիրես։

Յովհաննան դողաց և սկսաւ յետ ու առաջ քայլել, յետոյ կանգնեց Պիէռի առաջ որ դեռ ծխում էր, և ասաց.

— Լսի՛ր և միտդ պահի՛ր ասածս։ Պատիւս վկայ, եթէ դու իմ մարդը լինիս, ես քեզ կըսպանեմ։

— Այդ բանը ոչինչ չէ կարող փոխել,—պատասխանեց Պիէռը ուսուր. ես կ՝ամուսնանամ քեզ հետ։

Այս վայրկենին դրան շեմքումը երևեցաւ ծեր ՏալՕնը։ Յովհաննան դնաց իւր տեղը և նորից հրացանը ձեռն առաւ։

Հարսանիքի օրուանից անցաւ մի ամբողջ շաբաթ։

Երիտասարդ կինը լուռ ու մունջ դառն արտասուք էր թափում։ Յաճախ ամբողջ ժամերով նա մնում էր նստած, անշարժ աչքերը պատուհանին յառած. նա այրվում, հալ ու մաշ էր լինում։

Սակայն Պիէռը այս ժամերին աշխատում էր հեռու ճնալ նորանից։

Մի օր նա ասաց կնոջը թէ գնում է Եօմի և միայն երեկոյեանը կը վերադառնայ։ Կինը գլխով նշան արեց, և նա գնաց։

Յովհաննան առաջին անգամ իւր տխուր հարսանիքից յետոյ հօր հետ գնաց որսի։ Ինչպէս առաջ նա դարձեալ արագ քայլում էր։ Երբէք նա այնպէս յաջողութիւն չէր ունեցել ինչպէս այս անգամ. նորա արձակած ամէն մի գնտակը հասնում էր նպատակին։ Ծանդարմն ուրախ ուրախ թռչկոտում էր։

Վերջպէս, երբ արդէն արևը մայր մտնելու մօտ էր, նոքա որսից պրծան։ Հայրը քայլերն ուղղեց դէպի իւր խրճիթը, Յովհաննան՝ իւր նոր տունը։

Նորա նեղ ճանապարհը միջեցը բաժանուած էր ծառերով։ Գիշերուան ստուերները փռվում էին այստեղ ու այնտեղ, և մռայլ էր երիտասարդ կնոջ հոգին։ Նորա արիւնը եռում էր երակների մէջ։ Ժամանակ առ ժամանակ Յովհաննան աչք էր ձգում մեծ ճանապարհի կողմը։ Յանկարծ մի զինուորական երգի ձայն լսուեցաւ։ Յովհաննան դողդողալով վերցրեց հրացանը և չոքեց մի ծնկան վերայ, կանաչ ծառերի մէջ։

«Այս սպանութի՞ւն է», շնչում էր նորա խիղճը։ «Այս վրէժինդրութի՞ւն է», քաջալերում էր հպարտութիւնը։

Մի արիւնալից ամպ տարածուեցաւ նորա աչքերի առաջ, հրացանի ձայնը լսուեցաւ, և Պիէռ Լաւալը գլորուեցաւ գետին։

— Դիպա՞ւ, ասաց նա, — գիտեմ ո՞վ է։

Յովհաննան իսկոյն չկարողացաւ սթափուել. բայց մի փոքր յետոյ նա յանկարծ ձգեց հրացանը խոտերի մէջ և խելագարի պէս վազեց դէպի աղօրիքը։

— Բազի՛լ, Բազի՛լ — գոռում էր նա, յուսահատութեամբ դուռը ծեծելով։

Բազիլը չպատասխանեց — արդէն երեք օր էր որ նա կորել էր, յայտնի չէր թէ ո՞ւր...

Այս միջոցին դիւցազիք վերցրին անբաղդ Պիէռին և տուն տարան։ Վէրքը ծանր էր, բայց ոչ մուհացու։

Ամբողջ գիշերը Յովհաննան հեկեկալով նստած էր մարդու ոտների կողմը։ Հէնց որ սա շարժվում էր, Յովհաննան խոնարհում էր նորա վերայ և ականջ էր դնում նորա շնչառութեանը. կարծես նորա տանջանքը թեթևացնել կամենալով Յովհաննան ձեռը դրեց նորա կուրծքին. յանկարծ նորա ձեռի տակն անցաւ քաղաքային վարչութեան ուղղած մի փոքրիկ ծալած թղթի կտոր։

Նա շտապով բաց արեց ու կարդաց. «Խնդրում եմ ոչ ոքի չմեղադրէք իմ մահուան համար. ես ինքս ինձ յօժար կամքովս սպանեցի»։

Մի կաթիլ արտասուք գլորուեցաւ Յովհաննայի թշի վերայ, և նորա շրթունքը մի ջերմ համբոյր դրոշմեցին մարդու ճակատին։

Անցաւ երկու շաբաթ, և Պիէռի առողջութեանը էլ վտանգ չէր սպառնում։

Անօրինակ անձնուիրութեամբ խնամում էր նորան Յովհաննան, և բացի նորանից ուրիշ ոչ ոք իրաւունք չունէր դիշերները նստել նորա մարդու մահճի առաջ։

Հիմայ Պիէռը փայտէ ոտով է ման գալիս, բայց նա ունի մի կին որ սիրում է, որ պաշտում է նորան։

ՄՈՒՍԱ.

Դարձեալ նոր երաշ և նոր ցնորքներ....
Ահա հրձվում է իմ մատաղ հոգին.
Շտապիր, ով Մուսա, քո սրբանուէր
Համբոյրը դրոշմել երգչի շրթունքին։

Շտապի՛ր. թող քո վառ ժպիտ կախարդիչ
Բոլորքէ սիրտս հրով սրբազան,
Թող ոգի շնչէ հայեացքդ դիւթիչ.
Ես կամիմ երգել հրաշքներ դարեան....

Թող որպէս անդոյշ զեփիւռ քաղցրաշունչ,
Քո թովիչ ձայնը հնչէ ականջիս
Եւ յուսոյ տաղեր, և՛ սիրոյ մրմունջ.
Ես կամիմ երգել տենչանքը սրտիս։

Ես կամիմ երգել անհուն քաղցրութիւն
Մի նոր, ոսկեդոյս և խաղաղ կեանքի.
Ես կամիմ երգել սիրոյ սրբութիւն
Եւ վսեմ փայլը անկեղծ վաստակի....

Ես կամիմ երգել, երգել յարատև,
Որպէս թռչունը ազատ եթերում.
Օ՜, շտապիր, Մուսա, թռիր սրաթև,
Քանի երազիս չի ցնդել օդում....

Մոսկուա։ ԱՂ. ԾԱՏՈՒՐԵԱՆ։

ԿԻՍՐԱՐ

կամ

ՄՇԵՑԻ ՀԱՑՈՒ ՄԸ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ:

(1882 Թ. ի սուրբ Էջմիածին և Թրքահայոց գաւառներէն ի Տարոն և ի Վան ճանապարհորդած).

1882 *Թ. յուլիս 4-ին՝ Իննակեան սարերու գլուխն՝ Սուրբ Կարապետի Վանքն ենք։ Հայաբնակ ամեն գաւառներէ ուխտաւորներ եկած են Մուրատատուէն խնդրելու իրենց սրտի փափաքանաց իրացումն։ Ցուարթ դիմաք տղայ-մարդեր՝ երեսնին բաց գեղացի աղջիկներու և երեսնին փակ մանկամարդ հարսնուկներու հետ՝ իրենց ճկոյթ մատեր իրարու անցուցած՝ շղթայ կազմելով կրբոլորին և ծանր ծանր դառնալով իրենց ոտից ծայրերուն վերայ, նոր սոլերնին կրմաշեն... կէօնտ կրխաղան։ Մի քանի աշըղներ Ադամայ երգն կ'երգեն և հայրեր հեռուն կայնած իրենց զաւակաց հարսեր կ'ընտրեն իրարու հետ մրմռալով և աղջիկներ մատնանիշ ընելով. իսկ պառաւներ լուսաղբիւրի մէջ կրլուացուին անհոգ՝ չհիւանդանալու ու երկար առողջ կեանք մը անցնելու համար։ Նորեկ խոնջեալ ուխտաւորք կրհետևին հիւրընկալ վարդապետին մէյմէկ սենեակ ստանալու։*

Վանքին մէջ և դուրսը մեծ շարժում մը կրտեսնուի և ամեն կողմ զանազան պատկերներ կրներկայացուին։ Սուրբ Կարապետի տաճարն Անահիտի մեհեանն կրյիշեցնէ իր բազմաթիւ սիւներով և խորհրդաւոր մթութեամբ. իսկ իւր շրջակայ լեռնադաշտերն՝ Վարդավառի հին տօնն։

Մեծ հաճոյք կրզգայի և խիստ գոհ էի արած ճամբորդութենէս և կ'ուզէի զգացումներս արտայայտել Երեմիա սրբազանին [1]) *և Յակոբոս վարդապետին, որք՝ հիւրանոցն նստած՝ վանքին անցեալ վիճակին և արիասիրտ Ղազար վարդապետին քաջագործութեանց վերայ կրխօսակցէին ու կրհիանային։ Ա՜հ, Սրբազան,— գոչեցի,—լեռ ու սար, ձոր ու դաշտ, քար ու խոտ և ամէն ինչ, որ*

---

[1]) 1888 *Թ. յունիս ամսոյ մէջ վախճանեցաւ ի Վարագ, թողլով բազմաթիւ կարևոր պատմական երկեր, որք անտիպ կրմնան իւր եղբարց քով։ Ծանօթ. յօդ.*

կրտեսնեմք, կարծես բան մը պատմել կ'ուզէն, և բնազդում մը չթողուր որ հեռանամք, բայց աւաղ, որ Պոլսոյ Հայոց ծանօթ չեն ասոնք։

Թէև 30-էն աւելի վանք այցելեցի, շատ բան տեսայ ու քննեցի, բայց ուխտագնացութեան ճաշակն այսօր առի՝ նոցա ուրախութեան մասնակցելով և ուշս անցելոյն վերայ դարձնելով։

— Երանի՜ հօրդ, որ քեզ պէս զաւակ մը ունեցեր է, քեզ որ հօրդ հոգին կըկրես,—ըսաւ Սրբազանն և յանձնարարեց, որ իւր հայրենասիրութեան գիրքն ուշիւ կարդամ։ Նոյն պահուն գիւղապետ մը հիւրանոցէն ներս մտաւ՝ գլուխը բացաւ և եկեղեցականաց ձեռն համբուրելէ վերջ յամրաքայլ ինձ մօտենալով, ըսաւ.

— Մարգարեան.... քեզ մի բան տի ասեմ (չեմ գիտեր թէ մականունս ուրկէ՞ սովրած էր)։

— Լաւ, ասա՛, եղբայր,—գոչեցի։

— Ցաս չեմ կրնայ, (այստեղ չեմ կարող)—աւելցուց։

— Ինչո՞ւ, այստեղ դրսէն մարդ չկայ. Սրբազանն ու վարդապետն մեր հայրերն են, չե՞ս գիտեր։

— Գիտենամ (գիտեմ՝), բայց գաղտնի տի ասեմ։

— Լաւ, գաղտնի՝ կամաց մը ըսէ, անոնք չեն լսեր։

— Ո՛չ, տաս չեղնիր։

— Եղբա՛յր, ինչ կայ պահելիք ս. հայրերէն. ասա՛, տեսնեմ,—կըկրկնէի. իսկ նա կ'աղաչէր, որ իրեն հետևեմ։ Վերջապէս պարտաւորեցայ սրբազանի յորդորանաց համաձայն լսել զայն և հիւրանոցէն մեկնիլ միասին։

Գիւղապետն ուրախութեամբ խուցէ ի խուց, սենեակէ ի սենեակ կըմտնէր ու կ'ելնէր, և ամուր դրամբ պարապ սենեակ մը կըփնտռէր, ինչո՞ւ համար, դեռ չէի գիտեր. վերջապէս մի սենեակ գտաւ և «արի՛, տաս լաւ է, մարդ չկայ և զմեզ մարդ չտեսնէր» ըսելով, ներս մտնել պարտաւորեց և դուռն ամուր փակելէ ու մեծ քար մը նորա ետին դնելէ վերջ. «կ'աղաչեմ, նիստ, նիստ», ըսելով ոտքերն ծալլեց, գետինը նստաւ, չորս կողմն նայեցայ, ո՛չ աթոռ կար, ո՛չ կապերտ. թաշկինակս հանեցի և պատուհանին մէջ փռելով՝ նստայ։

Առաջին անգամն էր, որ այսպիսի տարօրինակ մի դէպք տեղի կ'ունենար ինձ և շուարած կըմտածէի գիւղապետի արարքին, նորա խիստ զգուշաւոր ընթացքին և դրան ամուր փակելուն, որոնք բնականաբար լաւ ազդեցութիւններ չէին ըներ վրաս և շատ լաւ

բաներ այն պահուն մտքէս չէր անցներ, և մինչև իսկ կըտարա-կուսէի նորա Հայ լինելուն, և բոլոր յոյսս վեց Հարուածանիս վերայ դրած էի առանց այլայլանքս յայտնելու։

— Է՞հ, եղբայր, կարծեմ, հիմա կրնաս ըսել գաղտնիքդ։

— Այժմ տի ասեմ, բայց նախ կ'աղաչեմ քեզ, որ խօսք տաս ինձ խնդիրքս կատարելու։

— Խնդի՞րքդ։

— Այո։

— Բայց ես ո՞վ եմ, որ քո խնդիրքն կատարեմ։

— Դու կանաս (կրնաս), Մուրատատու Ս. Կարապետ քո արև պահէ, քո սրտի մուրատն տայ. դու խօսք տուր որ տի կատարես, ես էլ իմ սիրտ քեզ բանամ։

— Եթէ խօսք չտամ։

— Խօսք չտաս, չեղնիր (չըլնիր)։

— Եթէ իմ ձեռքէն չգայ....

— Ո՞վ կ'ասէ, քո ձեռքէն չգար. ես գիտնամ որ դու կանաս. խօսք տուր, կ'ասեմ քեզ։

— Շատ լաւ, քանի որ դու կ'ըսես որ կրնամ, ես ալ խօսք կուտամ քո խնդիրք կատարել, ասա տեսնեմ։

— Ա՞հ, էֆէնտի, Աստուած քեզ ղրկեց Ցարնոյ աշխարհ, Ս. Կարապետ քո արև պահէ և ինքն վկայ եղնի իմ ասածիս։

— Քո անուն ի՞նչ է, Հարցուցի ընդմիջմամբ։

— Իմ անունը մի՛ Հարցներ, պէտք չէ։

— Շատ լաւ, շարունակէ։

— Մշոյ աշխարհ 25 տարիէն մարդ չմնար, ղարիպութիւն տի աւրէ ղմեր աշխարհ։

— Յորդորեցէք գիւղացիներն որ պանդխտութեան չըդիմեն։

— Ա՞խ, դու գիտնա՞ս մեր կիսրար։

— Այո՛, գիտեմ։

— Ա՞հ, մեր կիսրար Վանայ կիսրարին չնմանիր. մեր կիսրար շատ գէշ է, մեր տուն կ'աւրէ։

— Բայց ես ի՞նչ կրնամ ընել։

— Ականջ դիր, աղբէր,—գոչեց յուղեալ։

Դատապարտուած ենք լսել, ուստի մտադրեցի բնաւ ձայն չհանել, չընդմիջել և ըսի.—լմնցնելէ վերջ պէտք եղածն կըհարցնեմ. շարունակէ։

— Կիսրար, կէս անել ասել է. երբ մէկն սերմացան չուներ,

կամ տէրութիւն իւր վերկին ուզէ, և գիւղացին փարա չունենայ, կ'երթայ քաղաք, ձեռքերն ի ծոց՝ հարուստին կը դիմէ և իւր կարողութեան համեմատ փոխ դրամ կ'առնու։ Ա՜խ, էն սեւ օր ահա զմեն (ամեն) մալով (գոյքերով) նորա գերի կը դրուի, զի ունեցած արտի Թափոնի Թղթերն նորա աւանդ յանձնելէ, պարտամուրհակը տալէ զատ, իւր ցանած կամ ցանելիք ցորենին արդիւնքին կէսն նորա է, զոր գիւղացին մինչև քաղաք փոխադրել պարտի, և ձմեռն փոխատուի ձիերն, գոմէշներն դարմանելու, խնամելու հոգը, ասոնցմէ զատ, գիւղացին ամառը՝ 2—3 ամիս փոխատուն իր ծառաներով ու մանչերով իր տունն տի հիւրընկալէ, և նորա ուտեստն ու պէտքերն տի հոգայ, որպէս զի հունձքի բաժանման ատեն արտը գայ և հսկէ որ գողութիւն չլինի։

— Այդ կիսարար չեղաւ, ըսել է թէ՝ այդ հաշուով փոխատուն արդիւնքին չորս մասէն երեքը կ'առնու և ոչ կէսն, բայց հիմա քեզ բան մը հարցնեմ. եթէ առատ արդիւնք լինի այնպէս, որ առած դրամուդ մի մասն՝ մաս առ մաս տայք, այն ատեն փոխատուն նորէ՞ն կիսարարի հաշիւ կը բռնէ։

— Մաս առ մաս չընդունիր, էֆէնտի, ամբողջ կ'ուզէ. 1 ղրուշ պակաս լինի, չառնուր։

— Է՜հ, եթէ եզն մեռնի կամ սայլը կոտրի, փոխատուն ի՞նչ կընէ. անոր համար պէտք եղած դրամը կուտա՞յ։

— Կուտայ, բայց նորա էլ տոկոս կ'առնու հարիւրին 20—30։

— Փոխատուներն չա՞յ են, թէ թուրք։

— Հայ էլ կայ, թուրք էլ կայ։

— Ամառը երբ մէկ երկու ամիս ձեր տունն կուգան, տունն որո՞ւ կը թողնուք և դաշտ կ'երթաք. ադկից գէշութիւններ չե՞ն ծագիր։

— Ինչպէս չէ, այդ դռներ մի՛ բանար, երբ տուն այր չըլինի, ի՞նչ կը լինի...։

— Այո՛, ես այժմ հասկցայ աղջիկներ փախցուելուն և այլ գէշութեանց գաղտնիքը. ինչ և է.—է՜հ, ըսէ տեսնեմ, ի՞նչ կ'ուզես, որ ընեմ։

— Մշոյ դաշտն աղատէ այս պարտքէն, որպէս զի զարիպութեան չերթան և մենք տնաւեր կիսարարէն աղատիմք։

— Մշոյ դաշտի պարտքը գիտե՞ս քանի ոսկի է։

— Վէց հազարը չանցնիր։

— Լաւ, երբ մէկը ձեզի 20 ոսկի փոխ կուտայ, երկրորդ տարին քանի ոսկի արդիւնք քաղաք կը տանիք։

— Եթէ բարեբեր տարի չլինի, ամէնէն քիչ տասն ոսկի։

— Շատ լաւ, դու ալ պարտք ունիս։

— Ունիմ, բայց ես կ'ուզեմ որ Մշոյ աշխարհն ազատես, ես իմ պարտք կրնամ հոգալ։

— Լաւ ուրեմն. ապրիս, ես ալ կրխոստանամ Մշոյ դաշտն պարտքէ ազատելու միջոցն գտնել։ Ուրիշ ըսելիք ունիս։

— Ո՛չ. տուր, քո ձեռն համբուրեմ, որ մոռհան չանես. Ս. Կարապետը վկայ լինի։

— Ո՛չ, եղբայր, չեմ մոռանար, մի՛ վախիր. խօսք տուի, բայց այս ալ ըսեմ, որ շուտով կատարուելիք գործ չէ, մեծ գործ է, մեծ մարդոց գուրթը պէտք է։

— Դու գիտնաս, ես ղմեն բան ասացի,—ըսելով ձեռքս բռնեց համբուրեց և սենեկին դուռը բանալով՝ անյայտացաւ։

Երեմիա Սրբազան, Շահպաղլեան վարդապետն և հետաքրքիրն Ա. անհամբեր ինձ կըսպասէին և երբ հիւրանոց մտայ, քմծիծաղով մը սկսան հարցնել.—Շատ երկար տևեց խոստովանանքդ, ի՞նչ ըսաւ, ինչու տրտում ես։

Սակաւ ինչ լռելէն ետքը ըսի.

— «Մշոյ աշխարհի փրկութիւնը վեց հազար ոսկւոյ կարօտ է»։

Այո՛, վեց հազար ոսկւոյ կարօտ է Մշոյ աշխարհի փրկութիւնը։

Թերևս ամէն ոք ծիծաղի այս խօսակցութեան վերայ և ըսէ. ի՞նչ յիմար եզրակացութիւն. Մշոյ աշխարհը իւր թշուառութենէն, իւր ղրկանքէն և իւր բնակչաց անմարդութենէն և նժդեհութեան դիմելէն ընդ միշտ փրկելու համար։

Պէտք չէ ղարմանալ ասոր վերայ, ղի արդէն սովոր ենք քննադատել առաջարկներ և նետել ղայնս անպէտ թղթոց մէջ, գոչելով. անգործադրելի է սա, ղի մեր ժողովուրդն ընդունակ չէ այս պահանջներն կատարելու։

Անիրականալի է դա, ղի մեծ գումարներու կարօտ է։

Անկարևոր է այն, որովհետև հասուն խորհրդածութեան արդիւնք չէ, ղի արդէն յայտնի է իւր առաջարկած գումարէն։

Անօգուտ է այն, որովհետև նմանօրինակ առաջարկներ շատ եղած են, բայց լսող չէ եղած, վերջապէս առանց ղայն լուրջ քննադատութենէ մը անցուցանելու և առաջարկի տիրոջմէն բացատրու-

թիւններ ուզելու, իւրաքանչիւր ոք իւր սենեկին կամ զբօսարաններու մէջ թեր ու դէմ կրխօսի և կրվճռէ։

Մարդ չուզեր գրիչ ձեռք առնուլ ու արտայայտել իւր զգացումներն ու տպաւորութիւններն, գիտնալով որ ձայն բարբառոյ յանապատի լինելու սահմանուած են։

Բայց Մշեցի հայ գիւղապետ մը վկայութեամբ սուրբ Կարապետի պարտք դրաւ վերաս ճար ու դարման մը գտնել իրենց ստրուկ և թշուառ վիճակին։ Սակայն որո՞ւ առաջարկելու կամ գրելու համար և ի՞նչ սրտով, մինչ կրտեսնէի թէ Կ. Պոլսոյ պատրիարքարանն, այսինքն ազգային իշխանութիւնք, որք սահմանադրութեամբ յանձն են առած ազգայնոց նիւթական և բարոյական յառաջադիմութեան ջանադիր լինել և պատրիարքունք որ կ'երդնուն հաւատարիմ մնալ անոր սկզբանց և կատարել իրենց պարտաւորութիւնքն հաւատարմաբար և խղճիւ, մինչև յայսօր ոչ եղած առաջարկութիւններ ի նկատ առած են, ոչ ալ իրենց պարտականութիւնքը կատարած, և կարծեմ, կատարելիք ալ չունին, որովհետև ժողովրդեան, կարօտելոց մէջ չեն ապրիր, և այս վերջինք ալ ոչ կրցած են և ոչ ալ պիտի կրնան խառնուիլ այդ մարմնոց, իրենց աղերսը լսելի ընելու համար...

Ուրեմն, կրնամք ըսել, «Հունձք բազումք են և մշակք սակաւք», և քանի որ մշակներ քիչ ունիմք, գիտնալու ենք որ մեր հնձոց մեծ մասը սահմանուած են կորնչելու, և եթէ ամեն տարի հարիւր հազարներ կրկորսուին, ընդ այս պէտք չէ զարմանալ, բայց կարելի՞ է չցաւել.—այո՛, երբ չենք գիտեր նոցա պէտքն ու կարևորութիւնը։

Պէտքն ու կարևորութիւնն ըսի, և սակայն ո՞վ կրնայ գիտնալ և զգալ զայս, եթէ ոչ անոնք որ մօտէն քննած են այդ ժողովրդեան ողբալի վիճակն և անոր բարւոքման պէտքն զգացած ի զարգացումն հայ գիւղօրէից։

Ի՞նչ անուն տալու է այն բժշկին, որ վտանգաւոր հիւանդութեան մը ենթակայ անձի մը դեղ կրյանձնարարէ՝ առանց զայն տեսած և զննած լինելու։ [1]).

Ունիմք այժմ գործիչներ, որք ճիշտ այս բժիշկին կրնմանին, և

---

[1]) Մենք, Ռուսահայերս, ունինք այդպիսի բժիշկներ, ինչպէս պ. Գ. Արծրունին, որ կեանքում մի հայ գիւղ ոտ չէ դրել տեսնելու այն ժողովուրդը, որին կամենում է դեկավարել։ Եւ ինչո՞ւ հայ գիւղ գնայ, քանի որ Եւրոպայում Ցիւրիխ կայ։ Մ. Բ.

ուղիղ է ըսել թէ այս թշուառներն, հայ գիւղացիք, նոցա այս ընթացքովն կորստեան դատապարտուած են ընդ միշտ։

Նոցա ներքին կեանքին տեղեկանալէ յետոյ՝ ծնաւ մեր մտաց մէջ գաղափար մը, զոր այսօր ի գիր կ'առնումք, յուսալով որ ուշադրութեան առարկայ պիտի լինի անոնց, որք կ'ուզեն բարիք մ'ընել մեր այս թշուառ, այլ աւանդապահ եղբարց։

Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը՝ գիւղացւոց ներքին այս վիճակին տեղեակ՝ ուզեց ջնջել վաշխառութիւնը իւր երկրէն, գնելով յատուկ օրէնք չճանաչելու փոխատուաց հարիւրին մէկէն աւելի նշանակեալ ու պահանջեալ տոկոսն։

Բաց ասկից գիւղացւոց փոխատու երկրագործական սնդուկներ հաստատեց գաւառներու մէջ հարիւրին մէկ տոկոսով։

Պիտանի և կարևոր տնօրինութիւնք։ Բայց ո՞վ կրնայ օգուտ քաղել անոնցմէ։—Ճարտարն ու խելացին։

Վաշխառուն որ այս երկու յատկութիւններն ունի, երկու միջոց գտաւ գիւղացի հայն հարստահարելու, երկրագործական սնդուկներու մէջ եղած գումարն հարիւրին մէկ տոկոսով առաւ ապահովութիւններ տալով, միւս կողմէ փոխ տուած գումարներու վերայ բարձեց հարիւրին 20—30 տոկոս և որոշեալ պայմանաժամերով վճարելի պարտամուրհակներ առաւ խեղճ գիւղացոցմէ, և որոշեալ պայմանաժամն անցնելէ վերջ, վերանորոգեց զայն այն դրութեամբ, ինչպէս յիշեցինք վերն, այսպէս հայրն և նորածին որդին ի միասին գրուեցան հինգ (5) ոսկւոյն տեղ 25 ոսկւոյն պարտաւոր։

Որչափ հարստացան վաշխառուք, այնչափ անգթացան, այնպէս՝ որ Քրիստոսի ըսած սա խօսքը թէ «դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան քան մեծատան յարքայութիւն երկնից» մեկնելու այլ ևս հարկ չմնաց։

Բայց մաղթենք, որ ասոնց զաւակներն՝ լաւագոյն դաստիարակութիւն մ'ստանալով, ապագայի մէջ քաւեն իրենց հարց մեղքերն։

Արդ՝ ինչպէս տեսնուեցաւ, կիսարն և վաշխառութիւնն, իբր ժանտախտ, Մշոյ աշխարհն ի կորուստ մատնած են և եթէ այսպէս շարունակուի այդ բարեբեր և ընդարձակ դաշտը, անախորժ բուերու վայր մը դարձած տեսնելու դժբաղդութիւն պիտի ունենամք։

Ուստի այս անխուսափելի դժբաղդութեան առաջն առնել կարե-

նալու համար՝ ազգի դժբաղդ կացութեան վերայ մորմոքող սիրտ կրող ազգայնոց ուշադրութիւնը կը հրաւիրեմք մեր հետևեալ խոնարհ առաջարկին վերայ։

Նախ պէտք է Մշոյ դաշտին բոլոր գիւղերու պարտուց քանակութիւնը ճշդել տնտեսագիտական մասնաւոր յանձնախմբի մը քննչաց ձեռամբ։

Յետոյ նոյն քննիչք պարտին գիւղացւոց փոխ տալ այն գումարն, զոր առած են նոքա վաշխառուներէ կիսարարի պայմանաւ, որպէս զի այս վերջինք կարողանան հատուցանել իրենց ամբողջ պարտքը, զի ինչպէս տեսանք, մաս առ մաս չընդուներ պարտատէրն։

Քննիչ պարտին իրենք առաջարկել գիւղացւոց փոխատուութիւն այնքան նպաստաւոր պայմաններով, որ վաշխառուն չընդունի կամ չըկարենայ տալ՝ օրինակի համար, եթէ վաշխառուն կիսարարի հաշուով կուտայ պայմանով, որ ձմեռն կենդանիներն և ամառն ինքն, տղաներն ու մանչերը ձրիաբար կերակրուին պարտատիրոջ տան մէջ, ինչպէս և ձրիաբար քաղաք փոխադրուի իւր ստացած բաժինն պարտատիրոջ միջոցաւ։ Քննիչք պէտք է հետզհետէ թեթևացնեն իրենց պայմանները ներկայանալով վաշխառուաց դէմ իբր պարզ մրցակիցներ մինչև որ տոկոսն զեղջուի հարիւրին մէկի։

Քննիչք պարտին առաջարկել գիւղացւոց միշտ շահաւոր պայմաններ, բայց պէտք չէ որ ապահովութեանց մասին փոքրիկ զիջողութիւն մը իսկ ընեն։

Տնտեսագիտական մասնախումբը իր շահած դրամոց մի մասն պարտի յատկացնել պարզ նախակրթարաններու, որոց մէջ կարդալ, գրել, հաշուել և նախնական արուեստներ պէտք է ուսուցուին միայն։

Տնտեսագիտական յանձնախումբն պարտի ջանալ որ կենդանեաց ընտիր տեսակներ, երկրագործական գործիքներ ունենան գիւղացիք, ի հարկին պէտք է անոնք զոհողութեամբ վաճառէ՝ կանխաւ զանոնք այլ և այլ տեղերէ բերել տալով՝ պէտք է շինել տայ նոր ձևով գիւղական տուներ, կառքեր և զանոնք աժանագին վաճառէ, զի այսօրուան տուներն ու կառքերն չեն համապատասխան ժամանակիս պահանջմանց և դիւրութիւնք չեն ընծայեր անձամբ երկրագործի արտադրութեանց փոխադրման։

Շատ պարտաւորութիւններ կրնամք դնել հետզհետէ այս յանձ-

նախմբի վերայ գիւղօրէից տնտեսական վիճակին բարւոքման զարկ տալու համար, բայց այժմ զանոնք յիշել աւելորդ կը համարիմ, որպէս զի ամենադժուար մի ձեռնարկութիւն չհամարուի, զի Մշոյ բարերեր դաշտն և գիւղացիներն իմաստասիրողք միայն չեն, որ պիտի ընթեռնուն զայս, այլ ամենամեծ մասամբ անոնք պիտի կարդան, որոնք չեն հաւատար և չեն լսած թերևս թէ այս Երկրի մէջ մէկ ոսկին մէկ տարուայ միջոցին ընդհանրապէս կը կրկնապատկի և դուցէ չը կրնան հաշուել թէ տնտեսագիտական յանձնախումբ մը 6,000 ոսկի դրամագլխով չորս-հինգ տարուց մէջ որչափ հող և որքան դրամական շահ կ'ունենայ՝ տեղական կենաց հմուտ երեք գործունեայ անձանց ձեռամբ։ [1]).

Ահա վեց տարիներէ ի վեր քարոզածս այսօր ի գիր կ'առնում՝ պարտականութիւն մը կատարած լինելու համար։

Կը ցաւիմ և կը սոսկամ ըսել թէ՝ մեր կղերն, մեր մեծատունք և մեր պաշտօնական մարմինք գիտեն և կը տեսնեն որ ամէն օր հաղարաւորներ կը թշուառանան ու կը փճանան. բայց չեն մտաբերեր բնաւ նոցա վերայ խորհել, պատճառն գտնել, դարման մտածել, որովհետև սովորական մի երևոյթ դարձած է այդ վիճակը յաչս նոցա։

Օսմ. կայսերական կառավարութիւն երկրագործական քննիչներ ղրկեց իր երկրի ամեն կողմն և տեղեկագրեր պահանջեց։ Եկան տեղեկագիրք, բայց չեն գիտեր թէ ինչ միջոցներ կ'առաջարկուին երկրագործ ժողովրդեան վիճակը բարւոքելու։ Կը յուսամք որ դարձեալ մեր Օսմ. կառավարութիւնը խորհի դարմանն՝ փրկելու իւր ժողովուրդը մշտնջենական տառապանքէ, և այսպէս իւր արքայական գանձուն ժիր մշակները իրաւամբ քաջալերէ։ [2]).

Կ. Պոլիս: Վ. Յ. Մ.

---

[1]) Վեց հազար ոսկին հանգանակել եթէ դժուարին համարուի, կարելի է երաշխաւորեալ տոկոսաբեր պարտատոմսեր ի հրապարակ հանել և այսպէս դիւրութեամբ դրամագլուխն կազմել։

[2]) Տեղի տալով սոյն յօդուածին, մենք հրաւիրում ենք Կ. Պոլսում լինակուող հրապարակախօսների ուշադրութիւնը այս կարևոր հարցի վերայ, որովհետև նոքա աւելի միջոց ունին խնդրիս վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու և ի մտոյ դրծին ծանօթանալու։

Ծան. Հր.

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՆՈՐ ԱՅԺՄԵԱՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԵԱՄԲ։

Հայոց ժողովուրդը իւր այժմեան վիճակի մէջ Ռուսաստանում, անտարակոյս գտանվումէ հոգեղէն շարժողութեան մէջ և փոքր ի շատէ յառաջադէմ է ժամանակի ընթացքի հետ։ Նա կեանքի մէջ շատ բան տեսանումէ, շատ բան լսումէ, շատ բան ուսանումէ կեանքից և դպրոցից, իբրև անգամ քաղաքական ընկերութեան որոյ մէջ կայ օրէնք, իրաւունք, դատ ու դատաստան, անձնական ազատութիւն և պաշտպանութիւն սեփականութեան, մի խօսքով, քաղաքավարական կարգ և կառավարութիւն։ Հայոց այժմեան վիճակը Ռուսաստանի մէջ ցուցանումէ անհամեմատ առաւել թէ նիւթական և թէ մտաւոր բարօրութեան պայմաններ, քան թէ որ և իցէ յառաջընթաց օրերում ասիական անկարգ, բռնակալ, ամենայն յառաջադիմութիւն ճնշող, ամենայն ազատ շարժողութիւն կաշկանդող կառավարութեան ներքոյ։ Ռուսաստանը իւր քաղաքական կարգերի հետ միասին տարածումէ ամենայն տեղ լուսաւորութիւն, կրթութիւն և գիտութիւն, որ չափով և որ կերպով ինքը մինչև այժմ կարողացած է այդ բարիքը սեփականել իւրեան փոխ առնելով արևմտեան Եւրոպայի առատաբուղխ և ճոխ աղբիւրներից։ Ռուսաստանը ըստ իւր աշխարհագրական դրութեան կոչուած լինելով միջնորդել ի մէջ Եւրոպայի և Ասիայի, տալիս է և ասիական ժողովուրդներին, ինչ որ ինքն ունի օտարից առած, մշակած ու պատրաստած ռուսական կերպարանքով. և այս պատճառով ռուսական լեզուն, առանց միտ դնելու տէրութեան մէջ եղած այլացեղ և այլախօս ազգերին, է և իրաւացի պիտի լինի թագաւորական հրապարակական լեզու, որով խօսումէ օրէնքը, դատաստանը, կառավարութիւնը, ազգային ուսումը, դպրոցը, գիտութիւնը։ Այս բոլորը շատ բնական է, որովհետև տէրութիւնը գործ ունի ընդհանրութեան հետ և ոչ առանձին ցեղերի և մարդերի հետ. բայց ռուսական տէրութիւնը, որ պարտական է պահպանել կառավարութեան մէջ ընդհանուր միութենական կարգ և օրէնք, յարգելով թագաւորութեան այլաբարբառ և այլազգաւան հպատակների առանձնական իրաւունքը, շնորհել է նոցա ազատութիւն պաշտելու իւրեանց լեզուն և մատենագրութիւնը, ունենալու իւրեանց մասնաւոր

դպրոցները, կատարելու իւրեանց կրօնական ծէսերը և եկեղեցական կարգերը։ Պետերբուրգում հրատարակվումն երկու մեծապարունակ գերմանական օրագիրք, մի ֆրանսիական. կան բազմաթիւ այլադաւան քրիստոնէական եկեղեցիք իւրեանց առանձին դպրոցներով. Մոսկուայում տպվումէ մի գերմանական օրագիր, գտանվումն երկու աւետարանական եկեղեցիք և մի ռեֆորմատեան, նոյնպէս իւրեանց առանձին դպրոցներով, երկու կաթոլիկեան եկեղեցիք իւրեանց ծխական ուսումնարաններով։ Նոյն ազատութիւնը տեսանումենք շնորհուած և Կովկասեան ազգերին։

Թողնենք այս բոլոր ազատութիւնքը և տէրութենական շնորհները, որ բոլոր այլացեղ ժողովուրդները հաւասարապէս վայելումեն Ռուսաստանի գայիսոնի ներքոյ. մասնաւորենք խնդիրը, դարձուցանելով մեր խօսքը դէպ ի մեր սիրելի հայ եղբայրակիցքը, և հարցանենք, թէ դոքա որ չափով և որպիսի կերպով գործ են դրած և գործ են դնում այդ ազատութիւնը պաշտելու իւրեանց լեզուն, գրելու և խօսելու հայերէն իւրեանց ընկերի հետ. արդեօք մեր ժողովրդական լեզուն և մատենագրութիւնը մշակվումեն և մշակուած են այնպէս, որ կարողանայինք ասել, թէ վաստակած են արդէն որ և իցէ մատենագրական դանձեր արժանի մշտնջենաւորութեան, այսինքն կարողք տևելու և դիմանալու անաչառ կրիտիկայի հրափորձութեանը և դառնալու հաստատուն հիմք ընտիր ազգային հայախօսութեանը գալոց սերունդի կրթութեան և դաստիարակութեան համար։

Անցած գնացած օրերի «Հիւսիսափայլի» արդիւնակատարութեան վերայ խօսել անվայել է մեզ իբրև նորա հրատարակողի. մեր ժողովուրդը մօտից և հեռուից վաղուց արդէն հատուցել է նորան իւր արժանը, ուրեմն և մեք կարող ենք բոլորովին ի բաց թողուլ նորան մեր ճառի շրջանից։

Ներկայիս մատենագրութիւնը Հայոց Ռուսաստանում գրեթէ բոլորովին ամփոփուած է նոցա ամսագիրների և շաբաթագիրների մէջ. աւելի մեծաքանակ գրուածք և երկարաշունչ աշխատութիւնք այնքան սակաւաթիւ և չնչին են, որ արժանի չէին և յիշողութեան անգամ։ Մեր ուշադրութիւնը դադարեցնենք նախ և յառաջ «Արարատ» ամսագրի վերայ, որ կամի լինել կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային նիւթերի վերայ ճառագրութեան հանդէս, խմբագրութեամբ «միաբանից առաքելական մայր աթոռոյ Հայաստանեայց սրբոյ Էջմիածնի»։

Ամենայն բարեմիտ Հայ, հարազատ որդի իւր ազգի, և մեք առաւելապէս տեղիք ունինք առ ի սրտէ ուրախանալու տեսանելով որ մեր հոգևոր դասը, նորա բարձրապատիւ երեսփոխանքը յաղթելով իւրեանց ծուլութեանը և հրաժարուելով իւրեանց անպտուղ դատարկակեաց բարքից, գրիչ ձեռք առած կամին պրականաբար վաստակել և որ և իցէ չափով-ու կերպով պիտանի լինել այն ժողովրդին, որ սնուցանումէ նորանց, ամօթ համարելով իւրեանց մի անջան հեշտութիւն։ Որչափ ևս մեք առ ի սրտէ պատրաստ ենք մեր հոգևոր դասու վերին երեսփոխաններին հատուցանել արժանը և պատշաճը, լիովին խոստովանելով նոցա բարի կամքը և դիտաւորութիւնը, սակայն մեր առ նոսա բարեմտութիւնը չպիտի կաշառէ մեր սիրտը, կամ ճնշելով մեր դատողութեան և կարծիքի ազատութիւնը։

Բաց ի բանասիրական մասնից, որ յիշած է Ամսագրի ճակատի վերայ, թէպէտ մեք այդ մասը տեսանում չենք նորա նիւթերի մէջ, նոյն իսկ կրօնական, բարոյական և պատմական ճառագրութիւնքն ևս շատ չքաւոր և աղքատին են. կրօնականքը և բարոյականքը, որ պիտի միմեանց հետ լծորդ ու կապակից մնային, որպէս նոքա են իսկութեամբ, տեսանումենք շատ թոյլ, ոմանց ճառերի մէջ այս ու այն աղբիւրից մուրացածոյ կրկնութիւնք առանց նորանոր խորհրդածութիւնների, առանց ազդու և գրաւիչ մտքերի. միայն թէ դոցա մէջ ակնյայտի երևումէ մի տեսակ սաստիկ զինուորութիւն և զրահավառութիւն ընդդէմ նիւթապաշտութեան որ, մեր կարծիքով, այն ժամանակ միայն կըչափաւորուէր մեր ազգի մէջ, երբ փոխանակ ճառերի, որ լոկ խօսքեր են, կենդանի օրինակներ հոգեպաշտութեան դրուէին ժողովրդի աչքի առջև, իբրև լուսատու ճրագներ այն աշտանակներից, ուստի պարտ ու պատշաճ է, որ մեր ժողովուրդը ստանար իւր առաջնորդական լոյսը։ Մեք գտանումենք «Արարատի» մէջ և դաւանաբանական ճառեր, թէպէտ այդպիսի հատուած նշանակած չէ նորա բովանդակութեան մէջ, դաւանաբանական ճառեր, խառն քրիստոնէական կրօնի պատմութեան հետ, բայց, ցաւալի է ասել, հին և բորբոսեալ տեսութեամբ և մեր լուսաւոր ժամանակի սահմանից դուրս։ Ստուածաշունչ մատեանը է ոչ թէ միայն մի կրօնուսոյց և բարոյախօս մատեան. նա է միանդամայն և մի հոյակապ, անգին յիշատակարան մարդկութեան նախնի վիճակի, ուր ժողոված ու ամփոփած են հաղարաւոր դարերի փորձեր, զննու-

թիւնք, ծանօթութիւնք և իմաստութիւնք, և այս պատճառով կարօտ փիլիսոփայական, բազմահայեաց տեսութեան, եթէ արժան էր մեզ վերահասու լինել նորա ճշմարտութիւններին, որ բոլորը վարագուրած են ասիական ծաղկաւէտ երևակայութեան գեղեցիկ պատկերների, առակների, հայելի օրինակների զգեստով, որ միակ ոճն է ասիական ազգերի դաստիարակութեան և իմաստութեան. այս պատկերները մերկացնել, այս ստուերը պէպ ի լոյս փոխարկել — ահա՛ ճշմարիտ քրիստոնէական գիտութեան լուծանելի խնդիրը։ Դառնանք դէպ ի կարգը մեր բանի, և հարցանենք թէ «Արարատը» ինչ ոճով և ինչ լեզուով մշակումէ իւր նիւթերը. մեք այդտեղ հանդիպումենք ամենայն տեսակ ոճի, երբեմն գրոց լեզուին, երբեմն աշխարհաբառին, գրոց ոճերի հետ խառնած ու շփոթած, մի աշխարհաբառ խօսքի, որ երբեմն հետևումէ Ցաճկահայոց բարբառին — որ թագաւորած է «Արարատի» մէջ — իսկ երբեմն Ռուսահայոց բարբառին։ Մեք ունինք իրաւունք առաջարկելու այստեղ մի խնդիր. որ տեղ է տպվում «Արարատը», և ոյք պիտի լինին նորա անընդմիջական ընթերցողքը. յայտնի է ապաքէն, որ Ռուսահայոց մէջ, որ և են նորա ամենամօտ ընթերցասիրողքը. ուրեմն թող պատասխանեն մեզ լոգիկական եզրակացութեամբ մեր պատուելի հարքը Ս. Էջմիածնի. թէ ինչ խորհուրդ ունի «Արարատ» ամսագիրը հրատարակել Ռուսաց Հայերի մէջ մի լեզուով, որ դոցա անհասկանալի է. օտարոտի՞ անուշադրութիւն տեղական պայմաններին, կամ նախապատուութիւն դէպ ի Ցաճկահայոց բարբառը, առանց ապացուցանելու մեզ նորա առաւելութիւնը։ Ս. Էջմիածնի պատուական հարց ընթացքը մի տգեղ և անպատշաճ երևոյթ է ստանում, որպէս թէ նոքա կամէին օտար, տաճկահայ բարբառը իբրև ծառայութեան լուծ դնել մեր վզին. բայց մեք, նոցա պարծանքի համար, չկամինք թոյլ տալ, որ նոցա գիտաւորութիւնը այդպէս լինէր էութեամբ։ Եւ մի մեծ անլուծանելի հակառակաբանութիւն պիտի լինէր, եթէ Էջմիածնեան աթոռը քարոզելով միշտ ժողովրդի հետ աջակից միաբան գործ և վաստակ յօգուտ ազգի, հրաժարուէր իւր ժողովրդի հետ միասին մտածել, միասին զգալ և միասին խօսել։ Եւ ոչ այսչափ միայն. այլ և Էջմիածնեան հարք լինելով ժողովրդի հոգևոր դասու պարագլուխքը, եթէ կամէին լինել և աշխարհական դասու առաջնորդքը մտաւոր լուսաւորութեան հանդիսում, հարկաւ պարտական են իւրեանց գրաւոր ճառերի մէջ ընտիր նոր

հայկարանութեան օրինակ ընծայել ժողովրդին, որ կրլինի ուշի ուշով ուսումնասիրելով այժմեան ժողովրդական լեզուն, մշակելով նորան այժմեան գիտութեան պայմաններին և պիտոյքին յարմար և լցուցանելով նորա պակասութիւնքն ու թերութիւնքը գրոց լեզուի ձոխ գանձարանի նիւթերից. ժողովրդական բարբառով մաքուր, իստակ և գեղեցիկ հայախօսել ես չեմ հասկանում այն, որ նոր հայկական լեզուն խառնակուէր և ճամկաւորուէր գրոց լեզուի ոճերով, այլ պինդ և ամուր մնալով ժողովրդի այժմեան կեանքի պայմանների մէջ, չխոտորուէր հայկազեան լեզուի հոգուց ու գաղափարից ընդհանրապէս. այս նիւթի վերայ մանրամասնաբար խօսք կրլինի յետոյ։

«Հայկական աշխարհ», մանկավարժական և կրօնական օրագիր, որոյ 1876 թուականի ցունուար և փետրուար ամիսների տետրակները (կամ թէ համարքը, որովհետև տետրակը մի հատ է) այս րոպէիս մեր աչքի առջև են։ «Հայկական աշխարհի» արդիւնագործութիւնը ներկայումս, համեմատելով նորա արդիւնագործութեանը անցեալում, ցուցանումէ անուրանալի յառաջադիմութիւն թէ լեզուի և թէ նիւթերի պատուականութեան մասին, առ հասարակ։ Ճառը Քրիստոսի մկրտութեան օրին գրած է ջերմութեամբ և հոգևորութեամբ, Քրիստոսի աստուածեղէն անձը իբրև կենդանի պատկեր և գաղափար առաքինութեան և կատարելութեան, իբրև օրինակ աստուածսիրութեան, անձնազոհ ընկերսիրութեան և մինչև ի մահ խոնարհութեան հայրական կամքին գրաւեց մեր ուշադրութիւնը, քաղցրութեամբ շարժեց մեր սրտի լարերը։ Գիտնական ճառերի մէջ, որոց հեղինակքը մնումեն մեզ անյայտ, հանդիպումենք երբեմն հայեացքների և կարծիքների, որք լինելով հանուած երկրորդական, ածանցած և պղտոր աղբիւրներից, առանց ինքնաշխատ ուսումնասիրութեան և վերահասութեան բանի իսկութեանը, նոյն իսկ նախնական աղբիւրներից, տարածումեն անփորձ ժողովրդի մէջ սխալ և մոլար տեսութիւնք. դատել և դատապարտել առանց ինքնին վերահասութեան, շատ հեշտ բան է, որովհետև կարօտ չէ ոչինչ աշխատութեան, այլ հարկաւոր էր միայն կուրօրէն կրկնել սորա և նորա բառերը։ Խօսքս այստեղ Ֆրիդրիխ Ֆրեօրել «Պարտէզ մանուկների» ասած երեխայական դաստիարակութեան ոճի վերայ է, որ երբէք ունեցած չէ և չունի այն չար և վնասակար ազդեցութիւնքը, որ ընծայումէ նորան ճառի անանուն գրողը, ինքն իւրեան հակառակելով, որովհետև

նախընթաց խօսքերին համաձայն չեն եզրակացութիւնքը։ «Հայկական աշխարհի» գրութեան ոճը չէ ազատ այն ընդհանուր յաւից, որին այնքան յաճախ հանդիպումենք հայկական գրուածների մէջ, այսինքն մտածել ըստ գաղափարի ռուսական լեզուի. բայց մի առանձին ոճ սեփական է «Հայկական աշխարհի» հրատարակողին, որ ոչինչ այլ տեղ տեսանվում չէ. այսինքն նախ և յառաջ գործ ածել մի գոյական անուն անորոշ յօդովս մի, իսկ յետոյ որոշել գոյականը վերջատառովս ը. զոր օրինակ այս չհայ ոճի մէջ. «չեմ կարող չհրաւիրել Վեհափառ Հայրապետի ուշադրութիւնը մի նշանաւոր իրողութեանը, որի վտանգաւորութեան առաջն առնել (առաջքն ունել կամ առնուլ) դեռ ևս հնար է». բաւական էր այդտեղ ասել—մի նշանաւոր իրողութեան. որովհետև մեծ զանազանութիւն կայ ի մէջ մի մարդ և մի մարդը, մի մարդս ասելու մէջ. առաջինը կամի ասել հայերէն un homme. իսկ երկրորդը un homme seul. մի մանուկ և մի (հատ) մանուկը- un enfant և le seul enfant. Ա՛ռ հասարակ, երբ հայերէնում մի գոյական գործ է ածվում որոշ մտքով և ձևով, այն տեղ անպատշաճ է անորոշ յօդս մի:

Մեք յօժարութեամբ խոստովանումենք «Հայկական աշխարհի» հրատարակողի բարի դիտաւորութիւնը աշխատասիրելու յօգուտ ազգի, որչափ բերումէ նորա կարողութիւնը. մանաւանդ իւր տառապալից դրութեան մէջ և պատերազմելով ընդդէմ հաղար տեսակ դժուարութիւնների։ Մեք կրցանկայինք տեսանել նորան աւելի խաղաղ դրութեան մէջ։

Այժմ մի քանի խօսք «Դպրոց» մանկավարժական ամսագրի վերայ, որոյ խմբագիր հրատարակողն է Վահան վարդապետ Բաստամեանց։ Այդ ամսագիրը կէտ նպատակի դրել է իւր առջև տեղեկութիւնք տալ Հայոց ժողովրդին ազգային ծխական ուսումնարանների մասին զանազան տեղերում, ծանուցանել Հայերին ժողովրդական լուսաւորութեան Նախարարի հրահանգները արքունի ուսումնարանների համար, մասնաւորել նոցա վիճակագրական տեղեկութիւնք արքունի եկեղեցական ուսումնարանների մասին, Գերմանիայի վարժապետանոցների ծանօթութիւնք, պատմական նկարագիրներ, դպրոցական առողջապահութեան կանոններ, մանկավարժական դասախօսութիւններ և ուսուցչական ժողովներ և այլ տեսակ մանր գիտելիք։ Այս բոլորը ըստ մեծի մասին թարգմանութիւնք ռուսական թերթերից և շատ սակաւք ֆրան-

սիարէնից։ Ոչ ոք խելք ունեցող մարդերից և մեք ամենևին կարող չեմք ուրանալ Հայր Վահան Բաստամեանցի գովանի աշխատասիրութիւնը, և արդիւնագործութիւնը նոր հայկական դպրութեան մէջ, որ գլխաւորաբար նուիրած է մանկավարժութեան կարևոր գործին։ Միայն թէ զարմացած ենք այն մեծամիտ, այո և թեթևամիտ կարծիքի վերայ, որ նա մի անպատշաճ յանձնապաստանութեամբ ճառագրումէ անցեալ տարու (1875 թուականի) 11 և 12 համարներում, խմբագրութեան յայտարարութեան մէջ։ Նորա կարծիքով «Կովկաս հայկական օրագրի կամ լրագրի, նորանից յետոյ «օրպակաս» ծնած «Արարատի», «Կռունկի», «Հիւսիսափայլի», «Ճռաքաղի», «Ծիածանի» և մի քանի այլ միւսերի հրատարակողքը առանց խորութեան չկամեցան, իսկ ոմանք նոցանից գուցէ թէ և չէին կարող ուսանել և ճանաչել իւրեանց ժամանակակից պիտոյքները և պահանջները, չկշռեցին և չորոշեցին թէ որպիսի ընթացք և ուղղութիւն պիտոյ էր տալ ժամանակակից ամսագրին և լրագրին, այլ շարադրեցին, թարգմանեցին և տպեցին այն, ինչ որ ախորժելի էր, հաւանելի և մանաւանդ հասկանալի իւրեանց համար։ Եւ երբ տեսան նոքա, որ չկան կարդացողներ Շէքսպիրի և Շիլլերի ողբերգութիւնների համար, Կիկերոնի և Դեմոսթենէսի ատենաբանական ճառերի համար, աստուածաբանական դատողութիւնների և քննութիւնների համար, սկսեցին տրտնջալ ազգի դէմ և սառնասիրտ, ապերախտ, տգէտ, տխմար և այլն և այլն և այլն ածականների կարկուտ կուտել նորա գլխին։ Այո, սխալուեցան այդ ազնիւ պարոնները և սխալանաց մէջ գլորեցին նաև այն ժողովուրդը, որի համար նոքա կամենում էին գործել։ Նոքա տուին ժողովրդին բոլորովին ծուռ գաղափար օրագրական մատենագրութեան վերայ և ժողովուրդը խաբուած լինելով իւր յոյսերի և համոզմունքների մէջ, յետ քաշուեցաւ, մերժեց օրագիրները և լրագիրները»։ Այսպէս մեր պատուելի Հայր Վահան Բաստամեանցը, որ յետոյ յաւելացնումէ այսպիսի խօսքերը. «Այժմ ասպարէզը մնացել է միայն «Արարատին», «Մեղուին», «Մշակին» և «Հայկական աշխարհի», բայց «Դպրոցին» ոչ. անհամեստ անհամեմատութիւն. ինչպէս երևումէ վերոյիշեալ բանքի գրողի յայտնի ակնարկութիւններից, ինքը, Հայր Վահան Բաստամեանցը գտել է իմաստունների քարը (философскій камень), ոչ ոք նորանից յառաջ գուշակել չէ մանկավարժութեան կարևորութիւնը և ոչ իսկ նուիրած է զորան

իւր ուշադրութիւնը որ և իցէ ճառախօսութեամբ. ոչ ոք, բաց ի Բաստամեան Հօրից, խորամուխ լինելով հասկացած չէ Հայկական ժողովրդի ներկայ պիտոյքը և կարօտութիւնը. վասն որոյ ժողովուրդը յետ քաշուելով մերժել է իւր անօգուտ և անփորձ աշխատաւոր օրագիր մատենագիրքը։ Կան աշխարհիս մէջ մի տեսակ մարդիկ, որ կարող են ամենայն բան խօսել և գրել հրապարակաւ, բայց չունին իրաւունք պատասխան ստանալու, որովհետև իւրեանց անձը դորան անարժան են կացուցած. և այսպիսի մարդերի կարդում—ցաւում ենք—որ մեզ ստիպել է Հայր Բաստամեանցը դնել նորան։ Մեք այս տեղ գործ ունինք միայն մեր ժողովրդի հետ, որ ոչ թէ մերժել է «այն Հիւսիսափայլ օրագիրը ընդհանուր աղգային լուսաւորութեան և դաստիարակութեան»—որ Բաստամեանց Հօր, հոգևոր հօր անարժան ստախօսութեամբ, ոչինչ չէր տուել աղգին, բայց միայն Շէքսպիրի??!! և Շիլլերի ողբերգութիւնքը և Կիկերոնի, Դեմոսթենէսի?? ատենաբանական ճառերը—ոչ թէ մերժել է, այլ մինչև օրս խնդրելով խնդրումէ և աղաչելով աղաչումէ, առանց կարողանալու հասանել իւր փափագին։

Արդարև «Հիւսիսափայլ օրագիրը ընդհանուր աղգային լուսաւորութեան և դաստիարակութեան» կամաւ և գիտութեամբ մշակել է մի քանի բանաստեղծական գրուածքը Շիլլերի, մի քանի հոյակապ ճառերը Կիկերոնի—երանի՜ թէ կարողացած լինէր տալ իւր աղգին Շէքսպիրի չնաշխարհիկ գործերից և Դեմոսթենէսի ատենական ճառերից քանի մի նշխարներ, բայց կարողացած չէ—Հիւսիսափայլի հրատարակողը այդպէս ընթացել է, որովհետև նա սրտի վկայութեամբ գիտէր և ուսած էր աղգերի դաստիարակութեան պատմութիւնից, թէ չկայ ոչ մի աւելի զօրաւոր հնար, աւելի աղդու շարժարան գործելու, կրթելու և դաստիարակելու մի ժողովրդի սիրտ և հոգի, նորա բարքը և վարքը և ճաշակը, եթէ ոչ ճարտարութեան գործերով, բանաստեղծական գրուածներով, ընտիր արուեստահիւս բանախօսութեամբ։ Այս բանս աւելի լաւ հասկացաւ մեր անուսումն ժողովուրդը, աւելի լաւ գին կտրեց նորան իւր անխառն, առողջ բանականութեամբ, քան թէ ուսումն առած, իրաւագէտ Հ. Բաստամեանցը։ Խնդրումենք շատ անգամ ներողութիւն մեր աղնիւ ժողովրդականներից, որ ձանձրացուցինք նոցա ուշադրութիւնը, գուցէ թէ փոքր ինչ երկար խօսելով մի նիւթի վերայ, որոյ էութիւնը

քաջ յայտնի է նոցա. Հիւսիսափայլը պատերազմեց իւր պատերազմը, յաղթութեան արմատներին ստացաւ, և այդ յաղթութեան պտուղքը այժմուս վայելումէ մանուկ սերունդը, իւր ծնողին անարգող սերունդը. մեք կորուսանում չենք մեր հոգու խաղաղութիւնը. ամենայն առաքինութիւն կրումէ իւր ինքեան մէջ իւր վարձը և սովոր է բաւականանալ դորանով։

«Դպրոց» մանկավարժական ամսագրի հայախօսութիւնը չլինելով այլ ինչ, բայց միայն ըստ մեծի մասին ծառայաբար թարգմանութիւն ռուսական լեզուից, կրումէ իւր վերայ և ռուսական ոճի կնիքը, որովհետև հրատարակողը տեղեակ չէ հայկական ուղղախօսութեան կանոններին։

Այժմ գալիս ենք խօսելու մեր երկու հայկական լրագիրների, «Մեղու Հայաստանի» և «Մշակ» պարբերական թերթերի վերայ։ Դոքա երկուքն ևս հրատարակվումեն Թիֆլիսում և բերումեն մեզ ամենայն շաբաթ զանազան տեղեկութիւնք տեղական քաղաքային կարգադրութիւնների, քաղաքային ընկերութիւնների խորհրդածութեան և գործակատարութեան մասին—ներքին լուրեր անունով, այլև պէսպէս ծանօթութիւնք ազգային դպրոցների, ծխական ուսումնարանների, թէ Թիֆլիսում և թէ այլ հայաբնակ քաղաքների և գիւղերի մէջ, դոցա հոգաբարձական ընկերութիւնների, յառաջադիմութեան կամ յետախաղացութեան պատկանեալք։ Այդ լրագիրների մէջ հանդիպումենք նոյնպէս նամակագրութիւնների զանազան հայաբնակ քաղաքներից, ուր գտանվումեն հայկազեան երիտասարդք, փոքրիկ ճառեր և մտածութիւնք ազգային խնդիրների, ազգային ցաւերի ծանօթութիւնք հասարակօգուտ տնտեսական գիւտերի վերայ։ Այլև համառօտ տեղեկութիւնք ժամանակակից քաղաքական անցքերի և որպիսութիւնների մասին Եւրոպայում, իբրև արտաքին լուրեր։

Մեք շնորհակալ ենք այդ երկու, ազգային լրագրական դպրութեանը սպասաւորող շաբաթագիրներին, որչափ մեզ հասած են մինչև այժմ դոցա թերթերը և որչափ կարողացած ենք հասկանալ այդ գրուածների բովանդակութիւնը, զգեստաւորուած մի կերպարանքով, որ մեզ տալիս են մի տխուր ապացոյց, թէ «Հայաստանի Մեղուի», որպէս և «Մշակի» պատուելի հրատարակողքը երկուքն ևս չգիտեն հայերէն, այլ իւրեանց համար շինած են մի հասարակաց նորահնար լեզու, ամենևին օտար թէ ընդհանուր ժողովրդական բարբառից և թէ ուղիղ հայախօսութեան

կանոններից։ Բայց այս մեծապարունակ խնդիրը քանի մի խօսքով վճարել չկամինք, այլ սկսանումենք դորա վերայ փոքր ինչ ընդարձակ քննութիւն։

Հայկական ժողովուրդը ընդհանրապէս ունելով աղքատին և չքաւոր շրջան իդէաների, և նորա լեզուն մնացել է աղքատ և չքաւոր. կարելի է ասել, նա ունի այնքան միայն պաշար խօսքի, որքան նորա իմացական պիտոյքն են, որպիսի նորա քաղաքագործութեան, կրթութեան, զարգացման աստիճանն է, որպիսի նորա ուրախութիւնքը և տրտմութիւնքը, որպիսի նորա հանապազօրեայ ընտանեկան և ընկերական կեանքն է. մի ազգի լեզու է նորա կեանքի ճիշդ պատկերը, հայելի օրինակը։ Նախ և յառաջ դաստիարակիր մի ազգ, տուր նորան ծանօթութիւնք աշխարհի և հասարակաց մարդկութեան մէջ անցած բաներին, տուր նորան հիմնաւոր տեղեկութիւնք բնութեան օրէնքին և այն յայտնութիւններին որ այդ օրէնքի ներքոյ լինումեն տիեզերքի մէջ— մի խօսքով, տուր ժողովրդին մտածութեան նիւթեր պատշաճապէս, աղնուապէս, արժանապէս մշակուած ու զգեստաւորուած, նորա հոգուն և սրտին օրինաւոր պատրաստած կերակուր, առողջ սնունդ—այնուհետև դու կը տեսանես նորա մէջ մի զարմանալի կերպարանագործութիւն նորա խօսքի մէջ. յանկարծ կը բացուի նորա լեզուն, որ տգիտութեան պատճառով կապած ու կաշկանդած էր. դու կը լսես նորա բերանից օրինաւոր, կապակից, խելացի ոճով խօսք ու զրոյց—ապացոյց ներքին զարգացման, բանական դատողութեան, որովհետև նա մտածումէ, ունի գաղափարներ, նորա սիրտը լցուած է զգացողութեամբը, և դրբա ձգտումեն դէպ ի դուրս, կամին հաղորդուիլ և միանալ իւր ընկերի հոգուն և սրտին և այդպէս դառնալ հասարակաց ժառանգութիւն. որ մարդը, որ ազգը ստացած չէ և չունի գաղափարք (իդէայք), նա չունի և լեզու, որովհետև խօսել և մտածել մի և նոյնն է. ով չգիտէ խօսել, նա և մտածում չէ։

Մանուկների նախնական դաստիարակութեան գործի մէջ ծայրագոյն կանոն է հսկել նոցա ուղղախօսութեան վերայ. այս խորհրդով իմաստուն ծնողք սովոր են, կամ, յատկապէս, պարտական են կարգել իւրեանց մանուկների վերայ այնպիսի սպասաւոր տեսուչք, որ գիտէին ուղիղ խօսել, որպէս և նոյն իսկ ծնողք ամենայն բոպէ, իւրեանց ամենայն ընթացքի և խօսակցութեան մէջ մանուկների հետ, պիտի զգուշանային, որպէս զի ոչինչ չար

օրինակ չտային նոցա, ոչինչ ծուռ և սխալ խօսքի ոճ չպատուաստէին նոցա լեզուի վերայ, այլ ուղիղ խօսքի հետ միասին ուսուցանէին նոցա և ուղղապէս մտածել։ Ով չգիտէ դաստիարակել իւր անձը, նա կարող չէ դաստիարակել և իւր ընկերը։ Այս մի անյեղլի օրէնք է։

Այս, բոլոր մտածող դաստիարակիչ մարդերի մէջ խոստովանուած և ընդունուած կանոնի վերայ հիմնուելով, համարձակումեմ խնդիր մէջ բերել, արդեօք մեր օրագիր և լրագիր հրատարակողք լցուցանո՞ւմէին իւրեանց պարտականութիւնը իբրև ուսուցիչք և դաստիարակիչք այն տղայ հասարակութեանը, այն չափահաս մանուկներին, որոց առաջնորդել յանձն էին առած. արդեօք նոցա գրչի տակ նոր հայկական լեզուն այնպէս մշակվո՞ւմէր, յարդարվումէր, կատարելագործվումէր, որ իշխանութիւն ունէինք յուսալու, թէ գալոց օրերի մատենագրութիւնը կարող էր հաստատուիլ դոցա ձեռամբ գրած հիմքի վերայ։ Մտադրութեամբ ուսումնասիրելով մեր այժմեան լրագիր ու օրագիր հրատարակողների և սակաւաթիւ, մատերի վերայ թուելի մատենագիրների վաստակքը, մեք հասանումենք տխուր եզրակացութեան, որ է, թէ այդ ամենիւ պարոնները կամ բոլորովին մոռացած էին իւրեանց մայրենի լեզուն, կամ թէ երբէք ուսած ու գիտցած չեն. թէ դոքա գրաւոր կերպով խօսելով հայկաղեան հասարակութեան հետ, երբէք առաջարկած չեն իւրեանց այն ծանր խնդիրը, թէ որպէս պիտի լինէին նոր ժամանակի մատենագրութեան պայմանքը, որ նա տեւողական օգուտ բերէր ընթերցող հասարակութեանը, տալով նոցա առողջ գաղափարներ, ուղիղ հայախօսութեան կերպարանքով։ Մեք այժմեան մատենագրութեան մէջ տեսանումենք մի բան, այսինքն, որ մեր գրողքը լինելով տգէտ հայախօսութեան հոգուն կամ, որ նոյն է, իւրեանց մէջ չկրելով մի յատուկ հայկական լեզուի գաղափար, մի կարգաւոր հայախօսութեան իդէա, մտածումն ռուսերէն և ռուսերէն մտածութիւնքը զգեստաւորումն լոկ հայկական, շատ անգամ այլանդակապէս ձեւաւորուած բառերով, մինչև այն աստիճան, որ դոցա գրուածքը կարելի էր միայն հասկանալ, յեղափոխելով դարձեալ դէպ այն մտածութեան ձեւերը, ուստի նոքա թարգմանօրէն աղբերացած էին։ Ո՛ւր մնաց, որ այդ նորանշան, անտեղի օտարախօսութիւնը բոլորովին անհասկանալի է մեր ժողովրդին։ Եւ այդ ինչ համարձակութիւն է գրողների կողմից Հայոց ժողովրդի

վերայ բռնարարութեամբ դնել մի օտար լեզուախօսութեան կանոնների լուծ, մինչ նա, ցաւելի ժողովուրդը Հայոց, իւր անկրթութեան պատճառով, դժուարանում արդէն ընտելանալ իւր յատուկ լեզուի ընտիր ուղղախօսութեանը։ Հայոց գրողքը եթէ չգիտեն հայերէն, թող նախ և յառաջ փոքր ի շատէ աշակերտուին հայկազեան լեզուի ուսմանը և յետոյ դէպ ի հրապարակ դուրս գան, ուսուցանելու ժողովուրդը. բայց «լինել հեղգ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել», այս գովել կարող չեմք։ Հայոց գրողքը կարող են գիտուն լինել (և ցանկալի, մանաւանդ թէ կարևոր է, որ լինէին) օտար լեզուների, բայց այդ գիտութեամբ ազատվում չեն նոքա այն հարկից, որ է ուսումնասիրել և իւրեանց մայրենի լեզուն, և քաջ ուսումնասիրել և փութոյ պնդութեամբ ուսումնասիրել, եթէ կամին խօսել ժողովրդի հրապարակում, եթէ ժողովրդին աւանդելի նորանոր ծանօթութիւնների և դաղափարների հետ միասին, կամին աւանդել նորան և ընտիր հայախօսութեան ձևեր ու ոճեր, և այժմուս ժողովրդական լեզուի թերութիւնքը, պակասութիւնքը օրըստօրէ լցուցանել հին լեզուի աղբիւրից, նորա մէջ յառաջացած խանգարմունքը, տգեղ եկամուտ ոճերը օտարուստ աղդեցութեամբք, առ փոքր փոքր արտաքսել, և այդպէս մաքրել, բարեկարգել և ազնուացնել մայրենի լեզուի խօսքը։ Եթէ մեր ժամանակը հասարակաց կեանքի, քաղաքական կարգերի, գիտութեան և ճարտարութեան, կրօնի և բարոյականութեան, ուսման և դաստիարակութեան—բոլոր, բոլոր հանդէսների և ասպարէզների մէջ միանգամայն ձգտումէ դէպ ի յառաջ, դէպ ի առաւել կատարելագործութիւն. ինչու ապա մի ազգի լեզու, պիտի յետ մնայ, պիտի հրաժարուի այդ յառաջադիմութեան ընդհանուր օրէնքի ներքոյ ստորադրուիլ. մի ազգի լեզու, որ նորա կենսական ամենաշարժուն, ամենայն օր, ամենայն ժամ, ամենայն բոպէ դէպ ի յառաջ ձգտող, նոր ի նորոյ աւելի բարւոք կերպարանելի տարրն է, միայն թէ ազգի մէջ կային մտածող, հանճարեղ, գործունեայ հոգիք, հնարագիտ հանճարներ և շրջահայեաց աշխատաւոր մարդիկ։

Մեք, 19 դարու քաղաքացի Հայերս, եթէ կամինք մեր նոր գիտութեան համար մի յարմարաւոր անօթ (գործի), մի մատենագրական լեզու պատրաստել, այնուհետև մեր առջև բացվումն երկու հարաղատ աղբիւրք. դոյանից մինը է մեր այժմեան կենդանի լեզուն ընդհանրապէս, ոչ մեր մասնաւոր տեղական բար-

բառները, որ հայեցմամբ դէպ ի մատենագրական լեզուն ունին այնքան արժանաւորութիւն միայն, որչափ նոցա մէջ պահուած ու մնացած էին ընտիր և պիտանի նիւթեր նոր մատենագրութեան շինուածի համար — մեր այժմեան կենդանի լեզուն ժողովրդի փոքր ի շատէ լուսաւոր և հայագէտ դասակարգերի մէջ։ Երկրորդ աղբիւրը է մեր գրոց ասած հին լեզուն, մեր նախահարց մնծագին պատմական ժառանգութիւնը, ուստի մեք իրրև խելացի որդիք կարող չենք հրաժարուիլ, որովհետև այդպէս մեք պիտի ուրանայինք մեր անցեալը, մեր պատմութիւնը, մեր կեանքի առաջին նախադասութիւնքը։ Բայց և յետ դառնալ, գնալ, մտնել մեր նախահարց կեանքի պայմանների մէջ, որ չեն մեր ներկայ կեանքի պայմանքը, կարող չենք, որովհետև այդպէս պիտի ուրանայինք կենդանի ժողովրդի իրաւունքը, մեռածի, անցած ու գնացածի իրաւունքը առաւել վերին դասելով, որ մի անխորհուրդ բան է։ Ուրեմն, մեր ազգի մտածող անդամքը կրհասկանան թէ ինչ աչքով նայումենք մեք մեր հայկազեան հնութեան վերայ. նորան յարուցանել գերեզմանից կարելի չէ ոչինչ կախարդական գաւազանի հարմամբ (ղարկով), բայց նորանից կտակով մեզ աւանդած հարստութիւնքը արդարև կարելի է, մանաւանդ թէ պարտականութիւն է խմաստութեամբ գործ դնել, պիտանի կացուցանել, մեր այժմեան աշխարհիկ լեզուն բարեկարգելու և մատենագրութեան յարմարաւոր անօթ շինելու համար։ Եւ մեր կարծիքը, ոչ, մեր սրտի վկայութիւնը այսպէս է, որ մեր Հայերը կարող են լինել քաջ ռուսագէտք, որ շատ պատուելի, գեղեցիկ և օգտակար բան է — բայց եթէ կամենումն լինել հայկական մատենագիրք մեր ժամանակում, պարտ է նոցա տեղեկանալ հայկական հնութեան գանձերին, որպէս զի նոքա կարողանային մտածել և խօսել բուն հայերէն, առանց սար ու ձոր ընկնելու, առանց դիմելու դէպ ի օտար աղբիւրք, առանց մուրալու թաթարից ու ռուսից այս և այն ձևերն ու ոճերը, որոց փոխանակ ունին նոքա իւրեանց յատուկ լեզուի տնտեսութեան և հարստութեան մէջ բոլորովին ընտանի, հարազատ և գեղեցիկ ոճեր ու ձևեր։ Միտ դնելով մեր այժմեան ընչին, տգեղ օտարախօս մատենագրութեանը, կարելի չէ գուշակել թէ երբ կը հասանէր այն օրը, երբ նոր մատենագրութիւնը առատացած ու լիացած հնութեան սեղանից, ճոխացած ու հարստացած նորա գանձերով, այլևս կարօտ չէր նորան, որովհետև չափ և հասակ առած կարող

էր ինքն իւր համար վաստակել և իւր վաստակով ապրիլ, ուրեմն և առ փոքր փոքր թուլացնել և վերջումը կատարել այն օղակաները, որ հեռաւոր անցեալը միաւորումն ներկայի հետ։

Վերևում ասածներից հետևումէ, որ Հայոց այժմեան մատենագիրը պիտի լինի քաջ հայագէտ, այս է առաջին և նախակարգ պահանջողութիւնը. երկրորդ, տեղեակ այժմեան ժողովրդական լեզուին փոքր ի շատէ զարգացած և լուսաւոր դասակարգերի մէջ, այլև, եթէ կարելի է, որչափ և իցէ ծանօթ տեղական բարբառներին, որ թէ ինչ խորհուրդ ունէր հայեցմամբ դէպ ի մատենագրական լեզուն, ակնարկեցինք վերևում։ Բայց, այս գիտելիքով չվերջացաւ տակաւին հայկական մատենագրի պատրաստութիւնը առ իւր մեծապարունակ պաշտօնը. նա, իբրև գիտնական անձն, պիտի տեղեակ լինի հին և նոր լեզուներին Եւրոպայի, մանաւանդ հելլենականին, որ ինչպէս յայտնի է հայկական դպրութեան պատմական ընթացքից, խորին ազդեցութիւն ունեցած է Հայոց լեզուի ուսումնական կազմակերպութեան վերայ. արևմտեան Եւրոպայի նոր լեզուքը, գերմանականը, ֆրանսիականը և անգլիականը, իբրև ճոխ շտեմարանք ամենայն տեսակ գիտութիւնների, պիտի այնչափ ծանօթ լինին Հայոց մատենագրին, որ նա կարողանայ այդ լեզուով գրուածքը հասկանալ և գործ դնել յօգուտ իւր ժողովրդի։ Բաց ի հելլենական լեզուից, լատինական լեզուի գիտութիւնը մեծ խորհուրդ ունի հայեցմամբ դէպ ի Հայոց մատենագիրը. լատինական լեզուն լինելով մի աշխարհակալ, օրէնստու, քաղաքատնտես ազգի լեզու, իւր խիստ կանոնաւոր ճշդութեամբ և հետևակից բանախօսութեան ոճով կարող էր լինել ամենալաւ դպրոցը լոգիաբար մտածելու և խօսելու։ Նոր Եւրոպայի լեզուքը չունին այն ճիշդ քերականական կազմութիւնը լեզուի, որ տեսանումենք լատինականի մէջ։ Ֆրանսիական լեզուն իւր պարզ ու պայծառ, որոշ ու սահմանաւոր, ասես թէ, չափած ու կշռած ոճով անղուգական է բոլոր եւրոպէական լեզուների մէջ։ Դա մի քաջ գործի է տարածելու ազգերի մէջ թէ ճշմարտութիւնք և թէ ստութիւնք։ Գերմանական լեզուն մի փափուկ լեզու է, ֆրանսիականը ոսկրացած, դաղարուն, սահմանափակ լեզուին հակառակ, և կարող է հայոց լեզուի պէս անվերջանալի նորանոր ձևեր բառերի կազմել բարդութեամբ, գոյականներին, ածականներին և բայերին տալ առանձին խորհրդաւոր նրբութիւնք ըմբռնողութեան, զանազան նշանաւոր մասնիկների ճոխութեամբ. իւր պտոյտ պտոյտ,

ոլոր ոլոր, երկար ու ձիգ արուեստահիւս դարձուածներով — որ մեզ շատ անգամ յիշեցնումեն լատինական լեզուի ճարտարապետական պարբերութիւնքը — ասես թէ, կամէր նա սպառել մարդկային մտածութեան և զգայողութեան բոլոր բարձրութիւնքը և խորութիւնքը։ Այս պատճառով գերմանական լեզուն է և մի ծանրաշարժ լեզու, որպէս նոյն իսկ ազգը, ամենեին ներհակը արագաշարժ ֆրանսիական լեզուի և ազգի։ Մեք կը ցանկայինք, որ Հայոց մատենագիրը իւր գործի մէջ օրինակ առնուր այդ երկու ականաւոր ազգերից և աշխատէր ֆրանսիականի գեղեցիկ և աննման պարզութեան ու որոշութեան հետ կապակցել գերմանականի նոյնպէս գեղեցիկ և աննման խորութիւնը։ Այս երկու յատկութիւնների զուգախառնութեամբ կը յառաջանար մի պատուաւոր կազմուած։ Ոչ մի եւրոպական դպրութիւն ցուցանումէ մեզ այնպիսի լայնատարած ընդարձակութիւն, այնպիսի անչափելի հարստութիւն ականաւոր գրուածներով գիտութեան բաժանների վերայ, որպէս գերմանականը, որ կարելի էր իրաւամբ կոչել մի ովկիանոս ծով, որոյ մէջ ամենայն կողմից և շատ հեռաւոր սահմաններից թափվում էին առուք, վտակներ, գետեր և հեղեղատներ և միանումէին նորա իւր յատուկ բազմամասնեայ ճոխութեան հետ. այս պատճառով մեր օրերում գերմանական դպրութիւնը արժանի է փութաջան ուսումնասիրութեան ամենայն ուսումնական Հայի, մանաւանդ դաստիարակիչ մարդուն, որովհետև ոչ մի եւրոպական լեզու այնքան ճոխ է դաստիարակութեան գործին պատկանեալ գրուածներով. և ինչ որ Խորէն վարդապետ Ստեփանէն իւր «Հայկական աշխարհի» մէջ ասումէ գերմանական դաստիարակութեան կարգի և սիստեմայի մասին, որպէս թէ դա դրած էր իւր առաջև միակ կէտ նպատակի կրթել և զարգացնել ոչ թէ մարդ, մարդկային արժանաւորութեամբ, այլ իբրև մի անհատ գերմանայի մարդ, մի քաղաքացի և վինուոր գերմանական տէրութեան, այդ մի անարժան բամբասանք է, ծնունդ մի հեղգ և ծոյլ տգիտութեան, որ աշխատութիւն յանձն առած չէր գերմանական պեդագոգիայի սիստեման ու կարգը ուսումնասիրելու և վերահասու լինելու նորա իսկութեանը։ Այլ և հարկաւոր է ասել պատուելի Հայր Խորէն Ստեփանէին. եթէ մի պեդագոգիկա ձգտումէ պատրաստել հայրենասէր քաղաքացիք, քաջ վինուորներ տէրութեան ընդդէմ թշնամարար միւսերի վերայ արշաւող ազգերի, այնուհետև նա լցուցանումէ միայն իւր

պարտականութիւնը, որովհետև սպասաւորումէ հասարակաց օգտին. բայց թէ դորանով ճնշվումէր աղնիւ մարդասիրութեան ախտը, աղնիւ մարդավայելուչ զգացումը գերմանական քաղաքացու և զինուորի սրտի մէջ, այդ մի ծուռ և թիւր եզրակացութիւն է, այլև ընդդէմ այն իրողութիւնների որոց մասին վկայումէ ամենանոր պատմութիւնը Եւրոպայի, յատկապէս Գերմանիայի, որ մարդը հայրենասէր չէ, որ քաղաքացին չգիտէ պաշտպանել իւր կին ու զաւակը և գոյքը թշնամու երեսից, նա ոչինչ մարդ է. և այս առաքինութիւնքը յանցանք համարել և դոցա պատասխանատու կացուցանել որպէս թէ մի թիւր, մարդատեցական կարգ դաստիարակութեան—այդ ընթացքը կարող ենք միայն, մեղմ և փափուկ խօսքով անուանել մի տղայական անփորձութիւն, մի ծառայօրէն կրկնութիւն պղտոր ու կեղտոտ աղբիւրներից հանած կարծիքի։ Մեր աղնիւ բարեկամ Խորէն վարդապետը կընէրէ մեր ամենեին բարեմիտ ծանօթութեանը։

Այժմ մի քանի համեստաբար խօսք և քննութիւնք մեր նոր հայկական մատենագրութեան ոճի վերայ Ցաճկաստանի և Ռուսաստանի Հայերի մէջ, այլև ի մէջ հին և նոր լեզուի։ Հայկական խօսքը այն տեղ տեսանումենք Ցաճկաստանում ստրկացած տաճկական լեզուի ոճին, իսկ Ռուսաստանում ռուսական լեզուի ոճին։ Եւ այսպէս Ցաճկահայերը և Ռուսահայերը, երկոքին ևս մեղապարտք առաջի հայկական ուղղախօսութեան դատաստանին, չունին պատճառ բամբասելու և յանդիմանելու զմիմեանս [1] . . .

. . . . . .

Մեք կարող էինք այսպիսի օտարախօսութեան օրինակներ անթիւ և անհամար յառաջ բերել այս տեղ, որովհետև մեր այժմեան լրագիրները և օրագիրները այդ մասին այնչափ առատ ու հարուստ են, որ մեք գտանվումենք մի կատարեալ embarras de richesse դրութեան մէջ։ Բայց թող հերիք լինին մեր յառաջ բերած օրինակները վասն ապացուցանելու, թէ մինչև որ աստիճան հայոց լեզուի հարազատութիւնը, հայկական խօսքի մաքրութիւնը և աղնուականութիւնը խանգարուած են մեր այժմեան գրողների դրչի տակ, որովհետև դոքա մտածումեն ռուսերէն և գրումեն

---

[1]) Այստեղ հեղինակը մանրաման յառաջ է բերում նոր լեզուի անկանոնութիւնները և ճշդում է նոցա, սակայն տեղի սղութեան պատճառով մենք չենք կարող յառաջ բերել այդ խիստ ընդարձակ նկատողութիւնները, որ համարեա յօդուածի մեծ մասն են բռնում։ Մ. Բ.

լոկ հայահնչիւն ձայներով, շատ անգամ կազմելով այլանդակ և անճոռնի բառեր ևս։ Մեք լաւ գիտենք այդ յաւի աղբիւրը, որ և մի մասամբ շատ բնական է, բայց դորանով մխիթարուիլ կարող չենք և ոչ իսկ արդարացնել մեր գրողքը։ Մեր հայերը ստացած լինելով իւրեանց կրթութիւնը ռուսական դպրոցներում (այլուր և կարող չէին), ուրեմն և ամենայն ըմբռնողութիւնք և գաղափարք ռուս լեզուով և կերպարանքով, բնականաբար մտածումեն և ռուսերէն, երբ պէտք էր նոցա խօսիլ հայերէն և դորանից յառաջանում մի ռուսական մատենագրութիւն լոկ հայկական ձայներով։ Այս բոլորը այսպէս է. մեք հասկանումենք. սակայն մեք հայերս այս բոպէիս գործ ունինք մեր հայկազեան ժողովրդի հետ և մեր վերայ սուրբ պարտականութիւն կայ ուշադիր լինել նորա պիտոյքին, նորա հետ խօսիլ մատենագրութեան միջնորդութեամբ այնպէս, ինչպէս նա կարող էր հասկանալ մեր միտքը, այնպէս, ինչպէս պահանջումեն հայկական ուղղախօսութեան կանոնները, որովհետև ուսուցչի պարտականութիւնն է ոչ թէ միայն նիւթեր տալ իւր աշակերտներին, այլ և նիւթերի հետ միասին պատշաճաւոր ձև և կերպարանք մտածութեան, որ շատ խորհրդաւոր բաներ են, եթէ կամենինք զարգացնել նոցա խմացականութիւնը. ով չգիտէ ուղիղ մտածել, նա չէ կարող և հայաբար խօսիլ։

Դիցուք մեր աշխարհաբառ լեզուն չքաւոր և պակասաւոր է· բայց դորա թերութիւնքը կարող ենք, ոչ, պարտ ենք լցուցանել նոյն իսկ ազգի լեզուի հին գանձարանից և ոչ թէ դիմել դէպ ի օտար աղբիւրները և մուրալ այդ տեղերից անպատշաճ և անպէտք փոխառութիւնք, փոխառութիւնք որ հարկաւոր ևս չեն, որովհետև այդ ձևերը և ոճերը, որոց կարօտ ենք մեր շատ հասարակ խորհուրդները բացայայտելու համար, առատ, զեղուն և թաթաղուն չափով դրած են հայկական լեզուի մէջ առ հասարակ, միայն թէ կամեցող լինէինք ուսումնասիրել դորան, ճանաչել և գործ դնել դորա, դարերով մեզ աւանդած հարստութիւնքը, պատուական գոհարները հայախօսութեան։ Թող մեր պատուելի գրողքը փոքր մի զկայ առնուն և մտածեն իւրեանց գործակատարութեան եղանակի վերայ, թող յարգեն նոքա իւրեանց անձը և ժողովրդի իրաւունքը, խօսելով նորա հետ աղնիւ, մաքուր և, եթէ կարելի էր, գեղեցիկ ոճով որպէս զի և ժողովուրդը իւր գրողներից ուսանէր մտածել և խօսիլ արժանաւոր կերպով։ Մեր հոգին

խռոված է, մեր սիրտը անհնարին ցաւով ցաւագարուած, ակա-նատես լինելով մեր ազգի ամենամեծ անարգութեանը, որովհետև մի ազգի լեզու ուսած ու սովորած ենք համարել նորա ամենամեծ փառք ու պարծանքը, և այդ փառք ու պարծանքը այս բոպէիս տեսանումենք ցեխի ու տղմի մէջ գլորուած գրողների անհոգու-թեամբ։

Մեք կամինք յուսալ, որ ոչ ոք մեր սիրելիներից տեղիք չունէր վիրաւորութեան այս մեր ճառախօսութենից, այլ կ'ընդունէր սորան իբրև սիրող սրտի անկեղծօրէն, բարեմիտ ցեղուածք. այս բառերիս գրողը հոգով չափ սիրումէ իւր բարեկամքը, որոց հետ սովոր է նա խօսիլ խստութեամբ, եթէ հասարակաց օգուտը այդ-պիսի մի հարկ դնումէ նորա վերայ։ Այդպէս է ճանաչում նա ճշմարիտ սիրոյ օրէնքը։ Կան մեր Հայերի մէջ ամբարտաւան, մե-ծամիտ մարդիկ, որ ամենայն բան ուսած ու աւարտած էին և այլ ևս ոչինչ ուսանելու բան չունէին. դոցա հետ մեք խօսած չենք և խօսիլ չկամինք. մեզ միշտ քաղցր է ուսանիլ և իմաստնա-նալ թէ բարեկամից և թէ թշնամուց, որովհետև այդ մեր օգուտն է. և ով մեր բարերարն է, նորան պատրաստ ենք հատուցանել և մեր շնորհակալութեան պարտիքը։

1876. Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ։

ՀԻՆ ՑԱԻ.

1885 թ. «Արձագանքի» 7 համարում պ. Շիրվանզադէի «Խնամատարի» մասին գրած նկատողութեան մէջ դիտել էի, որ հեղինակը ունի նկարագրական ձիրք և գեղարուեստական ընդունակութիւն, թէպէտ հոգեբանական կողմը թոյլ է, ինչպէս Եկատերինա Կարլովնայի մէջ նկատվում է։ Մինչև այսօր «Խնամատարից» յետոյ Շիրվանզադէն տուել է երկու նոր երկասիրութիւն. մի փոքրիկ հոգեբանական էտիւդ, մի կենսական պատկեր, որ արժանի է ուշադրութեան և նորա նախկին գրուածների համեմատութեամբ մի բոլորովին նոր, գեղեցիկ ժողովրդական վէպ «Նամուս» վերնագրով, որ մի հզօր ապացոյց է Շիրվանզադէի գեղարուեստական տաղանտի և նորա գրականական ուղղութեան նշանակէտի։ Մինչև «Նամուսը» ոչինչ որոշակի չէր կարելի ասել Շիրվանզադէի գրականական ընդունակութեան մասին։ «Նամուսը» պէտք է նկատել իբրև բուն ժողովրդական առողջ ուղղութեան մի անժխտելի գրաւական, որին սկսել է հետևել երիտասարդ գրողը։ Մինչև «Նամուսը» նա վիպասան չէր, իսկ այժմ նա վիպասան է և այնպիսի վիպասան, որի «Նամուսը» կարող է հրապուրել, ոգևորել և հայ գրականութեան բարգաւաճման անձկալի ղգայմունքով լցնել մարդու սիրտը։ Բայց իմ մտադրութիւնը չէ «Նամուսի» մասին խօսել. նա արժանի է մի պատկառելի քննադատութեան և բացադրութեան մեր մատենագիրների կողմից, որոնք դժբաղդաբար շատ շուտ են մեծ մարդ դառնում, ծերանում և բաւականանում իրենց պաշտօնական ծառայութեամբ։ «Օրիորդ Լիզայի» լոյս տեսնելուց տարիներ են անցել, բայց մինչև այսօր մեր մամուլը մի խորհրդաւոր լռութեամբ, կարծես, ուզում է ծածկել ընթերցողներից մայրենի նորածին գրականութեան արդիւնքների արժէքը և թերութիւնները։ «Արձագանքի» նոյն թուականի համարներում յիշած էին Ալիշան, Նորայր Բիւզանդացու աշխատութիւնների շարքում և Սրուանձտեանի, Միրախորեանի ճանապարհորդական, էթնոգրաֆիկական գրուածները, բայց և ոչ մի խօսք Շիրվանզադէի դէթ «Նամուսի» մասին [1]։ Ամօթ չէր

[1]) Պ. Հայկունու յօդուածը «Նամուսի» մասին քննադատութեան տպաւորութիւն չէ թողնում ընթերցողի վրայ։

Ալիշանի կողքին դնել և Շիրվանզադէի անունը։ Այս մեր հին սովորութիւնն է։ Մարդիկ հեշտութեամբ են հեռաւոր կայծը հրդեհի տեղ ընդունում և հալի ձայնը թնդանօթի որոտմունք։ Ի հարկէ, մեր խօսքը վերեւը յիշած հեղինակութիւնների մասին չէ, որովհետև Սրուանձտեանի երկու, երեք կտորն է հասել մեզ, այլ նկատում ենք այն անբացատրելի անտարբերութիւնը, որ տիրում է մեր մէջ դէպի ազգատիպ գրականութեան մշակները։ Բայց այս դեռ բոլորը չէ, որ մեր մամուլը չէ հետաքրքրվում մեր վիպասանների արդիւնքներով։ Նա նոյն եռանդով է վերաբերուել և դէպի մեր վիպասանութեան հիմնադիր մշակների, Աբովեանի, Բաֆֆիի, Պռոշեանի, Ազայեանի մեծաչան աշխատութիւններն ևս։ «Արձագանքի» մի երգիծական ֆէլիէտօնից յիշում եմ, որ «Նամուսը» չէ էլ տարածվում (այ քեզ նորութիւն)։ Մի ազգ, որ մի լրագիր չէ կարողանում պահել, միթէ կարող է անկախ դիրք տալ իւր վիպասաններին։ Մենք գանգատվում ենք, որ հայ վաճառականը ընթերցանութեան համար գիրք գնել չէ սիրում։ Գնել մի գիրք կամ դէն գցել հազար ու մի խաբեբայութիւններով վաստակած փողը նա համանշան բան է կարծում։ Բայց ի՞նչ է անում մեր թէ մայրաքաղաքի և թէ դաւառի ինտէլիգէնտ հայը, պաշտօնեան, մասնագէտը։ Նա ոչ մի կերպ ժամանակ չէ գտնում և միջոց էլ չէ ունենում հետևել իւր մայրենի գրականութեանը, սիրել, ուրախանալ նորա յառաջադիմութեամբ, կարդալ իւր ընտանիքին և երախաներին (այս մի քիչ դժուար է, որովհետև նա շատ անգամ գիշերներն էլ տանը չէ լինում), այլ խեղճը միջոց չէ ունենում իւր սեպհական մասնագիտութեան տեսական հարցերով էլ զբաղուելու, կապ պահպանելու այն գաղափարների հետ, որոնց հիման վերայ պէտք է դատէ, բժշկէ և որոնցով պէտք է լուսաբանէ իրական կեանքի երևոյթները և փաստերը։ Նա արհեստաւոր է, որի ուղեղը ներկած է, որովհետև առաջինը խոսելիս դատում է միայն իւր փէշակի ձևի մասին, պատմում է առանց փիլիսոփայութեան, իսկ երկրորդը հարկաւոր ժամանակ փիլիսոփաների օձիքից քաշում է և նորանց անուններով մի քանի բոպէ փքուած աքաղաղի դիրք է բռնում։ Մտնում էք ձեր օտարազգի ծանօթ մի մասնագէտի, բժշկի, թուաբանի տունը և կարծում էք, որ նա ձեզ կբխեղդէ իւր դանակներով ու ֆորմուլաներով, բայց շուտով համոզվում էք, որ չարաչար սխալվում էիք։ Նա ձեզ հետ սկսում է խօսել իւր պատմութիւնից, գրականու-

թիւնից, անդամ ընթացիկ նշանաւոր գրականական երևոյթների մասին։ Ցետոյ դառնում էք տուն, մտածում, համեմատում և զարմանում։ Աւելի էք զարմանում, որ ձեր ծանօթը իւր սահմանափակ միջոցներով կարողանում է դարսել իւր սեղանի վերայ թէ սեփական մասնագիտական գրքեր և թէ կարողանում է հետևել իւր մայրենի գրականութեան և վիճիլ սորա մասին այնպիսի ոգևորութեամբ, որ կողմնակի դիտող հայը կ'ասէր. «Ցօ՛, ի՞նչ է եղել, գլուխը քարը, վիպասանը հօ քեզ հաց չի տալ, ի՞նչ ես գլուխդ պատռում»։ Այս բոլոր երևոյթների պատճառը մեր մամուլի առողջամիտ մասը քանիցս անդամ նկատել է։ Հոգեկան աւանդական տոկուն տրամադրութիւն չկայ դէպի անկեղծ գործ, ծանր և համեստ աշխատանքի բնական սէր և կենդանի եռանդ ու գիտակցութիւն չկայ։ Մի յայտնի ժամանակ մենք հերոսներ ենք, երբ մատ մատի զարկելու գործ էլ չենք անում ապագայում պիտանացու լինելու համար, իսկ սխրագործութիւնների հոդ չկայ, պահանջ չկայ։ Առաջ պարապ մնալ չէինք կարող, պէտք էր տաղտկալի անգործութիւնը ծածկել այնպիսի խօսքերով, որի դէմ խօսողին հեշտութեամբ կարելի է լռեցնել տալ այդ հնչիւնների աւտորիտետով։ Եւ այս մենք անում ենք դերասանական մեծ հանճարով, սեփական մեծութեան ինքնահաւան գիտակցութեամբ, իսկ յետոյ մի նամակ կըգրենք մեր բարեկամին. «Ֆլան-ֆստանը, եղբայր, յիշո՞ւմ ես, ա՜խ լաւ օրեր էին. ինչպէս ոգևորվում էինք և ճառում։ Հէ՜յ գիտի ժամանակ, ի՜նչ իդէալիստներ էինք հա. էհ, բարեկամ ծերացանք, բաւական է, որքան գործեցինք, այժմ մենք չենք կարող ոչինչ անել»։

Մեր հասարակութիւնը շատ է տեսել այսպիսիներին, որոնց մասին բանաստեղծը ասում է.

«Նոցա նպատակ — սնափառութիւն,
«Նոցա խօսքերը — աննշան հնչիւն,
«Ազգ ու հայրենիք, պարծանք ու պսակ
«Կրկնում էին որպէս մի թութակ»։

Եւ նոյն հասարակութիւնը, երևի, դեռ երկար ժամանակ ընդունակ չի լինիլ մի ուրիշ տիպ արտադրելու և ճանաչելու նոցա, ուստի և ամէն մէկը կարող է ապահով լինիլ, որ կարող է մի քանի տող նամակով վերջ դնել անցեալ ցնորքներին և նոյնպէս յարգելի և մեծարելի մարդ մնալ շրջապատողների համար։ Այս

բոլորը մենք կատարում ենք ոչ միայն ստոր փառամոլութիւնից, կեղծելու ձկտումից, յուցամոլութիւնից, այլ և քննական զարգացման բացակայութիւնից, աշխատանք կրելու անընդունակ և անպատրաստ լինելուց։ Հասարակութիւնը տգէտ և անընտրող է եղել, իսկ ձևական ուսումը և զարգացողութիւնը տուել է Ռէպետիլովներ։

Մենք հիասթափվում ենք ոչ միայն մեր գործունէութեան ուղղութեան մէջ, այլ հերքում ենք թէ նախկին ծրագիրներն ու միջոցները և թէ մեր նախկին զգացմունքները, որոնք իսկապէս սուրբ են և ճշմարիտ յառաջադիմութեան հիմք են կազմում։ Ինչու. որովհետև մենք ուզում ենք «եզակի» լինել, առաջ մենք հաւատում էինք կամ ուզում էինք հաւատալ մեր ասածներին և քարոզում էինք. իսկ այսօր մենք չենք հաւատում, ուրեմն պէտք է հերքել։ Մենք ծայրայեղ ենք, որովհետև չենք ուզում խոստովանել մեր անպատրաստականութիւնը և թերութիւնները և բացատրել ու ուղղել, այլ ծաղրում ենք ազնիւ զգացմունքների ճշմարիտ լինելը և գոյութիւնը։ Ահա այսպիսի մի ծայրահեղ յեղաշրջումն է նկատվում և Արլաս Պետրովիչի մէջ, որ «Օրիորդ Լիզայի» գլխաւոր հերոսն է, որովհետև նորա սիրոյ զարգացման և վախճանի մէջ է կայանում վէպիկի գլխաւոր միտքը, տենդենցեան։

Վերև յիշեցինք, որ «Օրիորդ Լիզան» մի գեղարուեստական էտիւդ է, որովհետև աւելի գործող անձինքների ներքին աշխարհի հետ է ծանօթացնում հեղինակը, մի զգացմունքի հետազօտութիւն է փորձում անել։ «Օրիորդ Լիզան» նոյնպէս կողմնակի կերպով շօշափում է կանանց հարցը մեր հասարակութեան մէջ, թէպէտ այնքան, որքան կարելի է հետևեցնել վէպի գաղափարից։ Դժբաղդաբար մի փոքր պատկերի բովանդակութիւնն էլ յայտնի ենթադրելը կուլտուրական շռայլութիւն է այսօր մեզ համար, ուստի համառօտաբար կրպատմեմ «Օրիորդ Լիզայի» նիւթը։

Համալսարանից յետոյ Նորանոր գաղափարներով զարդարուած, հասարակութեան ծառայելու լայն իդէալներով վառուած մի հայ բժիշկ դառնում է հայրենիք։ Արլաս Պետրովիչը երեխայի ոգևորութեամբ սկզբում պարապում է հասարակական հարցերով և մի ընկերութիւն է հիմնում ու «մեծամեծ օգուտներ տալիս» (սորա համար անկեղծ շնորհակալութիւն)։ Բայց այս լայն գաղափարի (անպատճառ լայն) յետևից թափառելու ժամանակ՝ Արլաս Պետրովիչը հաստատում է մի մասնաւոր ծանօթութիւն, որ տակն

ու վերայ է անում նորա լայն գաղափարները։ Կլուբում մի օր Արլաս Պետրովիչը հանդիպում է մի հայ պաշտօնեայի, Բաղամովին։ Բաղամովը մի ընթերցասէր մարդ է և այնպիսիներից է, որոնց հետ զուարճութեամբ կարելի է վիճել և ժամանակ անց կացնել։ Սա ունէր եկու աղջիկ, որոնց տուել էր պատշաճաւոր գիմնազիոնական ուսում և՝ իւր ամուսնու մահից յետոյ, Եւգենեային և Լիզային անխնամ չէր թողել. միշտ նոցա համար բերել էր ընթերցանութեան գրքեր և միջոց էր տուել զարգանալու։ Արլաս Պետրովիչը ահա ծանօթանում է այս ընտանիքի հետ և մի օր՝ հանդիպելով Լիզային, սիրահարվում է նորա վերայ այնքան սաստիկ, որ տուն վերադառնալուց յետոյ չէ կարողանում ոչ պարապել, ոչ քնել և «փորացաւ ընկածի պէս» տրորվում է անկողնում։ Արլաս Պետրովիչը իրրև բժիշկ հրապուրվում է Լիզայի առողջ կազմուածքով, թէպէտ նորա խելօք, կախարդիչ աչքերը առանց ազդեցութիւն անելու չմնացին. իսկ Եւգենիայի այն խօսքերը, որ Լիզան միշտ գրքեր է կարդում, արդէն պակասը լրացրին։ Քիչ է մնում, որ Արլաս Պետրովիչը Լիզային Ցատեանայի հետ համեմատէ և մի քանի անգամ նորա նուագած դաշնամուրի սրտաշարժ հնչիւնները լսելուց յետոյ կախարդվում է իսպառ և մոռանում ամէն բան։ Դառնում է տուն, մտածում և փորձ է փորձում օրիորդին հանել իւր սրտից, բայց հաղիւ մի քանի օր կարողանում է զսպել իւր փափուկ հոգու քնքոյշ զգացմունքները։ Վերջապէս վճռում է գնալ և պարզել Լիզայի առաջ իւր սիրտը։ «Ի՞նչ կըլինի, թող լինի, կ'ընդունի լաւ, չի ընդունիլ լաւ,—այնուհետև հոգը գլուխս, մի կերպ կըտանեմ ցաւս», ասում է Արլաս Պետրովիչը և գնում։ Բարի ճանապարհ. այս ճանապարհը հայ ինտելլիգենտ գործիչի փորձաքարն է։ Գալիս է Արլաս Պետրովիչը և հաղիւ թէ բերանը բաց է անում, երբ Լիզան խօսքը կտրում է ասելով. «սուս, գիտեմ, ինչ պիտի ասես. բոմանների մէջ հաղար անգամ կրկնուած միատեսակ բաներ»։ Այս անգամ արդէն Արլաս Պետրովիչը տուն չպիտի կարողանար գնալ, եթէ խորամանկ Լիզան իսկոյն չհանգստացնէր նորան և չառաջարկէր դիմակը դէն ձգել։ Այսպէս Լիզան էլ իւր կողմից է խոստովանում իւր սէրը։ Նոքա յաճախակի տեսնվում են, և Արլաս Պետրովիչը քչից-շատից ընտելանում է Լիզային և նորա առաջ դառնում է մի շատախօս կաչաղակ, էլ «հայեացքներ, իդէալներ, թէօրիաներ», բոլոր եղածն էլ, փոխ առածն էլ դարսում է Լի-

զայի առաջ։ Բայց Լիզան երբոր լաւ ճանաչեց Նորան, էլ կարծես մոռացաւ իւր սէրը և մի անգամից փոխուեց դէպի Արշակը, թէպէտ այստեղ Արշաս Պետրովիչը ոչինչ մեղք չունէր։ Մի օր Բաղամովի տանը Արշաս Պետրովիչը հանդիպում է մի հայ երիտասարդի, որին նայողը զգուշութեան համար պէտք է հեռանար, որ այս վիթխարին իւր ձեռքի, ոտքի կամ մատի շարժումով յանկարծ չփշրէր Նորան։ Ահա այս վիթխարի Սեթեանն է տիրապետում Լիզայի սրտին, այս Սեթեանը, որ բոլոր ժամանակ ծանրախոհ լռութեամբ է պահում իրան և մի անգամ միայն պիւթիայի խորհրդաւոր եղանակաւ մի նախադասութիւն է արտաբերում իւր բոլոր ոյժերից. «բժշկականութիւնը դրական գիտութիւն չէ»։ Ընթերցողը ի զուր է սպասում մի ուրիշ բացատրութիւն Սեթեանից, նա պէտք է լռէ, որ Լիզան Նորան չճանաչէ։ Արշաս Պետրովիչը տաքանում է, վշտանում, բայց ոչինչ։ Մեր Լիզաների սէրը իրենց է հասկանալի, նոքա այստեղ իրենց Կէկէլ-փէփէլ՝ներից հեռու չեն կարող գնալ։ Մի օր վերջապէս խեղճ իդէալիստը բացատրութիւն է պահանջում և ստանում է հետևեալ պատասխանը. «Ես քո մէջ այլ ևս չեմ տեսնում այն ոյժը, որ ինձ յափշտակեց։ Այն օրից ես քեզ ճանաչեցի, դու իմ աչքում հաւասարվեցիր հասարակ մարդկանց հետ»։ Ախր այդ ի՞նչ ոյժ է։ «Այդ այն զօրութիւնն է, որ տղամարդին պահում է կնոջ համար մի անհասանելի բարձրութեան վերայ։ Կինը պիտի ձգտէ հասնել այդ բարձրութեան, բայց չկարողանայ, իսկ եթէ հասաւ՝ այն օրուանից տղամարդը կ՝ընկնի նորա աչքում»։ Ջոկ բան է, եթէ Լիզան ասէր, որ «այդ ոյժը միայն զգայմունքով է ըմբռնում մարդ», չաշխատէր սիրոյ համար պահանջել գատողութեան և խելքի քննութեան ենթարկուող յատկութիւններ, բայց նա Արշաս Պետրովիչից հարցնում է Նորա հայեացքները, իսկ յետոյ ոչինչ չէ ասում, թէ ի՞նչ համակրելի կամ անհամակրելի բան գտաւ Նորա մէջ։ Լիզայի վարմունքը ծագում է Նորա մի տեսակ տարօրինակ փիլիսոփայութիւնից, իբրև թէ «մարդ ի ընէ ծնուած է կամ ստրուկ լինելու կամ ստրկացնելու ձգտումով»։ Այս խօսքերը լսելուց յետոյ Արշաս Պետրովիչը միայն կարող էր գլուխը շարժել և հեռանալ, ինչպէս և արեց։ Վէպը, կարծէք, զգալ է տալիս, որ Լիզայի մէջ մի անշօշափելի, բայց կենսական տարր կայ։ Պէտք է գտնել Լիզայի փիլիսոփայութեան գաղտնիքը։

Լիզան դիմաղիոնական ուսում ստացած մի հայ աղջիկ է։ Նա կար-

դացել է և զարգացել է իբրև թէ, բայց դժբախտաբար յայտնի չէ նորա կողմնակի զարգացման ընթացքը և ուղղութիւնը, իսկ նորա փիլիսոփայութիւնը, ըստ մեզ, միայն հերքում է նորա իսկապէս զարգացած լինելը։ Անկիրթ, պարզ աղջիկը եթէ սիրում է, նա գրքերով չէ սիրում և հաշիւ էլ չէ տալիս իրան, թէ ինչո՞ւ է սիրում. հէնց սիրոյ մէջ սկզբում դատողութիւն էլ չէ լինում մարդկանց մեծամասնութեան համար։ Լիզան նոր երևոյթ է, նոր տիպ է, եթէ նա ամբողջովին նկարագրուած լինէր։ Լիզան Սունդուկեանցի Նատոյի քոյրերից մէկն է իսկապէս, մեր կեղծ լուսաւորութեան արդիւնքների մի ուրիշ տեսակն է։ Նատոն զարգացումն տեսնում է «ժուրֆիքսի, բոյեալի, կրուժոկ գնալու» մէջ, ինչպէս «մադամ Զարինեկան» է անում, իսկ Լիզան զարգացումն տեսնում է առանց դրական գիտութեան անպատճառ մի փիլիսոփայութիւն ստեղծելու մէջ։ Որքան էլ նա ձևանում է, որ զարգացած է, արդելում է Արլաս Պետրովիչին արտայայտել զգացմունքները, որովհետև չէ ուզում լսել բոմաններում շատ անգամ կրկնուած բառեր, բայց նորա անհիմն և կեղծ փիլիսոփայութիւնը մերկացնում է նորա խորին տգիտութիւնը։ Լիզան ֆրազեօր է։ Զարմացի չէ, որ նա մի տեղ կարդացած լինէր, թէ «կինը սիրում է, երբ որ մէկի բարոյական և հոգեկան առանձնայատկութիւնները հպատակեցնում են նրան» և այս ֆրազների ոյժը առանց բացատրութեան և հասկանալու փորձում է Արլաս Պետրովիչի վերայ։ Նա հակասում է իրան։ Նա առանց հասկանալու և քննելու, արդեօք Արլաս Պետրովիչը ունի այս «առանձնայատկութիւնները», սիրում է նորան և ճանաչելուց յետոյ թողնում է նորան, նոյնպէս առանց հասկանալու, թէ ինչ էր փնտռում նորա մէջ և գտաւ։ Մի՞թէ այս «առանձնայատկութիւնները» ոչինչ չպարունակող, անհասկանալի մի բան էր նորա համար։ Մի՞թէ մի գաղտնի ոյժ։ Չէ՞ որ Լիզան զարգացած է ձևանում, ուրեմն պէտք է իմանար, որ խելքը և գիտակցական զարգացումը կարող են որոշել մարդու հոգեկան յատկութիւնները։ Լիզան նման է այն տգէտ գիւղացուն, որ շուկայ է գալիս մի ապրանք գնելու և ասում է. «իմ ցանկացած ապրանքը այնպիսի յատկութիւն պիտի ունենայ, որ հաւանեմ»։ Նորան տալիս են մի կտոր և նա հաւանում է առանց որոշելու արժանաւորութիւնը և յետոյ թողնում, գնում է նոյնպէս առանց հասկանալու, թէ ի՞նչ էր պակաս այդ ապրանքի մէջ։ Նա լսել էր, որ «լաւ ապրանքը պիտի դուր գայ»,

և ինքը գաղափար չունէր, թէ ի՞նչ է լաւն ու վատը։ Լիզան ուժեղ բնաւորութիւն է, իսկ նորա մտածողական ընդունակութիւնները գիտակցական զարգացում չեն ստացել, նա ձևական, «մոդնի» լուսաւորուած է։ Նորա իսկական արժանաւորութիւնները միւս կէկէչ-փէփէչ՝ներից վեր չէ շատ, նա միայն ուզում է սիրելով մարդու գնալ, բայց գրքերով է ուզում սիրել։ Արլաս Պետրովիչը ամենայն պարզութեամբ պատմում է իւր հայեացքները և զգայմունքները. նա Լիզայի հետ վարվում է իբրև հաւասար զարգացումն ունեցող անձնաւորութեան հետ, նա Լիզայի վերաբերմամբ գոնէ անկեղծ է, նա չէ ուզում իւր համալսարանական զարգացման արտաքին փայլով ապշեցնել նորան. դուցէ Լիզան այն ոյժը, «առանձնայատկութիւնները», գտնէր նորա մէջ, եթէ Արլաս Պետրովիչը սկսէր իւր մասնագիտական հարցերով զարմացնել, պատմէր, օրինակի համար, շնչառութեան գործողութիւնը և Լիզան ոչինչ չհասկանար։ Որքան անգիտակցաբար Լիզան թողեց Արլաս Պետրովիչին, նոյնքան և անհիմն կերպով նա սիրեց Սեթեանին, որի մէջ ոչինչ չէ կարելի գտնել։ Սեթեանը բոլոր ժամանակ մի նախադասութիւն է արտասանում. «բժշկականութիւնը դրական գիտութիւն չէ»։ Ահա այս է բոլոր «առանձնայատկութիւնները», որոնք ստրկացրին Լիզային, եթէ չենթադրենք, որ Լիզան հսկայական բռունգքները և լայն թիկունքն էլ «հոգեկան և մտաւոր» ոյժի տեղ է ընդունում։ Լիզան, որ փիլիսոփայութիւն է ստեղծում, սիրեց Սեթեանին, որի տեսքը լոկ մի ահագին բարդանի տպաւորութիւն կարող է անել, թէպէտ քսան փթանոց բարդանի մէջ ոյժ կայ։ Լիզան չէր էլ կարող հասկանալ Արլաս Պետրովիչին, որովհետև մեր կանանց զարգացումը անուղղղ ճանապարհով է ընթանում։ Հայ աղջիկը գիմնազիոնական հատուկտոր փաստերից յետոյ մի քանի ամսից արդէն մոռանում է և դառնում մի Նատա, մի Սալօմէ (Բանդած օջախ)։ Իսկ եթէ նա իմաստասէր է, նա բնականաբար դառնում է մի անորոշ Լիզա, որովհետև նորա կարդացած գրքերի մէջ ոչինչ հետևողականութիւն, կապ և ընտրողութիւն չէ լինում։ Նա կարդում է, ինչ որ ընկնում է ձեռքը, ինչ որ «մոդա» է և համաձայնում է ամէն մի նոր կարդացած հեղինակի մտքերի հետ, որովհետև նա դրական գիտութեան պաշար և տանը առաջնորդող չունի, որ կարողանայ քննողական աչքով նայել իւր կարդացածին։ Ցանը և դպրոցում բոլորը ձևական է, նորա ներքին

աշխարհի կրթութիւնը անկեղծ հոգատարութեան առարկայ չէ, իսկ պատահական զարգացումը ոչինչ չէ տալիս, տանը աղջկայ անձնաւորութիւնը չեն յարգում, իսկ գրքերում կարդացած մտքերը հեշտութեամբ չեն մարսվում։

Մեր ընտանեկան ճնշող, կեղծ և բիրդ պայմանների մէջ կարդացած մտքերը աղաւաղվում են և մեր նոր աղջիկը իսկապէս մնում է էլի Նատո։ Լիզայի փիլիսոփայութիւնը ոչ նոր է և ոչ խորիմաստ։ Նա շատ կարդալուց յետոյ էլի նոյնն է ասում, ինչ որ ամէն օր կատարվում է հայ ընտանիքում. նա պահանջում է, որ կնոջ ստրկացնեն, քողարկելով այս աւանդական բարբարոսութիւնը ֆրազներով։ Ստրկութեան ամէն տեսակը ստրկութիւն է և զզուելի։ Մինչև որ կանանց բարձրագոյն ուսումը չի տարածուիլ, մինչև որ մենք երեխայի մարդկային անձնաւորութիւնը մանկութիւնից առանձին հոգատարութեան առարկայ չենք դարձնիլ, մենք չենք կարող Լիզայից բարձր տիպ տեսնել կեանքի մէջ։ Լիզան նշանաւոր է գրականութեան մէջ, իբրև կանանց նոր տիպի նկարագրութեան մի թոյլ փորձ։ Նորա խօսակցութիւնների, վարմունքի և մեծամիտ վարմունքի մէջ նշմարվում է մի մեծ, ծանօթ երևոյթ, — մեր ընտանեկան անսիստեմ, սխալ կրթութեան և դպրոցական քաօսի արտադրութիւնը։ Լիզայի տիպը խիստ թերի է նկարագրուած։ Պ. Շիրվանզադէին չէ յաջողվում լաւ ուսումնասիրել աղջիկներին, նոցա ներքին աշխարհի ճշմարիտ նկարագրութիւնը դեռ թոյլ է։ Առ հասարակ, մեր բանաստեղծները հոգեբան չեն, թէպէտ Շիրվանզադէի «Նամուսի» տիպերը, իբրև աւելի ծանօթ երևոյթներ, բաւականին յաջող են։

Արլաս Պետրովիչը մի կենդանի երևոյթ է, նա աւելի է պարզուած։ Նա Մարմարովից, երևի, հիմի խորհուրդներ է հարցնում, թէ ի՞նչպէս պէտք է «ռէալիստ» դառնալ, որովհետև արդէն թողել է իւր նախկին «ցնորքները»։ Իւր բարեկամ Գէորգին նա պատմում է գաղափարների մասին, իբրև անցած գնացած բաներ։ «Ի հարկէ, իբրև նորաւարտ թարմ երիտասարդ, ես գլխումս դարսած բերի գեղեցիկ գաղափարների մի շարք, որ մտադիր էի իրագործել կեանքում։ Խօսք չկայ, Գէորգ, գիտես, թէ որքան յառաջադէմ են և աղատամիտ այդ գաղափարները», ասում է նա և հեգնօրէն նկատում. «ճիշդ նոյնը, որ դու ունիս այժմ, այսինքն. աղատ սէր, հաւասար իրաւունքներ և իդէալներ»։ Հետաքրքրական է այն պատճառը, որով նա բացատրում է իւր «ռէալիստ» դառ-

նալը։ «Հասաւ երեսուն տարին թէ չէ՝ մի ճեխք է բացվում և նորա միջից դուրս եկած մութ ամպերը տխուր քողով պատում են մարդու կեանքը», ասում է վշտացած Արլաս Պետրովիչը։ Հասաւ երեսուն տարին և նա բոլորը հերքեց, հերքեց այն զգացմունքը, որով Քրիստոս մարդկութիւնը փրկեց, որ միշտ եղել է և կըլինի մարդկութեան բարձրագոյն իդէալների շարժառիթը։ «Սէրը մի ցանցար զգացմունք է դառնում, երբ կնոջ է վերաբերում. կնոջ կարելի է սիրել, ինչպէս կարելի է սիրել թիֆլիզի խորոված, թարթառ բիֆշտէքս», ասում է նա։ Ազատ սէր, հաւասար ընկեր և թիֆլիզի խորոված, թարթառ բիֆշտէքս։

Արլաս Պետրովիչը ընկաւ նոյն ծայրահեղութեան մէջ և կորաւ, որ յատուկ է վերջին տարիները մեր ինտէլլիգէնտներին։ Երեսուն տարեկան հասակում նա հիմնովին հերքեց իդէալներից, երևի, միակ մնացածը, սաղմոս ու ժամագիրքը ծալեց, մի կողմ դրեց և գնաց այն ուղիով, ուր գնացել էին Մարմարոմները, Ջանումեանցներ, որոնց մասին բանաստեղծը ասում է.

«Դուք աղուէսք, որոնք առաղաստ պարզած
«Առատ շահվում էք յաջողակ հողմից.
«Որոնք սուրբերի զգեստով ծպտած
«Ծծում էք հիւթը խեղճ հայի կեանքից»։

Հասարակութիւնների կեանքում լինում են այնպիսի միջոցներ, երբ ամէն մի կենդանի հրաւէր, ամէն մի «նոր խօսք» հրապուրում, ոգևորում է բոլորին և հաւաստ ու յարգանք յարուցանում դէպի «նոր խօսքը»։ Բոլորը միաբերան բացականչում են. «այ, այդ էր մեզ հարկաւոր» և փառաբանում են «նոր խօսքի» հեղինակին։ Բայց մինչդեռ հասարակութեան մէջ «նոր խօսքի» երկրպագուները ոգևորուած նոր գաղափարի ազդեցութեամբ, գրկախառնուած հրապուրվում են և փառաբանում «նոր խօսքի» առաքեալին. ահա նոյն առաքեալից փչում է մի ուրիշ քամի, նա մոռացել է արդէն իւր յարուցած աղմուկը և կարծես մի կողմ կանգնած ծիծաղելով ասում է. «այ, յիմարներ, չէի սպասում, որ այդպէս ինձ կը հաւատայիք»։ Մեր շուրջը նորից տիրապետում է տխրութիւն, յուսահատութիւն, երկբայութիւն. անհետանում է հաւատ դէպի ճշմարիտ, անկեղծ գործը և «նոր խօսքի» առաքեալները մտնում են այն հեղձուկ մթնոլորտը, ուր իրենց ծնող-

ները մտել էին առանց աղմուկի, աւելի պարզ և անկեղծօրէն։ Ակամայից մտածում ես, ուզում ես գտնել այս ծայրահեղութեան պատճառները։ Սէր այս ի՞նչ է։ Արլաս Պետրովիչը աւարտում է և վերադառնում հայրենիք մի բեռն իդէալներ շալակած և երեսուն տարեկան հասակում արդէն «ազատ սիրոյ» զգացմունքը հաւասարվում է «խորոված»ի ախորժակին։ Մենք չգիտենք, ո՞ւր և ի՞նչ ենք տանում։ Մենք ապրում և զարգանում ենք պատահարար. մենք մեր անցեալը չգիտենք, մեր ներկան էլ չգիտենք, հետևաբար և ամէն մի բոպէական քամի մեզ տատանում է։ Այս է պատճառը, որ մենք 4—5 տարի շարունակ ընդունում ենք առանց գիտակցութեան, իսկ միւս 2—3 տարին հերքում ենք անկարելոյն հետ և կարելին։ Հերքում ենք և ընդունում. ընդունում ենք, որ վաղը հերքենք, որովհետև չենք գտել այն հողը, ուր ամուր ոտքով կարելի է կանգնել։

Վերևը նկատեցի, որ Արլաս Պետրովիչը աւելի է պարզուած և Մարմարովին է յիշեցնում իւր կեանքով, իւր վերջնական կերպարանքով։ Այստեղ փոխուել են միայն ձևերը։ Սունդուկեանցի պիէսայից մենք չգիտենք, թէ որքան բարձր է եղել Մարմարովի ուսման աստիճանը։ Արլաս Պետրովիչը իբրև յետագայ սերնդի մարդ մի փոքր աւելի է առել համալսարանից և ուսումից առ հասարակ։ Բայց այս Սունդուկեանցը չէ ցանկացել, կարծեմ, ներկայացնել Մարմարովին իբրև իդէալներին դաւաճանող կամ կերպարանափոխուած մի տիպ։ Այս կողմից Շիրվանզադէն առաջին փորձն է անում նկարագրելու մեր ինտէլլիգէնցիայի կեանքի և նորա նախկին իդէալների հակասութիւնը։ Քիշմիշեանցի «Օրիորդ Բերոյեանցի» մէջ երևան եկող հայ գործիչը նոյնպէս այս կողմից թոյլ է նկարագրուած Արլաս Պետրովիչի համեմատութեամբ։ Մեր կեանքի այս երևոյթները դեռ գեղարուեստական գրականութեան մէջ արժանի ուշադրութեան չեն առնուել, թէպէտ մամուլը շատ վաղուց մատնացոյց է արել վերոյիշեալ երևոյթները։ Բայց մամուլը մատնացոյց անելով այս երևոյթները աշխատել է բացատրել նոցա հայ ինտէլլիգէնցիայի, հայ ժողովրդի և մեր ընտանեկան կրթութեան թերութիւններով։ Այս պատճառներին պէտք է աւելացնել և վերև յիշած երևոյթները, որոնք այնպէս յատուկ են հայ ինտէլլիգէնցիային և առաջանում են մեր մտաւոր ծուլութիւնից։ Հայ ուսանողը համալսարանական գիտութիւնները չէ սիրում ընդհանրա-

պէս, այլ ձգտում է աւարտել և արտաքուստ լաւ ապրել, ուստի և չէ խնայում իւր ոյժերը, երբոր հարկաւոր է մի քանի օրով բերան գիտնալ մի քանի հարիւր լէկցիաներ։ Այսպէս ուրեմն մտաւոր ծուլութիւնը և նախկին կրթութիւնը հայ ինտէլլիգէնտի թոյլ կողմերի բացատրութեան աղբիւրներն են, որոնցից առաջանում է այն հանգամանքը, որ հայ ինտէլլիգէնտը չգիտէ իւր հայրենիքը, չունի և նոյնպէս գաղափարին ծառայելու տոկունութիւն։ Այս են այն անձնական պատճառները, որոնց համար կարելի է մեղադրել Արլաս Պետրովիչներին։ Բայց կան և ուրիշ պատճառներ, որոնք եթէ ոչ աւելի, գուցէ հաւասար նշանակութիւն ունին այս հարցում։ Երբոր Պետրոս Մեծը ծովային դպրոցներ բացեց, այն ժամանակ և նաւերի համար բուն ռուս կառավարիչներ երևեցան. իսկ եթէ նաւեր չլինէին, երևի, ծովային դպրոցներից դուրս եկածներն էլ կըմոռանային կամաց-կամաց իրենց գիտութիւնը։ Բայց արդեօք նաւեր ունենալու և ծովային ուսումնարաններ հիմնելու գործը նոյնպէս մարդիկների անձնական գործունէութիւնից կախուած չէ մասամբ։ Հասարակական կեանքի զարգացման պատմութիւնը կասկած չէ թողնում, որ մարդկանց ինիցիատիվը զուգընթացաբար է գործում արտաքին պահանջների հետ։ Կրօնական և քաղաքական վարդապետութիւնների զարգացումը ընթանում է սկզբում առանձին անհատների գործունէութեամբ և ոչ թէ այս գաղափարները ընդհանուրի պահանջ են լինում։ Հարկ կայ արդեօք յիշելու, որ բոլոր ազգերի նախնական օրէնսդրութիւնը կառավարիչների, հոգևորականների և աղղապետների մտածած կանոններ են և ոչ թէ անմիջապէս կեանքի պահանջներից առաջացած օրէնքներ։

Այսպէս ուրեմն, եթէ ճիշտ է, որ կեանքի պահանջներն են ստեղծում հասարակական երևոյթներ, նոյնպէս անհերքելի է, որ անհատների ինիցիատիվը նոյնպէս մեծ գործ են կատարում կեանքի պահանջների զարգացման և նոցա իրագործման խնդրում։ Բայց եթէ կեանքի պահանջները թոյլ են, այն ժամանակ անձնական ինիցիատիվը շատ զօրեղ պիտի լինի մի բան շինելու համար. իսկ հէնց այս զօրեղութիւնը պակասում է հայ ինտէլլիգէնցիային, որ ոչնչի է հասնում համարեա արտաքին այն արգելքների առաջ, որոնք պատմական դժբաղդ դիպուածի շնորհիւ ծանրանում են այսօր մեր վերայ։ Այս արգելքները ահա նոյնպէս նպաստում են Արլաս Պետրովիչի իդէալների փոփոխմանը։ Որպէս զի սէրը

«խորոված» չդառնայ և իդեալները չլոգիանան, հարկաւոր է, որ հայ ինտելլիգենցիան աւելի մեծ պատրաստականութեամբ կեանք մտնէ, որովհետև այստեղ իդեալների պահանջը դեռ նոր է զգացվում և դեռ սէրը լսովի բան է և ոչ մարմնացած մի պահանջ։

Գալով Արլաս Պետրովիչի նկարագրութեանը, զիտելու է, որ Նորա սիրոյ նախանձը շատ գեղեցիկ և բնական է պատկերացրած։ Անիրաւացի կերպով անպատիւ եղած Արլասը մանկական ինքնասիրութեամբ ոգևորվում է, տաքանում ու բարձրաձայն խօսակցութիւններով, կարծես, ուզում է Նորից գրաւել Լիզայի ուշադրութիւնը, սիրոյ նախանձը ստիպում է Նորան անգիտակցաբար վէճ սկսել Սեթեանի հետ, որին ուզում է անպատճառ յաղթել, իբրև իւր անտանելի հակառակորդին։ Զարմանալի ճշդութեամբ է նկարագրած Նորա կասկածոտութիւնը, երբ նշմարում է արդէն Լիզայի կողմից սառնութեան նշանը։ Նա նշանակութիւն է տալիս Լիզայի ամէն մի փոքր վարմունքին, աչքերի և յօնքերի շարժմունքներին, Նորա երեսը այսպէս կամ այնպէս թեքելը Արլաս Պետրովիչին զանազան ենթադրութիւնների առիթ է տալիս։ Լիզայի խօսակցութեան ձևերը անգամ յուսահատեցնում և մտատանջութեան մէջ են ձգում խեղճին, որովհետև

«Որքան ջերմեռանդ սիրում ենք մէկին,
«Նոյնչափ հետամուտ ենք նորա սրտին»։

Սեթեանի չարաբաստիկ և խորհրդաւոր նախադասութիւնը այնպէս էին «ստրկացրել Լիզային, որ Արլաս Պետրովիչը կասկածից և նախանձից խեղդվում էր»։ Բայց ի՞նչ ասաց նա. ոչինչ— գրեթէ մի և նոյնը, ինչ որ ես ասացի մի քիչ առաջ. «Բաս ինչո՞ւ ոչ ոք նշանակութիւն չտուեց իմ պատասխանին. ինչո՞ւ Լիզան ստրկաբար նայում է նրա երեսին, կարծես, թէ սպասելով, որ այդ ժայռը մի ինչին հայեացք գցի իւր վերայ», վշտացած ասում է Արլաս Պետրովիչը։ Նա աւելի ևս ոգևորութեամբ ուզում է ցոյց տալ իւր գիտութիւնը, իւր ճարտարութիւնը, բայց ի զուր։ Լիզան գիտակցաբար չէ սիրում, Նա ճանաչելով չէ սիրում, իսկ Սեթեանը ըստ բարձրագոյն հրամանին այնպէս յամառ լռում է, որ Լիզան անպատճառ պիտի սիրահարուէր։

Վէպիկի միւս անձնաւորութիւնների մէջ կայ կենսական տարր, բայց և ոչ մէկը կատարելապէս չէ ներկայացրած։ Պատկերը կա-

տարելապէս և բաղմակողմանի ուսումնասիրուած չէ. այդ մի էպիզոդ է, որ մի գեղեցիկ վէպի նիւթ կարող էր դառնալ։ Բնութեան երևոյթների նկարագրութեանց մէջ պ. Շիրվանզադէն բանաստեղծ է։ Պատմութեան խօսակցական ձևը և սրտագրաւ լեզուն կենդանութեան է տալիս և դիւրալի դարձնում ընթերցանութեան համար, ուստի և «Օրիորդ Լիզան» մեծ զուարճութեամբ և հաճութեամբ է կարդացվում։

Վերջացնելով մեր նկատողութիւնները, չենք կարող չյայտնել մեր անկեղծ ափսոսանքը, որ պ. Շիրվանզադէն միջոց չունի ճանապարհորդելու մեր գաւառները և կեանքի թարմ տպաւորութիւնների ներքոյ զարգացնելու իւր դիտողական տաղանտը։ Ա.հա երրորդ տարին է, որ նա ոչ մի գեղարուեստական տող չէ տուել։ Նորածին տաղանտների համար քաղաքի միատեսակ կեանքը նպաստաւոր չէ կարող լինել։ Գրականութեան պատմութիւնից յայտնի է, որ բանաստեղծները իրենց կեանքի առաջին շրջաններում նստողական կեանք վարելով չեն անցնում կամ գոնէ պարբերաբար զանազան տեղեր ճանապարհորդութիւններ են անում։ Այսպէս, հէնց պ. Բաֆֆիի նախկին գեղեցիկ գրուածները հեղինակին շատ ծանօթ երևոյթներից են առնուած։ Պ. Պռոշեանցի «Սօս և Վարդիթերը» և պ. Աղայեանցի «Յարութիւն և Մանուէլը» նոյնպէս քաղաքի կեանքի պտուղներ չեն։ Յայտնի է, որ Գոգոլը անդադար թափառում էր իւր հայրենիքի զանազան անկիւնները, ինչպէս և Պուշկինը հաղարաւոր վերստ հեռու գտնուող Օրէնբուրգի գաւառը այցելեց «Капитанская дочка» վէպի համար։ Էլ չեմ յիշում Շէքսպիրի, Մոլիէրի կենսագրական մանրամասնութիւնները, որոնք պարզում են վերև յիշածները։ Եթէ ճիշտ է, որ Շէքսպիրի դրամաների բովանդակութիւնը ժամանակակից կեանքից չէ առնուած, սակայն կենսական փորձը երևում է անձնաւորութիւնների հոգեկան յատկանիշները նկարագրելում։

ԳԱՐ. ԵՆԳ.

ՆԻՒԹԵՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

I.

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԹՂԹԵՐԻՑ.

Արտի բերկրութեամբ տեղի տալով մեր «Հանդիսում» հանդուցեալ Ստեփանոս Նազարեանցի թէ «Հայոց ժողովուրդը, նոր այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում» յօդուածին և թէ նորա թղթերին, մեր սեպուհ պարտականութիւնն ենք համարում հրապարակաւ յայտնել մեր խորին շնորհակալիք մեծ. պ. Մելքոն Փանեանցին։

Մեր սեպուհ պարտականութիւնն ասելով պէտք չէ հասկանալ միայն այն մտքով, որ յիշեալ պարոնը ամենայն սիրով և ուրախութեամբ մեր առաջ բաց արեց իւր հանդուցեալ մտերմի թղթերը, այլ այն խնամքի համար է նա արժանի մեծ շնորհակալութեան, որ նա բոլոր թղթերը բաժանել, համարներով կարել, յուցակագրել և նշխարքի պէս պահպանել է։ Եթէ մի քանիսները օրինակ առնէին յիշեալ մեծ. պարոնի օրինակելի հոգատարութիւնն ու խնամքը, այն ժամանակ մենք շատ բան կ՚ունենայինք, որից այժմ զուրկ ենք։

I.

ՈՂՈՐՄԱԾ ՏԷՐ.

Ձեր անցեալ ամսի 12-ին գրած նամակը պատիւ ունեցանք ստանալու և հասու լինելով պարունակութեանը միանգամայն ուրախացանք և տրտմեցինք. ուրախացանք լսելով Ձեր ողջ և առողջ տեղ հասնելը, տրտմեցինք իմանալով Ձեր օրագրի անօգնականութիւնը։ Ցաւալի է մեզ համար և միանգամայն ամօթալի խոստովանել թէ Ռուսաստանի բազմաթիւ Հայ ժողովրդի մէջ օրագրի պէս հասարաօգուտ մի բան մինչև օրս յոյս չունի դեռ ևս կեն-

դանութիւն ստանալու, թէև նոյն իսկ ժողովուրդը հրատարակչին իւր այժմեան պարծանքներից միոն է համարում։ Հոգւով չափ ցանկանում ենք որ մեր տգէտ ժողովուրդը այս իւր՝ այժմեան դարումը աններելի անտարբերութիւնը վերջապէս թողնի, իւր ճշմարիտ օգուտն ու վնասը, բարեկամն ու թշնամին լաւ ճանաչի և իւր ցանկալի վերակենդանութեան ժամանակը անմեղ տեղը իրանից առաւել չըհեռացնի։ Յուսով ենք մենք, որ Դուք առժամանակեայ դժուարութիւններից չէք վախենալ, այլ քաջութեամբ կըյաղթէք ամէն արգելքների, Ձեր ձեռից եկած օգուտն ազգիցը անպակաս չէք անի և մի անգամ բռնած ճանապարհովը անխոտոր կըգնաք, լաւ իմանալով, որ վաղ թէ ուշ բարի գործը իւր պտուղը կըբերի։

Շատ կըպարտաւորէք մեզ, եթէ, ինչպէս այժմ, ապագայումն էլ ժամանակ առ ժամանակ մի երկու տող բան կ'ուղղէք դէպ ի մեզ և իմաց կ'անէք թէ արդեօք ինչ դրութեան մէջ են Ձեր ձեռնարկութիւնները. հաւաստի լինիք, որ ոչ մի աղգօգուտ գործ մեր մասնակցութիւնից զուրկ չի մնալ [1]։

Ձեր բարօրութեան և առողջութեան ցանկացողք՝

ի 5 սեպտեմբերի
1857
Դորպատ։

Վ. Ասկարեանց.
Ն. Շարոյեանց.
Ս. Ամատունի.
Գ. Դիոնիսեան։

II.

ՊԱՏՈՒՀԵԼԻ ԵՂԲԱՐՔ ԻՄ.....ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ,

Ասկարեանց, Շարոյեանց, Դիոնիսեանց և Ամատունի։

Ձեր քաղցր եղբայրական նամակը հասաւ ինձ անկորուստ և մեծ ուրախութեան պատճառ եղաւ իմ սրտի համար։ Ոչ թէ այն ծանօթաբանութիւնքը որ արած էիք դուք իմ որ և իցէ պարծանքի մասին Հայոց ազգի մէջ, այլ ձեր բարեմիտ և ազնուասիրտ մտածութիւնքը պայծառացրին իմ հոգիս։ Ձէ. դուք ամենևին սխալվում էք կարծելով թէ մեր հայկական ազգը, որ գլխից մինչև ոտք մի խաւար ամբոխ է, կարող է պատուել առաքինու-

[1] Նամակը գրած է Վ. Ասկարեանցի ձեռքով։

թիւնը և իւր անուանը փառք համարել մի բարեմիտ աշխատ-
ւոր հեղինակ, որ իւր կեանքի երջանկութիւնը նուիրել է մի այն-
պիսի վերին գաղափարի իրագործութեան, ինչպէս ճշմարիտ ազգա-
սիրութեան գաղափարն է։ Ինչպէ՞ս կարող է մեր ժամանակի
իւրասէր և անձնապաշտ Հայը ճանաչել մի անձուրաց և անձնա-
զոհ Հայ. նմանը սիրում է նմանին և նմանը որոնում է նմանին,
ասում է առածը։ Դուք, ձեր պէս արժանաւորքը, ես և իմ մի
քանի ու կէս ընկերքը բացառութիւնք ենք մեր հայկական թշուառ
կանոնից։ Թողնենք այս նկատողութիւնքը որ այժմուս շատ տխուր
բաներ էին, ըստ որում ոչ առաքինութիւն կայ մեր մէջ, և ոչ
առաքինութեան յարգ, այլ ոտքից մինչև գլուխ մի անմխիթար
բարբարոսութիւն, իմացական և բարոյական մոռելութիւն։ Եւ
ահա սորա իրական ապացոյցները։ Թիֆլիզի Հայերը ամենայն
գաղանական կերպով զրահաւորուելով ընդդէմ իմ օրագրին և
այլ գրուածներիս, հազիւ թէ կարողացել էր իմ գործակատար
փոնդոյեանը 10 օրինակի ստացողք գտնել բոլոր Թիֆլիզի մէջ,
ուր կային գոնեայ 30,000 հոգի Հայ։ Այդ արծաթը հասաւ ինձ,
բայց թէ դորանով գործ կատարել կարելի չէր, ի՛նչ խօսինք այդ
մասին։ Հաշտարխանից ու Նախիջևանից միայն լսվումեն աւելի
լաւ ձայներ. առաջինումը խնդրեցին և ստացան մարդիկ ինձանից
մինչև 50 տոմսակ. երկրորդումը յոյս են տալիս իմ գործակա-
տարքը, թէ լինելու են ստացողք մինչև 70։ Այլ տեղերից ևս
հասած է իմ մօտ 150 մանէթ. բայց դիցուք թէ ստանայի և Հաշ-
տարխանու և Նախիջևանի տոմսակների վճարը, այնու ամենայնիւ
կարելի էր միայն գործ կատարել շատ շատ 3 կամ 4 ամիս։ Ինձ
հարկաւոր էր բոլոր տարեկան ծախքի համար մօտ 5,000 մանէթ։

Ինչպէս ձեզ ասացի Դորպատումը, մեր հայերի բարոյական յո-
ժարակամութեան վերայ դէպ ի բարին, բան հիմնելու յառաջ
տանել անկարելի է. դոցա համար ազգասիրական խօսքը ոչինչ է,
որովհետև դոցա սրտումը չըկայ ոչինչ ազգ, գոնեայ բանական
ազգի գաղափար ոչ։ Եւ թէ այս պատճառով պիտոյ էր մեզ դի-
մել դէպի գաւազանի ոտքը և դորա միջնորդութեամբ ջանալ
ներգործել մեր Հայերի կամքի վերայ։ Ես Նամակախօս եղայ Պա-
րոն պայծառափայլ Բարեատինսկի Կովկասեան տեղակալի հետ
պատշաճաւոր խնդրագրով ծանուցանելով նորան իմ կարծիքը և
Հայոց ազգի այժմեան պիտոյքը և Ռուս բարեմիտ մեծաւորների
օգնականութեան հարկաւորութիւնը իմ գրաւոր ձեռնարկութեան

մասին։ Անտես չարեցի նամակախօս լինել և Պարոն Քրուզէն-շտեռնի հետ որ Կովկասեան տեղակալի դիւանապետն է։

Ուրախ եմ որ իմ փոքրութեան և նուաստութեան խնդիրքը անտես չեղան ոչ Բարեատինսկու և ոչ Քրուզէնշտեռնի առաջև. ոչ. սոքա նորերումն տեղեկութիւն են տալիս ինձ թէ իւրեանց կողմից արած են պարտուպատշաճ տնօրէնութիւն տարածելու իմ օրագիրը, ամենայն տեղ Կովկասի գեներալ գուբեռնատօրների վերայ պատուէրը գրելով, և հրատարակութիւնք գործելով։ Պարոն Քրուզէնշտեռնը իւր մասնաւոր նամակի մէջ հաւաստի է կացուցանում ինձ, թէ ինքը թէ իշխանական և թէ առանձին ճանապարհով աշխատելու է իմ գործի յառաջադիմութեան համար։ Այսպէս ահա լուսաւորեալ բարեմիտ պլպագին աւելի օգնական է և բարեացակամ քան թէ մերայինը, թէ ամբոխ և թէ բանիմաց առանձնական։ Դուք և շատերը մեր Հայերից միշտ գանգատաւոր են եղած օտարներից. բայց ճշմարիտը պիտոյ է ասել. ամենամեծ արիւնարբու թշնամին Հայոց ինքեանց Հայք են. այս անբարոյական և տմարդի ժողովուրդը։ Եւ թիֆլիզեցիք, որ միշտ առաւել մեծախօսքն են գտանված, ինչպէս երևում է, պիտոյ է և ամենից առաւել վատթարքն լինին։ Դուք կըտեսանէք այս բանը վերջումը, թէպէտ այժմ ևս բացայայտ է։ Ի հարկէ ինչ որ Բարեատինսկիյ պայծառափայլ պարոնի հոգաբարձութեամբ լինելու է, այն չէ կարելի ընծայել Կովկասեան Հայերի առաքինութեանը, այլ միայն ինչքան որ մինչև օրագրի տպվելը նոցա կողմից յօժարակամ հասած էր ինձ, համեմատելով միւս քաղաքների տուածին, այն է նոցա պարծանքը կամ ամօթը։ Թիֆլիզեցիք չկամեին ինձ օգնել իմ ալգասիրական գործի մէջ, որոնց օգուտը իւրեանցն էր. բայց այժմ տմարդաբար բարկացած են իմ վերայ, որ օտարը կամի ինձ օգնել, հասկանալով իմ գործի պիտանութիւնը։ Ուրեմն թիֆլիսցոց կամքն էր, որ մի բարեմիտ հեղինակ Հայոց, ոչ Հայերից և ոչ օտարներից օգնութիւն չդտանէր, այլ միայն կապած սառած մնար և յուսահատէր ու մեռանէր, և այդպէս ոչնչանար ամենայն առաքինութիւն նոյն իսկ խանձարուրքի մէջ, որովհետև հարկաւոր չէ առաքինութիւնը, այլ միայն արծաթ, կրկին արծաթ և դարձեալ արծաթ։ Աստուած, Աստուած, հալես արծաթը և ջերմ ջերմ թափես դոցա կոկորդի մէջ, ինչպէս Պարթևացիք արած են Հռոմայեցոց Կրասոսի հետ։ Ես այս բաները գրելով Ձեզ, սիրելի եղբարք, կամէի միայն բանալ ձեր աչքը հաղորդ առ-

նելով ձեզ իմ փորձերին. ապա թէ ոչ մի քաղցր բան չէր ինձ այդքան աղտեղի բաներ և աղտեղի նիւթի վերայ խօսիլ։ Եթէ մինչև Դեկտեմբերի սկիզբը հաւաքվեն բաւական արծաթի քանակութիւնք զանազան տեղերից, իսկոյն կըսկսանիմ օրագրի տպագրութիւնը։ Նիւթքը պատրաստ են։

Ցանկալի էր ինձ տեսանել և ձեր անուանքը իմ օրագրի ստացողների շարքում, ի հարկէ ձեր մէջ եղած կարողներից էր իմ ակնկալութիւնը. միւսերը ձրի կըստանան։ Հարկաւոր եմ համարում որ և դուք մասնակից լինելով իմ գործին, բարի օրինակ լինէիք ազգի մէջ։ Թիֆլիզի ստացողների մէջ տեսանումեմ Խատիսեանցի և Ակիմեանցի անուանքը մեծ ուրախութեամբ. ի հարկէ այդպէս ևս արժան էր։ Կարելի է լսած չըլինիք, որ Թիֆլիզեցիք ևս կամք ունին այժմուս հանդէս գալ մի լրագրով, որի հրատարակողը է Մանդինեանց քահանան. գինն է 6 մանէթ, դորա մէջ է ճանապարհի ծախքը ևս։ Ամենայն շաբաթ հրատարակվելու է մի մեծ թերթ լրագրի ձևով։ Կարելի է, Թիւֆլիզեցիք աւելի յօժարակամ ձեռնտու լինին դորան, քան թէ եղած էին ինձ։ Աստուած տայ։ Պ..... պատանին, որ մի քանի ամիս ճանապարհորդած էր Եւրոպայումը, նորերումս Մոսկվայումն էր. բայց Հարժանացանք դորա տեսութեանը, ըստ որում Եւրոպայում շատ քաղաքավարութիւն էր ուսել, և այնուհետև աւելորդ էր այդպիսի հոյակապ ուսումնականի այցելութիւն առնել մեր նմաններին։ Ժամանակ չէ ունեցել, ասել է։

Այվազովսկի Հայր Գաբրիէլը նորերումս այստեղ էր. հանդիպեց և մեզ. խօսեցինք մի քանի բոպէ. բաւական փափուկ և քաղաքավար մարդ է, և մեր հայկական դրութեան մէջ պիտոյ է լինէր շատ մարդահաճոյ, որպէս և է արդարև. պատարագեց Մոսկուայումը և քարոզ ասաց, երկինք հանելով Լազարեանց մեծագործութիւնքը և նոցա ձեռքով կառուցած տաճարը ուսմանց։ Այժմ Պետերբուրգումն է Այվազովսկին, և ինչպէս ձայն կայ, նա կամի ուսումնարան շինել Թէոդոսիայի մէջ, և այս գործի մասին ունէր մի քանի բան կարգադրելու Պետերբուրգումը։ Խնդրեմ գրել ինձ շուտով և տեղեկութիւն տալ ձեր որպիսութիւնների մասին։

Ձեզ միշտ սիրող եղբայր Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ։

III.

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,

Վերապատուեալ Հայր մեր.

Մի ծանր իրողութիւն այս բոպէիս հարկ է դնում մեր, ժողովրդականներիս վերայ դիմել առ Ձեզ և որդիական համարձակութեամբ յայտնել Ձեզ իրրև ազգիս վեհագոյն դլխիդ մեր ամենեցուն վերաւոր սրտերի ցաւը։

Երկայնմտութեամբ և վեհանձնութեամբ մեք լուռ կը մնայինք. բայց, որովհետև խնդիրը, որ առիթ է տուած այս մեր նամակիս, այնքան մեծակշիռ է—այն անցքը, որ նորերումս անցած է մեր նուիրական սուրբ Էջմիածնի աթոռի ոտքում, ամենայն ղգացող սիրտ և ամենայն մտածող հոգի մեր մէջ վրդովումէ և խռովումէ իրրև ամօթ և անպատուութիւն մեր հայկականը անուանը մանաւանդ օտարազնեայ ժողովրդականների առաջև, վասն որոյ պատուելով մեր անձը, պատուելով մեր եկեղեցին, պատուելով այն ազգը, որ կրումէ իւր վերայ անունս «Լուսաւորչական աթոռի որդիք», մի աններելի և դատապարտելի թուլութիւն կը համարէինք մեր կողմից, սառնամիտ լռութեամբ տանել այն անարգութեանը, որ հասել է մեր ազգի հասարակութեանս մի յանդուգն եպիսկոպոսի հրամանով Էջմիածնայ միաբանների կարգից։

Մեք, Մոսկուայի հայկաղեան եկեղեցու ժողովրդականքս, սարսափելով կարդացինք հայերէն և ռուսերէն օրագրերի մէջ այն անարժան, բոլորովին անքրիստոնեայ ընթացքը, որ Վահրամ Մանկունի եպիսկոպոսը ցուցել է առ իւր հանգուցեալ քրիստոնեայ եղբայրակիցքը, Աբէլ եպիսկոպոս Մխիթարեանց և Յովհաննէս եպիսկոպոս Ասլանեաց։ Մեզ մնումէ անյայտ, թէ որպիսի քրիստոնէական կրօնի ուսմամբ թոյլ էր տուած Մանկունի եպիսկոպոսին այդպիսի անօրինակ անգթութեամբ վարուիլ երկու հանգուցեալ հայ եպիսկոպոսների հետ, մինչև զոցա անշնչացած հողեղէն նըշխարքը օրինապատշաճ թաղման և յուղարկաւորութեան ծիսից ու արարողութենից զուրկ կացուցանել, թող նորա յառաջնութաց, թշնամական ոխակալութեամբ տուած խիստ պատուէրքը հրամանի անտեսելու բարձի թողի առնելու ցաւագար հիւանդներիս դարմանատարութիւնը, մեք լսումենք, որ Մանկունի եպիս-

կոպոսի ինքնիշխան ընթացքը հակառակութիւն յարուցանելով առիթ է տուած Մանկունեաց արքանեակների ձեռքից հանգուցեալների մարմինքը բռնութեամբ խլելու, փոքր ի շատէ դիազարդելու և ամփոփելու գերեզմանի հանգստի մէջ։ Ցարհուրելի՜ իրողութիւն և կրկնապատիկ դատապարտելի, որովհետև այդ անցքը պատահած էր Հայոց կաթողիկոսարանի մօտակայքում։

Վեհափառ Տէր, վերապատուեալ հոգևոր հայր մեր. մեք քրիստոնէական կրօնի գերագոյն օրէնք և հրաման գիտենք և խոստովանումենք սէր, երկայնմտութիւն, հեզութիւն և ներողութիւն. սէր առ թշնամիս, բարերարութիւն առ ատելիս, օրհնութիւն առ անիծիչս. «Մի դատէք, զի մի՛ դատիցիք», պատուիրումէ մեզ աստուածեղէն բերանը մեր երկնային վարդապետի, Յիսուսի Քրիստոսի. մի աւետարան, մի ուսուցիչ, որ մեզ այլապէս ուսուցանէին, չգիտենք մեք, չգիտէ և մեր սուրբ, անարատ քրիստոսեան եկեղեցին։ Մի անչափելի, անսահման ցաւի մէջ ընկղմած է մեր սիրտը տեսանելով, որ մի հայ եպիսկոպոս, որ աշակերտուած էր նոյն ուսմանը, որին մեք ժողովրդականքս, կարող էր այլապէս գործել քան թէ ուսած էր, և այդպէս չար օրինակ, դայթակղութեան քար դառնալ ազգի մէջ։ Եւ ուստի՞ է, հարցանումենք, այդպիսի իշխանութիւն Մանկունի եպիսկոպոսին. մեք ճանաչումենք միակ գերագոյն դատաւոր եկեղեցական գործերի մէջ մեր ազգընտիր Կաթողիկոսը և հայրապետը, այլ ոչ մի հասարակ եպիսկոպոս որ անձնական ախտերով վարակուած, մոլեգնութեամբ կատաղումէր դէպ ի իւր հանգուցեալ եղբարքը։

Վեհափառ Տէր. մեք այս բոպէիս մեր ազգային հասարակութեան պատիւը և իրաւունքը վշտացած ու անարգուած տեսանելով մի տգէտ եպիսկոպոսի անօրինակ յանդգնութեամբ, միաբերան բողոքումենք առ Ձեզ, և խնդրումենք դատ առնել մեզ, վերահասութիւն գործելով Ձեր մօտակայքում ի հարկէ առանց Ձեր գիտութեան կատարուած յանցանքին, արժանաւոր հատուցումն առնել յանցաւորին, կէս մի՛ ի խաղաղութիւն ազգային հասարակութեան խռովեալ և վրդովեալ սրտերին, և կէս մի ի խրատ և ՝ի զգուշութիւն գալոց ժամանակներին։—Յուսալով թէ արդարացի ինդիր հայկազեան հասարակութեանս անտես առնելու չէ վեհափառ տէրութիւն Ձեր, եմք և մնամք Լուսաւորչական աթոռի հարազատ որդիք։

5 Մայիսի 77. Մոսկուայում. Ս. Ն.

IV.

Փետրվարի 28-ին, 1855. Մոսկվա

ՊԱՏՈՒԵԼԻ ԳՐԻՍՏՈՆԵԱՑ ԵՂԲԱՅՐ ԵՒ ԲԱՐԵԿԱՄ

Յովհաննէս Սայամնովեանց.

Ստացայ ձեր յարգելի նամակը ամսուս 10 թուականից գրած և նորա հետ իմ Հոգերանութեան 10 օրինակը որ անվաճառ էին մնացած. շատ ուրախ եղած կը լինէի եթէ սորանց, որովհետև չէր կարելի վաճառել, իմ անունովս բաժանած լինէիք աղքատ բայց խոհական մարդերի, որ կարող էին օգուտ քաղել նորանցից թէև ձրի, առանց արծաթի։ Ես ինքնս մինչև 250 հատ այս աշխատութենից բաշխած եմ ազգին և երբէք տխուր չեմ, որ աշխատաւորին արժանի վարձ հասած չէ. և նայելով Հայերի ողբալի և ամենաողբալի դրութեանը, այսինքն նոցա սարսափելի տգիտութեանը և ամենևին մարմնացելութեանը, ի հարկէ խելքը գլխիս, չունէի ևս իրաւունք պահանջել նորանցից որ ջերմեռանդաբար գնէին իմ Հոգերանութիւնը որ շատ բարձր առարկայ է և ոչ անուսումն երեխաների կերակուր, և այն հին անհասկանալի լեզուով։ Բայց ես հասայ իմ նպատակին. այսինքն, ինչպէս որ ասած էի յառաջաբանի մէջ, հին լեզուով գրած բաները անօգուտ էին Հայոց ազգին, և թէ պիտոյ էր նոր աշխարհաբառ լեզուովը որ փոքր ի շատէ հասկանալի էր ամեններին, գործ կատարել Հայոց ազգի մէջ, ինչքան որ կարելի էր այդպիսի թշուառ ազգի մէջ. և ազգը ապացուցութեամբ հաստատեց իմ ասածների ճշմարտութիւնը, հրաժարվելով այնպիսի գրքից որ արդարև անհասկանելի է նորան, ուրեմն և անօգուտ։ Այս բանի մասին մեծ վէճ կայ մեր հայերի մէջ, որոնց խելքները (այսինքն խելագարները) հաստատումեն թէ պիտոյ է ամենայն գիրք հին լեզուով գրել, առանց մտածելու ժողովրդի չը հասկանալը, ուրեմն և այդպիսի գրածների ամենևին անօգուտ լինելը. այդպիսիքը երազումն ևս տեսած չեն, որ եթէ մի հեղինակ մի գիրք է շարադրել, կամեցել է իւր ազգի հետ խօսել. ապա եթէ նա այնպիսի լեզուով խօսէր, որ ոչ ով չը հասկանայ նորան, ի՞նչ օգուտ այդպիսի գրածից. և գրածը պիտոյ է տարածվի ժողովրդի մէջ և ոչ թէ տպվի միայն և պահ-

վի հեղինակի տանը։ Հայերի բանը շատ յուսահատ մի բան է. դոցա պիտոյ էր դեռ ևս ապացուցանել թէ 2 անգամ երկու չորս է, և ոչ թէ հինգ։ Ճշարիտ է. հասկացողների թիւը աւելի շատ է քան թէ չհասկացողների թիւը. բայց և հասկացողքը, երբ որ պիտոյ է գործ կատարեն, շատ սառնասիրտ են, իւրեանց վաճառական փոքրահոգութեանով և զզուելի մանրահաշվութեանով կապումեն և փակումեն ամենայն օգտակար բանի ճանապարհը. միւսները շատախօսելով քրիստոնէական առաքինութեան վերայ, որովհետև այս հեշտ բան է, դողդողումէ սիրտերը երբ որ լսումէին թէ պիտոյ է մի քանի մանէթ նուիրէին ազգային օգտին։ Այսպիսիքը իւրեանց կեղծաւոր քրիստոնէութեանով շատ ատելի էին ինձ։ Այս այսպէս, իբրև բարեկամական խօսք բարեկամի հետ խօսած. և կարծեմ որ խօսքերս ապառաժի վերայ չեմ ձգում, այլ արգաւանդ հողի վերայ։ Պատուելով ձեզ և ինձ, խօսումեմ ձեր հետ այսպէս։

Դուք ինչպէս երևումէ ձեր պատուելի նամակից, ցանկանումէք ունենալ իմ նորատիպ Վարդապետարան կրօնի, աշխարհաբառ լեզուով. կարող էք ստանալ ինչքան հատոր կամիք, և գինը շատ թեթև, այսինքն մանէթ ու կէս է փոշտայի փողով ի միասին, և ես կարող եմ հասուցանել ձեզ ինչքան կը պահանջէք, և պիտոյ է ասեմ ձեզ, որ իմ խորհուրդը այն էր միայն, որ այդ կրօնական և բարոյական գիրքը որ պարունակումէ իւր մէջ Քրիստոսի աւետարանի ոսկի հատիկները և ոչ թէ Հայոց յիմար արեղաների ծոմռածը Աստուածային բանը, տարածվի Ժողովրդի մէջ և ծանօթացնէ նոցա բուն և արմատական քրիստոնէութիւնը որ հրեղէն տառերով գրած է սուրբ և երկնաւոր Աւետարանի մէջ։ Այդ գործի մէջ չը կայ ինձ ոչինչ մարմնաւոր օգուտ, ես ինքս պիտոյ է դորա օրինակքը առնում ուրիշներից և ուղարկեմ ձեզ, որովհետև այդ գիրքը վաղուց տպած ու յանձնած է այն պարոններին, որ տուել էին տպելու ծախքը և մի փոքր աննշան վարձ իմ աշխատութեանս։

Ահա դուք ստանումէք ինձանից ձեր խնդրած օրինակը, բարեկամական պարգև ձեզ իմ կողմից, միւս օրինակները որ կը ստանայիք յետոյ, ինչքան կը կամենայիք, խնդրեմ աշխատել և ջերմեռանդաբար աշխատել տարածել ձեր քաղաքացոց մէջ, ըստ որում ոչ թէ ինձ էիք հաճոյակատար, այլ նոյն ինքն Քրիստոսին և նորա երկնային վարդապետութեանը, որի ճանապարհը պիտոյ

է բանայիք ձեր քաղաքակիցների համար։ Եթէ Հոգեբանութիւնը, հին լեզուով գրած, անհասկանալի էր Հայերին, այս գիրքը գրած է յստակ և գեղեցիկ աշխարհաբառ լեզուով, որ կարծեմ ամենայն հայ մարդ պիտի լաւ հասկանայ և օգուտ քաղէ, և պարտական էր օգուտ քաղել, եթէ կամենում ճանաչել իւր քրիստոնէութեան որպիսութիւնը, և ոչ թէ լինել միայն անունով, սուտ քրիստոնեայ։ Աշխատեցէք, պատուական բարեկամ, լինել պտղատու ծառ Քրիստոսի թագաւորութեան մէջ, աշխատեցէք ճանապարհ բանալ, որ Քրիստոսը գայ և բնակարան պատրաստէ ձեր ընկերների սրտի մէջ. ես աւետարանեցի, ինչպէս կարողացայ, թէպէտ չէ ինձ պարծանք, բայց վա՜յ կը լինէր ինձ, եթէ ոչ աւետարանէի։ Կատարեցէք և դուք ձեր պարտականութիւնը, եղէք և դուք արժանի քահանայ ձեր Քրիստոսի բանին. մի վախեցէք հայերի քրիստոսատեաց և քրիստոսահալած աբեղաներից. դոցա թագաւորութիւնը խաւարի թագաւորութիւնն է և պիտոյ է խորտակվի և ջախջախվի շուտով։

Ցանօթացուցէք ինձ ձեր բարեկամների հետ, ըստ որում ասած կայ, ինչ տեղ երկու և երեք ժողոված են իմ անունով, և ես նոցա մէջն եմ. ուրեմն չէ պիտոյ մեզ առանձին մնալ, այլ պիտոյ է ընկերութեամբ և միաբանութեամբ գործ կատարել և ծաղկեցուցանել երկնաւոր արքայութիւնը այս հողեղէն երկրի վերայ որ պատրաստութիւն էր երկնաւորի համար. Այս տեղ է սերմանելու ժամանակը, կը հընձենք այն տեղ, ինչ որ սերմանած ենք։

Այժմուս ամենայն ջանքով աշխատումեմ մի այլ գրքի վերայ, նոյնպէս աշխարհաբառ լեզուով. սորա անունն է Հանդէս Նոր Հայախօսութեան, երկու հատոր, բաւական մեծ աշխատութիւն։ Մոսկվայումը հաւաքվումէ արծաթ այս գիրքը պսակելու համար. Պետերբուրգի հայերը Իւրեանց կողմից առաջարկումեն ինձ 1,500 մանէթ. բայց հաշիւը դեռ ևս աւարտած չէ։ Եթէ և դուք կամենաք ձեր քաղաքացիներով մասնակից լինել այս ազգաօգուտ գործին, խնդրեմ իմաց տալ ինձ։

Ձեր ձեզ յարգող բարեկամ

Սարգիսանոս Վարդապետ Նազարեանց։

V.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ

«Հիւսիսափայլի» խմբագիր Ստեփանոս Նազարեանցից

Ծանուցում.

Նախախնամութեան շնորհիւ, որ անսերևոյթ ձեռքով հովանաւորում է ամէն մի բարի գործ. Գրաքննական Ատենի անխոտոր ճշմարտութեան շնորհիւ՝ «Հիւսիսափայլը» ներկայ 1861 թ. կատարում է դարձեալ իւր շրջանը, չնայելով որ խմբագիրը ծանր աշխատանք է կրում։ Սակայն լուսաւորութեան թշնամիները չեն դադարում, և այդ մարդիկը կրկին մտածել են խանգարել իմ պարբերական հրատարակութեան խաղաղ ընթացքը։ Ահաւասի՛կ, թէ ինչում է կայանում գործը՝ ձեռիս տակ ունեցած փաստերի հիման վերայ։

Էջմիածնի Սինոդը՝ Մոսկուայում գտնուող իմ անձնական թշնամուս՝ Յովսէփ Զերքեզեանի խնդիրքի պատճառով՝ և նորա ցուցմունքների հիման վերայ, քննութեան է ենթարկում անցեալ 1860 թ. «Հիւսիսափայլի» 10 համարը և մի յօդուածում գտնում է այնպիսի տեղեր, որոնք իբրու թէ հակասում են Հայոց եկեղեցւոյ վարդապետութեան և այսպիսի վճիռ է կայացնում. Անցած յուլիսի 18-ից Մոսկուայի Հայ Լուսաւորչական Հոգևոր Կառավարութեան ուղարկած հրամանագրով՝ տեղական իշխանութեան միջոցով, հաւաքել «Հիւսիսափայլի» անցեալ 1860 թ. 10 N-ը, նոյնպէս և խնդրել Կովկասի Պարոն Տեղեկալին միջոցներ գործ դնել բոլորովին դադարեցնելու ամսագիրը, որ՝ Սինոդի կարծիքով, «գայթակղութիւն է ամբողջ ժողովրդի համար»։

Տեղական իշխանութեան առաջարկին՝ որ ես հաղորդեմ նոցա իմ բաժանորդների ցուցակը, այսպիսի բացատրութիւն տուի. «Հիւսիսափայլ» ամսագիրը, հրատարակուելով Ռուսաց Գրաքննութեան կանոնագրութեան ընդհանուր օրէնքների հիման վերայ, գտնվում է Ս. Պետերբուրգի Գրաքննական Ատենի հսկողութեան ներքոյ, հետևաբար չէ ենթարկվում որ և է հսկողութեան Հայոց Հոգևորականութեան կողմից։ Այդ պատճառով ես պարտական չեմ տեղեկութիւն տալ իմ բաժանորդների մասին։

Յայտնելով Ս. Պետերբուրգի Գրաքննական Ատենին այս գործը, որ կարող է մի քանի անախորժութիւններ պատճառել ինչպէս Ատենին, նոյնպէս և խմբագրին, չեմ կարող չնկատել, որ մի այս-

պիսի ընդդիմադրութիւն ասիական յետադէմների կողմից, որոնց պատկանում է և Հայ Հոգևորականութիւնը, վաղ թէ ուշ երևան պիտի գար. մանաւանդ որ «Հիւսիսափայլը», որպէս նոր կարգերի բարեկամը և Ռուսաստանի Հայերի մտաւոր ու բարոյական բարօրութեան նախանձախնդիրը, յաճախակի պիտի ցոյց տար հասարակական ախտերը, սաստիկ պիտի հակասէր ժողովրդական նախապաշարմունքներին, բարձրացնէր մտրակող խարազանը ախտերի դէմ և ակամայ պիտի վիրաւորէր շատ Հայերի կեղծ ինքնասիրութիւնը, մանաւանդ Հոգևորականութեանը։

Որքան էլ բնական է այն կռիւը, որ լինում է հին ու նոր կարգերի մէջ, խաւարի ու լուսոյ մէջ, ասիական անշարժութեան մէջ յամառութեամբ դեգերող և այն սակաւաթիւ հասարակութեան մէջ, որ պայծառ կերպով հասկանում է ժողովրդի կեանքի ժամանակից խնդիրները և անհրաժեշտութիւնը Ռուսաստանի իսկական մտաւոր շարժման շաւղի վերայ կանգնելու, սակայն, ցաւալի է ասել, Հայոց բարձր Հոգևորականութիւնը, որին քանիցս ոգևորուած կերպով հրաւիրել է «Հիւսիսափայլը» պարագլուխ հանդիսանալ Հայերի ժամանակակից լուսաւորութեան գործում, միշտ խուլ ու մունջ է մնացել։ Այդ իսկ Հոգևորականութիւնը միշտ հալածել է թէ՛ ակներև և թէ՛ ծածուկ դիմադրութիւններով «Հիւսիսափայլ» ամսագիրը, իսկ այժմ—sit venia dicto—յանձն է առնում կատարել ամօթալի դեր՝ կոյր գործի դառնալ մի մասնաւոր մարդու՝ պ. Չերքեզեանի ձեռքում, մի մարդու, որ իմ ոխերիմ թշնամին է, որ բարեմիտ Հայերի կողմից դատապարտուած է արհամարհանքի։

Հաղորդելով այս տեղեկութիւնը այն իշխանութեան, որին ես ստորագրեալ եմ իմ «Հիւսիսափայլ» ամսագրի հրատարակութեան կողմից, լիովին համոզուած եմ, որ Նա՝ գործը քննելով, իւր ժամանակին ճիգը կը թափէ պաշտպանել որպէս Գրաքննական Ատենի, նոյնպէս և խմբագրի իրաւունքները։ 1860 թ. «Հիւսիսափայլի» 10 N-ի յօդուածը, որ գայթակղութեան քար է դարձել Հոգևորականութեան համար, եթէ պահանջ լինի, ամբողջապէս ռուս թարգմանութեամբ ես կը ներկայացնեմ Գրաքննական Ատենի հայեցողութեան։ Թող յաղթող հանդիսանայ ճշմարտութիւնը, թող կորչի սուտը։

Խմբագիր «Հիւսիսափայլի»

Սթեփանոս Նազարեանց։

1861 թ. 18-ին Օգոստոսի Մոսկուա։

(Թարգմ.).

VI.

Հանգուցեալ Ս. Նաղարեանցի թղթերի մէջ գտնում ենք վաղաթառամ Վահան Ասկարեանցի մահացուցակը գերմանական լեզուով, որ և յառաջ ենք բերում հայկական թարգմանութեան հետ միասին: Ցանկալի էր իմանալ, արդեօք այդ երիտասարդ բանաստեղծը ոչի՞նչ չէ թողել, կամ եթէ թողել է, ո՞ւմ մօտ են գտնվում: Փափագելի է, որ օր առաջ լոյս տեսնեն այդ թղթերը, եթէ միայն կան:

Am 1 April verschied zu Dorpat der hoffnungsvolle junge Armenische Gelehrte Wahan Ascarianz, geb. zu Wagarschapat im Eriwanschen Kreise den 7. Nov. 1830: er studirte auf hiesiger Universität Cameralwissenschaften 1853—57, nachdem er als Zögling des Lasarewschen Instituts für orientalische Sprachen zu Moskau den Grund zu seiner ungewöhnlich reichen, gelehrten Bildung gelegt hatte, die ihn sehr vortheilhaft auszeichnete. Als Mitarbeiter an einem Armenischen, in Tiflis erscheinenden Journal lieferte er gehaltvolle Aufsätze; auch für unsere Zeitschrift war er thätig, indem er im ersten Jahre seines Studiums auf hiesiger Universität eine Recension der Uwarowschen Abhandlung «De Bulgarorum utrorumque origine et sedibus antiquissimis» (1853 Nr. 52. 1854, Nr. Nr. 2, 3, 5) schrieb. Zuletzt beschäftigte ihn eine ausführliche Darstellung der Verfassung und Verwaltung von Armenien, zu welcher er sehr umfassende Vorarbeiten gesammelt hatte. Ganz besonders liesz er sich aber historische Studien angelegen sein und hätte gewisz Ausgezeichnetes geleistet, wäre ihm eine längere Lebensdauer beschieden gewesen. Auch als Uebersetzer war er sehr thätig. Das Cand.-Examen hatte er so eben absolvirt.

Ապրիլի 1-ին վախճանեցաւ Դորպատում մեծ ապագայ խոստացող երիտասարդ հայ գիտնական Վահան Ասկարեանցը, որ ծնած էր Վաղարշապատում՝ Երևանի նահանգում, նոյեմբերի 7-ին

1830 թ.։ Նա ուսանում էր այստեղի համալսարանում ֆինանսական գիտութիւններ 1853—1857 թ. իւր տարօրինակ բաղմակողմանի և հարուստ ուսման հիմքը դրել էր դեռ Մոսկուայի Արեւելեան Լեզուաց Լազարեան ճեմարանում աշակերտ եղած ժամանակը։ Իբրև աշխատակից Թիֆլիզում հրատարակուող մի հայկական լրագրի, նա զետեղում էր հարուստ բովանդակութեամբ յօդուածներ. իբրև աշխատակից մեր լրագրի ևս, նա իւր համալսարանական ուսման առաջին տարին գրեց մի յօդուած Ուվարովի «De Bulgarorum utrorumque origine et sedibus antiquissimis» (1853 № 52, 1854 №№ 2, 3, 5) հետազօտութեան մասին։ Վերջում նա զբաղուած էր Հայաստանի քաղաքական և տնտեսական դրութեան մանրամասն նկարագրութեամբ, որոց համար շատ հարուստ և ընդարձակ նիւթեր և նախապատրաստութիւններ ունէր հաւաքած։ Բայց ամենից շատ զբաղուած էր նա պատմութիւն ուսումնասիրելով և անշուշտ նշանաւոր գործունէութիւն պիտի ցոյց տար, եթէ նորան աւելի երկարատև կեանք վիճակուած լինէր. իբրև թարգմանիչ, ևս նա գործունեայ էր։ Համալսարանական քննութիւնը նոր էր վերջացրել։

II.

Հայկական տպագրութեան պատմութիւնն ուսումնասիրողները, անտարակոյս, ուշադրութիւն կը դարձնեն երկու անձնաւորութիւնների — Ոսկան վարդապետի և Թադէոս երէցի վերայ։

Զկամանալով յառաջ բերել այստեղ մանրամասնութիւնները [1]), յիշենք համառօտակի գործի եղելութիւնը։— Ոսկան վարդապետը (արքեպիսկոպոս) հաստատում է մի տպարան Ամստերդամում և 1666—1670 հրատարակում է զանազան գրքեր, որոնցից նշանաւոր է նորա Աստուածաշունչը։ Այդ իսկ տպարանը 1670—1673 տեղափոխուած է լինում Լիվոռնոյում, 1673-ին յետոյ—Մարսէյլում, ուր և վախճանում է Ոսկան վարդապետը։ Մարսէյլում տպագրուած գրքերի մէկից երևում է, որ Թադէոս երէցը և Ոսկան արքեպիսկոպոսը միասին են գործել, այն է՝ «Ատենի Ժամագրոց»-ի ճակատին ասած է.—«Արդեամբք և ծախիւք Նոյնոյ Ոսկանայ արքիեպիսկոպոսի և Թադէոսի երիցու Երևանցւոյ».... Սակայն Ոսկանի մահից (1676) յետոյ, նորա քեռորդի Սողոմոնը վերստին տպագրում է «Գրկուկ կարևոր Հանապազորդեան» գիրքը, որին և կցում է Ոսկանի կտակը։ Այդ կտակից պարզ երևում են նոցա թշնամական յարաբերութիւնները։

Թադէոսի գրած ոտանաւորը տպուած է «Ամսօրեայ Հանդիսի» մէջ (1887, №№ 11 և 12)։

Այս կտակը մենք ստացանք Մեծապատիւ պ. Կար. Եղեանից, որին և յայտնում ենք մեր շնորհակալիքը։

Նիւթիս վերաբերեալ տեղեկութիւններ կարելի է գտնել.

1) «Բազմավէպ» — 1850 թ. 348—349. 1851 թ.—40—41.

2) Պատմութիւն Հայ Դպրութեան, Վեն. 1878 թ. II 290—324.

3) Զամչեան, Պատմութիւն III հ. 661.

4) «Հանդէս Ամսօրեայ», 1887 թ. №№ 11 և 12.

ՈՍԿԱՆ Վ. ԿՏԱԿԸ.

Կտակ իմ Ոսկանայ վարդապետիս. վիպասանօրէն, վախճանական բարև մնայիւ առ ամենայն Հայ ազգինս [1]), յաւէտ առ Հոգևոր Հայրն իմ Տէր Յակոբ սրբազան կաթուղիկոսն ամենայն Հայոց և առ իւրաքանչիւր Հոգևոր պետականսն քաղաքաց ամենից, սակս դառնակսկիծ մահուանն իմոյ, ի պատճառէ չարեացն չթաթէոսի երիցւոյ անցուցելոցն ընդ իս և ընդ գործարանիս իմոյ ի Մարչիլիայ քաղաքի։

Ապանալեան և արիական մեծի ազգի Թորգոմասեր ծննդոցդ և զաւակացդ Հայկազուն ցեղի՝ ըստ աւանդութեան սրբազանի առաքելոյն Պօղոսի զկտակս վիպասանօրէն հաստատեցի, ծանուցանելով ձեզ լուսաւորչաւանդ քրիստոնէիցդ ամենի զանցուածոց իմոց պատշաճօրէն, և համառօտաբար ըստ կարգի, որք պատահեցան ինձ յաճախաբար ի Մարչիլիայ մեծի քաղաքին։ Քանզի որդին կորստեան և ժառանգն Բէեղզեբուղեան չերէցն Թադէոս Համազասպեան զամրոցս և զդղեակս անօրէնութեան յօրինեալ կերտեաց աստ, բազմահնար մեքենայիւք, հաստատեալ ի նմին ամբարտակս չարութեան, կացուցանելով ի գլուխ նորին զդրօշակն ամբարտաւանութեան՝ առ ի խուս աւ ութիւն ամենից պատուիրացն Աստուծոյ և մարդկան. մուծանելով զինքն ընդ յարկաւանկելոյն, յեցեալ ի զօրութիւնս նորին վաղակործան, զօղեալ թաքեաւ ի քաղաքի ամբաստանին առ ի յայտածումն և յառաջեցուցումն յոգնամեա մթերեցեալն նենգութեան՝ անկասկած և անվեհեր յումեքէ ըստ անշուշտ ձայնին վկայութեան. որպէս և լուեալ իսկ է աստուածասիրութիւն ձեր, թէ որպիսի անցս անցոյց ընդ իս, ի ժամանակի ծերութեանս իմում, ի մէջ պլասեռ քրիստոնէից։ Ցաղագս բազմիցս արարեցեալ բնաւից բարեաց իմոց որ առ ինքն և առ իւրայինսն՝ յոգնակերպ և զանազան փորձութիւնս հասոյց ինձ և իմոցն, զոր չէ պատշաճ յիշել ուրոյն յատուկ զանթուելի բարեացն իմոց, որ առ ապերախտս յոգնաժա-

[1]) Տպագրում ենք այս կտակը՝ անելով մի քանի փոփոխութիւն. ուղղեցինք տեղ տեղ կէտադրութիւնը, տեղ տեղ էլ գլխատառեր դրինք. իսկ լեզուն անփոփոխ թողինք։

մանակս. և ոչ ի գիր արկանել զանհուն չարեացն և պէս պէս մեծամեծ վնասակարութեանց սորին որ առ իս։ Յաւէտ այսու յետին լիալիր անճառելի և անպատմելի անօրէնութեանցն որ էլլից զթերիսն և պսակեաց զամենայն տալով զրաւ և աւարտ կենաց իմոց։ Ծառայ գոլով, անինայաբար զգետնեալ փշրեաց զոսկերս իմ հատուցումն գթութեանց իմոց։ Փրկեցեալն ինև ի բանտից և ի կապանաց կապեաց և կնքեաց զգործարանս սրբոյ Էջմիածնի, և զտունս իմ փոխանակ այցելութեանցն իմոց. հաստեցեալն յինէն ըստ հոգւոյ քահանայական կարգաւն և ըստ մարմնոյ գոյիւքն և արդեամբքն մերկացուցեալ կողոպտեաց զիս յընչից իմոց, և էմոյծ ի ներքոյ բազմահոյլ պարտուց տրիտուր բարեգթութեանցն իմոց, այպանեաց և անարգեաց զանունս և զփառս իմ և առաքիչն իմոյ Տեառն Յակոբայ ամենայն հայոց կաթողիկոսի. և անդրադարձումն առեցեալ փառաւորութեանցն որ յինէն՝ ի գթութիւնս իմ ոչ ակնարկեաց. ի ծերութենէ իմմէ ոչ պատկառեցաւ և յալիս իմ ոչ խնայեաց, և ի պետականէն իմմէ և յինէն և յազգէն հայոց ոչ պակաւ։ Ա.յլ ձեռնաձիգ եղև ինձ խստաբար որպէս զկայէն. և տիրանենդ համբուրիւ մատնեաց զիս իբր զՅուդաս. վասն որոյ այսու ամենիւք հարուածովքս և առաջնով կնքմամբ դրան գործարանին նուաղեցաւ լոյս աչաց իմոց յարտասուաց. և ի տառապակրութիւնս այս յորս մերձաւորս ձեռնարկի օգնել ինձ, նոյն ինքն եղեն առաւել կործանիչք, լինելով սատար չարին ագահութեան մասին լրացմամբ։ Ընդ որս զսուգ անմխիթար տրտմութեամբ ծրարեցի ի վարշամակ ոգւոյ իմոյ, վասն զի ամենեքեան եղեն ինձ նեղիչք, որովք ի սպառ հատաւ յոյս կեցութեանն իմոյ և ապաւէն ապրելոյ։ Ուստի և իմ այսու ամենայնիւ ընկղմեալ ի խորս անբուժելեաց ցաւոց, հասի ի դրունս մահու. որ և յայնմ ժամու մերձ աւանդման հոգոյ իմոյ, սերմն ժանտ և ծնունդն անիծից եկն երկրորդ անգամ կապել զգործարանն, յորմէ խսպառ լուծաւ զօրութիւն իմ. մերժեցաւ յինէն կեանք իմ. քաղեցաւ միանգամայն և հոգի, և դառնամ առ այն ուստի առի. վասն որոյ ողջունեմ զձեզ զամենեսեան անդառնալի գնացս իմ։ Ողջոյն ձեզ բարեկամք իմ և սիրելիք հաւատացեալք ի Տէր Քրիստոս ամենեքեան հայազունք։ Ողջոյն քեզ և բնակչաց քոց, երկիրդ իմ սեպհական գաւառ Ա.րարատեան։ Ողջոյն քեզ գլուխ ամենից Հայաստանեայց, եկեղեցեաց մայրդ լուսածին սուրբ Էջմիածին, ուռճացեալ ընաւիւք բազմութեամբք

եկեղեցեայ։ Ողջոյն քեզ և ընակչաց քոյ սրբոյն Սարգսի զօրավարի վկայարան, յատուկ օթարան իմ և ինև կերտեալ հանգստարան։ Ողջոյն քեզ տէր իմ և պսակ գլխոյ իմոյ պետդ պատուական Յակոբ կաթուղիկոս ամենայն հայոց դիտապետ սրբազան։ Ողջոյն ձեզ համօրէն գունդք եկեղեցական խմբից, եղբարք իմ և աշակերտակիցք, և աշակերտեցեալք, ի փառս ճշմարտութեան և ի պարծանս ազգի ցնծութեան։ Ահա մեկնեցայ և որոշեցայ վախճանական բաժանմամբ, կարօտ տեսութեան ձերոյ, և ի փափագալեացն իմոց թէև ոչինչ գոնեայ ձեռօք ձերովք մուծանէիք ղիս ի գերեզման, կարգաւորելով ի թիւս հարց իմոց։ Եւ արդ այսու կտակիւս ի Քրիստոս և ի ձեզ յամենեսեան յանձնեմ զերաւունս իմ և զդատաստանս վասն անցելոց հարուածոցն իմոց լըբադէմ է (այս անուն) որպէս և գրեցաւն։ Այլ և յանձնեմ ձեզ զպէտս հոգւոյ իմոյ՝ զաղօթս և զպատարագս ձեր առ ի հատուցումն պանդխտակողոմ չարչարանաց իմոց որ ի պէտս ազգի։ Ընդ սոցին յանձին լիցի գերագոյի գլխոյդ իմոյ Տեառնդ Յակոբայ ամենայն հայոց կաթուղիկոսի և ամենայն հայոց յոգնավաստակ հոգիացուցիչ պտուղ ձեռաց իմոց զ(գ) ործարանս, գործակալքդ և կառավարչքն իւրովք ի փառս Տեառն և ի պարծանս ձեր. և դուք մնասջիք խաղաղութեամբ կրկին կենօք ի յոյսն բնաւից ի Տէր Յիսուս Քրիստոս, որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՐԳ ՆԱԽԱՏԱՆԱՑ ԵՒ ԱՆԻԾԻՑ (ԱՅՍ ԱՆՈՒՆ).

Ինձ հետևել հարկաւորի
տեառնըս իմոյ ողբերդ կտակի
տալով զանէծս նախատալի
յանձին պղծոյդ Թաղէոսի:
Սերմն անիծեալ Արիոսի,
սաղմնառեցար յարգանդ հարձի,
յորոց ծընար Յուդայ որդի
մատնիչ լեալ իմս վարդապետի:
Ով դու ժառանգըդ դեհենի,
զի մատնեցար սատանայի
ուրացութեամբն ի յատենի
վասն անիրաւ մամոնայի:

Ղօղեալ դարձար յամօթալի
սակս չարեացդ անպատմելի,
զոր չէ պատշաճ առնել յայտնի,
զի է լսողաց սարսափելի:
Ոհ թուք յերեսդ քո գարշելի,
զազրատեսիլ և աղտեղի,
քակիչ ցանկոյն մեր հայրենի,
գնացող ընդ շաւիղս վայրենի:
Մարմին ժանտիդ հող մի դարձի,
այլ ըստ կընոջ Ղովտայ լիցի.
հոգիդ ի դժոխս մատնեսցի,
անշէջ հրով տապակեսցի:

Որթունք անբունք զբև պատիցին,
աչքդ ի պատժոց բնաւ մի բացցին,
զի եսդ արժան այս վարձին
ըստ Յիսուսեան անշուշտ բանին:
Նուիրեցար կամաւ քոյին
ծնօղովքդ հանդերձ բաժին դեւին,
վայելեսջիք միշտ ընդ նոսին
զանեզր զտանջանսն ի միասին:
Է և բազում իր ըստ կարգին,
որք վասն նեռինդ զրել պարտին.
սակայն ժամաւս այսու թողցին,
զի ի գիրս քո աւարտիցին:

Ջհարկաւորագոյն պիտանացու գրեանս աստուածասէր և բարեպաշտօն ազգին Հայոց, յարծանացուցեալ մեր գոլ նուազ և պակաս իսկ. վասն որոյ օր ըստ աւուր մեծաւ ջանիւ և մշտաշխատ վշտակրութեամբ կամիմք լցուցանել Աստուծով ըստ կարողութեանն մերում, խնամակալութեամբն Աստուծոյ և օժանդակութեամբ բարեգութ ցեղին իմոյ Թորգոմածին արամալնեայց, որպէս յորոց և մինն է փոկրագոյն գրգուկս այս ծաղկալեր որ կոչի տարեցուց և լուսնացուց, և այլք իրք պիտանիք, որք սկսեցեալք Աստուծով, աւարտեցաք Քրիստոսիւ բազմօք ցաւօք և տագնապիւք. վասն զի Բէեղզեբուղն և պատժակիցն կորեայ և դադանայ, անիծեալն յԱստուծոյ և ամենայն սրբոց Նորին վատաշվէր և բորբորիտ չերէցն (այս անուն) ոչ տայ թոյլ հանգչել գործարանիս ի վնասուց. և գործակալացն բանալ զաչս ի պարտուց. որպէս լուեալ էք և լսելոց ևս էք զամենայն արարմունս երկրորդ նեռինն յամենեսեան գրեանս տպեցեալս յաւէտ որ հատուկ վասն տերասպանին. զոր տէր Յիսուս խայտառակեալ կրկին կենօք բարձցէ ի միջոյ և զձեզ պայծառացուցեալ երկու աշխարհօք, պահեսցէ անվնաս յամենից չարեաց ի փառս իւր և ի պարծանս համայնից և ի յառաջադիմութիւն անկեալ և կործանեալ տպարանիս ձերոյ, որ և այսու ամենայնիւ մաղթեմ յիշել միշտ ի մաքրափայլ յաղօթս ձեր զբաղմաշխատ մշակն Քրիստոսի զծերունին և զհոգևոր հայրն ձեր և մեր զՈսկան վարդապետն:

ՇԱՏԵՐԷՆ ՄԷԿԸ.

Վլատիմիր Քառփիչը կէնձ, շէնքով, իրեն գործին մուխայէթ [1]) առուտուրական մարդ էր. աղքատ հօր-մօր զաւակ, ուրթը տարուցէն էօքսիւզ [2]) մնացած, ինքը իրեն կուլխուն վարպետ գնացած, ինքը իրեն կուլխուն խանուրթի խզմէթքեար [3]) մնած, 21 տարու խանուրթի ու պզտիկ [4]) սէրմիայի [5]) տէր էղած, 23 տարու մէքամ շէնքով, տեսօք, կիր-խալէմ-կիտցող [6]), ամա խարիպիկիտ [7]) սոյէ [8]) աղջիկայ վրայ կարգրված, տահա 27 չիմնած էրկու օրդու ու մէկ աղջկայ հայր էղած էր՝ երբոր ես նարան առջի անգամ ճանչցրցայ նը:

Օրդուս պէս սիրեցի իտա տղին: Խանուրթին քովէն որ կանցնէի նը՝ տայմա [9]) գործի վրայ կըտեսնէի նարան— եա՛ քաղաքավարի, ինքը իրեն չի ցածցունելէն միշթէրիներուն [10]) հետը կալաճի կանէր, եա՛ սթոյքային [11]) էտուր՝ աչքը փէնճէրէին [12]) արած՝ կաղէթ կըկարդար, եա՛ դարակներուն պարին կըսրբէր, կըշարէր, տեղէ տեղ կը փոխէր, եա՛ ստակը կըհամրէր, եա՛ մէկ շչօթ [13]) կամ մէկ բարևագիր կըգրէր, կարճ՝ պարապ, առանց գործի հէչ չէր կենար: Սապահթան [14]) սահաթը օխտին նարա խանուրթը բաց կըլար ու իրիկունները մթնելէն շատ ուշ կը փակվէր: «Էրնէ՞կ սայեախլուիդ [15]), էրնէ՞կ օղլուշախիդ», կասէի միտքիս մէջէն. ու սիրտս պէթէր [16]) կուզէր մէկ հնարով նարա տունը մտնելու ու կեցուածքը, տուն-տեղ պայեածը տեսնելու: Իմ սիրած բանս է տէյէմիշ անելու [17]) քի՝ խօլօք մարդը ի՞նչ կերպ տուն կըկառավարէ,

---

1) Ուշադիր. 2) որբ. 3) ծառայ. 4) փոքրիկ. 5) մայր-գումար. 6) գրագէտ. 7) չքաւոր. 8) ազգական. 9) միշտ. 10) զովող, ապրանք գնող. 11) стойка. 12) պատուհան. 13) счёты. 14) առաւօտ. 15) կին. 16) շատ, խիստ. 17) Նկատել, դիտել.

ապրուստ ունի ու զաւակ կրմեծցունէ. զէրէ [1]) շնորհ-
վայ [2]) ատենը խրթ [3]) տուն կրկուանուս, որ տանտիրոջ
եա նարա սայեախլուցի խելքով ման գայ։ Սավածրդ կը
սիրիս՝ տունին նեսը դուսը եա առխիթիքթիրին մարի-
ֆէթն [4]) է, եա մէպէշչիքին. տղոց կեցուածքը ու խօսուած-
քը կուվէռնանքային էմէկն է. նեսի թէմիզութինը [5]) կօռ-
նիշնային [6]) աշխատանքն է. զեատֆէթ [7]), եա մէկ հաց, եա
մէկ ժողոտանք անելու լան նը՝ նօմայ ստակ կուլուն Ան-
տուշին փէշը [8]). սաղ քուխնին թանկնոց զահիրաներով [9])
կուտան փովուռին [10]) ծեռքը, տունին ալայ արծրթէ թա-
խրմը [11]) թէսլիմ կանին [12]) լաքէյնելուն [13]), Սավածդ
կրսիրիս, անկէ եաքը խաղեայքային [14]), բան կրմնաց որ
անելու.... Տունին տէրոջը համար բան չասինք, զէրէ նա
վաստակին էտուէն է։ Ես ասպէս միտք կանէի՝ խօլոք Վլա-
տիմիր Քառիչին սայեախլուն ջունքի իրեն հաւնածն
ու խարիպիկիտ տունէ առած է նը, հնար չի կայ, որ
փէռատ-մեռատ [15]) բան պիտի չելայ, չէնէ [16]), կալաճիին [17])
սուտը պէտք չէ, ատպէս շէնքով տղին ամեն զէնկին [18]) հար—
մար ալ թալնա տալէն [19]) պիտի տային իրենց աղջիկանը,
իլայի [20]) աս մնտիկ տարիներուս, երբոր եօռլիսի [21]) գալու լէ-
վէնտը [22]), էվէլքի [23]) արծաթ թալէռին պէս, խրթ էղել է։

Մէկ օր մտայ Վլատիմիր Քառիչին խանութը. «Ճա-
նրս, աղէկ չայ ունի՞ս», հարցուցի։

— Ունիմ, հապա չունի՞մ, ասաց։ Ու դառնալով խա-
նութի խզմէթքեարին, «Հանէ՝ [24]) վաղէլէն կնա՛ տուն,
եանկայիդ [25]) ասա՛, որ աղլի ցիպիքի չայէն մէկ ֆունթ
քաշէ տայ»։

---

1) Վասն զի. 2) այժմուայ. 3) սակաւ. 4) ճարտարութիւն. 5) մաքրութիւն. 6) նա-
ժիշտ. 7) խնջոյք. 8) քղանցք. 9) պաշար. 10) խոհարար. 11) կազմածք. 12) աւանդել.
13) սպասաւոր. 14) տանտիրկին. 15) անպիտան. 16) ապա թէ ոչ. 17) խօսակցութիւն.
18) հարուստ. 19) կայթեալ. 20) մանաւանդ. 21) յարմար. 22) երիտասարդ, ամուրի.
23) նախկին. 24) ա՛յ տղայ. 25) խաթուն, մօրաքոյր.

— Մէմալ ի՞նչ զահմէթ [1]), ասի, թօ մնայ. ես ինքս կուգամ կառնում։ Միտքըս անէր, որ ատ սուտ մահանայով [2]) կուզէի նարա տունը մտնելու։

— Չէ՛ տահա ինչ, ասաց Վլատիմիռ Քառփիչը, միտքըս չի հասկրցած, տղան կպերէ-շտէ, մէմալ քեզի ի՞նչ զահմէթ։

— Ի՞նչ է, ինձիմէն մէկ կավաթ չայ այեամիշ կանիս [3])- ինչ. պէքիմ [4]) քու տունիդ չային համը նայելու կուզիմ, ասի խնտալէն։

— Ատպէս է նը՝ կուլխուս վրան, ասաց նա. հածէ՝ թէզ վազէ մեր տուն, ասա՛ եանկայիտ որ հազելուորվի. «մեզի չայի մարդ պիտի գայ» ասա՛։

— Աղէկ, ասաց խանումի տղան ու խուշի [5]) պէս թռաւ։

Իրիկուան չանկերէն [6]) սահաթ ու կէս—երկու սահաթ անցած Վլատիմիռ Քառփիչին հետ գնացի նարա տունը։

Զէնկիններու մեծ-մեծ տուներ, պոյեալը [7]), նախշած պատերով ու առէքներով, պիւրիւնճիւքէ [8]) ու շօլքէ փէրտէներով [9]), թանկնոց մէպիլներով, օսկէճրած ճաղերով [10]) ու շանտաններով [11]) տուներ շատ տեսիլ էի. ամա՝ ասպէս քիվ [12]) ու սօսուն [13]) տուն, ինչպէս որ Վլատիմիռ Քառփիչինն էր նը՝ տահա [14]) հէչ տեսած չէի։ Ամեն տեղ թէմիզութիւն ու սքուս [15]), ամեն տեղ խոլոք տանտիկինի աչք ու էմէկ [16])—հէչ մէկ աւելի ու հէչ մէկ պակաս բան. ամեն բան իրեն տեղը. տունին մէջի ամեն մէկ բանէ սօսուն, կուտուց, շէնքով, խոլոք, կէնճ տանտիկինի հոտ կուգար։ Տահա աչքովս չի տեսած՝ միտքովս հասկրցայ, որ Վլատիմիռ Քառփիչին կնիկը անպատճառ թէջրվէ [17]) կնիմարդ պիտ լար։

---

1) Անհանգստութիւն. 2) պատճառ. 3) խնայել. 4) կարելի է. 5) թռչուն. 6) զանգակահարութիւն. 7) ներկած. 8) բեհեզ. 9) վարագոյր. 10) ջահ. 11) աշտանակ. 12) համեստ. 13) մաքուր. 14) դեռ ևս. 15) ճաշակ, вкусъ. 16) երախտիք. 17) պատուական.

Ասածս ասած էր։ Տահա նոր նես մտած էինք ու տեղերս նստած, մէմալ նայիս նես մտաւ մէքամ օրթախարէր [1]) պոյով [2]) կինիմարդ՝ շատ կէնճ, պէթէր կէնճ, անխատար ասիմ որ՝ թէ որ չիմանայի նարա սայեակլու, երկք զաւակի մար էղածը՝ անպատճառ 15—16 տարի աղջիկ կրկիտնայի։ Վառուշին էրեսին նախշը հասկրցնելու համար, կասիմ՝ նաղլու-տեսօք էր։ Ատ սոյ տեսքը մեր օրերը քանի կերթայ՝ կըքիչնայ։ Աղջիկայ նաղլու-տեսքը սալթը [3]) քիվ տուներու մէջ ու մամաներուն խանաթներուն տակը մէյտան կուգայ [4])։ Ես չօխտան [5]) տէյէմիշ արիլ իմ, որ տեսքը տեսք է. ամա որ վրան նամուս [6]) ու քիվուլթիւն [7]) աւելցնուս՝ տեսքը մէմը մէմալ կըլայ։ Խորդ է, սուտ է, կասին քի՝ թէ որ աղջիկայ վրայ շատ աչքեր նային՝ նարա տեսքը կրխանկրուի։ Վրայէն պէլլի [8]) էր, որ Վառուշը հայի էվէլքի քիվ մոր ծեռք մեծցած էր։

Զայի ատեն Վառուշը պահը-մէմը [9]) կրմտնէր-կէլլէր. պէս-պէլլի [10]) էր, որ պանուոր, կօռնիշնա չունէին, զէրէ չայ խորդողը ինքն էր. պէրոզն ալ աղլի [11]) խանութի խզմէթքեարը։

Խայմախը [12]) առնելու ատեն, «աս ի՞նչ տեսօք խայմախ է, որիմէ՞ն կառնուք», ասի։

— Մինք կով ունինք, ես ինքս կրտնիմ, ասաց Վառուշը։

— Ի՜, ասի, հէչ ատպէս բան կը լայ. հէմ տուն-տեղ կառավարել, հէմ մանտր տղաք մեծցնել, հէմ ալ կով նայել....

— Մէքամ կովին համար 5—6 մանէթ չիտայի, ածրումաօք խաղաս պանուոր նես չի մոյնէի պարէմ, ասայ խնամնատալէն Վառուշը. իրիկուն-սապահսան ես ինքս

---

1) Մէջէն չափով. 2) հասակ. 3) միայն. 4) կյառաջանայ. 5) փոքուց. 6) ամօթ. 7) համեստութիւն. 8) յայտնի. 9) անդադար. 10) ակներև. 11) մեզ արդէն յայտնի. 12) կաթնափրփուր.

կրկրթիմ, ասաց ու կարմրեցաւ, սանքի [1]) կամընչնար իրեն աշխատանքէն. անիսէ՝ [2]) վրան նայելով՝ սիրախս ուրախութենէն չիտէի ի՛նչ անիմ....

— Ատ ամենը շատ աղէկ ամա, ասի, աչքերս տառցնելով ոգեալին վրան, կով կրթել ու ոգեալ չալել՝ [3]) մէկ մէկու անմանակ բաներ են, կիտես քի մեր ժամանակուայ կինիմարդոց հարձ բան չէ....

— Չէ՛ տա ինչ, ասաց Վառուշը ամընչնալէն ու նախշուն աչքերը վար անելէն, անալ ի՞նչ է որ. մէկ պայի կերթամ կրկրթիմ, կը խալսիմ խասէվէթէս [4])....

— Կովը կով է, ասի, հապա կերակուր էփո՞ւը, այեախչանախը՞ [5])....

— Անալ շատ տիժար բա՞ն է ինչ....

— Հապա տղաք նայելը՞....

— Թէք [6]) Ասված մարդուս առողջութիւն տայ, չէնէ ատ ամենը շատ թեթեւ բաներ են։

Օսկի կինիմարդ իս, ասի միտքիս մէջէն. Ասված տայ որ մինչի վերջը էրիկդ քու խաթրըդ [7]) ճանչնայ։

— Հաքա Վառուշ, ասաց Վլասիմիս Քառիչը, զահմէթ ալ լանը՝ չալիս նը աղլի համան որ Մոսկովէն նոր պերին նը.....

Առանց նաղեր ծախելու, Վառուշը էլլաւ տեղէն, պայից ոգեալը, նստաւ առջևը ու պաշլայից [8]) Մէնտէլսօնի քարոնիչեն..... Խորդ է, չալածը Ռուպինշթէյնին չէր լմանէր և ոչ Քօնթաքէյին, ամա մեր քաղաքի համար ու մեր հայ կինիմարդուն համար, որ հէմ պանուոր չունի, հէմ իրեք տղայ կնայէ, հէմ կով կ՝կթէ՝ հրաշքէն աւելի էր, զէրէ մեր տեղի սորվեցնող մատամներէն շատ վեր էր — հէպէթ [9]), ատոր ալ հասկընալը պէտք է։

---

[1]) Իբր թէ. [2]) ըսայ եթէ ճշմարիտը կուզէք իմանալ. [3]) նուագել, ածել. [4]) հոգս. [5]) ամանները լուանալը. [6]) միայն թէ. [7]) դէն, արժէք. [8]) սկսեց. [9]) ի հարկէ.

Վառուշին վրան նայելով՝ միտքէս իսա բանը անցաւ. «մեր աղէկ կինիմարդուն հէչ մէկ աղգի կինիմարդ չի հասնիլ. հայ կինիմարդը ուրիշ ամէն կինիմարդներէն վեր է. ամա զարթօ գէշն ալ՝ Աստուած հեռի անէ՞...

Գրշերվայ ուշ ատեն մէկ ֆունթ չայը խօլթուխիս [1]) տակը դրած՝ տուն տառցայ մխիթարուած։ Իսա տարիքս էկած դահա ատպէս պախդաւոր օղլուշախ տեսած չէի։

Անալ ասինք՝ ինչո՞ւ պախդաւոր պիտի չիլային որ դաքա. Ասվածդ կսիրիս՝ էրիկը կէնճ ու աշխատաւոր. կնիկը հէմ կէնճ, հէմ ճանտան [2]), հէմ խօլօք, հէմ տեսօք....

Էրկու խօսք ասիմ մեր հայ կինիմարդուն տեսքին վրայ։ Աշխարքիս էրեսը ես էրկու չէշիտ [3]) կնկայ տեսք կրճանչնամ. մէկը ան է, որ իրեն էրկանը պախդաւոր կանէ, մէկալն ալ ան է, որ աշխարքին կզարմացնէ։ Ա՛ս էրկուսում տեսքին վրայ ես բան չիմ ասիլ, մէմը որ՝ տեղս ու ժամանակս մէտօմը [4]) եօրինսըզ [5]) է, մէմալ որ, փա՞ռք Աստու, հայ կինիմարդը շատ խրթ ատ սոյ տեսքը կունենայ. ատենով-ժամանակով, պատմութիւնը կասէ, մեր Փառանձեմ թագուհին ատ սոյ տեսք ունեցիլ է, որն, էրկու էրկայ կօլօխ ուտելէն ետքը, իրեն կօլօխն ալ կերիլ է. ուրեմն մէկդի թողունք ատ։ Առջի տեսքը, որ ասի էրիկ պախդաւորցնող՝ ասպէս կըլայ։ Էնկսիֆթէ [6]) կինիմարդը եա աղջիկը պիտ լայ առողջ, սաղլամ [7]). թուշերը ճակատէն թեկարան [8]) վար, մինչի կզակը՝ ալ վարդի պէս. էրեսին կունը պէթէր ճերմակէն թէկարան թուխ, եա՝ պէթէր էսմէրէն [9]) թէկարան ճերմակ. աչքերը յոլուն ու նաշխուն, ամա տէնքսըզ-տէնքսըզ [90]) նայող

---

1) Անուշ. 2) առոյգ. 3) տեսակ. 4) մի փոքր. 5) անյարմար. 6) ամենից առաջ. 7) ողջանդամ. 8) մի փոքր. 9) թխադոյն брюнет. 10) լերբ, լկոտ.

պիտի չի լայ. էրեսին տիպարքին վրայ տրտմութիւն պէտք չէ. ամա՛ խէնդ-խէնդ խուռնտումն ալ հօրինսըղ բան է. պոյը սըռբնի [1]) պէս պացըռը չի վայլել, չեսիրած բանըս է, պոյին օրթախարէրը [2]) էնկ գովածն է. կինիմարդը էրկան ու պարակ վիզ ունեցաւ՝ թուռնայի [3]) կլմանի. պէթէր կարճ վիզը, փորը մտածի պէս՝ անալ հօրինսըղ է, ասիլ է՝ վիզն ալ օրթախարէր պիտ լայ։ Խօսքըս ի՞նչ էրկընցնում—ամեն բանի մէջ օրթախարէրը էնկ աղէկն ու գովականն է. ատպէս ին-շոռ [4]) հաշուէ մեր ամեն հայ կինիմարդիկը, ատպէս ալ էր մեր չի կրանուած, անթիքա Վ.առուշը։

Մէկ օր մէքամ կէնճ տղայ, ցուցնելով ժողոտանքի մէջ աղջիկներուն, կըհարցունէ մէկ ծերի՝ «ո՞րն է տացամէն տեսօքը»։ Ծերն ալ կըտաւնայ ու կասէ՝ «որին սիրտդ սիրիլ՝ նա է տեսօքը»։ Ես ալ իմ սէմթէս [5]) կաւելցունում՝ «մէմը նայէ չըրս քովըդ, չի սիրելու ինաանեի՞ր [6]) ին հայ աղջիկները, ամենը իրեն համար մէկ չէշիտ անթիքա չիչակ է—ո՞րը ալ վարդ, որը ճերմակ զամպակ [7]), որն ալ հոտը աշխարք վըռող մէնէմշէ» [8])։ Ասվածն վըկայ՝ խե՜ է հայ տղան, որ իրեն ուրախութիւնը ու բաղդը կը փնտռէ մեր քաղաքէն դուս տեղերը։

Խօլօք հայ տղին ծեռքը ամեն մէկ հայ աղջիկ մէմէկ Վ.առուշ կըլար։

Արալըխը իրէք տարի անցաւ. ատ իրէք տարին ալ վրայ-վրայ առուտուրական մարդիկ քռիզիս կասին, քռիզիս կըլսին. պէտք էղած ատենը թաթաւ [9]) չի դալ, չէլը արօտ չի կայ, ծովէն ծուկ չի պռնուիլ, առուտուր չի կայ. թօփ-թօփ [10]) պարին, ամպարները իլինք ցորենը

---

1) Ձող. 2) չափաւոր. 3) կռունկ. 4) ահա. 5) կողմ. 6) արարած. 7) շուշան. 8) մանիշակ. 9) անձրև. 10) պրակ.

ու հունտը, քէսէք-քէսէք [1]) օչխարներդը կընող չի կայ. առուտուրը դադրիլ է. ամենուն էրեսը տրտմութիւն ու տխրութիւն է: Քաղաքիս ռընչպէրը [2]) գործ չունի, նարա օղլուշախը աղքատութեան մէջ կըմաշվի. քռէտիթ չի կայ. պարտք ունեցողը չի կրնալ տալու. պանքերը իրենց ուչօթը թանկրցուցիլ ին, մարդու կաշին միսով կըհանին—փռօստը չիտիս ի՞նչ անիս:

Ասպէս օրերուն մէկ օրը, կիւղին [3]) մէջ, մէկ թիթիզ [4]) հավայի, իրիկվայ սէմթ Վլատիմիր Քառփիչը կայնած էր խանութի տուռին քովը ու սիտին նեղութենէն ձմերուկի կուտ կուտէր (նա թիթինի ալըշվիշ [5]) էղած չէր՝ աւելորդ խարճ կանիմ-տէյին [6])... Անօր սաղ օրը ճէմը [7]) 75 քապիկի պարի ծախիլ էր, անալ՝ վէրէսիա [8]), ու միտք կանէր. «Իսա ի՞նչ է իսա մեր հալը, կասէր ինքը իրեն. մէկ տարի տահա ասպէս էրթանը՝ փռօսթը խանութներդս պիտի փակինք, ուրիշ սրբա չի կայ. սէրմիաներս [9]) հայ-հայ կէսմակէս էղաւ, տահա իտա քռիզիս է, ինչ-հօրս ցաւն է՝ մեր եախայէն վազ չի գալ: Օղլուշախիս էրեսը նայելու կամընչնամ,—հազիրէն ուտելը մեզի պէս մանտռ քափիթալով մարդուն ծեռք կուտա՞ի.....

Ասպէս միտքի պաթած էր մեր Վլատիմիր Քառփիչը, երբոր նարան մօտկրցաւ նարա պոյտաշ [10]) բարեկամներէն մէկը՝ Խաչուկ Պէնկլիօվը ու ասաց՝ «Հա՛ծէ՝ ի՞նչ քիթդ կախած կեցիլ իս. ես քեզի ասած չի՞մ—կուզես կօլօխդ պատին զա՛րկ ու պատռէ՛, աշխարքիս ստեղծածէն վէրի կէնէ մէկ, վրան տահա մէկ՝ էրկու կանէ. ասպէս էղիլ է, ասպէս ալ պիտ լայ. մեր միտք անելէն ու մաշվելէն բան չի գոյանալ.....

— Ա՛խպար՝ ի՞նչպէս միտք չանիս. ծախսը ալայ-մա-

---

1) Հօտ. 2) չքաւոր. 3) աշուն. 4) պղտոր. 5) ընտելացած. 6) ասելով. 7) ընդ ամենը. 8) ез доллъ. 9) մայր-դուստր. 10) հասակակից.

լայ [1]) դադռիլ է. կըհաւատաս՝ ասօր փիթուն [2]) օրը (խնտալու բան է) ճէմը 75 քապիկի պան ծախիլ ինք, անալ՝ վերէսխա, մէքամ փէռատ միշտէրիի.....

— Իմ ասածս ալ ի՞նչ է որ, ես ալ-շտէ ատ կասիմ-տա, միտք անելէն պան կրգոյանա՞ց-հէչ. քաղաքիս մէջը մենակ տուն չկա-խօմ, ալայրս ալ ատոր կանկատողն ինք. ասպէս փէռատ տարիները ատէթը [3]) համբերութիւն պիտ ու-նենաս, էրիմարդ պիտ լաս, սիրտդ ամուր պիտի պայիս, մաշվելու չես....

— Փամե՞լրս՝ ի՞նչպէս չի մաշվիս, երբոր առանց անոր ալ պզտիկ սէրմիաները հայ-հայ կէսը դադռինը....

— Պօշ պաներ է ասածդդ, խև մի՛ լալ... հա՛յտէ արի տանիմ քեզի քլուպ՝ քիչ մը էկլէմիշ [4]) կրլաս....

— Քլո՞ւպ. իտա ի՞նչ է ասածդ. մեզի պէս ծուլթոտ, խաթռանոտ [5]) տռակիլին [6]) քլուպ էրթալը կը վայլի՞. տիրացիններրս իմանան նը՝ վրաս կը խնտան. չէ՛, Խաչուկ, ան մեր հարճ [7]) պարի չէ։

— Что пустое толкуешь! իտա ալա՞ց քլուպ մտնողէլոդները քեզիմէն վեր մարդիկ ին-ինչ. сдѣлай одолженье! մէջերը ամպէս փէռատները կան, որ мое почтенье! թէք վրայիդ հագածը թախրմ [8]) ըլայ։

— Ատպէս կասիս ամա (վրան կօլօխը կընայէ) աս հալաք ի՞նչպէս էրթամ, ալայ-մալայ ճամալ [9]) իմ-ու....

— Пустяки! մէկ պայի [10]) տուն մտի՛ր, շուտ մը-թէզ հագվէ՛ արի՛. ես քեզի հոս պէքլէմիշ [11]) կանիմ։

— Քլուպ էրթանք ամա, ասայ Վլատիմիռ Քառփիչը, արդէն խօսքի պառկած, ես հոն ի՞նչ պիտի անիմ. հոնի մարդոց հետ աշնաութիւն [12]) չունիմ. թուղթ խաղալ

---

1) Բոլորովին. 2) բոլոր, ամբողջ. 3) սովորաբար. 4) զբօսնել. 5) կպրոտ. 6) մշակ, բեռնակիր. 7) վայելուչ. 8) կազմ, սիրուն. 9) դեմակաւոր,ղէյնօ. 10) մի վայրկեան. 11) սպասել. 12) ծանօթութիւն.

փաչթի չիտիմ... հածէ՝ էրթալըս մէկէնիմէկ պէշ [1]) չի՞ անիլ. սա մէկ.... Եաքէն՝ տարվիմ նը՞.....

— *Пусть!* չարէքէն խաղա՛-տա, քեղի վո՞վ զօր պիտի անէ թանկնոցը խաղալու։ Ան ալ ասինք՝ հէչ ալ թուղթը թօ չի զուրուցէ, ի՞նչ վախ ունիս. փամի՞լըյ, աշխատաւոր մարդուն համար 2—3 քապիկը ի՞նչ հօրս-ցաւն է, որ նա չիկրնայ իրեն քէֆին համար թապլելու... ասօր աշխատէ՝ չափալ-չափալ [2]) արի՛, վաղը տանջըվէ՛, մէկալում օրը քուլլեսի տիմացկը, փամի՛լըյ, ատ կեանք չէ՛, կատարեալ զրժոխք է-ու.... Տէ՞ թէզ [3]) կընա՝ հադվէ՛ արի՛.... Հէյ-հէյ մասա [4]) մէտօմը սիրտդ կրպացվէ, խասէվէթը կօլօխէա տադրըմիշ [5]) կրլայ, *пежду прочим*, խտա առուտուրն ալ սըրայի կիյնի։

Ա՛ս խօլօք, օրինաւոր խօսքերուն դէմ Վլատիմիր Քառփիչը խօսք չի կրտաւ, անկածը կախից։

— Էյ ատպէս է նը՝ էրթամ հադվիմ ու շինտը [6]) կը տառնամ. տուն փաքուտը հոս կեցի՛ր։

Ասաց ու դնաց դէպի տուն։ Եբոր նես մնաւ նը՝ «Հապա Վառուշ, ասաց, կիտի՞ս ինչ, աս իրիկուն միտք ունիմ քլուպ էրթալու, ի՞նչ կասիս. մեր Խաչուկը զօր կանէ, էրթա՛նք, կասէ, սիրտդ կպացվի, կասէ։

— Հապա-ինչ, խիստ աղէկ կանիս, ասաց Վառուշը, հալիսը կէրթա ու՝ տո՞ւն ինչու էրթալու չիս-որ, որիմէ՞ն պակաս իս, հէպէթ կընա՛։ Անխատար որ՝ թուղթի նստիս նը՝ իսա խրատըս միտքդ պայէ—եա՛ շատ մի՛ տարվիլ, եա՛ հէչ մի՛ տարիլ, չուզիմ. կիտիս քի թուղթէն առած ստակը հարամ վաստրկածի պէս բան է.....

— Հա՛ հա՛ հա՛ հա՛, խնդաց Վլատիմիր Քառփիչը, մինք տարելէն վաղ էկանք [7]), թէք մեղի չի թռթկէին [8])։

---

1) Անպարմար թուել. 2) ճգնել. 3) շուտ. 4) գոնէ. 5) ցրուել. 6) այժմ. 7) դադարել, ձեռ. վեր առնել. 8) տարել, բմբլել

Հագվեցաւ ու կնաց խանութ. խանութէն ալ Խաչուկին հետ մէկտեղ դէպի քլուպ կնաց։

Նէս որ մնաւ՝ շատ ճանչէոր մարդիկ տիմացը էլլան, «Օ՜, բարև էկար, Վլատիմիր Քառփիչ, ասին, աս ո՞ր քամին փչեց քեզի մեր սէմթերը. սաղ քաղաքիս մէջ մենակ տուն մնացիլ էիր օրինաւոր հին-հաւատի հայ. տուն ալ որ մեր մէջը խառնըվեցար՝ արդըն կորաւ մեր քաղաքին բարի նամը», ասին խնտալէն. հէպէթ ասածներուն թէռսը [1]) պիտի հասկընային։

— Զէ՛, շախան [2]) անդին, ասաց մեր քլուպիսթներէն մէկը, իտա թուղթ խաղալ կասին նը՝ շա՞տ պէթէր դէշ պան կիտիք.... Շնտիվայ ատենս ուտե՞ս, որի՞ն տունը, ո՞ր մենիսթրը, ո՞ր սէնաթրոր թուղթ չի խաղալ-որ.... Պո՞շ բաներ է... Պերանները-թուքածներս մէկքանի սուտ խոլոքներ, սուտ-քարոզիչներ մէյտան էլլել ին՝ իմիշ [3]) թուղթ խաղալը անշահ բան է, իմիշ ճէպի զարար է.... Վո՞վ տացա մեր կուլխուն նաչայնիք տըրիլ է.... ստակըս իմը չէ՞, ժամանակս իմը չէ՞, հրամանըս իմը չէ՞. կուզիմ-շտէ խաղալու, նայիմ անելիքդ ինչ է.... Պո՞շ պան է, պո՞շ պան է, Վլատիմիր Քառփիչ. ամիսը 2—3 մանէթ հէչ հէսապ չէ շէնքով առուտուրական մարդուն համար։ Հէչ օլմասա, հոս նայէ, խոճատէնէկ [4]) քեզի համար շէնքով մարդոց հետ կընստիս թէմիզ սօսուն օտայի մէջ, 4—5 սահաթ քէֆով սէֆայով ժամանակ կանցնուս. մարդավարի լաքէյները տիմացդ խղմէթքեարութիւն կանին. подавай чай съ лимономъ! կասիս,—լիմոնով չայը թէմիզ, թախըմ կըպերէ տիմացդ կըտնէ.—зельцерской воды подай! կասիս,—անալ կպերէ. ուշկէկ ատեն, փորըտ քաղցրծցաւ իսէ՝ քառթը կառնուս, մատով կրցուցնուս. մէմալ նայիս պա՛լապան պէքշթէսը, պուվերը [5]) վրայէն

---

[1]) Հակառակ, ներհակ. [2]) կատակ. [3]) ասելով. [4]) աղավարի. [5]) գոլորշիք.

պիւրիւմ-պիւրիւմ էլելէն՝ կպերէ պղտիկ սթօլով քովդ կանէ,—մէկ ծեռքով թուղթ խաղա՛, մէկ ծեռքով ալ կէր. փամիլը՛, փամէշչէքի կեանք է որ կայ, и честно и благородно! Հաճէ, Վլատիմիր Քառփիչ, քեզի բան կասիմ՝ խօլոք էղէ՛ր, ժամանակիս փալեթիքը հասկրցի՛ր,—խանութի մէջ փակվելս, պօղոճ կտռէ՞լս որն է. ատպէս-ատպէսով փիթուն կեանքդ պաղարի փոռսուլս [1]) կռծոլոտ թառկօվեցը կմնաս: Մարդոց մէջ մտի՛ր, մարդ ճանչցի՛ր, հալխին հետ աշնաութին արա՛, ինքդ քեզի մարդոց ճանչրցո՛ւր, որ մէկ օր աղէկ պրուչրյ թաւը ձգիս [2])....

Երկուսում քլուպիսթն ալ, առջինին խօսքը կտռելէն, ասաց՝ «Հաճէ Վարդերես, քառթը որ կայ՝ սալթը [3]) էկլէնճէ [4]) չի կիտնաս, անոր մէջը շատ բան կրմեկի. քառթին սէպէպով [5]) աղէկ-աղէկ մարդոցը հետ կընտիսկէլիս, վրադ շէնք ու շնորք կուգայ, սրայի [6]) մարդ կըլաս, մէկ օր ալ տուռմայի կլանի, ուփռավայի չէն, պէքիմ պանքի տիռէքթօռ ալ կընտռվիս... Չէ՛, ճանրս, քառթ ասածդ անխարեր փռասթոյ պան չէ՛: Քանի քանին մեր շնախվայ աղաներէն կիտիմ, որ սալթը քառթին սէպէպով չէշիտ չէշիտ պատիւի ու շահերու արժանացիլ ին»:

Այս խօսքերը տահա՛ աւելի շաշրտմիշ [7]) արաւ մեր միամիտ Վլատիմիր Քառփիչին. ու նա աղէկ հասկրցաւ, որ մինչի ատ օրը իսկական կեանքը ու պահթը հասկրցած չէ՛ էղել է. երբոր մահկանացու մարդուս համար սա աշխարքիս մէջ քէֆ ու երջանկութիւն կայ՝ ատ քլուպին մէջը ու կանանչ սթօլին առջևն է էղել է....

Մէքիչմէն [8]) Վլատիմիր Քառփիչը, մեր բարեկամ Խաչուկը ու տահա էրկու հոգի մանտռ պաղերկեաններ նստան հեռուկէկ սթօլին առջևը ու պաշլայեցին կրուպ-ները,

---

1) Հաստափոր. 2) որպալ. 3) միայն. 4) զլօսանք. 5) պատճառ. 6) օրինաւոր. 7) շփոթեցուց. 8) մի փոքր ժամանակից յետոյ.

семь безъ козырей-ները, *приглашаю*-ները, *въ тёмную*-ները ևն, ևն, ևն, ինչպէս որ կիսիք-նը։

Թուղթի մէջ ես մէկ բան տէյէմիշ արիլ իմ. Թուղթ խաղալը ամէն մարդու խելքին բանը չէ. ամպէս մարդ կայ, որ 25—30 տարի հաշվէ ամէն օր կրնաղայ, տայմա կըտարվի ու հէչ խաղալուն եօրինը [1]) չի կուանուլ. ամպէս ալ մարդ կայ, որ խաղին սէքռէթը շատ շուտ կհասկընայ։ Կարճ՝ Թուղթ խաղալու համար ուրիշ թապկիյէթ [2]) ու խելք պէտք է։ Վլատիմիռ Քառիչը աս վերջի սոյէն էր, նա շուտ հասկրցաւ խաղին ֆէնտը [3]) ու մարիֆէթը։ Թուղթի նստած-չի նստած՝ էնկ սիֆթէ [4]) 7 *безъ двухъ* նստեցուց իրեն առխատաշին [5]) Խաչուկին. անկէ ետքը, ծեռքը իշքիլի [6]) Թուղթերով *безъ козырей* խաղաց. մէտօմ ալ անդին մէկ ուրիշին 8 *безъ одной* Թուղուց, ետքէն ինքը 8 *червей* խաղաց էփպէյի [7]) փէռատ Թուղթերով, ամպէս որ՝ երբոր Թուղթէն էլլան նը, թէպէպ չարէք կապիկէն խաղացիլ էին, կէնէ իրեք մանէթ տարից։ Սահաթին ալ արդրիս տասնըմէկներու կէրթար։ Կարգրվելէն վերի օր էղած չէր, որ աս խարէր ուշ տուն գար. տայմա 9 սահաթին տունը կըլար։ Սիրտը հուճուճ [8]) էր։ Վաղելէն տուն գնաց։ Վառուշը տուռին ծանը լըսից նը՝ ամպէս հրուրշման [9]) տիմաց վազից, սանքի [10]) Վլատիմիռ Քառիչը չօխտան չի տեսած հեռաւոր ճամբորդ էր. ամուր փաթթըվեցաւ վիզին, էփպէյի ատէն դիրկէն ապուլ [11]) չի տուից ու քանի մի արտրսունք ալ կաթեցուց նարա էրեսին վրայ։

— Հաքա Վառուշ, ասաց Վլատիմիռ Քառիչը, արմընալու բան չէ՞ իսա, փիթուն օրը շունի պէս տանձրված, թաթաւին տակը, քաղցած փորով, մըսած՝ անձախ

---

1) Ցարմարութիւն. 2) բնաւորութիւն. 3) արուեստ. 4) նախ և առաջ. 5) ընկեր. 6) կասկածելի. 7) բաւականին. 8) անհանգիստ. 9) յախուռն. 10) իբր թէ. 11) բաց թողնել.

75 քապիկի բան ծախեցի — մէջէն 20 քապիկ ֆայտա եա՛ ըլայ, եա՛ չէ, ամա տաք քլուպին մէջը ռահաթ նստած (արալըխտա [1]) երկու կաւաթ լեմոնով չայ ալ խմեցի) իրեք մանէթ վասարկեցայ, հա՛ հա՛ հա՛ հա՛:

— Տեղը կենայ իտա թուղթին հարամ ստակը, ասայ Վառուշը, վրան նայելիքս չի գալ. տարվելէդ անխատար չիմ վախնալ, ինչխատար որ տարելէդ. մա՜հ փաթթըվի վրան.... անալ չէ ասօր դէշ էրածներ տեսիլ էի....

Մէկալում օրը Վլատիմիր Քառփիչը, սապահթան կանօխ, խանութի տղին ծեռքով տուն խրկից մէքամ կէր կօռէլ [2]), իրեք ֆունթ ասէթռա, փուխի պէս կակող պաղարի հաց, տասը հատ փօռթիդալ [3]), մէկ օխտա խունծոր, էրկու ֆունթ աքուլայի պիրինձ, մէկ ֆունթ ալ թափ-թաղէ կարագ:

Խութսուղ [4]) մանտռ տղաքը պէթէր խունտում էղան, ղէրէ չօխտան նացա պերանը ատպէս աղիզ բաներ մոռած չէր. լսի՞լ իք, մէկ խօսք կայ քի՝ «Հային ստակը ակռային մնայածէն թօվ կըլայ». թառան, չափախ, ճիկար, աղած միս, խմոր—աս էլին նացա ամեն օրվայ զահիրան:

Այն օր նացա տրապէղին վրայ մէյտան էկան համով խաշած ասէթռա, կօռէլի ճուրին փիլաֆ, խաշած կօռել կառչիցով....

Այն օր ամենքը անուշ-անուշ կերան ամա՝ ան օրէն ալ Վառուշին էրեսէն խունտումը խայիպ [5]) էղաւ ու մեմալ ետ չէկաւ:

Հայ կինիմարդու քիպիրին [6]) հետը տուն շախա չանիս. դու մոռցի՞լ իս, որ մեր հայ կինիմարդը իրեն Աստու-

---

1) Այդ միջոցին. 2) հնդու հաւ. 3) նարինջ. 4) ողբալի. 5) անբարութացաւ. 6) ազնուութիւն.

ծուն ծեռքովը ստեղծածն է. տուն մոռցի՞լ իս, որ հայ կինիմարդը Աստու արարածներուն պսակն է....

Ան իրիկուն կէնէ էկաւ Խաչուկը Վլատիմիռ Քառփիչին էտեւէն ու քլուպ տարաւ: Սիմթէ Վլատիմիռ Քառփիչը մէկքանի ժամ չէ-մէ ասաց ամա՝ Խաչուկը թէզ խօսքը կտռից. «ամնթ չէ՞, ասաց, իրեք մանէթ տեսած չի՞ս ինչ. վա՛ղ արի, էրթանք. հալիսը թահմին կանէ քի՝ կոմ տարող պրզըխմի [1]) տղու պէտնակ՝ առխատաշներուս թռթիկլ իս, տի՞թ-պապամ փախիլ իս»:

Ասպէս խօսքերուն ի՞նչ պատասխան տար մեր Վլատիմիռ Քառփիչը. լայլամ [2]) հոգվեցաւ, գնաց հետը: Մէկալ սէմթէ եալ՝ տունը նստելէ պէթեր պէզվիշ էղել [3]) էր օղորմելին: Մեր քլուպին մեծ, լան, պացրա, թէմիզ օտաները, ѵдобный мебель-ները, չէշիտ-չէշիտ մարդիկ, չէշիտ-չէշիտ ու համով կերակուրներ. կուզիս՝ քալէ, վօլթա արա՛. կուզիս՝ նիստ, խաղա՛. կուզիս՝ կարդա՛—քեղի պան ասող չի կայ: Փամիլրյ, քսան հինկ քապիկով, ասկից ա-ժան տեղ կրկուտնո՞ւս-որ մարդավարի օր անցնելու:

Ան իրիկունն ալ Վլատիմիռ Քառփիչին թուղթի նստեցուցին. ան անգամին ալ նարա ճէպը մտաւ հալիսին ստակը, ամա էրեկվանէն շատ աւելի. զէրէ աս տապռա նա ռիսք արաւ կէս քապիկէն խաղալու ու տարից օխտը մանէթ ու կէս:

Մէկալում օրը նարա յորձուկու-հացը աւելի ազիզ ու համով էր. աս տապռայի կերակուրներն էին՝ հաւի ճուրին շէհրի ապուր, կովի լուզու անուշ ուռէլով [4]), պուտին, քանտիթրա. Անտռիշին փիռօժնիները, նարա պիռթային [5]) մաղազիէն հաւող, փօռթիզալ ու տանձ,

---

1) Վիճասէր. 2) կամայ ակամայ, ճարահատեալ. 3) ձանձրացել էր. 4) ոլոռ. 5) աներ.

Խաչուկ-ային խանութէն ալ չորցուցած հաւողն կինի։ Պաղարէն մնացած ստրկով տղոց համար կնվիրեան տեսաք պատիներ ու մէմէկ հալաւցու։

Կնկանը սիրտը չի ցաւցունելու համար Վլատիմիր Քառփիչը աս տապրա եալ չուզաց տարած ստակը իրեն քասսային մէջը դնելու, ու, ինչպէս տեսանք, Հայտա-Հուշտա[1] պաներ կընից, որ թուղթով տուն-տեղ պայող չերևայտէին։

Իրեքում օրը պախդը աւելի յաջողեցաւ մեր Վլատիմիր Քառփիչին. զերէ աս տապրա, առջիններուն պէս, սահաթը 11-ին տուն չի կնաց նա, հապա՝ շատ ուշ, պոչը կլօխէն անցուց, այսինքն՝ մէկալում օրը.... Աս տապրա նա տուն չի մտաւ, հապա՝ շիտակ խանութ կնաց։ Ան օրը նա փռաֆէռանսէն ջոկ աղլի խաղերն ալ խաղալու ռիսք արաւ։ Ռիսք արաւ ամա՝ զաթօ ռիսքն ալ բանի լմաննեցաւ. թամամ 800 մանէթ տարից։

Խանութ էկաւ նը՝ խճմտանքը պէթէր կըտանջէր նարան. «փիթուն գրշեր, միտք կանէր նա, Վառուշըս քուն էղած պիտ չելայ՝ թաց աչքերը տուռին տառցուցած»։

Ա՛տ ատպէս է ամա՝ 800 ալ նօմայ բան է մէքամ պզտի խանութի տէր կէնճ մարդու համար. ատ հաշվէ նարա մէկ տարվայ վաստակն է.... Երնարլիս ի՞նչ անէ ատ ստակը, սէրմիայէն հե՞տը խառնէ, չէ՞նէ.....

Շատ միտք արաւ, շատ միտք արաւ ու վերջը-վերջը տսպէս վճռէց, 600 ը տանէ Ռաստով պանք տնէ. 200 ին ալ Վառուշին համար մնանի, ապռճան, խաս մանթեռիէ փլանթիցու կնէ։ Ամպէս ալ արաւ։ Տուն էկաւ նը՝ պանքի պիլէթը Վառուշին առջև տրից, պաշխիշներն ալ շարից ռոյեալին վրան։

Վառուշին էրեսը լացի, արտասունքի նշան չի կար ու

---

[1]) Ային-ային.

բերանէն կանկատներ չէլլան ամա՝ նարա մեռելի կուն էրեսին վրան խունտու�մ ալ չերևցաւ։ Պէլլի էր որ նեսի-թեէն կրտանջվէր։

Այս բանը մեր բաղդաւոր Վլատիմիռ Քառփիչի ֆառ-ղին [1]) չի դնաց, ղէրէ նարա կոլօխը իլինք էր մենոնե-րով, ռաղաններով, չէրէն-չէրէն ասսիկնացիաներով, որն խաղի սթօլին վրայ ասքովէն անքով կը քաշին։

Ան օր նա մէմալ խանուռթ չի կնաց. խըզմէթքեարը որ իրիկվան ատեն պալէքները բերից նը՝ «ասօր, ասաց, ծախ-սերս աղէկ էր, դէշ չէր, քառսուն մանէթի պարի ծախվե-ցաւ», ու ստակը տրից Վլատիմիռ Քառփիչին տիմացը։ Վլատիմիռ Քառփիչը քիթին տակէն խնտաց պարիին տուած քեարին վրան։ «Զօռխախին քովը կեցողին թաթաւին ջուրը մեծ եարտըմ չէ՛»։

Ասպէս սըտուղի [2]) ամիս ու կէս անցաւ։ Ատ արալըխը Վլատիմիռ Քառփիչը, խորդ է, խոշոր դաւեր չի ձդից, ամա պազարին ու բախալ խանուռթին խարճը պօլ-պօլ կըհա-նէր։ Ատկէ ճոկ՝ մէքամ շէնքով խաղալս [3]) պանուոր պռնից, որ նարա կերակուրը կանէր, կովը կըկթէր ու տուները կալէր. էրկու շաբաթը մէմը փռաչքա կուդար, լուացք ու իւթիւ կանէր [4])։ Արդըկս նա սէռթուքին տակէն հայի կապա չէր հաղնիլ, հա՛պա՝ ժէլէթ, անոր տակէն ալ՝ փուքի [5]) պէս ճերմակ ու տիղ իւթիւ արած բարակ քթանէ շապիկ։ Փիճաք, ժէլէթ, պրիւք՝ ալայը թախտըմ էր, Ռասսօվ կարած։ Օսկի սահաթը ժէլէթին ճէպը, վրան ալ новомодный ցէփօչքա որ էրկու ճէպը կըլանը. անոր վրան ալ՝ փէչաթ, մեսալիօն, ցիկառ կառելու մաշինքա, աշխարքիս սէմթերը ցուցնող

---

[1]) Նկատել. [2]) շարունակ. [3]) ռուս. [4]) յղկել. [5]) ձիւն.

քամիաս, մանտռ պաներ նայելու համար միքռասքօփ, ևն ևն ևն,—մէկ թօփ ճնկլթավուխներ։ Սաղ ծեռքին մատին վրայ մէքամ խաս [1]) փիրուղէ, քովը մանտռ էլմաններ շարած մատնի, որ թուղթ պաժնած ատեն պէթէր տեսք կուտայ մարդուս ու շատ ալ կրվայլի.....

Մէկ օր, Աստուծով, ծեռքս քեօղէմէնտէն [2]) ստակ էյնի նը՝ միւճէրէթ [3]) իտա պաներ պիտի կընիմ ու պիտի թախմիշ [4]) անիմ վրաս, ղէրէ՝ չի ճանչցողին հէմ աղա կերևամ, հէմ ալ ղէնկին. քլուպի լաքէյներն ալ վրաս պատիւով կընային։ Իտապէս իլվաններեր [5]) իմ պէթէր սիրած պանս է։

Մէկ օր, ցորեկվայ ատեն, Խաչուկը էկաւ, քովի տարաւ Վլատիմիռ Քառփիչին ու էփպէյի ատեն, էրեսը կարմրած, աչքերը ֆըռ-ֆըռ ցոլալէն մէկ բան կասէր։ Սիֆթէ կիտիս քի Վլատիմիռ Քառփիչը չուզենալէն կըլսէր նարան ու խօսքը տիժար կէլէր պերանէն, ամա ետքէն կակոդցաւ ու ասաց՝ «աղէկ, կէրթամ»։

— Ամպէս է-նը, ասաց Խաչուկը, տեղ չերթաս. սահաթը թամամ հինկին ինծի նայէ։

Ասաց ու, աշըխմիշ լալէն [6]) կնաց։

Ան օրը էրկուսում տապռան էղաւ, որ Վլատիմիռ Քառփիչը տունը չի պառկեցաւ, ու մէկալում օր, յորձուկու ատեններ Ռաստօվէն փառա լծած տռոշքայով ետ էկաւ։ Վրան-կլօխը թօզոտ էր, մաղերը պռճնկված [7]), շապիկը ճմռթկած [8]), կարմիր կինիի ու եղի լէքէներով աճրռած [9]), ինքն ալ էփպէյի քէնֆլի [10]) էր. բերանէն էլած կինիի ու ցիկառի թութու հոտովը մինուրթվայ

---

1) Ընտիր. 2) անակընկալ կերպով. 3) անպատճառ. 4) յարմարացնել, զարդարել. 5) պերճութիւն. 6) շտապով. 7) խճճուած. 8) ճխրտուած. 9) կեղտոտած, 10) գինովցած.

մէջ սաղ տունը իլինքցաւ. աչքերը արուն կոխած ու քնհատ, երեսը մեռելի կուն։

— Հաքա Վասուշ, ասաց ամուր ու խռղած ձանով, ումուռիդ թօ չի լայ [1]), առանց հացի չինք մնալ, մի՛ վախնալ, հալնէն վար չինք լալ. քեզի համար ամպէս մէքամ թանկնոց փլաթի կարել տամ, որ մեր քլուպ-պալը ատպէս անթիքա պան տեսած չի լայ... Հաքա Վասուշ՝ թո՛ւք ամենուն վրան, հէչ մի վախնալ, ես հոս իմ։ Ծոցէն հանից մէքամ հաստ փաչքա, «սա՛ իսա վեց հազարը», ասաց....

Պատասխան տալու տեղ օղորմելի կինիմարդը փլաթոքով երեսը փակից, գնաց մէկալ օտան, պերենքսիվալ ինկաւ պարձին վրան, օղիկ օղիկ լացից ու եաքէն պաշլայից պէթէր հաղալու. եբոր կլօխը պարձէն վերուց նը՝ ձերմակ բարձերեսին վրան արունի կաթիլքը սիւրմիշ [2]) եղել էր ու ալ նեկիլ էր քթանը։

«Վա՜յ մարիկ, մահըս մօտիկցիլ է», կանչեց ու սիրտը անցաւ ու ամպէս մնաց։

Ամ ալալըխը Վլատիմիռ Քառփիչը արդըլս խո՜ռռ խո՜ռռ քուն կըլալ։

Քանի մը օրէն խանութը 8000-ի ծախից, վրան ալ աղլի 6000-ը տըրից ու պաշլայից ռահաթ սոյէն ապրելու ու պահը-մէմը Ռաստով երթալու։ Ռաստովի ռուսերը, տուն վո՞վ իս հարցունէին նը՝ Нахичеванский купець իմ, կասէր. Նախջուանի հայերը հարցունէին նը՝ Ռաստով մաքլէռութիւն կանիմ, կասէր։ Մենակ ես միամիտ-միամիտ կըհաւատայի նարա ասածին. մէկալները խիստ տեղով կիտէին բանին էղէնը, ամա սուտ չիտիմ կըլային։

Սապահթանները, սահաթը 11 զարկած-չիզարկած,

---

[1]) Մի՛ վախիր մի՛ վհատիր. [2]) տարածուել էր.

զրկի [1]), լերդը պատռած Ռաստով կը վազէր։ «Ո՞ւտեմ ստուգէս ամէնէ կերթաս», կը հարցուներէին նը, «Ախպար, կասէր, մինք գործի տէր մարդիկ ինք. մեզի մինուէթ կորցնել կը լայ որ, մազերէս շատ գործեր ունինք. Հանա նայէ՛ էնկ սիֆիթէ պանք պիտ մուտնում, ետքը՝ Վալեանին քանթօռը, ետքը՝ Մավռօքօռտաթօին, անկէ ետքը՝ Աքառամանկային, էնկ վերջն ալ պիտի մուտնում «Ռֆինի» թռաքթիռը—ինչ-ասիս առուտուրական մարդոց հետ պիտի տեսնուիմ. մեզի առանց գործի քալել չի լալ, մեզի պէս մարդուն պոշ-պոշ քաշ-գալը, ային-օյին լաֆեր անելը ծեռք չի տալ»։

Ես միամիտ տեղովս էփպէյի ատէն հաւատացիլ էի, որ Վլատիմիռ Քառփիչը ու նարա պէս շատերը, որ ինա յորեկները, սահաթը ասպէս 10-ին 11-ին լերդերը պատռած Ռաստով կէրթան նը՝ մեծ մեծ գործեր կըտեսնուն. անիսկ ալայը սուտ է էղել է։

Մէկ օր, ես ինքս Ռաստով գործ ունենալով ու, խորդ ասեմ, 30—40 քապիկս այեամիշ անելով, խնդրեցի Վլատիմիռ Քառփիչին, որ Ռաստով էրթալու լանը՝ ինձի ալ հետը առնէ։ Մէկալում օրը, խորդ որ, թամամ սահաթը 10-ին էտուէս էկաւ նա, նստանք արապա, կնացինք։ Սատին հասանք նը՝ «ես աստեղ կինջնիմ» ասի, ինջայ արապայէն։

— Ես ալ, ասաց Վլատիմիռ Քառփիչը, գործերս լըմնցնում նը, սահաթ-սահաթ ու կէսէն «Ռֆինին» կէրթամ. տուն ալ հոն արի՛. կնստինք, Նախջուան կէրթանք։ Ամա նայէ՛, չի մոռնաս, սահաթ ու կէսէն առաջ ես «Ռֆինի» չիմ լալ, դէրէ էրկու իրեք պանքեր պիտի մուտնում, անկէ ետքը Վալեանին հետը պիտի տեսնուիմ, Աքառամանկային քանթօռն ալ պիտի հանդիպիմ՝ հար-

---

1) Սրընթաց.

կաւոր գործ կայ, Մավռոքօռատթոյին ալ Հառնօվքայի [1] ապռաղչէք պիտի ցուցնում, տահա մէկքանի տեղեր ալ պիտի մուտնում-էլլիմ, զէրէ մինք «գործի-տէր մարդ ինք, մեզի պօշ լաֆերով [2] նստել ճնալ չի լալ»։ Ես նարա ալայ ասածները հալած եղի տեղ ընդունեցի։

Զունքի ճէմը մէկհատիկ ածանկէկ կալուսթուք պիտի կընէի Եաքօվ Իվանիչէն, հմման մտայ նարա խանութը, առի աղլի կալուսթուքը, փաթթեցի, տրի ճէպս ու ինջայ Քայեալօվին տուէին տակին աշխարհահռչակ «Աֆինի» թռաքթիռը։ Ի՞նչ տեսնիմ. մեր պարոն Վլատիմիռ Քառփիչը արդրեն փռվել էր տիվանին վրան, սթօլին առջև, հետն ալ նօմայ [3] գործակատար, գործատէր, աշխատասէր, պօշ լաֆեր չի սիրող ուրիշ վլատիմիռ քառփիչներ. տիմայները չայ, ցյմախի [4] խատար շիշանեերով ռախի ու ռիւմքաներ. մէկ ուրիշ վլատիմիռ քառփիչ ալ Ֆռէնկփաթլիճան, թուռշի խրյեար ու խաշած քառթօֆիլ կը մանտռէր՝ աղգասիրական զաքուսքայի համար, որն քացյախի, կառչեցի, փռավանցքի եղի ու զէյթինի հետ խառնած, նացա ասածէն, էնկպաշ [5] խավալթին [6] է ռախին վրայէն։

Նացա կալաճին ան էր, ինչ որ մեր շնտխվայ չորս աղաներուս ազգային լաֆը, այսինքն՝ բամբասանք, չարախօսութիւն, տէրտէրի ու վարդապետի միս-կռծել, էշշիտ-էշշիտ ազգային ռէֆօռմներ՝ ճէպէն առանց մէկ քապիկ հանելու, մէկին տունը զըջել, մէկալին անունը սեւցնել, մէկին-մէկալին վրայ խարէ-խապէրներ փռել—էյ-շտէ, սիպէս ազգասիրական բաներ, չախ մինչի սահաթը էրկուսը։

Ապէս, ասվածային իր օրը կանցուներ Վլատիմիռ Քառփիչը։ Հացէն ետքը մէկ-էրկու սահաթ քուն կըլար.

---

[1] Арнаутка-ցորեն. [2] շատախօսութիւն. [3] շատ. [4] մատնոց. [5] ամենագլխաւոր. [6] նախաճաշ.

քունէն զարթած-չի զարթած՝ հրուշման տեղէն կէլլէր, էրեսը կրլուանար ու թամամ հինկին կուդար քլուպ ու մեզի կասէր՝ «Ախպար՝ փիթուն օրը գործի մէջ իս, կլօխդ փաթլամիշ [1]) կրլայ չէշիտ-չէշիտ խահրերէ ու տաղտաղաներէ [2]). Նեռուժ՞լի մարդս խատիր չէ [3]), ատխատար տանձանքէն եաքը, մէկ-էրկու սահաթ էկլէմիշ ըլալու»: Տունը Վառուշին կասէր՝ «փամի՛ըլայ, տուն կիտիս քի ես քլուպը պօշ ժամանա՞կ կանցնում. հապա ի՞: Ամենքս առուտուրական մարդիկ ինք, ռազնըյ կնելու-ծախելու բաներու վրայ կալաձի կանինք»: Ապէս կը մխիթարէր մեր Վլատիմիռ Քառփիչը իրեն ու իրեն տունի մարդոցը:

Նէս որ կը մտնէր՝ թիթիզ էրեսով աս քօշայէն ան քօշա [4]) կը քալէր. եա մէկ տեղ կը նստէր սուս-փուս, կօլօխը վար արած, աչքերը առանց մէկին տեսնելու մտն կրբերէր, մէկին հետ լաֆի չէր պռնրվիլ, շախա չէր անիլ. վրան նայողը թահմին կանէր քի՝ եա օրդին պէթէր հիւանդ է, եա ճէպէն հաղարներ վար ձգիլ է կորուցիլ է, եա մէկ տեղէ մէկ չար խապէր առիլ է: Ամա, եբոր քիչմը ատենէն լաքէյը կուդար ու կասէր իրեն աղլի пожалуйтесь: васъ ожидаютъ-ը, մեր Վլատիմիռ Քառփիչին քէֆին քէֆ չէր հասնիլ. մարդը ալայ-մալայ կրկերպանափոխվէր. ուտէ՞ս մնաց աղլի տրտմութիւնը, թուքու էրեսը, միտքի պաթածը—ալայը կը փարատուէր վրայէն, ու մեր Վլատիմիռ Քառփիչը խուշէն թեթև կրթռչէր քառթի-օտան ու կրբազմէր իրեն տեղը.... Ոչ մէկ սուլթան տահա անպէս քէֆով նստած չէ իրեն թախթին վրան, ինչպէս որ մեր Վլատիմիռ Քառփիչը քլուպի աթոռքին վրան, կանանչ սթոլին առջևը:

Խաղալու մէջ ես մէկ ուրիշ բան ալ տէյէմիշ արիլ իմ. թուղթ ասածդ մարդուս տայմա [5]) չի դալ, հապա՝ ա-

---

[1]) Կարաքի. [2]) վիշտ ու տառապանք. [3]) իրաւունք չունի, կարող չէ. [4]) խորշ. [5]) Հանապազ.

տեն տեն. մէմը պաշլայից դալու նը՝ սըրավարտի [1]) կուդայ. դաղդին ալ՝ էտև էտևէ ու էվպէյի տեն հէչ չի զուրուցիլ. աս ծմեռ տարոդը չի կիտնայ քի՝ էկած ծմեռ ալ պիտի տարէ, հէչ չէ: Քառթը ասպէս ատէթ ալ ունի. մէկ մանէթ կալերէ, էրկու մանէթ կտանէ. հարուր մանէթ տարել կուտայ, էրկու հարուր մանէթ տարվել կուտայ: Տահա ուրիշ բան ալ տէյէմիշ արիլ իմ. եբոր մեծ քուշ տարեցիր իսէ՝ համեն թուղթէ ալայ-մալայ վաղ պիտ գաս. մէմալ ծեռքդ թուղթ առնելու չիս. ատ պէս-պէլլի [2]) նշան է, որ քու կորուստդ թուղթէն պիտ լայ, ասել է՝ մուխայէթ պիտ լաս: Քառթի մէջ տարելը վայնային տարին արած քեարին կլմանի, որ շատ խըթ մարդուս ծեռքը կը մնայ:

Տահա մէկ ուրիշ բան տէյէմիշ արիլ իմ. թօ թուղթը պաշլայէ քեզի զուրցելու ու տուն ատ ատենը ստակը թօփ արա [3]). ատպէս արիր իսէ՝ փա՜թ-տէյին [4]) կը դադդի զուրցելու: Քառթը կըսիրէ, որ նարամէն առած ստակդ դուն տաս կինիի, քէֆի, փունճի, կերուխումի ու չէշիտ-չէշիտ անառակ բաներու: Մէկ խօսքով, քառթը քեզի կասէ՝ «ինծի խօսք տո՛ւր, որ ինքդ քեզի եօխ կանիս [5]) ան ատենը ես քեզի կը զուրուցիմ, չէնէ՝ ես քեզի խուռնտումի էրես չիմ ցուցնուլ»:

Աս բաները մեր աճէմի [6]) Վլատիմիռ Քառփիչը չիտէր, նա կիտէր քի պահը մէմը 800-ները ու 6000-ները պիտի թափին վրան. ամա մէկքանի ժամանակէն թուղթը պաշլայից նարան թէռս զուրցելու. չէքի ատ ութը հարուրը ու վեց հազարը կընացին ծեռքէն, հապա՝ հետերը տարին և ան 6000-ը, որ նա խանութը ծախիլ էր ու առիլ էր:

---

[1]) Կարգաւ. [2]) ակնյայտնի. [3]) ժողովել. [4]) յանկարծ. [5]) փճացնել, կորցնել. [6]) անփորձ.

Օղորմելի Վասուշը սա ալալբելիը քանի կելթար կը վատէր ու չրախի պէս կըհալէր. սուս-փուս, սիրտին ախերը ու աչքին արտրսունքները կուլ տալէն, որ չկայ թէ, զաւակները տեսնին ու սիրտերը կոտռվի ու ժամանակ առաջ անբաղդ ըլան: Երեսին կունը չօխտան կընացիլ էր, մատերը ատէթով պալմոմիկ [1]) խորդածի կըմանէին, չրախին տառցունէիր նը՝ մէկ կաթիլք արուն չէր էրևալ մէջը: Հալաւները վրան լան-լան կախված էին, պահը մէմ կընեղցունէր օղորմելին. մինութ-մինութ կը հաղար ու ամէն հաղածին արուն կրթուքնէր:

Ծրմեռ վայ ինա խրզղըն տօնշնորհաւորներէն մէկին (չիտիմ հրեշտակապետ էր, չիտիմ Օվանէս-Մկրտիչին, չիտիմ սուրբ-Սարգիսին, տեղով միտքս չէ), եբոր պարգևայի չանանները ամէն սօխանելուն [2]) մէջ, պահը մէմը ղը՞վվ կանէին, քովէդ մրթրիսի [3]) պէս կանցնէին մէջի շնորհաւորցնողներովը, մէկ տէրտէրով ու մէկ տիրացույով մէքամ մեռելսունտուկ [4]) կրտանէին. Վլատիմիր Քառփիչն ալ չոր աչքերով էտևէն կէրթար....

Սիրաս չի տիմացաւ. աչքս արտրսունքով իլինքցաւ: Երեսս տառցուցի ու շուտ շուտ կնացի Ճամբաս:

Աստուած հոգիդ լուսաւորէ սրբար հոգի, անմեղ հրեշտակ, քիպիրը հայ սայեակլու, թէմիզ սիրտ, բոլոր աղգիս պատիւ, կենդանի նահատակ քու սուրբ պարտքին:

Ամա ի՞նչ կասիմ. մեր աղգին մէջը պակաս ին-ինչ Վասուշները, թէք որ երիմարդիկը տեսնել ու դին դնել գիտնային:

Վլատիմիր Քառփիչը ничего себѣ, ողջ առողջ է: Իրեն ասմունքէն, ցորեկները տայմա Ռասասով կէրթայ առուտուրական գործեր լըմնցնելու, իրիկուններն ալ քլուպ

---

[1]) Մեղրամոմ. [2]) փողոց. [3]) գնդակ. [4]) դագաղ.

կուգայ էկլէմիշ ըլալու, սիրտը պանալու սապահթվան տանջանքներէն։

Ամա՝ շընորհս նարա թուղթի-առխատաշները թէվէ-քելի հեաը խաղի չեն նատիլ, սիֆթէ պիտի իմանան՝ ստակ ունի՞, չէնէ չէ։ Վլատիմիր Քառփիչն ալ չիմանաք քի իրեն պատիւը կրցածցունէ ու համան փոխթմենէն եա պումաժնիքը կըպանայ նացա աչքին. հէչ չէ։ Նա սուտ-մուտէն մէկ պէտքական թուղթ փնտռօղս կըլայ պումաժնիքին մէջը ու արալըիտայ եալ կանանչ, կապտուտ, կարմիր, մավի ու ծիրանի-կոտի քոէտիթքաներու փէշերը կրցուցնէ նացա։ Ինչ ալ լանը։ Ամա արմինալու բան. տայմա ստակ կայ քովը։ Ո՞ւտեխէն կառնէ—չիտիմ։

ՍԻԼԻԻԿ։

ՁԼՅՓՈՒՆՅՈՒ ԿԻՆՆ ԱՌ ՊԱՆԻՈՒԽՏ ԱՄՈՒՍԻՆՆ ԻՒՐ.

Ա՛յլիւ արիգոկ կըդուրմ դրլսէավիւր [1],
Զիւր ի՞նչ առընց քիզ մընոնք մինէավիւր,
Սատ՝, խատասէր [2], արցունքն էալ հէրիք,
Վէդինք ու դըրջինք լեռ, ձիւր, գրիստոնք։
Դուհոլը լալկոն՝ գիշերն անհանգիստ,
Տատա [3] ճրլվըլոն Դեժիսոն Մարգրբիտ,
Վարդոնը գիժնոկ տէօռ կոպ ըչգիտէ,
Վայ կարդոլ կ՚օտոյ գոռ ու դրացնոն։
Գարոնն անցկացով ձրմեռ է հումմոն,
Կէարիւէօտ զաւկընը հէյլին քու ճամբէտպ,
Կըտռըմ դրլսէավիւր մեր տոն շուք պարծոնք,
Առընց քիզ չուզինք արիւ լուսունկոյ։
Թ՚Աստոծ ըրկընոցն իջնոյ ու ի գոյ,
Անընմոն բարըք ընծոյ խրստանոյ,
Արքավուրթընն էա ուժարը միզ տոլ,
Էվէա չինք ուզի առնուլ ու իրթոլ։
Արկո՛ սիրակոն, իկո՛ գատ ձեր տուն,
Արիւ արիգոկ ձեթիկ գոն մեր տուն,
Ուր միաբերոն ուրհնինք միշտ զԱստոծ,
Գիւէօվք ու գուվասոնք տոնք սրտէ բղխոծ։

---

1) ամուսին. 2) խիստ սիրելի. 3) հայր, հայրիկ։

(Թարգմանութիւն).

Արև-արեգակ, կարիճ գլխաւոր,
Մինչ երբ առանց քեզ մնանք մենաւոր.
Աստ, խստասէր, արցունքն ալ հերիք,
Վախենք ու թրջենք լեռ, ձոր, դարաստանք:
Գոհարը լալկան գիշերն անհանգիստ,
Տատա ճրվքլան Դշխոյն Մարգարիտ,
Վարդանը դժնակ տոռ կապ չըգիտէ,
Վայ կարդալ կըտայ դուռ ու դրացեայ:
Գարունն անց կացաւ, ձրմեռ է հիմա,
Կարօտ զաւակներ նային քու ճամբադ,
Կարիճ գլխաւոր, մեր տան շուք-պարծանք,
Առանց քեզ չուզենք արև լուսնկայ:
Թ'Աստուած երկինքէն իջնայ ու ի դայ,
Անենման բարիք ընծայ խոստանայ,
Արքայութիւնն ալ յօժարի մեզ տալ,
Նորէն չենք ուզեր առնուլ ու երթալ:
Արի՛, սիրակա՛ն, եկուր դարձիր տուն,
Արև-արեգա՛կ ծագէ դու մեր տուն,
Ուր միաբերան օրհնենք միշտ զԱստուած,
Գովք ու գովասանք տանք սրտէ բղխած:

Յ. ՉԱՔԲԵԱՆ:

ԽՈՍՏՈՎԱՆՔ.

Ա՜խ, տէրպա, մէջէս օրէնք վարիլ իմ,
Կեանքիս մէջ խիստ շատ մեղքեր արիլ իմ.
Տուսէս որ նայիս՝ էփպէյի պան իմ,
Եէնքով մարդու եալ շատ կրլըմանիմ,
Ամմա մէկ տարի էղայ ափէքուն,
Շատ էքսիզնելու զըջեցի ես տուն։

Ա՜խ, տէրպա, մէջէս օրէնք վարիլ իմ,
Ատկից ալ պէթէր պաներ արիլ իմ.
Զէնկին ու ռնչպէր տավա ունէին,
Ինճիմէն պաշխա շահատ չունէին,
Զէնկինին անցայ, սուտ էրդում արի
Ու հազար մանէթ ես համին առի։

Ա՜խ, տէրպա, մէջէս օրէնք վարիլ իմ,
Ատկից ալ պէթէր պաներ արիլ իմ.
Պազարին-տեղը խանութ ունէի,
Հէլալ ու հարամ ես ծախս կանէի,
Կէս մատ պակաս էր էրկանքը կաղիս,
Պա՛լապան խուռշին ունէր թէրազիս։

Ա՜խ, տէրպա, մէջէս օրէնք վարիլ իմ,
Ատկից ալ պէթէր պաներ արիլ իմ.
Ամպար ունէի, կանէի սիփքա,
Մէկ օր անցած չէ, Ասվածըս վըկայ,
Որ խէնդ խախօլին ազգար մըտցնէի,
Լաց ու արցունքով ետ չի տառցնէի։

Ա՜խ, տէրպա, մէջէս օրէնք վարիլ իմ,
Ատկից ալ պէթէր պաներ արիլ իմ.
Խրզմէթքեար էի շօռպաճիի քով.
Ան տարին խուլթի կընացի Մոսկով.
Շօռպաճիս մեռաւ, ու ալայ պարին,
Մարդու պան չասած իմ տունրս տարին։

Ա՜խ, տէրպա, մէջէս օրէնք վարիլ իմ,
Ատկից ալ պէթէր պաներ արիլ իմ.
Տուսը ցուրտ ձրմեռ, բուք ու պօռան է.
Ինծի պէս մարդուն ատ խիստ պօշ պան է.
Տաք քլուպին մէջը կընստիմ քառթի,
Հարուրներ կուտամ, կրխաղամ փառթի։

Ատ ալայը հէչ։ Ամմա մէկ պաս օր
Պերանրս առի ճիփճայի օսկօռ.
Տէրպա՝ շինտը ես պէթէր կրվախնամ—
Ատ մեղքիս համար դուժոխք չի էրթամ։

ԿՈՒՊԼԷՈՆԱԹՕՌԻՆ ՀԱՅԸ:

«Ա՛ղա՝ մէկ քապիկ եւ մէկ կըռօշ տո՛ւր,
Տունիս մէջ չի կայ մէկ տիրէմ ալուր»,
Կասէր մուրացկան աղքատը լալէն:
— Ա՛խպար՝ Ծեռքերըս յոգնեցաւ տալէն,
Երինտը եալ քըսան մանէթ պիտի տամ,
Կուպէոնաթօռի Հային պիտ էրթամ:

«Ա՛ղա՝ աղքատաց մեր ընկերութեան
Տո՛ւր իրեք մանէթ ու կըրվէ՛ անդամ»,
Կասէր պատուաւոր մարդ, կօլօխ տալէն:
— Շատ տըւի, ասաց մեր աղան, լալէն,
Երինտը եալ քըսան մանէթ պիտի տամ,
Կուպէոնաթօռի Հային պիտ էրթամ:

«Ա՛ղա՝ ա՛ռ տոմնակ, տո՛ւր տասը մանէթ,
Թիֆլիզէն պէրել տո՛ւր Հայի կաղէթ»,
Ասպէս Սիւլիւկը կասէր խնդրելէն:
— Ա՛խպար՝ Ծեռքերըս յոգնեցաւ տալէն,
Երինտը եալ քըսան մանէթ պիտի տամ,
Կուպէոնաթօռի Հային պիտ էրթամ:

«Վէց մանէթ, ասին, տո՛ւր, մէկ պարոնին,
Ու կըրվէ անդամ մեր Հայ թատրոնին»:
Պարոնը ասաց Համարեա լալէն.
— Ա՛խպար՝ Ծեռքերըս յոգնեցաւ տալէն,
Երինտը եալ քըսան մանէթ պիտի տամ,
Կուպէոնաթօռի Հային պիտ էրթամ:

Օրդին կիրք չունի, չի սովրիլ համպար,
Տէնթէր ալ չունի կրրելու համար,
Պապային «մանէթ տուր», կասէ լալէն։
— Շաշլարն՝ ծեռքերրս յոդնեցաւ տալէն,
Շինտը եալ քրսան մանէթ պիտի տամ,
Կուպէռնատթօռի հացին պիտ էրթամ։

Էրուսաղէմէն էկաւ նրբիրակ
Ու կասէր՝ «Մարդայ հինկ մանէթ պիտ տաք,
Որ մեր սուրբ ժամը չի կորցնուինք լալէն»։
— Հայր սուրբ՝ ծեռքերրս յոդնեցաւ տալէն,
Շինտը եալ քրսան մանէթ պիտի տանք,
Կուպէռնատթօռի հացին պիտ էրթանք։

«Կիտի՞ք, աղաներ, ի՞նչ նոր խապէր կայ,—
Մինիսթռը, կասին, Նախջուան պիտ գայ,
Կրվախնամ՝ իտկից մէկ խաթէ չի լար»....
— Ա՜ի ի՞նչ հօրս ցաւն է մեզի համար,—
Ճէպէրէս մարդայ յիսուն կրհանինք,
Մինիսթռին հետն ալ աղէկ քէֆ կանինք»։

Ճէմ՞ըտ իմ, թէ աքուփ—մարդիկ չիմացան,
Ու թապիէթէս տայմա խաբվեցան.
Մարդու կռօշ չիմ տալ՝ տուն հազար կանչէ,
Ամա իմ քէֆիս՝ հազարն ալ պան չէ....

—

Սո՞ւտ էր ասածը մեր խեղճ Սիւլիւկին—
«Ճոկ պան է աղա, ճոկ պան է ղէնկին»։

ՆՈՐ ԱՂՕԹՔ.

Աստվա՜ծ բարեգութ, Տէր բարեխնամ,
Լսէ խնդրինքըս պարէմ մէկ անգամ.
Փախալեա և կամ մէլիչ առուտուր,
Պազերկեան խանութ՝ ուրիշներուն տուր.
Զուզիմ ես ամպար, ցորենի սիմքա,
Ուլաճ, հունտ, արփա, արիշ, հառնօվքա,
Զուզիմ ես մոյքա եալեին տեղը,
Զուզիմ ես շախթ, սալնիք, Զիպիրին եղը,
Զուզիմ ես թուլա, քիրէմիթ խորդել,
Քըսան հինկ օթառ սալկանին մորթել,
Զուզիմ տուն՝ թէփէն պանդրը ֆասօնով,
Խութուռ ալ չուզիմ թէմէնիքին քով,
Զուզիմ ես գիրքեր, ժուռնալ ու կազէթ,
Փէչ քօլօրիֆէռ ու վաթէռկլազէթ,—
Աս ամէն բանը տուն ուրիշին տուր,
Հետն ալ Ռաստօվի ծախս ու առուտուր:
Ա՛մմա խնդրինքըս թէ լըսել կուզես,
Իսա բաներէս ինծի չի զըկիս,
Սիֆտէ մատիս դիր փիրուզէ մատնի,
Սահաթիս ցէփն ալ թօ լայ նոր-մօտնի,
Նապիկըս պարակ քըթանէ կարած,
Ֆռանցուզ փռաչքայի տիզ իւթի արած,
Թանկնոց թռիքոյէ փիճաք, պուիւք, ժէլէթ,
Պումաժնիքիս մէջ հարուրնոց պէլէթ,
Ասպէս տուն ինծի թախըմ հագվեցո՛ւր,
Ճիւնապէթներու քովը նըստեցո՛ւր,

Սաղիս ու սոլիս, մէկն ալ իմ տիմաց
Իրեք հատ կօռէլ թօ ըլան նստած,
Եբոր փռէֆիէռանս նստինք խաղալու,
Պահիթը չի դադրի ինծի խընտալու,
Մօնօ ու ռաղա, տասնոց ու ութը,
Իննոց ու ութնոց՝ հետը պաճախլը,
Ան ալ մէկ սոյէն՝ օրի հա քուփա,
Փռէֆիէռանսի մէջ վէ՛րա ինծի գայ.
Ու եբոր կընիմ կեանէն թալօն—
Ըլան մաթէսի ռաղան ու մնոն։
Կէս գըշեր ատեն, որ խաղը փոխինք,
Ազատինի խաղեր խաղալ պաշլայինք,
Թռինքին ընկերս չորս ութը խաղայ,
Ունենամ ծեռքըս չորս հատիկ ռաղա։
Ասվա՜ծ իմ՝ տայմա որ ասպէս անիս,
Նայէ՛ իմ պերնէս կանկատ կըլըսիս,
Որ ես անպահիթ իմ, որ չունիմ ըստակ,
Հէմ շատ պարտք ունիմ, հէմ ալ շատ զաւակ.
Սաղ տարին կուտիմ չորցած թառան ծուկ,
Խօսքըս ալ հալխին մէջը չէ՛ անցուկ։

ՀԱՑԼԻ.

—

Այուն ու տէվէն, կատուն ու մուկը,
Կօռէլը, խաղը, տիզը, մամուկը
Ու շատ ատ սոյի չիրքին հայվաններ
Մեր կոլովային տրուին կանկատներ,
Քի՝ «Ասքան տարի տեսած չինք մինք հէչ
«Մէկ շէնքով սիւրէթ աս հայլին մէջ.....
«Մէմ ալ գէշ սիւրէթ տարա մէջ տեսնինք,
«Ասված հաւատա՝ կառնունք, կրկոտռինք»։
Պէրէքէթ վէրսին՝ քաղքիս կոլովան
Արդար դատմունքով մարդ էր աս տապրան,
Մէջերը արաւ ասդէս դատաստան,
«Պօշ նեղացիլ իք հայլին վրան.
«Ի՞նչ յանցանք ունի ատտեղ խեղճ հայլին,
«Որ ոտքէ կոլօխ տուք իք անճոռնին.
«Տիմացը ինչ կերպ կայնած որ կրլաք,
«Ան կերպ ալ նարա մէջը կրցողաք.
«Հայլին որ կոտռիք՝ ի՞նչ շահ կունենաք,
«Թահվին կանիք քի պիտի տեսօքնաք»....

—

Խէ՜ղճ Սիւլիւկ՝ տուն իս մեր հալիի հայլին,
Պօշ պօշ մեղրբանք վրրադ կրվայլի՞ն։
Հալիը կիտէ քի՝ նահատակները
Կային սա՛ղթը հին ժամանակները,
Անիսէ՝ անմեղ արունի հոտին
Մեր օրվայ մարդիկն ալ խիստ կարօտ ին։

ՍԻՒԼԻՒԿ։

ՎԱՆԵՑԻ ՊԱՌԱՒ ՍԱՌԱՑԻ ԽՐԱՏ ԱՌ ԿՈՒՏՐԱԹ ԽԱԹՈՒՆ.

Աղջիկ մամա պիկ [1]) իրեշկի,
Տե՛ ինչ կասիմ քե լա՛։

Էկէք նստէք իմ չորս պիւլոր շարան-շարան,
Կուտրաթ խաթուն՝ Նուպար տատան՝ աղջիկ Մարան,
Ո՞ւր է Մարխաս՝ կտրիճ Կարօն՝ եւ Ամիրխան,
Աղամիրին, Ալմաստին էլ ասէք շուտ գան։
Մէր խեղճ պառվի փափաքին պէս Կուտրաթ խաթուն
Ուզած մարդերն առեց իբե տայ [2]) ըշտապուն,
Զօքան իւր դէմ ինչպէս զբուցեց ըմէնքն ոկուն [3]),
Էսա ցաղրի [4]) խրատն իտու կէօ ստեփուն [5])։
Տաշ [6]) քե կասեմ Կլամջեանց Կուտրաթ խաթուն,
Որ մենք խտրաց [7]) ինք ճոճայեր [8]) մեր խէրանց տուն,
Կըտեսնես դու ինչպէս խաթմամէն կօլօտ [9]) Նազլուն,
Խանք չառնելով կըկրատէր չում իրիկուն։
Ասպած պսխի խօր-մօր խամար թէ էլ թոռ կայ,
Ինոնց պէտքի պոտկուց կրթել իշտայ մկայ,
Առատմանց ինոնց խան վեր ժամ տար խետ տայ,
Իրիկվներ ուններսէսի պառկել մի՛ տայ։
Ապսպրի ինոնց խսկի իշուանց չի տան,
Տո՛ւ վարժատուն թող մի՛ տայտուն ինոնք խոպան,
Վռազցո՛ւր որ եբ հաց ուտին ըշտապ երթան,
Թէ անգանցան ուսթախխուկ դառնան կուգան։
Լփռթվել [10]) դու տե՛ էն կեախ լիսլոզներաց [11]),
Թէ լըպ լըպ [12]) ինչպէս տան տիւրս ծամեր աղջկներաց,

1) Ինձ. 2) անդ. 3) այնպէս. 4) վարի. 5) յետոյ. 6) նախ. 7) է միասին. 8) մեծացեր. 9) կարճահասակ. 10) չարութիւն ընել. 11) աներես. անամօթ. 12) պուրակ-պուրակ.

Կարկմելով կուլան խեղճեր ձեռքեր կցած,
Որ մէր լսէ դայ տայ ինոնց շոտ փոխադարձ։
Վարամ թալած ասելով մէր փէտ կառնի ձեռ,
Անչանք տփի էն քարասիրան պլուզ լաճեր,
Որ ուրինց ուշկ կերթայ, կելնին տայ կիսամեռ,
Տե պնչեց ինչս կրվազլ արուն և բերնից վեռ [1]։
Քո խարանեբաց խրատի որ հա [2] սէր անին,
Զորս տէկէրկին ապստրի կուիս չանին,
Զավք զինաթի ջիպ ջիպ իսկի ականջ չանին,
Իրկներաց դառ վիճակի վէրէն մեղին [3]։
Թէ ինչս ինոնք կերթան Ստամպոլ շատ տարի տայ,
Իսոր ինոր խեղճ ու կրակ կելնեն ծառայ,
Խանի քնճներ [4] լու օջլի մէջ ծփան մկայ,
Կան հիւանդ ին՝ որ զատ կուզին բերող չկայ։
Իսոնք ըմէն իւ իսոնցպէս բաներ մեզի,
Քո խաբս, աղջիկ, դալվդ, թոռներ զմէն կրթի,
Ինչի՞ մոթար՝ [5], իմ ասած բան սիրտ կրնոցի՞,
Տէօրմ [6] կրմեռնեմ ըստէք կուտաս զիկ ողորմի։

---

1) Լորձունք. 2) միշտ. 3) մոռանել. 4) անկիւն. 5) տրտմել. 6) քիչ մ'ետք.

ԿՈՒՏՐԱԹ ԽԱԹՈՒՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ.

Դեռ չես գիտե, Սառա խաթուն,
Թէ շէնք-շնորք չկայ մեր տուն,
Ճող խալիորս [1]) չում իրիկուն
Տան-կատվու պէս կշնթռկի տուն:
Խեղճ խարսներուց կըճնկրի [2]),
Կրակ դրե մե կկրիցի,
Անդոթք անգոթք կրպրքվի [3]),
Թէ զրուցիմ զիկ կրտվի:
Էսասկնայ մարդուն Ասպած
Իրիշկի տայ շոտ դարձ կամ բարձ,
Գիշեր չում լոս վարամ թալած
Թօրվան վէրէն կայ լէնքվաց [4]):
Կուշտ դրիւրի գինու պողիկ
Մաթրաթէն [5]) ճող ինոր կուռիկ [6]),
Կլքի խմի, կէղնի լուլիկ [7]),
Զկշեր շաբաթ կրթմպրի դիւճիկ [8]):
Թամարդու [9]) պէս քաշի թիւթիւն,
Պալ պալ ծխով կիլինի տուն,
Օր կէս նուկի խորաճն ըսկուն,
Կը ֆնասի տայ խող դլխուն:
Խիեաղ [10]) Մկոն, ճողաց Պատուր,
Փոխսրար [11]) Աբթին և Կոտրաց կուս.,

---

1) Ծերունի. 2) չարչրել, նեղութիւն տալ. 3) ադահ-ադահ կ'ուտէ. 4) բազմաց. 5) ապուրի նման. 6) գինու մեծ գաւաթ հոլէ. 7) արբեալ. 8) փոքրիկ կարաս. 9) կարօտ, չտես. 10) կտաւագործ. 11) թեղ բամբակի հետ փոխող:

Քեանքեան [1]) Նայէն կակոսկանց ծուռ,
Իսոնք ինկեր դդերի իւր։
Թոռ. կօրօխկի իսոնց իավէն,
Կառնի բերի կնստի օտէն,
Կթալեն արաղ գինին վէրէն,
Կուտեն մեր լոշ ժաժիկ կայլէն [2])։
Ըստէփ կնստին չուտ ժամ զարկոց,
Սայի պայի [3]) կանեն զրոց,
Կոտրած կուի, ձէն զրլմոց [4]),
Չքաշվէ մէրիկ վայ տամ ինոնց։
Սատա խաթուն, ես քի մեռնիմ,
Իմ սև սուգի ձեռ. մրկեր իմ։
Տնավերի մարդ չի մեղե,
Դոր [5]) ին լաճեր ջիվի ջիվի [6]) մոտցե,
Իւր պէսն ըստայ [7]) իսոնց դտե,
Ճիժ պժիս հետ չարչրի մե։
Թէ որ ասեմ ծօ ամոթի,
Էդա սավտից արե ընծի,
Էն կեսխ կամ խօրս կօտ կրքաշի [8])
Կամ կօռով [9]) զեկ կուշտ կլեխի [10])։

Մ. Կ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ.

---

1) Զրոյ խոր փորող. 2) մով կերակուր. 3) խենդ, խելար. 4) ձայն. 5) ուր. 6) բոլորովին. 7) ասա. 8) յետոց տալ. 9) ձեռաց գաւազան կամ փայտ, որոյ գլուխն աղեղնաձև է. 10) Ջարդ ու բուրդ ընել։

ՕՁԻ ԽԱԾԱԾ.

Օձի խածած մարդը, կասին, չի մեռնի ալ նը՝ սաղ կեանքը մարդու սրայէն կելլէ։ Մէմը ոլ՝ էրեսին կունը կըփախչի, կըտեղնի, կըկանանչնայ. թուշերն ալ կըհալին, կըպաթին. քիթը կըչորնայ ու խոմախի պէս կըծռի, դէպի վար կինջնի. աչքերուն ցոլքը կէրթայ, թամամ խուռպաղայի աչքէրուն կըլմանի—ճուրոտ, ճուպուռոտ. անկէ ետքը պէրանին ակռաները կըտեղնին, կըսևնան ու վրան կանանչ լայ կըկապէ՝ թամամ տրորած լոպիա։ Օձի խածած մարդուն մէջքը կըծռի, կըշորնայ. օմուղները վեր կելլին՝ չիտիս չսխօթքա է, չիտիս սուխօթքա։

Օձի խածածի պակասութինը ատխատար լար նը՝ զարար չունէր. ամա արի՛ նայինք, որ ատկէ մատէ շատ ուրիշ պակասութիններ ալ կունենայ էղել է օձի խածածը։ Օձի խածնելէն ետքը մարդուս թապիեթը ալայ-մալայ կըփոխվի, ու Աստու սիւրէթով ստեղծած մարդը ոտքէն-կոլոխը սատանայ կըկտրի—փախիլկոտ, չարկամ, բամբասող, չար լուզու, տամահի, չարխնդաց, խալպ ու հալխին ոտքին տակը տայմա ծմերուկի կճեպ դնող։

Ա՛մմա՝ ի՛նչխատար ալ ասիմ՝ աս խօսքերէս դուք հէչ մէկ բան չէք հասկընալ. անոր աղէկը ան է, որ ես ձեզի մէջամ օրինաւոր էղած բան պատմիմ. ու դուք ինքերդ, առանց իմ մեկնելուն ալ կըտեսնուք օձի խածնելուն դէշութինը ադամօրդուս համար։

Ատենով ժամանակով... (ես հէքիաթի ֆասօնով կասիմ ամա՝ դուք չի զլտնուք քի պատմածս հէքիաթ է. մեղայ Աստու, մեղայ. իսա ինչոր լսեցիք ու ինչ ալ պիտի լսիք՝ ալայը խորդ է. անխատար որ՝ մարդու սիրտ չի ցաւցնելու համար անունները թէկարան փոխիլ իմ)։ Եսէ, ճանս, ատենով-ժամանակով մէջամ բարեկամ ունէի՝ անունը

Սեղբոս։ Ամ Սեղբոսը, ճանրս, պզտիկ ատենը տղայ էր տղու պէտնակ, ինչպէս որ ամենքս ալ էինք—կոճ խաղալու ատեն՝ պրդելոճի էր, վարպետ գնացած թքէնը՝ խամաղ էր. ժամին դանձանակը քալցնելու ատէն՝ տայմա կռոշնելը ու տէնիշկէներ կրդողնար իշէլքին մէջէն. տիրացիններուն հաւերուն ու փափիներուն տակէն ըսլուվէն հաւկիթ կրփախցնէր,—շատ սիպէս անմեղ չարութիններ կանէր տարին—տասվերկու ամիս, մինչև որ ատէնը էկաւ ու շատերուս պէտնակ պատան նարտ անկաճէն ալ բռնից ու խանութի դիմաց կայնեցուց։

Շատ մի մնայ խանութի առջև, քիչ մը մնաց—տեղովը չիտիմ, անխատաբ գիտիմ որ՝ երբոր նա մէկ չելլէի օր չօ պաճիին խանութէն երկու-իրեք մանէթ դողցաւ՝ համան մէկ-ալայմը զասօին տղոց կուլխուն թօփ-ատաւ, գնաց Ադամ-աղային պաշչան. հոն միս, հայ, դինի, մաղտանոս, պօխք—բան առին, արօտին վրան փուվեցան, քէպապ արին, կերան ու խմեցին։ Ինչ ասիս ափէկս-ցիկէս կալաճիներ անելէն հաքը (մեր հօվարտաս, զասօին տղոց կալաճին ալ ի՞նչ պիտ լայ) փորերը կուշտ, արօտին վրան եան էկան ու կամաց կամաց քունի գնացին։ Շատ մի մնացին ատպէս քունի պաթած, չէնէ քիչ՝ տեղով չիտիմ. մէնալ նայիս մեր Սեղբոսը ափալ-թափալ տեղէն էլլաւ ու «վայ վայ մամա» կանչելէն՝ պաշլայից, խելքը թուռուցածի պէս, կեցած տեղը ֆըռըլ ֆըռըլ ման գալու, կանչվռտելու ու թիսէքը շփելու։ Ամ արալըխը մէքամ սև օձ՝ փորին սէմթը տեղին, լուզուն տուս հանած՝ կամաց կամաց սողալէն, տուղոց առջևէն անցաւ ու գնաց, արօտներուն մէջը խայիպ էղաւ։ Պէս-պէլլի բան էր որ՝ ատ օձը խածած պիտ լար մեր Սեղբոսին։

Սեղբոսին արխատաշները փախչող փախչողի էղան, որը օձին վախէն, որն ալ խապահաթի մէջ չի պռնըվինքտէյին։ Ալէն լալէն, մեռ-մենակ մնացիլ էր Սեղբոսը պաշ-

չային մէջը ու չիտէր ի՞նչ անէր՝ տո՛ւն ու վաղէր, չէ՞նէ՝ հէքիմի էրթար, չէ՞նէ՝ ինքը առնէր չախուն ու աղուցեած տեղը համան իրեն ձեռքով կարէր թասլէր. զէրէ լսողայ էր, որ օձին խածած տեղը միւձէրէթ պիտի կտրվի։ Անձրկած մնացիլ էր։

Պէրէքէթ վէրսին, տէր Մկրտիչը (Ասված օղորմի հոդուն) առ արալքիսը պռիչքան նըստած ծովին եալիէն կանցնէր. մեր Սեղբոսը լալէն լալէն կըմօտկընայ, «տէպա՝ կուլխուս ասպէս ասպէս խաթէ էկաւ» կասէ ու կուլայ։ Տէր Մկրտիչը (Ասված հոդին լըսաւորէ) «թէզ արի, պալաս, կասէ, նիստ պռիչքաս, քեզի հէքիմին տանիմ», կասէ. ու քովը կընստեցունէ։

Եբոր եօխուշէն դէպի վեր կելլին, որ Նախջուան մըտնին, փախէ՛լ սատանայ, ճա՛ռթ կանէ, պռիչքային կէչէրը կրկոտռվի։ Ասալ քեզի նոր պէլա։ Մինչի պռիչքայէն վար կինջնին, մինչի կուլխուսներուն մարդ թօվ կանին, մինչի արապային տակը մէքամ տռուչօք կրկապին ու քաստրը-քաստրը քաշելէն՝ եօխուշէն վեր կըհանին արապան, էրկու-իրեք սահաթ կանցնի. աղլի օձին խածած տեղը կաս-կապուտ կըլայ ու կրակի պէս կէրի. ձեռքն ալ պալարքի խարէր կուռի, ամպէս որ՝ ձօրօվէն կապային թիւէն կըհանին, աղլի աղուն կէրթայ սիւրմիշ կըլայ մէջը ու բանը բանէն կանցնի։

Եբոր տուն կուգայ նը՝ ձօրօվ նէֆէս կառնէ։ Համան մախսումին եաթախ կըպառկեցնուն, հէքիմ, պէրպէր ծան կուտան, արուն կառնուն, սիւլիւկներ կըդնին, խըզղըն էրկաթով կէրին օձին խածած տեղը, ռուֆիա, փանղէհիր—պան՝ ալայը մէյտան կըհանին, ամա ճարը չին կուտնուլ։ Տղան քանի կէրթայ՝ կըվատի, կըթոռվի, կրկանկըսի ու եարան թարախլամիշ կըլայ, ու տղին վրայէն ամպէս սատանական ֆոտ կուգայ որ՝ թամամ չիլլէի ատէն հինկ օրուայ չի թաղած մեռել, ատէթով լէշ, իրեք խուրաճ

հեռու կեցողին սէրսէմիշ կանէ. քովը մօտկրնալու բան չէ. խունկ, քացախ, ամպռէ—մէկ բան խայիր չի անիլ։ Արդիւնք բանը ան տէրէձէն կուգայ որ՝ տղուն հարը-մարը տիրացու ու ֆալճի ծան կուտան, մէկը օրերով Նարեկ ու աւետարան կրկարդայ, մէկալն ալ վերա իրեն պակլանեբուն զօր կանէ։ Ամա՝ ատալ խայիր չի անիլ. վրայ ալ տարի-տարի ու կէս կանցնի։ Ատ արալբնը մախսու�մը ոտքի կէլէ ամա՝ ի՞նչ ֆայտա. աղլի լէշին ֆոտը վրան կրմնայ ու քանի կէրթայ՝ կրպէթէրնայ. ուժէ բանը ան տեղը կը հասնի որ՝ նարա կեցած տունին մէջը կենալ չելալ. պանուոր, քուչուռ, խզմէթքեար՝ ալայը էտև էտևէ կրձգին, կէլլեն, «չելայ որ, կասին, մինք ալ մէկ ցաւի հանդիպինք». զէրէ Սեղբոսին վրայէն էկած ֆոտը մէկ ուրուշ սոյ ֆոտ է, սո՞ւր, թէփէ զարնող. մէմալ որ՝ մարդուս հալաւին ամպէս կրկպչի էղել է, որ շաբաթներով չի էրթալ։ Տունին մէջը էղած ամեն բաները—եաթախտուրախ, եօղան, աթոռք, սթոլ, փէրուէ, տուռ, պատ՝ ալայը լէշի պէս կրհոտան։ Արունոտ թարախն ալ մէկ ծարէն ծրլ ծրլ կրկաթի եարայէն։

Հէքիմները, պէրպէրները, ֆալճիները, կիրք-կարդացողները, արօտի-պառկեցնողները, շէրպէթ խումցունողները—ալայը իրենց մարիֆէթները կրբանեցնուն ու ալայն ալ մէկ-բերան վաղ կուգան ու կասին քի՝ ասպէս ցաւի տահա հէչ ռաստ էկած չէինք. աս մէկ նոր սատանայական ցաւ պիտ լայ։

Վրայ տահա մէկ տարի կանցնի։ Օրին մէկ օրը Սեղբոսին կարդրւած քուրը Զօռնամօռ էրած կրտեսնէ ու տեսած էրածը բարեւագիրին մէջը ասպէս կրգրէ մօրը քի՝

Սիրական մամա՝ ես ասօր ասպէս մէկ էրած տեսայ։ Էրածիս մէջը մէքամ էրկան օղունկներով, չոր չոր կովտայով, պէթէր թուխ էրեսով, աչքերէն ալէֆ էլլեէն, մէքամ ծեր մարդ մօտկրցաւ ինձի ու ասաց՝ «ախպօրդ

Սեղբոսին ցաւը ան ցաւերէն է, որ ճարերով չի ազէկնալ։ Եթոր նարա աղէկցածը կուզիք նը՝ տղին Երուսաղէմ պիտի տանիք ու Հոն Յուդա Իսկարիոտացիին գերեզմանը պիտի կուտնուք ու վրան տասվիրեք օր, տասվիրեք տապան մատաղ պիտի անիք. մատաղին արունը պիտի քսիք հիւանդին եարային։ Տասնըչորսում օրը եարան անարատ կըլայ ու հոգին կրծծէ»։ Ասայ ու խայիպ էղաւ։ Ես ալ այիմ-պէյիմ էլլա քունէս։ Ատ ամենը աղէկ ամա՝ հոգին կրծծէ՛ն չի հասկրցայ ի՞նչ ասել է։ Դուք գիտցողներէն հարցուցէք-իմացէք, չիլայ որ մէկ գէշ բան ըլայ. կոյես՝ չիլայ որ տղին մարմինը խալսեցնուք ու նարա հոգին հուր-յաւիտենական կորցնուք։ Մուխայէթ էղէք։

Ա՛ս բարեւագիրը որ կրկարդան՝ կէս խունատում կըլան, կէս մալ միտքի կրպաթին։ Խունատում կըլան անոր համար, որ օղորմելի Սեղբոսին ցաւէն պիտի ազատին. միտքի ալ կրպաթին անոր համար, որ չին հասկրնար ի՞նչ ասել է հոգին կրծծէ՛ն։ Ասպէս եօռրնսրպ խօսք առջի տապրան էր, որ կըլսէին։ Հոս հոն կրհարցնուն՝ ի՞նչ ասել է հոգին կրծծէ, մէկ մարդ ալ տեղով բան չի կրնալ ասելու։ Քերականութին, բառարան, ճարտասանութին՝ ալայը կրբրբքրին, կը փնտռին՝ հոգին կծծէ՞ ին մեկնութինը, կոյես փէռէվօտը չին կուտնուլ։ Ատ արալըխը մեր տեղի սուտուսեալին մէկը, որ տարին-տասվերկու ամիս հայի մասսալներ ու բառեր կրհարցունէ մէկէն-մէկալէն ու քառանտաշով պստիկ թուղթերու վրայ կրգրէ ու էնկ վերջն ալ հէչ մէկ բան չըգիտէ, взяться կըլայ ատ մութ խօսքը մեկնելու ու կասէ՝ «հոգին կրծծէ՛ն կնշանակէ՝ եօխ կըլայ, կրկորցվի ասել է»։ «Ուտեխէն գիտիս ատպէս էղածը», կրհարցնուն նարան Սեղբոսին սոյերը։ «Անտեղէն գիտիմ, կասէ քաղաքի պունամիշ էղած մարդոց խելք սորվեցնողը, որ հոգի ասածդ՝ նա воздухъ է, նէֆիս է, քամի է, սիպէս շուտ՝ փիֆու (բերանով կփչէ). воздухъը, որ հայնակ

օդ կասին, ամէն ֆոտ կը ծծէ, իրեն մէջը կառնէ, եօխ կանէ. ատպէս ալ՝ հոգին կծծէ՝ կնշանակէ՝ հոգին կմաքրէ, կփարատէ, անարատ կանէ։

Մեր հերկելիները կհաւատան աս խէնդ ուսեալի խօսքին, ու շուտ մը-թէզ կը հաղորդվին Երուսաղէմ երթալու։

Ինչպէս ատէթն է նը՝ ժամ կելթան, աղօթքները կանին, ցունծում-կարդումով, խաչ-աւետարաններով, տէրտէրներով, սարկաւարդներով, վառած կերոններով—ալայը թաս-թամամ ճամբայ կելլին շիտակ Թայդան։ Հոնէն Կէռչ. Կէռչէն փռեամը Սատմլօլ. Սատմլօլէն կերթան Իզմիր, Իզմիրէն Մրսրը-Իսքէնտէրիա. հոնէն Եաֆա. Եաֆայէն ալ էշշէկներ հեծած—օր, օրուկէսվայ ճամբայ—Երուսաղէմ կը հասնին։

Երուսաղէմ որ կը հասնին՝ համան հոնի հայ վարդապետներուն Յուդա Իսկարիոտացիի դերեզմանը կը հարցնուն։ Յուդա Իսկարիոտացիին անունը որ կը լսին՝ վարդապետները ուռուֆ կը լան, անկաճներուն հաւատալ չեն ուզենալ՝ «պէքիմ ադէկ լսած չենք» տէյին։ Նորէն կը հարցնուն՝ «որի՞ն գերեզմանը կուզէք» կասին. պէքիմ Յիսուս Քրիստոսին գերեզմանը կուզէք, կասին, պէքիմ Խազարոսինը կուզէք, պէքիմ մէկ ուրիշ սուրբի կուզէք, կը հարցնուն։ «Չէ՛, կասին մեր ուխտաւորները, Յուդա Իսկարիոտացիինը կուզենք. մինք Նախջուանէն յատուկ Յուդա Իսկարիոտացիին գերեզմանին ուխտով էկիլ ենք»։ Վարդապետները բերանները բացած վրանները կընային. «ամամ, միտք կանին, խէ՞ ին տաքա, չէ՞նէ մեզի խէ գիտին ու մեր հաւատը փորձել կուզին. ամա չէ՛. մէկալ կալաճիներէն կը տեսնին, որ ատաճները խէի կալաճի չէ՛։ Ո՞վ մարդիկ, կասին, դուք չիտի՞ք որ Յուդա Իսկարիոտացին Տէրն մեր Յիսուսի Քրիստոսի մատնողն էր. նա Նարա աշկերտութենէն էլաւ, գնաց անհաւատներուն ծախից Քրիստոսին

ու ինքը գնաց չուվանէ կախվեցաւ, հոգին ալ շնտակ դժոխք գնաց»։ «Ամ տոբլթիները մինք իմանալ չուզինք, կասին մեր Նախջուանցիները. մինք Նախջուանէն հասէ-լէթտէն Յուդային գերեզմանին ուխտին էկիլ ինք, վրան տասվիրեք օր տասվիրեք մատաղ պիտի անինք ու էրթանք մեր տեղը»։ «Ո՞վ մարդիկ, կասին վարդապետները, հա-զար ուրթ հարուր տարիէն աւելի է, որ Էրուսաղէմ ամեն սէմթէ ուխտաւորներ կուգան, մատաղ կանին. ամա ասխա-տար տաէն հէչ լսված չէ, որ անիծած Յուդային գերե-զմանին վրան մատաղ անվէր. աս ի՞նչ էղաւ, որ դուք ասօր ատպէս խայտառակ ու հային անունը կոտռող գործ պիտի կատարիք»։ Ամա որին կասիս. մեր Նախջուանցի-ները Յուդային պոչէն վաղ չին գալ ու միաձէրէթ կուզին նարա գերեզմանը դանելու ու վրան տասվիրեք մատաղ անելու։ Վարդապետները կտեսնին որ տացա խելքի բերել չին կրնալ՝ վաղ կուգան եախանելէն. մեր Նախջուանցի-ներն ալ իրենց գլխներուն ճարը ինքերը կըհոդան։

Օրին մէկ օրը սօխասին մէջը մէքամ պէթէր ծեր ու քուռչոտ հալաւով, ժանկրռած էրեսով ճուհուտի ռաստ կուգան։ Կրմնակրնան մերոնք ատ ճուհուտին, քովի ծան կուտան, «ասպէս ասպէս բան է, կասին. մինք հեռու տեղէ էկիլ ինք ու Յուդա Իսկարիոտացիին՝ Քրիստոսի մատնող աշկերտին գերեզմանը կըմնառինք, կասին. չիտի՞ս ուտելս է»։ Ճուհուտը ծուռ ծուռ վրաները կընայէ. «չիլա՞յ, միտք կանէ, տաքա իմ կուլխուս մէկ փորձանք պիտի բերին»։ Մերոնք «մի՛ վախնալ, կասին, մեր հարցուցածը գէշ միտքով չէ. էմէկիդ համար մինք քեզի ստակ ալ կու-տանք»։ Կասին ու քէսանելէն կըհանին էրկու օսկի ու կըցուցնուն նարա. «հանա, կասին, աս էրկու օսկին քեզի կուտանք, երթ մեզի Յուդա Իսկարիոտացիին գերեզմանը ցուցնուս»։

Խեղճ ճուհուտին մարած աչքերը եաշի եաշի կըցոլայ,

եբոր օսկիները կրտեանէ նը։ «Սուտ չի՞ք ասիլ, չի՞ք խաբիլ», կասէ։ «Ինչո՞ւ պիտի խաբինք, կասին մերոնք, նէուժի՞լի սարեր ու ծովեր անցիլ ինք հասէլէթտէն մէքամ օղորմելի ճուհուա խաբելու համար, կասին։ Մինք մեր քաղաքէն յատուկ Յուդա Իսկարիոտացիին անունովը էկիլ ինք», կասին։

«Ի՞նչ պիտի անիք Յուդային գերեզմանը», կասէ ճուհուտը։ «Ամ մեր բանն է, կասին Նախջուանցիները. քեզի՞ դրուիլ ին մեզի տափռօս անելու, քեզի ի՞նչ դործ մեր ինչ անել-չանելը», կասին, «Յուդային գերեզմանին տեղը դիտիս նը՝ ասա, չիտիս նը՝ բարև էկար. մինք ուրիշ մարդ ալ կրկուտնունք»։ Կասին ու կուզին դէպի իրենց ճանփան էրթալու։ «Կեցիք կեցիք, կասէ ճուհուտը, ես Յուդային գերեզմանին տեղը խիստ տեղով դիտիմ. ամա՝ համան շինտը ցուցնել չելալ. զէրէ քրիստոնեաները ու տաճիկները, որ մեր հաւատին տուշմանն ին, իմ կուլխուս ալ, ձեր կուլխուն ալ գէշ ոյին կրբերին։ Քիչմը ուշէկ, մինիմ-չի մինիմի ատեն արիցէք, ես ձեզի շիտակ կրտանիմ կրցուցնում»։

Նախջուանցիները իրենց մէջը սավէթ կանին ու ետքէն ճուհուտին «ադէկ, կասին, սահաթը ասպէս ուրթերու ատէն տուն կէնէ հոս էղի՛ր, մինք ալ կուգանք ու պարապար կէրթանք»։ Հա՛. հա։ Ինչպէս կասին, ամպէս ալ կանին։ Ամա, տահա գերեզմանին տեղը չի գնացած, պաղարէն մէքամ կէր օչխար կրգնին, մէքամ ալ խաստապ կրպռնին, որ մորթէ։ Եբոր ատպէս կրհաղերվորվին ու սահաթն ալ ուրթը կրլայ, կառնուն Սեղբոսին ու կուգան։ Ճուհուան ալ հոն կեցիլ է, նացա կրնայէ։ Մուրթն ալ արդիլ պաշլայիլ է կոխելու։ Կէրթան։ Էվպէյի ատէն կէրթան. մէմալ նայիս մեր ճուհուտը թառս կանէ, կը կայնի, ու տայեախով մէքամ աւրբշտկած տեղ կրցուցնէ՝ «Հանա, աս է, կասէ, Յուդային թաղած տեղը. հոս, կասէ,

հին ատենները դուսեցի մարդոց մեռելները կըթաղէին, որ ճուհուտին կուզէք հարցուցէք»։ «Խորդ կասիս, կասին Նախջուանցիները, մեղի չիս խաբիլ»։ «Ինչու՞ սուտ պիտ ասիմ որ, կասէ ճուհուտը. Էրուսաղէմ վո՞վ չիտէ, որ աս ցուցած տեղը Յուդա Իսկարիոտացիին թաղած տեղն է։ Էտե՞. խոստացած էրկու օսկի՞ն»։ Նաքա եալ կըհանին օսկիները ձեռքը կըդնին. ճուհուտը կէրթայ իրեն ճամփան. մերոնք ալ մատաղին բանը կընային։

Եբոր օչխարը կըմորթըվի, ինչպէս որ էրածին մէջը սալըխ տըված էր նը՝ կառնուն արունը ու աղէկ սոյին կըքսին Սեղբոսին թարախոտ եարային վրան։ Մախսումը հաղ կանէ. «ա՜խ, մամա, կասէ, տահա քսէ, տահա քսէ, տահա քսէ. էօֆ, կանէ, մէ՛մը ռահաթցայ», կասէ։ Խորդ ալ. մարը տէյէմիշ կանէ, եարայէն թարախը մէկէն ի մէկ կըդադռի կաթելու։ Օրն ալ արդիւս ուշ է. քուն լալու առէններ է։ Նաքա եալ կըժողովին, տուն կէրթան։ Եբոր քունի կըմուտնուն, Սեղբոսը մէկ հրաշք էրած կըտեսնէ։ Նարա էրածն ալ կուդայ աղլի էրկան օղունկներով, ալէֆը աչքով ծեր մարդը ու ասպէս կասէ.

Էվալա Սեղբոս, կասէ. չունքի դուն իմ հրամանս կատարեցիր նը՝ ես ալ կուզեմ քեզի քու քաղաքիդ մէջ էնկ բահթաւոր մարդը անելու։ Ամմա՝ ինչոր շինաը քեզի կասիմ նը՝ աղէկ լսէ, միտդդ պահէ ու կատարէ։ Հէպէթ ձեր՝ տէրտէրներէն լսած կլաս, որ դրախտին մէջը Ադամ-Եւային խաբող օձին փորը սատանայ մտիլ էր. ասել է որ՝ եբոր օձը ադամօրդուն խածնէ՝ աղուցին հետը, նարա մարմնին մէջը սատանային նէֆէսն ալ կըմտնէ։ Օձին զարկած մարդուն դիմաց իրեք ճամփայ կայ. մէկը ան է, որ շուտ վրայ կըհասնին, համան հէքիմ, ճար, խզտրմիշ արած էրկաթ, սուր դանակ մէյտան կըբերին ու հիւանդը իրեն առողջութիւնը կըդանէ։ Երկուսում ճամփան ան է, որ ճարերը կուշանան ու օձէն զարնըվածը պէթէր կըտանջուի ու կեյնի

կրմեռնի։ Իրեքում ճամփան ան է, որ զայնուածը քեզի պէտնակ չի մեռնիլ, աղուն աղէկ սոյէն կերթայ սիրմիշ կըլայ արունին մէջը ու եարան թարախլամիշ կըլայ, ասել է՝ սատանային նէֆէսը կուզէ հոգուն մէջը մտնել, հոն իրեն բունը դնել, ամա՝ ատ առանց մարդուն յօժար կամքին չելալ։ Հիւանդը ինքը պարտաւոր է յօժար կամքով խայիլ ըլալու, որ սատանան նարա հոգին մտնէ, որ եարան ալ անցնի, երթայ։ Ատոր համար օրէնք կայ, որ հիւանդը գայ Երուսաղէմ, գտնէ Յուդա Իսկարիոտացիին գերեզմանը ու տասվերեք օր մէմէկ օչխար մատաղ անէ ու ամեն տապրա եալ մատաղին արունը քսէ եարային։ Սատանայ կասին նը, չելայ որ, սիրական Սեղբոս, դուն վախնաս նարամէն. ան սալթը խեւերը կըվախնան նարամէն. խօլօք մարդը խայթա պիտի սիրէ նարան. զերէ՝ սատանան որ կայ, իր լայի բամբարակ, աչքը բաց մարդու համար պէթէր ֆայտալը ինսան - արարած է։ Նաֆիլէ մէկքանի միամիտ մարդիկ նարա սիրէթը ալեալէ, սև երեսով ու կօվտայով, էտուը պոչով, օմուղներուն կէճէխուշի խանաթով, երկան ու սուր օղունկներով, ճակատն ալ մէքամ պալապան կոտոշ կը քաշին։ Ինձի հարցնելու լաս նը՝ սատանային պատկերը ասպէս պիտի քաշվէր. եա մէքամ պէթէր տեսօք, հոլանի կինիմարդ, եա ծոցը, ճէպէրը ու շալակի տօպրան իլինք օսկիով մարդ։ Խօլօք մարդը չէ՛քի պիտի չի փախչի ու իրմէն ալ չի պիտի փախցնէ սատանային, հապա *наоборотъ*, ինքը խայրէթ պիտի անէ նարան մօտկընալու, եա իրեն մօտկցնելու։ Սատանայէն մարդ տայմա ֆայտա ունի, ամա զարար հէչ չի կայ նարամէն։ Օլա օլա՝ օրին մէկ օրը, սատանան մարդու հոգին զաֆթ պիտի անէ էղել է. *экая важность!* Հոգին-խօմ, աղլի խէնդ ուսեալը մեկնից ի՞նչ բան է — մէկ պօշ նէֆէս, քամի, *воздухъ*, եա, ինչպէս հայնակ կասին՝ օդ է. *большая важность!* որ մէկ օր ատ նէֆէսը սատանային ձեռքը պիտի անցնի։ Զաթօ ապա-

մարդին, քանի որ աշխարքիս երեսը կրկենայ, ամեն սիրտին ուղածը կանէ՞-խօմ։ Եթոր հոգին փչէ նը՝ ան ալ ան ատենը կնայինք։ Ուսմուռիդ չի լայ, Սեղբոս, որ սատանան հոգուդ մէջը պիտի մուտնու, հաւատա՛ ինձի ատկէ դուն հէչ զարար ունենալու չիս. օրա օրա՝ մէջէդ պիտի խայիպ ըլան էղել է խաճմոանքը, ամօթը, քիպիրը, մէկ ուրիշ ալ խէնդ բան, որ մարդիկ աղնուութին կասին. ատ ի՞նչ հօրս ցաւին թերմաշներն են, խայթա մարդ կրթեթեւնայ, եթոր նարա մէջէն կէլլին խաճմոանքը, ամօթը, քիպիրը, աղնուութինը ու շատ ուրիշ խենդ ուսեալ մարդոյ հնճարած բաները։ Ա՞չքը սիրիմ անհոգի, անձիկար, անամօթ մարդուն. դրացինդ քախցած է էղել է. հօրս ցաւը փաթլամիշ թօ անէ. անցիր քովէն։ Անմեղ մարդու վասթռօկ խօթիլ են էղել է. աչքըդ փակէ, քովէն անցիր։ Միամիտին մէքատը քեզի ունիմ-չունիմը հաւատացիլ է էղել է. ինքեար արա՛, սուտ երդում կէր, ուրացիր ու անցիր քովէն։ Հերկէլէին մէկը պաղարին մէջը քեզի գող կասէ ու կրթուքնէ էղել է երեսիդ, եա մէկ եումրուխ ալ կրհագցնէ անկանճ-քօքիդ. ուսմուռիդ ալ թօ չելլայ. շախայի դառցուր ու քովէն անցիր։ Ա՛ս ամենը անելէդ էտև՝ դուն մէմը նայէ ձէպդ ու ծոցդ ի՞նչ խարէր պիտի իլինքնան կապուտ, կարմիր ու նախշուն քռէտիթքաններով։ Ամա՝ ամենէն աւելի խայրէթ արա՛, սիրական Սեղբոս, որ ըլաս մարիֆէթը խորամանկ ու կեղծաւոր։ Խորամանկութին կասին նը ասպէս կրլայ. տայմա մուխայէթ էղի՛ր, որ մարդիք քեզի օյնի չի բերին, ամա ինքդ նայա հետ տայմա թանցեր խաղա՛, բանդ ամպէս բռնէ, որ առաջուանէ հաղնրած ֆէնտերդ նաքա չի հասկրնան, ու ի՞նչ ալ ասես, ինչ ալ անես՝ ալայը մենակ քեզի համար ֆայտալը ըլայ։ Հաշխին ոտքին տակը ամպէս ըսըվէն տի՛ր ծմերուկի կճեպը, որ մէկն ալ ֆառղին չէրթայ։ Կեղծաւորն ալ ասպէս կրլայ. վրայէդ սուրը, ձէմէրտ, բարեհոգի, ժամ սիրող, աղքատ

մեղքցող, էօքսիւզի տէր, օղորմած էրևցի՛ր. ամա տակէն դաղտուկէն ամէն մեղքերը կատարէ. մարդոց կամեցի՛ր դէշութիւն, տակերը փոս փորէ, ռաստ էկած տեղը անունները կոտռէ ու սևցնէ, ու ամենուն առջև էրդումպատառ էղի՛ր, որ Ֆէլան տեղը Ֆէլանին առջև ձեղի շատ գովեցի, ձեղի համար բարեխօսութիւն արի։ Մէկ ուրիշ ալ ասելիք ունիմ քեզի։ Շինտը Էրուսաղէմ էկածդ էկած է. ատ խիստ աղէկ ռաստ է։ Գնա՛ ձեռքիդ վրան կապուա տամդա զարնել տուր ու մըղտրսի էղի՛ր։ Հայերը, կիտի՞ խօմ, պէթէր ճունապէթ ին, նաքա մղտրսի կասին, մամալ չին ասիլ. նաքա կիտենքի՝ Էրուսաղէմ գնացողէկօղը միւճէրէթ արդար մարդ պիտ լայ, մէջէրը հէչ խալպ մարդ չի լալ. ան իսկ՝ խալպերուն էնկ պաշերը Էրուսաղէմէն կուգան»։

Ասաց ու խայիպ էղաւ. Սեղբոսն ալ քունէն զարթեցաւ։

Քունէն զարթած-չի զարթած՝ ձեռքը տարաւ օձին խածած տեղը, նայէ՝ թարախ հէչ վազած չէ, եարային վրան ալ պարակ փառ կապիլ է. թիսէքը քիթին կը մօտկրցնէ, հոտ կանէ՝ աղլի լէշի ֆոտը չի կայ, եօխ էղիլ է։ Խունտումէն հայ-հայ սիրտը փաթլամիշ կըլայ մախսումին. «աս ինչ հրաշք է», կասէ միտքին մէջը, ու հանման մօրը ու հեռի մարդոցը կըզարթեցնէ։ Նաքա եալ այիմ-պէյիմ կէլլին տեղերէն՝ «ի՞նչ, ի՞նչ էղաւ» կասին։ «Ասպէս ասպէս բան է, կասէ Սեղբոսը, նայեցէք, իրիք տարվայ եարաս փակվիլ է, մէջէն թարախ չի գալ. հոտին ալ իրը մնացած չէ»։

Կընային, կըշփին, հոտ կանին — կրտեսնին որ հրաշք էղիլ է։ «Փառք Սծոյ», կասին արմբնցած։ Սեղբոսն ալ ուրիշ բանի փառք կուտայ, Աստու անուն տալու խատիր չելալ։ Մարը մէմալ եաթախ չի մնիլ, լուսու չանկերն ալ որ արդրին կըպաշտային զարնելու՝ ժամ կերթայ աղօթքը անելու։ Սեղբոսը ժամ չի էրթալ ու միտքի կըպաթի։

Ատ օրէն Սեղբոսը կըփոխվի ու ալայ-մալայ ուրիշ մարդ

կրայ. առաջվայ խունտաումը կվսխչի էրեսէն. սիրտէն կի-
սիս քի մէկ բան կելէ, խայիպ կրայ, նեսը պօշ կրմնայ.
հոգի, ձիկար, ամօթ, քիպիր՝ ալայը եօխ կրան: Նահ,
ֆայտա, այլրիս, նօմայ ստակ, զէնկինութին, ցոլուն պա-
ճախլըներ, թանկնոց էքիփաժներ, հաղարնոց ձիներ—ա-
լայը իրեն կուզէ, ալայը ինքը զաֆթ անել կուզէ. հար, մար,
ախպըրտիք, քուրեր, սոյեր, սիրելի բարեկամներ — ամէն
բան չէղածի պէս կրան նարա համար: Խաբել, զրկել,
գողնալ, պարտրկել, ինքեար անել, մատնել — աս կրան
տարին-տասվերկու ամիս նարա չափալ-չափալը: Ամա մինք
քիչ մը առաջ վազեցինք:

Եբոր մաման ժամէն կուգայ ու «օղորմի Աստած» կասէ,
օղորմի ծնօղացդ ասելուն տեղը՝ «մամա, կասէ, միտքս մէկ
բան էկաւ, կասէ. էրեկ մէկ օչխարի համար տունդեային
ստակը տուվինք, կասէ. արի՛ ատպէս չանինք մէմալ: Ես
ասպէս միտք արի. տուն ինձի էռսուն մանէթ տուր, ես
կէրթամ քովի գեղը, հոն չոպանները էն տասվերկու կոլօխ
պարի կը գնիմ, հէմ աղէկները կառնում, հէմ ալ ուժան
կընստի մեզի. ամմա ամէն օչխարին, էրէկվա պէսնակ, հին-
կական մանէթ տալու լանք նը՝ ծարը ուտե՞ս կրփախչի:
Մարը խայիլ էղաւ, որ նօմայով առնրվին նը՝ մատաղին
օչխարը ուժան կընստի. հանից տուվեց ձեռքը 30 մանէթը:
Սեղբոսը առաւ ատ 30 մանէթը ու քիչ մը ատէն խայիպ
էղաւ ու ետ էկաւ «ստակը կորուցի», ասաց: Մարը ուռուվ
էղաւ: «Մի՛ վախնալ, մամա, ասաց նա, առանց ատոր ալ
ես իտա Յուդա Իսկարիոտացիին գերեզմանին վրայ մատաղ
անելը չէր հաւնէի. անհաւատի բան է, կիտիս քի ճատուի
կրմանի, սատանոց բան է. մէմը որ՝ հալիսը իմանանը՝
կրխնտայ մեր վրան, մէմալ որ՝ Աստու հաւատին զրթ
բան է. ճար էր նը՝ կօդտէր մէքամ խուզին ալ. անոր ա-
ղէկը հաւատով անելն է, չէքի օչխարին նօմայ ըլալը»:
Անխատար կասէ, անխատար կասէ որ՝ մօրը խելքը ման

կրբերէ ու Յուդային դերեզմանին վրան մատաղ անելը կը-փոշմընցրնէ, ու ադլի 30 մանէթը թռլավ կանէ։

Ասպէսով, սատանային աշկերտ Սեղբոսը էնկ-սիֆթէ կլսաբէ իրեն վարպետին, սատանային։

Ան օրը մէկ արմբենալու բան կրլայ։ Հօրցուկէն էտքը մարը օտայէն մէկ մինութ կէլլէ. Սեղբոսը մեն-մենակ կմնայ. սուս, ծան-ճրլթում չի կայ, ամպէս սուս, որ իրեն սիրտին զարկածը ինքը կրլսէ։ Սեղբոսը պայեաճ տեղէն կը-հանէ ադլի 30 մանէթը ու կրպաշլայէ համպրելու, ու միտքին մէջէն կրխնտայ, որ սատանային խաբէց։ Իտա ա-բալըխը քոշայէն մէկ սատանական ծան կէլլէ՝ «Էվալլա, Սեղբոս, մալատեց. ինչպէս որ ինձի խաբեցիր՝ ամենուն ալ ատպէս խաբէ. թէզ կրդէնկրննաս»։ Սեղբոսը լեղին պատռաճ չորս քովը աչքը կրպրտրացրնէ, սէքիին տակը կրնայէ, գետինին փռաճ խալին կրվերցուննէ՝ մէկ բան չի տեսնիլ. ուտեխէ՞ն էկաւ ծանը՝ չիմանալ։ Պէլլի բան է, որ սատանան արդրիս իրեն աշնաութինը պաշլայիլ է տարա հետ։ Սուս կրկենայ, մարդու բան չի ասիլ։

Մաման նես կուդայ։ «Մաման, կասէ, որի՛ էրթանք ինա տամդա զարնող վարպետին ու Ծեռքերուս վրայ Էրուսա-ղէմի տամղանները զարնել տանք, որ հալան ալ տեսնէ քի՝ մինք Էրուսաղէմ էղել ինք»։ Մարը խայիլ կրլայ. համան կէրթան ու Ծեռքերուն ու պիլէկներուն վրան ադլի կա-պուտ նախշերը զարնել կուտան, ու կրլան մէկը հաճի, մէկալն ալ մրդտրսի, — մարը կրլայ հաճի-մաման, օրդին կրլայ մրդտրսի Սեղբոս. ամա հալիսը նարան սաղթը մրդ-տրսի ալ կասէ. մինք ալ այսօրհետև նարան Սեղբոս չինք ասիլ, հապա սաղթը Մրդտրսի։

Էրուսաղէմէն տահա չի էլլած, մեր Մրդտրսին մէկ ու-բիշ ֆէնտ ալ ապուլ կուտայ։ Մէկ օր (աս արդրիս Էրու-սաղէմէն էլլելու օրերն է) «մաման, կասէ, որի՛ համբինք նայինք՝ քովերս քանի՞ մանէթ մընացիլ է, որ անկօրտ

ժաժկրտինք»։ Մարն ալ կէլլէ ու «կուզես համպրէ, կուզես չէ, Նախջուան հասնելու համար ճէմը 250 մանէթ մնացիլ է», կասէ։ «Պերօսսս, մամա, իտա ստակը, կասէ, մէմը աղէկ համպրիմ. պէքիմ աւելի է»։ Մարը կէրթայ, ճամատանէն եմէնիի մէջ փաթթած մէկ բան կըհանէ, կըպերէ առջևը կըտնէ. «Հա՛նա, կասէ, եղածը իսան է»։ Մըղտըսին կըբանայ եմէնին, մէջէն յիսուն մանէթ սլօվէն ծոցը կըխօդէ ու մնացածը կըպաշլայէ համպրելու։ Կըհամպրէ-կըխալսի ու կըտառնայ մօրը՝ «Ա՛ս ի՞նչ է աս, կասէ, հոս ճէմը 200 մանէթ է ու. հապա դուն էրկու հարուր յիսսուններու անուններ կուտայիր»։ «Ի՜, հաղա՜ր վայ թէփէիս, կասէ մարը, տահա էրեկ իրիկուն, եաթախը չի մտած՝ համպրիլ էի. ուտելս խայիպ եղաւ ճանըմ։ ճանըմ յիսսուն մանէթը»։ Ի՛նչ խօսքս էրկնցնում. գողութինը կըձգին վայկիրին Մարիցա-ճիճային վրան, որ կէսմը ուխտաւոր, կէսմալ բանուորի պէս տացա դիմացը խըզմէթ պիտի անէր յիսսուն մանէթ հախով. ատ յիսսուն մանէթն ալ ճէհէդ պիտ տար իրեն էօքսիւդ թոռին, Ցափէթին, չէնէ մախսումին փսակին բանը կօլօխ գալու չէր։ Օղորմելի Մարիցա-ճիճան շատ էրդումեր արաւ, շատ սուլրբերու վկայութիններ, կանանչ-մեռոններ, կուրանամկուր-քալիմ՛ներ մէյտան բերից, շատ լաց, շատ արտրսունք, շատ կօռում-կօչում, ամա մէկ բան խայիր չարաւ. հէ՛մ հախէն զըկըվեցաւ, հէ՛մ ալ թէմիզ անունը ածըռվեցաւ։ Մեր Մղտըսին ումուռին ալ չէր. նարա ճիկարը չի մղկըտաց, էրեսին կունը չի փոխվեցաւ ալ. խայթա նեսէն ինքը իրեն արածին պէթէր հաւնեցաւ ալ, սանքի Աստվածամօր տիմաց մէքամ պալապան կերօն տնկիլ է։

Ա՛ս տապռան ալ, եբոր իրիկունը մենակ մնացիլ էր օտային մէջ նը՝ կէնէ աղլի ծանը լսից՝ «Է՛վալլա, պռա՜վա, Մղտըսի. շինտը կրտեսնիմ որ՝ դուն ըլլալու տղայ իս»։

Քանի մը օրէն մեր ուխտաւորները հափուռ-ջուփուռ-

ները ժողոտեցին ու ետ տառցան իրենց տեղը, սիֆթէ Եաֆա էկան, Եաֆայէն Մըսրը, Մըսրրէն Իզմիր, Իզմիրէն Ստամպօլ, Ստամպօլէն Եէռչ, Կէռչէն Թայղան, Թայղանէն ալ Նախջուան։

Այ, սօր, սիրելի բարեկամներ, ճանչցողներ, ինչպէս ատէթն է նը՝ բարով-էկար'ի էկան։ Զէշիտ չէշիտ, որը սուտ, որը խորդ խապէրներ լսեցին, չայ ու խաֆէ խմեցին, կիլէնկիներ կերան, չենիի ապրռճաններ ու մատենիներ հագան պիլէկներուն ու մաներուն ու գնացին տուն. տուն որ գնացին նը՝ ինքերն ալ ասպէս խապէրներ փռեցին Մըղտըսիին վրան։

«Խուճուռ բան է, ճանըս, տղան տղի օձին զարկած «ֆոտած եարայէն ազատվիլ է ամա՝ կիտիս քի ինքը մէկ չէ-«շիտ էղիլ է, հէչ առաջվայ մեր գիտցած Սեղբոսը չէ. «մէմը որ՝ էրեսին կունը ալայ-մալայ փոխվիլ է, տեղնիլ է, «կանանչկիլ է. ճուրոտ-ճուպուռոտ աչքերը թամամ խուռ-«պաղայի աչքեր ին. քիթը կատարեալ պուհոյի կուտուդք «տառցիլ է. նայուածքն ալ պէթէր սասանական է, կիտիս «քի՝ ղէհիլը օձը իրեն պաղ ու խալպ աչքերը վրադ չռիլ «է՝ համան խածնել ու մեռցունել կուզէ։ Զայիր ատպէս «կըլայ էղիլ է օձին խածած մարդը. Ասված տունէ-տեղէ «հեռի պայէ, տուշմանիս չի տայ». ասին լսողները ու էրես-ները խաչ հանեցին։

Էրկու-իրեք օր, ինչպէս մեր տեղն ատէթն է նը, Մըղ-տըսիին վրան կալաձի արին, էփպէյի միսը կերան տղին. եռքէն ծամելու մէկ նոր միս գտան ու վազ էկան տարա լաֆէն։ Մեր Մըղտըսին ալ իրեն ֆէնտերը պաշլայից։

Այ տարալըխը տարա պապան ինկաւ-մեռաւ, էփպէյի պարտք թողուց. ամմա տուն-տեղ, նօմայ պարի, մէտօմ ալ սէրմիա թողուց։ Մըղտըսին համան ատ ալայը մօրը անունին վրան գրել տուվից ու հօրը պարտքը ինքեար արաւ, «բան մնացած չէ՝ իմիշ նարամէն»։ Պալքնաէրները

տոտովեցան, կանչվռտեցին, խրյեամէթ վերուցին, քիւ-ֆիւրներ, անէծքներ տուին ու վերջը-վերջը վաղ էկան։ Մըղտըսին էրեսը չիկարմրեցէն հալվայի պէս լՅվ արաւ հալխին հէլալ վաստակը ու նոտաւ տեղը։

Անկէ ետքը Քափքային սէմթերը գնայ, մէքամ ղէնկին մարդու չիտիմ օրթանա էղաւ, չիտիմ խրդմէթքեար, ու պարին, մանճառ-արապաներ եուքլէմիշ արած, եառմունք, եառմունք կըքալցունէր ու, կասին, աղէկ ծախս կանէր։ Ատպէս, մէկ օր ալ, եառմունք քալածն-ուքէնը, խապէր կառնէ քի՝ օրթախրդ, չէնէ շօռպաճիդ (ի՞նչ մէդքըս պայ-իմ, տեղով չիտիմ) ինկիլ է մեռիլ է, ու քառասուն արապա պարին կըմնայ մեր Մըղտըսին ծեռքը։ Նա եալ համան ազլի արապաներուն արիշները ման կըպէրէ շիպ-շիտակ դէպի իրեն ազպարը ու մէջի պարին շուտմը-թէղ ինդաւ տեղեր կրտեղաւորցունէ։ Հալխին ասածէն, կտոր ատէն-վայ մէջ քառասուն հազարի տէր կըլայ։

Մէտօմը ատենէն սոյերէն մէկին հետը օրթախ կըլայ, ատալ տեղով չիտիմ ի՞նչ առուտուրի—պուրդի՞ մի, չէ՞նէ ցորեն ու հունտի։ Մեր Մըղտըսին պահթէն, ճանըս, շատ չի անցնիլ, էրկուսում օրթախան ալ կիյնի կը, մեր Մըղ-տըսին կէնէ կըմնայ հալխին քափթալին տէրը։ Էրմենվա-րին ու էօքսիւզներուն ինչ կուդէ նը՝ ձեռքերը կըանէ, «աս է, կասէ, օղորմած հոգիէն մնացածը»։ Նաքա եալ, խուրթսուզները, ի՞նչ անին. խատի՞ր են ծուպուտ հանե-լու, հապա ո՞նալ չի տար նը՞, հապա ալայ-մալայ լՅվ անէր նը՞։ Ատալ ասպէս։

Ուժէ մեր Մըղտըսին նամը քափթալին շատնալուն հետ պարապար հալխին մէջ կըմեծնայ ու կըփռվի, «Մըղ-տըսի վար, Մըղտըսի վեր»։ Մեր հալխին, կիտուք խօմ, լուզուն կըվերնայ սալթը ուրնչպէր մարդոց վրայ, ղէնկի-նին վրան չի վայլել դէշ կալաճի, բամբասանք։ Ղէնկինը թՅ լայ գող, հարամի, քիւլհանի, անշահ, շունի պերան

թապլելու մարդ, ատ զարար չունի, մէկն ալ խատիր չէ նարան ասելու քի՝ աչքիդ վրայ ունք կայ տէյին։ Մեր Մըղտըսին ուտեկս ալ էրթալ նը՝ ամեն տեղ առջևը կըտակ կըհանէին, բարև կուտային, թոռէ պատը կընատեցունէին. ուտեկս որ փունձ ու յարգինք կար՝ հոն նարան ծան կուտային, պատուաւոր սլուժպաներու մէջ նարան կընտռէին, նօսր սէրմիայոթիները նարամէն խրատ ու խորուրդ կըհարցունէին, նարա կալաձի արած ինքէնը՝ սուս կըկենային ու պերանը կընայէին։ Ա՛ս ամեն պահթը, ատ ամեն փառք ու պատիւը որ կըտեսնէ մեր Մըղտըսին՝ սիրտին մէջ խունտում կըլայ, որ աղլի էրկան օղունկով մարդուն խրատը լսից՝ ու կատարից, ու տայմա եալ կըխնտար ան մարդոց վրայ, որոնք իրենց մէջը հոգիի, ապնուութինի, քիպիրի, մեղք ու վարձքի կալաձիներ կանէին. խորդ է, պերանով չէր ասիլ, որ ատ խեի հնձարած կալաձիներ ին, ամա միտքին մէջէն տայմա կասէր՝ «Ես օրերը քէֆով անցնում, տուք ձեր հոգիովը ու քիպիրովը թառան ծուկ ու աղած միս ուտելէն մխիթարվեցէք»։

Ատ ամենը զարար չունի. զէրէ ո՞ր մէկը հալխին ստակը կերած չէ՝, պարտքը ինքեար արած չէ՝, էօքսիզներուն ու անտէր էրեվարիներուն պօղաղներէն հացը կտռած չէ՝ ու քամէոցիայի անունով հազար չէշիտ ֆէնտեր բանեցուցած չէ՝։ Մըղտըսին քիւլհանիութինը ատխատար լար նը՝ վրով մեղիմէն խատիր պիտ լար նարա վրան բերան բանալու. ալայրս ալ (սուտ բան պէ՞տք է որ) մէկ մեռոնով մեռոնած ինք, մէկ մէկու աչք հանելու տեղ չունինք. որրս քիչ, որրս շատ՝ ալայրս ալ աղէկ սոյէն ածրռված ինք։ Բանը ատ չէ՝. բանը ան է որ՝ մեր Մըղտըսին, էրուսաղէմէն գալէն ետքը, բնութքով կատարեալ սատանայ կտռիլ էր, պէքիմ անկից ալ պէթէր։ Լսված բան չէ՝, որ մէկ օր նարա բերնէն մէկիս մէկիս համար մէկ աղէկ կալաձի էլլէր. լսված բան չէ՝, որ մէկին համար նա բարեխօսութիւն ա-

լած ըլար. լսված բան չէ՛, որ էրկու խոռոված մարդու դիմաց-դիմաց բերած ու պարբշցուցած ըլար։ Մըղտըսիին նստած-էլլած տեղը միաձէրէթ կռէվ, իշքիլ, խռովութիին, դուշմընութիին, զարար, անուն կոտռել — ասպէս դէշ ու սոյսըզ բաներ մէյտան կէլլէր։ Մէկ չար խասպէր չի կար, որ էնկ-սիֆթէ Մըղտըսիին բերնէն էլլած չիլար. մէկ սուտ բամբասանք չի կար, որ նա բերնէն էլլած չիլար։ «Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան պաղիրկեանը, կասին, ասօրվաղը թօփ պիտի թապլէ։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան էրիկ-կընիկը էրեկ ծեծկվիլ ին։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան կօռնիշնան իրեն աղային վրան կիրով տուվիլ է. ասածներէն կանը՝ տակէն ցուրտ-սէմթերու անուններ կըլսվի։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան էրփեվարիի արապախափսիէն, դըշերվայ մութ ատեն, մէքամ կէնճ լէվէնտ պահոտվիլէն, կամացուկ էլլիլ է։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան տեսուչի քասասային մէջը ведочёть էղիլ է. հոգաբարձունները, սիմ-սիմ պէ՞տք է որ, պիտի վարին տա։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան աղան, կասին, ծովին անդի էրեսը պանող պուլղարներուն հետը....։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան աղային զասթռախավաթ արած...։ Կանփատա՝ լսի՞լ իք, քլուպին շթառշինան ու քանթօռչիքը խօսք մէկ էղիլ ին ու նօմայ ստակ վրաները անցուցիլ ին։ Կանփատա՝ լսի՞լ իք, Ֆէլան աղային լէվէնտ օրթին»...։ Ես ի՞նչ գիտնամ, սուտ չի մնաց, որ Մըղտըսին չի հնձարէր ու չի փռէր քաղաքիս մէջը. մարդ չի մնաց, որ անուն գող, հարամի չի հանէր. կէնճ ախջիկ, կէնճ կինիմարդ, կէնճ էրփեվարի չի մնաց, որ անունները չաձրռէր ու ճաուէզ չանէր։ Ու աս ամենը չիմանաք որ մէյտան տեղ, ճակատը բաց, հատռիճ հատռիճ խօսքերով ասէր, չէ. նա սալթը մութ մութ խօսքերով կըհասկրցունէր ու պահը մէմը կասէր՝ «Ես ի՞նչ կիտնամ, սուտը խորդը վով գիտնայ, հալիսը իտպէս կասէ շտէ, մեղքը վարձքը իրենց վիզը, իտպէս ալ բան կըլա՞յ. վա՜յ մեղքերուն։ Հոգունե-

լուն ալ մեղք չէ իսպէս սուտ կալաձիներ միտքերէն հանելու. կասին քի, ճանրս, ֆէլանին ախջիկը փախել է երկանը տունէն, դիրով տուվել է, օրէնքի էլլել է ու պաժնըվել կուզէ. իսպէս սուտ կըլաձի կըլայ. վայ հոգուներուն»: Անիսկ՝ էնկ-սիֆթէ չար խապէրը ինքը կըփռէ, ետքն ալ ինքը մեղքըցողըս կըլայ: Սուտն ալ, արալըխուտա, պերնէ պերան կըփռվի քաղաքին մէջը. անմեղները նաֆիլէ ճառէզ կըլան. մեր սատանայ Մըղտըսին իրեն օձի լուգոյով կէնէ աղէկ մարդ կըլայ, մեղքըցողս կըլայ:

Օձին խածած մարդը շատ սիպէս հօռիսըզ բունութքի տէր կըլայ:

Ամմա՝ բանին մէջը ամմայ կայ. ան ալ ասիմ, խալսիմ աս ֆոտած Մըղտըսիին լաֆը, զէրէ ինքս ալ պէզմիշ էղայ, ծեզի ալ պէզմիշ արի:

Մղտըսին ճէմը իրէք բարեկամ ունէր՝ մէկը թիթինճի, մէկը խութուռճի, մէկն ալ պազերկեան: Ես քանի՛ քանի տապռա ասիլ իմ տացա՝ «Ո՞վ մարդիք, վազ արիցէք իտա օձի խածած Մղտըսիէն, չէնէ միճէրէթ կուլխուներուտ մէկ խաթէ կուգայ, զէրէ ատ մարդը թէվէքէլի մարդ չէ, ոտքէն պըռնած մինչի կոլոխը նա օձ ու սատանայ է: Ամա որի՞ն կասիս: Հէրկէլէները խօսքս բանի տեղ չի տրին, ղաթօ փորձանքի ալ էկան. թիթինճին չախօթքա էղաւ, մեռաւ. խութուռճին ինքը չախօթքա չէղաւ, ամա նարա քէսան էղաւ չախօթքան. նա շնտես տունը նստիլ է ու կրտնքայ. էնկ շթուք-պանը էղաւ պազերկեանին հետը. սիֆթէ նա խեւցաւ, ետքէն միւհլիւզ էլաւ. շընարես ալ իրեն համար նոր ղէնեաթ կըտիլ է. ինչ որ Մղտըսին լուգոյով կանէ, աս խենդուլիին ալ կանէ իրեն խալէմով:

Հասկրցա՞ք շնտես ի՛նչ ասել է օձի խածած մարդը: Սատպէս է նը աչքերդ բացէք ու քէֆ անելու մի՛ էրթաք ան պահչանները, ուտեն որ օձեր կան:

ՍԻԻԼԻԻԿ:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Շէքսպիր և իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները. աշխատասիրեց ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ: *Թիֆլիզ, 1887. գինն է մէկ ռուբլի:*

Ի՞նչ վիճակի մէջ է մեր գրականութիւնը. մխիթարական կամ ոչինչ կամ շատ աննշան բան կարելի է գտնել նորանում, բայց և այնպէս, երբ մարդ ցաւալի իրողութիւնը խոստովանելով՝ կամենայ այդ անմխիթար երևոյթի մանրամասնութիւնները որոշել, անշուշտ հաղար կողմից մի և նոյն արհամարհական նկատողութիւնը պիտի լսէ թէ՝ այդ իրողութիւնը նոր գիւտ չէ որ անում էք, բոլորիս այդ վաղուց յայտնի է, պարապ մարդու աժանագին ցաւակցութիւն է որ յայտնում էք։

Այս նկատողութեանը (որ դժբաղդաբար աւելի բերանէ բերան իբրև խօսք է պտտում և ոչ բնաւ լրջութեամբ երևան է բերվում մամուլի մէջ) կարելի է պատասխանել նախ՝ այն որ գրականութեան տխուր վիճակը մեզանում շատ քիչերն են նկատում, գուցէ գլխաւորապէս այն բնական պատճառով, որ առհասարակ մեզանում գրականութիւնը շատ փոքրաթիւ ընթերցողների համար գոյութիւն ունի, եղած ընթերցասէրների մեծամասնութեան ճաշակն էլ գուցէ գոհանում է մեր գրականութեան առձեռն արտադրութեանց թէ քանակութեամբն և թէ որակութեամբը։ Երկրորդ՝ որ եթէ շատերն էլ, իրաւի, նկատէին իրերի այս աննախանձելի դրութիւնը, այնու ամենայնիւ այս փաստը իբրև ճշմարտութիւն ոչ միայն կարելի էր, այլ և հարկաւոր էր կրկնել ու պնդել թէև հարիւր անգամ։ Ի՞նչ արած որ մենք դեռ ևս այն աստիճանի վերայ ենք, որ մի և նոյն ճշմարտութիւնը մենք ստիպուած ենք հարիւր անգամ կրկնել, մինչև որ յոյս ունենանք թէ հա՛, վերջապէս խօսքս հասկացող գտնուեցաւ։ Ահա՛, օրինակ, մի լրագիր իւր հիմնուելու օրից սկսած 10—15 տ. շարունակ մի տարրական գաղափար է կամենում արծարծել հայ հասարակութեան մէջ, ոչինչ չէ դուրս գալիս և նա միշտ կրկնում է. «Այսքան տարի մենք այս բանը մեկնում ենք մեր խաւարամիտ եղբայրներին, բայց նոքա ոչինչ չեն կամենում հասկանալ»։ Խօսք

չկայ 'ի հարկէ թէ որքան առողջամիտ ու նպատակայարմար կարող են լինել լրագրի առաջարկութիւնները. փաստը փաստ է, և ընդհանակը՝ կարծես թեթևամիտ գաղափարների կարթը աւելի ձուկն է որսում մեզանում. հայի դարերով կարծրացած խելքը նրբութիւնների, «խրթին բառերի» հետ շատ սէր չունի... իսկ ինչ վերաբերում է գրականութեանը, պարզ է որ նա հայի հասարակական կեանքի մէջ վերջին տեղն է բռնում, և դեռ շատ ու շատ բան մեզ համար գոյութիւն չունի այս ասպարիզում։ Ինչո՞ւ հեռու գնանք. մի բան որ լուսաւորեալ ազգերի համար վաղուց հաստատուած ճշմարտութիւն է, որի առթիւ վիճաբանութիւն անգամ տեղի ունենալ չէ կարող, և ով որ այդ պիտի կասարէ, առանց երկար ու բարակ մտածելու իւր գործն է տեսնում ընդունուած ճշմարտութիւն համարելով այդ բանը,—մեզանում անօգուտ, մինչև իսկ վնասակար է ճանաչվում... մի խմբագրի կողմից։ Խօսքս թարգմանութիւնների մասին է. ընդունուած բան է որ նոր ստեղծուող գրականութիւնները սովորաբար սկսում են հարստանալ թարգմանութիւններով, փոխառութեամբ աւելի ճոխ օտարազգի գրականութիւններից, քանի որ իւր ինքուրոյն պաշարը աղքատ է։ Ռուսաց գրականութիւնը (գրակ. ասելով հասկանում ենք belles lettres, изящная литература) այսօր շատ պատուաւոր տեղ է բռնում Եւրոպական գրականութիւնների շարքում. բացի 40-ական ու 60-ական թուականների կաճառի փայլուն աստղերը, ռուս գրականութիւնը այսօր էլ բազմաթիւ երիտասարդ տաղանդաւոր ոյժեր ունի, որոնց բեղմնաւորութիւնը հարկաւ մերոնցի նման չէ որ մի 2—300 երեսանոց տետրակով գրեթէ կէս դարու գրականական գործունէութեան յօբելեաններ են տօնում։ Այսու ամենայնիւ, նայեցէ՛ք թէ ի՛նչպէս ամէն կողմից գանդատ է լսվում թէ ռուս գրականութիւնը անկեալ վիճակի մէջ է, նայեցէ՛ք թէ տարին քանի թարգմանական վէպ է տպագրվում թէ առանձին գրքերով և թէ հաստափոր ամսագրներում, որոնք իրանց ստիպուած են համարում գոնէ թարգմանութիւններով լրացնել ինքնուրոյն բելլետրիստիկայի պակասը։ «Вѣстникъ Европы», «Сѣверный Вѣстникъ», «Русская Мысль», «Русскій Вѣстникъ», «Наблюдатель» և այլն, բոլորն էլ ամիս չէ լինում որ մի երկու թարգմանական վիպասանութիւն չտան։— Իսկ մեզանում դեռ թարգմանութիւնների նշանակութիւնը հերքողներ կան, մեզանում՝ որ մինչև այսօր չգիտենք թէ ի՛նչ է

օրինակ ասած բանը գրականութեան մէջ. և ճշմարիտ, մի՞թէ կայ մեր հեղինակների մէջ մէկը, որ անկեղծութեամբ, ձեռը սրտին դրած պնդէ թէ իւր այս կամ այն գրուածը օրինակ է համարում, այսինքն այնպիսի մի գրուած, որին հետագայ սերունդը արժանի համարէր նմանելու, իբրև օրինակ ընդունելու։ Ո՞չ ապաքէն ասածիս ապացոյց է և այն հանգամանքը որ մինչև օրս մենք գրականական ոչ մի շկոլա չունինք ոչ բելլետրիստիկայի, ոչ բանաստեղծութեան մէջ. կան, այո, պնդողներ որ մեր բանաստեղծութիւն ստեղծողը Գամառ-Բաթիպան է, որ բոլոր մնացեալ բանաստեղծները նորա հետևողները, նորա աշակերտներն են, ուրեմն կայ մի Գամառ-Բաթիպայի շկոլա: Բայց թէ ի՞նչ հիման վերայ են այս պնդում, մեզ յայտնի չէ, և շատ հետաքրքրական կըլինէր լսել թէ որ չափով և ինչպէս մեր բանաստեղծներից իւրաքանչիւրի ուղղութիւնը կապուած է Գամառ-Բաթիպայի գործունէութեան հետ, որն է նորա ստեղծած շկոլան և թէ, վերջապէս, ինչպէս են հասկանում գրականական շկոլա ասած բանը։ Մենք գոնէ հայ գրականութեան մէջ բնաւ մի որ և է շկոլա չենք գտնում և շատ յաւում ենք։ Մենք գիտենք միայն որ այն մարդիկը, որոնցից ամենայն իրաւունքով սպասում ենք նորանոր լուրջ երկեր, լռել են վաղուց և համարեա ոչինչ չեն արտադրում։ Պռոշեանցը, կարծես բաւականանալով «Սօս ու Վարդիթերովը», «Կռուածաղկովն» ու «Հայի խնդրովը», այսօր երկրորդ տպագրութեամբ հրատարակելով իւր առաջին վիպասանութիւնն կամենում է յիշեցնել իւր գոյութեան մասին. Աղայեանցը շատ վաղուց է որ էլ վէպեր չէ գրում և նոյնպէս կարծես «Արութիւն և Մանուէլի» հրատարակութեամբ կամենում է ցոյց տալ հայ հասարակութեանը որ գեղեցիկ վիպասանութիւններ գրելու էլ ընդունակ է. իսկ Գամառ-Բաթիպայի քնարը լուռ է «փորձի» դադարելու օրից [1]։

Բացի այս բոլորը՝ սաստիկ զգալի է մեր գրականութեան մէջ կրիտիկայի կատարեալ բացակայութիւնը (մեր խօսքը գրականական կրիտիկայի մասին է). մեր բոլոր գրականութեան մէջ առ հասարակ մենք երկու-երեք յօդուած հալիւ կարողանանք ցոյց

---

[1]) Այս տողերը գրելու միջոցին մեզ հասաւ այն անփոխարինելի կորուստի լուրը, որ հայ գրականութիւնն ունեցաւ Բաֆֆիի մահուամբ, Բաֆֆիի որ քանի տարի է մեն-մենակ տանում էր իւր ուսերի վերայ ամբողջ հայկական բելլետրիստիկան. եթէ վերջին 5—6 տարին Բաֆֆին չլինէր, պիտի կարծէինք թէ վիպագրութիւնը դուրս է ձգուած հայ գրականութիւնից։

տալ, որ փոքր 'ի շատէ նմանում են կրիտիկայի, իսկ մնացեալ «քննադատական» կամ «մատենախօսական» կոչուած յօդուածները ամենապարզ ռէցէնզիաներ են, այն էլ մեծ մասը խիստ վայր 'ի վերոյ։ Լուրջ կրիտիկայի բացակայութիւնից է որ այսօր մեր գրականութեան մէջ ոչ մի էսթէտիքական տեսութիւն (թէօրիա), ոչ մի գրականական ուղղութիւն չկայ. մեր գրականութիւնը դեռ կարօտ է այն տարրական տեղեկութիւններին, որ Եւրոպական ամէն մի մատենագրութեան տեսութեան ձեռնարկի մէջ կարելի է գտնել։ Եւ ինչո՞ւ զարմանանք, քանի որ լրագրներ ունինք, որոնք գրականական ու քաղաքական անունը կրելով հանդերձ՝ բելլետրիստիկայ ասած բանը դուրս են ձգում իրանց ծրագրից բոլորովին, կամ լրագրներ, որոնք լցվում են անգամ անալի «պատկերներով», «եղելութիւններով» և այլն, մինչդեռ խմբագրական «զամբիւղի» մէջ տարիներով անտիպ են մնում օտարազգի առաջնակարգ հեղինակների գրուածները։

Ի՞նչպէս կարելի է յառաջդիմութիւն սպասել մեր գրականութիւնից, ի՞նչպէս կարելի է յուսալ որ մի օր մեր ընթերցող հասարակութեան ճաշակը զարգանայ այնպէս, որ ինքն էլ կարողանայ մօտաւորապէս հասկանալ, որոշել թէ ո՞ր գրականական աշխատութիւնն է լաւ և ո՞րը վատ, քանի որ ոչ մի գրականական երևոյթ մեզանում չէ արժանանում ազգի բանիմաց անձանց ուշադրութեանը։ Օրինա՞կ էք կամենում—համեցէ՛ք. Գամառ-Բաթիպային թէ խօսքով, թէ գրով ամենուրեք հայոց առաջին բանաստեղծ են հռչակում, «դարուս ամենամեծ հայ բանաստեղծ» են անուանում, բայց ո՞վ մինչև այսօր մի խօսք ասաց թէ ի՞նչով է նա մեր առաջին բանաստեղծը, ո՞վ յոյց տուեց հասարակութեանը նորա նշանակութիւնը, նորա ամենամեծ հայ բանաստեղծ լինելը։ Տարօրինակ բան չէ՞ որ մի ազգի «ամենամեծ բանաստեղծը», որ ամբողջ 35—40 տարի գործում է գրականական ասպարիզում, դեռ ոչ մի լուրջ քննական ուսումնասիրութեան չէ արժանացել։ Ո՞վ է մինչև այսօր երկու տող բան գրել Պուշեանցի, Աղայեանցի և ուրիշ շատերի գրականական գործունէութեան մասին. բայց չէ՞ որ սոքա ընդհանուրի սէրն ու համակրութիւնը վայելող անձնաւորութիւններ են։ Կամ երևակայեցէ՛ք որ լոյս է տեսնում մի երիտասարդ հեղինակի, օրինակ, Շիրվանզադէի (որ, անտարակոյս, տաղանդաւոր վիպասան է) նոր աշխատութիւնը. ի՞նչպէս է վերաբերվում մեր մամուլը այդ նոր գրուածքին։ «Շնոր-

հակալութեամբ ստացանք Շիրվանզադէի նոր վէպը, «Ղամուս» վերնագրով. գիրքը տպուած է այստեղ կամ այնտեղ, արժէ այսքան կամ այնքան» և այլն. ահա մեր թերթերի սովորական ռէցենզիան էլ կրիտիկան էլ և ամէն բան, ինչ որ կամենում էք։ Եթէ աւելի լաւն էք ուզում՝ մենք այնտեսակ խմբագրներ էլ ունինք, որոնք կարող են լոյս չտեսած գիրքն էլ հայհոյել և գիրքը չկարդացած, երեսը չտեսած՝ հրատարակողին անընդունակ անուանել...

Այս բոլորից յետոյ կարծում ենք որ հայ գրականութեան ամէն մի նախանձախնդիր սրտացաւ անձն պիտի ուրախանայ, երբ հայերէն լեզուով գրած գրքեր են լոյս տեսնում, որ նպատակ ունին ծանօթացնելու հայ հասարակութիւնը Եւրոպական կլասսիկների հետ։ Այս տեսակ գրքերից է մեր հանճարեղ դերասան Պ. Հ. Ադամեանի գիրքը «Շէքսպիր և իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները», որ լոյս տեսաւ անցեալ տարի և որ վերոյիշեալ տեսակէտից արժանի է լուրջ ուշադրութեան։

Պ. Ադամեանի գիրքը, որ ինքնըստինքեան մի շատ ուրախալի երևոյթ է մեր ազգատիկ գրականութեան մէջ, տարօրինակ վիճակ ունեցաւ. ոմանք անպայման կերպով և զարմանալի անբարեխղճութեամբ ցեխի հետ հաւասարեցրին նորան, իսկ ոմանք խիստ գովեցին առանց մի խօսք թոյլնելու բերաններից գրքի բովանդակութեան մասին։ Հայհոյողը եղաւ «Արձագանքը», գովաբանող՝ «Աղբիւրն» ու «Մշակը» որ սակայն առաջնի հայհոյանքը մատնացոյց անելով ու պախարակելով՝ իւր կողմից միայն «գեղեցիկ» անուանեց պ. Ադամեանի գիրքը և դորանով բաւականացաւ։

Բայց այս գիրքը արժանի է որ նորա մասին մի փոքր աւելի լրջութեամբ խօսուէր և չնայելով որ նա անցեալ ամառ է լոյս տեսել, մենք աւելորդ չենք համարում մեր մի քանի համեստ կարծիքը և այժմ յայտնել նորա մասին, առանց կրիտիկոսի որ և է պրէտենզիա ունենալու [1]։

Ամենից առաջ ցաւալի է որ պ. Ադամեանի գիրքը մի շտապով կատարած գործի տպաւորութիւն է անում, մանաւանդ որ մեզ յայտնի է թէ ինչպէս լաւ ծանօթ է պ. Ադամեանը Շէքսպիրի

---

1) Ցոդուածիս պատմական մասի համար օգտվում ենք գլխաւորապէս Տէնից՝ Դաուդէնից և Ժէնէից։

գրականութեան հետ, հետևապէս և, եթէ կամենար, անհամեմատ աւելի մանրամասն տեղեկութիւններ կարող էր հաղորդել հայ հասարակութեանը «Համլէտի» հեղինակի մասին։

Մենք կարծում ենք որ նուիրելով հայ ընթերցողներին առաջին գիրքը Շէքսպիրի մասին, աւելորդ չէր լինի գոնէ համառօտ կերպով նկարագրել անգլիական գրականութեան վիճակը նորանից առաջ և Շէքսպիրի ժամանակակից հասարակութիւնը, աւելի մանրամասնօրէն խօսել նորա դարու թատրոնական գործի մասին և մի փոքր աւելի ընդարձակել նորա կենսագրութիւնը։

Թատրոնական ներկայացումների առաջին նշանները եղել են Անգլիայում դեռ XII դարում, երբ ներկայացնում էին միստերիաներ և «միրակլ» (հրաշք) ասուած թատերական հանդէսները (miracle-plays): Այս ներկայացումների բնաւորութիւնը հետզհետէ փոփոխուելով, XV դարում ստանում են «moral-plays» (բարոյական ներայացումներ) անունը, այս «բարոյական» ներկայացումների հետ միասին մինչև XVI դարը հասան և «միստերիաները»։ Խօսք չկայ որ այս բոլոր ներկայացումները բոլորովին անմշակ են եղել գրականական տեսակէտից և զուրկ որ և է գեղարուեստական նշանակութիւնից, բայց անգլիական դրամայի համար սոքա ունեցել են իրանց պատմական նշանակութիւնը։ Այս ներկայացումներն են եղել որ այդ հին դարերից արդէն սկսած զարգացրել են անգլիական հասարակութեան սէրը դէպի թատրոնը։ Եւ ահա մենք արդէն XV դարու կիսին Անգլիայում դերասանական դասակարգ ենք տեսնում։ 1464 թ. պարլամենտի մի արձանագրութեան մէջ յիշվում են «players of interludes» (ինտերլիւդիաների դերասաններ). Ռիչարդ III, դեռ Գլօստերի դուքս եղած ժամանակն ունեցել է իւր դերասանական խումբը։ XV դարու վերջերումն Անգլիայի բոլոր ծայրերումն արդէն թատերական ներկայացումներ յայտնի են. կան շատ դերասանական խմբեր—«the Ring's players», «the Prince's players», «the players of the Chapel» և այլն։

Բայց այս բոլոր ներկայացումները զուտ բիբլիական բովանդակութեամբ են եղել մինչև Ջօն Հէյվուդ († 1565) որ առաջինը ժողովրդական տարր մուցրեց թատրոնական ներկայացումների մէջ. այս ոգով գրած պիէսներից յայտնի են «Ռօլֆ Ռոյստէր Դոյստէր» Ն. Իւդոլլի և մանաւանդ «Ֆեռէքս և Պոռէքս» (Հորդորուկ) որ տպագրուեցաւ 1565 թ. Այս ժողովրդա-

կան պիէսները դեռ շատ կոպիտ են և անմշակ, և ահա հանդէս է գալիս Ջօն Լիլլին որ մեղմացնում է սոյա գռեհկական կոշտութիւնը։ Լիլլիից յետոյ յայտնի է, ըստ Նաշի և Մէլօնի, Թ. Կիդի «Սպանիական Ողբերգութիւնը» որ հարուստ է սոսկալի արիւնհեղութեան տեսարաններով։ Այս ողբերգութիւնն է որ «Համլէտի» վիճելի աղբիւրներից մէկն է համարվում. սորա նմանութիւնը «Համլէտի» հետ այն է գլխաւորապէս որ այստեղ էլ կայ կեղծ խելագարութիւն վրէժխնդրութեան նպատակով և թատրոնական ներկայացում բեմի վերայ, ինչպէս «Համլէտի» երրորդ արարուածի մէջ։ Այս սարսափելի տեսարաններով լի ողբերգութիւնների տարածման առաջն առնել են կամենում Պիլ, Լօջ և ուրիշները, այլաբանութիւն (ալլեգորիա) մտցնելով իրանց գրուածների մէջ։ Բայց սոցանից աւելի մեծ քայլ առաջ է անում Ռ. Գրին, որի լեզուն արդէն անհամեմատ աւելի մաքուր է և բնական։ Այս հեղինակների պիէսների ներկայացումը համարեա ընդհանուր է եղել մօտ տաս տարի, մինչև 1590 թ. և այդ տասնեակ տարին պարարտ հող է պատրաստել Շէքսպիրի ճնաշխարհիկ հանճարի զարգացման համար։—Շէքսպիրի ծնած տարին, 1564 թուականը, պարգևում է Անգլիային մի ուրիշ բանաստեղծական հանճար, որի բուռն երևակայութեան թռիչքը և հզօր խանդը շատ նշանաւոր քննադատներ ստոր չեն դասում Շէքսպիրի քանքարից։ Բայց դժբաղդաբար Խրիստոֆոր Մառլոու դեռ հալիւ երեսուն տարեկան մեռնում է 1593 թ., ունեցած կեանքն էլ մի տարօրինակ կերպով մաշելով։ Սորա ողբերգութիւններից նշանաւորներն են. «Ցամերլան», «Մալտայի Հրէան», «Ֆաուստ» և «Եդուարդ II»։

Մենք շատ համառօտ առաջ բերինք այն շրջանի պատմութիւնը, որ աւելի ընդարձակ կ'ուզէինք տեսնել պ. Ադամեանի գրքի մէջ։ Այդ գրականական շրջանը այսպէս թէ այնպէս մեծ կապ ունի Շէքսպիրի գործունէութեան հետ, և այդ հարկաւոր էր առաջ բերել այն գրքի մէջ, որ առաջին անգամ հայերէն լեզուով ճառում է մասնաւորապէս Շէքսպիրի մասին։

Այժմ մի քանի խօսք Շէքսպիրի կենսագրութեան առիթով։

Մենք բոլորովին համաձայն ենք պ. Ադամեանի հետ որ Շէքսպիրի կեանքի շատ հետաքրքրական մանրամասնութիւնները չեն կարող մեզ լաւ ծանօթ լինել, որ նոքա մեզ համար կորած են ընդ միշտ։ Այսու ամենայնիւ պ. Ադամեան կարող էր աւելի

տեղեկութիւններ հաղորդել Շէքսպիրի կեանքի ու գործունէութեան մասին. փոյթ չէ եթէ նոցանից շատերը մինչև այսօր էլ դեռ վիճելի են. այդ ձևով էլ թող հաղորդուէին հայ հասարակութեանը։ Եթէ այդ անմահ հանճարի մասին եղած ամէն մի աննշան անեկդոտ գրաւում է լուսաւորեալ աշխարհի ուշադրութիւնը, մենք գոնէ հետաքրքիր պիտի լինինք իմանալու նորա կեանքի շատ կողմերը, թէև սոքա վիճելի լինին։

Յայտնի է որ Շէքսպիրի ժամանակակիցները շատ փոքր համարում ունէին նորա ուսումնականութեան վերայ. այս կարծիքը տարածուեցաւ մանաւանդ Շէքսպիրի աւելի ուսումնական բարեկամի Բէն Ջոնսոնի յայտնի խօսքերի հիման վերայ թէ՝ «Շէքսպիր սակաւ ինչ լատիներէն գիտէր և աւելի սակաւ յունարէն»։ Բայց թէ Շէքսպիրի գրականական գործունէութիւնից և թէ նորա ժամանակի դպրոցական պայմաններից երևում է որ վերոյիշեալ կարծիքը չափազանցացրած է։ Այն ժամանակուան դասաւանդութեան սիստեմով նախ քան յունարէն լեզուն և գրականութիւնն ուսումնասիրելը, պէտք էր արդէն բաւականաչափ ծանօթ լինել լատիներէն լեզուի և գրականութեան հետ. հիմայ ի նկատի ունենանք որ Շէքսպիրը արտակարգ ընդունակութիւնների տէր էր և եօթ-ութ տարի դպրոցումն է (դպրոցից դուրս է եկել 16 տարեկան) եղել (այն ժամանակուան գիմնազիոնում)։ Պարզ է, որ նա մի յայտնի գումար տեղեկութիւն պիտի դուրս տանէր դպրոցից կլասսիքական գրականութեան մասին։ Յունարէնից նա կարող էր գուցէ դժուարանալ. օրինակ, Պլուտարքոս կարդալու համար նա մեկնութիւններ է խնդրել Նորթից (North), բայց լատիներէն նա անշուշտ կարող էր կարդալ։

Յայտնի չէ թէ որքան ճիշդ է, Մէլոն հաղորդում է որ դպրոցից դուրս գալուց յետոյ և մինչև իւր ամուսնանալը, Շէքսպիր պարապել է իրաւաբանութեամբ, իսկ Օբրին (Obrey) ասում է որ նա գիւղական դպրոցի ուսուցիչ է եղել։ Բայց այս բոլորիցն աւելի նշանակութիւն է ունեցել Շէքսպիրի հանճարի զարգացման համար անշուշտ այն հանգամանքը որ Ստրատֆորդում յաճախ էին լինում դերասանական խմբեր, որոնք քաղաքից քաղաք թափառելով իրանց ներկայացումներն էին տալիս։ Այսպէս Ստրատֆորդում 1569 թ. եղել են «Queen's players» և «Earl of Worcester» դերասանական խմբերը (թագուհու և կոմս Ուորչեստերի). ճիշդ տեղեկութիւններ կան այդ դերասանների

Ստրատֆորդ այցելելու մասին 1573 և 1576 թթ։ Ստրատֆորդ յաճախ եկել են կոմս Ուորչեստէրի, լորդ Բատտլէտի, կոմս Էսսէքսի և այլ դերասանական խմբեր։ 1854 թ., երբ Շէքսպիր 20 տարեկան է եղել, Ստրատֆորդ եկել են իրար յետևից թագուհու, կոմս Ուորչեստէրի և կոմս Էսսէքսի խմբերը։ Եւ քանի որ յայտնի է, թէ Շէքսպիրի հայրը նորան դեռ մանուկ եղած ժամանակը հետը տանում էր քաղաքային խորհրդատունը, ուր յիշեալ դերասանական խմբերը տալիս էին իրանց ներկայացումները, մենք համարձակ կարող ենք ասել որ այդ ներկայացումները ամէն բանից աւելի ազդեցութիւն կարող էին ունենալ Շէքսպիրի ի բնէ վառ երևակայութեան վերայ և պատրաստել նորա հոգում այն նիւթը, որ առաջին կայծիցը բորբոքուեցաւ և իւր անշէջ բոցովը լուսաւորեց թէ Անգլիան և թէ բոլոր Եւրոպան։

Պ. Ադամեան իբրև Շէքսպիրի Լօնդոն հեռանալու պատճառ յիշում է միայն նորա ընտանեկան նեղ վիճակը նիւթականի կողմից, «ապրուստի անհրաժեշտ հոգսերը»։ Անշուշտ այս գլխաւոր պատճառներից մէկն է եղել. բայց մի հանգամանք էլ կայ որ թէպէտ Շէքսպիրի ժամանակակիցների հայեացքովը ստուեր կարող է ձգել Նորա վերայ, ինչպէս օրէնքի հակառակ գործ, բայց մեր տեսակէտովը խօսք չկայ որ ոչ մի նշանակութիւն չունի Շէքսպիրի բարոյական յատկութիւնների գնահատութեան գործում։ Բանն այն է որ ըստ Ռոուի, Դէվիսի, Ջոնսի և այլոց Շէքսպիր ստիպուած է եղել հեռանալ Ստրատֆորդից իւր արած բրակոնիէրութեան համար Թոմաս Լիւսիի կալուածումը, Զարլկոտում, Ստրատֆորդի մօտ։

Թ. Լուսին հալածում է պատանի Շէքսպիրին. սա մի պասկուիլ է գրում աղնուազարմ կալուածատիրոջ վերայ. վերջինը իւր հալածանքը այն տեղն է հասցնում, այս պասկուիլիցը կատաղած, որ Շէքսպիր ստիպուած է լինում հեռանալ իւր ծննդավայրիցը։ Մէյօն, Նայտ և ուրիշները կամենում էին հերքել այս փաստը, իբրև Շէքսպիրին արատաւորող մի ստապատիր զրպարտութիւն, բայց Հոլլիուէլ (Halliwall) հաւատարիմ աղբիւրներից քաղած տեղեկութիւնների հիման վերայ ապացուցանում է այս փաստի ճշմարտութիւնը։

Բացի հօր դրամական նեղ վիճակը և այս հանգամանքը, Շէքսպիրին Լօնդոն կարող էին ձգել և նորա կապերը մայրաքաղաքի յայտնի թատերասէրների և դերասանների հետ. հոչակաւոր

Ռիչարդ Բեօրբէջ (R. Burbage) և Հէմմինգ (Hemming) Ստրատֆօրդցի են եղել, և Բեօրբէջի հայրը 1574 թ. անդամ է եղել կոմս Լէյստէրի դերասանական խմբի որ յետոյ ստացաւ «Լօրդ կանցլէրի ծառաներ» անունը (the lord chamberlaine's servants):

Մեր խօսքը մինչև այժմ եղել է պ. Ադամեանի գրքի առաջին մասի առիթով. թոյլ ենք տալիս մեզ մեր կարծիքը յայտնել և գլխաւոր նիւթի, «Համլէտի» առիթով։ Պ. Ադամեան առաջ բերելով Սաքսօն Գրամմատիկոս Ամլէտի մի սովորութիւնը թէ «երբեմն ծալապատիկ կընստէր վառարանի մօտ, ձեռքերը մոխրին մէջ, երբեմն էլ փայտի կտորները սուր կըտաշէր և այրելով կըպնդացնէր նոցա ծայրերը», նկատում է որ «այս տեղեկութիւնից է վերցրել «լինիլ թէ չլինիլ» մենախօսութեան մէջ ձեռքը մի դաշոյն բռնած բեմ դուրս գալը»։ Զգիտենք այս որ «շատերին անհասկանալի է թուած», միայն կարծում ենք որ առանց պ. Ադամեանի բացատրութեան էլ (որ կարող է և աւելորդ համարուիլ), բաւական է տեսնել այդ մենախօսութիւնը կատարուած երկու կերպ, առանց դաշոյնի և դաշոյնը ձեռին, որ մարդ համոզուի թէ այդ փոքրիկ նորամուծութիւնը որչափ օգնում է աւելի ռէլիէֆ, աւելի կենդանի կերպով ըմբռնելու Համլէտի ալեծուփ հոգեկան էջերը, այն անհուն տարակուսանքը, և՛ հաւատը և յուսահատութիւնը, և՛ ապրելու ցանկութիւնը իւր սրբազան նպատակի համար և՛ «մի հարուածով հանգիստ գտնելու կարելիութիւնը», որ յուզում են նորա միտքն ու սիրտը։

Այստեղ մի խնդիր կայ միայն որի այս կամ այն կերպ լուծելուցն է կախուած դաշոյնով կամ առանց դաշոյնի դուրս գալու մեկնութիւնը. այդ խնդիրը հետևեալն է։ Ոմանք Համլէտին ընդունում են ընդհանրապէս փիլիսոփայ մարդ և «լինիլ թէ չլինիլը» մի փիլիսոփայական մենախօսութիւն կեանքի չարեաց մասին ընդհանուր մտքով և ոչ միայն իւր (Համլէտի) վերաբերութեամբ. այսպէս մտածողները առ հասարակ «Համլէտը» մի փիլիսոփայական գրուածք են համարում, մի տեսակ այլաբանութիւն նման Գէօթէի «Ֆաուստին»։ Ոմանք էլ Համլէտին հասարակ մահկանացու են համարում, մարդկային բոլոր արժանաւորութիւններով ու թերութիւններով, որի միտքը փիլիսոփայական զարգացումն է ստացել, որ սովորել է լրջութեամբ քննել թէ իւր անձը և թէ իրան շրջապատող կեանքի երևոյթները և այս պատ-

ճառով՝ աղնիւ սրտի ու մաքուր բնաւորութեան տէր լինելով չէ կարողանում դիմանալ իրան շրջապատող փչացած միջնոլորտի մէջ, մի խօսքով մի ռէալ տիպ և ոչ այլաբանական ներկայացուցիչ որ և է գաղափարի։ Եթէ երկրորդ կարծիքն ընդունենք, պարզ է որ շատ հասկանալի կըլինի «լինիլ թէ չլինիլ» մենախօսութեան մէջ Համլէտի դաշոյնը ձեռին դուրս գալը. այդտեղ Համլէտը մտածում է անձնասպանութիւն գործել, ուրեմն և հասկանալի է ձեռին դաշոյն ունենալը։ Մենք այս կարծիքն ենք ընդունում և ընդդէմ ենք առաջին կարծիքին այն պարզ հիման վերայ, որ Շէքսպիր խիստ ռէալիստ է բառիս աղնիւ և ընդարձակ մտքով. Օթէլլո, Արքայ Լիր, Ռոմէօ, Մակբէթ, Համլէտ, Յուլիոս Կեսար և այլն... այս բոլորը համամարդկային բարձր ռէալական տիպեր են և ոչ բնաւ այլաբանութիւն։ Շէքսպիրի այլաբանական գրուածները նորա համեմատաբար թոյլ աշխատութիւններն են։ Եւ եթէ նորա ամենաընտիր գործերի մէջ էլ կան զանազան ուրուականներ, դոքա միայն ցնցողութիւն է ժամանակին, որ արել է Շէքսպիր. այստեղ, ինչպէս և ուրիշ բաներում, նա ստիպուած յարմարուել է ժամանակի պահանջներին, ժամանակի ոգուն։ Միայն այս յարմարուելը, այս ցնցողութիւնը երբէք տիպերին չէ վերաբերել, այլ գլխաւորապէս բեմական էֆէկտներին։ Պ. Ադամեանն էլ Համլէտին բեմի վերայ ներկայացնում է մի խիստ ռէալ տիպ և այդպէս էլ հասկանում է ամբողջ ողբերգութիւնը. ուստի մեզ համար մի անսպասելի հակասութիւն է այն այլաբանական (եթէ կամենում էք մի փոքր էլ միստիքական) մեկնութիւնը, որով վերջացնում է պ. Ադամեան իւր գիրքը (եր. 112—113)։

Յայտնի է որ Շէքսպիր ոչ մի տեղ և ոչ մի պիէսի համար ցուցմունք չէ անում թէ դերասանը ինչպէս պիտի ներկայացնէ բեմի վերայ այս կամ այն գործող անձին. տաղանդաւոր դերասանը ինքը պիտի իմանայ թէ ի՞նչ և ինչպէ՞ս ներկայացնէ, ըմբռնելով գործող անձի ընդհանուր ոգին, մարմին տալով և շունչ փչելով ամէն մի խօսքին և մանաւանդ հիմնուելով իւր գեղարուեստական ճաշակի վերայ։

Պ. Ադամեան առաջ է բերում Մեղլէրից մի կտոր, ուր Ֆրանսիայի քննադատը համեմատելով Համլէտին Վերթէրի հետ, ասում է. «Վերթէր անձնասպան է լինում, սիրելով Շարլոտին, բայց այդ սէրը միայն իւր յուսահատութեան պատրուակն է. Շարլոտին եթէ ճանաչած անգամ չլինէր, դարձեալ անձնասպանութեամբ

պիտի վերջացնէր իւր կեանքը։ Նոյնպէս և Համլէտ, եթէ տեսած էլ չլինէր ուրուականին զարհուրելի տեսիլքը, ոչ աւելի երջանիկ պիտի լինէր և ոչ աւելի խաղաղ»։

Այս կտորի դէմ, ոտնակոխ անելով անձնաւորութեան ամենատարրական հոգեբանութիւնը, «Արձագանքի» ռէցէնզէնտը ասում է. «Ուրեմն պ. Ադամեան ոչինչի տեղ է դնում մարդուս կեանքի լաւ և վատ պարագաները, որոնցից այնպէս կախուած է մեր դժբախտութիւնը ու երջանկութիւնը» և իւր միտքը ապացուցանելու համար վկայութիւն է բերում Գերվինուսից թէ «Համլէտը երջանիկ կեանքի ազդեցութեան տակ կըլինէր ուրախ ու զուարթ և նորա մելամաղձութիւնը կըստանար մի խելացի էլէգիական բնաւորութիւն և որ եթէ նորա ճակատագիրը չըլինէր այնպէս անողորմ, նորա մէջ կըզարգանար խելացի թեթևամտութիւնը և բնաւորութեան զուարթութիւնը»։

Մենք առաջարկում ենք Մեզիէրի կամ Ադամեանի միտքը ապացուցանելու համար կարդալ նոյն Գերվինուսից առած հետևեալ կտորները. Շէքսպիրի հռչակաւոր քննադատն ասում է մի տեղ. Համլէտի հօրեղբօր եղեռնագործութիւնները գլխովին ճնշում են նորան (Համլէտին). ճիշդ է, այս թախծի բեռը մի ներդաշնակութիւն ունի այն բնածին հակման հետ դէպի զգայունութիւնը որ մենք նկատեցինք Համլէտի մէջ. նորա համար մի տեսակ վայելչութիւն է մռայլ պատկերներով զբաղեցնել իւր միտքը, մտածել անձնասպանութեան վերայ»։ Մի ուրիշ տեղ նոյն հեղինակն ասում է. «Նախքան ուրուականի Համլէտին վրէժխնդիր լինելու հրաւիրելը, և նորանից յետոյ էլ, կեանքը ճնշում է նորան որպէս անտանելի մի բեռն և շատ անգամ դրդում է նորան անձնասպանութեան վերայ մտածելու»։ Դարձեալ ասում է Գերվինուսը մի այլ տեղ. Համլէտ ներկայանում է մեզ իբրև մի իդէալիստ, որի ուժերիցը վեր է իրական աշխարհը, որին այդ աշխարհը մերժել է իրանից. «Համլէտի սիրտը այնպիսի դառնութեամբ լցրեց և զզուացրեց այս հանգամանքը, որ սորանից վնասուեցաւ անգամ նորա ազնիւ բնաւորութիւնը»։ Եւ իրաւի, մտադրութեամբ ուսումնասիրելով Համլէտի մտաւորականը և բարոյական մարդը, մենք կըտեսնենք որ նա ի՛նչ վիճակի մէջ էլ որ լինէր, նոյն մելամաղձոտ Համլէտը կըլինէր։ Մենք նշանակութիւն ենք տալիս մանաւանդ Գերվինուսի վերջին կարծիքին, թէ Համլէտ մի իդէալիստ է, ուժերիցը վեր է իրական աշխարհը, որին այդ աշխարհը մերժել է իրանից։ Ինչպէս երջա-

նիկ կըլլինէր Համլէտ, այդ քնքուշ կազմուածքով, խորին զգայնութեամբ, վսեմ լուսաւորութեամբ օժտուած, խորաքնին իմաստասէր, հզօր զգացմունքի, վսեմ մտքի և աղնիւ սրտի տէր Համլէտը շրջապատող տգեղ հասարակութեան մէջ, ուր տէր են պալատական սողուն թզուկները, Պոլոնիուսներն ու Օսրիկները։ Իւր չափազանց զարգացած ռէֆլէքսիայով և վերին աստիճանի նուրբ զգացողութեամբը, իւր տպաւորութեան դիւրամատոյց ջղերովը և փափուկ բնաւորութեամբը Համլէտ չէր կարող դիմանալ պալատական ինտրիգների ու շողոքորթութեան ասպարէզ դարձած կեանքի ճնշող ծանրութեանը. նա պիտի թառամ էր, եթէ հօր մահուան, մօր և հօրեղբօր եղեռնագործութեան արհաւիրքն էլ չթափուէր նորա գլխին, նա պիտի թառամէր այնպէս, ինչպէս որ կրնամրի ջերմոցում սնուցած մի վարդ թունաւորուած մթնոլորտում։

Առաջին գործողութեան երկրորդ տեսարանում, դեռ հօր ուրուականը չտեսած, Համլէտ իւր մենախօսութեան մէջ ասում է. «Ո՜հ, եթէ այս չափազանց ամուր մարմինը կարողանար հալուիլ և շոգիանալ որպէս ցօղ։ Կամ թէ Նախախնամութեան օրէնքով ստիպուած չլինէինք հեռու մնալ անձնասպանութիւնից.... Աստուած իմ, Աստուած իմ, ի՜նչ զզուելի է, քարասիրտ, ստոր և անպտուղ է իմ աչքումը այն ամէնը, ինչ որ կատարվում է այս աշխարհումը։ Այո՛, գարշելի է ինձ համար այս աշխարհը.... Այս մի խոպանացած պարտէզ է, ուր բոլորը, ինչ որ անգոսնելի է և կոպիտ, բեղմնաւորուելով արմատներ է արձակում, մինչև որ բոլորովին նորան խեղդէ»։ Համլէտի անձնական յատկութիւնները և նորան շրջապատող կեանքը ուսումնասիրելով, մենք կարող կըլլինինք ասել որ նա հօր մահից առաջ էլ այս յուսահատ պեսսիմիստիկական հայեացքը կ՚ունենար աշխարհի վերայ։ Համլէտ իւր մտաւոր և բարոյական արժանաւորութիւններովը այնքան բարձր է իւր շրջապատող կեանքից որ հաշտուել նորա հետ չէր կարող, և ինչո՞ւ պիտի կարծենք, որ միայն հօր մահն ու մօր անբարոյականութիւնը ստիպեցին մի բարձրագոյն ուսման և վսեմ զարգացման տէր երեսուն տարեկան երիտասարդին (Համլէտի 30 տարի լինելը կարծում ենք ամենահաւանականն է) յանկարծ այդպէս վատ աչքով նայել աշխարհի վերայ, եթէ միայն երբէք նա գեղեցիկ է համարել աշխարհն ու մարդիկ։ Համլէտ ոչ այնքան թեթևամիտ է մի կամ երկու, թէև ամենախոշոր դէպքի հիման վերայ

իւր անմեկին համոզմունքն ու աշխարհայեցողութիւնը փոխելու համար և ոչ այնքան եսական իւր անձնական թշուառութիւնն ու վիշտը ամբողջ աշխարհի ու մարդկութեան վերայ դարձնելու համար։ Ա. Մեղլէրի այս միտքը թէ՝ «երկուսն էլ (Համլէտ և Վերթէր) չափազանց շատ են քննում իրանց սեպհական անձնաւորութիւնը», պէտք չէ հասկանալ այսպէս, թէ այս մի եսական մարդու իւր անձովը զբաղուելն է, ոչ, այս մի շատ խղճմտաւոր փիլիսոփայի անձնաքննութիւնն է, այս սեպհական ներքին մարդուսումնասիրութիւն է, որի հետ զուգընթաց առաջ է գնում շրջապատող կեանքի և մարդկանց, լուսոյ և ստուերի մանրալնին վերլուծումը։ Այս չափազանց զարգացած անձնաքննութեան հետևանքն է ահա, որ Համլէտի ռէֆլէքսիան գերակշռում է նորա գործօն ոյժն ու եռանդը,— մի անհաւասարութիւն որ ամէն մի ձեռնարկութիւն (գործնական) զրկում է կենսական զօրութիւնից։

Համլէտի բնաւորութեան մասին այս բոլոր ասածներիս հիման վերայ մենք աւելի հակամէտ ենք ընդունելու Մեղլէրի որոշումը թէ «Համլէտ պատկանում է մարդկութեան այն դասակարգին, որոյ մեղամաղձոտ խառնուածքը և մտաց նուրբ թափանցողութիւնը աւելի ընդունակ, աւելի զգայուն են անում նոցա մարդկային ցաւոցը և վշտաց, քան թէ մեզ շնորհեալ բնութեան բարեացը»։

«Համլէտի» հինգերորդ արարուածում, մենամարտութեան տեսարանի մէջ, Թագուհին Համլէտին գեր է ասում. այս նկատողութեան հիման վերայ Շէքսպիրի քննադատները պնդում են որ Համլէտ անպատճառ գեր պիտի լինի։ Պ. Ադամեան տրամաբանօրէն և որ գլխաւորն է մեծ գեղարուեստական տակտով ու հասկացողութեամբ ապացուցանում է որ Համլէտին գեր չէ կարելի ներկայացնել։

Եթէ արդարև Բեօրբէջ, Համլէտի դերը կատարողը, «մարմնով մեծդի էր և գեր», մեծ հաւանականութեամբ կարելի է ասել որ Շէքսպիր միայն այդ հանգամանքին յարմարուելով Թագուհու բերանն է դրել թէ «Համլէտ գեր է»։ Ամենահանճարեղ բանաստեղծներն էլ միշտ այսպէս թէ այնպէս յարմարուել են իրանց ժամանակին, շատ անգամ գուցէ իրանց կամքին հակառակ զիջումներ են արել ժամանակի ոգուն, ժամանակակից հասարակութեան ճաշակին ու պահանջներին։

Դեռ թողնենք Համլէտի գիրութեան խնդիրը որ երկրորդական բան է. իսկական Համլէտը կարող էր և շատ գեր լինել և չոր

չոփ, զորանից Շէքսպիրի ողբերգութիւնը իւր նշանակութիւնը չէր փոխիլ։ Բանն այն է որ Շէքսպիր միայն այդպիսի գլխուներ չէ արել իւր ժամանակի պահանջներին, այլ շատ ուրիշ աւելի նշանաւոր խնդիրներում։

Մի քանի տարի սորանից առաջ, մինչև Ցէնի «Անգլիական գրականութեան պատմութիւնը» կարդալս, ես միշտ մնում էի մոլորուած Շէքսպիր ձեռս առած ժամանակ, միշտ ինձ ու ինձ հարցնում էի թէ ի՞նչպէս անմահ հանճարը կարողացել է իւր լոլոր ողբերգութիւնների մէջ կուտակել այնպէս բաղմաթիւ ամենասարսափելի եղեռնագործութիւններ ու արհաւիրք, այնչափ արիւնահեղ տեսարաններ. ի՞նչպէս է թոյլ տուել որ, օրինակ. «Համլէտի» մէջ պիէսայի վերջումը բոլոր գործող անձինք համարեա սպանվում են ու դիտապաստ փռվում բեմի վերայ, Պոլոնիուսն արդէն երրորդ արարուածումն է սպանվում, Օֆէլիան խելագարվում է և խեղդվում, Ռոզէնկրանց և Գիլդենստերն նոյնպէս սպանվում են Համլէտի շնորհիւ մինչև հինգերորդ գործողութիւնը։ Ինձ միշտ թուում էր, նոյնն էլ հիմայ եմ կարծում, որ այդ տեսակ մահուան զարհուրելի տեսարաններով լի պիէսները բեմի վերայ ներկայացնելով՝ միշտ խլում են նոցա գեղարուեստական արժանաւորութիւններից շատերը. մահը ինքն ըստ ինքեան մի էսթէտիքական բան չէ, և առաւել ևս այն սոսկալի մահը, որով մեռնում են սովորաբար Շէքսպիրի հերոսները։ Կարդալու ժամանակն իսկ այդ տեսարանները շատ անգամ վերաւորում են ընթերցողի էսթէտիքական զգացմունքը, իսկ բեմի վերայ տեսնելը միայն սարսափ է ձգում մարդու վերայ։ Ուրեմն, մտածում էի ես, ի՞նչպէս պէտք է մեկնել այս հանգամանքը, ի՞նչպէս չէ վերաւորուել Շէքսպիրի գեղարուեստական զգացողութիւնը, նորա նուրբ ճաշակը այս սարսափելի տեսարանները ստեղծելուս և ներկայացնելուս։ Ցէնի գիրքը կարդացի, հանելուկը լուծուեցաւ ինձ համար. Շէքսպիր ստիպուած է եղել, առանց այլևայլութեան, այդ ձևով գրել։ Բայլ առ քայլ հետևելով անգլիական ազգի կազմակերպութեան պրոցէսսին, գիտելով թէ ի՞նչ տարրերից է կազմակերպուել այդ ազգը, ի՞նչ պատմական պայմանների մէջ է զարգացել, — մենք կըհասկանանք թէ ինչո՞ւ անգլիական հասարակութիւնը XVI և XVII-դ դարերում Մառլոուի և Շէքսպիրի ստեղծած զարհուրելի տեսարաններից միայն կարող էր գոհ լինել։ Աւաղակաբարոյ նորմանդացիների և անգլօ-սաքսերի

արիւնն էր հոսում անգլիացու երակների մէջ. նորա բորբոքուած հարուստ և զօրաւոր երևակայութիւնը չէր կարելի գոհացնել մի պարզ ողբերգական կամ կատագերկական դրութեամբ, մի սովորական պիէսի բովանդակութեամբ։ Մեր ժամանակակից հեղինակների երբեմն շատ հասարակ մի փոքրիկ ընտանեկան փոթորիկ կերակուր չէր կարող լինել այն երևակայութեան համար, որ հասարակ տախտակէ պատերն ու յատակը, միայն մի պարզ վերնագիր կարդալով, կարող էր ընդունել ծովի, անտառի, սարի ու ձորի տեղ և կենդանի կերպով ներկայացնել և՛ մրրկայոյզ ալիք, և՛ դժուարակոխ մի մութ ծառաստան, և՛ մշուշապատ լեռներ, և՛ ամէն բան, ինչ որ դերասանները խնդրէին ներկայացնել։

Անգլիացու երկաթէ ջղերի համար էլ ուժեղ ցնցումներ էին հարկաւոր. նորան արեան տեսարաններ էին հարկաւոր որ թատրոնիցն հեռանալով հետը մի տպաւորութիւն տանէր։ Այդ ցնցումները նորան հարկաւոր էին այնպէս, ինչպէս որ այսօր, XIX դարու վերջում, երբ մենք այդ տեսակ արհաւիրքներին չդիմանալով, թատրոնում եղած ժամանակներս, ուշաթափվում ենք շատ անգամ, նոյն այս ընդհանուր թուլամորթութեան ժամանակ վայրենաբարոյ ապանացու համար հաց ու ջրի հաւասար հարկաւոր են պիկադօրների ու տօրէադօրների արիւնահեղ ներկայացումները, վայրագ ցլամարտը։

Եւ անշուշտ, եթէ Շէքսպիր ուրիշ ազգի ծնունդ լինէր և ուրիշ հասարակութեան համար գրէր, նորա գրուածքները աւելի մեղմ բնաւորութիւն կ'ունենային, և միայն Անգլիայի զաւակ կարող էին լինել և՛ Մառլօու, և՛ Շէքսպիր, և՛ Բայրոն։ Ահա՛ և Գերմանիայի պարծանքը, Գեօթէ և Շիլլէր, որոնք նոյնպէս բոլոր լուսաւորեալ աշխարհի սեպհականութիւն են, չունին ոչ Մառլօուի ու Շէքսպիրի ողբերգութիւնների բարդ ինտրիգն ու տիտանական վեհութիւնը և ոչ Բայրընի զգացմունքի և բուռն կրքի յաղթահարող կորովը։

Գերվինուս որ սովորութիւն ունի՝ Շէքսպիրի դրամաները քննադատելուս, գրուածքի հիմնական գաղափարը որոշելուց յետոյ՝ կատարուող բոլոր անցքերը և բոլոր գործող անձանց դրութիւնն ու պիէսի մէջ կատարուած դերը միայն այդ հիմնական գաղափարովը պայմանաւորել, ամէն մի փաստ, ամէն մի գործողութիւն և ամէն մի անձի բնաւորութիւն մեկնում է միայն այդ գաղափարովը։ Մեկնութեան այդ ձևը այնտեղն է հասնում որ, օրինակ,

«Վենետկի վաճառականի» մէջ և Լանչելոտտ Հոբբոյի և մինչև անգամ նորա ծերունի հօր գոյութիւնն ու դերակատարութիւնը պիէսի մէջ բացատրում է և պայմանաւորում է նորա հիմնական գաղափարովը։ Այսպէս է վարվում նա և «Համլէտի» վերաբերութեամբ. նորա հաւատացնելովը «Համլէտի» մէջ եղած բոլոր եղերական անցքերը, բոլոր սպանութիւնները բնականապէս ողբերգութեան գլխաւոր իմաստիցն են հետևում և նորա հետ են կապուած։

Դառնանք Համլէտի գիրութեան խնդրին։ Ինչպէս արդէն տեսանք, Շէքսպիր աւելի կարևոր բաներում ցնցումներ է արել իւր ժամանակին. ուրեմն անհաւանական մի բան չէ եթէ Շէքսպիր «ոչ թէ անհոգութեամբ, այլ միմիայն հանդիսականաց առաջ գիրութիւնն անմեղադրելի հանդիսացնելու համար (որովհետև բեօրբէջ «մեծդի էր ու գէր») Համլէտի մենամարտութեան տեսարանին մէջ, իւր մօրը թագուհւոյն խօսեցնում է, որ մի թաշկինակ առաջարկելով Համլէտին ասում է՝ «գէր է և շնչառութիւնը կարճ ու քրտնում է»։ Բացի այս մեկնութիւնը, մենք բոլորովին համաձայն ենք պ. Ադամեանի և հոգեբանական և գեղարուեստական տեսակէտից առաջ բերած բացատրութեան հետ որ Համլէտին գէր չէ կարելի ներկայացնել։ Պ. Ադամեան ասում է. «մտատանջութեամբ չարչարուող մարդկանց գէր և պարարտ լինելը բացառութիւն է». այս միտքը հոգեբանօրէն ճիշդ է, բայց Համլէտի վերաբերութեամբ սորա հետ կարող են համաձայն չլինել նոքա, որոնք պնդում են թէ Համլէտ երջանիկ և զուարթաբարոյ մի մարդ կըլլինէր, եթէ հօր սպանութիւնը և միւս դժբաղդութիւնները չպատահէին։ Ընթերցողը արդէն տեսաւ որ մենք վերջին միտքը ընդունողներից չենք, և Համլէտի վերաբերութեամբ էլ մենք համաձայն ենք պ. Ադամեանի կարծիքի հետ թէ «մտատանջութեամբ չարչարուող մարդկանց գէր և պարարտ լինելը բացառութիւն է»։

Իսկ գեղարուեստական տեսակէտից անտարակոյս է որ ամէն մի փոքր ի շատէ էսթէտիքական ճաշակով մարդ կրգերադասէ Համլէտին տեսնել բեմի վերայ վայելչակազմ, նազելի կերպարանքով, «խորհուրդ ճակատին, մտքով մոլորած», գունատ և նիհար, քան թէ հաստավիզ, հաստափոր և կարմրերես, ինչպէս մտածելու անընդունակ, անասնական կեանքով միայն ապրող մի կինտոս։ Նիհարութիւնը աւելի է համապատասխանում այն տպաւորութեանը, որ թողնում է մարդու վերայ Համլէտի անձնաւորու-

թիւնը պիէսի սկզբից մինչև վերջը։ Թող իսկական Համլէտը, Սաքսօն Գրամմատիկոսի Համլէտը գէր լինի և յաղթանդամ, բայց ոչ այդ է մեր էսթէտիքական ճաշակին համապատասխանում և ոչ էլ Գեօթէյի ուղածին պէս շիկահեր կ'ուզէինք տեսնել մեր Ադամեանին, և մանաւանդ որ Գեօթէյի կարծիքն էլ թէ «սևահեր մարդուց սպասվում է և մեծ վճռականութիւն և ճկունութիւն» մի անսխալական ճշմարտութիւն չէ։

Ես կասկածում եմ, արդեօք այդպէս կ'ասէր Գեօթէն եթէ մեզ հայերիս ճանաչէր. մենք Աստուծոյ տուածովը և սևահեր ենք և սևերես, բայց մինչև այժմ մեր որ գործի մէջ ենք մենք մեծ վճռականութիւն ցոյց տուել։ Վերջապէս դեռ ով գիտէ որ եթէ սևերես և սևահեր հային կամ իտալացուն կամ սպանացուն տային այն բոլոր մտաւոր և բարոյական յատկութիւնները և ապրեցնէին այն պայմանների մէջ, որի մէջ ապրում էր Համլէտ, հայը, իտալացին կամ սպանացին նոյնպէս համլէտանման մարդիկ չէին լինիլ. էլ այդ դէպքումը ի՞նչ նշանակութիւն պիտի ունենար մաղերի գոյնն ու կազմուածքը։

Պ. Ադամեան, առաջ բերելով Գր. Հիւգոյի կարծիքը անգլիացի հռչակաւոր դերասան Կինի խաղի մասին «Համլէտի» երրորդ արարուածի այն տեսարանումն, ուր իշխանը Օֆէլիային առաջարկում է վանք մտնել, կրկնում է Շէքսպիրի ֆրանսիացի թարգմանչի հետ թէ «Կինի այդ վարմունքը («մտիր կուսանոց» ասելուց յետոյ Օֆէլիայից հեռանալը, յանկարծ վերադառնալն ու ձեռքը համբուրելը) սաստիկ հակասական է»։ Այդ վարմունքը մեզ շատ սիրուն ու գեղարուեստական է թուում. պ. Ադամեանն էլ չէ հերքում, գոնէ ոչինչ չէ ասում այդ մասին։ Այժմ տեսնենք արդարանո՞ւմ է արդեօք այդ վարմունքը հոգեբանական տեսակէտից։ Գր. Հիւգօն «աղաւաղութիւն» է անուանում այդ վարմունքը և հակասութիւն. պ. Ադամեան համաձայն է նորա հետ։ Ինչ՞ումն է հակասութիւնը. մի՞թէ այն է հակասութիւնը որ Համլէտ «առ Օֆէլիա ուղղած կշտամբանքին», բեմիցը բոլորովին հեռանալուց առաջ, «այնպիսի խանդակաթ մեծարանօք» վերջ է տալիս։ Բայց մի փոքր խորը նայենք և տեսնենք, չէ՞ կարելի արդեօք ուրիշ մեկնութիւն տալ Կինի վարմունքին։

Առաջին արարուածի մէջ, երբ հօր ստուերը երևում է Համլէտին և երդուեցնում է նորան վրէժխնդիր լինել իւր մահուան համար, Համլէտ հօր «սիրելի՛դ իմ Համլէտ, մնաս բարեաւ, և յի-

չէ՛ր ինձ» խօսքերիցը յետոյ բացագանչում է. «Ես այժմեանից իսկ կընչնչեմ յիշողութիւնից գիտութեան բոլոր անմիտ խօսքերը, բոլոր բանաձևերը, բոլոր մանրաղնին եզրակացութիւնները, այն բոլոր տպաւորութիւնները որ պատանեկութիւնս և դիտողութիւններս են գրել յիշողութեանս տախտակների վերայ այնպիսի եռանդով. և այսուհետև քո ի՛նձ տուած աւանդը միայն պիտի պահեմ ուղեղիս սահմաններում, նորա տետրակներումն և էջերի վերայ»։ Այս խօսքերից յետոյ Համլէտ կամենում է ջնջել իւր մտքիցն ու սրտիցը ամէն բան որ իւր անմիջական նպատակին, այսինքն վրէժխնդրութեանը, չէ վերաբերում. նա միայն իւր հօր պատկերն է կամենում սրտումը պահել։ Նորանից պէտք է ենթադրել որ նա մոռցնելու է և իւր Օֆէլիայի վերայ ունեցած սէրը։ Քննադատներ կան, որոնք կամենում են ապացուցանել թէ Համլէտի սէրը մի վայր ի վերոյ զգայմունք է, ոչ լրջութիւն և ոչ խորութիւն ունի. այս եզրակացնում են նորանից որ պիէսի մէջ ընդհանրապէս մի տեսակ անախորժ սառնութիւն է նշմարվում Համլէտի և Օֆէլիայի յարաբերութիւնների մէջ։ Ճիշդ է, այս երկուսի յարաբերութիւնները փոքր ինչ տարօրինակ են, բայց պէտք չէ մոռանալ որ պիէսի մէջ մենք Համլէտին Օֆէլիայի հետ տեսնում ենք միայն այն անքնական դրութեան մէջ, որ ինքն Համլէտ ստեղծեց իւր կեղծ խելագարութեամբը, ուստի և Համլէտ երբէք իւր իսկական զգայմունքները չէ յայտնում Օֆէլիային և յարաբերութիւններն էլ ակամայ անքնական են։ Այս ձևով է վարվում Համլէտ երկրորդ գործողութիւնից սկսած և բոլոր գործող անձանց հետ, բացի Հօրացիոյից, իւր մտերիմ բարեկամիցը։ Օֆէլիայի առաջին խօսքերը պիէսի մէջ այն է որ նա գալիս է (II գործ.) և հօրը պատմում է թէ ինչ ձևով է մտել նորա մօտ իշխան Համլէտ, «կուրծքը բաց, առանց գլխարկի, գուլպաները կեղտոտ և առանց կապիչների, մինչև ոտի կոճերը ցած իջած, երեսը իւր շապկի քաթանից էլ սպիտակ» և այլն։ Այս տեղից սկսած և մինչև պիէսի վերջը մենք տեսնում ենք որ Օֆէլիան միշտ Համլէտին խելագարի տեղ է ընդունում։ Այս այսպէս լինելով՝ պարզ է որ Համլէտի Օֆէլիայի հետ ունեցած յարաբերութիւնները սկզբից մինչև վերջը կեղծեալ և անքնական են։ Հիմայ ի՞նչ տեղից ենք իմանում որ Համլէտ սիրում է Օֆէլիային։ Բացի այն որ այդ սիրոյ մասին մեզ ասում են ուրիշ գործող անձինք, օրինակ, նոյն այս յիշուած տեսարանում, Պոլոնիուսն հարցնում է

աղջկանը՝ «քեզ վերայ ունեցած սիրո՞ւցն է խելքը թռել», բայի այս և այս տեսակ ցուցմունքներն, ասում ենք, մենք կարող ենք Համլէտի սէրը նշմարել և ուրիշ տեղից։ «Լինիլ թէ չլինիլ» մենախօսութեան վերջը, երբ յանկարծ տեսնում է Օֆէլիային, Համլէտ, որ մենակ մնացած մեզ իւր սրտի անհուն վիշտն ու թախիծն էր պատմում, դեռ իւր խելագարութեան դիմակը երեսին դնել չկարողացած, դառնում է Օֆէլիային այսպէս. «Ա՛հ, այդ դո՞ւք էք, Օֆէլիա։ Ով յաւերժահարս, յիշի՛ր իմ մեղքերը քո աղօթքների մէջ»։ Այս միակ քնքուշ խօսքն է, կարելի է ասել, որ Համլէտ ուղղում է Օֆէլիային և նորա սէրը վկայող փաստերից մէկն է։ Մի քանի նախադասութիւնից յետոյ, Օֆէլիան Համլէտի տուած ընծաները վերադարձնելով ասում է. «Ձեզ լաւ յայտնի է որ դուք ինձ ընծաներ տուել էք, և ձեր ընծաները այնպիսի սիրալիր խօսքերով էիք դուք պատում, որ այն ժամանակն անգին էին այդ խօսքերը։ Այդ խօսքերի բուրմունքը չքացել է։ Ցետ ստացէ՛ք ուրեմն, իշխան, և ձեր ընծաները. *ղղացմունքների կորուստից յետոյ ամենահարուստ ընծան էլ իւր գինը կորցնում է*»։ Սիրած օրիորդիցն այսպիսի խօսքեր լսելը մահու չափ ծանր է. այս խօսքերից ամէն մէկը Համլէտի քնքուշ և սիրող սրտի համար մի մի սուր դաշոյնի հարուած է, և ահա նա դառնութեամբ լցուած, խեղդուելով այն սոսկալի վշտից, որ չէ կարող իսկութիւնը յայտնել Օֆէլիային, կարծես թէ ինքն իրան ասում է. «Հա՜, ուրեմն այս է եղել....»։ Սորանից յետոյ դարձեալ սկսում է իւր խառնափնդոր հարց ու պատասխանները, խեղճ Օֆէլիայի համար բոլորովին անակնկալ և վերաւորական հարցը տալով. «Դուք աղնի՞ւ աղջիկ էք»։ Մի աւելի զօրեղ ապացոյց էլ կայ Համլէտի սէրն ապացուցանելու համար, որ պ. Աղամեանն էլ է առաջ բերում. «Օֆէլիայի փակեալ դագաղի միայն երևոյթը պատառում է իւր սիրտը, որտեղից դուրս է ժայթքում այնքան ժամանակ այնտեղ ամփոփուած սիրոյ անզուսպ աղաղակը» (V-դ գործող.)։ Հիմայ երևակայեցէ՛ք այս սիրող Համլէտին, այն քնքուշ Համլէտին որ չդիմանալով իւր վերայ դրած ծանր բեռին, քայ-քայվում է բոլորովին, ինչպէս որ փշրվում է «նուրբ ամանը կաղնու հաստ արմատներիցը», երևակայեցէք, ասում եմ, այս Համլէտին հետևեալ տեսարանի մէջ. Օֆէլիայի առաջ կանգնած հարուած հարուածի յետևից թափում է խեղճ աղջկայ գլխին. «Եթէ քեզ համար անհրաժեշտ է ամուսնութիւնը, ամուսնացի՛ր յիմարի հետ,

որովհետև խելքները գիտեն թէ ի՛նչ հրէշ էք դարձնում դուք նոցա.... Աստուած ձեզ դեղեցկութիւն է տուել, դուք նորն էլ էք ձեզ համար հնարում. թուչկոտում էք, ծռմռվում էք, փսփսում էք և յիմարացնում Աստուծոյ արարածներին, ձեր դրդռեցուցիչ վարմունքը անգիտութեան քողով ծածկելով։ Հեռացի՛ր, էլ չեմ ուզում ես այդ. այդ էր իսկ որ ինձ խելագարեցրեց»։ Եթէ խելագարութեան դիմակը չլինէր, եթէ ինքն իրան այս անբնական դրութեան մէջ դրած չլինէր, կ'ասէ՞ր երբէք Համլէտ այս խօսքերը որ աւելի մի պոռնկի կը յարմարէին, քան թէ Օֆէլիայի պէս մի նաղելի արարածի։ Ո՛չ, մենք համոզուած ենք որ Համլէտ ինքն ամէնքից շատ է տանջվում այս խօսքերն ասելու ժամանակ. այս ասելով նա մի բարոյական անձնասպանութիւն է գործում. այս խօսքերն ասելու րոպէին նա ինքը շատ լաւ հասկանում է որ Օֆէլիան ոչ մի բանով չէ արժանացել այդ ծանր նախատինքին, որ նա, բացի այդ անարգանքից, տանջվում է և նորանով որ Համլէտի մտաւորականը բոլորովին քայքայուած է կարծում։ Այս այսպէս լինելով, ինչո՞ւ պիտի թոյլ չտանք, որ իւր խօսքերը վերջացնելուց [1]) յետոյ Համլէտ կարող էր ղղջալ և մի վայրկեան չկարողանալով զսպել իւր խանդակաթ սիրոյ բուռն ղգացմունքը, Օֆէլիայից հեռանալուց յետոյ, յանկարծ վերադառնար, նորա ձեռքը համբուրէր և նոր բոլորովին հեռանար բեմից, ինչպէս որ արել է Կին։ Հոգեբանական տեսակէտից այդտեղ ոչ մի հակասութիւն չկայ։ Մի՞թէ քիչ կը պատահի որ մէկը դիտմամբ իսկ (այս կամ այն նպատակով) իւր սիրած առարկային վերաւորելուց յետոյ, յանկարծ ղղջայ արածի վերայ և փաղաքշանքով ու համբոյրներով փարատէ թէ նորա և թէ իւր վիշտը։ Մեր կարծիքով Համլէտ հօր մահից ու մօր կրկին ամուսնանալուցն յետոյ աւելի ևս պիտի ղգար սիրելու և սիրուելու պահանջը. ոչ նորան կարող էր տալ այն քաղցր մխիթարութիւնը որ նա պիտի գտնէր անշուշտ Օֆէլիայի գրկումը, եթէ նորա դիմակը չլինէր, եթէ նա ստիպուած չլինէր, իւր խելագարութեան մասին կասկած չթողնելու համար, Օֆէլիայի առաջ էլ խելակորոյս ձևանալ։ Եւ այս բոլորից յետոյ նա սարսափելի կերպով անպատվում է իւր

---

[1]) «Հեռացի՛ր, էլ չեմ ուզում ես այդ. այդ էր իսկ որ ինձ խելագարեցրեց։ Ասում են քեզ որ ամուսնութիւն հարկաւոր չէ։ Ով որ պսակուած է, թող ապրի, բացի մէկից. մնացածները թող մնան, ինչպէս որ կան։ Կուսանոց, կուսանոց մտի՛ր»։

սիրած արարածին, տանջում է Նորան առանց որ և է պատճառի, վիրաւորում է Նորա ամենանուրբ զգացմունքը։ Ի՞նչ հակասութիւն կարող է լինել և ի՞նչ հոգեբանական անճշդութիւն, եթէ Համլէտ «մտի՛ր կուսանոց» խօսքերն ասելուց յետոյ, Օֆէլիայի ձեռքը համբուրէ, մի վայրկեան մոխրի տակ պահած սիրոյ կրակը բռնկելով։ Մեր խոնարհ կարծիքով այս թէ մի սիրուն դեղարուեստական տեսարան կըլլինէր և թէ մի պարզ, բնական, թէև անակնկալ, քնքշութիւն սիրած առարկայի վերաբերութեամբ։

Պէտք է մի բան էլ նկատել, որ ինքը պ. Ադամեան յիշեալ տեսարանը վերջացնում է խիստ նման կինին, այսինքն քնքշութեամբ. նոյնը վկայում է և պ. Ադամեանի ռուս քննադատներից մէկը. «Օֆէլիան լալիս է Նորան (Համլէտին) խելագար համարելով, իսկ Համլէտ տեսնում է այս արտասուքը, զգում է Նորա հոգու ցաւը, նա խղճում է Օֆէլիային, մօտենում է Նորան, քնքշութեամբ համբուրում է, երկար նայում է աչքերին, ուր ցոլանում է Օֆէլիայի խանդակաթ սէրը և տանջվում է սիրած աղջկանը վերջին մեաս բարևն ասելու համար» [1]։ Այս կերպ վերջացնելը եթէ մի բանով տարբերվում է կինի խաղից՝ այդ մի նրբութիւն է որ այժմ նկատել չենք կարող. բանն այն է որ երկուսն էլ մի տեսակ են հասկանում այս տեղը և քնքշութեամբ են վերջացնում։ Բնականաբար պէտք չէ կարծել թէ Կինն այստեղ սալօնի galant cavalier-ի ձևով է Օֆէլիայի ձեռքը համբուրել. ձեռք համբուրելը այն տեսակ պարզ քնքշութիւն կարող է լինել որ ոչ մի կերպ չի յիշեցնիլ այդ սալօնի էտիկէտը,—այդ միայն կատարելուցն է կախուած։

Վերջացնում ենք մեր յօդուածը, կրկին անգամ յայտնելով մեր ուրախութիւնը պ. Ադամեանի գրքի լոյս տեսնելու համար։ Մեր ամէն մխիթարութիւնից զուրկ գրականութիւնը թող մի բոպէ ոգի առնէ Շէքսպիրի հանճարի ստուերը վերան ընկնելով։ Ի սրտէ ցանկանում ենք օր առաջ հրատարակուած տեսնել պ. Ադամեանի և միւս գրուածները որ խոստանում է իւր գրքի յառաջաբանի մէջ։

Ս. ՓԻԼՈՅԵԱՆ. Կորած Մարգարիտ, վէպ-նկարագիր Նոր-Բայազէդի վարք ու բարքի։ Տփխիս, 1888. Գինն է 50 կոպ.

Պ. Փիլոյեան մի դժուար գործ է յանձն առել—միացնել ազգագրական նիւթերի հաւաքածուն վէպի հետ, վէպի ձևով Նոր-Բայա-

---

[1] *Ярышкинъ, Н. І. Адамьянъ въ роли «Гамлета».* Одесса, 1887 էջ 9.

զէդի վարք ու բարքի նկարագիրը տալ մեզ. այս նշանակութիւնն ունի երևի և գրքի մի փոքր տարօրինակ վերնագիրը։ Եթէ պ. Փիլոյեան կամեցել է Պոշեանի օրինակին հետևել վէպի ձևով մեզ ծանօթացնել Ն.-Բայազէդի տնային նիստ ու կացի, սովորութիւնների, հաւատալիքների հետ և այլն, մի բան ի նկատի չէ առել, որ Պոշեանը տաղանդաւոր վիպասան է և այնպիսի ճարտարութեամբ պատմում է որ նորա երկար ու բարակ նկարագրութիւնները (վէպի բովանդակութիւնից դուրս) ուրախութեամբ կարդացվում են. մինչ դեռ մեր խորին համոզմամբ պ. Փիլոյեան աւելի մեծ ծառայութիւն արած կըլինէր, եթէ առանց վիպական ձևովն յափշատակուելու՝ ուղղակի ազգագրական հում նիւթեր տար մեզ։

Իսկ այժմ ի՞նչ է դուրս եկել. «Կորած Մարգարիտը» վէպ չէ, իսկ իրև «նկարագիր» շատ համառօտ է. բացի այս՝ հեղինակը շատ անդամ անտեղի կերպով իւր դատողութիւնները մէջ է բերում գրքի մէջ, այնպէս որ չես իմանում վերջապէս ի՞նչ է այս գիրքը՝ վէպ, ազգագրական հում նիւթ թէ գիտական քննութեան փորձ։ Հեղինակի ներկայութիւնը միշտ զգում ենք. հետևանքն այն է, որ ժողովրդական բարբառը նորա գրչի հետքերն է կրում ամենախիստ կերպով, իսկ Սմբատը (գլխաւոր գործող անձը «վէպի» մէջ), այդ «սօլկարի» դուքանում իւր ուսումն ստացած քեավառցին իւր համաքաղաքացիների սնապաշտութիւնները դատափետում է ամենախիստ կերպով. «էլ էդ պառաւական կռապաշտութիւնը մի՛ անէք, մեղք ա։ Բայց ժողովրդի ղուղի մէջ մի անդամ որ մի բան ա մտնում, շատ դժուար ա մէկ էլ քանդել, դուրս հանել. արնի ու երակների միջով որդուց որդի անցնում ա» և այլն։ Գրքի մէջ շատ քիչ կան ԺԳ (գրրաց) գլխի պէս տեղեր, ուր ժողովրդական բարբառը այդպէս մաքուր դուրս բերած լինի (Պետրոսի մօտ խօսակցութիւնը Հարևանի կնոջ հետ), ուր ժողովրդի մտածողութիւնը խառնուած չլինի հեղինակի մտածողութեան հետ։

Ի սրտէ ցանկանում ենք որ պ. Փիլոյեան շարունակէ իւր սկսած գործը, միայն թէ աշխատէ աւելի անարատ կերպով, առանց իւր մտածողութեան կնիքը դնելու հաղորդած տեղեկութիւնների վերայ ներկայացնելով ժողովրդական բարք ու վարքը և բարբառը։

† ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ

(ԾԵՐԵՆՑ).

Ներկայ 1888 թ. Փետրուարի 17-ին Թիֆլիսում կնքեց իւր մահկանացուն Հայաղդի նշանաւոր վիպասան և հասարակական եռանդուն գործիչներից մէկը—բժշկապետ Յովսէփ Շիշմանեանը, որ աւելի յայտնի էր Ծերենց մականունով:

Յովսէփ Շիշմանեանը ծնուել է Կ. Պոլսում, 1822 թ. Սեպտեմբերի 16-ին: Ինն տարեկան հասակում նա լինում է Վենետիկի Մխիթարեանների վանքում, ուր մնում է հինգ տարի և ապա նորից վերադառնում Փարիզ, հակումն զգալով կրօնաւորի պաշտօնը ստանձնելու: Զափահաս տարիքում նա ուղևորվում է Փարիզ բժշկականութիւն ուսումնասիրելու: Սակայն նախ քան Փարիզ ուղևորուիլը՝ այն է 1843 թ. Օգոստոսի 23-ին, երիտասարդ Շիշմանեանը կամենում է իմանալ, թէ ի՞նչ է նշանակում «Հայաստան» բառը, ուստի և ճանապարհորդում է համարեա 7—8 ամիս և վերադառնում Պոլիս: Այդ ճանապարհորդութիւնը այլ ևս հանգստութիւն չէ տալիս հանդուցեալին և Հայաստանը իւր խեղճ որդւոց վիճակի հետ միասին նորա մտատանջութեան առարկան է դառնում:

Գրականական ասպարիզում Յովսէփ Շիշմանեանը բացի զանազան յօդուածներից թողնում է ընտիր վաստակներ—Թորոս Լեռնի, Երկունք իններորդ դարու և Թէոդորոս Ռշտունի, որոնք իւր ժամանակին վայելել են ընթերցող հասարակութեան ջերմ համակրութիւնը:

Անկարող լինելով այս անգամ մանրամասն խօսելու այդ աշխատութիւնների մասին և աւելի պարզօրէն խօսել համակրելի հեղինակի սիրած գաղափարների մասին, մենք կ՚աշխատենք այդ կատարել ապագայում:

Հանգիստ ոսկերացդ, առաքինի հայ և տաղանդաւոր մատենագիր:

ՐԱՖՖԻԻ ՄԱՀԸ

ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ, ԾՆ. 1835 թ. † 1888, ԱՊ. 25

(Մի առաջարկութիւն մահացուցակի փոխարէն).

Հայ գրականութեան առաջին բեղմնաւոր մշակը կնքեց իւր երկրաւորը, թողնելով մեզ բաժին ոչ միայն մի խորին վիշտ, որ ազգային մեծ բանաստեղծի կորստեան բնական հետևանքն է, այլ և զարթեցրեց տխուր մտածողութիւններ մեր ներկայի մասին: Ռաֆֆիի կենսագրութիւնը, աշխատութիւնները և յիշատակը դեռ երկար ժամանակ մեր մտմտուքի և հասարակութեան համար մտածութեան առարկայ կը լինին, իսկ նշանակութիւնը կը պարզուի և կը բարբաղործուի պատմութեան անմոռաց էջերում, ուստի և այս մեծ խնդիրը չէ կարող այս երկտող գրութեան նիւթ դառնալ: Ռաֆֆին առաջին հայ բանաստեղծն է, որ իւր վերջին տարիները ապրում էր լոկ գրականական աշխատանքով և այդ երևոյթը հայ ազգի պատմութեան երեսի առաջին երևոյթն է կազմում: Հէնց Ռաֆֆիի այս նշանաւոր յառաջադիմութիւնն է, որ մեզ գրել է տալիս մի քանի տող: Հանգուցեալը պատմում էր, որ մինչև 1877—78 թուականները ապրում էր Տփխիսի զանազան թաղերում շատ նեղ հանգամանքներում, ի միջի այլոց Հաւլաբարում բնակարան ունեցած ժամանակ: Էլ չեմ յիշում նորա վարժապետական և աստանդական կեանքը, որ մօտաւորապէս նորա ամբողջ կեանքի կիսից աւել է կազմում: Արդէն կեանքի մեծ մասը անցած ժամանակ նա կարողանում է վերջապէս «Մշակի», «Փորձի» և «Արձագանքի» շնորհիւ ապրել լոկ գրականական աշխատանքով և բարոքել իւր կենցաղը: Այսպէս մի քանի անհատների աջակցութեամբ և իւր հայի բնաւորութեան համար անսովոր և օրինակելի մտաւոր աշխատութեամբ գրում է 15—20 հատոր գիրք

և բաւականին էլ անտիպ գրուածներ։ Այժերից վեր աշխատանքը և հայկական ասպարիզում գործելու պատմական դժուարութիւնները անկասկած պէտք է քայքայէին և ամենաուժեղ կազմուածքը։ Ինչ հիւանդութիւն էլ եղած լինի հանգուցեալի մահուան պատճառը, անկասկած, նորա ամբողջ կեանքը կապուած էր այդ հիւանդութեան հետ։

Ինչ և իցէ այսօր մեծ բանաստեղծը մեռած է, աշխատաւոր ձեռը դադարել է գործելուց, հազարաւոր աշակերտներ, աշակերտուհիներ և ամբողջ հայ վաճառականութիւնը զրկուեց իւր ամենասիրելի, ամենահամակրելի հեղինակից և այս կորուստը անփոխարինելի է։ Հայ գրականութիւնը դեռ չէ կազմակերպուել. Բաֆֆին առաջինը իւր երկերի քանակութեամբ և լեզուով ստեղծում էր այդ գրականութիւնը, որովհետև ուրիշները թողել էին այդ ասպարէզը կարծես և հեռացել, իսկ նորերը բաւականանում են իրենց չհաստատուած փառքովն և երկու-երեք համակրելի գրականական փորձերով։ Այսպէս տեսնում ենք, որ Բաֆֆին իւր անհատական ուժով և տաղանդով անմոռանալի գործ կատարեց, ինչպէս և մեծ գործ կատարեցին նորա կեանքում «Մշակի», «Փորձի» և «Արձագանքի» խմբագիրները հայազգի պ. Մելիք-Հայկազեանի հետ։ Բայց ի՞նչ կը լինի մեր օրը, եթէ չլինին միլիոնաւոր ազգի մէջ մի հինգ-տասն մարդ, որոնք ահագին զոհաբերութեամբ մտածում են ազգի գրականութեան և շահերի մասին։ Ահա այս յուսահատական մտքերը յղացան գլխումս, երբ ընկերներս եկան հաղորդեցին մեծ բանաստեղծի մահուան գոյժը։ Արդեօք այս կորուստը մեզ սովորեցնելո՞ւ է յարգել և միջոց տալ կենդանի եղածներին բոլոր ուժերով նուիրուելու գործին. արդեօք կը հասկանա՞ յ հայ հասարակութիւնը թէ որքան պարտական է օգնել և պահել իւր գործիչներին, թէ ոչ։ Մի՞թէ պէտք է սպասենք, որ կենդանիներ էլ մեռնելու օրին մի կտոր հայ ունենան, երբ

որ արդէն աշխատելու և գործելու տարիքը անցել են շատերի համար։ Երանի՜, թէ Բաֆֆիի շուտափոյթ կորուստը առիթ տար հայ հասարակութեան մի գրականական ֆոնդ հիմնելու նորա յիշատակին, որ ամենալաւ յարգանքը կը-լինէր և բազմաշխատ բանաստեղծին վայել։

ԳԱՐ. ԵՆԳ.

ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՅԵԱՑՔԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՅ։

Մեր գեղացիները կ'ըսեն.

Եթէ բուխերիկի ծուխը վեր չելնէ ու գետնի կողմը ցածնայ, անձրև կուգայ։

Եթէ իրիկնաժամին ատեն գոցուին ու ամիսուին տաղան (marigole) ծաղիկները, անձրև կուգայ։

Եթէ ծառերու տերևներ երերին ու զգալի հով մը չ'ըլլայ, անձրև կուգայ։

Եթէ հաւերը շատ ուտեն, անձրև կուգայ։

Եթէ աքաղաղը սովորականէն աւելի շատ խօսի ու վաղարթուն ձայներ հանէ, անձրև կուգայ։

Եթէ կատուները լիզեն իրենց վերայ-գլուխը և լուանան իրենց երեսները, անձրև կուգայ։

Եթէ ձիեր իրենց վզեր երկնցնեն ու հոտոտեն օդը. եթէ գան մէկ անկիւնը քաշուին ու հովի կողմը դարձնեն իրենց գլուխներ, անձրև կուգայ։

Եթէ մեղուներ դուրս չելնեն իրենց խուցերէն, անձրև կուգայ։

Եթէ գորտեր սովորականէն աւելի կրկռան, անձրև կուգայ։

Եթէ նախիրը քիչ մը արածէ ու քիչ մը ընդհատէ իւր կերը. եթէ կողմէ մը տաւարներ արածեն և կողմէ մը խեթկեն մէկզմէկ, անձրև կուգայ։

Եթէ ծիծեռներ իրենց սովորական չափէն վար թռչին և ոլորտներ ընին, անձրև կուգայ։

Եթէ ծղրիտներ սովորականէն աւելի բարձրաձայն ըլլան, անձրև կուգայ։

Եթէ լորերը սովորականէն աւելի ճվճըվան, անձրև կուգայ։

Եթէ ջրային թռչուններ սովորականէն աւելի ճչին, ու ջրի մէջ սուզուին, անձրև կուգայ։

Եթէ ձկներ խաղան, շուտ շուտ ցատկոտեն ու ջրի երեսը ելնեն, անձրև կուգայ։

Եթէ ամպերը հիւսիսի կողմը շարժին, ծովը իջնելու և ջուր խմելու համար է, եթէ հարաւի կողմը շարժին, անձրև թափելու համար է։

Եթէ անձրևի ջուրը պղպջէ, շատ անձրև կուգայ, ու տան խաչերկաթը դուրս կընետեն գեղացիները, որ անձրև կտրի։ Երբ երաշտութիւն ըլլայ, խուձկուլուլու (խրտուիլ) մը կըշինեն, ու գետի մէջ պտըտցնելով, թաս մը ջուր կըլեցնեն անոր վերայ ամէն մի տան դրան առջևը, ու կ'երգեն.

«Խուձկուլուլու, մանանայ,
Ձու մի տուէք, Թանանայ.
Բարով-խէրով անձրև գայ,
Ձրը խօր արտեր կանչրնայ»։

Եթէ կով մնուրը լիլէ, ձիւն կուգայ։—Ձիւնը ալիւր է, և երբ մէկը անոր վերայ միլեց, ձիւնի փոխուեցաւ։

Եթէ մանր է ձիւնի տարափը, եթէ խաղալով վայր կիջնայ, շատ ձիւն կուգայ։

Եթէ հացբլեթի խաչ մը շինէ ուղևոր մը ու գետնի վերայ նետէ, մէկը կըփարատի և ինքը չկորսնցիր իր շիտակ ճամբան։

Եթէ ծովի մեծ-ձուկը մէկ կողմէն միւս կողմի վերայ դառնայ, անոր փորի ցոլքը վեր կըլարնուի, ու երկինքը կըկրակտայ։ Բայց ու պարզ գիշերներու փայլատակումները մեծ ձուկի փորի ճաճանչներն են։

Ծիածանը Աստուծոյ գօտին է։ Եթէ տղայ անցնի անոր աղեղի տակէն՝ աղջիկ կըդառնայ. եթէ աղջիկ անցնի, տղայ կըդառնայ։

Երբ Եղիա մարգարէն թափով մը կըքշէ իւր կառքն, որ ձեռք բերէ իւր փախչող պարտապանն ու փոխ-դրամն, կառքի ձայնէն որոտում կ'ըլլայ ու ցոլքերէն — կայծակ։ Որոտումի ատեն փոքր գեղջուկները կը պոռան. «սարի սընկներ ծի, կաքվու ձուեր քի»։

Յարդգող այն ճամբան է, ուրկէ փախեր է իր եղբօր յարդ գողցողն, որովհետև ջուալը ծակ էր, յարդը քիչ-քիչ թափուեցաւ ու ճերմակ գիծ մը թողուց յարդ-գողի հետքերու վերայ։

Աստղեր մեր հոգիներու կանթեղներն են։ Ամէն մէկը աստղ մը ունի երկնքի մէջ, և եթէ արդար է՝ փայլուն, եթէ մեղաւոր է՝ մթին։ Աստուպի մը մարիլ-անհետիլը գէշ բան է, գիսաւորի մը երևիլը՝ աղետալի։

Ամէն մի գեղացի կըփնտռէ նոր լուսինն իր օրին և անկուշտ տենչով մը զան դիտելէն վերջ կուզէ որ օղուրով (բարիգէմ՝) մէկու մը երեսը տեսնէ անմիջապէս. երբ դժնեայ մէկու մը հետ երեսուի, կրցաւ, կրտխրի։

Երբ լուսինը խաւարի, «հիւանդ է, երեսի զոյնը նետէր է» կըսեն

գեղացիներ, բայց հասարակօրէն կըհաւատան, որ «վիշապէ մը բռնուիր է» ու ամէն տեսակ գոռում-գոչումներու ուժով կ'աշխատեն ազատել զան։

Արեգակի հետ մէկտեղ ելումուտ կ'ընէր լուսինը, և որովհետև շատ գեղեցիկ էր, աչքըռեցաւ ու ծաղիկ հանեց.—երեսի բիծերը կըցուցնեն արդէն, որ ծաղիկը կերեր է անոր դէմքն։ Այս պատահարէն վերջ՝ գիշեր ատեն սկսաւ ելումուտ անել լուսին, ու խնդրեց իւր եղբայր-Արևէն, որ ծակրատէ իրեն նայողներու աչքերն, որպէս զի կողմէ մը չ'աչքըռի ու միւս կողմէն իր քոյրլուսնի վրէժը լուծէ։

Արևը Աստուծոյ աթոռն է, Արևագալն ատենն է, որ կըթացուին դրախտի դռներն, և աքաղաղներ լսելով դռնբացի ձայներն, կ'երգեն։ Ամէն մէկի առօտեն դրսմաթը ճիշտ լուսաբացի այն ատենը կըբաշխուի, և ասոր համար ալ հաւախօսի հետ՝ աղօթարանի «Տ'էր, Ողորմեա»ն, ու կոչնակի հետ՝ եկեղեցւոյ «Տէր, զի՛ բազում եղեն նեղիչք իմ»ը կը մրմնջեն և կըմրմռան գեղացիները։

Արևի, լուսնի անունով կ'աղօթէ, կ'երդնու և կ'անիծէ սովորաբար մեր գեղային հասարակութիւնը, ու միշտ արևելքի կողմը ուղղելով կըմորթէ կենդանիները։ Արևի մտնելու ատեն դառնձի ծառի տերև կըծեծեն փոքր գեղջուկներ ու շնգաբի տերևի մէջ լեցնելով, բաց աստղերու առջև կըթողուն. արևածագի ատեն տերևի այս ծեծուքով կըհիներն իրենց ձեռքերն ու Արևի նոր-նոր ցոլքերու դէմ բռնելով կըպոռան.

«Արեգակ, Արեգակ,
Առ քի խինա, տուր ծի շաղ
Երթամ, պօղեմ լվօի թաղ»։

Երբ Արեգակը խաւարի, «բռնուէր է»—կ'ըսեն գեղացիները ու ամէն բան կը ծեծեն [1]), կըհնչեցնեն, կըպոռան, կըձայնեն ու զանազան շմոր-շփոթով կ'աշխատեն զան իր կալանքէն։ Մի՜հր ու լոյս, Գրիգոր ու լուսաւորչութիւն,—այս է հայ գեղացիի կրօնքը երկնքի մէջ ու երկր վերայ, թերևս, դարեր առաջ և այժմ իսկ....

Երկնքի կապուտը ծով է, երբ պատռի, ջրհեղեղ կ'ըլլայ։

Պոլիս.

Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ։

---

[1]) Ցաճկական սովորութիւն է այս, զոր ցայսօր ի գործ կըդնեն դարերէ ի վեր։ Ծ. Յօդ.

ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ.

Երբ «Հանդէս Գրականական և Պատմական» ժողովածուի հրատարակութեան մասին ուղարկուեցան յայտարարութիւններ մեր խմբագրութիւններին, «Մշակ» լրագիրը իւր 29 N-ում մի առաջնորդող գրեց՝ «Ցրված ուժերով գործելու հակումը» վերտառութեամբ, որի շարժառիթը, անկասկած, մեր յայտարարութիւնն է եղել: Կամենում ենք մի քանի խօսք ասել այդ առթիւ:

Մեզ համար, գոնէ, շատ անախորժ է, որ մեր ժողովածուն իւր առաջին իսկ գրքից մի տեսակ բանակռիւ է սկսում, որից միշտ պէտք է աշխատել հեռու մնալ: Այս դէպքում էս լռութիւնը մեր պարտականութիւնը պիտի լինէր, բայց որովհետև սկզբունքի խնդիր է, մենք էս կամենում ենք ներկայացնել ընթերցողներին մեր հայեացքն ու կարծիքը: Սոփոստած ենք խօսում, որովհետև սխալ առաջնորդողները պղտորում են հասարակութեան միտքն ու հոգին և միանգամայն սխալեցնում նորան:

Մօնոպոլիան ինքն ըստ ինքեան մի այլանդակ երևոյթ է, մանաւանդ այն տեսակ գործում, ինչպէս ժողովրդի կրթութեան և յառաջադիմութեան խնդիրն է, ուր ազգի իւրաքանչիւր անհատը իրաւունք ունի իւր ուժերի չափով ծառայելու ազգին և պարտական չէ անպայման կերպով հաւատալ, որ այս ասպարիզում եղած գործիչները արդէն մի կատարելութեան տիպար են կազմում, որ նոքա, ազգի այս բարերարները, բաւական են արդէն ազգին, և ազգն էլ պիտի բաւականանայ նոցա երկրպագութիւն տալով ու խնկարկելով: Նախ և առաջ ա՛յսպիսի տպաւորութիւն թողեց մեզ վերայ յիշեալ լրագրի առաջնորդողը, ուր պ. խմբագիրը մի դժբաղդութիւն, պակասութիւն է համարում զանազան նոր լրագիրների կամ ամսագիր-

ներկի երևան գալը, թէև ոչ առաջինը կայ և ոչ երկրորդը. եթէ Պետերբուրգում հրատարկվում է «Արաքս» և Մոսկուայում «Հանդէս» — դա ապացուցանում է միայն մի ամնադրի անհրաժեշտութիւնը և ոչ այլ ինչ: Այդ դեռ բաւական չէ, անսահման տարածութեան մէջ սաւառնող այդ օդապարիկ թերթը «անձնավստահ և յանդուգն» է համարում և նոցա ձեռնարկողներին: Ով որ փոքր ի շատէ ծանօթ է այդ թերթին, նա, անտարակոյս, նկատած կլինի խմբագրի այս խօսքերը. հայերիս մէջ նա եւրոպական գաղափարներ տարածողն է, և խմբագիրը ինքն իրեն միակ մարդն է համարում, որ մեզ՝ «ասիացի հայերիս» եւրոպականութիւն է սովորեցնում: Սակայն փաստերը բացարձակ խօսում են և ցոյց չեն տալիս, որ արդարև «եւրոպականութիւն» կայ յիշեալ թերթի մէջ. բաւական է միայն համեմատել խմբագրի յօդուածները, նորա գործ դրած քննադատական միջոցները եւրոպական թերթերի հետ: Մենք սովոր ենք կարդալ մի որ և է քննադատութիւն եղած բանի՝ հրատարակուած գրքի կամ ամնադրի մասին, բայց երբէք չենք տեսել, որ մի եւրոպացի մէկի ապագայ գործունէութիւնը գրականական ասպարիզում ապարդիւն համարէ և ձեռնարկողին անձնավստահ և յանդուգն, եթէ ծանօթ չէ նորա գրականական վաստակների հետ և չգիտէ ապագայ աշխատութեան բովանդակութիւնը, իսկ այս դէպքում—և մասնակցողների ոյժը: Բայց մեր եւրոպացին ահա լսում է, որ Մոսկուայում մի Բարեգործական ընկերութիւն է հիմնարկվում, նա սկսում է աղաղակել Թիֆլիսից, թէ «Արդէն ուշ է», կարծես թէ հայերիս մի բարեգործական ընկերութիւն էր հարկաւոր, նա էլ հիմնուեցաւ Թիֆլիսում, ուրեմն Մոսկուայում պէտք չէ, ուշ է, ցրուած ուժերի հակումն է և այլն: Լսում է նա մի ուրիշ լուր, դիցուք, Մոսկուայում կամենում են հրատարակել մի ամնագիր, և ահա մեր պատգամախօսը սկսում է դուշակութիւններ անել, թէ չի յաջողուիլ,

միտք չունի, որովհետև հայրենիքից դուրս է և այլն։ Եաա բարի՛. եթէ այդ զգում էք, հասկանում էք, որ չէ կարելի կենտրոնից դուրս (դեռ մեծ հարց է, թէ որքան Թիֆլիսը կենտրոն է, աւելի լայն մտքով) բան անել, ինչու՞ չէք քարոզում, որ այդտեղ անեն։ Ամնաղրի անհրաժեշտութիւնը եթէ զգալի է, մանաւանդ որ լաւ կը լինէր, եթէ Թիֆլիսում հրատարակուէր, այդ, ի հարկէ, շատ հասկանալի է. բայց ինչու՞ «Փորձի» դադարումից յետոյ չեն երևում դոնէ նշանաւոր ձգտումներ իրագործելու այդ պահանջը, եթէ ի նկատի չառնենք վերջին մի երկու փորձը։ Մենք կարծում ենք, որ եթէ մի անհրաժեշտութեան բաւականութիւն չէ տալիս Թիֆլիսը իւր ինտելլիգենտներով, այն ժամանակ գոհ պէտք է լինենք, եթէ Մոսկուայում կամ Պետերբուրգում մի ամնաղիր հրատարակուի, փոյթ չէ, եթէ նշանաւոր թերութիւններ էլ ունենայ. լաւ է դոնէ այդ ունենալ, քան ոչինչ։—Լսում է մեր ի բնուստ օժտուած խմբագիրը, որ Մոսկուայում մի ժողովածու է հրատարակվում և նախապէս գուշակում է իւր ընթերցողներին այս անընդունակ մարդկանց անաջողութիւնը։ Մտքի ազատութիւնը, համբերողութեան գաղափարը և հիմնական ու բարեխիղճ քննադատութիւնը հեռացան այս դէպքում յիշեալ թերթից, թէպէտ նա իրեն եւրոպական թերթ է անուանում։ Բացի վերոյիշեալ տեսական և լոգիկական սկզբունքների դէմ եղած սխալը՝ թերթի այդ յօդուածը չէ կարող և կրթիչ նշանակութիւն ունենալ, որովհետև նա անհիմն է, և չենք կարծում, որ մի ընթերցող չկարողանար հասկանալ յօդուածի իսկական շարժառիթը։ Չենք կարծում, որ մի բանիմաց մարդ հարցրած չլինի ինքն իրեն. ի՞նչ հիմք ունի պ. Արծրունին կարծելու, որ ամէն մի նոր երևան եկող մարդ գրականական ասպարիզում անընդունակ է, քանի որ յօդուածում ցոյց չէ տալիս փաստերը, չունի հիմքեր։ Կարելի է զրգռել մի

որ և է թերթի և գրականական աշխատութեան դէմ, երբ որ յայտնի է այդ գործը, նորա վնասակար ուղղութիւնը կամ սխալները։ Այս դէպքում ամէն մի կծու և խիստ քննադատական յօդուած ունի իւր կրթիչ նշանակութիւնը, որովհետև նորա հիմքը հասարակական օգուտն է։ Բայց ի՞նչ հիմք ու նպատակ ունի մի յօդուած բոլորովին լոյս չտեսած աշխատութեան դէմ։ Հայ լուսաւորչականներիս համբերողութիւն սովորեցնող «Մշակը», երևի, այս դէպքում համբերողութեան, բարեխղճութեան և բարի զգացմունքների օրինակ է տալիս իւր ընթերցողներին։ Ամէն մի անհիմն քննադատութիւն անբարեխիղճ է և դատապարտելի, հետևաբար և վնասակար, որովհետև տգէտ հասարակութեանը անհիմն դատապարտելու օրինակ է տալիս։ Տեսական և հասարակական տեսակէտից սխալ և վնասակար լինելուց վեր՝ այդ յօդուածը մի և նոյն ժամանակ և ներկայացնում է մի երևոյթ, որ ռուսները անուանում են *съ больной головы да на здоровую*. Եթէ հնթադրելու էլ լինինք, որ արդարև գրականական ասպարիզում ցրուած ուժերով գործելը վնասակար է (յօդուածից պարզ չէ, թէ ոյն է ցրուած ուժերով գործելը մեզանում, եթէ չհասկանանք պ. Արծրունուն հաւատարիմ ու հլու հպատակութեան խոստում տալը), այն ժամանակ էլ պ. Արծրունու կողմից այդ առաջնորդողը նշանակում է *съ больной головы свалить на здоровую*. Ինչո՞ւ համար պ. Արծրունին մի փոքր ինքն իրեն չհարցրեց, թէ ո՞վ է մեղաւոր, որ այսօր հայերը գրականական ասպարիզում ցրուած ոյժերով գործելու հակումն ունին։

Վերջին տասն և հինգ տարուայ ընթացքում հայ գրողներից հազիւ մէկը լինի, որ աշխատած չլինի յիշեալ լրագրի համար երբ և իցէ։ Զէ՞ որ այդ մարդիկներից շատերը առաջ այդ թերթի հետ էին գործում. ինչո՞ւ ուրեմն պ. Արծրունին ինքը չկարողացաւ ցրուել նոցա և

օրինակ չտալ ուրիշներին, նորերին, իւր օրինակին հետևելու: Չէ՞ որ «Նոր-Դարի» խմբագիրը մի ժամանակ «Մշակի» աշխատակիցն էր. չէ՞ որ պ. պ. Պալասանեանը, Պատկանեանը, Աղայեանը, Պռոշեանը, Բաֆֆին, Վարդանեանը, եթէ չենք սխալվում, և ուրիշները մի ժամանակ գրել են այդ թերթում: Մի թէ՞ այս բոլոր պատկառելի անձնաւորութիւնները թողին «Մշակը» հէնց այն պատճառով, որ ցրուած ուժերով գործելու առանձին հակումն ունէին: Եւ վերջ ի վերջոյ պ. Արծրունին այս բոլոր ուժերը փոխեց զանազան Խ.-երով, Մ.-երով, Nemo-ներով, իրեն օգնական ընտրեց, եթէ թուաբանական լեզուով խօսելու լինինք, մի-0 և շրջապատեց իրեն երախաներով: Այո՛, պ. Արծրունին վերջին տարիների ընթացքում աւելի ակներև կերպով ցոյց տուեց, որ նա չէ սիրում, խոյս է տալիս փոքր ի շատէ լուրջ հայեացք ունեցող անձնաւորութիւններից: Ոչ թէ մեզանում ցրուած ուժերով գործելու հակումն կայ, այլ մեր եղած գործիչները՝ ենթակելով իրենց եւրոպական ուսման, դեռ բուսականին կոպիտ ու անտաշ ասիացի են մնացել և իրենց բոնակալութեամբ անկարելի են դարձրել մի որ և է մարդավայել, համերաշխ գործունէութիւն: Նորա ապացոյցը, ինչպէս «Մշակի» երկարամեայ պատմութիւնն է, նոյնպէս և վերոյիշեալ յօդուածի այն կէտը, ուր ասում է. «նոր սկսողը պիտի երկրորդական դեր խաղար, եթէ միանար հին հետ»: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հները առաջնակարգ պիտի լինին հէնց այն պատճառով, որ հին են, եթէ ոչ ինչնու ընդունակ և տաղանդաւոր նոր մարդը «անկասկած», պ. Արծրունու կարծիքով, պիտի երկրորդական դեր խաղայ միանալուց: Պ. Արծրունին դատապարտում է նոր գործիչների անձնավստահութիւնը, մոռանալով որ անծանօթ մարդիկ են, բայց ինքը «բնածին ձիրքերից» զուրկ չէ համարում իրեն, որովհետև հին է.

իսկ նորերը անպէտք են։ Էհ, դա էլ տասն և հինգ տարուայ խմբագրական փորձառութիւն է, դա էլ մի տեսակ հայութիւն է, որից չի աղատուիլ հայը ոչ թէ «մի տարի», այլ թէկուզ քսան տարի էլ ապրի Եվէյցարիայում։ Որքան էլ նոր գործիչները անփորձ լինին, չենք կարծում որ զանազան ամսագիրների խմբագրացուները՝ հանճարեղ ընդունակութիւններ ունենալով, կարող կըլինին երբ և իցէ «պարալիզել», «խրոնիական», «լոգիական», «այրուող հարցեր» և հարիւրաւոր այս տեսակ այլանդակ ու անդրագէտ հայկաբանութիւն մոյնել՝ տասն և հինգ տարի շարունակ հայ թերթի խմբագիր լինելուց յետոյ։ «Պարալիզել» նշանակում է հայերէն. «չորս բոլորքը լիզել», իսկ պ. Արծրունին իւր բոլոր ընդունակութիւններով՝ տասն և հինգ տարուց աւել խմբագիր լինելուց յետոյ, չգիտէ անգամ հայերէն բառերի կազմութիւնը։

Իսկ ինչ վերաբերում է անփորձ լինելուն, մենք հարցնում ենք իրեն պ. Արծրունուն, որ ասպարիզում և որ գործի սկիզբում գործիչը փորձուած է լինում։ Շատ ցանկալի էր իմանալ, արդեօք պ. Արծրունին որ սկսեց հրատարակել «Մշակը», ի՞նչ տեղ էր փորձառութիւն ձեռք բերել—Ցիւրիխո՞ւմ թէ Հայդելբերգում։ Այդ նշանակում է ասել մէկին, որ ջուրը չմտած լող տալ սովորի և ապա մտնի։

Վերստին դառնում ենք լեզուի խնդրին։ Մենք առաջ ենք բերում այստեղ պ. Պարոնեանի մի սրամիտ նկատողութիւն «Մշակի» լեզուի մասին, որ արդարև օրինակելի է, որպէս ընտիր հայկաբանութիւն։

«Ոէյնալ պատերազմական մինիստրին պախարակեց որ խիստ մէծուրաններ չգործադրեց սէնատորի դէմ որ լեքիդիմական ցուցմունքներ առաւ։ Կապիտանը կամենում է դէմիծիոնի տալ։ Բիւդժէի սոմանները ընդունված են սենատից. եպիսկոպոսների կրէդիտը մերժեց և ժողովի սէ-

սիան փակված է յայտնում։ Բիւլլըդէնը կրծանուցանէ թէ կայսրուհին պլէվրիտ ունի» [1]։

Անտարակոյս, պ. Պարոնեանը այս տողերը գրել է նմանողութեամբ, բայց աւելացրած բան չէ. այդպիսի հարիւրաւոր օրինակներ կարելի է գտնել «Մշակի» համարներում՝ թէ՛ խմբագրի յօդուածներում և թէ աշխատակիցների գրուածներում։ Եւ այդ բոլորից յետոյ, պ. Արծրունին յանդգնում է ասել, որ «մենք նոր լեզու ստեղծեցինք», քանի որ այդ տասնեւհինգ տարուայ ընթացքում նա լեզուն մահացրել է և սպանել։ Մենք երկար չենք խօսիլ «Մշակի» լեզուի մասին, քանի որ նա յաճախակի ենթարկուել է քննադատութեան. իսկ վերջերումս «Արձագանքը» բաւականին ընդարձակօրէն խօսեց այդ առթիւ։

Պ. Արծրունին իւր յիշեալ առաջնորդողում ասում է. «Հային յատուկ է իր անձի և իր ընդունակութիւնների մասին անչափ մեծ կարծիք ունենալ։ Հայը երբէք չգիտէ հպատակվել, խոնարհվել ուրիշին, աւելի ընդունակին, կամ փորձվածին, հայը զուրկ է ամեն տեսակ դիսցիպլինայից»։ Մենք կարծում ենք, որ այստեղ պ. Արծրունին ինքն իրան է նկարագրել, իրան է աչքի առաջ ունեցել այդ տողերը գրելու ժամանակ։ «Հայ» բառի տեղ դրէք «Արծրունի» և դուք կըստանաք նորա բնաւորութեան ճշգրիտ նկարագիրը։ Ահաւասիկ. «Արծրունուն յատուկ է իր անձի և իր ընդունակութիւնների մասին անչափ մեծ կարծիք ունենալ։ Արծրունին երբէք չգիտէ հպատակվել, խոնարհվել ուրիշին, աւելի ընդունակին, կամ փորձվածին, Արծրունին զուրկ է ամեն տեսակ դիսցիպլինայից»։ Սակայն ոչ. «Մշակի» խմբագիրը այժմ աշխարհահռչակ Խ. Մ. է, իսկ Գրիգոր Արծրունին նորա օգնականը.....

Բայց վայ մեզ, ի՞նչ ենք տեսնում. միթէ՞ «Մշակի»

---

[1] Ազգային Հոլիեր։

խմբագիրը կարող է ուրիշին օրինակ բերել, կամ ընդունել, որ մի ուրիշը կարող է որ և է բան անել առանց «Մշակի» ազդեցութեան։ Եթէ չէք հաւատում, կարդացէք «Մշակի» առաջնորդողը և Ֆէլիէտոնը Բաֆֆի մահուան առիթով գրած. կարդացէք մեծ Մ.-ի «ընդօրինակութիւնը» նոյն բանաստեղծի մասին և Երևանի «ինտելլիդէնտ» թղթակցի (№ 50) «խոստովանքը» և դատաւճիռը Բաֆֆիի ուղղութեան մասին։ Դեռ ոչ ոք մի բարեխիղճ քննադատութեան չէ ենթարկել նշանաւոր բանաստեղծի գործունէութիւնը. դեռ հասարակութեան և մամուլին յայտնի չեն անտիպ թղթերն ու երկերը, որոնք կարող են շատ մեծ նշանակութիւն ունենալ հեղինակին արդարապէս գնահատելու գործում. դեռ ոչ ոք նեղութիւն չէ քաշել մի քիչ թէ շատ լիակատար կենսագրութիւն գրել,—ահա պ. Արծրունին իւր սեպհական յօդուածներով և մի խումբ թերուսների բերանով ձգտում է ապացուցանել, որ Բաֆֆին իւր ուղղութիւնը ստացաւ «Մշակից», որ յետոյ կորցրեց «ոտքերի տակի հողը» և սկսեց գրել պատմական վէպեր, որոնք անհամապատասխան են նորա տաղանդին» և այլն։—Ո՞վ է տեսել մի այդ տեսակ վերին աստիճանի այլանդակ բան եւրոպական մամուլի մէջ։ Այնտեղ ամէն մի համեստ հեղինակի մահից յետոյ աշխատում են բարեխղճութեամբ ուսումնասիրել նորա գործերը, ծանօթացնել հասարակութիւնը հեղինակի զարգացման պատմութեան հետ և տարածել նորա համակրելի գաղափարները. իսկ մեզանում՝ դեռ դագաղը հողին չյանձնած՝ միայն մոռածում են իրենց «խելի» համար և յայտնում են աշխարհին, որ Բաֆֆին ոտքերի տակի հողը կորցրեց, երբ հեռացաւ «Մշակից»։ Արդեօք Կատկովը, այն Կատկովը, որ իւր գրականական-փիլիսոփայական զարգացմամբ, իւր հրապարակախօսական տաղանդով մի քանի «Մշակի» խմբագրութիւն արժէր և որին պ. Արծրունին մի քանի ան-

գամ հայհոյել է իրաւացի կերպով, արդեօք նա երբ և իցէ մի արժանի՞ք է համարել իրեն համար այն հանդամանքը, որ Տուրգենեվ, Գոնչարով և Դօստոեվսկի գրել են սկզբում նորա ամնագրում։—Զգիտենք, թէ ինչպէս են կարծում մեր գրականութեան մէջ յայտնի մարդիկը և բանախօսները, բայց մենք կարծում ենք, որ շատ մեծ հալց է դեռ այն հանդամանքը, թէ արդեօք «Մշակը» օգուտ թէ վնաս տուեց Բաֆֆիին այն ուղղութեամբ, որ իբրու թէ ներշնչել է նորան, եթէ ընդունենք էլ մինչև անդամ, որ «Մշակը» ստեղծեց Բաֆֆիին իւր «շկոլայում» (հայերիս մէջ «շկոլա»!!??)....

Թող հաւատացած լինի պ. Արծրունին, որ այսպիսի հիւանդոտ ինքնագովութիւնը չէ կարող համոզել մէկին «Մշակի» արժանաւորութիւնների վերաբերմամբ։ Սորա համար բաւական են տասն տարուայ համարները կիսով չափ դէն ձգել առաջնորդողներով հանդերձ, ուր յոգնակի «Մշակի» եղակի խմբագիրը զբաղուած է լինում շատ անդամ իւր անձի ու գործունէութեան գնահատութեամբ։ «Մշակը» շատ գործ է կատարել, բայց ոչ վերջին տարիներս, և դժբախտաբար այս իսկական արժանաւորութիւնների մասին չէ Արծրունու անտեղի գովասանքը։

Վերջ տալով այս տեսակ բանակռիւների, մեք կրկնում ենք հանգուցեալ Ս. Նազարեանցի խօսքերը. «մեզ միշտ քաղցր է ուսանել և իմաստնանալ թէ բարեկամից և թէ թշնամուց, որովհետև այդ մեր օգուտն է. և ով մեր բարերարն է, նորան պատրաստ ենք հատուցանել և մեր շնորհակալութեան պարտիքը»։

ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ.

Աչքի առաջ ունենալով ժամանակակից ընթերցող հասարակութեան պահանջներին բաւականութիւն տուող մի կալդաւորեալ ամսագրի բացակայութիւնը, որ օրէ յօր աւելի և աւելի զգալի է դառնում. նոյնպէս ի նկատ առնելով և այն հանգամանքը, որ մեր գրականական-քաղաքական թերթերը զբաղուած են առօրեայ կեանքի հարցերով և չեն կարողանում գոնէ մասամբ լրացնել այդ թերութիւնը, թերևս և չեն կամենում—այդ ակներև կերպով երևում է նորանից, որ յաճախակի նոքա խոյս են տալիս թէ՛ ինքնուրոյն և թէ՛ թարգմանական ընդարձակ ու լուրջ գրուածներից, որոնք աւելի համապատասխան են ամսագրի բովանդակութեան նիւթ դառնալու,—մենք ապարդիւն չհամարեցինք ձեռնամուխ լինել «Հանդէս Գրականական և Պատմական» ԺՈՂՈՎԱԾՈՒ հրատարակութեան:

Անտարակոյս, մի ժողովածու, որ ամենաշատը կարող է հրատարակուել տարին երկու անգամ, նոյնպէս չէ կարող լրիւ փոխարինել մի պարբերական ամսագրի հրատարակութիւնը, և այդ շատ հասկանալի է: Սակայն քանի որ այն ունենալու բախտաւորութիւնից զուրկ ենք, կարծում ենք, որ գլխաւորապէս գրականական բովանդակութեամբ մի ժողովածու ներկայումս կարող է աննպաստ չլինել: Այդպէս ենթադրելով, մենք աւելի ուշադրութիւն ենք դարձրել գրականական մասի վերայ, գլխաւոր և անհրաժեշտ տարրը համարելով նորան. նախ և առաջ դեղարուեստական գրուածներն են ազնուացնում մեծամասնութեան սիրտն ու հոգին, զարգացնում և կրթում նորա միտքն ու ճաշակը: Այս ուղղութեանն էլ պիտի հետևենք մեր՝ հետևեալ հրատարակութիւններում:

Ոչ միայն խոյս չենք տալիս, այլ և ըստ չափու կարո-

գութեան կ՝աշխատենք տալ մեր ընթերցողներին քննադատական, մատենախօսական, գիտութեան այս և այն ճիւղից մատչելի լեզուով գրուած յօդուածներ։ Եթէ այս անգամ նշմարելի է այդ թերութիւնը, մեր պարտականութիւնն ենք համարում միւս անգամ լրացնել և բաղմակողմանի դարձնել «Հանդիսի» բովանդակութիւնը։ Դիմում ենք այն յարգելի պարոններին, որոնք ունին յիշատակութեան արժանի պատմական նիւթեր, թող բարեհաճեն ուղարկել մեզ տպագրութեան համար։ Դիմում ենք նոյնպէս և այն յարգելի հեղինակներին և երիտասարդ ուժերին, որոնք համակրում են այս հրատարակութեան, թող չխնայեն իւրեանց աջակցութիւնը։

Այստեղ մեզ վերայ պարտականութիւն կայ խնդրելու մեր յարգելի բաժանորդների ներողամտութիւնը, որ՝ մեզանից անկախ պատճառներով, կրկնակի խոստմնազանց եղանք,—անկարող եղանք իւր ժամանակին լոյս ընծայել «Հանդիսի» առաջին գիրքը. տպարանական պայմաններ, հակառակ տպարանատիրոջից մեզ տուած խոստման, խոչընդոտ եղան գործին։ Այս հանգամանքը ի նկատի ունենալով, մենք դժուարանում ենք ժամանակ նշանակել, թէ երբ լոյս կըտեսնէ երկրորդ գիրքը, թէպէտ մեր կողմից ամէն ջանք գործ կըդնենք, որ շատ չուշանայ։

Առաջին գրքի յաջողութիւնը մեզ համար առհաւատչեայ է ընթերցողների համարակրութեան, ուստի և երկրորդ գիրքը կըհրատարակուի աւելի մեծ՝ ամսագիրների համար ընդունուած գիրքով և բաղկացած կըլինի 20—22 թերթից։ Բացուած է բաժանորդագրութիւն երկրորդ գրքի համար. Ռուսաստանում 1 ր. 50 կ. կանխավճար, իսկ արտասահմանի համար—4 ֆրանկ։

ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ԱՐԱՄԲԻՆ

ՎԷՊ

Դուրս եկաւ առանձին գրքոյկով և վաճառվում է Թիֆլիզում, Կենտրոնական գրավաճառանոցում և հեղինակի մոտ.

Тифлисъ, Редакція «АРЦАГАНКЪ» — Ширванзадэ.

Գինն է 75 կ.

Ճանապարհածախսով 1 ր.

Մոսկուայում կարելի է ստանալ «Հանդիսի» հրատարակչից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ *ամենօրեայ թերթը հրատարակվում է Թիֆլիսում (Հինգերորդ տարի): Տարեկան գինն է 10 ր. վեց ամսուան՝ 6 ր. հատով՝ 5 կ. Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase), Rédaction du journal «NOR-DAR».*

Խմբագիր-Հրատարակիչ՝ Սպանդար Սպանդարեան:

,,ԱՐՁԱԳԱՆԳ" *(VII տարի) շաբաթաթերթը հրատարակվում է Թիֆլիսում:*

Տարեկան բաժանորդագինն է.... 5 ր.

Կէս տարուանը..... 3 ր.

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, въ редакцію «АРЦАГАНКЪ». Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal «ARDZAGANG».

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Խմբագիր Հրատարակիչ Եբեդար Յովհաննիսեան:

ԱՂԲԻՒՐ, միամսեայ պատկերազարդ հրատարակութիւն երախաների և դաստիարակների համար (վեցկրկրդ տարի)։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція «АГБЮРЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase), Rédaction de la Revue «AGBUR».

Խմբագիր հրատարակիչ Տիգրան Նազարեան.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, բարոյական, ուսումնական, արուեստագիտական։ Հրատարակութիւն Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան. կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը։

Բաժանորդագրութեան գինն է՝ Տարեկան 8 ֆ — 4 ռ. վեցամսեայ՝ 5 ֆ — 2 ռբ. 50 կ. կանխիկ վճարելի։

Ուրբաքանչիւր թիւ առանձին՝ կ՝արժէ 1 ֆ — 50 կ.

Հասցէն. à la Rédaction de la Revue «HANTESSE». Au Couvent des RR. P.P. Mechitharistes.

à VIENNE (AUTRICHE).
VII. Mechitharistengasse 4.

ԲԱԶՄԱՎԷՊ Հանդիսարան (եռամսեայ) կը հրատարակուի մարտ, յունիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամսոյ մէջ։

Բաժանորդագինն է տարեկան 10 ֆրանգ։ Հասցէ. à Venise, au Couvent des PP. Mékhitharistes, S. Lazare (Վենետիկ-Վանք Մխիթարեանց, Ս. Ղազար).

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ Հանդէս ամսեայ (Ութնեւ տասներորդ տարի) հրատարակվում է Զմիւռնիայում։

Տարեկան գինն է դուրսերու համար 4 արծաթ մէճիտիէ։ Խմբագրութեան վերաբերեալ ամէն նամակ, ձեռագիր պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ. Մաճո-ղեան, Մամուրեան Տպարան Մեսրոպեան վարժարանի քով։

ԱՐԱՐԱՏ ամսագիր կրհրատարակուի տիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսվում է Յունուար ամսից. բաժանորդագրվեն է Ռուսաստանում՝ 4 ռուբլի, Տաճկաստանում, Պարսկաստանում և Եվրոպայում՝ 5 ռուբլի, Հնդկաստանում 6 ռուբլի: Հասցէն. Эчміаձսոշ, Типогр. Комитетъ.

ԱՐԵՒԵԼՔ օրագիր քաղաքական և ազգային. Տարեկան բաժանորդագրվեն է օտար երկիրների համար 56 Ֆր. Վեց ամսեայ » » » » 28 Ֆր. Հասցէն. Direction du journal «AREVEK» Noradounghian Han, Galata CONSTANTINOPLE.